



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՒ ԱԲԵՂՅԱՆԻ  
ԱՆՉՆԱԿԱՆ-  
ՈՒ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

*Կան ժողովուրդներ, ում հիմնական կրթությունն էնքան է քերի, ու բնավորությունն էլ՝ կրքերի, ազգատության ու կեղծ արժեքների է՛ն տեսակ մի տարօրինակ խառնուրդ է, որ դրանք չեն գտնում իրենց գլխին էկած փորձանքների պատճառներն ու գոհվում են իրենց գլխին էկած չարիքների ծանրությունից:*

Ալեքսիս դը Տոլստի

Երկրորդ հրատարակությունը

ԵՐԵՎԱՆ  
«ԼՈՒՄԱԲԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ»  
2011

Այս գիրքը պնդում է, թե մենք չենք հետևում Մաշտոցի, Աբովյանի, Կոմիտասի, Թումանյանի ու մեր մնացած մեծերի պատգամներին, չնայած անընդհատ պնդում ենք, թե պահպանում ենք մեր ազգային արժեքները: Ու սա պատմում է նաև սնափառ հայազովության վնասների մասին:

Эта книга утверждает, что армяне не следуют заветам Маштоца, Абовяна, Комитаса, Туманяна и своих других великих мужей, хотя все время твердят, что берегут свои “национальные ценности”. Она также рассказывает о вреде тщеславной “арменохвальбы”.

This book contends that the Armenians do not follow the will of Mashtots, Abovian, Komitas, Tumanian and their other great men, though they have always been claiming that they preserve their “national spiritual values”. The book also tells about the harm of vain “Armenoboasting”.

Նվիրում եմ եղբորս՝  
Սլավի հիշատակին

*Հազմի առաջին էջի լուսանկարը՝ Վահան Բոչորի:*

ISBN 978-99-39-808-72-7

© Մերուժան Հարությունյան, 2010, Երևան

**Ց ա ն կ ը**

Նախաբան – Ինչի՞ մասին է էս գիրքը.....8  
 Предисловие – О чем эта книга? .....14  
 Preface–What is this book about? .....19

**Առաջին մասը .....23**  
**ՄԱՇՏՈՑԸ, ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆՆ ՈՒ ԿՈՄԻՏԱՍԸ**  
**«ՄՏՈՒԳԱՐԸ» ԿՍՏԱՆԱ՞Ն .....23**  
 Ճշմարտությունը հայ ... երգի ... մասին ...կամ  
 ... ողբերգություններից մեկը .....23  
 Ի՞նչ ենք ունեցել ու ի՞նչ չունենք .....26  
 Ապացույց կա՞, որ ասածներս ճիշտ են .....31  
 Խոսում է Կոմիտասը- 1 .....32  
 Խոսում է Կոմիտասը - 2.....44  
 Ինչո՞ւ ու ինչպե՞ս է էս վիճակն ստեղծվել .....47  
 Վահան Տեր-Առաքելյանը .....51  
 Մեր «ազգային» կոմսերվատորիան ու «ազգային» օպերան .....51  
 Արմենակ Շահ-Մուրադյանը .....57  
 Էս շարադրանքին հակաճառողների մասին .....58  
 Կոմիտաս Վարդապետը .....58  
 Էս շարադրանքին հակաճառողների մասին-շարունակությունը ....61  
 Ի՞նչ պիտի արվի ու ի՞նչ է հնարավոր .....63  
 Ո՞վ դեմ կլինի հայ երգ ու պարի հարությանը .....65

**Երկրորդ մասը .....69**  
**ԱԲԵՂՅԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**  
**Ճշմարտությունը ... կամ ...**  
**հայ ազգի ողբերգություններից մյուսը .....69**  
 Խավարամության պահպանվելու առաջին օրերը .....69  
 Թարս գրենք, շիրտակ կարդա՞նք .....70  
 Մաշտոցյան ուղղագրությունը հե՞շտ է .....73  
 Մաշտոցյան ուղղագրությունն էսօր է՞լ է լավը .....74  
 «Իսաական ուղղագրություն» ասելով  
 հնամուտներն ի՞նչ են հասկանում .....75  
 Մեղավորն Աբեղյա՞նն ու բոլշևիկներ՞ն են .....78  
 Գալուստ Տեր-Մկրտչյանը .....80  
 Ի՞նչ եղավ հետո .....84  
 Աբեղյանն ուզո՞ւմ էր՝ մեր այբուբենը դարձնի լատինատառ .....86

Թե ինչ պատահեց դրանից հետո .....87  
 Էսօրվա ուղղագրությունն Աբեղյանինը չի՞ .....88  
 Մանուկ Աբեղյանը .....92  
 Ինչ ցանես, էն է՛լ կհնձես .....95  
 Հնամուտների գործելու ձևը .....101  
 Ուղղագրության ռեֆորմն ու Թումանյանը .....102  
 Ուղղագրության ռեֆորմն ու «խելոք ազգերը» .....104  
 Ուղղագրությանը ... կապված ստերն ու  
 «ազգային միասնությունը» .....106  
 Հնամուտների «գիտելիքը»,... ու հայագությունը .....109  
 Մենք մենակ չենք կամ չեխագությունը .....114  
 Կարել Չապելի «Բառերի քննադատությունը» .....114  
 «Մենք»-ն ու «Ես»-ը .....114  
 «Մենք է՛ն ազգն ենք, ով աշխարհին տվել է...» .....115  
 Չապելի էս ասածների առիթով .....116  
 Հնամուտներն ու ճշմարտությունը .....117  
 Էսօրվա ուղղագրությունը փոխելու կարիք կա՞ .....120  
 Մասնավոր պատասխան՝  
 նորահայտ հնամուլ պրն Որբերյանին .....122  
 Հայնրիխ Հյուբշմանը .....128  
 Ուղղագրության ռեֆորմն ու Անտուան Մեյեն .....131  
 Անտուան Մեյեն .....135  
 Ուղղագրության ռեֆորմն ու Մառն ու Ադոնցը .....138  
 Նիկողայոս Ադոնցը .....139  
 Պրն Որբերյանի խեղագրությունն Աբեղյանի հասցեին .....141  
 Աբեղյանն ու Մալխասյան(ց)ը .....145  
 Նորից պրն Որբերյանի մասին .....149  
 Մի քանի հոետորական հարց ... հնամուտներին .....152  
 Էս տեսակ վեճերը կդադարե՞ն .....153

**Երրորդ մասը .....155**  
**ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՉ ԵՆԸ ԱՆԵԼՈՒ**  
**Ճշմարտությունը հայերի սմափառ գլուխգովանության մասին**  
**կամ հայ ազգի ողբերգություններից երրորդը .....155**  
 Մարդու իրավունք ու ազատությունները  
 մասնավոր սեփականություն են .....155  
 Գաղափարախոսությունը ո՞րտեղից են ճարում .....156  
 Ի՞նչն է անցյալին դիմելու  
 էս հավերժական փորձի պատճառը .....157  
 Հնար կա՞ խուսափելու աղևտալի ճակատագրից .....159



«Միաբանող» ու «Երկփեղկող» գաղափարախոսությունները .....	161
Գոնն մի հատիկ միաբանող ու	
ուչ կործանարար գաղափարախոսություն կա՞ ..... 162	162
Բա ինչի՞ շուրջը միաբանվենք .....	164
Միաբանող գաղափարախոսության հետևանքերը .....	165
Միաբանող գաղափարախոսությունն ո՞ւմ է ձեռնառու .....	167
Հայը մա՞րդ է, թե՞ չէ .....	169
Ո՞վ է մեղավորը .....	170
<b>ԱԶԳԱՅԻՆ Ո՞Ր ԱՐԺԵՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵՆՔ</b> .....	172
Սրբազան պռոնկությունն ու տղամարդկանց զինդերը .....	174
Նույնասեռ սերը: Նո՞ր է սա .....	177
Մեր ավանդույթների լավ ու վատի մասին .....	181
Դեմոկրատիան... ու բարոյական հիմքերը .....	184
Հինն ու ավանդականն անպայմա՞ն է լավը .....	186
Միամտությունը կամ տգիտությունը .....	189
<b>Չ ո Ր Ր Ո Ր Ղ մ ա ս ը</b> .....	193
<b>ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԵՆԱՈՂԲԵՐԳԱԿԱՆ</b>	
<b>ՈՒ ԽԱՅՏԱՈՒԿ ԷՋԸ-1</b> .....	193
Ճշմարտությունը հայերենի էսորվա քերականության մասին	
կամ հայ ազգի ողբերգություններից երրորդը .....	193
Անեկոտ՞, թե՞ իրականություն .....	193
Խավարամտության պահպանվելու երկրորդ օրենքը .....	193
Ի՞նչ գիտենք, որ Աբեղյանի քերականությունը ճիշտ է,	
...Ղարիբյանինը՝ սխալ .....	195
Հայերենի էսորվա քերականությունը գիտություն չի՞ .....	199
Մեր էսորվա լեզվաբանների խորամանկությունը .....	202
<b>ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԵՆԱՈՂԲԵՐԳԱԿԱՆ</b>	
<b>ՈՒ ԽԱՅՏԱՈՒԿ ԷՋԸ-2</b> .....	205
Խավարամտության պահպանվելու երրորդ օրենքը .....	205
Ի՞նչ էի ասել, կամ փայլո՞ւմ ազգ ենք .....	205
Ե՞ս եմ ավելի միամիտ, թե՞ Պետհամալսարանի ոնկտորը .....	210
Ասածներիս փայլուն ապացույցները .....	214
Իսկական գառանցանքը .....	222
Գոնն էս հարցում իշխանությունը մեղք չունի .....	227
Ինչո՞ւ է մեր լեզվաբանության վիճակն էսքան ողբերգական .....	228
Ինչո՞ւ են հայոց լեզվի քննությունները միշտ անադար .....	231
Ողբերգական վերջարան .....	233

<b>Հ ա վ ե լ վ ա ծ ը</b> .....	249
Ի՞նչ է հայերենն ու հայերենի իմացությունը .....	249
<b>ՄԱՀՄԱՆՄԱՆ ՇՐՋԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՏՈՐՈԳՅԱԽ</b>	
<b>ՀԱՅՏՆԻՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</b> .....	251
Շրջելիության մասին .....	251
Անորոշ «սահմանումների» մասին .....	254
Անշրջելի «սահմանումով» մի «տեսության» մասին .....	255
<b>ԹՎԱԿԱՆ-ԳՈՅԱԿԱՆ ԶՈՒՅԳԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ</b>	
<b>ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՐՋԵՐՈՒՄ</b> .....	256
Ներածություն .....	256
Լեզվի Գլխավոր Օրենքը (ԼԳՕ-ն) .....	258
Ինչո՞ւ է ԼԳՕ-ն ճիշտ, ու ինչո՞ւ ուրիշ նման չափանիշ չկա .....	259
Թվական-գոյական գույզի ... գործածության օրենքները .....	262
Հետզոտություն .....	267
Գործածված գրականությունը .....	268

Էս գիրքը մեր հայ իրականության իրոք որ ողբերգական մի քանի է՛ն տեսակ խնդրի մասին է, որոնցից կամ չեն խոսում, կամ չափազանց քիչ են խոսում, կամ էլ դրանք ժողովրդից ուղղակի թաքցնում են:

Սկզբում միտք ունեի՝ գրեմ 1930-ական թվերից շեղված ու ոչ գիտական դարձած մեր լեզվաբանության մի քանի կարևոր խնդրի մասին. Ու սա էլ, որովհետև մի մեծագրություն ունեմ, *Արդի հայերենի տեսության գիտական սկզբունքները* վերնագրով, ինչը շարունակում է ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի տեսությունը՝ նոր տեսանկյունից, ու ներկա գիրքը պիտի իմ էս մեծագրության մախարան-մախապատրաստությունը լիներ: Բայց, ի վերջո, հասկացա, որ մեր (Հայաստանի) լեզվաբանական ու, առհասարակ, գրական-գիտական ցավոտ խնդիրները, համարյա բոլորն էլ, կապված են քաղաքականությանն ու մեր բարոյա-էթիկական ավանդույթներին, ու էս գրքի շրջանակները լայնացրի:

Գիրքը նման է մի տեսակ «եղբայրական գերեզմանոցի», բայց սրա պատճառն է՛ն քանն է, որ մեր ցավոտ խնդիրներն իրենք են կուտակված բարդված իրար վրա: Ու սա մի ընդհանուր հայացք է էլ խնդիրներին:

Գիրքս գրել եմ հոգու խորը ցավով, որովհետև գրածս միայն ու միայն ճշմարտություն է, ու էլ ճշմարտությունը դասն է, ու սա ինձ հայտնի է ամենաքիչը չորս տասնամյակ, ու արդեն երկու տասնամյակ է, ինչ անընդհատ խոսում ու գրում եմ սրա մասին, բայց հազար ավտոս, որ լրիվ անարդյունք, ու գուցե՛ մակ իզուր: Բայց մեկ է, իմ համար ճշմարտությունից քանկ ու կարևոր բան չկա, ու երևի մարդկանց մեծ մասի համար էլ:

Անզրիացի Դեյվիդ Հյունը մեկուկես էջանոց մի ինքնակենսագրություն ունի, որտեղ ասում է, թե անհնար է, որ մարդ ինքն իր մասին խոսի ու սնափառ ու մեծամիտ չերևա, ու ճիշտ է ասում: Հիմա ես, սնափառ ու մեծամիտ երևալու վախը մեջս, մի քանի բան են ասելու, ու հետո էլ՝ գրելու՝ էս գրքում: Մի՛ մխիթարություն ունեմ միայն: Իհարկե, հնարավոր է, որ ասածներս ճիշտ չլինեն ու ես ինքս էլ մոլորված լինեմ, բայց էս լրիվ եմ անկեղծ, ու սուտ չեմ ասում:

Էս միշտ էլ ասել եմ հետամնացությունն ու խավարամտությունը, պոռոտախոսությունն ու մեծամտությունը. մեծամիտ ու գոռոզ ինքնագովությունն ու մանավանդ սնափառ հայագովությունն ու անցյալագովությունը: Ում էլ հարցնես, կասի որ սրանք մերժելի ու անթույլատրելի բան են, բայց արի ու տես, որ մեր մեծագույն մասը հենց սրանցով է տարված:

Անցյալի իմացությունն ու դրանով հպարտանալը կարևոր է միայն է՛ն ժամանակ, երբ դժգեհ էս ներկայից, ու սրա համար էլ ուզում էս փոխես էս ներկան, ուզում էս լավացնես ներկա վիճակը:

Բայց եթե ներկադ մի թշվառ ու ողորմելի բան է, ու դու էլ համարյա ոչ մի բան չես անում, որ վիճակդ շտկես, ու անընդհատ բողոքում ես, թե բախտ չունես, թե թշնամիները կամ հանգամանքները չեն թողնում, որ կարգին ապրես, էս անգամ արդեն՝ անցյալիդ գովասանքը ոչ միայն անիմաստ է, այլև՝ ծիծաղելի, վնասակար ու դատապարտելի:

Հայերի մեծագույն մասը շատ ու շատ է խոսում հայ լինելու չքնադուքյունից, ու մեր ազգային արժեքները պահպանելուց, ու անընդհատ ասում է, թե պիտի պաշտենք մեր է՛ն վսեմ մարդկանց, ովքեր անմախաղեպ գործ են արել հայ մշակույթի համար:

Իհարկե, կասկած չկա, որ պիտի թե՛ մեր ազգային արժեքները պահպանենք, թե՛ պիտի ակնածենք՝ Մեսրոպ Մաշտոցի, Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Թումանյանի, Կոմիտաս Վարդապետի, Արմենակ Շահ-Մուրադյանի, Վահան Տեր-Առաքելյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Ֆրիդյոֆ Նանսենի, Հայնրիխ Հյուբշմանի, Անտուան Մեյեի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Վիկտոր Համբարձումյանի, Ալիխանյան եղբայրների, Սերգեյ Մերգելյանի ու բազում այլ մարդու գործերից:

Պիտի ակնածենք ու հաճախ էլ՝ պաշտենք, բայց չպիտի ֆետիշացնենք, չպիտի կուլտ դարձնենք սրանց, ու հռչակենք անխալալական: Այսինքն, պիտի սրանց պաշտումն ոչ թե էնպես, ինչպես հավատացյալն է կույր-կույր պաշտում Աստծուն, Քրիստոսին ու Մահմեդին, այլ էնպես, ինչպես, օրինակ, ֆիզիկոսն ու մաթեմատիկոսն է պաշտում Գալիլեյին, Նյուտոնին, Արքիմեդին, Կոշուն, Էյնշտեյնին, Գաուսին, Էյլերին, ևն:

Մեզ, շատ ու շատ անգամ է թվում, թե իրոք էլ՝ պաշտում ենք մեր մեծերին, որովհետև ասում ենք, որ սրանք շատ մեծ գործ են արել մեզ համար:

Բայց միայն թվում է: Միայն թվում է, որովհետև ի՞նչ օգուտ էս մարդկանց (մի մասին) միայն ու միայն խոսքով սրբացնելուց, եթե սրանց ճշմարիտ պատգամները չենք կատարում: Իսկ որ չենք կատարում, հաստատ է:

Իրոք. Կոմիտասն ասում էր, որ պիտի երգենք ու պարենք հայի պես ու հայավարի (քանզի սրանք չքնաղ են՝ ողջ աշխարհի մակարդակով), ու հետո նոր ուրիշների լավագույն երգ ու պարին ծանոթանանք ու սովորենք, հետո նոր ուրիշների արժեքավոր երաժշտական մշակույթը յուրացնենք:

Իսկ մենք էսօր ոչ միայն հայավարի չենք երգում, այլև մեր ազգային չքնաղ երգերն ու երգելաձևն ու ազգային պարն ու պարելաձևը լրիվ ենք մոռացել:

Ու, համարյա միշտ, երգում ենք օտարի երգը (չնայած՝ հայերեն բաներով, բայց մեկ է՝ օտարի), իսկ մեր ազգային պարը, *գեղունը*, պարում ենք (հազվադեպ) առանց *յալու* (պարերգի), թաթար-մոնղոլական գուռեղ-դիղի նվագով, ու մեծագույն մասամբ, պարում ենք օտարների պարերը:

Կոմիտասան ասում էր, որ մեր ազգային միակ բնիկ նվազաբանը փողն է, իսկ մենք փող բոլորովին չենք գործածում: (Կոմիտասը, 1913-ին, Փարիզում հենց փողը նվագեց, ու աշխարհի երաժշտական հասարակությունն ողղակի ապշել էր փողի անսահման չքնադությունից: Էսօր պաշտում ենք փոխ առած դուրդուն ու գունճան, չնայած Կոմիտասի ասելով փողն անսահման չքնադ գործիք է, ու (արդեն ողջ աշխարհում ընդունված) դուրդուն կից շատ ու շատ է գերազանց:

Ուրեմն, ի՞նչ օգուտ, որ պաշտում ենք Կոմիտասին:

Մերոպ Մաշտոցը հայերենի այբուբենը հիմնել էր մի տառ-մի հնչյուն ու մի հնչյուն-մի տառ սկզբունքի վրա (հենց սրա՝ համար է մաշտոցյան այբուբենը համարվում իր ժամանակի ամենակատարյալ այբուբենը):

Մանուկ Աբեղյանն էլ հետևեց Մաշտոցի սկզբունքին, ու 1913-ին, Հայր Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի հորդորով, ուղղագրական ռեֆորմի ծրագիր մշակեց, ինչի ամենախիստ տարբերակը 1922 թվին գործի դրեց բուլղարիկյան իշխանությունը (առանց Աբեղյանի կարծիքն ու համաձայնությունը հարցնելու):

Էդ օրերից մինչև հիմա հնամուկները (պահպանողականները) ասում են, թե պիտի հետ դառնանք մաշտոցյան ուղղագրությանը, չհասկանալով, որ սա հակառակ է Մաշտոցի սկզբունքին: Ու հնամուկներն էնքան գոռոռացին, որ 1940 թվին մասամբ հետ դարձան հին ուղղագրությանը, իսկ հիմա էլ ոմանք պահանջում են, որ լրիվ հետ դառնանք մաշտոցյան ուղղագրությանը, չնայած դա շատ ու շատ ավելի բարդ է, քան էսօրվանը:

Մա՞ է Սր Մաշտոցի պատգամները կատարելու մեր ձևը:

Մեր գրությունն ու մանավանդ մեր մանուկների կրթությունն ահավոր դժվարացնելով մեր ազգային ո՞ր արժեքն ենք պահպանում: Բա պարզ չի՞, որ եթե հանկարծ սա իրագործվի, մենք անպայման կհեռանանք Մաշտոցի սկզբունքի ելությունից, անպայման խախտած կլինենք Մաշտոցի մի տառ-մի հնչյուն ու մի հնչյուն-մի տառ սկզբունքն ու հետևած կլինենք ձևին միայն, ու «պահպանած» կլինենք միայն մեր հետամնացությունն ու խափարամությունը:

Էսօր մենք երկու քերականություն ունենք, Մ. Աբեղյանի քերականությունն ու հետաքերականական քերականությունները: Էս երկու քերականությունն իրար լրիվ են հակասում, իրար լրիվ ջնջում են ու բացարձակ անհամատեղ են:

Մեր էսօրվա լեզվաբաններն էս երկու քերականությունն էլ համալուծում են ճիշտ, բայց մեր կրթական հիմնարկներում անգնում են միայն երկրորդները: Այնինչ, Աբեղյանը 1936 թվին անառարկելի ապացուցել է, որ հետաքերականական քերականությունները լրիվ են սխալ ու անհեթեթ:

Մրանից, անառարկելի, հետևում է, որ մեր էսօրվա լեզվաբանությունն իր ասածների ճիշտ ու սխալը որոշելու ոչ մի գիտական չափանիշ չունի:

Աբեղյանին հայեցելով ու սխալ համարելով, ու սխալ քերականությունը ճիշտ համարելով ինչքա՞ն ենք մեր ազգային արժեքները պահպանում, ու հետո է՞լ մեր ո՞ր արժանիքն ենք պահպանած լինում:

Արմենակ Շահ-Մուրադյանի, Վահան Տեր-Առաքելյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Հայնրիխ Հյուբշմանի, Անտուան Մեյեի անունները *համարյա բոլոր հայերին են անհայտ*, բայց էս մարդիկ իրենց գիտակցական ողջ կյանքը նվիրել են հայ ժողովրդի բարեկեցությանը կամ մշակույթին: Ու մենք ում հորելյանն ասես, որ չենք նշում, բայց էս նվիրյալներին չենք է՞լ հիշում:

(Օրինակ, հայերենի գիտական քերականության հիմնադիր Հ. Հյուբշմանի ծննդյան 150-ամյակը լրացավ 2010-ի հուլիսի 3-ին, իսկ Գ. Տեր-Մկրտչյանինը՝ 2007-ին կամ 2008-ին (մահվան թիվն էլ հաստատ չգիտենք), բայց ո՞վ հիշեց):

Մա՞ է ազգային արժեքները պահպանելու մեր ձևը:

Խաչատուր Աբովյանն ասում էր, որ ժողովրդի համար ու ժողովրդի լեզվով գրենք (ինչը, իմիջիայրոց, նաև Մաշտոցի նպատակն էր), բայց մենք, համարյա լրիվ մոռանալով Աբովյանի գրելաձևն ու պատգամները, հորինել ենք մի մղձավանջային գրական «լեզու», ինչն ուղղակի հեղեղված է օտար քերականությամբ, ու սրանով ո՞չ կարգին խոսելու ու գրելու կարողություն ունենք (բացի մի քանի տաղանդավոր գրողը), ո՞չ նկատում ենք, որ սա արհեստական է ու մղձավանջային, ու ոչ է՞լ գլխի ենք, որ մեր ժողովրդի զգալի (եթե ոչ՝ մեծ) մասն ուղղակի չի հասկանում էս մղձավանջը:

Ուրեմն, ի՞նչ օգուտ, որ պաշտում ենք Խաչատուր Աբովյանին:

Էս գլխքն է՞ս տեսակ դատող բաների ու էս կարգի վստմ մարդկանց ու նաև սրանց փնտրողների մասին է:

\*\*\*

Գիրքը չորս մաս ունի, ու էս մասերն իրարից բավական անկախ են՝ է՛ն իմաստով, որ լրիվ հնարավոր է, որ դրանք կարդացվեն առանձին-առանձին, համարյա՝ ուզած տեղից: Մրա համար էլ տեղ-տեղ կրկնություն 'ա, որ էդ մասերը, քիչ՝ թե շատ, անկախ լինեն:

Էս գրքի առաջին մասը պատմում է, թե հայերն ինչպես կորցրին իրենց ազգային երգելաձևն ու երգը, ազգային պարելաձևն ու պարը: Ու գիրքը նշում է գոնե մի ուղի, թե ի՞նչ արվի, որ էս վիճակը, գոնե մի քիչ, շտկվի:

Գրքի երկրորդ մասը, բավական մանրամասն, պատմում է մեր ուղղագրական վեճերի ու ուղղագրության ռեֆորմների մասին, հետո էլ էս ոլոր-

տի խառը իրավիճակը շտկելու առաջարկներ է անում: Էս մասը նաև խոսում է ասածս ատելի երևույթներից:

**Գրքի երրորդ մասը** պատմում է սննդաբանության, մեծամտության, սննդաբան ազգայնամտության ու սրանց անտեղիության ու անմտության մասին: Կարծում են, որ ընթերցողը լավ կանի, որ գրքի ընթերցանությունն սկսի հենց *Ողբերգական վերջաբան* վերնագրից:

**Գրքի չորրորդ մասը** պատմում է էսորվա հայ քերականության ողբալի վիճակի մասին, ու առաջարկում է էս վիճակը շտկելու ուղի:

**Գրքի հինգերորդ մասը, Հավելվածը**, երկու հրատարակված հոդված է, որոնց նյութը կապված է գրքի բովանդակությանը, ու դրանք պիտի որ շատ հետաքրքրեն լեզվաբաններին, որովհետև աննախադեպ են ու չափազանց կարևոր՝ հայերենի գրական ոճերը բուժելու տեսանկյունից:

\*\*\*

Համարում են, որ էս գրածս (մնացածներն էլ) թե՛ գիտական, թե՛ գեղարվեստական գործ է, ու սրանով է պայմանավորված գրքիս ոճը, որովհետև միշտ էլ էնպես են գրում (ինչքան կարող են), որ ընթերցողը որտեղից էլ գրածս կարդա, գիրքը ձեռքից ցած չդնի: Ահշտն ասած, լուրջ ու կատակային բնաբանները հենց սրա՝ համար են դրել: Ո՞վ ասաց, թե լուրջ գրքերում կատակն անտեղի է: Եթե *Չայմանն* իր *Պինդ մարմնի քվանտային տեսությունը* մենագրության մեջ սրա իրավունքն ունի, ուրեմն, է՛ս էլ ունեն:

Շարահյուսությունս Արարատյան բարբառինն է, ինչպես որ սկսել էր Աբովյանն ու շարունակում էր Թումանյանը, ու ինչպես որ հայտարարում ու իբր պահանջում են մեր բոլոր գրագետները, բայց երբևէ չեն հետևում էս պահանջին: Աբովյանին ու Թումանյանին շատ բանով են հետևում:

Կետադրությունս անհատական է, ինչը բնական է, որովհետև կետադրությունը միշտ է անհատական, ու բոլոր լեզուներինն է անհատական: Սա գիտական փաստ է, ու մեր դասատուները, շատ անգամ, լրիվ իզուր են աւանջում մեր մանուկներին ու սովորում, որ հենց իրենց իմացած կետադրական կանոնները սովորեն:

Տողադարձ անելիս գաղտնավանկի *ը-ն* չեն գրել, որովհետև էսորվա կամպերը դա գրելու ծրագիր չունեն:

(Լավ կլիներ, որ մեր լեզվաբաններն էս կանոնն ընդունեին, մանավանդ որ կոմպային տեխնիկան արդեն իսկ ստիպում է, որ գաղտնավանկի *ը-ով* տողադարձից հրաժարվենք:

(Սրա համար պետք կլինի միայն, որ տողադարձելիս հրաժարվենք մեկ առաջ մի կողմ թողնելուց, ու մեկ էլ՝ հրաժարվենք ստուգաբանական տողադարձից, այսինքն, հրաժարվենք առանձին արմատը տողադարձելուց (ու տողադարձենք միայն վանկատելով), որովհետև բառի արմատը (միշտ

ու անընդհատ) զգալու կարողությունն ունի միայն ու միայն գերազանց լեզվաբան-ստուգաբանը):

Երբեմն գրքիս մեջ գործածած գրականությունն ու մեկ-մեկ էլ՝ նաև գրականության էջերը, հենց տեղում են նշել (չնայած՝ վերջում էլ են դրել), քանի որ գիրքը «լայն» ընթերցողի համար է, ով շատ անգամ ալարում է՝ գրքի վերջը նայի:

Գրականությունը լրիվ չեմ նշել, որովհետև շատ անգամ չեմ էլ հիշում, թե իմացածս ումից են սովորել: Շատ բան էլ համարել են էնքան հայտնի, ու մտածել են, թե բոլորը դրանք գիտեն, ու աղբյուրը նշելու կարիքը չկա:

Ցանկը դրել են նախաբանից առաջ, որ գիրքը վերցնողը նայի դա ու իմանա, թե գրքի մոտավոր բովանդակությունն ի՞նչ է:

Իմ մասին հազար ու մի սուտ են տարածում, ու էս էլ ոչ մի պաշտպան չունեմ, բացի իմ իսկ գործերն ու Մեսրոպ Մաշտոցը, Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Կոմիտաս Վարդապետը, Գալուստ Տեր-Սկրտչյանը, Հայրիկի Հյուբեյանը, Անտուան Մեյեն ու Մանուկ Աբեղյանը, բայց սրանց պաշտպանությունը, ցավաբար սրտի ու հասկանալի պատճառով, պասիվ է:

Նախորդ նախադասությունը թերևս մի քիչ կտրուկ է, որովհետև մի երկու-երեք մարդ կա, ովքեր, գոնե նեղ շրջանակներում, աջակցում են ինձ, ու էս էս մարդկանց երախտապարտ են: Հենց է՛ս մարդկանց գրավոր կարծիքների շնորհիվ էր, որ իմ նախորդ գիրքը, *Թարգմանելու արվեստը*, շահեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության 2010 թվի մրցության երկրորդ՝ խրախուսական մրցանակը:

Երկրորդ հրատարակության մեջ ավելացրել են մոտ ութ-տաս էջ, ու նորից են սրբագրել ողջ գիրքը, բայց գիտեմ, որ էլի վրիպակներ մնացած կլինեն, ինչի համար ընթերցողի ներողությունն են հայցում:

\*\*\*

**Երախտագիր.** Շնորհակալ են բոլորին, ովքեր օգնել են ինձ՝ էս գիրքը գրելիս, մանավանդ «Լուսաբաց հրատարակատան» տնօրեն Վիտաի Աբաբյանին, ով իմ մի քանի գիրքը տակ է, ու սրանով հույս է տվել, որ գրելը չդադարեմ, Մտեփան Շահաբաբյանին՝ ֆինանսական ու բարոյական օժանդակության համար, Ելենա Չախարյանին՝ անգլերեն ու ռուսերեն մասերը սրբագրելու համար, մաթեմատիկոս Գագիկ Աղեկյանին՝ ողջ գրքի հայերեն մասը սրբագրելու ու կարևոր դիտողությունների համար, Վահան Զոչարին՝ կազմի համար, ու Ռազմիկ Ավագյանին՝ նկարները մշակելու ու բազում մանր ծառայության համար, ու նաև ուրիշներին, օրինակ, Մարտոսիկ Ռաֆայելյանին, զանազան քննադատությունների ու դիտողությունների համար:

*Մերոսան Հարությունյան,  
օգոստոսի 3-ը, 2010 թիվ, Երևան*

## ПРЕДИСЛОВИЕ – О ЧЕМ ЭТА КНИГА?

Эта книга о тех некоторых, действительно трагических вопросах армянской действительности, о которых либо говорят мало, либо молчат, либо эти вещи просто скрывают от народа.

Сначала я хотел написать книгу-предисловие к моей ненапечатанной монографии под названием: *Конец истории современного армянского языка*, что продолжает теорию акад. Манука Абебяна, но постепенно понял, что языковые (да и вообще, любые научные) проблемы в Армении тесно переплетены с политикой и существующими морально-этическими «традициями», и расширил рамки этой книги.

Книгу я написал с большой скорбью души, ибо я писал только и только правду, а она горькая: и эта горькая правда мне известна по крайней мере два-три десятилетия. Из них два десятилетия все время пишу об этих вопросах, но, к величайшему (моему или нашему) сожалению, безрезультатно, а может и зря.

Мне всегда были ненавистны отсталость и мракобесие, пустая хвalebная болтовня и мания величия и, особенно, тщеславная националистическая хвала прошлого и настоящего, которую в нашем случае называю «арменохвальба». У нас все говорят, что эти и подобные этим вещи отрицательны и недопустимы. Тем не менее, большинство из нас занято рекламированием именно этих вещей.

Прошлое нужно знать и может быть, иногда можно хвалиться им, но только тогда, когда ты недоволен настоящим и, изучив прошлое, хочешь избежать прежних ошибок и изменить настоящее к лучшему, хочешь улучшить свое настоящее.

Большинство армян все время и очень много говорит о том, как это хорошо быть армянином, о том, что мы должны сохранить наши национальные ценности, и что мы должны боготворить тех великих людей, которые совершили беспрецедентные дела для армянской культуры.

Да, мы должны сохранить как наши национальные ценности, так и должны (может быть даже) боготворить таких мужей, как Месроп Маштоц, Хачатур Абовян, Ованес Туманян, Комитас Вардапет, Арменак Шахмурадян, Ваан Тер-Аракелян, Галуст Тер-Мкртчян, Фритъеф Нансен, Генрих Хюбшман, Антуан Мейе, Манук Абебян, Рачя Ачарян, Виктор Амбарцумян, братьев Алиханян и многих других!

Да, мы должны уважать и помнить, а порою, даже боготворить таких людей, но не так, как верующие относятся к Богу, Христу или Мухаммеду, и ни в коем случае не должны фетишизировать их, не должны превращать их в культ личности! Мы должны уважать их, как, например, физики или математики уважают Галилея, Ньютона, Архимеда, Коши, Эйнштейна, Гауса, Эйлера и т.д.

И очень, очень часто нам кажется, что мы действительно боготворим наших великих, поскольку считаем, что их дела поистине велики, и что они сделали это именно для нас.

Но это нам только кажется! Нам только кажется, поскольку какая польза от того, что мы боготворим их (или часть их), если мы их боготворим только словом и не выполняем их заветы? А то что не выполняем, это уж точно!

Действительно, Комитас завещал, чтобы мы пели и танцевали по-армянски, но сегодня мы не только не следуем его завету, но абсолютно растеряли нашу прекрасную этническую песню и танец, особенно, армянский способ пения и танца. И, почти всегда, поем чужие песни (хоть и на армянском, но из песни не выкинешь в первую очередь мелодию), а наш национальный танец, гехон, танцуем с музыкальным сопровождением, под татаромонгольское зурна и барабан (джол-а), без наших исконных танцевальных песен, без яйли, причем эти искаженные песни выполняем чересчур редко. Большой частью, поем и танцуем чужое.

Комитас говорит, что единственный исконно армянский музыкальный инструмент это «армянская труба» (пох – по-армянски). Мы сегодня абсолютно не играем его и боготворим позаимствованные «зурну» и «дудук», хотя Комитас говорил, что нет ничего прекраснее пох-а!

*Так вот, какой смысл, в том, что мы на словах боготворим Комитас Вардапета?*

Месроп Маштоц основал свой алфавит по принципу одна-буква-один-звук и один-звук-одна-буква (вот почему алфавит Маштоца считается самым совершенным для своего времени). Манук Абебян последовал принципу Маштоца и, в 1913 году, следуя наставлениям Галуста Тер-Мкртчяна, под его руководством выработал программу орфографической

реформы, чей самый радикальный вариант был задействован в 1922 году (без предварительного согласия Абеяна).

Армянские консерваторы до сих пор говорят, что мы должны вернуться к старой орфографии. Это вызвало такой упорный резонанс среди консерваторов, что в 1940 году правительство частично вернулось к старой орфографии. А теперь, многие требуют полностью вернуться к орфографии Маштоца, несмотря на то, что она несравненно сложнее, чем нынешняя, и не понимая, что такой возврат противоречит принципу Маштоца!

*Какую из наших национальных ценностей мы сохраняем, неизбежно затрудняя наше письмо и образование наших детей? Неужели не ясно, что осуществление этой затеи обязательно уведет нас далеко-далеко от сущности принципа Маштоца, и мы обязательно нарушим его принцип: одна-буква-один-звук и один-звук-одна-буква, и будем следовать только требованиям формы, и "сохраним" только нашу отсталость и наше мракобесие?*

*Неужели, это и есть наш способ следования заветам Маштоца?*

Сегодня армяне имеют две грамматики, грамматика Абеяна, и пост-абеяновские грамматики. Эти две грамматики полностью взаимоисключают друг друга и абсолютно несовместимы.

Как это ни странно, наши сегодняшние лингвисты считают обе эти грамматики верными, но в наших школах и вузах проходят только вторую! Однако, в 1936 году Абеяна безоговорочно доказал, что пост-абеяновские грамматики полностью ошибочны и абсурдны!

Из этого безоговорочно следует, что сегодняшняя армянская лингвистика не имеет никакого критерия для определения верности или ошибочности своих утверждений.

Теперь, ругая Абеяна и считая его дела ошибочными, сохраняем ли мы наши национальные ценности, и насколько? И потом, какие ценности сохраняем на этот раз?

Имена Арменака Шахмурадяна, Ваана Тер-Аракеяна, Галуста Тер-Мкртчяна, Генриха Хюбшмана, Антуана Мейе неизвестны почти всем армянам, но ведь эти люди почти всю свою сознательную жизнь посвятили

культуре, а порою и благополучию армянского народа. Но мы часто отмечаем не знаю чьи юбилеи, а этих людей забываем!

(Например, 3-его июля 2010-ого года исполнилось 150-лет со дня рождения Генриха Хюбшмана, а 150-летний юбилей Г. Тер-Мкртчяна – в 2007-ом или 2008 (мы даже дату его смерти не знаем), но кто вспомнил это?)

*Неужели это и есть наш способ сохранения наших национальных ценностей?*

Хачатур Абовян завещал, чтобы мы писали для народа и на народном языке (что завещал и Маштоц, неявно, конечно), но мы, почти совсем игнорируя завет и манеру письма Абовяна, придумали наш поистине кошмарный "литературный язык", который буквально наводнен чужеродной грамматикой, и на этом языке почти ни один армянин (исключая некоторых особенно одаренных писателей) не умеет ни нормально писать, ни нормально говорить. И почти никто не догадывается, что значительная часть армянского народа просто не понимает этот кошмарный "язык!"

*Значит, какой смысл от того, что мы боготворим Хачатура Абовяна?*

Эта книга вот о таких горьких проблемах, о таких великих людях и о тех, кто ругает их.

\*\*\*

Считаю, что эта моя работа (так же, как и другие мои вещи) художественное письмо. Этим и обусловлена моя манера письма, поскольку я всегда стараюсь писать так, чтобы читатель, взяв мою книгу в руки, не отложил ее, откуда бы он ее не начал читать.

У книги четыре части, и эти части довольно (или почти) независимы друг от друга в том смысле, что вполне возможно их отдельное чтение – почти с любого места. Вот поэтому материал иногда повторяется, чтобы более или менее сохранить эту независимость.

Первая часть книги рассказывает, что такое исконно армянская песня и танец, и как армяне растеряли свою манеру петь и танцевать, а значит так же свою песню и танец. Книга предлагает по крайней мере один возможный путь частичного исправления этого печального положения вещей.

## PREFACE: WHAT IS THIS BOOK ABOUT?

Вторая часть книги довольно подробно рассказывает об орфографических спорах о реформе армянской орфографии, и предлагает путь выхода из сложившейся путаницы в этой области. В этой части также говорится о тех ненавистных явлениях, уже упомянутых в этом предисловии.

Третья часть книги представляет трагическое состояние сегодняшней армянской грамматики и предлагает путь исправления этого состояния.

В четвертой части книги, *Приложения*, приведены мои две опубликованные статьи, которые связаны с вопросами этой книги, и которые, по-моему, должны очень заинтересовать армянских лингвистов, поскольку (как мне кажется), беспрецедентны и чрезвычайно важны с точки зрения оздоровления армянского литературного стиля.

\*\*\*

В принципе, у меня нет других защитников, кроме моих работ, и таких людей, как Хачатур Абовян, Ованес Туманян, Газарос Агаян, Комитас Вардапет, Арменак Шахмурадян, Ваан Тер-Аракелян, Галуст Тер-Мкртчян, Генрих Хюбшман, Антуан Мейе, Манук Абебян, а их защита, по очевидным причинам, пассивна.

Пожалуй, предыдущее высказывание несколько категорично, поскольку несколько человек поддерживают меня (хоть и в узких кругах), и я чрезвычайно благодарен им, поскольку благодаря их отзывам (которые были лобезно предоставлены, чтобы я имел право представить ее на конкурс), моя предыдущая книга, *“Искусство перевода”*, была удостоена второму поощрительному призу по арменистики Академии наук РА, в 2010 году.

*Меружан Арутюнян,  
3 августа, 2010, Ереван*

This book is about such a few but really tragic problems, which are either spoken about extremely little – if never – or are just concealed from the Armenian people.

At first I intended to write a book-preface to my unpublished monography, the *Concepts of Theory of Modern Armenian Language*, but by and by, I realized that all linguistic (and generally, all other scientific) problems in Armenia are entangled with politics and so called moral-ethical traditions, and I expanded the frame of this book.

I have written this book with great sorrow, because all my narrative is true, and I know this truth for more than four decades, and I have been speaking and writing about them all the time for almost two decades, but, unfortunately, without any apparent result and perhaps all in vain. Anyhow, I am dead sure there isn't anything more precious under this sun than the truth, and I think the approach of this book is true for the majority of people all over the world.

I have always hated backwardness and obscurantism, idle talk and vainglorious megalomania, conceited self praise and, especially, “Armenian praising” and idle past boasting. Everybody, if asked, would say that such things must be refused, but, unfortunately, the greatest part of us is always carried away with these prejudices.

Knowledge of one's own people's past and being proud of it is important only then when you aren't satisfied with your present state and being eager to change it, for this reason, you study your own past, wanting to avoid the previous mistakes and better the present state of your people.

And if the present is miserable and you do almost nothing to improve it but complaining of your bad fate and destiny, but complaining of your permanent enemies or bad circumstances, then the vain praise of your glorious past is not only senseless, but funny (in bad sense), harmful, blameworthy and deplorable.

The majority of Armenians talk very, very much about preserving our national spiritual values, about necessity of worshipping such people as: Mesrop Mashtots, Khatchatur Abovian, Hovhannes Tumanian, Komitas Vardapet, Armenak Sahmuradyan, Vahan Ter-Arakelian, Galust Ter-Mkrtitchian, Fridtjof Nansen, Heinriech Hubschmann, Antoine Meillet, Manook Abeghian, Hrachia Adjarian, Victor Hambartsumian, the Alikhanian Brothers, and so on, and so on.

Yes, we must respect them for their work, but we mustn't make fetichis of them, we mustn't make idols of them. That is, we mustn't worship them as believers worship God, or Christ, or Muhammad, but in the way the physicists or mathematicians worship Newton, or Archimedes, or Couchy, or Einstein, or Gauss, or Euler, and so on.

And it seems to us that we do worship our great men in proper way, and the reason of such illusion is the fact that we admit that they did very, very much for us, for the Armenians.

But it only seems, it's only illusion! For what's the use of such "awesome possum" if we never have followed their true commandments? And we have never followed them, indeed!

Komitas told us we must sing our national ethnic songs and we must do it in our national way, and we must dance our ethnic dances in our national way, because these are beautiful on the world level, and only then turn to others' song and dance, to others best musical culture and learn them.

Today we not only almost never sing in our national way, but also we have almost fully forgotten our ethnic songs and dances. And we, almost always, sing alien songs (though with Armenian words, but alien songs, at length), and we never dance our ethnic dance – *geghon* – and if professional dancers very rarely do it, they do it without any accompaniment of our ethnic dance songs – *yayly*. They do it with accompaniment of Tatar-Mongol *zurna-dhol*. And we mostly dance alien dances.

Komitas told us that the only ethnic musical instrument we had got was trumpet (*pogh* in Armenian) that mostly the shepherds used to play. (He played namely *pogh* in Paris, in 1913, and all the European musical society was simply astounded by its beauty). Today we worship the borrowed *duduc* and *zurna*, though Komitas kept saying that *pogh* is the most beautiful instrument and is much better than all the other instruments.

*So what's the sense of worshipping Komitas if we don't follow his commandments?*

Mesrop Mashtots based the Armenian alphabet on the one-letter-one-sound and one-sound-one-letter principle. (This is the reason it is said that the Armenian alphabet was the best at the time!) Manook Abeghian, following the advice of Galust Ter-Mkrtichian (which is modern- scientific, too), elaborated a plan of a reform of Armenian orthography in 1913, and the Bolshevik authorities put its most radical variant into use in 1922 (without asking Abeghian's opinion or consent).

Now, "the past lovers" had always been saying that we must go back to Mashtots's alphabet, not realizing that if we had done, we would have been against Mashtots's principle. And "the past lovers" made such a big fuss over this that the authorities were made partially go back to the old orthography in 1940. And now "the past lovers" demand us to go back to Mashtots's

orthography completely, though that alphabet is much more difficult than the present one.

*Is this our way of following Mashtots's commandments?*

*Making our writing and, especially, our children's education terribly difficult, which "national value" would we have cherished? Isn't it clear that if we went back to the old orthography, we would go astray, we would violate Mashtots's one-letter-one-sound and one-sound-one-letter principle? If we did this, we would follow the form only, not the essence! And we would cherish our backwardness and obscurantism only!*

We have two grammars today; Abeghian's grammar and post-Abeghian grammar. These two grammars completely contradict each other, completely kill each other, and they are completely incompatible!

Now our modern linguists consider these two grammars being correct, but they teach only the second one at schools, colleges and universities. Meanwhile, Abeghian proved in 1936 that these second grammars are completely wrong and absurd. It follows from this that modern Armenian linguistics has no scientific criterion to decide truthfulness of its assertions.

*Now, swearing Abeghian and declaring him wrong, how much do we cherish our "national values" and which values do we cherish?*

The names of: Armenak Sahmuradyan, Vahan Ter-Arakelian, Galust Ter-Mkrtichian, Heinriech Hubschmann, Antoine Meillet are unknown almost to all Armenians, but these men devoted almost all their conscious life to Armenian culture and protection of Armenians. We celebrate a lot of jubilees, but we have never properly celebrated one of these men's jubilee. (For instance, on 3rd July, 2010 was 150 anniversary of Hubschmann's birthday, and Galust Ter-Mkrtichyan's same anniversary was just two or three years ago (nobody knows his true death date, sic!), but who was aware?)

*Do we really cherish our national values?*

Khatchatur Abovian told us: write for people and in people's language (which was Mashtots's intention, too), but we, forgetting Abovian's writing manner and his commandment, have created a nightmare "literary language", which has been flooded with alien grammar. And we neither can properly speak (and write) in this "language" (except a few most talented authors), nor



we see that it mostly is artificial and terrible. And we never realize that the significant part (if not majority) of Armenians simply doesn't understand this nightmare language.

*So what's the use of worshipping Abovian?*

This book is about such things and such men and the men who deplore the first.

\*\*\*

The book has four parts and these parts are rather independent of each other, for there can happen a reader who will open any of these parts (or just any page) wanting to read it only. Generally, I always try to write in such a way that if anyone opens a page and starts to read it he won't have any desire to put it away. For this I devoid "complicated" archaic words and phrases.

The first part of the book tells how and why the Armenians lost their ethnic song and dance, and shows one way, at least, how this sorrowful state can be put right a little.

The second part is devoted to a rather detailed narrative of the Armenian "orthography struggle" history and the present state of this "struggle", and it offers a way of improvement of the Armenian orthography. The book tells (a little) the things I hate and have mentioned above.

The third part examines the so called „national unity“ and „national tradition and national value preservation“ slogans and shows their vanity and fatal harm.

The fourth part presents the really tragic state of Armenian modern "grammar" and proposes a way of putting it right. (Truly speaking, I have got the above-mentioned unpublished book – the *Concepts of Theory of Modern Armenian Language* – which discusses these problems in detail from an entirely new point of view; I am going to publish it in next year.) Actually, this book is partially and independently devoted to rehabilitation of Abeghian's grammar and orthography reforms scientific reputes.

The fifth part, Adenda, presents two of my published papers, the essence of which is connected with the general matter of the two previous parts. I think these papers must arise the interest of linguists, for they are unprecedented and very important from the viewpoint of "healing" the Armenian literary styles.

*Meruzhan Harutyunyan,  
3<sup>rd</sup> July, 2010, Yerevan*

ՄԱՐԿՆԵՐ, ՀԱՄԱԲԱՐՉՈՒՄՅԱՆՆ ՈՒ ԿՈՄԻՏԱՍԸ  
«ՄՏՈՒԳԱՐՔ» ԿՍՏԱՆԱՆ

(Ճշմարտությունը հայ ազգային երգի ու երգապարհի մասին կամ Կոմիտասի ու հայ ազգի ողբերգություններից մեկը)

*Իր գաղափարները տարածելու լավագույն ձևը արդարություն պահանջող ժողովրդի համար՝ ճշմարտությունն ասելն է Անտուան Մեյե*

Մեր հեռացույցը, էս 2010 քվին, «Հայ-TV» ալիքով «Մենք հայ ենք» վերնագրով շուր է կազմակերպել, ու հավաքել է մի քանի հոգու, որ սրանք է՛ն տեսակ մարդկանց գործն ու վաստակը գնահատեն, ինչպիսիք են, օրինակ, Մալոյա Մաշտոցը, Վիկտոր Համբարձումյանը, Կոմիտասը ևն:

Երբ մի քանի անգամ պատահմամբ «Հայ-TV»-ի տեսահատ փորձերից մեկ-երկուսն աչքիս ընկավ, ջղայնացա ու ալիքը փոխեցի, որովհետև մեր հեռացույցի զավառականությունը, անճաշակությունն ու ցածր մակարդակն անտանելի են, ու անտանելի են երևի ոչ միայն ինձ համար: Բայց Կոմիտասի մասին հաղորդումը նայելուց հետո՝ էլ չդիմացա ու որոշեցի, որ պիտի մի քանի խոսք ասեմ՝ զոհն է՛ս մի հաղորդման մասին:

Չդիմացա, մանավանդ որ վերջերս մեր հեռացույցի «աստղ» են դարձրել մի ծեր կնոջ, ով հայտարարում է, թե ինքն «աստղաբան է ու մաթեմատիկոս», չնայած առանց հաշվիչի երկու երկնիչ թիվ չի բազմապատկի, ու էլ կնոջ արածն էլ ընդամենը բախտ բացելն է: Վերջերս Վիկտոր Համբարձումյանի հոբելյանն էր, բայց մեր հեռացույցը հոբելյանի օրերին Համբարձումյանին ավելի քիչ ժամանակ նվիրեց, քան վերջերս էս գրքաց կնոջը: Ու հիմա էլ մեր հեռացույցը քվեարկելով որոշում է, թե Համբարձումյանին քանի՞ բալ նշանակի:

(Գուցե սխալ են, բայց կարծում են, որ էս «աստղաբան ու մաթեմատիկոս» գրքագին մեր հեռացույցին մոտ բողոքները բարոյական ոչ մի իրավունք չունեն համաշխարհային հռչակ ունեցող աստղագետ ու մաթեմատիկոս ու ֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանից խոսելու):

Հաղորդմանը մասնակից մեր էս հայերը խոսում էին մեծ մասամբ շտամպով, իհարկե, հայտարարելով, թե Կոմիտասը հանճարեղ է (ինչը ճիշտ է ու ճիշտ), թե Կոմիտասի երգը չքնաղ է ու դրա նմանը աշխարհում չկա (ինչը ճիշտ կլիներ, եթե սա ասողները հասկանային, որ «Կոմիտասի

երգ» ասածը ուղղակի չկա, եթե ասեին, որ «Կոմիտասի երգ» ասելով իրենք նկատի ունեն հայ ժողովրդի էթնիկ, այսինքն ազգային, այսինքն, իսկական հայկական երգը ու սրա հատ ու կենտ մշակումները):

Ու հետո էլ սրանք հայտարարում էին, թե Կոմիտասը հաղթել է (ինչը լրիվ է սխալ, որովհետև Կոմիտասը չարաչար պարտվել է, ու Կոմիտասի հետ էլ՝ չարաչար պարտվել է Լուսիա մեր ողջ հայ ժողովուրդը, ու սա քիչ հետո կապացուցվի հենց Կոմիտասի վկայություններով):

Բա կարելի՞ է, որ էս մարդիկ (կամ էլ նույնիսկ հայ ժողովրդի զգալի մասը) քվեարկելով գնահատական նշանակեն Մաշտոցին, Համբարձումյանին ու Կոմիտասին: Մաշտոցի, Համբարձումյանի ու Կոմիտասի պես մարդ՝ հարյուր միլիոնից մեկն է ծնվում:

Մաշտոցի, Համբարձումյանի ու Կոմիտասի արածները 12 բալանոց համակարգի մեջ չեն տեղավորվում, որովհետև էս երևելիների արածների արժեքն անսահման է բարձր:

**Հետո, ի՞նչ սկզբունքով են ընտրել էս ստուգարք ընդունողներին:**

Ի՞նչ է, սրանք, էս ստուգարք ընդունողները, ճակատամարտ են վարել ու հաղթել ու հայ ա՞զգն են փրկել, հայերեն այբուբենն են ստեղծել, համաշխարհային նշանակության ֆիզիկոմաթեմատիկական մեթոդներ ու աստղագիտական կոնցեպցիաներ են ստեղծել, տիեզերքի ստեղծվելու գաղտնիքներն են պարզել, թե՞ հայ երգն ու երգապարսն են հավաքել ու աշխարհիկ՝ ապացուցել են, որ հայ երգն ու պարը ոչ միայն ինքնուրույն են, այլև իրենց մակարդակով չեն զիջում, օրինակ, իտալականին ու էսօր հայ պարի տեղը մասամբ զբաղված իռլանդական պարին: Ի՞նչ զորավոր զործեր են արել սրանք, որ էս տեսակ մի իրավունք են տվել սրանց:

Ի՞նչ սկզբունքով են ընտրել ընմարկվող երևելի հայերին: Ու եթե սրանց ընտրածների մեջ կան՝ Զարենցը, Համբարձումյանը, Խաչատրյանը, ինչո՞ւ չկան՝ Թումանյանը, Ղ. Աղայանը, Մարոյանը, Ալիսանյանները, Մարյանը, Օրբելիները, Այվազովսկին, ևն, ևն:

Բա որ մի քանի ոչ պրոֆեսիոնալը պիտի 12 բալանոց համակարգով Մաշտոցին, Համբարձումյանին ու Կոմիտասին «ստուգարք» նշանակի, ո՞վ պիտի էլ նույն համակարգով հենց սրանց ստուգարք նշանակի: Ու թե որ էլ մարդկանց էլ «ստուգարք» նշանակող լինի, սրանք քանի՞ բալ կստանան: Կամ էլ՝ բա որ սրանք Մաշտոցին, Համբարձումյանին ու Կոմիտասին «ստուգարք» չորին, կամ ցածր դրին, էլ անգամ ի՞նչ պիտի անենք: Իհարկե, հավանական չի, որ չղեն, բայց ո՞վ իմանա, մեկ էլ՝ հանկարծ վերցրին ու չորին, կամ էլ՝ 12-ից ցածր դրին:

(Երբ էս տողերը գրում էի, չգիտեի, որ Թումանյանը, Մարոյանը, Ալիսանյանները, Մարյանը, Օրբելիները, Այվազովսկին, Մխիթար Հերացին

ու շատ-շատերը ոչ միայն «ստուգարք» չեն ստացել, այլև սրանց առհասարակ արժանի չեն համարել, որ էս «ստուգարքին» մասնակցեն: «Զենական թերթի» մեջ սրանց ազգանունների դիմաց գրած է եղել «չքննել»:

Հայ երևելիներից շատերին չեն թողել, որ նույնիսկ «բուհի ընդունելության դիմում տան»: Օրինակ, երևելիների հարյուր հոգանոց նախնական ցուցակում չկան՝ հայ հնագույն բժշկության հիմնադիր Մխիթար Հերացին, Հայաստանի նորագույն բժշկության հիմնադիր Լևոն Անդրեյի Հովհաննիսյանը, չկա Լևոն Օրբելին, ով ժամանակին հրաժարվեց իր թեկնածությունը Նորբեյան մրցանակի ներկայացնելուց (չնայած վերոհիշյալ Լ. Ա. Հովհաննիսյանը Նորբեյան կոմիտեի խնդրանքով, որ Մովսեսից մեկի թեկնածությունն առաջարկի, հենց Օրբելուն էր առաջադրել), չկա Հրաչյա Ներսիսյանը (չնայած կա Հրաչյայի որդին՝ Լևոնը, ու չգիտես՝ ինչու. ախր, իր հոր համեմատ՝ իր ո՞ր վաստակի համար):

Չկա Թորոս Թորոմանյանը (ով հայկական ճարտարապետության բնագավառում արեց նույնը, ինչ որ Կոմիտասը երգ ու պարի, կամ գերմանացի Հայնրիխ Հյոբշմանը հայ լեզվաբանության բնագավառում), չկա Արսեն Միկոյանը, ավագ Ալիսանյանը, Գյուլբենկյանը (բայց կա Մանթաշովը), Մանուկ Աբեղյանը, Գալուստ Տեր-Սլրոյանը (վերջին երկուսի վաստակը Աճառյանի վաստակից իսկի էլ պակաս չի), Դուրյանը, Մեծարենցը, Օտյանը, Պարոնյանը, Զոհրաբը, Միսակյանը (բայց կա հայագով ու մեծամեղ Պաղիս Հերունին, ով մեր ներկա իրականության մեծագույն արկածախնդիրներից, եթե ոչ շաղատաններից, մեկն էր, թե՛ ֆիզիկայի, թե՛ մնացած բոլոր բնագավառներում): Գրքացներին հարգող հեռագույցից ի՞նչ ուզես:

Բացի էս ասվածը, ի՞նչ սկզբունքով են, օրինակ, Նժդեհին, Մամիկոնյանին ու Տիգրան Երկրորդին դրել Կոմիտասի ու Համբարձումյանի կողքին, ու էլ ի՞նչ ընդհանուր միավորներով են սրանց վաստակը չափում:

Անկասկած է, որ հեռացուցային ուսուցողական-ճանաչողական հաղորդումները խիստ անհրաժեշտ են, ու որ էսօր դրանց պես բան հանարյա չկա: Էս կարգի երևելի հայերի կենսագրությունը պիտի *առիթ լինի*, որ մարդկանց, մանավանդ մեր ջանեղների, ծանոթացնեն գիտության ու մշակույթի զանազան բնագավառներին:

Բայց, առաջին հերթին, էս առիթները պիտի օգտագործվեն մեր ցավ ու դարդից ու մեր թեթույուններից ու հետամնացությունից խոսելու համար: Էս կարգի հաղորդումները պիտի անպայման կազմակերպվեն: Ու պիտի կազմակերպվեն պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, է՛ն մակարդակով, ինչ մակարդակով որ Մոսկվայի «Կուլտուրա» ալիքը կամ էլ, օրինակ BBC-ն է անում: Ու վարդղներն ու մասնակիցներն էլ պիտի խորը պրոֆեսիոնալ լինեն ու հայագով մեծամուրթյանը չտառապեն:

(Իսկ եթե էս մակարդակն ապահովելն անհնար է, գոնե չափը պիտի պահպանվի, որովհետև շատ անգամ լռելը խոսելուց ձեռնառու է): Այնինչ, էս շուտի մակարդակը, մեղմ, ասած, էս պայմանին չի բավարարում:

Ու ամենակարևորը, ե՞րբ պիտի թողնենք ազգային համատարած սնափառությունը, հայագուլությունը, սնապարծությունն ու մեծամտությունն ու գլուխգովանությունն ու ե՞րբ պիտի ասենք միայն ու միայն ճշմարտությունը, ասենք պրոֆեսիոնալ մակարդակով, մախօրոք մանրամասն ուսումնասիրելով է՛ն նյութը, ինչից խոսում ենք: (Բա պարզ չի՞, որ չկա շարքային ոչ պրոֆեսիոնալ մարդ, ով հարկավոր խորությամբ իմանա երևելիների ներկայացրած բոլոր բնագավառները):

Օրինակ, Կոմիտասից խոսող էս մարդկանց խոսքից երևում էր, որ սրանք քիչ են տեղյակ էն բաներից, ինչից խոսում են, ինչպես որ քիչ էին տեղյակ իրենց բոլոր հաղորդումների նյութերից: (Կամ էլ հնարավոր է, որ լավ էլ տեղյակ էին, բայց, չգիտես ինչու, իրենց գիտելիքը խնամքով քաքցում էին մեր ժողովրդից): Հազար ափսոս:

Բայց եթե էս տիկին ու պարոնները «չքաքցնեին» իրենց իմացածը Կոմիտասից ու Կոմիտասի գործունեությունից, ու եթե սրանց սիրուն ու հոգին իրոք ցավար հայ երգ ու պարի ողբայի վիճակի համար, ի՞նչ պիտի ասեին էս մարդիկ մեր ժողովրդին:

Պիտի նախ նկարագրեին, թե ինչպիսին են եղել մեր ազգային, մեր իսկական երգն ու պարը, սրովհետև մեր ժողովուրդն էսօր գաղափար անգամ չունի իր իսկ սեփական երգ ու պարից: Ու պիտի ասեին, որ մեր ազգային երգն ու երգելաձևն ու պարն ու պարելաձևն այլևս չկան:

Այսինքն, պիտի ասեին դատը ճշմարտությունը, ինչքան էլ սա դատը լինի:  
Իսկ դատը ճշմարտությունը՝

մեր անտեղյակությունն ու սրա հետևանքով էլ՝ մեր ազգայինությունն է:

Պիտի ասեին, թե ինչից ենք անտեղյակ, ու ինչը չգիտենք:

\*\*\*

### ԻՆՉ ԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ ՈՒ ԻՆՉ ՉՈՒՆԵՆՔ

1. Հայ աշխարհիկ երգը հիմնականում եղել է միաձայն ու մեծ մասամբ՝ խմբակյան: Երգապարն ու սրա պարերգը եղել է միայն ու միայն խմբակյան (Երգապարը՝ երգելով պարելն է: Պարեզն է՛ն երգն է, ինչի տակ պարել են): Երգելով պարել են բարբ-բարբ գյուղացիները ու, ըստ տեղի ու պահանջի, երգասացությանն ու երգապարին մասնակցել են բոլոր-բոլորը, անկախ էն հանգամանքից, երսօժտակյան խողություն ու ձայն ունե՞ն, թե՞ չէ:

2. Հայ աշխարհիկ երգն ու պարը ստեղծել ու պահպանել է հայ գեղջուկը, շինականը, ոչ թե Կոմիտասը: Հազար ափսոս, որ Կոմիտասը գրեց ու պահպանեց միայն դրանց բառ ու նոտաները (մոտ 4000-ից ավել), բայց ոչ երգելաձևը (զարդանախշը) ու պարելաձևը, որովհետև էն օրերին էր բանն անհնար էր, հարկավոր տեխնիկան չկար:

3. Պարելն ու մանավանդ երգելը հայ գեղջուկի համար եղել է հույժ բնական խոսելու ու շնչելու պես:

4. Աշխատանքային երգերը՝ գութանի, ցանքսի, կալի, հունձի, քաղհանի ևն, ու հարսանեկան ու սգի երգերը եղել են պարտադիր ու ծիսական (ծիսականության առումով հիշենք, օրինակ, Համբարձման տոնի վիճակի (բախտ բացելու) երգերը):

(Հայ երգի ծիսականության հարցն առաջինը լուրջ ուսումնասիրել է հենց Կոմիտասը, ու էս ուսումնասիրությունը պիտի շարունակվի՝ կիրառելով համեմատական ազգագրության նոր արդյունքները: (Բայց ո՞վ կանի էս ուսումնասիրությունը, մեր համարյա լրիվ եվրոպական կոնսերվատորիա՞ն), քանզի սա կապված է հնդեվրոպական նախավոր շրջանին ու հնարավոր է, նաև ավելի հին շրջաններին: Բացառված չէ, որ աշխատանքային երգերի նախապատմական իմաստները պայմանավորված լինեն շփածին և համակրական մոգությամբ, այսինքն, լինեն «նախավոր» հավատալիքներ:

(Թե սա ճիշտ է, ուրեմն հայ աշխատանքային, հարսանեկան ու մյուս երգերը հնագույն հավատալիքները հետազոտելու մի եզակի ու հազվագյուտ նյութ են: Էս տեսանկյունից ապշելու է, որ հայ երգը, անցնելով 5-6 հազարամյա ուղի, մինչև 20-րդ դարը պահպանել էր էլ հավատալիքների հետքերը:

(Պարերի ծիսական ծագումը վաղուց է հայտնի, օրինակ, վարդավառին ջուր ցողելը, տյառնընդառաջին կրակի շուրջը պարելն ու վրայով ցատկելն, անկասկած, կապված են անտառի արքայի, պտղաբերության աստվածուհու՝ Մեծ Մոր, ուրեմն, նաև ջրի ու կրակի հեթանոսական պաշտամունքների (տես, օրինակ, Ջեյմս Ջորջ Ֆրեզեր, *Ոսկե ճյուղը*, ու *Adonis, Attis, Osiris* գործերը):

5. Հայ գեղջուկը ոչ թե ուղղակի երգել է, այլ տեղումտեղն ու խկույն ստեղծել է: Ժողովուրդը լրիվ՝ եղել է մի կողելուով կոմպոզիտոր՝ երգահան: Հայ գեղջուկը ոչ մի երգը երկու անգամ նույն ձևով չի երգել: Այնուհանդերձ, մեր երգը եղել է լրիվ հայկական, ու հազարամյակների ճանապարհ անցնելով, չի դարձել այլ բան:

Ուրիշ խոսքով, մեր ողջ ժողովուրդը եղել է մի վիթխարահանձար կոմպոզիտոր-վարիացիոնիստ-իմպրովիզատոր: Եթե նկատի առնենք

նվազարանների բացակայությունը (չհաշված զուտ հայկական նվազարանը՝ փողը, որ նվազում էին միայն հովիվները, ու ինչն էսօր չկա), ու եթե նկատի առնենք երգերի խորությունը, վեհությունն ու բազմազանությունը, նոր կիսանանք, որ 20-րդ դարի սկզբի համար էս երևույթը եզակի էր ողջ աշխարհում:

6. Հայ մանուկը երգ ու պար սովորել է ոչ թե դպրոցում, այլ ամեն տեղ, ամեն պատեհ առիթով. սովորել է էնպես, ինչպես խոսելն են սովորում:

7. **ՀԱՅԸ ՊԱՐԵՂԱՆԱԿ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ ԵՐԲԵՔ ԵՎ ՈՉ ՄԻ ԱՆՎԱՄ:**  
(Կարելի է ենթադրել, որ պարեղանակի բացակայությունը հատուկ է եղել հնդեվրոպացիներին:

(Հույները նույնիսկ հիշում են, որ քնարն Օրփեոսն է ստեղծել, ինչից բխում է, որ առաջ քնար չեն ունեցել (մանավանդ, որ քնարի բարեյեֆ կա արդեն շումերական պեղումներում, հույներից ու առհասարակ հնդեվրոպացիներից մեկուկես հազարամյակ առաջ), իսկ ռուսները իրենց ազգային երգ ու պարը կործանող Պետրոս առաջինից առաջ պարում էին միայն երգելով ու խմբով (хоровод-ով)):

Պարեղանակները եղել են օտարամուտ ու արմատ չեն ձգել հայոց մեջ (մինչև մեր օրերը). անհետացել գնացել են:

8. **ՀԱՅՆ ՈՒՆԵՑԵԼ Է ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ ԵՐԳԱՊԱՐ. ՊԱՐԵԼ Է ԵՐԳԵԼՈՎ ՄԻԱՅՆ, ՊԱՐԵԼԻՍ ԵՐԳԵԼ Է ՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿ ԵՐԳԵՐ՝ ՊԱՐԵՐԳԵՐ:** ՍՐՎ ՀԱՄԱՐ ԷԼ ՃԻՇՏ ԿԱՆԵՆՔ, ԵԹԵ ՄԵՐ ԼԱՆԿԻՆ ՊԱՐԵՐԻՆ ԱՄԵՆՔ **ԵՐԳԱՊԱՐ ԿԱՍ ԳԵՂՈՆ:** Պարն սկսելիս՝ հաճախ, ռիթմը բռնելու համար, մի չքս շրջան պարել են ԼՈՒՌ, առանց երգի ու նվագի:

9. Հայ պարը չի ունեցել կիրք զարթնեցնող, մեղկ, վավաշոտ շարժումներ. չի ունեցել «բալետային», արհեստական, շինժու, արտակարգ ճարպկություն ու ուժ ցուցադրող շարժում: Պարելիս հայը չի խոնարհվել, չի կռացել, չի թռչկոտել, գլուխն աշխուժով չի թափահարել: Իրանը միայն թեթևակի է ծածանել ու շորորել. իրար շալակ ելնել կամ իրար ուսերի բարձրանալ՝ չի եղել:

10. Մեր ժողովուրդը ոչ միայն ազգովի կոմպոզիտոր-վարիացի-նիստ-ինսպրովիզատոր է եղել, այլև՝ բալետմեյստեր, չափի համաճարել զգացումով. ժողովրդի հորինած պարը գուրկ է եղել որևէ գոեհիկ շարժումից: Իհարկե, հայը պարել է ուրախ էլ, ծանր էլ, արագ էլ, թափով էլ, թեթև էլ, կատակով էլ, բայց միշտ լուրջ, նույնիսկ կատակելիս, էնպես, ինչպես սեղան են նստել՝ միշտ «տղամարդավարի»:

11. **ՀԱՅԸ ՄԵՆԱՊԱՐ ԿԱՍ ՋՈՒԳԱՊԱՐ, ԿԱՍ ԻՐԱՐԻՑ ԱՆՋԱՍ, ՋՈՒԿ ՊԱՐՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ՝ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ, ՉԻ ՈՒՆԵՑԵԼ ՈՒ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ, ՈՒ ՄԱ ԲՈՒՆՈՐՈՎԻՆ ԷԼ ՎԱՍ ԲԱՆ ՉԻ ԵՂԵԼ:**

Սա եղել է եզակի երևույթ, եզակի ու գեղեցիկ, ու վեհ, ու հրաշալի: Պարել են՝ միշտ թև-թևի, ուս-ուսի, իրար ձեռք բռնած, երգելով: Պարերգերը եղել են պարզ ու այնպես հարմարած, որ շնչելուն չխանգարեն:

12. Չուռնա-դիուր սելջուկ-թուրք-թաթարները բերին, ու դրանք մերը չե՛ն, մեր երգ ու պարի մեջ գեղեցիկ չե՛ն, մեր երգ ու պարի մեջ տգեղ են ու այլանդակ: Հայ երգին, պարերգին ու երգապարհին ամենամեծ հարվածը հենց զուռնան հասցրեց:

13. (Երբեմն կլսես, իբր զուռնան յուրօրինակ ու հրաշալի նվագարան է: Բան չունեն ասելու, բայց սրանք յուրօրինակ են թուրք ու թաթարի համար: Ու հիմա մենք ունենք էլ «զավ, յուրօրինակ ու հրաշալի» զուռնան ու չունենք մեր ազգային աշխարհիկ երգն ու երգապարը, ու մեր բնիկ նվագարանը՝ փողը: Է՛հ, թե որ զուռնան էլքան հրաշալի բան է, եկեք գնանք Միջին Ասիա ու էնտեղից 3-4 մետրանոց զուռնա բերենք՝ դարձնենք մերը: Դրանք մեր տեղականներից մոտ 20 անգամ երկար են, ուրեմն երկի 20 անգամ էլ լավը լինեն: Հը՞):

14. Մեր միակ բնիկ ազգային նվագարանը փողն է, ինչը հիմա ԻՍՊԱՆ ՉԵՆ ԳՈՐԾԱԾՈՒՄ: Էսօր միլիոնավոր հայից փող ածելը իմանա երկի մեկ-երկու մարդ միայն:

15. Էս ամենն ունեինք՝ Հիմա ունենք՝ «Մշակույթի» նախարարություն, «Կրթության ու գիտության» նախարարություն, «ազգային» կոնսերվատորիա, «ազգային» օպերայի թատրոն, երաժշտական ուսումնարաններ, «ժողովրդական» հազարավոր անսամբլ, հազարներով «աստղ», զուռնա, դիու, թառ, քյամանչա, ակորդեոն, քանոն, դուդուկ, սրինգ, շվի, կլարնետ, մենապար, զուգապար, «բերդ» պար, բարդ, զուսան-աշուղ, տասնյակներով հեռացույցով էլույթ ունեցող երգի պարի «տաքիս դաստա», ու էլի հազար ու մի բան, բայց չունենք էս 14 կետում ասած հատկանիշներով ազգային երգն ու ազգային երգապարը, ու չունենք միակ հայկական ազգային նվագարանը՝ փողը:

16. Հայ գեղջուկը ո՛չ կոնսերվատորիա ուներ, ո՛չ օպերա ուներ, ոչ էլ ժողովրդական անսամբլ, բայց երգ էլ ուներ, երգապար էլ, ու ունեցածն էլ՝ պաշտամունքի էր արժանի: Բայց որ հիմա գիշերը Անկարայի մի ռադիոալիքը լսես ու ուշ չդարձնես, որ լեզուն թուլքերեն է, հենց կիսանաս, թե Հայաստանի ռադիոն կամ հեռացույցն էս լսում, որովհետև իրենք էլ, մենք էլ -- նո՛ւյն երգերն ենք փոխ ասել:

Մեր էս հեռացուցային «արեոպագր» հենց է՛ս բաները պիտի ասեր:

17. Ու պիտի ասեին, որ.

ա) Հազար ափսոս, բայց էսօրվա հայերն իրենց աշխարհիկ (ժողովրդական, ազգագրական, «կոմիտասայան») երգերը (մանավանդ իրենց երգելու հայկական ձևով, քառյակների հայկական դրությամբ, երգի հայկական զարդանախշով, հայկական ձայնաշարով (ինչպես ասում էր հարդրմանը մասնակիցներից մեկը)) բոլորովին չեն երգում, ուրեմն, էսօր լրիվ գուրկ են երգվող ազգային երգից:

բ) Հազար ափսոս, բայց էսօրվա հայերը լրիվ են գուրկ իրենց ազգային ձևի երգապարից ու պարերոցից:

գ) Հազար ափսոս, բայց էսօրվա հայերի ժողովրդական երգը հենց է՛ն երգն է, ինչը երգում են ու լսում են հեռացուցով ու ռադիոյով, մանավանդ ԱԼՄ ալիքով: Ուրեմն, էսօրվա հայերի երգը, համարյա լրիվ, փոխ է առած հարևան ժողովուրդներից ու մակարդակով էլ՝ անհավոր ցածր է:

դ) Հազար ափսոս, բայց էսօրվա հայերն իրենց ժողովրդական, ազգագրական, «կոմիտասայան» երգապարերը (մանավանդ երգելու ու երգով պարելու հայկական ձևով) բոլորովին չեն պարում, ու էսօր լրիվ են գուրկ իրենց իսկական ազգային պարից: Ուրեմն, էսօրվա հայերի էսօրվա պարերը կամ հայելեն չեն, կամ փոխառյալ են, ու հազար ափսոս, որ հենց էս օտար պարերն են էսօրվա հայկական ժողովրդական պարերը:

ե) ՊԻՏԻ ՄՍԵՆ, ՈՐ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՆ ՈՒ ՊԱՐԸ ԷՍՕՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԾԵՆ, ԻՍԿ ՄԵՐ ԷՍՕՐՎԱ ՅՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՆ ՈՒ ՊԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՆ:

Այ, թե ինչ պիտի ասեին մեր «մասնագետները»:

Պիտի ասեին նաև, որ այլևս լույն անհնար է, քանզի հայ ազգային երգն ու պարը մեր երգն ու պարն է, ու չպիտի անտարբեր նայենք սրանց ճակատագրին, քանզի վիճակը հիմա օրհասական է, մանավանդ, որ էս վերջին չորս մասնաբաժնիները, ի փոխառություն մեզ, կը ողջ ճշմարտությունը չի: Եշմարտությունն ավելի սարսափելի է:

Բայց կարդացողը երևի հարցնի, թե ի՞նչ երաշխիք կա, որ հենց է՛ս են ճիշտ ասում, կամ որ ես ճիշտ եմ ասում: Սրա համար էլ կարճ գրելու են Կոմիտասի՝ էն ասածների մի մասը, որ (ը)սփռված են իր հողավածների մեջ: Ու ես դրանք ուղղակի հավաքել եմ ու, քիչ թե շատ անփութի, դրել եմ էստեղ: Ուրեմն, իմ էս գրածը ի՛մ եզրակացությունները կամ ի՛մ հորիմածը, կամ էլ՝ ի՛ն ցանկությունները չեն: Ու յնարկե, ամբողջական էլ չեն:

Թե որ մեկնումեկն էս գրածիս համաձայն չի,

ուրեմն, համաձայն չի հենց Կոմիտասիին:

Ասածներս ստուգելի են, աղբյուրները ուշում են:

Ապացույցները կարող են լինեն միայն պատմական, ու էս հարցերից համապարփակ գիտելիքներով օժտված միակ վկան, է՛ն վկան, ով էս հարցում ունի նաև գորավոր հեղինակություն, ու ում անաչառությունն ու անկեղծությունը կասկած չի հարուցում, Կոմիտաս վարդապետն է:

Ասածս հաղորդման մասնակիցներից մեկը, Ա. Շահնազարյանը, ասաց, որ Ա. Սպենդիարովը ժամանակին ասել է, թե «Կոմիտասը միստիֆիկատոր է», այսինքն, Կոմիտասի ասածները կեղծ են, հորինովի են:

Հաստատ չգիտեմ, բայց կարծում եմ, որ Սպենդիարովն անպայման ասած կլինի էս տեսակ մի բան, որովհետև Սպենդիարովի արևելյան մոտիվներով ստեղծած գործերի մեջ հայ ազգային երգից ոչ մի բան չկա:

Հնարավոր է, որ Սպենդիարովը բուն հայկական երգ ու պարին ծանոթ եղած չլինի: Ինչ որ է, ես հավատում եմ Կոմիտասին ու չեմ հավատում Սպենդիարովին:

Չի եղել ու հիմա էլ չկա երգ ու պարով, ու, առհասարակ, երաժշտությամբ, մանավանդ արևելյան ժողովրդական երաժշտությամբ զբաղվող որևէ մեկը (էսօր՝ զոնե Հայաստանում չկա), ով Կոմիտասից ավելի լավ իմանար մեր ազգային երգ ու պարի նախկին վիճակը, ի՛ր օրերի վիճակը:

Ու ամենաողբերգականն է՛ն բանն է, որ եթե ժամանակին Կոմիտաս վարդապետն ապացուցեց, որ հայն անպայման ունի (թե՞ «ուներ») ազգային երգ ու պար (էն օրերին բոլորն էլ պնդում էին, թե հայերն ինքնուրույն երգ ու պար չունեն, թե իբր հայերն իրենց է՛ն օրերի երգն ու պարն ուրիշներից են փոխ առել), հիմա էլ սոցիալված պիտի գերեզմանից ապացուցի, որ վերջին 8-9 տասնամյակում հայը կորցրել է թե՛ իր ազգային երգը (թերևս՝ փոքր-ինչ վերապահությամբ, սրովհետև եկեղեցական ազգայինը կը կա), թե՛ պարը (սա՛ լրիվ):

Ինչևէ, որ ասվածը պարզ լինի, նախ պիտի հստակ իմանանք, թե ի՞նչ ենք ունեցել, թե ինչպիսի՞ն է եղել մեր երգն ու պարը 8-9 տասնամյակ առաջ: Սրա համար էլ խոսքը տանք հենց իրեն՝ Կոմիտաս վարդապետին:

(Էստեղ ու հետո քաղվածքները կարվեն Ռ. Թերլենեզյանի կազմած «Կոմիտաս, հողվածներ և ուսումնասիրություններ», «Պետական հրատարակչություն» գրքից՝ տպագրված 1941 թ., Երևանում, ինչը գրված է Մանուկ Աբեղյանի ուղղագրությամբ, ու ինչը, իմիջիայլոց, շատ ավելի պարզ ու լավ ուղղագրություն էր, քան էսօրվանը: Ամտելյակները ի՛նչ էսօրվա ուղղագրությունն են սխալմասը համարում Աբեղյանինը: Թող ցանկացողը կարդա հենց էս գրքի երկրորդ մասը, որ տեսնի, ճի՛շտ եմ ասում, թե՞ չէ):

ԽՈՍՈՒՄԷ ԿՈՄԻՏԱՍԸ - 1.  
ԻՆՉՊԻՄԻՆ Է ԵՂԵԼ ՀԱՅ ԵՐԳԸ

«Մենք հայ ենք» հեռացուցային շոուի մասնակիցները ոչ մի էական բան չասին բնիկ հայ երգի մասին:

Բայց ահա թե ինչ է ասում Կոմիտասը:

Կոմիտասն ասում է (ամեն տեղ մեծատառերն ու ընդգծածները՝ քավատառերն ու շատառերը («բողոք» ու «խտալիկը»), ի՛մն են –Մ. Հ.):

«...Մեր յերաժշտությունը յերկու գլխավոր խմբի է բաժանվում:

1. Յեկեղեցական;
2. Աշխարհիկ կամ ավելի ուղիղն ասած՝ ժողովրդական:

... Մեր ժողովրդական յերգերը բաժանվում են հետևյալ տեսակների.

1. Մանկական երգեր, վորոնք ամենապարզ կազմն ունեն:
2. Պարեգեր, վորոնք կոչվում են յայլի և մի քիչ ավելի զարգացած են, քան առաջինները:
3. Դյուցազներգեր, վորոնք նվիրված են լինում վորևէ հերոսի գովքին:
4. Մահերգեր, վորոնք նվիրված են դիպվածներին և պատահարներին գոհ գնացողների հիշատակին:
5. Հարսանեկան յերգեր, վորոնք երգվում են հարսանեկան զանազան արարողությունների ժամանակ և պսակից հետո:

6. Բնության յերգեր, վորոնք ամենագունեղներն ու հետաքրքիրներն են: Օրինակ, գութանի (ոչ էն աղավաղ «Հորի, հորի հորովել»-ը, ինչը հիմա երգում են մեր «ժողովրդական» երգիչներից ոմանք – Մ. Հ.), վար ու ցանքի, կալի, հունձքի, քաղհանի երգերը...

«... բնության յերգերն ամենագունեղներն ու քարոզ են: Արդարև, գութաներգի մեջ մտնում են շատ տարրեր, ինչպես՝ գութանի անվի ճռոցը, շրթաների շրխկոցը, յեզների կամ գոմեշների փոնչոցը, մաճկալի ալ և այլ բացականյութությունները գործի ժամանակ, օրինակ, անուշազիր հոտաղին ուղղված կշտամբանքը, լծկաններին շոայված խրախույսը, խանդաղատանքը, սերը ևն:

«... Հարսանեկան յերգերը նույնպես բազմատեսակ և խորհրդավոր են: Նրանց թիվը առ այժմ հասնում է 78 – ի:

(Ապշելու բան է՝ 78!։ Էսօր դրանցից ոչ մեկը չի երգվում: Փոխարենը երգում ու նվագում են ամեն տեսակ ռաբիս, երբեմն էլ՝ Մենդելսոն, ևն: Ուրեմն, սրա՞նք են հայկականը – Մ. Հ.):

«Հետաքրքիր են այս շարքում այն յերգերը, վորոնք կրում են «ծաղկոց» անունը, և 16 հատ են: Այս յերգերը յերգում են հարսնացուի մոտ ըն-

կերուհիները՝ պսակի նախընթաց ամբողջ զիշերը մինչև լույս, հարսնացուին զուգելու, զարդարելու ժամանակ: Նրա գովքն են անում, նմանեցնում նրա կյանքը՝ ծառի, ծաղկի, լուսնի ևն:

«Իսկ մյուս յերգերը վերաբերում են փեսային, հարս ու փեսի մորը, փեսայի ազապ ընկերներին, հարսնետոբներին ևն: Մի քանիսն էլ հանելուկ են և զվարճական յերգեր:

«Մահերգերը, պատահարների հետ կապված լինելով, ունեն պատահական և մղկտացող եղանակ: Սկսում են ավստասանքներով, ավաղներով, վոր հետո կրկնակ հանկերգ են դառնում, կամ կենսագրական նկարագրություններով, վորոնց կցվում են բնության տխուր տեսարանների պատկերները: (Հիշենք Թումանյանի *Անուշի* ու *Մարդի* միջինները – Մ. Հ.):

«Դյուցազներգերը գլխավորապես հիմնվում են պատմական ավանդությունների վրա, վորոնց թվում հայտնի յե Մոկաց Միրզայինը:

«Պարեգերը ծագում են առնում պարի ժամանակ տղայի և աղջկա միջև առաջացած զգացումներից: Նրանք սկսում են, ինչպես պարերը, ծանր, հանդիսավոր և ապա, կամաց-կամաց, տաքանում և արագանում:

«Պարագլուխը յերգում է առանձին նախադասությունը մինչև վերջին բառը, խումբն առնում է վերջին բառից և կրկնում նույն նախադասությունը մինչև վերջին բառը, վորի վերջին բառից դարձյալ սկսում է պարագլուխը և շարունակում յերկրորդ նախադասությունը՝ մինչև վերջին բառը և այսպես հաջորդաբար»:

Էս քաղվածքը պիտի միայն ընկնանուր պատկերացում տա մեր աշխարհիկ երգի մասին: Բայց բուն հայ ժողովրդական երգը անբաժան է եղել ստեղծագործական պրոցեսից: Նորից խոսքը տանք Կոմիտաս վարդապետին.

«Անցյալ 1905թ. ամառանոց եյի գնացել Հառիճի վանքը (Շիրակում, Ալեքսանդրապոլից 28 վերստ հեռու, Արագածի վրա): Վարդապետի տունին ուխտ եր եկել մի մեծ բազմություն:

«Ուխտին՝ գյուղացի աղջիկները, նորահարսերն ու տղաները, ինչպես սովորույթ է, պար են բռնում, խաղ կապում ու յերգում: *Ակիտսս որ այդ բնական, բանաստեղծական, բովանդակայից և գողտրիկ պարեղին մ.ժ հարված է տվել և տալիս է այլանդակ, անձաշակ և կարծր գուռնան»:*

(Էսօր վկա ենք էլ հարվածի արդյունքին՝ գուռնան սպանեց, մորթեց հայ աշխարհիկ երգն ու մանավանդ երգապարը, ու մեր (Կոմիտասի ասելով) միակ ու իրոք ոչ ազգային նվագարանը՝ *փողը* – Հ. Մ.):

«Ուխտատեղին կորցրել է իր բուն նշանակությունը և դարձել գուռնաչիների և առավելապես կեր ու խումի վայր: Ամեն մերձակա և հեռու գյուղերում է յուր գուռնաչիների խումբը:

«Յերևակայեցեք մի բակ, մի տասնյակ զուռնաչի, խումբ-խումբ, այս ու այն անկյունում, կամ բակի մեջտեղում, հաճախ իրար կից նվագելիս: Խոնված բազմություն, ասեղ ձգելու տեղ չկա: Բարձր սարերից, խոր-խոր ձորերից տասնյակ *զուռնայի բռի ձայների* արձագանքն եւ անդրադառնում:

«Մի զարհուրելի, անլուելի, խոժոռ ձայների անտանելի ժխոր: Փորձիր սենյակդ մտնել. դռները պինդ գոցիր, բայց զուր. *զգվելի զուռնայի զոզրան ձայները* պատիցն ել են թափանցում» (ըստ ժամանակակիցների վկայության, Կոմիտասի ամենաթունդ հայեռյանքը՝ «զուռնաչին» էր - Հ. Մ.):

«Յերբ վանքն իր նախկին խաղաղությունն ստացավ, դառն բողոքեցի ընկերիս՝ Երվանդ վարդապետին, իմ գայրոյթը հայտնեցի զուռնաչի յերաժշտության դեմ, և սաստիկ կսկիծ, որ բուն, անարատ, բանաստեղծական գեղջուկ յերգերն անհայտանում են: (Օդորմի քեզ, դժբախտ վարդապետ, բա որ հիմա ողջ լինեիր, ի՞նչ կասեիր. անշուշտ, էս անգամ չէիր խելագարվի՝ իսկույն սիրտդ կպայթեր - Հ. Մ.):


«Հայր Յերվանդի յերայրն իսկույն գյուղ գնաց, և ազգականների հարսներին, աղջիկներին հավաքեց վանքի բակը: Որը (Օրը - Մ. Հ.) յերկուշաբթի էր և մեռեց: Ա՛յ, այժմ սկսեցինք հայրենի սրտալի յերգեր լսել և հարազատ ուխտ անել:

«Յես արդեն, թուրքն ու մատիտը պատրաստ, դուրս էյի յեկել շինության տալահատակ տանիքը և սպասում էյի նոցա գալուն:


«Այս անգամ ներկա էյի հենց սկզբից. ուրիշ անգամներին հնար չեր լինում, վորովհետև պար բռնելն սկսում են գիշերով, իսկ յես հասնում էյի և պատրաստ յերգեր էյի լսում: Տեսա և զգացի, թե վորքան սխալվել են:

«Առաջ-առաջ, մի չորս հոգի յեկավ: Պարը բուրբեցին: Մի յերկու շրջան, լուռ, բայց համաշափ քայլով, դեպի աջ, վորպես սովորույթ ե խաղի սկզբին, պտույտ արին: Մեջների լավ խաղ աստղն սկսեց յերգել այս կրկնակով...

*Աման, թելո, թելո,  
Միրուն թելո, թելո:*



«Խումբն այս կրկնեց նույնությամբ և պարագլուխը շարունակեց յերգի առաջին մասը և կրկնակի առաջին տողը.



«Մումբը կրկնեց նույնը: Պարագլուխը շարունակեց յերգի երկրորդ մասն ու կրկնակի յերկրորդ տողը փոքրիկ ավելագրությամբ.



«Վոզկորության ազդեցության տակ, կամաց-կամաց յեղանակը զարգացավ և ձևափոխություններ ստացավ.

1	
2	
3	
4	
5	
6	
7	

«Յեղանակը զարգացավ հետևյալ ձևով.

«Վերջին 6, 7, 8 ձևերին փոխվեցավ տաղայափոթյան կշիռը, վորով-հետև բռնում էյին արագ: Ութերորդ ձևը երգելիս՝ յեկավ մի երկրորդ խումբ, վոր պարի մեջ մտավ հենց յերգի ընթացքում: Նոր պարագույնս անցավ պարի գլխին: Պարագույնս լինում են հայտնի խաղ ասող աղջիկներ կամ տղայք. յերբ զարիս է մի այդպիսին, նախկինը պարի դեկը տալիս է նորան և ինքը կանգնում ձախ կողմից: Յերկրորդ պարագույնս փոխեց յեղանակը, մի ստտիճան բարձր բռնեց առաջին մասը...

«Յեղանակը զարգացավ հետևյալ ձևով...

«Այստեղ միացավ էյի մի քանի հարսն ու աղջիկ, պարագույնս նորից փոխվեցավ: Մա էլ ավելի բարձր յերգեց.

«Պարի ընթացքում եղանակը ստացավ հետևյալ ձևը.



«Հանկարծ սկսան կանչել ու քաշքշել մի աղջկա, վոր հեռու կանգնած դիտում էր. տարան և պարի գլուխ կանգնեցրին: Խաղը մի առ ժամանակ ընդհատեցին, միչև վոր այդ աղջիկն էլ մտավ պարի մեջ: Սա գյուղի հայտնի յերգչուհին և պարուհին էր: Սովորույթի համաձայն այսպիսին չեմ ու չեմով ե գալիս, թեև սիրտը յեռում ե յերգել-պարելու համար:

«Պարը հասավ վոզևորոթյան զագաթին: Պարագլուխն իր սքանչելի ձայնով բոլորեց եղանակը և նոր վոզի ներշնչելով՝ յերգին համ ու գույն տվավ:

1	
2	

«Այստեղ եղանակը կրեց հետևյալ փոփոխությունը. սրանցից ամեն մեկը ունի իրեն հատուկ գեղեցկությունը».

1	
2	
3	
4	
5	
6	
7	

8	
9	
10	
11	
12	

Կոմիտասն իր խոսքը եզրափակում է հետևյալ բառերով.

«Հաջորդ յերգերն այս խաղի հիմնաձևի ազդեցությունն էյին: Քանի յեղանակ փոխվեցավ, այնքան հեռացան:

«... Այն որը (օրը - Մ. Հ.) գրի առա 34 նոր յերգ:

«Այսքանը քավական ե պարզելու համար, թե ինչպես են ծնունդ առնում գեղջուկ յերգերը և թե ինչպես են տեղնուտեղը, բազմապատիկ աճում ու զարգանում:

«Պարը վերջացավ: Խնդրեցի, բոլորն էլ յերգեցին առաջին խաղը, բայց վերջին պարագլխի յեղանակով: Յերբ ինքս արծարծեցի և հիշեցնել կամեցա յուրաքանչյուր եսխկին պարագլխի յեղանակը, ամենեկին կարևորություն չտվին սեփական ստեղծագործության, քանի վոր գյուղի առաջին երգչուհին, իր վոլորուն ձայնով ու բնատուր ձիւրով, գեղարվեստական ամփոփ արտահայտություն էր տվել բոլորի թոթովանքին:

«Առարկեցին թե - «եղոնք լավը չեն»: Մինչև անգամ զարմանում էյին, վոր մի «խաղ առող վարդապետ» չնչին բաների կետևիցն ե ընկել: «Յեղո ե, խաղ ե», -ասացին ու գնաց, էլ ու՞մ վեճն էր թե ո՞վ, ու՞ր, յե՞րբ և ի՞նչպես ե յերգել:

«Գյուղում ամենքն էլ, լավ կամ վատ, յերգել գիտեն. վորովհետև մասնակից են յերգաստեղծության կամ յերգասացության: Բայց և վոչ մեկը չգիտե, թե ո՞վ ե կապել խաղը, վորովհետև բոլորը միասին են հյուսում:

«Վոչ մեկը չգիտե, թե վորտեղ ե հյուսել, վորովհետև խաղ ստեղծել կարելի յե ամեն տեղ: Վոչ մեկը չգիտե, թե ի՞նչպես ե հորինել, վորովհետև յերգաստեղծությունն ինքնաթեր կարողությունն է: Վոչ մեկը չգիտե, թե

յե՛րբ ե հնարել, վորովհետև յուրաքանչյուր բոսի ե հետը բերում ե նոր տրա-  
մադրութիւն:

«Մեկն առի՞ք ե տալիս, մյուսը՝ նյութ, մեկը մի միտք ե հղանում, մյուսը  
ձևակերպում ե և տեղնուտեղը, վայրկենական տպավորութեան և ազդեցու-  
թեան տակ, խոսքն ու ձայնը, բանաստեղծութիւնն ու յերաժշտութիւնը,  
իբր յերկվորյակ քույրեր, բխում են անսպաս կերպով ժողովրդի մտքից ու  
սրտից, բնագոյարար և առանց կամիսակալ նախապատրաստութիւն ունե-  
նալու:

«Իրանց միջի նուրբ ճաշակի տեր անձն ել կոկում ու բնականաբար,  
տեղական դրանշն ե դնում և գեղջուկի բուն վոզին վառ գույներով պայծա-  
ռացնում: Արդե՛ն հետո, իբր կատարյալ, պատրաստի յերգ, իրենք ել չգի-  
տեն, թե ո՛վ կամ յե՛րբ ե ստեղծել, ու՛ր կամ ինչպէ՛ս ե ծնունդ առել»:

Առայժմ դարարենք Կոմիտասի խոսքը:

Ամենաապշելու բանն էս նկարագրութեան մեջ է՛ն փաստն է, որ հայ  
գեղջուկները, եղել են կոլեկտիվ երգահան (կոմպոզիտոր) ու սրա հետ էլ՝  
կատարող, երաժիշտ, բայց, առանց որևէ գործիքային նվագակցութեան:

Ժողովուրդ-կոմպոզիտոր՝ ահա թե ինչ է եղել հայ ժողովուրդի մեծ  
մասը:

Երգել ու պարել են բոլոր գյուղացիները, իսկ մի քանի դար առաջ՝ երևի  
բոլոր-բոլորը (նաև քաղաքացիները), առանց բացառութեան, ամեն մեկն  
ի՛ր կարողութեան չափով, բայց բոլորս:

Ասվեց, որ հայերի երգային ու պարային ավանդույթները երևի գալիս  
են հնգեվրոպացիների նախավոր օրերից, բայց 20-րդ դարի սկզբին ար-  
դեն ոչ մի ազգ, բացի հայ ազգից, այլևս էս տեսակ ավանդույթ երևի չու-  
ներ, որ տեղնուտեղն ստեղծեր, կոկեր, կատարյալ դարձներ իր երգը: Ապ-  
շելու բանը միայն սա չի:

Ապշելու է նաև, որ հայ շինականը երբեք նույն երգը երկու անգամ  
նույն ձևով չի երգել: Նույն երգն ամեն անգամ երգել է այլ կերպ, նորովի,  
բայց մեկ է. էլ երգը միշտ մնացել է հայերեն, միշտ ազգային ու երբեք չի  
փոխվել: Մեռավ, բայց չփոխվեց: Ուրե՛մն, կյանքի գնով էլ չփոխվեց:

Կս՞ սրանից ավելի արտառոց որևէ բան. երգ՝ ինչի թե՛ մեղեդին, թե՛  
բառերն անընդհատ փոխվում են, բայց, ինքը երբե՛ք, երբե՛ք չի փոխվում:

Մի քանի տասնամյակ առաջ Լենինգրադի երաժշտագետները փոր-  
ձում էին՝ հաշվիչ մեքենաներով պարզեն, թե ի՞նչն էր հայ երգի ինվա-

բիանտը (նույնադիրը, հաստատունը, անփոփոխը), ի՞նչն էր սրա մեջ  
մնում անփոփոխ, սրա ո՞ր հատկանիշն էր, որ սա պահում էր անաղարտ  
ու անբիծ (տես գրականութեան ցանկի *Կոմիտասական-2-ը*):

Հա՛, անաղարտ ու անբիծ, որ մի քանի հազարամյակ մնա, մնա մինչև  
19-րդ դարի վերջը ու էլ ժամանակ Կոմիտաս վարդապետի բերանով ապ-  
շեցնի ողջ Եվրոպային, ու մի քանի տասնամյակում մեռնի:

Ու մի բան էլ:

Հայն ունեցել է միայն ու միայն ԵՐԳԱՊԱՐ, նորից առանց որևէ գործի-  
քային նվագակցութեան: Այլ կերպ ասած, ՀԱՅԸ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՊԱՐԵՐԱ-  
ՆԱԿ ԶԻ ՈՒՆԵՑԵԼ: Ու սա բոլորովին էլ վատ բան չի եղել:

Մեր երգապարը եղել է հիասքանչ ու, 19-20-րդ դարերում, եզակի: Բա  
սրա պես է՛լ ողբերգութիւն. մի քանի հազարամյակ երգապար ունենաւ,  
երգապար, ինչն սրանչեղի բնութագրում ու ցուցադրում է քո իրոք որ յուրօ-  
րինակ ազգային կերպարը, ու հետո, ընդամենը մի քանի տասնամյակում,  
դա սպանւա ու հենց էլ ընթացքում էլ պարեղանակներ փոխ առնե՞ս:

Ուրե՛մն, հիմա՛ արդեն, պարով էլ, երգով ու եղանակով էլ, չես տարբեր-  
վում (ինքնութեան չունես) ոչ միայն հարևան, այլև բազում ուրիշ արևելյան  
ժողովրդից:

Ու ի՞նչ ես փոխ առել. սրանից, նրանից, էստեղից, էնտեղից. ստացվել է  
մի կատարյալ «Գասպարյանի շարադրութիւն»:

(Ձախելներին ասեմ, որ Գասպարյան ազգանունով մի աշակերտ դարձ-  
ցում, դեսից դենից արտագրելով, մի անհետք շարադրութիւն էր գրել, ու  
սա հայերենի հին դասագրքերում կար ու շատ էր հայտնի):

Ու հետո էլ, երբ մեր էսօրվա երգն ու պարը (էսօրվա՛նը ու ոչ թե կոմի-  
տասյան ու ազգագրական կոչվողները, թեև, կախված կատարելու ձևից,  
ասվածը կվերաբերի նաև սրանց) ներկայացնում ենք օտարներին, զար-  
մանում ենք, թե էս ինչու՞ չեն հիանում սրանցով, ախր Կոմիտասն ասել է,  
որ մեր երգն ու պարը չքնաւ են, ու իրենք էլ 1913 թվին հիացել են: Էս ին-  
չու՞ են սրանք մեզ խառնում Կովկասի մյուս ժողովուրդներին, ևն, ևն:

Ափսոս, բայց ինքներս էլ չգիտենք, թե ի՞նչն է մերը (ավելի ճիշտ, ի՞նչն  
է եղել մերը), ու ի՞նչն է ուրիշներինը:

Իհարկե, թե՛ արվեստի, թե՛ գիտութեան, թե՛ առհասարակ, մշակույթի  
բոլոր բնագալաքներում էլ փոխառութիւնն անխուսափ է ու անհրաժեշտ,  
ու առանց դրա չկա առաջընթաց:

Մեկ ազգը երբեք չէր ստեղծի համաշխարհային ներկա մշակույթը:  
Չիներ Բաբելոնը, չիներ հին Եգիպտոսը, չիներ հին Հունաստանը, չի-

նեին հին հնդկական, չինական, արաբական մշակույթներն ու բազում ուրիշ մշակույթ, չէր լինի եվրոպական վերածնունդը, ժամանակակից գերեզման գիտությունն ու արվեստը:

Բայց եթե գիտության ու տնտեսության մեջ փոխառությանը չափ չկա, լեզվի ու արվեստի մեջ կա: Մրա հետ միասին, ուրիշի լեզվից ու արվեստից փոխ առնելիս՝ չափաի դեմ նետես քո սեփականը, եթե սեփականը լրիվ անարժեք մի բան չի:

Թե որ քո սեփական արժեքավոր բաները դեմ շարտեցիր, կնմանվես էն մարդուն, ով ուրիշի երեխա է որդեգրում ու հետո իր հարազատ զավակին փողոց է շարտում: Երեխային գուցե խղճան, վերցնեն, պահեն ու մեծացնեն. երգը, պարը չեն վերցնի. առավել ևս չեն վերցնի երգելաձևը:

Բացի սա, հնարավոր չի, որ ուրիշի երգն ու պարը էլ ուրիշի պես երգես, ուր մնաց՝ մեծացնես: Ու հետո՝ ուրիշներն իրենցը կունենան, ու քոն իրենց պետք չի լինի: Բոլորը չեն, որ մեր խելքին են:

Հա՛, փոխառություն էլ կա՝ փոխառություն էլ: Հայերն իրանական, սեմական, ու ուրիշ լեզուներից փոխ են առել հսկայական թվով բառ՝ արմատների ամենաքիչը՝ 60-70 տոկոսը: Բայց լեզու փոխ՝ չեն առել:

(Փոխառությունների վիճակն էսպես է ցանկացած լեզվում: Բառերի փոխառությունը լեզվի համար շնչելու պես բան է, առանց բառային փոխառության լեզուն չի ապրի: Չափաի փոխ առնես միայն քերականությունը: Մեր գրական ոճերը սրան լրիվ հակառակ են վարվում):

Ուրիշի քերականությունը փոխ առար՝ քոնը կսպանես: Բառ փոխ առնելը կարելի է ու ուղղակի պարտադիր է, քերականությունը՝ չէ:

(Երբ մենք ասում ենք «կապիտալիզմը սոցիալիզմից վատն է», գործածում ենք միայն մեկ հայերեն բառ՝ է-ն: Բայց էս նախադասությունը հայերեն է, քանզի հասկանալի է ամեն մի հայի, քանզի ամեն մի հայ ունակ է մնան նախադասություն կազմելու:

Իսկ է՛ն օրը, երբ փոխ առնենք ռուսերեն խոսելաձևը (լեզուն, քերականությունը), մեր լեզուն կդառնա, օրինակ, ռուսերենի պես մի բան, եթե մույնիսկ արմատները պահենք էլ: Չգիտեն, մնան բան, առհասարակ, հնարավոր է, թե ոչ, բայց ստացվածը ծիծաղելի ու ողորմելի մի բան կլինի, դա հաստատ: Ի՞նչ կստեք, եթե ռուսերենին նմանակելով ասեն. *Ես խոսում եմ, դու լսույել, նա լսույես* – իբր *ես խոսում եմ, դու լսում ես, նա լսում է*: (Էսօր մեր գրական ոճերը սրա պես բան՝ շատ են անում. տես իմ *Թարգմաններու արվեստը*, նաև իմ *Թվական-գոյական գույզի գործածությունը*):

Մեր երգն ու պարը ոչ թե սրա պես ողորմելի վիճակում են, այլ շատ ավելի թշվառ մի վիճակում: Հայերից շատ-շատերը մտածում են, որ եթե երգի բառերը հայերեն են, ուրեմն, երգն էլ է հայկական: Ու չգիտեն, որ էսօրվա երգվող երգերը, համարյա առանց բացառության, հայկական չեն, ու չէին՝ սկսած 1930-ականներից:

Նույն ձևով էլ՝ ուրիշի երգելու ու պարելու ձևը փոխ առար ու քոնն արհամարհեցիր, սեփական երգ ու պարդ կսպանես: Մենք սա՛ ենք արել:

Բայց, դառնանք Կոմիտասին: Ահա թե էլ ինչ է ասում Կոմիտասը:

«Յուրաքանչյուր գյուղացի քաջ գիտե տեղական յեղանակներն ու յերգերն այնպես, փորպես բառերը: Շատ զարգացած է բնագրաբար հարմարելու յերգական կարողությունը, վորը ձեռք է բերել կամաց-կամաց, դարերի ընթացքում, մշտական փորձերով և սուր հիշողությունով, վորոնց առաջնորդն է գգույշ լսողությունը:

«Յերգելու ժամին, յուրաքանչյուր գյուղացու համար հեղինակությունն է՝ լավ խաղ ստողը: Յերբ սա մի նոր յեղանակ է յերգում, ներկաներն ել սկսում են այնքան արագ ու միաժամանակ կրկնել, վոր լսողը կարծում է, թե յեղանակն առաջուց գիտեին:

«Շատ հետաքրքրական է յերգի կամ պարի ժամանակ գյուղացի մանուկներին տեսնելը: Այս ու այն ծակից ներս են մտնում, պատիկ տոտիկները ձախ ու ծուռ դնում, նոցա հետ այս ու այն կողմ պտույտ գալի, մանրիկ բերաններն ակամա բաց ու խուփ անելով, յերգում այնքան, վորքան մանկական միտքը կըմբռնե և արտահայտելու վստահություն կառնե:

«Հենց վոր խաղը վերջանում է, վազում են, մի առանձին սունկուն բռնում, արծարծում ու սերտում են մեծերից լսածը»:

Մրանից ավելի կատարյալ երգ ու պարի դպրոց կա՞: Հայ գեղջուկ մանուկը սովորում էր ամեն առիթով: Տերյա՞կ եք, թե հիմա մեր հայկական դպրոցներում ինչպե՞ս ու ի՞նչ են սովորեցնում երգեցողության դասերին:

Երբ կարդում ես Կոմիտասի *Լռու գութաները Վարդաբլուր գյուղի ոճով* հողվածը, ուղղակի լացդ գալիս է. ի՞նչ ենք ունեցել և ինչից ենք գուրկ հիմա: Ահա մի հատված դրանից.

«Գործն ու յերգը վարողն է ավագ հոտաղը. եթե մա նկատում է, վոր հոտաղը կամ մաճկալը ամուշաղիբ են, չեն քշում... ամուշաղիբներին է դիմում: Այսպես, օրինակ, յերբ յերգում է՝ «գալիս, գալիս ա» և տեսնում, վոր մեկը չի քշում, անմիջապես վրա յե բերում (երգելով – Մ. Հ.) «քշի, հոտաղ» բացականչելով և ապա շարունակում է՝ «Այ, ակը լալիս ա» (քանի որ դու

չեն երգում – Մ. Հ.) ևն: Կամ, յերբ տեսնում ե, վոր չեն երգում՝ քարկանում, զայրանում ե, վոր քշելու ժամանակ չեն յերգում՝ ասելով. «Հորիքն ելավ (այսինքն, հերիք է, բավական է, վե՛րջ տուր – Մ. Հ.), այ լալիկ հոտաղ, այ» (այսինքն, ա՛յ համր հոտաղ, երգի՛ր...):

Ուրեմն, աշխատանքի, վարի, ցանքի, կալի, հնձի, քաղհանի ժամանակ երգելը հայ գյուղացու համար ՊԱՐՏԱԴԻՐ Է ԵՂԵԼ, երգելը եղել է աշխատանքի մի բնական, անկապտելի մասը, մի կատարյալ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՍ, ինչը սրբագործվել է հազարամյակներով:

Աշխատելիս չերգելը չէր կարելի, «ավագ հոտաղը կբարկանար»: Ու «ծանոթ ու անծանոթ անց ու դարձ անողի հասցեին՝ անպատճառ որևէ բան հյուսելու էին»:

«Ժողովուրդն արվեստական (արհեստական, ոչ տեղին – Մ. Հ.) յերգեցողություն ասած բան չգիտե... Ոչ մի գյուղացի, տանը նստած, կալի յերգ չի ասի. վորովհետև կալերգն ստեղծելու և ասելու տեղն է կալը»:

Ա՛յ, հենց է՛ս բաները պիտի ասեին մեր հեռացուցային դասախոսները:

Ու նաև մեր կոնսերվատորիայի ու օպերայի գործիչները:

#### ԽՈՍՈՒՄ Է ԿՈՄԻՏԱՍԸ-2.

#### ԻՆՉՊԻՄԻՆ Է ԵՂԵԼ ՀԱՅ ԵՐԳՎՊԱՐԸ

Տեսնենք, թե Կոմիտասն էլ ինչ է ասում հայ պարի մասին.

«Հայ գեղջուկ պարը կիրք զարթնեցնող շարժումներ չունի, և զգացմունքներն արտահայտվում են ոչ թե մեղկ, մոլի, կատաղի, հրապուրիչ և այլ շարժումներով, այլ ՊԱՐԵՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:

«Հայ գեղջուկը պարերի ժամանակ զուխն իր միանգամ բռնած դիրքն անփոփոխ է պահում. սովորաբար մի քիչ թեք դեպի աջ կամ ձախ և կամ ուղիղ. իսկ շարժելիս ել՝ միայն ավելի առաջ և սակավիկ մի հետ, աննշմարելի կերպով: Աշխուժով զուխը թափահարել, եռանդուն ցնցել ևն - չկա:

...

«ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԵՐԸ ԽՄԲԱԿԱՆ ԵՆ: Խմբապարը շատ խբբունկ արմատ է ձգել հայ գեղջուկի մեջ, վոր հինը պահում է և նորը հորինում:...

«Հայ գեղջուկ պարերի ժամանակ, սովորաբար, նվագարաններ չեն մասնաձևցում (նվագարանների գործածությունը թեև մտել է, բայց օտար է. նվագարաններով պարելը տարածված է քաղաքներում և կամ առ առավելն սորա մերձակա գյուղերում, որոնք քիչ թե շատ շփում ունեն օտարներին): ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԸ ՊԱՐՈՒՄ Ե ՅԵՐԳԵԼՈՎ: Մեր նախնիները յերգելով սչարելուն ասում էին ԳԵՂՈՒ»:

(Այս շարադրանքից երևում է, որ հայ պարի բազմազանությունը, համարյա լրիվ, արտահայտվել է յայլու, այսինքն, պարերգի բազմազանությամբ, (ինչի թե՛ մեղեդին էր անընդհատ փոխվում, թե՛ բառերը) քանզի հենց միայն պարային շարժումների նույնքան բազմազանությունն ուղղակի անհնար է):

Եվ սա Կոմիտասը գրել է 1901 թվին: Այժմ արդեն հայ ժողովուրդը կենդանի երգապար, այսինքն, գեղոն՝ չունի: ԻՍՊԱՆ ՉՈՒՆԻ: Հինգ-վեց հազար տարի գեղոնը պահեց - շահեց, հետո մի հարվածով դեն շարտեց:

Մեկ ուրիշ տեղ Կոմիտասն ասում է.

«Հայերը, առավելապես քաղաքացիները, պարում են նույնպես և ոտար կովկասյան պարեր՝ նվագարաններով. <նվագարաններով>, վորովհետև այս պարերը պարերգ (երգապար - Մ. Հ.) չեն, այլ լոկ պարերգանակ՝ հարմարեցված մենապարի և զուգապարի, վորոնք ՀԱՅԿԱԿԱՆ ՉԵՆ»:

Երևի առարկեն, թե, ըստ հնագույն վկայությունների, հայերը նվագարան օգտագործել են, օրինակ, փանդիոր: Բայց, նախ փանդիորը, ըստ երևույթին, գործածվել է վիպական երկարաշունչ ասքերի ժամանակ (recitatio-ով), ու գործածողներն էլ միայն գուսաններն են եղել:

Հայ գուսանները կամ, ըստ Աճառյանի, *գովասանները* (իհարկե, նաև հետագա աշուղները) բոլոր դարերում էլ արհամարիել են սեփականը, ազգայինն ու նմանակել են օտարներին: Ահա, թե Կոմիտասն ինչ է ասում գուսանների մասին.

«Հայ գուսաններն ունեն ժողովրդականից անկախ, ինքնուրույն դպրոց: Գուսանական դպրոցները յերկու տեսակ են: Առաջինին պատկանում են կրթվածները, երկրորդին՝ անուսումները: Վերջինները մի կամուրջ են կապում բուն ժողովրդականի և կրթված գուսանաւան դպրոցի մեջ: Յերգում են ոտար կամ մայրենի լեզվով, ոտար եղանակները՝ անշնորհք, աղավաղված, իսկ հայ շինական յերգերը՝ թեպետ բավական ուղիղ, բայց թաթարական, ծուռ ու մուռ, անկայուն և անճաշակ տարախաղությամբ»:

Վկա՛ է Աստված, հաղթեց թաթարականը:

«Այս տղեղ արտասանությունն էլ գործ է ւածում, դժբախտաբար, գյուղացի արական սեռն էլ՝ պատանեկան հասակից սկսած:

«Կրթված գուսաններն էլ սովորաբար նախանձախնդիր են արար, պարսիկ և տաճիկ յերածշուտության, թեպետ մեկ-մեկ էլ յերգում են ժողովրդական յեղանակներ, բայց ավելի զվարճացնելու, քան ճաշակ տալու նպատակով, վորովհետև անարվեստ, թեթև, անվճռ և խրենց դպրոցի վոգուն հակառակ են համարում:

«Մտքա երգում ու նվագում են, վերջին ժամանակներս, ավելի հայերեն լեզվով, բայց արար, պարսիկ և տաճիկ յերգագրության որեմքներով: Շատ անգամ պատրաստի յեղանակներին հարմարեցնում են նոր բառեր:

(Մի բան, ինչով էսօր, երևի առանց բացառության, զբաղված են բոլոր «ռաբիս դաստաները» և ժամանակակից գուսանները ու համարյա բոլոր «աստղերը» – Մ. Հ.):

«Այս դեպքում ոգուտ են քաղում տաճկական շարժիներից և քյուրքիներից, փորովիետև արար և պարսիկ յեղանակները չեն լսում, լսածներն էլ ծանր են և գուսանական, վիպական փոճին անհարմար:

«Հասարակ և անուսում գուսանները գործածում են ժողովրդական և ուտար, խառն տաղաչափություն ... յեղանակներն առանց բացառության ուտար են»:

Էս քաղվածքը պիտի՝ որ մեզ համոզի, որ գուսանները փոխ էին առնում նաև հի՛ն-հի՛ն օրերին:

Մի փաստարկ էլ կա: Եթե, օրինակ, փանդիոը բնիկ հայկական նվագարան լիներ, դա կհարատներ գոնե մինչև 1910-ական թվականները: Չէ՞ որ միակ հայկական նվագարանը՝ *փողը*, ու հայ գեղջուկ պարը՝ *գեղջուկը*, դիմացան թե՛ իրանական տիրապետությանը, թե՛ արաբական խալիֆաթի հարվածներին, թե՛ սելջուկ-թուրքերի արյունախում հորդանների հեղեղներին, թե՛ Բյուզանդիայի նենգ ու խորամանկ քաղաքականությանը, թե՛ ցարական Ռուսաստանի շովինիզմին:

Հայ երգն ու երգապարը նահատակվեցին միայն ստալինիզմի թունավոր մթնոլորտում, բայց հենց մեր մտավորականների համառ ջանքերով (Ռ. Մելիքյանի, Ա. Սպենդիարովի, Թ. Ալբունյանի ու այլոց, ու մեր բոլորի, բոլոր լուռ ու անուարբեր մնացողների «համառ ու անխոնջ» ջանքերով):

Բացի սա, «փանդիոն» բառը փոխառություն է, ինչը նշանակում է երեք լարանի քնար (ու ինչի տեսակն է, օրինակ, ուկրաինական *բանդուրան*, ու սրա անունը, ակնհայտ, ցեղակից է *փանդիոն* բառին), ու, ըստ Աճառյանի ու Հյուբշմանի, բնիկ հայերեն բառ չի, այնինչ, փող բառը բնիկ հայերեն է:

Ի վերջո, կա ավելի զորավոր մի փաստարկ, ու սա է նքան է կարևոր, որ ստիպված նորից եմ երկար քաղվածք անելու Կոմիտասի գրածից.

«Իմ կարծիքով, փողը (փողը, հակառակ հաղորդմանը մասնակից աներտեր (այսինքն, պարոն-պարոն) միաբանի կամ արեղայի պնդածի, ո՛չ շվին է, ո՛չ սրինգը, ո՛չ էլ դուդուկը – Մ. Հ.) նվագական երաժշտության հիմնաքարն է, և այն ունի այն տեսակ առանձնահատկություններ, զորս վոչ մեկ ազգի նվագարան չունի:

«Անոր հնչյուններն ամենե՛ն մուտիկն են մարդկային սրտին, ամենե՛ն հարազատ արտահայտիչը անոր բոլոր զգացումներում. մարդ անոր ծակուտիներում մեջ կրնա արտաբերել իր հոգին իր բոլոր զգացումներով:

«Եթե կատարելագործվի այս նվագը (ավա՛ղ, թող չկատարելագործվեր, թող գոնե փողն ի՛նքը մնար – Հ. Մ.) իր զանազան սեռերով, յես վստահ են, թե մենք այն տեսակ շնչական հրաշալի նվագուրդ մը (*orchestre*) (այսինքն, *փողային նվագախումբ* – Մ. Հ.) կունենանք, վոր ընդունակ է բնությունը արտահայտելու իր եական գույներով, կյանքը՝ իր հարազատ շարժումներով, միտքը՝ իր սեփական խորհուրդներով, և սիրտը՝ իր սեփական հուզումներով, փորովիետև փողը՝ միակ նվագարանով կրնա բազմաթիվ ձայներու հնչյուններ հանելու, ինչ վոր կարելի չէ գտնել ուրիշ նվագարաններու մեջ:

«Թեև բացատրեցի ուրիշ հայկական նվագարաններ ևս, ինչպես պարկապուկը կամ տկզարը, սակայն անոնք այնքան ինքնուրույն չեն, վորքան փողը, և անոնց պես ուրիշ նվագարաններ՝ կարելի է գտնել ուրիշ ժողովուրդներու մեջ. արդեն բոլորն ալ (այսինքն, բոլոր ազգերն էլ – Մ. Հ.), իբրև ազգային նվագարան՝ ՄԵԿ ԳՈՐԾԻԶ ՄԷ ՄԻԱՅՆ ԿՈՒՆԵՆԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ (մեր Ակադեմիայի թղթակից անդամ Հ. Կարայանն ինձ տասց, որ Կոմիտասի էս պնդումը Դեբյուսին շատ է հավանել ու համարել է հայեցակարգային: – Մ. Հ.), իսկ մյուսները շինված կամ հարմարած կըլլան անոր վրա:

«ՀԱՅՈՑ ՄԵՋ ԱՅԴ ԱՉԳԱՅԻՆ ԼՎԱԳԱՐԱՆԸ ՓՈՂՆ Ե, վոր, պետք է անգամ մըն ալ կրկնեն, խորունկ ազդեցություն գործեց բոլոր համաժողովականներուն մեջ, իր պարզության մեջ պարսիկված վեհությանը...»:

(Խոսքը 1914 թ. Փարիզի միջազգային երաժշտական համաժողովի մասին է, ուր Կոմիտասը մի քանի դասախոսություն կարդաց հայ երգի ու երաժշտության մասին, երգեց *Մոկաց Միրզան* ու մեր էս փող գործիքով նվագեց *Ոչխարը ջրի տանելու եղանակը*, ու աշխարհի երաժշտության բոլոր գիտունները ապշած մնացին հայ երգի ու փողի արտառոց յուրօրինակության, չքնադության ու վեհության վրա):

ԻՆՉՈՒ՞ ՈՒ ԻՆՉՊԵՍ Է ԷՍ ՎԻՃԱԿՆ ՍՏԵՆԾՎԵԼ

Հաստատ համբաված եմ, որ մեր ժողովրդի մոտ 100 տոկոսն էս բաները չգիտի: Բայց որ իմացան, մի բնական հարց են տալու. «Ինչու՞ ու ո՞նց է էս վիճակն ստեղծվել»:

Պատճառների մի մասը, օբյեկտիվ են. 1915 թվի զենոցիդը, արևմտահայերի տեղահանությունն ու կորուստը, սովը, գաղթը, անհայտ ու անհույս ապագան, ևն, ևն: Ու Կոմիտաս վարդապետի կորուստը:

(Էլի՛ եմ ասում, Կոմիտասի պես մարդը միևիարդից մեկն է ծնվում: Կոմիտասի արածը 12 բալանոց համակարգի մեջ չի տեղավորվում, որովհետև Կոմիտասի արածի արժեքն անսահման է բարձր (բայց մենք, էսօրվա մեր վարմունքով, էլ արածին համարյա զրո արժեք ենք տալիս)):

(Ո՞վ իմանա, Կոմիտաս վարդապետի խելագարվելու ամենագորավոր պատճառը հենց էն ողբերգական բանը չէր, որ իր աչքերի առաջ, իր եղբայրների ու քույրերի հետ միասին, մոռնվում էր նաև հայ երգ ու պարի միայն ու միայն քանավոր փոխանցվող ավանդույթը: Չէ՞ որ դա նաև երգ ու պարի զենոցիդ էր):

Հետո գալիս են՝ հայ թուրքական կռիվները, էլի ջարդ ու կոտորած ու կորուստ, հետո 1930-ական թվականները. նորից ահավոր սով, ահավոր եղեռնագործություն, զանգվածային արտո, տեղահանություն, կուլակաթափություն, հողը խլեցին գյուղացու ձեռքից, վերացավ խոսքի ու բողոքի ազատությունն ու իրավունքը, վերացավ հողի վրա ամբողջ տոհմով աշխատելու անհրաժեշտությունը (առանց տրակտորի, կալսիչի ու կոմբայնի հունդյունի աշխատելունը, ինչը բացառում է հայի ձեռով երգելը: Իհարկե, տրակտորի պես բաներն անխուսափելի են, մարդկային հասարակությունն անշարժ չի մնում, բայց սա արդարացում չի, որ մենք մեր երգ ու պարը լրիվ դեն շարտեհենք):

Ու, որ ամենակարևորն է, վերացավ ուրախ սրտով աշխատելու հնարավորությունը: Մի խոսքով, մի սարսափելի մղձավանջ, բայց էլ մղձավանջի մեջ պարտավոր էիր՝ ասելի, կանչելի, գոռայիր, երգելի, որ երջանիկ ու բախտավոր ես: Երգելու տրամադրություն կմնա՞ր:

Հայ երգի մի զգալի մասը բողոք է դառն ճակատագրից, մանավանդ մեներգերինը, այսինքն, հայրենիների ու անտունիների զգալի մասը, որոնք էլ հենց ամենաչքնաղներն ու ամենաբարդերն են: Ուրեմն, դրանք չպիտի երգեին: Չէր կարելի:

Կարելի էր «Կոլխոզնիկ յարս, Ինժեներ բալան, Հմայակի պոպոքը» ու նման կարգի բաները. կարելի էր «Լայնարձակ է հայրենի երկիրն իմ, Ջան-ջան երջանիկ իմ մանկությունը», կարելի էր «Իմ Ստալինը», բայց ո՛չ անտունի ու առավել ևս՝ «Տար ինձ մըր երգիր», որովհետև ստիպված էիր գոռալու, թե «երգիրդ» միայն ու միայն սա է: Էստեղ էր, որ հանդես եկան գուսանները, աշուղներն ու ռադիոն:

Գուսանները միշտ էլ հարմարվել են մեծատունների ճաշակին ու քիմքին, միշտ էլ հակադրվել են ժողովրդականին, թե չէ ապրուստի միջոց չէին

ունենա: Իրոք, ո՞ր մի գյուղում կլսեին գուսանին, երբ բոլոր-բոլորն էին երգում, ու ոչ միայն երգում՝ այլ անընդհատ ստեղծում ու նորացնում էին:

Ու հետո՝ հայ շինականն ուզենար էլ, գուսանական եղանակները չէր երգի, որովհետև ռոդակի ընդունակ չէր, որովհետև գուսանականն ու աշուղականն էն օրերի հայի համար նույնքան օտար ու խոթոթ ու անհնար էր, ինչքան, օրինակ, իսպանական կամ անգլիական երգն ու պարը:

Հազարամյակներով հայը երգել է յուրովի, մեծ մասամբ՝ խմբով, Կոմիտասի վկայությամբ՝ «քառյակների որոշակի դրությամբ, որոշակի ծավալով, չափով, դիապազոնով, եղանակով ու օրնամենտով», ու սրանց չենթարկվողները օտարամուտ էին, ոչ հայկական:

Ուրեմն, էլ գուսանական երգերը երգելու գործությունն ուներ միայն հատ ու կենտ մարդ, միայն գերազանց լսողության տերը: Բացի սա, գուսանական երգերի եղանակներն իսկի հարմար չէին մեր պարին (տես Կոմիտասի «Հայ գեղջուկ պարը» հոդվածը, ասածս գրքից):

Հայտնվեց գուսանական երաժշտության մեկ-երկու եռանդուն ջատագով, ում անունները տալը հիմա իմաստ չունի («Ռահվիրաներից» մեկը՝ Թ. Ալթունյանն էր): Էս ջատագովները նախ հայտարարեցին, որ գուսանական երաժշտությունը ժողովրդական է, ու երկրորդ՝ որ ինտերնացիոնալ է:

Պատկերացնում ե՞ք, 1930-ական թվականներին գա հայ երգի համար մահացու մի բան, այսինքն, աշուղական-գուսանական երգը, ինչը հայտարարվի ինտերնացիոնալ, ու սա ձեռնտու լինի կոմունիստների մեծավորներին:

Ինտերնացիոնալությունն էլ հիմնավորում էին էն բանով, որ գուսանները երգում են նաև այլ լեզուներով, այլազգի երգեր, գործածելով այլազգի նվագարաններ:

Գուցե՞ էլ մարդկանց մտքով անգամ չէր անցնում, որ գուսանական երաժշտությունը հայկական չի:

Հնարավոր է: Չէ՞ որ մենք էսօր հայկական ենք համարում, օրինակ, «Մայր Արարսի ակներով, Ծիծեռնակ, Արի դու սոխակ, Կրիկիկա» երգերը, թեև, Կոմիտասի ասելով, սրանք բոլորն էլ փոխառություն են (օրինակ, վերջինը *Բուրգունդիա* երգն է, բաներն էլ թարգմանել է Նահապետ Ռ. սինյանը, *Բուրգունդիա* բառը փոխարինելով *Կրիկիկա* բառով, մեղեդին էլ նույն բուրգունդական մեղեդին է): Բնագրով զգալով սրանց օտար լինելը՝ ոչ մի գյուղացի սրանք չի երգել ու չի երգում:

Գյուղացին երգում էր՝ «Կոունկ», *ամռանիններ, հայրեններ, «Արորն ասաց տատրակ հսկրուն, Գարուն ա՛ ձուն ա արեղ, Հով արեղ սարիք ջան», քաղի ու քաղհանի երգեր, կալի երգեր, սայլի երգեր, հարսանեկան երգեր,*

վիճակի երգեր, թաղման երգեր ևն, բայց չէր երգում ու չի էլ երգում՝ «Մայր Արարքի ափերով, Ծիծեռնակ, Արի դու տխուհի, Կիլիկիա» երգերը ևն:

Բայց, ժամանակները «փիս» էին, ու նույնիսկ երգ ու պարի ղեկավարությունն էր համաձայն անիրազեկներին (ճիշտ էսօրվա պես):

Մարդկանց գնդակահարում էին, եթե խելոք էին ու զիտուն: Մեր գյուղացի (Մալիշկեցի) Վահան Տեր-Առաքելյանին արսորեցին 1936 կամ 1937 թվին (համառոտ կենսագրությունը տես հետո), իսկ Վահանը (Արմենակ Ըահ-Մուրադյանի հետ միասին) Կոմիտասի ամենասիրելի աշակերտն ու ընկերն էր: Էսօր էլ ռադիոն պահպանել է մի ձայնապնակ, Վահանի ու Կոմիտասի մի զուգերգը՝ *Կալի երգը*: Հաղորդում են հավաղեպ, չլինի՞ թե հայն իր երգը լսի ու ճանաչի:

Բացի սա, Վահանը մի-երկու «թերություն» էլ ուներ. ցարական բանակի ամենահայտնի քաջ սպաներից էր ու, թողնելով ռուսական սպայի փայլուն կարյերան, եկել ու կռվել էր իր հայրենիքի համար, գերի էր ընկել թուրքերին, ու իր թուրքերեն երգերով ազատել էր իրեն ու հետը գերի ընկածներին:

Ու գրագետ էր: Լ. Տոլստոյի *Աննա Կարենինան* ու Յ. Հաշեկի *Զաջ զինվոր Ըվեյկի արկածները* առաջինը Վահանն է թարգմանել հայերեն:

(Էս փաստերը համեմատեք էսօրվա հայ պարի իբր «ռահվիրա» Վանուշ Խանամիրյանի «ինտելեկտուալ հնարավորությունների» հետ: Մեղա՛քեզ, Տեր Աստված):

Ի՛նչ հանդգնություն: Պարզ է՝ պիտի գնդակահարեին: Շատ էր խելոք: Հենց էսպես էլ վերացրին է՛ն մտավորականներին, ովքեր ողջ հոգով ցավում էին հայ երգի ու պարի համար ու պաշտպանում էին դրանք:

Բայց, սա դժբախտության մի մասն էր միայն:

Պարի «ռահվիրաներից» ամենագորավորը հայտարարեց, թե իբր շատ վատ է, որ հայը մենապար ու զուգապար չունի, ու որ ինքը պիտի ստեղծի (այսինք, փոխ առնի) թե՛ մենապար, թե՛ զուգապար: Ըրեմն, պիտի նվազարան էլ փոխ առնեին, որ հետո հայտարարեին սեփական ու ժողովրդական: Փոխ առան...

## ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

(Համարյա ըստ Հայկական հանրագիտարանի)

Վահան Խաչատուրի Տեր-Առաքելյանը ծնվել է 1883-ին, Մալիշկա գյուղում (Եղեգնաձորի կողքին): 1901-1905 թվերին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, եղել է Կոմիտասի գնահատած ու սիրելի մեներգիչն ու կրտսեր ընկերը, 1905-ից մասնակցել է Կոմիտասի համերգային շրջագայություններին՝ Թիֆլիսում, Երևանում, Բարսիլում, 1908-ին դասավանդել է Գևորգյան ճեմարանում:

1909-ին տեղափոխվել է Պետերբուրգ, սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում ու համալսարանում, երգել է Մարիինյան թատրոնի խմբում ու հայ եկեղեցու երգչախմբում:

Առաջին համաշխարհայինի սկզբից ռուսական ճակատում էր, պարզատրվել է շքանշաններով ու պատվո գեներով: Մասնակցել է Մարդաբապատի մարտին, մինչև 1920 թվի նոյեմբերը եղել է Կարսի ամրոցի շտաբի պետը, ու Վահանին, Կարսի ընկնելուց հետո, ուղարկել են թուրքական շտաբը՝ բանագնաց, ուր Վահանին գերի են վերցրել, ու (իր հարազատների պատմելով), թուրքական փաշան, Վահանի երգերով հիացած, Վահանին ազատել է գերությունից:

1921-ից ապրել է Թիֆլիսում, աշխատել է խմբագրություններում, համերգներ է տվել: 1927 թվին Երևանի կոնսերվատորիայի երգչախմբի հետ մեներգել է Մոսկվայի համերգներին, իսկ 1928-ին, Ս. Օգանեզաշվիլու հետ մասնակցել է Մայնի Ֆրանկֆուրտի երաժշտական ցուցահանդեսին:

Վահանը երգում էր՝ մեր ազգային զարդանախշը պահելով, ինչի համար Կոմիտասը շատ էր գնահատում Վահանին: Ասվեց այդտեղ, որ թարգմանել է Յարուպով Հաշեկի *Զաջ զինվոր Ըվեյկի արկածները* ու Լև Տոլստոյի *Աննա Կարենինան*, ու ուրիշ գործեր: Գրել է պատմվածքներ, առակներ, բանաստեղծություններ ու հուշեր՝ Կոմիտասի մասին:

Արտրվել է (իր հարազատների ասելով) 1936-ին կամ 1937-ին:

Մահացել է 1941-ին, Կոմի ԻՍՍՀ-ի Ուխտայում:

ՄԵՐ «ԱԶԳԱՅԻՆ» ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻՆ

ՈՒ «ԱԶԳԱՅԻՆ» ՕՊԵՐԱՆ

Մեր կոնսերվատորիան հիմնվել է Ռոմանոս Մելիքյանի նախաձեռնությամբ, հենց իր՝ 1921 թվից գործող Երաժշտական ստուդիայի հիման վրա: Կոնսերվատորիան 1920-ական թվերից ուներ՝ դաշնամուրի, ջութա-



կի, ալտի, բավոյթակի, վոկալի, փողային, երաժշտական-տեսական առարկաների, երգչախմբի ու մանկավարժական դասարանները:

1924-ին, Սպենդիարովի նախաձեռնությամբ, կազմվել է առաջին սիմֆոնիկ նվագախումբը (տես, օրինակ, *Հայկական սովետական հանրագիտարանը*): 1927 թվին կազմակերպվեց օպերայի դասարանը, իսկ 1933-ին Սպենդիարովի *Այնաստով* բացվեց Օպերային թատրոնը, իսկ 1935-ին բեմադրվեց Արմեն Տիգրանյանի *Անուշը* (նոր խմբագրությունը-ibid):

Իսկ թե կոնսերվատորիայում ի՞նչն էր ու է՞ պակաս, դո՞ք գլխի ընկեք:

Մեր առաջին օպերան Տիգրան Զուխաջյանի *Արշակ Բ-ն* է, որ բեմադրվել է Կ. Պոլսում, 1868-ին, Կոմիտասի ծննդից մի տարի առաջ: Տ. Զուխաջյանը նաև մեր օպերետի հիմնադիրն է, իր *Լեզրերիցի Հոր-հոր աղայով* (1876): 20-րդ դարի սկզբին, *Անուշ* օպերա գրելու մի քանի փորձ է արվել, գրվել է մի քանի մանկական օպերա (*Չարի վերջը, Նպտոն ու մրջյունը, Գյուլնազ տատի հեքիաթները ևն-ibid*):

Հետագա օրերին գրվեց ու բեմադրվեց բազում ուրիշ օպերա, սիմֆոնիա ու ուրիշ տեսակ երաժշտություն, բայց էս բոլորն էլ՝ միայն ու միայն եվրոպական ու հետո էլ՝ ռուսական երաժշտության հիման վրա ու սրանց երաժշտական ալիանդոյթներին հետևելով:

(Մեր կոնսերվատորիայի ու օպերայի ազգային երգ ու պարի ավանդույթներից հետո լինելն ու եվրոպականին հետևելը վաղուց է հայտնի, ու սրա մասին էլի՛ են ասել, առաջինը չեն:

(Ինչքան են գիտեմ, միայն 1988 թվին էր, որ մեր կոնսերվատորիայում բաշվեց *Հայ երաժշտական ֆուկլորագիտության ամբիոնը*, ու սա էլ՝ 1969 թվից գործող նման մի կաբինետի հիման վրա: Էս ամբիոնի «ամօթխած» անվան ողբերգականությունն ակնհայտ է էս գրածիցս: Բովանդակության, ավելի ճիշտ, անբովանդակության մասին ավելի լավ է հըլ չասվի):

Մի հոգի (չհաշված Տեր-Առաքելյանին ու Կոմիտասի վեց սանին, տես նկարները), հայ ազգային երգի մի սքանչելի երախտավոր, իր վիթխարի սիրտ ու հոգու ողջ ուժով հետևեց իր ուսուցչին՝ Կոմիտասին, ու դա Կոմիտասի սիրելի աշակերտ, Փարիզի Գրանդ Օպերայի «Ոսկե Տենոր» Արմենակ Շահ-Մուրադյանն էր (համատու կենսագրությունը տես հետո):

Արմենակ Շահ-Մուրադյանին բարեգործների փողերով ուղարկեցին Ֆրանսիա սովորելու, ու Արմենակը փայլուն սովորեց ու դարձավ Եվրոպայի ամենափայլուն օպերային երգիչը, բայց Եղեռնից հետո թորեց իր էս հրաշալի կարյերան ու մինչև իր կյանքի վերջը թափառեց ողջ աշխարհով՝ մեկ ու երգեց հայերեն երգերը:

Երգեց հայի ձևով, որովհետև Կոմիտասի պես պաշտում էր հայ երգը:

Երգեց, որ քարոզի հայ երգը, որ ուրիշներն էլ իմանան, ճանաչեն ու սիրեն ու հարգեն էլ երգը:

Ու նույնիսկ մահվան մահճում, երբ հիշողությունը կորցրել էր ու երգերի բառերը չէր հիշում, խնդրեց, որ իրեն նստեցնեն, ու անկողնու մեջ նստած՝ երգեց «Կոմունյը», երգեց առանց բառերի:

Երգեց ու մեռավ:

Էսօր Արմենակ Շահ-Մուրադյանի երգերը չափազանց հազվադեպ են հաղորդում, նույնքան հազվադեպ, ինչքան Կոմիտասինն ու Վահան Տեր-Առաքելյանինը:

(Իմիջիայրոց, էսքան ապրում են, հըլ չեն տեսել, որ գոնե մի անգամ Արմենակ Շահ-Մուրադյանի կամ Վահան Տեր-Առաքելյանի հոբելյանը նշեն: Ում հոբելյանն ասես, որ չեն նշում, բայց ոչ Արմենակինը կամ Վահանինը կամ, օրինակ, Հայր Միսրան Գալուստ Տեր-Մկրտչյանինը, ում հայագիտական վաստակն անուրանալի է, ում հանձնարարությունները կատարում էին Ռուսաստանի ու Եվրոպայի նշանավոր հնդեվրոպագետները, ու ում մահվան տարեթիվն էլ ստույգ չգիտենք: Գալուստի կամ Արմենակի կամ Վահանի անունը մեր ժողովուրդը նույնիսկ չգիտի:

Զգիտի նաև Լ. Ա. Հովհաննիսյանի անունը, է՛ն Հովհաննիսյանի, ով հիմնել է՝ Երևանի բժշկական համալսարանն ու եղել է դրա Դիպլոմատիկայի ամբիոնի 48-ամյա վարիչը, հիմնել է Վիրուսաբանության, Կուրորտոլոգիայի ու Սրտաբանության ինստիտուտները, մոտ 50 մենագրության ու դասագրքի հեղինակ է, ու ում անունով է Սրտաբանության ինստիտուտը, բայց էսօր էլ ինստիտուտի շենքի վրայից կորել է իր անվանատախտակը, կիսանդրին էլ անհետացել է ինստիտուտի տարածքից (երևի ինչ-որ մեկն ուզում է՝ ինստիտուտը սեփականաշնորհի ու իր անունով կոչի):

(Էս տարի՝ փետրվարին, նաև Լ. Ա. Հովհաննիսյանի ծննդյան 125-ամյակն էր, բայց, ինչքան են գիտեմ (Հովհաննիսյանի մասին իմ տեղեկությունները ստացել են իր թոռից, Ա. Կ. Հովհաննիսյանից), Հովհաննիսյանի մասին սեպտեմբերին միայն մի գեկուցում կարդացին, ու սա էլ՝ միայն Բժշկական համալսարանի հոբելյանի առիթով, ու սա էլ՝ Հովհաննիսյանի մերձավորների համառ բողոքներից հետո: Այնինչ Հովհաննիսյանի հոչուկը համաշխարհային էր):

(Սա՞ է աշծերները պահպանելու մեր «ազգային ձևը»):

Մեր «ազգային» կոնսերվատորիայի ու «ազգային» օպերային թատրոնի հիմնադիր գործիչներն ու իրենց զինակիցներն ու աշակերտներն ու հետևորդները, հետևելով իրենց ուսուցիչներին՝ Ռոմանոս Մելիքյանին ու



Ալեքսանդր Սպենդիարովին, ստեղծեցին եվրոպական երաժշտության ու պարի երևի բոլոր տեսակների «հայկական» տարբերակները:

Բայց էս «ամենա» ու էն օրերին չափազանց կարևոր թվացող գործը հրեշավոր արդյունք ու հրեշավոր պատուհներ տվեց: Հրեշավոր արդյունքը հայ ազգային երգ ու պարի կործանվելն էր, իսկ հրեշավոր պատուը՝ մեր էսօրվա հեռացույցի ու ռադիոյի ու քաղաում «աստղի» «երգն» ու «պարը»:

Ռոմանոս Մելիքյանի ռոմանսների ու մնացած երգերի մեծ մասն ինձ շատ է դուր գալիս: Ինձ դուր է գալիս նաև Սպենդիարովի ու մեր մնացած «ազգային» կոմպոզիտորներից շատերի շատ ու շատ գործը, օրինակ, Սպենդիարովի *Երեք արմավենին*, Խաչատուրյանի հանճարեղ վալսը *Դիմակահանդեսից* ևն:

Բայց սրանք գրված են եվրոպական երաժշտության սկզբունքներով, նույնիսկ եթե սրանց թեման արևելյան է, ու երբ սրանք արևելյան մեղեդի են պարունակում, էլ մեղեդին երբեք էլ իսկական, մաքուր հայ էթնիկական մեղեդին չի: Նույնիսկ հայ երգի լարային գործիքների համար արած մշակումները, որոնք թեքա գերազանց են, է՛ն ուժն ու թուլյանքը չունեն, ինչն ունեն հենց Կոմիտասի ու Արմենակ Շահ-Մուրադյանի երգածները:

(Ցավոք, էս լարայինները շատ ավելի հաճախ թաղումներին կլեստ):

Բայց եթե պիտի օպերա ու սիմֆոնիա ու եվրոպական երաժշտության ու քալետի հայկական տեսակներն ստեղծեինք, սրանք պիտի ստեղծեինք մեր բուն ազգային երգի ու պարի հիմքի վրա, ինչպես ժամանակին արել են եվրոպական (ոչ ռուսական) կոմպոզիտորները, օրինակ, Բեթհովենը, Բիզեն, Մոցարտը, Բրամսը, Ռավելը, Սեն-Սանսը, Վերդին, Ռոսինին, Գրիգը, Սիբելիուսը, ևն:

Երբ դասական երաժշտությանն արդեն մի քիչ վարժ մարդը լսում է Գրիգի *Առաջին կոնցերտը դաշնամուրի համար*, սիրուն ու հոգին իսկույն փոթորկվում է, անկախ էլ սարդու ազգային պատկանելությունից: Ու սրա պատճառը հենց է՛ն հանգամանքն է, որ էլ կոնցերտը հույժ ազգային է, ավելի միշտ, ժողովրդական է:

Էս նույն ազդեցությունն ունի, ասածս կոմպոզիտորների շատ ու շատ գործը, օրինակ, Բիզեի *Կարմենը* (մանավանդ՝ Ըջչեղրնի մշակած սյուիտը), Ռավելի *Բոլերոն* ևն:

Եթե հայ երգ ու պարի հիման վրա է՛լ էս կարգի բաներ ստեղծվեին, սրանք է՛լ շատ ուժեղ կազդեին բոլոր ազգերի վրա:

Բախտ չունենք, որովհետև, միայն ու միայն Կոմիտասն էր, ով բուն ազգային, բուն հայկական օպերա ու սիմֆոնիա ու ուրիշ նման գործեր գրելու կարողություն ու մտադրություն ուներ:

Կոմիտասն ուզում էր գրեր՝ *Վարդան, Սասնա ծռեր, Բաղաքավարության վնասները, Անուշ* օպերաները, որոնք պիտի հենվեին հայ ազգային երգեցողության օրենքներին, բայց, ի դժբախտություն մեզ, չհասցրեց:

Էսօր տաղանդավոր երգիչ ու երաժիշտ շատ ունենք: Էսօր էնքան տաղանդավոր մի երգիչ ունենք, ով (իր ասելով) փոխարինել է Պավառտոին, ու սա, իրոք էլ, հպարտանալու բան է:

Բայց հայ երգն ու պարը Կոմիտասի ու Արմենակ Շահ-Մուրադյանի ու Վահան Տեր Առաքելյանի պես երգող, պաշտող ու քարոզող՝ էլ չունենք:

Ու Կոմիտասի հավաքած հայ էթնիկական երգն ու պարը, ու մանավանդ էլ երգերը երգելու ու պարերը պարելու ձևերը, չունենք:

Ունենք միայն դրանց նստաները, որ դրել ենք դարակներն ու պահում ենք, բայց ո՞ւմ համար, էս է՛լ չգիտենք:

Ու Կոմիտաս ու Արմենակ Շահ-Մուրադյան ու Վահան Տեր Առաքելյան է՛լ չունենք: Ու է՛ն օրերից հետո՝ երբեք էլ չունեցանք:

Ու ո՛չ մեր «ազգային» կոնսերվատորիան, ոչ է՛լ մեր «ազգային» օպերան էսօր մրցելու գործություն չունի մեր բոլոր բեմերը ներխուժած զանազան ու տարատեսակ արևելյան ու արևմտյան այլանդակ ռաբիգի հետ, ու ոչ էլ նույնիսկ մեր հեռացույցի ԱԼՄ ալիքի հետ: Օրինակ, ԱԼՄ-ն, հեշտ ու հանգիստ, հաղթում է թե՛ մեր «ազգային» կոնսերվատորիային, թե՛ մեր «ազգային» օպերային:

Էսօր մենք մե՛րը, այսինքն, հայ ժողովրդական ենք համարում քառը, քյամաճյան, ակորդեոնը, քանոնը, գուռնան, դիուրը, դուրուկը, կլարնետն ու էլ ինչ ասես, բայց չենք նվագում մեր միակ հայկական, միակ բնիկ նվագարանը՝ փողը, ինչը, ըստ Կոմիտասի, ամենապայծառ ու ամենավեհ նվագարանն է աշխարհում:

Ես Կոմիտասին հավատում եմ:

Փոխ առանք նաև մենապարը, զուգապարն ու, առհասարակ, իրարից անջատ-անջատ պարերը, բայց մեր գեղուն ու յային կորցրինք: Ռադիոն, թերթերն ու զուսանները երկինք հանեցին էս ինտերացիոնալ նորամուծությունները: Հայ ազգը (բոլոր ազգերն էլ) միշտ պաշտել է տպագիր խոսքը. բա ո՛նց կպաշտեր նորահայտ խորհրդավոր ու հրաշագործ ռադիոն:

Ու իայ արական սեռի պատանիները քիչ-քիչ ամաչեցին սեփական երգ ու պարից, որոնք ռադիոյով արդեն հազվադեպ էին հնչում: Ամաչեցին երաժշտական է՛ն եզակի ու սիրտառոց ու չքնաղ սեփականությունից, որ արդեն ոչ մի ուրիշ ազգ չունեն:

Կոմիտասն ասում է.

«Գալով ժողովրդական պարերուն, անոնք հեթանոսական օրերն մինչև այժմ կապին մեր մեջ, մինչ ֆրանսիացիներուն և գերմաններուն մեջ կորսած են»:

Հայ գեղջուկ կինն ավելի պահպանողական է (ինչպես, առհասարակ, բոլոր ազգերի գեղջուկ կանայք), ու մեր երգերից մի քանիսը երկի էսօր էլ պահած լինի. (1980 թվին ինքս մի անգամ ներկա եմ եղել իսկական իմպրովիզացիայով, տեղնուտեղը բառերն ստեղծելով հայ երգի: Երգողները գեղջուկ կանայք էին): Բայց հայ գեղջուկ ընտանիքում խոսքը տղամարդունն էր, ու հայ երգն ու պարը կորան: Մանավանդ՝ պատերազմ էր, հետո 1949 թվը, նորից սով, արքոր:

Էն օրերին էր, որ ստեղծվեց «ժողովրդական» երգ ու պարի պետական անսամբլը: Մրա պատկերով «արարվեց» բազմաթիվ մեծ ու փոքր ու էլի «ժողովրդական» անսամբլ, որոնք քարոզում էին ու հիմա էլ են քարոզում իրոք ժողովրդական երգ ու պար, բայց ոչ թե հայի՝ ազգային երգ ու պարը, այլ թուրքի՝ պարսիկի՝ արաբի՝ չեչենի՝ ինգուշի՝ վրացու՝ օսի՝ տաջիկի՝ ռուսի՝ մոլդովացու՝ ու չգիտեմ, թե էլ ում ազգային երգ ու պարը, ու հենց էս օտար երգ ու պարն են համարում հայի ազգային երգ ու պար:

Ու էսօր մեր իսկական ազգային երգը սիրում ու հավաքում են թուրքահպատակ զազաֆերը (ինչպես ասացին մաև էս շոուի ժամանակ), իսկ մենք միայն ձև ենք սնում, թե մտահոգ ենք հայ երգ ու պարի բախտով:

Մի անգամ էլ ասեմ, որ փոխառություններին բոլորովին դեմ չեմ ո՛չ մի բնագավառում: Ես հարգում եմ բոլոր ազգերի մշակույթները, բացառությամբ է՛ն ազգերի, ում տոտենն արյունն է:

Փոխառությունը պիտի չնչին տոկոս կազմի իր էությանը, բովանդակությամբ (ու ոչ քանակությամբ), է՛ն պայմանով, որ թե քոնն ունես, ու ունեցածդ էլ ուղղակի չքնաղ է, ունեցածդ պիտի անպայման պահես: Փոխառյալը չպիտի քո սեփականն սպանի:

(Թե որ չունես, անպայման պիտի ուրիշինը վերցնես, ոնց որ ֆիզիկան, մաթեմատիկան, քիմիան ու սրանց պես բաներն են վերցնում: Բայց ախր սրանք փոխ առնելուց հետո երբեք չես ասում, թե Գալիլեյի ու Նյուտոնի օրենքները, կամ Լայբնիցի, Գաուսի ու Կոշու մաթեմատիկան հենց դո՛ւ ես ստեղծել, ու Գալիլեյն ու Նյուտոնը լկտի-լկտի գողացել են քո հայկական Գալիլեյ-Նյուտոնի օրենքները կամ Լայբնիցի, Գաուսի ու Կոշու մաթեմատիկան: Բայց ախր անընդհատ ես պնդում, թե փոխառածդ երգն ու պարը հայերն են ստեղծել, ու, օրինակ, թուրքերն էլ՝ մեզնից գողացել են ):

Դու պիտի՝ պահես քո արժեքավոր սեփականը (ու անպետքն էլ պիտի դեն շարսես, որ սա եղած արժեքավորը «չհարամի»), ու պիտի ասես, որ

այ՛, ես ու ես բաներն էլ ուրիշներից ես վերցրել, մշակել ու հարմարել քո ունեցած արժեքավորին, թե չէ՝ արածիդ անունը փոխառություն չի լինի:

Բա՞ որ էդ ազգերը մի օր վեր կենան ու ասեն. «Ետ տվեք մեր ունեցվածքը», այսինքն, խոստովանե՛ք, որ դրանք մեզնից եք վերցրել, ու որպես ապացույց բերեն հե՛նց Կոմիտասի ասածները, ի՞նչ պետք է անենք:

Ետ տվեցինք, ի՞նչ կմնա մեզ: Ու ախր՝ ի՞նչ մի պահելու բան են դրանք, էլ գասպարյանական ողջ շարադրությունը, ինչը ոչ միայն մերը չի, այլև ոչ մեկինը չի, որովհետև աղավաղ է ու, մեծ մասամբ, անճաշակ:

Իսկ եթե սրանց տերերը շատ ուզեման, մի օր ասելու իրավունքը կունենան ու ապացուցելն էլ կկարողանան, որ դրանք մերը չեն:

Հա՛, մեր ողբերգական կորստի պատճառների մի մասը օբյեկտիվ է եղել: Կոմիտասի վկայությամբ՝ երգ ու պարի մահացության պրոցեսն սկսվել էր արդեն 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին (տրակտորից շատ առաջ): Բայց էն օրերին ռադիո, հեռացույց, մագնիտոֆոն, կոմպյուտեր ու ինտերնետ չկար, չկար «մտավորականության» էս հսկա բանակը:

Հիմա սրանք կան, ու ամեն գնով դրությունը պիտի շտկվի: Ամեն գնով: Թե չէ՝ «մտավորականություն» բառի էս չափերունը չեն հանվի:

Վիճակը շտկելը հնարավոր է:

Գոնե մասնակի, գոնե մի քիչ: Փորձը որ՝ անկասկած անհրաժեշտ է: Ա՛յ, հենց է՛ս բաները պիտի ասեն մեր հեռացուցային դասախոսները:

Ու մաև մեր կոնսերվատորիայի ու օպերայի գործիչները:

ԱՐՄԵՆԱԿ ԸԱՀՄՈՒՐԱԳՅԱՆԸ

(Ըստ Հայկական հանրագիտարանի)

Արմենակ Սարգսի Շահ-Մուրադյանը ծնվել է 1878-ին, Մուշում, վախճանվել է 1939-ին, Փարիզում:

Մանկությունն անցել է դառն աղքատության մեջ: Սքանչելի ձայնի համար բարի մարդիկ ուղարկել են Էջմիածին, ուր 2,5 տարի աշակերտել է Կոմիտասին, հետո փոխադրվել է Թիֆլիս, ու ավարտել է Ներսիսյան դպրոցը: Եղել է Մակար Եկմալյանի խմբի մեներգիչն ու օգնականը:

Քանի որ թուրքահպատակ էր, ցարական կառավարությունը Շահ-Մուրադյանին հանձնել է թուրքական կառավարությանը: Շահ-Մուրադյանը երաշխավորությամբ ազատվել է բանտից, հետո ելկու տարի դասավանդել է Մշո Ս. Կարապետի Ժառանգավորաց վարժարանում:

1900-ից մինչև 1904-ը Կարինում աշխատել է ազգային վարժարաններում երաժշտության ուսուցիչ ու եկեղեցու դպրապետ:

Հետո մեկնել է Փարիզ, դարձել է Փարիզի հայկական եկեղեցու դպրապետը, հետո, 1906-ին, ընդունվել է Փարիզի կոնսերվատորիան, ինչն ավարտել է 1910-ին, ու իսկույն էլ Շահ-Մուրադյանին հրավիրել են Փարիզի Գրանդ Օպերա:

Արմենակ Շահ-Մուրադյանին ասում էին՝ «Ոսկե Տենոր»: Շահ-Մուրադյանը 1914-ին մասնակցել է Երաժշտության միջազգային կոնֆերանսի Կոմիտասի կազմակերպած համերգին:

Հեռացել է Գրանդ Օպերայից, ու մնացած ողջ կյանքում համերգներով շրջել է աշխարհում ու քարոզել է հայ ազգային ու հոգևոր երգը: Կյանքի վերջին տարիներն ապրել է ԱՄՆ-ում, հետո՝ Փարիզում:

### ԷՍ ԸԱՐԱԴՐԱՋԻՆ ՀԱԿԱՆԱՌՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիտեն, թե ինչ կասեն ինձ հակաճառողները (իսկ դրանց թիվը, իմ կարծիքով, շատ-շատ կլինի):

Դժվար թե ասեն, որ ճիշտ չեմ, որովհետև հիմնվել եմ միայն ու միայն Կոմիտասի վկայություններին, իսկ արված եզրակացությունները տրամաբանական են, անխուսափ ու ակնհայտ:

Կասեն, որ Կոմիտասին ճիշտ չեմ մեկնաբանում (չմայած, ես չեմ մեկնաբանում, ուղղակի փաստերն եմ բերում):

Կամ էլ՝ կասեն, թե ճիշտ չի հենց Կոմիտասը. որ Կոմիտասն էնքան էլ լավ չգիտեր հայ երգի վիճակն ու պատմությունը. որ Կոմիտասի օրերին երաժշտագիտությունն իբր էն մակարդակին չէր, որ Մեծն Վարդապետը ճիշտ ու լրիվ անկողմնակալ եզրակացություն աներ:

Չմայած նման կարգի առարկություններն անհիմն են, այնուամենայնիվ, մի քանի տեղեկություն բերեմ Կոմիտասի մասին (ես տեղեկությունների մեծ մասը *Հայկական սովետական հանրագիտարանից* են):

### ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԸ

Կոմիտասին, այսինքն, որբացած Սողոմոն Գևորգի Սողոմոնյանին (1869-1935) իր արտասովոր գեղեցիկ ձայնի համար 12 տարեկանում բերել են Էջմիածին ու տվել Գևորգյան ճեմարան՝ կրթության:

Սողոմոնը ճեմարանն սվարտել է 1893-ին ու նշանակվել է ճեմարանի երաժշտության ուսուցիչ ու Մայր Տաճարի խմբավար:

Սողոմոնին 1894-ին ձեռնադրել են կուսակրոն արեղա (ինչը, իմիջիայնոց ասորերեն նշանակում է՝ *տխուր, տրտուծ*) ու շնորհել են 7-րդ դարի քանաստեղծ ու երաժիշտ կաթողիկոս Կոմիտասի անունը:

Մի տարի հետո արեղան դարձել է վարդապետ ու մինչև իր մահը կոչվել է Կոմիտաս վարդապետ:

Հետո Կոմիտասն սովորել է Բեռլինում, ուր ավարտել է Ռ. Շնիդտի մասնավոր կոնսերվատորիան ու Բեռլինի Արքունական համալսարանը:

Բեռլինում Կոմիտասը սովորել է՝ կոմպոզիցիայի տեսություն, երաժշտության պատմություն, մշակել է ձայնը, սովորել է՝ դաշնամուր, երգեհոն, խմբավարություն (դիրիժորություն), քայց նաև՝ հոգեբանություն ու փիլիսոփայություն (վերջին երկուսը, իմիջիայնոց, ոնց որ Մանուկ Աբեղյանը):

Կոմիտասն ինչ էլ որ աներ, անում էր միայն ու միայն գերազանց, ու Բեռլինում էլ, ինքնուրույն ուսման ժամանակ էլ՝ գերազանց է սովորել: Ու Կոմիտասի գիտելիքը եվրոպական երաժշտությունից ու մասնագիտական ողջ հմտությունը ոչ միայն գերազանց էր, այլև աաշելու:

Կոմիտասը եղել է *Միջազգային երաժշտական ընկերության* առաջին հիմնադիր անդամներից, ու էս ընկերության Բեռլինի բաժանմունքի նիստերին ներկայացրել է հայ երգի իր ուսումնասիրությունները, գերմանացի երգիչների մի քառյակի հետ ցուցադրել է հայ ժողովրդական երգերի իր մշակումները:

Ինքն էլ էր գրում ու մշակում (Գերմանիայում՝ նաև՝ գերմանական նյութը), իսկ Հայաստան դառնալուց հետո, էս գործերին զուգընթաց, ճեմարանի խմբով հայ երգն է քարոզել Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում ու Բաքվում:

Կոմիտասը ֆրանսիական «Լամուրյո» համերգային ընկերության երգչախմբով 1906-ին Փարիզում ցուցադրել է հայ ժողովրդական ու հոգևոր երգերի իր մշակումները: Հետո էս նույն երգերի մասին դասախոսություններ է կարդացել (1907-ին) Ռոմեն Ռոլանի «Մոցհալական գիտությունների բարձրագույն դպրոցում»:

Ռոլանի հեղինակությունը վիթխարի էր ողջ Եվրոպայում ու աշխարհում, ու էսօրվա Եվրոպան իր դեմոկրատիայի համար շատ-շատ է պատական Ռոլանին, թեև հենց իրենք, ֆրանսիացիները, էնքան էլ չեն սիրում Ռոլանին, որովհետև 1-ին համաշխարհայինին Ռոլանն ասում էր բոլոր եվրոպացիներին ու նախ՝ հենց ֆրանսիացիներին, ոչ իզուր են իրար հետ կոպում. ասում էր, որ էդ կոպում բոլորն էլ պարտվելու են:

Բնութագրական չի՞, որ Կոմիտասը մոտ է նդել Ռոմեն Ռոլանի պես լուսավար մի մարդու, ում մասին ասում էին, թե Եվրոպայի խիղճն է (ու էսօր

էլ մոռացել են դա: Ռոմեն Ռոլանի մասին ասածներս կան **Մտեխան Յվեյ-գի Ռոմեն Ռոլան** գործի մեջ):

Հետո Կոմիտասը համերգներ է տվել ու դասախոսություններ է կարդացել Շվեյցարիայում ու Վենետիկի Միսիթարյան միաբանությունում:

Երբ Կոմիտասը Պոսից դարձավ Էջմիածին, Մատթոս Իզմիրլյանն իսկույն հարցրեց, թե Կոմիտասը երբ է հետ դառնալու Պոլիս: Ու Կոմիտասը, թունդ զայրացած, թողեց Էջմիածինն ու գնաց Կ. Պոլիս (1910-ին, տես էս գրքի վերջի նկարների միջի Կոմիտասի դիմումը կաթողիկոսին), ուր շարունակեց իր գործունեությունը: Պոլսում վեց սան պատրաստեց (տես նկարները), ուլքեր հետագայում բավական գործ արին հայ երգի ասպարեզում:

Կոմիտասին 1914 թվին հրավիրում են **Երաժիշտների միջազգային ընկերության համաժողով**, որտեղ պետք է ընդամենը մեկ-երկու դասախոսություն կարդար, բայց, ինչպես արդեն ասվեց, էդ դասախոսությունից ապշած, խնդրում են, որ մի զեկույց էլ ամի:

Կոմիտասի էս զեկույցերն էնքան տպավորիչ են եղել, որ եվրոպացիք ասել են, թե Հայաստանը երկրորդ Իտալիան է, մտածելով նաև, որ էն օրերի հայ մշակույթի ընդհանուր մակարդակն էլ իտալականից ցածր չի:

Ու ժողովականները, չափազանց ազդված զեկույցներից, առաջիկա կիրակին գնացել են տեղի հայ եկեղեցին, որ հայ հոգևոր երգը լսեն:

Էս համաժողովին ընթացքում Կոմիտասին հրավիրում են նաև հաջորդ համաժողովին (ինչքան հիշում են, հենց հաջորդ տարի), խնդրելով, որ էլի զեկույցներ կարդա, ու կարդա ոչ միայն հայ ժողովրդական երգ ու պարից, այլև առհասարակ արևելյան ժողովրդական երաժշտությունից, որովհետև պարզվում է, որ վերջինի միակ հիմնավոր գիտակը ողջ աշխարհում՝ Կոմիտասն է: Բայց հաջորդ տարին 1914 թվին էլ:

Կոմիտասը հիվանդությունն սկսվեց 1915 թվին, երբ իրեն էլ հայերի քարավանների հետ տանում էին Դեր Զոր, ու 1919-ից մինչև իր կյանքի վերջը «ապրեց» Փարիզի հոգեբուժալան հիվանդանոցներում:

Երբ Կոմիտասի մտակները գնում էին տեսության, Կոմիտասը մտտեցում էր հիվանդասենյակի անկյունին ու մեջքն այցելուներին դեմ արած՝ կանգնում էր ու չէր խոսում:

Խռովել էր: Խռովել էր ողջ աշխարհից: Բա որ էսօր հրաշքով կէ նրանանար ու տեսնե՞ր, որ իր սյաշտած երգն ու պարն չկան, ու հայերը դրանց փոխարեն լրիվ անարժեք բաներ են երգում ու պարում, ի՞նչ կաներ:

Կոմիտասի գլխավոր գործերն են.

Իր հավաքած չքառ հազարից ավել ժողովրդական երգը (մնացել է մոտ 1200-ը), ինչին էսօր սխալմամբ ասում են Կոմիտասի երգ: Մրանցից Կոմիտասը հազիվ մի երկու-երեք տասնյակը մշակած լինի:

Գրի է ասել Մասնա ծերերի ասերգը (չգիտեմ, պահպանվել է, թե չէ), ինչի մի մասը երգվել է, մնացածն էլ՝ երգեցիկ (recitando-ով) ասվել է:

Գրի է ասել ու նկարագրել է մի քանի երգապար, այսինքն, գեղուն:

Պարզել է հայ երգի լադային հիմքն ու ելևէջների համակարգը, մտորեն ու ռիթմերը՝ իրենց ողջ բազմազանությամբ:

Վերծանել է հայկական երաժշտական նոտաները՝ խազերը, որ 17-երորդ դարից իսպառ մոռացվել էին ու արդեն էլ ոչ մեկին հասկանալի չէին: Բայց էս վերծանությունը կորել է:

(Հիշատակված Ա. Շահնազարյանը պնդում է, թե Կոմիտասի խազերի վերծանությունը գտել է, ու սրա մասին մի ծավալուն գիրք է հրատարակել: Բայց մեր կոնսերվատորիան լուրս է, ու էս հայտարարության ու գրքի մասին ծպտուն չի համում, որ իմանանք, թե Ա. Շահնազարյանի արածն ինչքան է հավաստի: Ինչո՞ւ):

Նորից է գրանցել հոգևոր երգերի մի մասը:

Հայտնագործել է հայ հեթանոսական հավատալիքներին առնչվող հորովելների իմպրովիզացիոն եղանակները, Մոկաց Սիբբա հնագույն ասքը, միջնադարյան բազում անտունի ու հոգևոր երգերի ժողովրդական տարբերակները ևն, ևն:

Կոմիտասն իր իմացածի երևի հազարերորդ մասն էլ չհանձնեց թրթին: Երգ ու պարի ասպարեզում Կոմիտասը նույնքան գիտակ էր (գոնե մեր՝ հայկական ծավալներով ու չափանիշներով), ինչքան հնդեվրոպագիտության մեջ Հյուբշմանն ու Մեյեն, մաթեմատիկայի ասպարեզում՝ Գաուսը, Կոշին կամ Էյլերը, ֆիզիկայի ասպարեզում՝ Նյուտոնը կամ Էյնշտեյնը ևն:

ԷՍ ՇԱՐԿԱՐԱՆԵՐԻ ՀԱԿԱՏԱՌՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՇԱՐԿՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ)  
(տես նաև 267-րդ էջը)

Պատմական դեպքերի մասին թեական եղանակով խոսելն անիմաստ է, բայց մարդ չի համբերում, ու անընդհատ մտածում է, թե ի՞նչ բախտ կունենային հայ երգն ու երգապարը՝ գեղունը, եթե Կոմիտասը չխելագարվեր ու ի՞նչը լիներ մեր Կոնսերվատորիայի ու Օպերայի հիմնադիրը:

Էսօր բոլորիս էլ շոյում է էն փաստը, որ Եվրոպան ապշել էր Կոմիտասի գիտելիքից ու անառարկելի ընդունել էր Կոմիտասի ասածները. որ Դեր-յուսին, ցնցված Կոմիտասի համարից, չոքել է Կոմիտասի առաջ, բայց հենց ի՞նչ՝ Կոմիտասի՝ (ին բերած) վկայությունները մեր կորած երգ ու պարի մասին էսօր ոչ մեկիս սրտովը չեն լինի:

Հենց սրա համար էլ հակաճատողները կասեն, թե Կոմիտասի բոլոր ասածները չեն, որ ճիշտ են, որ... ևն, ևն:

Սա միանգամայն բնական է. ու՞մ թերությունները ցույց տաս՝ գոհ կմնա: Թերությունն էլ՝ ի՞նչ թերություն: Անընդհատ ասում ենք՝ լավն ենք, հին ենք, ընտիր ենք, կրթված ենք, մենակ չեն թողնում, որ շունչ քաշենք, ու հանկարծ պարզվի, որ նույնիսկ երգ ու պար չունենք, որովհետև հենց մենք չպահեցինք:

Հակաճառողներն ուրիշ հնարավորություն էլ ունեն. կասեն, որ էս վիճակը բնական է, որ ուրիշ ոչ մի ազգ էլ իր հին երգ ու պարը չի պահել (ինչը միշտ չի, որ ճիշտ է), կամ էլ, որ շատ ու շատ ազգ է կորցրել իր ազգային երգ ու պարը, ուրեմն, մենք էլ չպիտի պահեինք. որ էսպես էլ պիտի լիներ:

Ողորմելի մխիթարություն: Ասենք, ուրիշները չեն պահել, սա պատճառն է, որ մերը դեռ շարունակվում է, էլ 50-60 դար շահել-պահելուց հետո:

Բայց եթե որևէ ազգ ունի լեզու, պետք է էլ լեզվին հատուկ երգն ու պարն էլ ունենա: Հայ երգը փոխվում էր բարբառից բարբառ, որովհետև լեզուն ինքնին ազդում է երգի վրա:

Լեզուն ինքը օժտված է ոխթով, չափով, երաժշտությամբ: Սա՛ է պատճառը, որ այլազգին, ինչքան էլ սովորի, (հազվադեպ բացառությամբ) իտալացու պես չի խոսի, էլ ո՛ր մնաց՝ երգի:

Ամեն ազգի երգն էլ, հիմնական տոներից բացի, ունի որոշակի օրինաչափությամբ դասավորված օրերտոների համախումբ ու էլի հազար ու մի բան, ինչին ասում են՝ երգի ազգային զարդանախշ, Կոմիտասի ասածով՝ օրնամենա: Հենց էս զարդանախշն է, որ էսօր հազվադեպ ենք լսում:

Ու մեր իսկական, մեր ազգային երգն ու երգապարը՝ գեղունը, ոչ թե փոխառյալ էին, այլ մշակութային (ոչ գեմային, ոչ դարվիճյան) էվոլյուցիայի արդյունքն էին, այսինքն, ստեղծվել, մշակվել, ու ընտրվել էին մի քանի հազարամյակի ընթացքում:

Ստեղծել, մշակել, ու ընտրել էր ողջ ժողովուրդը, գործնական կիրառությամբ, երգելով ու պարելով ու հավանելով կամ չհավանելով: Ու հենց սրա համար էլ էդ ստեղծածը հնար ուներ դառնալու համաշխարհային մշակույթի մի շատ կարևոր մասը: Բայց չդարձավ:

Ազգային արժեքներից ու բնիկ ու փոխառյալից շատ-շատ ենք խոսում ու, մեծ մասամբ, անտեղի, որովհետև համարյա միշտ՝ չենք խորանում, թե ի՞նչ են սրանք (տես էս գրքի 3-րդ մասը): Բայց անկասկած է, որ երկու բան, հաստատ ու 100 տոկոս, ազգային են ու բնիկ: Առաջինն ու հիմնականը՝ ազգային լեզուն է, երկրորդը՝ ազգային երգ ու պարը: Մնացածների մեծագույն մասը, եթե ոչ ամեն ինչը, փոխառյալ է:

Երգն ու պարն էլ են լեզու, մշակույթ ու հավատալիք:

Էս առումով՝ հայը հայ է ոչ միայն լեզվով, պատմությամբ, գրականությամբ, ճարտարապետությամբ, հավատով ևն, այլև երգ ու պարով:

Ուրեմն, ամենաողբերգականն է՛ն բանն է, որ եթե մենք իրոք անդառնալի ենք կորցրել մեր երգն ու պարը, կնշանակի .

ՄԵՆՔ ԱՅԼԵՎՍ ԷՆ ԱՍՏԻՃԱՆ ՀԱՅ ՉԵՆՔ,

ԻՆՉՁԱՆ 1905 ԹՎԱԿԱՆԻՆ ԷԻՆՔ:

ԱՅՍԻՆՔՆ, ՄԵՐ «ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԶԳԱԼԻ ՄԱՍԸ»

(ՄՏՏ «ԿԵՍԸ») ԿՈՐՑՐԵԼ ԵՆՔ:

Ա՛յ, հենց է՛ս բաները պիտի ասեին մեր հեռացույցի դասախոսները:

### ԻՆՉ ՊԻՏԻ ԱՐՎԻ ՈՒ ԻՆՉ Է ՀՆԱՐԱՎՈՐ

Մենք մի, քիչ՝ թե շատ, մխիթարական հանգամանք ունենք՝ դա մեր հայ եկեղեցու երգեցողությունն է:

Կոմիտասի ասելով, մեր աշխարհիկ ու հոգևոր երգերն իրենց էությունը, իրենց խորքում նույնն են, նույն կառուցվածքն ունեն: Մեր եկեղեցու առաջին գործիչները լավ են հասկացել, որ եթե հոգևոր երգեցողությունն աշխարհիկից հեռու եղավ, ժողովուրդը դա չի հասկանա ու չի ընդունի: Հենց սրա համար էլ եկեղեցական երգեցողությունը հիմնել են աշխարհիկի վրա:

Ու հենց սրա՛ համար է, որ օտարները, մանավանդ դասական երաժշտությունն իմացողները, շատ բարձր են գնահատում հայ եկեղեցական երաժշտությունը:

Ու թե մեր (արդեն նախկին) աշխարհիկ երգը պաշտպան չուներ ու չունի, մեր հոգևոր երգը, եկեղեցու հզոր պաշտպանության ներքո, համարյա անաղարտ է մնացել, ու ոչ միայն Հայաստանում:

Ուրեմն երգելը նորից պիտի սովորենք, ու առաջին հերթին՝ պիտի սովորենք նաև եկեղեցուց:

Եկեղեցականները պրոֆեսիոնալ երաժիշտներ են, իսկ էս հարցում օգնելու ունակություն ունեն միայն պրոֆեսիոնալները: Ըստ էության, Էջմիածինը նաև վիթխարի ավանդույթ ունեցող երժշտական դպրոց է, հզոր մի դպրոց, ինչն արժանի է ազգային երգի կոնսերվատորիա կոչվելու (Էջմիածնի երաժշտական դպրոցը հենց ազգային կոնսերվատորիա է, մանավաղ որ ուրիշ, իրոք ազգային, կոնսերվատորիա չունենք):

Սիրողներն էստեղ չեն օգնի:

Սիրողներն արժանի են հարգանքի ու վերջին մի քանի տասնամյակում ահագին էլ գործ արեցին: Այժմ սիրողների մեծ մասը հիմնականում ռազմական հայրենասիրական երգեր է երգում. բայց սրանց նշանակներն ու զարդանախշը, համարյա միշտ, շատ հեռու են ազգային լինելուց:

*Եթե կոնսերվատորիան էլ հաղթահարի իր կոնսերվատիվը ու լծվի ես գործին, հաջողության գրավականները կշատանան, ու երևի երգն ու պարը, գոնե մի քիչ, հարություն առնեն: Թե չէ, իտալերեն երգ ու պարը իտալացիք շատ լավ էլ զարգացնում են իրենց Իտալիայում, բուրք-թաթարականն էլ՝ որտեղ որ իրենք են, իսկ հայ երգն ու պարը սնունդ ստանալու, կենդանանալու ու զորանալու հնար՝ միայն ու միայն էստեղ պիտի ունենան, հայերի՝ տներում, հայ կոնսերվատորիայում, հայ օպերայում, հայ երաժշտական ուսումնարաններում:*

Բայց առաջին հերթին պետք է, որ մեր մանուկները սովորեն մեր աշխարհիկ երգը, սովորեն դպրոցում: Մրա համար էլ պետք է, որ մասնագետներն ուսումնասիրեն ու սովորեն, յուրացնեն Կոմիտասի հողվածներն ու խորհուրդներն ու մանուկներին սովորեցնելիս՝ հետևեն միայն ու միայն Կոմիտասի՝ ասածներին, ու իրենցից բաներ (օրինակ, «Բերք» պարի պես անճաշակ անհեթեթություն) չհորինեն:

Էս խնդիրն ահավոր բարդ է, եթե ոչ անկարելի: Բայց ձեռնարկելը պարտադիր է, քանի ուշ չէ, քանի ամեն ինչ լրիվ չենք կորցրել:

Մի հույս կա, ժողովուրդը գուցե հասկանա:

Գուցե հասկանա, եթե էս ասածներս ու առհասարակ՝ հայ երգ ու պարի էսօրվա վիճակը պատմվի ժողովրդին, ասվի դատը ճշմարտությունը:

Ասող է պետք: Ու պիտի անընդհատ ասվի, ամեն օր, միչև բոլորն էլ իմանան, թե ինչն է ինչոց: Պարզ է, որ մեր էս շուրի դասախոսների պեսերն էս բաներն ասող չեն:

Անշուշտ, կան ինձանից շատ ու շատ ավելի բանիմաց ու բազմատեղյակ մարդիկ, ովքեր կհմանան, թե որոշակի ինչ պիտի արվի: (Օրինակ, մի ժամանակ շատ բան էր անում Արզաս Ոսկանյանը, հիմա մեր հեռացույցն իրեն քիչ է ցույց տալիս: Վերջին տարիներին շնորհակալ զործ է անում Լուսինե Նազարյանը: Անպայման ուրիշներն էլ կլինեն):

(Եթե համարձակվում են՝ ինչ-որ բան առաջարկեն, առաջարկում են միայն է՛ն քանի համար, ուր ուրիշ ոչ մեկն ասածներս չի ասում: Առաջարկում են, որ ցույց տամ, որ քայլ անելու գոնե մի ճանապարհ կա):

Հետո պիտի մեր ռադիոյի ու հեռացույցի բոլոր ծրագրերով էլ անչափ շատ հաղորդվի բնիկ հայկական երգ ու պարի կենդանի մնացած սլառառիկները, օրինակ, Կոմիտասի, Արմենակ Տեր-Շահ-Մուրադյանի, Վահան Տեր-Առաքելյանի կատարածները, մնացած արժեքավոր կատարումները, ևն, ու անպայման մեր հոգևոր երգի էջմիածինյան կատարումները, բայց բուն հոգևորականների, մանավանդ մեներփիչների կատարմամբ:

Ու պիտի էս հաղորդումներն անպայման ուղեկցվեն շնորհալի ու ճշմարիտ (բայց ոչ հայագովական, տես էս գրքի երկրորդ մասը) բացատրություններով:

Պիտի էս բոլոր երգերը հրատարակվեն մեծ, դպրոցական տիրաժներով, մինչև շուկան լրիվ հագնա: Եթե միջոցներ չգտնվեն, արժի, որ հանգանակություն կազմակերպվի: Ու պիտի մեր Սփյուռքն էլ ներգրավվի էս գործի մեջ:

Դպրոցներում պիտի մեր մանուկներին սովորեցնեն նախ մեր պարերգը՝ յայլին, որովհետև, ինչպես Կոմիտասն է ասում, մեր պարի երգերն ամենապարզ կազմն ունեն, ու շատ հեշտ են յուրացվում:

(Իզուր չի, որ մեր էսօրվա «աստղերը» միայն մեր պարերգերն են աղավաղում, այսինքն, իբր երգում են: Ուժները սրանցից ավել չի պատում):

Հետո պիտի մեր մանուկներին սովորեցնեն մեր զեղոնը, այսինքն, երգապարը, բայց միայն ու միայն երգելով, միայն ու միայն՝ յայլով, առանց դաշնամուրի ուղեկցության, ու մանավանդ առանց Կոմիտասի ասած «այլանդակ, անճաշակ և կարծր ... ու զզվելի զուռնայի գոգոսն ձայների», (կամ դեռի):

Ու պիտի անպայման մեր մանուկներին հրաբերեն, զրգոն, խրախուսեն, որ մեր յայլին երգելիս կամ յայլով պարելիս նոր բառեր հորինեն, ու չվախենան, որ բառերը «ճիշտ» չեն երգում կամ մեղեդուց թեթևակի հեռանում են: Ու չվախենան, որ մանուկները բարբառով են հորինում:

(Գրական ոճերը սրտանց ու անկեղծ չեն, շինծու են ու արհեստական: Իսկական արվեստը կեղծիք չի սիրում):

Այսինքն, պիտի վարվեն ճիշտ մեր նախնիների պես՝ հայավարի: Եթե սա արվի, մենք իրոք պահպանած կլինենք (չեզվից հետո) մեր ամենակարևոր ազգային արժեքը:

Էս գործին ղեկավարներ են պետք. *պետք են այնպիսի մարդիկ, ովքեր առաջին հերթին՝ սիրտ ու հոգի ունենան ու երկրորդ՝ հայկականը ոչ հույկականից զանազանելու կարողություն ունենան:*

Ու ժողովրդին անպայման պիտի ասվի, պիտի ասվի հենց դպրոցից, թե որ երգերն ու պարերն են փոխառյալ (ինչքան էլ դրանք մեզ էսօր թանկ թվան): Հենց միայն «ա՛» քիչ չի լինի:

Ո՛Վ ՂԵՄԿԼԻՆԻ ՀԱՅ ԵՐԳԻ ՈՒ ՊԱՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆԸ

Իրոք, ովքե՞ր դեն կլինեն մեր երգ ու պարի հարությանը:

Նախ՝ բոլոր են մարդիկ, ովքեր չգիտեն, թե ո՞րն է հայերեն երգ ու պարը, բոլոր են մարդիկ, օրինակ, ովքեր հայկական են համարում Հ. Բաղալ-

յանի *Հորովորը*, ովքեր պաշտում են «ճարհար», «բարդիզմը», գուսանական երգերը, մեր գուռնա դեղով պարերը ևն:

Դեմ կլինեն բոլոր էն մարդիկ, ում լսողությունն ու տեսողությունը կրթվել է փոխառյալ, ոչ հայկական երգ ու պարով: Այսինքն, շատ մարդ դեմ կլինի: Մարդը միշտ է միշտ ու չքնաղ է համարում մանուկ օրերին սովորած բաները, ինչքան էլ որ սրանք սխալ ու տգեղ լինեն: Սրանից հետևում է մի կանոն.

Առաջին հերթին մատաղ ու երիտասարդ սերնդի լսողությունը պիտի կրթվի հայկական ազգային երաժշտությամբ, ու սա պիտի անի դպրոցը, ռադիոն, հեռացույցն ու ձայնապնակները, դիսկերը, ինտերնետը ևն:

(Մի քանի ամիս առաջ, լրիվ պատահական, ձեռք մի դիսկ ընկավ, վրեն *Դորը*, այսինքն, *Դարդիկ* անունով մի երգ, մի քանի յայլի (պարերգ) ու մի կատակ: Այշեցի ու շատ ուրախացա, որովհետև երգը զուտ հայերեն էր ու ինձ անծանոթ, մնացածներն էլ էին հայերեն, ու երգողն էլ լրիվ ու կատարյալ հայերեն էր երգում:

(Դրեցի ու մեկ-երկու օր լսեցի, մինչև մի քիչ «կշտացա» ու երգերը սովորեցի, (ինչքան որ իմ թերի լսողությունը հնար տվեց, բայց ես հայերեն երգին մոտ 12 տարեկանից եմ սովոր ու, անկեղծ, ահավոր եմ սիրում դա):

(Երբ մերոնց, այսինքն, կնոջս, զավակներին ու աստվածատուր լսողությամբ բռնանա էլ ստիպեցի, որ լսեն էդ երգերն ու իրենք էլ ուրախանան ու հիանան դրանցով, իմ խաթեր սկզբում մի քիչ լսեցին ու հետո, երբ շատ ստիպեցի, խնդրեցին, որ անջատեմ դրանք:

(Թոռս հեռացույցի ռեկլամով ու էսօրվա տեղական ու «իմպրտնի» ռաբիտով է դաստիարակվել, ու մեծ հաճույքով ու շատ էլ ճիշտ կրկնում է դրանք: Ես անջատում եմ դրանք, որովհետև իմ համար անտանելի են, բայց մեկ է, երբ տանը չեմ, միացնում ես լսում է դրանք:

(Սա իմ համար ողբերգություն է, անձնական ողբերգություն:

(Բայց ես ողբերգությունը համազգային է, որովհետև ես վիճակն ընդհանուր է:

(Իմիջիայլոց, ես դիսկը տվեցի իմ մի քանի ընկերոջը, նաև բանաստեղծ ու թարգման Էդվարդ Հախվերդյանին: Էդվարդն ինձ ասաց, որ դիսկն արդեն հասել է Իրանի ու ԱՄՆ-ի հայ գաղութներն ու որ լսողները շատ-շատ են սիրում դա: Հիմա պատկերացնո՞ւմ եք, ի՞նչ կլինեք արդյունքը, եթե դիսկը պետությունն արտադրեր ու մեր հեռացույցով էլ ներկայացվեր):

Երկրորդ՝ դեմ կլինեն բոլոր էն մարդիկ, ում գործը, այսինքն ապրուստի միջոցը կապված է հայ «ժողովրդական» կոչվող անսամբլներին, երաժշտական է՞ն ուսումնարաններին ու կոնսերվատորիայի է՞ն ֆակուլտետներին (իմա՝ – բոլոր) ու օպերային թատրոնի է՞ն բաժիններին (իմա՝ – բոլոր),

որտեղ ուսուցանում կամ կատարում են հայկական կոչվող, բայց իրականում փոխառյալ երգը, երաժշտությունն ու պարը:

Անշուշտ, կլինեն էլի հակաճառողներ:

Մտո մի քառասուն տարի առաջ, Սովետի օրերին, «Գրական թերթի» էն օրերի խմբագիր՝ հանգուցյալ Սաղաթել Մամիկոնի Հարությունյանը ելույթ ունեցավ հայ պարի ողբալի վիճակի մասին: Հարցը հասավ մինչև կառավարություն ու Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե: Անսամբլի էն օրերի ղեկավարը Ս. Հարությունյանին հրավիրեց համերգի, ասելով, թե վիճակը շտկել է:

Ու «Ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլի» ղեկավարը, դահլիճում տեսնելով «Գրական թերթի» խմբագրին, բեմ է հանում երկու պարող, ձեռներին էլ մի-մի «Գրական թերթ», ու սրանք, 30-ական թվականների գուսանական «լավագույն» ավանդույթներով, սկսում են պարով երգել. «Սաղաթել ջան, Սաղաթել» ևն:

Ու ոչինչ չի փոխվում: Սա ինձ հանգուցյալ Ս. Հարությունյանն ի՞նքն է պատմել, ու ես էլ ձե՛զ եմ պատմում, որ իմանաք, թե հակազդեցությունն ինչքան զորավոր կլինի:

(Իմիջիայլոց, համարյա վստահ եմ, որ մեր երաժշտագետներն իմ էս գրքին բոլորովին չեն արձագանքի: Կռեն, իբր ոչինչ էլ չի եղել:

(Սա, իմիջիայլոց, իրենց համար պաշտպանության ամենաճիշտ ձևը կլինի, ու մոտ երկու տասնամյակ է, ինչ մեր լեզվաբանները շատ հաջող էլ էս ձևը կիրառում են իմ դեմ:

(Բայց մի դառը փորձ էլ ունեմ: 1990 թվին էս հողվածի հիմնական թեզերը տպեցի «Նորք» ամսագրի 9-րդ համարում: Ոչ մի հայ ծպտուն անգամ չհանեց: Խոսակցությունը չկա, ուրեմն, պրոբլեմն է՛լ չկա:

(Հետո էլ ասում եմ, թե Կոմիտասն ու մեր ազգային երգն ու պարը մեր «ազգային պաշտելի այրժեքներն են»: Հավատա՞նք):

Ի վերջո, որոշողը ժողովուրդն է: Կոմիտասը 4000-ից ավել երգ էր հավաքել, ինչից պահպանվել է մոտ 1200-ը, սրանցից էլ մեր ռադիոն ու հեռացույցը, խիստ հազվադեպ, հաղորդում են, ամենաշատը, մի 10 հատ:

Եթե ժողովուրդը որոշի, որ էս դարերով շահած-պահած 1200-ն էլ իրեն պետք չի, որ իրեն միայն էսօրվա խոտանն է պետք, ոչինչ չես անի:

Տարօրինակ ժողովուրդ ենք (մեղմ ասած): Մաշտոցին, Աբովյանին, Թումանյանին, Կոմիտասին ու Արեղյանին ասում ենք հանճարեղ են ու պաշտում ենք, բայց հենց մեկն ասում է, եկեք իրենց պատգամները կատարենք, ահավոր հակաուսկվում ենք:

Մաշտոցի սկզբունքը մեկ տառ-մեկ հնչյուն ու մեկ հնչյուն-մեկ տառն էր, բայց հենց որ Մանուկ Արեղյանը մեր արդեն հնացած այբուբենը Մաշ-

տոցի էս սկզբունքով մի քիչ նորոգեց, բոլորը հարձակվեցին Աբեղյանի վրա ու 1908 թվից մինչև հիմա էլ (տես էս գրքի երկրորդ մասը), այսինքն, 103 տարի, հայեռում են Աբեղյանին: (Ինչքան հիշում եմ, Աբեղյանի հոբելյանն էլ երբեք տեղը տեղին չի նշվել, չնայած իր հայագիտական վիթխարի վաստակին: Իմիջիայրոց, Կոմիտասը հենց Աբեղյանի՝ հետ է մշակել իր հավաքած հայ երգերի տեքստերը):

Աբովյանն ու Թումանյանն ասում էին՝ եկեք գրե՛ք էնպես, ինչպես խոսում ենք: Մենք սա ոչ միայն չենք անում, այլև մեր կենդանի բարբառները, մեր միակ իսկական մայրենի լեզուները, մանավանդ Երևանի բարբառը, համարում ենք «իտղոցային, գռեհիկ ու զգվելի ժարգոն»:

Ու մենք երկու քերականություն ունենք, ու էս երկուսն էլ լրիվ հակասում են իրար, բայց մենք էս երկուսն էլ համարում ենք ճիշտ, ու սրանցից հենց սխալն ենք ընտրել, ու էս սխալն ենք սովորեցնում մեր դպրոցներում ու համալսարաններում: Հազար պիսոս: (Տես էս գրքի չորրորդ մասը):

(Իմիջիայրոց, մեր պրոֆեսիոնալ երաժիշտներից մեկնումեկն անպայման նախատինքով կհարցնի, թե ինչո՞ւ եմ ե՛ս խառնվում իրենց գործերին, ու ո՞վ եմ ես, որ էս հարցերից խոսում եմ:

Պատասխանում եմ:

Սրանք միայն ձե՛ր գործերը չեն: Ու մեկ էլ, որ էս վերջին 90 տարին դուք չեք խոսում, մեկնումեկը կխոսի՛, ու էդ մեկն էլ՝ թող ե՛ս լինեմ: Ռուսի ասած՝ *свято место пусто не бывает!*):

Մեր մշակույթն աշխարհին էնքան էլ լավ հայտնի չի, երկի մրցունակ չի, չնայած ասում են, որ օրինակ, շատ կարևոր (անցյալ) ճարտարապետություն ունենք (ինչը ցույց է տվել Թորոս Թորամանյանը, ու ում էլ արժանին չենք հատուցում): Բայց անհնար է, որ ճարտարապետությունը վերցնես ու, օրինակ, Ամերիկա տանես:

Իսկ երզն ու պարն է՛ն առավելությունն ունեն, որ շատ հեշտ կհասնեն աշխարհի ուզածը անկյունը: Եթե տանեինք մեր բնիկ երգն ու բնիկ պարը իրենց բնիկ երգելաձևով ու պարելաձևով, է՛ն ժամանակ դա կլսեին ու կնայեին ո՛չ միայն հայրենիքին կայուսած հայերը, այլև անգլիացին, ճապոնացին, ֆրանսիացին ու այլոք, քանզի հնարավոր չի, որ մայր չիիանա սքանչելիով ու կատարչալով, ինչ ազգից էլ որ լինի:

Ա՛յ, հենց է՛ս բաները պիտի ասեին

մեր հեռացուցային շռուի «դասախոսները»:

Ու նաև մեր կոմսերվատորիայի ու օպերայի գործիչները:

Երկրորդ մասը

## ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*(Ճշմարտությունը հայերենի ուղղագրության ռեֆորմի մասին, կամ Մանուկ Աբեղյանի ու հայ ազգի ողորգություններից մյուսը)*

Խավարամուտության պահպանվելու առաջին օրերը

Գերմանացի հռչակավոր մաթեմատիկոս, բազմությունների տեսության հիմնադիր ԳԵՌՈՐԳ ԿԱՆՏՈՐԸ (1845-1918) ասում է.

*«Եթե հանկարծ մարդկանց մեծ մասը ինչ-որ մի սխալ եզրակացություն է անում, ապա համարյա անհնար է, որ դրա սխալականությունն ապացուցվի: Ու ինչքան անհեթեթ լինի էդ եզրակացությունը, էնքան ավելի հավատարիմ են մնում դրան»:*

\*\*\*

Վերջերս շատ են խոսում ու գրում ուղղագրությունը փոխելու մասին: Հայաստանի գրագետների մի մասը անընդհատ ասում է, որ շատ-շատ է պետք, որ մենք, «արևելահայերս», մեր էսօրվա ուղղագրությունը թողնենք ու դառնանք մեր «հին, մաշտոցյան, ավանդական» ուղղագրությանը:

Այսպես են ասում նաև Հայ Սփյուռքի մեր «արևմտահայ» է՛ն ներկայացուցիչները, ովքեր կարծում են, թե իրենց էսօրվա արևելահայ տեքստերը չհասկանալու պատճառը արևմտահայ ու արևելահայ ուղղագրությունների տարբերությունն է:

Հին (կամ «իբր մաշտոցյան, դասական») ուղղագրությանը դառնալու կողմնակիցները (կարծության համար սրանից հետո դրանց կասեմ *հնամուլներ*), համարյա միշտ, մեր ուղղագրության պատմությունն էնքան սխալ ու աղավաղ են ներկայացնում, որ չես հասկանում, անտեղյակությունի՞ց է սա, թե՞ դիտավորություն է:

Հետաքրքիր է, որ հնամուլները ոչ մի անգամ ժողովրդին պարզ ու հասկանալի չեն բացատրում, թե իրենց ուզած «հին» (հետո՛ ուղղակի *հի՛ճ*) ուղղագրությունը ո՞րն է կամ ինչո՞վ է տարբեր էսօրվա ուղղագրությունից: Կարծում եմ, որ սրանց մեծ մասը սա չի բացատրում, որովհետև լավ գիտի, որ եթե հանկարծ բացատրի, Հայաստանի ժողովուրդը, համարյա լրիվ, ուղղագրությունը փոխելուն է՛ն կլինի:

Ի՞նչ են ուզում հնամուլները, ու ո՞րն է մաշտոցյան կամ դասական ուղղագրությունը: Սկսենք սրանից:



**ԹԱՐԱ ԳՐԵՆՔ, ՇԻՏԱԿ ԿԱՐԴԱՆՔ**

Մի բան մարքերու համար՝ պիտի մի ուրիշ բան կեղտոտես, բայց հնարավոր է, որ ամեն ինչ կեղտոտես ու ոչ մի բան չմարքես: Պիտերի «Կեղտի կուտակվելու սկզբունքը»

Հնամուկներն ուզում են, որ գրենք.

«անոյշ, առոյգ, արաս (թռչուն է), արատ, արար, բոյթ, հոգեբոյժ, պորտաբոյժ, անասնաբոյժ, անասնաբոյժ, բոյն, բոյս, բոյր, գոյժ, չարագոյժ, գոյն, անգոյն, բազմագոյն, գոյն-գոյն, գոյնզգոյն, լավագոյն, հիմարագոյն, դժգոյն, զգոյշ, դաշոյն, դոյլ, համբոյր, ոյժ» ևն,

բայց սրանք կարդանք.

«արույր, արոս, արոտ, արոր, բութ, հոգեբույժ, անասնաբույժ, անասնաբույժ, պորտաբույժ, բույն, բույս, բույր գույժ, չարագույժ, գույն, անգույն, բազմագույն, գույն-գույն, գունզգույն, լավագույն, հիմարագույն դժգույն, զգույշ (կամ՝ զգուշ), դաշույն, դույլ, համբույր, ուժ (!) » ևն:  
(աւ-ի տեղն էլ, համարյա միշտ, գրում են օ, բայց ակնհայտ է, որ սա մաշտոցյան դասական ուղղագրութիւնն է):

Բացի սրանք, հնամուկներն ուզում են, որ բառի սկզբում հ-ի տեղը գրենք յ, բայց կարդանք հ:

Օրինակ՝ «յագեհնայ, յածանավ, յակինթ, յաղթել, յանախ, յամառ, յայտնի, (նաև՝ անյայտ, արտայայտել, արտայայտիչ, արտայայտութիւն), յարավել, յարադել, յատմիկ, Յասմիկ, յասպիս, յտանկ, յատուկ, յարակից, յարաշարժ, յարդ (այսինքն, ծղոտ, բայց այս անգամ էլ ինչպէ՞ս կարդանք անգլերն յարդը, ինչը երկարաբայան միավոր է), յարմար, անյարմար, անյարմարութիւն, քարեյարմար, յավանակ (էշ), յավեժ (այսինքն, հավերժ), յավետ, յսվիտեան, յերուկ, յեղյեղուկ (բայց ինչպէ՞ս կարդանք յեղուկ և ծայնարկութիւնը), յղկել, անյղկելի, յիշել, անյիշելի, յուշ, յուշել, յիսուն, (բայց հինգ), յոյժ (հույժ), յոյս (հույս), անյոյս, յուրոպ, յոսի (= հոսի = վատ), յունիս, յուլիս, յունուար, յաղ (հող, բայց ինչպէ՞ս կարդանք յող քիմիական տարրի անունը), յանք (հոնք), մրայաւն (մբահոն), յարանք (հորանք)» ևն, ևն:

Բայց մեկ-մեկ էլ պիտի հ գրենք ու հենց հ էլ կարդանք:

Օրինակ, «յամառատ (համառոտ), հանգուցեայ, հանգրուան, հանդէպ, հանդէս, հանդոյրժ, անհանդոյրժ, հաջել (հաշել), հատուցել, հարուած (հարված), հարխըր (կամ՝ հարետըր)» ևն, ևն:

Հնամուկներն ուզում են, որ այսօրվա ե տառի տեղը մեկ-մեկ գրենք է:

Կարդացողը սրանց օրինակներից վերն արդեն տեսավ, բայց մի քանի հատ էլ ավելացնեն՝ «ծովահեն, հենք, գէշ, գէջ (խոնավ), գէս (մազ), ամենագէտ, տգէտ, անգրագէտ, քետագէտ, ասորագէտ, եզիպտագէտ, գէր (չաղ), դէմ(ք), դէպ(ք), հանդէպ, դէտ(ք), ակնդէտ» ևն, ևն:

Հնամուկներն ուզում են, որ երեք տեսակ վ ունենանք:

Մի հատ՝ մեր սովորական վ-ն, մի հատ հյուն (կամ վյուն) տառը՝ ւ-ն, այսինքն, այսօրվա ու-ի երկրորդ կեսը (որ անտեղյակները վերջերս համատարած գրում են վ-ի տեղը), ու մեկն էլ՝ ու տառը (բայց սա պիտի նաև ու էլ կարդանք, որտեղ որ պետք եղավ):

Օրինակ, «ասագ, ստագանի, ավագ, ստագակ, արտեստ, նուեր (նվեր), գուարթ (զվարթ), բաւանդակ (բովանդակ), բեւեկն (բՄՌտՌ-ՊՌՐ), գլխատըր (բայց՝ գլխովին (!)), գրաւ, դրուագ, դրուատել, հալուէ, յովատակ, աստուած» ևն, ևն:

Հնամուկներն ուզում են, որ մեկ-մեկ յու-ի տեղը գրենք իւ կամ եւ:

Օրինակ, «ավիւն (ավյուն), բիւր, բիւրեղ, գիւղ, գիւտ, , դիւրին (իեշտ), դիւցազն (բայց՝ դիւցապաշտ-ը պիտի կարդանք դիւցապաշտ, դեւ-ը՝ դեվ, ու նույն ձևով՝ «դիւահար, դիւապաշտ, դիւապետ, դիւաց» բառերը պիտի կարդանք՝ «դիւահար, դիւապաշտ, դիւապետ, դիւաց» ևն), առեւծ (կամ՝ առիւծ, որովհետև երկուսն էլ ունենք ավանդված, ու որը պիտի գործածենք, հայտնի չի), ալեւը (կամ՝ ալիւր, այս երկուսն էլ կա), հիւծել, հիւղ, հիւսպատասիս, հիւսիս, յիւր, հիւմարութիւն, ասպուշութիւն, տգիտութիւն» ևն:

Բայց մեկ-մեկ էլ՝ այս եւ-ը չպիտի կարդանք յու, այլ պիտի կարդանք էվ:

Օրինակ, «արեւ, բարեւ, տերեւ, հարեւան»: Բայց արի տես որ նորից, օրինակ, «նաեւ, գուցեւ» բառերը չպիտի կարդանք «նայաւ, գուցեյաւ» կամ էլ՝ «նաեվ, գուցեվ», այլ՝ «նայեվ, գուցեվ»:

Հնամուլներն ուզում են, որ շատ հաճախ էլ բառի վերջում գրենք յ, բայց այս յ-ն չկարդանք:

Օրինակ, «հաճոյ, մարդահաճոյ, հինայ, հերիսայ, հմայ, տղայ, Կարոյ, ծառայ, զարմանայ, հրեայ, զտրանայ (զորանայ), համարեայ՝, զնայ՝ (օրինակ, ա-ով վերջացող հրամայականների համարյա բոլորի վերջում էլ պիտի յ-ն գրվի)»:

Հնամուլներն ուզում են, որ գրենք «սեմեակ, դայեակ, ողորմեա, հիմարութեան, սպուշութեան, տգիտութեան» ևն:

Օրինակներն էլ չեն երկարացնում: Արվելիք փոփոխությունների թիվը վիթխարի է: Ու չեն էլ ասում, թե քանի բառի թեք ձևի, այսինքն, հոլոված ու խոնարհած ձևի ուղղագրությունն էլ պիտի փոխվի:

Իսկ թե ի՞նչ ահավոր քառս կղառնա տողադարձի հարցը, պատկերացնելն անգամ հնարավոր չի:

Ով լուրջ է հետաքրքրվում էս հարցով ու սրա պատմությանը, թող վերցնի Մանուկ Աբեղյանի *Երկերի* Ը հատորի 292 էջից մինչև 492 էջը կարդա:

Հնամուլները ոչ մի անգամ չեն ասում, որ Աբեղյանը 200 վիթխարի էջանոց գործերի շարք ունի, ինչի մեջ այսօրվա ու 20-30-ական թվերի Աբեղյանի ուղղագրություններին արած հնամուլների բոլոր-բոլոր առարկությունների սպառիչ պատասխանները կան, ու ելը մի բան էլ ավել (ժամանակին որիչ առարկություններ էլ են եղել, ու էնտեղ դրանց պատասխաններն էլ կան):

Չեն ասում, որովհետև հնամուլները, մեծ մասամբ, լեզվաբանությունը լուրջ գիտելիք չունեն, ու էս հարցերին խառնվում են զուտ իրենց անձնական շահերի համար (եթե իրոք մոլորված չեն՝ իրենց անգիտության պատճառով): Իսկ հնամուլներին է՛ն մասը, ինչը քիչ թե շատ տեղյակ է էս հարցի պատմությունից, չ'ի ասում, որովհետև ձեռնտու չի: Բա որ «շարքային մահկանացուները կարդան ու տեսնեն, որ հնամուլների գիտելիքներն է՛լ, բերած «փաստարկներն» է՛լ, մեղմ ասած, ուղղակի միամի՞տ են:

Հեշտ թվացող բանը երբեք հեշտ չի: Մերֆիի օրենքի 1-ին հետևանքը

Հնամուլներն ասում են, որ մաշտոցյան ուղղագրությունը հեշտ է, բայց սխալ են ասում:

Մաշտոցյան ուղղագրությունը հեշտ էր Մաշտոցի ժամանակ, բայց հիմա հեշտ չի:

Երբ երեխան գրել-կարդալ է սովորում, կանոններով չի սովորում: Հասուն մարդը մոռանում է, թե երեխա ժամանակ կարդալն ինչքան դժվար է սովորել: Բայց ով առաջին դասարանցի երեխա ունի, լավ գիտի էդ դժվարությունները: Մա լավ գիտեն նաև ցածր դասարանների ուսուցիչները: Ու, իհարկե, սա լավ գիտեն նաև է՛ն մեծահասակները, ովքեր, Միլյուրից գալով, հայերեն գրել-կարդալը նոր են սովորում: Մա լավ գիտեն օտար լեզու սովորողները, թեև դրանք, մասամբ, կանոն էլ են գործածում:

Երբ երեխան կամ հասուն մարդը նոր-նոր է գրել-կարդալը սովորում, պիտի բոլոր-բոլոր բառերի պատկերներն անգիր անի (պիտի անգիր անի նաև բառերի թեք ձևերի պատկերները): Մեծ մասամբ, էսպես է նաև օտար լեզու սովորելիս: Եթե մարդը մասնագիտությամբ լեզվաբան չի, համարյա երբեք կանոնի չի դիմում (բացառությամբ անալոգիայի կամ կապկերու կանոնի, որը հատուկ է լեզվին ու, բոլորիս՝ առհասարակ):

Մենք՝ հասարակ մահկանացուներս, հիշում ենք, օրինակ, որ «օձ» բառը գրվում է «ձ»-ով: Բայց ասեք՝ տեսնեմ, էդ բառը գրելիս, մեզնից ո՞վ է հիշում հետևյալ կանոնը, որ «ձ» տառը միշտ գրվում է «ը, մ, դ» բաղաձայններից հետո (իմիջիայլոց սա չի նշանակում, որ «ը, մ, դ» բաղաձայներից հետո միշտ «ձ» է գրվում), ու որ էսյերենի զոկերեն բարբառում «օձ»-ն արտասանում են «աղձ», ու որ դրա համար էլ՝ երևի շատ-շատ վաղուց հայերն օձին ասել են «աղձ» ու դրա համար էլ հիմա պիտի գրենք «օձ» կամ էլ, հնարավոր է, որ «օձ»-ի «ձ»-ն առաջացել է վաղը՝ ւց-վաղուցվա մի թաբուի պատճառով: (Տես օրինակ, Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի...*, հատ. 6, էջ՝ 722)

Ու ասեք տեսնեմ, թե, օրինակ, էս կանոնը կամ էլ մեզնակ փակագծերի միջի դիտողությունս 6-7 տարեկան մանուկը կհասկանա՞: Եթե էս կանոնը հասկանա էլ, չի՞ հարցնի, թե «անգր, քաղց, հարց» բառերի մեջ ինչու՞ է «ն, դ, ը» բաղաձայնելից հետո «ց» ա ոչ թե «ձ»:

Քրեմն, գրելը սովորելիս, կանոն՝ համարյա չենք գործածում: Մեծ մասամբ հիշում ենք բառը լրիվ, այսինքն, բառի լրիվ պատկերը, ու ոչ միայն բառինը, այլև դրա թեք ձևերինն էլ հետը: Երբ որևէ բառի ուղղագրությունը

մոռանում ենք, կանոնի՞ ենք դիմում, թե՞ արագ-արագ գրում ենք էլ բառը, վստահելով մեր ձեռքի «հիշողությանը»:

Հին ուղղագրությունը, էսորվա ուղղագրության համեմատ, ահավոր դժվար է: Էդ ուղղագրությամբ ճիշտ գրելու համար՝ անհրաժեշտ կանոնների ու բացառությունների թիվը վիթխարի է: Ով ասում է. «Անցնենք հին ուղղագրությանը», ասում է. «Եկեք հայ ազգի համար մի վիթխարի դժվարություն ստեղծենք, որ հետո դա հերոսությամբ հաղթահարենք»:

Ով որ կարդա Մ. Աբեղյանի՝ հիշատակած աշխատանքները, հաստատ կհամոզվի, որ ասածս ոչ միայն ճիշտ է, այլև կհամոզվի, որ չափազանց քիչ ու մեղմ բաներ են ասում հնամուլների մասին:

### ՄԱՇՏՈՅՑԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԷՍՕՐ ԷՒ Է ԼԱՎԸ

Չանգի ձեռք հեռվից քաղցր ա:  
Ժողովրդական ասացվածք

Մաշտոցյան այբուբենը, իրոք, ժամանակի լավագույն այբուբեններից էր, որովհետև համարյա հիմնված էր՝ *մի գիր - մի հնչյուն* ու *մի հնչյուն - մի գիր* սկզբունքի վրա, այսինքն՝ ինչ լսում՝ են էլ գրում ես: Ասում եմ՝ «համարյա», որովհետև Մ. Մաշտոցը, թերևս հունարեն գրին հետևելով, չգրեց բառերի մեջտեղը լսվող «ը» ձայնը՝ էսպես կոչված՝ գաղտնավանկի «ը»-ն, ու շատ ավստս, որ չգրեց (այսինքն, Մաշտոցը չգրեց՝ «աստղը, արկղը, կըրկին, կըռապաշտ, ըսկիգը, ըսկըսել, ըստիպել, մըկըրտիչ» ևն):

Բայց Մաշտոցյան այբուբենը լավն էր միայն Մաշտոցի ժամանակ, որովհետև են ժամանակվա հայը՝ համարյա ինչ լսում էր, են էլ գրում էր:

Եթե Մաշտոցը գրում էր՝ (*Մաղնոս Դավթի դե*).

1) *Արհնեցէր զՏէր յարհնութիւն նոր. արհնեցէր զՏէր ամենայն երկիր, տեսարանեցէր արք ըստ արե՛ գիրկութիւն նորա: Պատմեցէր ի հեթանոսս զփառս նորա, յամենայն ժողովուրդս զքանչելիս նորա: Մեծ է Տէր ել արհնհալ է յոյժ:*

Մայա 5-րդ դարի հայը սա համարյա էսպես էր կարդում.

2) *Աւօրհնիէցէր ըզՏէր իւաւօրհնութիւն նուօր. աւօրհնիէցէր ըզՏէր ամիենայն իերկիր, աւտարանիէցէր ասոք ըստ ասոք ըզփրկութիւն նուօրա: Պատմիէցէր ի հիէթանուօրս ըզփառս նուօրա էամենայն ժուօլուօվուրդս զքանչելիս նուօրա: Միեծ է Տէր իւաւ ասօրհնիէալ է յուօյժ:*

Իհարկե, 5-րդ դարի հայը սա շատ հեշտ էր արտասանում, որովհետև իր ձայնային գոյժարանները (լեզուն, բերանը, քիմքը, ընկանը ու իր ուղե-

նի խոսքի կենտրոնները) վարժված էին սրան, ինչպես որ մեր ձայնային գործարաններն ու մեր ուղեղի խոսքի կենտրոններն են վարժված էսորվա՝ հայերենին ու վարժված չեն սրան կամ արևմտահայերենին:

Մրա համար էլ *սա էսոր կարդում ենք եկեղեցականների պես, այսինքն՝ մի է՛ն տեսակ արտասանությամբ, ինչը ո՛չ հին է, ո՛չ նոր, չնայած կոչվում է՝ ավանդական արտասանություն:*

Ահա կարդալու մեր էսորվա ձևը.

3) *Օրհնեցէր ըզՏէր հօրհնութեւն նօր, օրհնեցէր ըզՏէր ամենայն երկիր, ավտարանեցէր օր ըստ օրէ ըզփրկութեւն նօրա: Պատմեցէր ի հեթանոսս ըզփառս նօրա, համմենայն ժողովուրդս զքանչելիս նօրա: Մեծ է Տէր յե՛լ օրհնեալ է հույժ:*

Էս քաղվածքներից պարզ երևում է, որ էսոր Մաշտոցի օրերի հայերենին ոչ միայն բառերն ու քերականությունն են խիստ փոխվել, այլև՝ հնչյունները: Ընդ որում, հնչյուններն ենքան են փոխվել, որ կարդալն անգամ՝ «յոյժ» դժվարանում ենք: (Տես՝ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հատ. 6, էջ 231-236):

Տարակույս չունեն, որ եթե Մաշտոցն իմանար, որ մի օր գրելու են 1)-ին ձևով, բայց կարդալու են՝ 3)-րդ ձևով, «յոյժ» կգարմանար:

Մ. Մաշտոցը կմտածեր, որ էլ տեսակ այբուբեն հորինողն ուղղակի խելագար է (եթե չիմանար, որ լեզուներն արագ են փոխվում, իսկ ուղղագրությունը՝ դանդաղ (իսկ սա Մաշտոցը չգիտեր. են օրերին մեր էսորվա փորձն ու գիտելիքը չկար) ու չծանոթանար մեր էսորվա հնամուլների վարք ու բարքին:

Էսորվա լեզվի համար Մաշտոցյան ուղղագրությունը գործածելը նման է՝ տրակտորով պատից փոքրիկ մեխը քաշել հանելուն, ընդ որում, երբ էլ մեխը, շատ հեշտ, (էսորվա ուղղագրության ձեռքով) քաշվում հանվում է:

Ու եթե Միլյուրքի մի քանի թերթ ու գրող՝ մեխը տրակտորով են հանում, իսկի էլ պարտադիր չի, որ էլ մեխը մենք էլ տրակտորով քաշենք հանենք:

«ԴԱՄԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՄԵԼՈՎ՝  
ՀՆԱՄՈՒԼՆԵՐՆ ԻՆՉ ԵՆ ՀԱՄԿԱՆՈՒՄ

Թի որ մեկը մի կարևոր բան առաջարկի, մաշտոցիկ անարայման լրիվ ուրիշ բան կհասկանան:  
Հիգիտմի 3-րդ օրհնքը

Հա՛, Միլյուրքի «հին» ուղղագրությունը, քիչ թե շատ, նման է մաշտոցյանին: Բայց միայն, քիչ՝ թե շատ: Մկելի ճիշտ՝ ահագին քիչ: Բայց, եթե մեր էսորվա լեզուն Միլյուրքի ուղղագրությամբ գրենք, ապա դա կլինի ոչ

քե մաշտոցյան ուղղագրութիւն, այլ շատ նման կլինի անգլիական կամ ֆրանսիական էսորվա ուղղագրութեանը, ու բոլորովին էլ՝ հայկական, մաշտոցյան սկզբունքով ստեղծած ուղղագրութիւն չի լինի:

Մաշտոցը չուներ *օ, ֆ, և* նշանները: Սրանցից *և-ը* նշան-համառոտագրութիւն է, որ Մաշտոցի օրերից մինչև 11-12-րդ դարերը գրվում էր *ու*:

Մաշտոցի այբուբենը չուներ նաև *ֆ-ն*, որովհետև էն օրերի Արարատյան բարբառը չուներ *ֆ* ձայնը, ինչպես որ էսօր էլ ձայնը չունեն, օրինակ, էսօրվա Թիֆլիսի ու Ղարաբաղի բարբառները, ու դրանք էսօր էլ են ասում՝ *քեֆի, փուտրոյ, փայտոն, կոփե*, փոխանակ ասեն *քեֆի, ֆուտրոյ, ֆայտոն, կոֆե*: Մաշտոցի օրերին *ֆ* ունեցող օտար բառ փոխ առնելիս՝ *ֆ*-ի տեղը գրում էին *փ*, օրինակ, *փիլիսոփա, Փիլիսոս, Մոփիա*, ևն:

Մաշտոցի օրերին էսօրվա *օ-ի* տեղը գրում էին՝ *ա*: Մփյուռքում *ա-ի* տեղը էսօր գրում են *օ, ֆ-ն* ու *և-ն* էլ գործածում են առանց խղճի խայթի:

Բայց չէ՞ որ հենց միայն սրանց համար արդեն Մփյուռքի էսօրվա ուղղագրութիւնը մաշտոցյան չի, ու արդեն հենց միայն սրա համար Մփյուռքի էսօրվա ուղղագրութիւնը «մեզ կարել է մեր արմատներից», ինչպես որ հնամուկներն են ասում:

Հնամուկները սա լավ գիտեն ու հենց սրա համար էլ մաշտոցյան ածականը մեկ ու մեջ գործածում են դասական ածականի հետ, իրար փոխարեն, երկուսն էլ հասկանալով նույն՝ մաշտոցյանի իմաստով, չնայած լավ հայտնի է, որ դասական ածականը գործածում են, որ մշտն հենց մաշտոցյանը, ավելի ճիշտ, Մաշտոցի ու մեր առաջին թարգմանների ու գրողների գործերի (թերևս մինչև 9-րդ դարի) ուղղագրութիւնները:

(Բուն Մաշտոցի ու իր աշակերտների գործածած լեզուն ու ուղղագրութիւնը հաճախ կոչում են՝ ոսկեդարյան):

Նույն բառերի ուղղագրական զգալի տարբերությունները կան արդեն մեզ հասած հնագույն ձեռագրերում, օրինակ Աստվածաշնչի 9-րդ դարի ամբողջական ձեռագրում: Դրանից հետո մինչև 11-12 դարերը էլ տեսակ տարբերությունների թիվը շատ շատացավ:

Էս դարերում փոխվեցին տառատեսակները, առաջացան փոքրատառերն ու կետադրական համարյա բոլոր նշանները, տողադարձն ու սրա կանոնները, բառերն սկսեցին գրել իրարից անջատ ու թեք, առաջացան ասածս *օ* ու *ֆ* տառերն ու *և* համառոտագրութիւնը, ևն:

(Տես 53-ը ու Մ Հարությունյանի *Չվարճալի այբ ու բենը*):

Ու ամենակարևորը, հայերեն լեզվի բոլոր բարբառներն էլ արդեն շատ-շատ էին փոխվել, ու առաջացել էր բազում նոր բարբառ: Լեզուն անալայման է փոխվում: Աշխարհում չկա լեզու, ինչը չի փոխվել ու չի փոխվում:

Փոխվում են լեզվի ենչյունները, փոխվում են լեզվի բառակազմութեան օրենքները, բառերի մի մասը մեռնում է, երբեմն ծնվում են նոր բառեր՝ կազմակերպված, ոչ պրիմիտիվ լեզուներում՝ միայն փոխառութեան միջոցով, բառերի իմաստներից մեկը կամ մի քանիսը երբեմն մեռնում է, մի մասի էլ իմաստներն են երբեմն փոխվում, կամ երբեմն բառի մի լրիվ նոր իմաստ է ծնվում:

(Օրինակ, մեր օրերում *թայն* գոյականը դարձավ նաև ածական, ընդ որում լրիվ հակառակ իմաստով. հիմա ջահելներն ասում են *թայն կոշիկ* ու հասկանում են՝ *ընտիր կոշիկ*. մեռավ *օրինակ* բառը, ու հիմա սրա տեղը ջահելները (ու նույնիսկ մինչև 45-50 տարեկանները) ասում են *խոսքի*, ևն: Էս վերջինը երևի առաջացել է *խոսքի օրինակ* կապակցութեան երկրորդ բաղադրիչի մեռնելով):

Փոխվում է լեզվի քերականութիւնը:

Էս փոփոխությունների գումարը դարերի ընթացքում լեզուն էնքան է հեռացնում իր սկզբնական վիճակից, որ եթե էսօրվա հայը մի հրաշքով ընկներ Մաշտոցի օրերի Էջմիածինը, էն օրերի հայի խոսքից համարյա բան չէր հասկանա, ու ոչ էլ էն օրերի հայը կհասկանար մեզ, ու սա, նախ, արտասանական վիթխարի տարբերությունների պատճառով:

Մաշտոցի այբուբենը, ինչպես ասվել է, կատարյալ էր իր օրերի համար, ու փոխված լեզվին արդեն հարմար չէր, ու քիչ-քիչ ավելի ու ավելի անհարմար էր դառնում: Անհարմար էր է՛ն իմաստով, որ համարյա բոլոր գրագետներն էլ (օրագետ՝ էն օրերին էնքան էլ շատ չկար, ու էս քչութիւնը, օրինակ, Պ. Պռոշյանի ու Ղ. Աղայանի, Ա. Մեյեի վկայութեամբ, տեղեց համարյա մինչև 19-րդ դարի վերջը) ուղղագրական բազում սխալ էին անում, քանզի խոսում էին մի ձևով, բայց պիտի գրեին լրիվ ուրիշ ձևով:

Սրա համար էլ Մաշտոցի օրերի ուղղագրական քիչ թե շատ միակերպութիւնը ինքնին վերացավ ու առաջացավ ուղղագրական մի իսկական խառնաշփոթ: Հնամուկները սա երբեք չեն ասում:

Չեն ասում, որ բոլորին համոզեն, թե Արեղյանից առաջ կար ուղղագրական մի դրախտային միակերպութիւն, ու որ հենց «չարագործ» Արեղյանն էր, որ էլ դրախտը դարձրեց դժոխք, ու որ հենց իրենք են է՛ն Փոքր Մեծերը, ովքեր Ագոստինոսից (օրինակ, «Ռոտ Այլընտից», այսինքն, Նյու Յորքի Rod Island-ից) դուրս են եկել, որ ուղղագրութիւնը դարձնեն միակերպ ու «հայ ազգը պատակութիւնից ու կործանվելուց փրկեն»:

ՄԵՂԱՎՈՐԸ ԱԲԵՂՅԱՂՆ Է ՈՒ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐՆ ԵՆ

«Վայ, վայ, վա՛յ, ինչ տարափելի ու նողկալի ես... ախ, ախ, ախ: Զա՛րք, Մատանա՛, Լևիաթա՛ն: Էնքա՛ն ես այլանդակ ու զզվելի, որ քեզ նայելու ուժ էլ չունեն»:

Ֆրանսուա Ռարլե, Պանտագրյունը, IV գիրք, գլ. 33

Հնամուկները շատ անգամ ասում են, որ մեր հին ուղղագրությունը փոխելու ձեռնարկողը եղել է Մանուկ Աբեղյանը (մեկ-մեկ՝ Պողոս Մակինցյանի՝ 1921 թ. լուստողովմի հետ), ու փոխել է բուլղարացիների հանձնարարությամբ:

Սա գլխավոր ստան է, գլխավոր կեղծիքը:

Ու կարևոր չի, սրա պատճառը՝ դիտավորությունն է, թե՞ անտեղյակությունը, չնայած՝ անտեղյակությունը սազական չի իրեն գիտնական համարող մարդուն: Բայց դառնանք փաստերին:

Հայտնի բան է, որ եթե էսօր մի բանը կապվեց բուլղարացիներին, կվատաբանվի, կանվանարկվի: Մանավանդ, եթե ավելացնեն, որ Աբեղյանը թաքուն նպատակ ուներ, որ հետագայում հայերեն այբուբենը դեն ձգի ու տեղը լատինատառ այբուբեն դնի, ինչը, անկասկած, ճիշտ չի:

Ի՞նչն է ճիշտ:

Ճիշտ է, որ Աբեղյանն ուղղագրության ու ուղղախոսության հարցերով զբաղվել է իր գործունեության հենց առաջին տարիներից: Ինչու՞:

Որովհետև հին ուղղագրությունը փոխելու տենդենցն ու թունդ վեճը դրա մասին՝ արդեն կար: Ուրեմն, 12-րդ դարից ունենք գրած՝ *նվազ, նվեր, քվել*, փոխանակ՝ *նուազ, նուեր, քուել*: Անցյալ դարի վերջերին Գազարոս Աղայանն առաջարկում է՝ *ու = վ-ի* փոխարեն՝ գրվի *ւ*, ու սա տեսությամբ հիմնավորելու փորձ է անում լեզվաբան՝ Ս. Սարգսյանը («Աղբյուր», երկրորդ բաժին, NN 5-6):

Դրանից առաջ էման բառերը *վ-ով* գրելու փորձ է անում Խորեն Վարդապետը, իսկ 18-րդ դարի վերջին՝ էդ փորձերին հարություն են տալիս Մխիթարյանները, բայց անհաջող (ավելի մանրամասն՝ տես հետո):

Ժամանակի հրամայական պահանջ դարձած էս ինքնակա փոփոխությունների գիտական քննությամբ Ս. Աբեղյանը 1890 թ. «Նոր Դար» լրագրում հանդես է գալիս երկու հոդվածաշարով, առաջինում (N 151, 153, 155, 161, 162, 164, 166, 168, 169), ուրիշ հարցերի հետ բնում է օտար բառերի ուղղագրության հարցը, իսկ երկրորդում (N 187-194, 196-197) հենց պատասխանում է Ս. Արգոսյանին ու Գ. Աղայանին ու իրենից առաջ էս հար-

ցերով հանդես եկած համարյա բոլոր սխալ տեսակետ ունեցողներին, ու արծարծում է նաև բոլոր ճիշտ տեսակետները:

Էս հոդվածների հիմնականը էն միտքն էր, որ երևի չարժի, որ հին ուղղագրությունը փոխվի (էդ տարիներին թերևս ոչ ոք հին ուղղագրությունը *Աբեղյանի* պես չգիտեր. երևի՛ հետո էլ, *եթե չհաշվենք Գալուստ Տեր-Սկրտչյանին, Հրաչյա Աճառյանին, ու էլի մի քանի հոգու*):

Ուրեմն, իր գործունեության սկզբին, Աբեղյանը դեմ էր հին ուղղագրությունը փոխելուն: Դեմ էր, որովհետև արդեն 35-37 տարեկան էր ու ինքը շատ վարժ էլ (բարձրից վարժ) գրում էր հենց է՛դ ուղղագրությամբ:

Երկու տարի հետո Աբեղյանը հրատարակում է *Հայոց լեզվի ուղղագրությունը* վերնագրով մի գրքույկ (ճարտարապետ Նիկողայոս Գրիգորյանի ծախսով): Գրքի վերջին կցած է արևելահայերենի ուղղագրական առաջին բառարանը:

Էդ օրերին «բուլղար» տերմինն անգամ չկար:

Դրանից հետո Աբեղյանն ուղղագրության մասին խոսել է իր *Աշխարհաբարի քերականություն* (1906), *Տարրական քերականություն* (1907) ու ուրիշ գործերում (տես Աբեղյան Մ. – *Երկեր*):

Սրանցից՝ 1892 թվի գրքում Աբեղյանն առաջին անգամ տվել է աշխարհաբարի (հին, դասական, մաշտոցյան) ուղղագրության կանոնները:

Ինչո՞ւ էր Աբեղյանն էս կանոնները մշակել: Մշակել էր, որովհետև մեր հլը որ մոր աշխարհիկ գրականությունը էն օրերին ընդամենը 24 տարեկան էր (Խաչատուր Աբովյանի «*Աղբյուր Հայաստանին*» տպվել է 1858 թվին): Էս 24 տարում լիքը թերթ ու ամսագիր ծնվեց, մեծ քանակով գրող հայտնվեց, ու սրանք բոլորն էլ շատ վատ գիտեին մաշտոցյան ուղղագրությունը, ու սրանցից ամեն մեկը գրում էր՝ ոնց պատահի, ու ուղղագրության էն օրերի վիճակը կատարյալ շիլաշփոթ էր:

Աբեղյանն աշխարհաբարի *հին* ուղղագրության կանոնները մշակել էր, որ բոլոր հայերն էլ գրեն :Ֆիակերպ ու միասնական ուղղագրությամբ:

Հայոց կաթողիկոսի կանոնակով փորձեցին՝ էդ կանոնները պարտադրեն հայ բոլոր հրատարակիչներին ու դպրոցներին:

Էդ փորձը ձախողվեց, որովհետև եթե ուղղագրությունը «յոյժ» բարդ է (իսկ մաշտոցյան ուղղագրությունը, ինչպես տեսանք, մեր օրերի հայերենի համար «յոյժ» բարդ է, չնայած Մաշտոցի օրերի համար համարյա իդեալական էր), գրողներն էլ՝ Աբեղյանի կարգի լեզվաբան չի՛ն, ապա դրանք անընդհատ սխալ կանեն, ոնց որ էսօր են անընդհատ սխալ անում:

Ու էն օրերի մեր ուղղագրության վիճակը մի «կատարյալ բարելոնյան խառնաշփոթ էր»:

Էսօր էլ մեր Սփյուռքի գրողները միակերպ ուղղագրություն չունեն, ու եթե հանկարծ անցնենք հնամուտների ուզած «դասական» ուղղագրությանը, նորից մի բարեխոսյան խառնաշփոթ կստեղծենք:

Ու Հայր Միաբանը, 1912-ին, առաջարկում է Աբեղյանին (Աբեղյանին, քանի որ Աբեղյանն էր էդ բնագավառի ամենալուրջ մասնագետը), որ սա հատուկ զեկուցում պատրաստի ուղղագրության հարցերից: Հայր Միաբանն առաջարկում է, որ Աբեղյանը, հրապարակային քննության համար, հայերենի ուղղագրությունը փոխելու ու բարելավելու սկզբունքներ մշակի:

Էս ամենն արվում էր, որովհետև մի տասնամյակից ավել տևած փորձը (այսինքն, հայոց կաթողիկոսի կոնդակի պարտադրանքի կատարյալ անհաջողությունը) ցույց էր տվել, որ անհնար է, որ «նոր» հայերը ճիշտ ու միակերպ գրեն «հին» հայերի «մաշտոցյան» ուղղագրությամբ:

Ուրեմն, հայերը մի անգամ արդեն փորձել են՝ գրեն հին, դասական, մաշտոցյան ուղղագրությամբ, ու էլ մի տասնամյակից ավել տևած փորձը լրիվ է տապալվել: Ի՞նչ է, մենք պատմությունից երբեք չպիտի՞ դաս քաղենք:

Ու հիմա ո՞ւմ լեզուն կգորի, որ ասի, թե 1912 թ. Հայոց կաթողիկոսը, մեծ հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանն ու Մանուկ Աբեղյանը բուշկիկ էին, կամ էլ՝ բուշկիկների հանձնարարությունն էին կատարում:

Ուղղագրության փոփոխությունը հասունացել էր ու դարձել օրվա հրամայական պահանջ: Էդ հրամանի իրագործությունը մեկնումեկին պիտի հանձնարարեին:

Ու՞մ հանձնարարեին, եթե Աբեղյանն էր էդ հարցի ամենալուրջ ու ամենախոր գիտակը:

(Բա Աբեղյանը կձեռնարկե՞ր էլ գործը, եթե իմանար, որ դա կդառնա էն գլխավոր «մահանաներից» մեկը, ինչի համար իրեն հետագայում կզրկեն լեզվաբանությամբ ու գրականագիտությամբ զբաղվելուց):

Մի քանի քան ասեմ Գալուստ Տեր-Մկրտչյանի մասին (Տեր-Մկրտչյան Գալուստ, *Հայագիտական ուսումնասիրություններ*. Տես նաև *Հայկական հանրագիտարանը*):

#### ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԸ

Գալուստ Մկրտչի Տեր-Մկրտչյանը (Տեր-Սարգսյանը) (1860-1917 կամ 1918) ծնվել է Ախալցխայի շրջանի Ծուղորթ գյուղում, տաղասաց, գրիչ ու մանկավարժ Հովհաննես Կարնեցու ծոռն է:

1874-1878 թվերին սուրբել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (Ս. Մալխասյան(9)ի հետ նույն դասարանում), 78-81-ին դասավանդել է Շամախու ու Ախալցխայի դպրոցներում, հրապարակել է նարողնիկական գաղափարներով: 1881-ին ավարտական քննություններ է հանձնել Ներսիսյան դպրոցում, 1884-ին ավարտել է Փարիզի Քաղաքական գիտությունների ազատ դպրոցը, եղել է Մյունխենի համալսարանի ունկնդիր:

Ուսանողական տարիներից «Մեղու Հայաստանի» լրագրում գրական ու հրապարակախոսական նյութեր է տպել (անգամ դարվիճիզմից, ինչն էն օրերին նոր էր ստեղծվել): 1885-ին դարձել է Հայաստան ու ուսուցչություն է արել, հետո հրաժարվել է աշխարհիկ կյանքից, 87-ին դարձել է Էջմիածնի միաբանության անդամ, ինչից հետո հայտնի էր Հայր Միաբան անունով:

1888-ին, գետում լողանալուց ու մրսելուց հետո, դարձել է երկու ոտքից անդամալույծ ու մինչև կյանքի վերջը զրկվել է քայլելու ունակությունից, ու մինչև կյանքի վերջն էլ նվիրվել է հայագիտությանը:

1892-1894-ին ու 1902-ին խմբագրել է «Արարատ» ամսագիրը: Ուրարտագիտության ու հայ հնագիտության ասպարեզներում իր վաստակի համար Հայր Միաբանը 1894 թվից Մոսկվայի *Կայսերական հնագիտական ընկերության* թղթակից, իսկ 1900-ից՝ իսկական անդամ էր (երկուսն էլ՝ առանց գիտական որևէ ուրիշ կոչում ունենալու):

Գ. Տեր Մկրտչյանն իր ողջ կյանքում գործ է ունեցել գրաբարի ու հին ուղղագրության հետ:

Գ. Տեր Մկրտչյանի գործերը բազմաբնույթ են. հայ հին մատենագրություն, պատմական աշխարհագրություն, վիճակագրություն, դրամագիտություն (նումիզմատիկա), ազգագրություն ու բանախոսություն, միջնադարյան հայ առակագրություն, Հայաստանի ճշգրիտ գիտությունների պատմություն ու տեսություն, վարքագրություն ու վկայաբանություն, հայ ազանդավորական շարժումների ազդեցությունը եվրոպական ռեֆորմացիայի վրա, հնագիտություն ու ռարարտագիտություն, բնագրագիտություն ու աղբյուրագիտություն, ևն:

Ս. Մալխասյանի աշխատակցությամբ կազմել է *Կազար Փարպեցի Պատմության հայոց ու թուրք ստ Վահան Մամիկոնեան* (1904) ու Ս. Կանայանի աշխատակցությամբ Ազաթանգեղոսի *Պատմություն հայոց* (1909) երկերի բնահամեմատական բնագրերը: Հայտնաբերել, ուսումնասիրել ու հրատարակել է (հայերին սնծանոթ) Ամանիա Նարեկացու *Գիր յտտոփանությունը* (1892), Ամանիա Շիրակացու տիեզերագիտական աշխատություններն ու խնդրագիրքը (*Ամանիա Շիրակացի*, 1896), *Պես-*

րոս Մյունխաց եպիսկոպոս (1902), Մտեհիանոս Իմաստասեր (1902), Գիրք հերձուածոց (1902), Դավիթ Հարրացի (1903) երկերը:

Ուսումնասիրել է հայ մատենագրության պատմությունը, *Խորհնացու պատմության ուսումնասիրություն* (1896) գործով ժխտել է, որ *Խորհնացու Պատմությունն* ունեցել է 4-րդ գիրք, պարզել է Խորհնացու ու Մար Աբաս Կատիկայի գրածների առնչությունները, պարզել է, որ *Խորհնացու Պատմությունը* գրվել է 678 թվից ոչ առաջ ու 780-ից ոչ ուշ (սա վիճելի է, ու քննության կարտո) ևն: Կարևոր գործերից են նաև. *Ղազար Փարպեցու ձեռագրերը* (1902), *Փավստոսի ձեռագրերը* (1904), *Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայ թարգմանության ժամանակը* (1908), *Հայ մատենագրության հնագույն թվականները* (1913), ինչով ճշտվել են մեր պատմության կարևորագույն թվականները, *Հայկականը* հողվածաշարը, *Ուրարտյան ք-կեռագրերի լեզուն* (1893), *Աջից ձախ հայ գրություն* (1913), *Աբրահամ Խոստովանողի վկայք Արևելիցը* (1921, հետմահու) ևն, ևն:

Թարգմանել է Ռեկլյուի բազմահատոր աշխարհագրության հայերին ու Հայաստանին վերաբերող հատվածներ. Լերմոնտովի, Հայնեի, Հաֆիզի, Պետեֆիի գործերից, փոխադրել է Պետերսոնի *Բնագիտական և կրոնական աշխարհայացք* աշխատությունը, գրել է բանաստեղծություններ ու վեպ (անտիպ):

1912-13 թվերին հայերը նշում էին հայոց գրերի գյուտի 1500 ու տպագրության 400-ամյա հոբելյանները:

(Իմիջիայրոց, հենց Հայր Միաբանն է անառարկելի պարզել, ուր հայ գրերի գյուտը Մաշտոցն արել է 412 թվից ոչ շուտ ու 416-ից էլ ոչ ուշ, ու հենց սրա համար է, որ գրերի գյուտի առաջին հոբելյանն արվում էր հենց էդ թվերին:

Բայց ճշմարտություն կոչվածը երկի մեզ համար չի, որովհետև գալիք 2012-ին նշելու են միայն հայ տպագրության 500-ամյակը, իսկ գրերի գյուտի մասին խոսք չկա: Խոսք չկա, որովհետև գրերի գյուտի չնայած սխալ, բայց ընդունված թիվը 405-ն է: Գրողի ծոցը ճշմարտությունը):

Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի նախագահն էր՝ Գալուստ Տեր-Մկրտչյանը, Էջմիածնում նստած մի գիտնական (էս բառի բուն իմաստով «նստած»՝ որովհետև, ինչպես ասվեց, Հայր Միաբանի երկու ոտքը անդամալույծ էր), ով վիթխարի հեղինակություն ուներ ողջ աշխարհում (մեր «գայն-հասարակությունն» էօր Հայր Միաբանի հոբելյանը ոչ մի անգամ չի նշում ու անունն էլ չի հիշում):

Իսկ մեր նույնիսկ «ճեղ-հասարակության» գիտնական անդամներից ումանք Գալուստ Տեր-Մկրտչյանին մի փոքրիկ հողված անգամ չեն նվիրել *Հայերենագիտական քառարանում*, (հեղինակը՝ Հ. Զ. Պետրոսյան):

Իմիջիայրոց, 2010-ի հուլիսի երեքին Հայր Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի ծննդյան 150-ամյակն էր (ըստ հայկական հանրագիտարանի): Չհիչեցին: Ափսոս):

Մեծանուն հնդեվրոպագետ ու հայագետ Անտուան Մեյեն 24-25 տարեկանում գալիս է Հայաստան ու աննպաստ կարծիք է կազմում այստեղի հայագետների մասին (թերևս համեմատելով սրանց միսիթարյանների հետ): Բայց երբ ծանոթանում է Գալուստ Տեր-Մկրտչյանի հետ, գրում է (47, էջ՝ 754-755). «Կրոնավոր է, բայց ազատամիտ մտածող. հիվանդ է, բայց եռանդուն... Փարիզում ուսումնասիրել է քաղաքական գիտություններ, բայց դարձել է լավ բանասեր... խելոք ու նրբամիտ է»: (Վաղարշապատ, 28-ը հունիսի, 1891): Երկու տարի հետո նորից Հայաստան գալով՝ ավելի մոտիկից է ճանաչում Հայր Միաբանին ու այս անգամ գրում է. «...գերազանց ու խստապահանջ բանասեր է՝ օժտված ճշգրիտ մտքով ու հազվադեպ խորաթափանցությամբ»: Մեյեն, 1905 թվին, գրում է, թե շնորհակալ է Գալուստ Տեր-Մկրտչյանից՝ «բազմաթիվ օգտակար տեղեկության ու քանկարժեք խորհրդի ու այլ կարգի օգնության համար»:

Իսկ Մեյեի աշակերտ, ֆրանսիացի հայագետ Ֆ. Մակլերը Հայր Միաբանի մասին ասում է.

«Մեծ արժանիքների տեր ու խորապես ինքնատիպ այս գիտնականը, ում որ խանգարված առողջությունը հնարավորություն չի տալիս գրելու, ինչը որ շատ ցանկալի է, մեզ երևաց իբրև ինքնուրույն դպրոցի պարագլուխ: Նա սիրով է հաղորդում իր (դեռ չիրատարակած - Մ.Հ.) հետազոտությունների արդյունքները և սրանց արձագանքները, երբեմն անանուն, գտնում ենք երիտասարդ հետազոտողների աշխատություններում, որոնք առանց նրա անունը հիշատակելու, գոնե այն ծառայությունն են մատուցում նրան, որ գիտական աշխարհում տարածում են նրա գաղափարները»:

Էս սքանչելի գիտնականի մահից հետո անհետացան նրա շատ գործերի՝ տպագրության պատրաստ ձեռագրերը, իսկ մնացածների մի մասը նոր-նոր է հրատարակվել: Միաբանի օգնությունն են ստացել, իսկ երբեմն էլ՝ նրա ցուցումներով են առաջնորդվել՝ Մ. Աբեղյանը, Ղ. Ալիշանը, Վ. Տաշյանը, Ա. Մեյեն, Ֆ. Մակլերը, Ֆ. Կոնիքերը, Ն. Ադոնցը, Լեոն, Գ. Խալաթյանը, Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Ս. Մալխասյանցը, Ն. Մառը, Ս. Կամայանն ու ուրիշ շատ-շատ հայ ու օտար գիտնական ու երիտասարդ բանասեր:

Անձամբ աշխատելու հնարավորություն չունենալով, Հայր Միաբանն անընդհատ ճարում էր ուրաքտերեն, հայերեն, հունարեն ու լատիներեն արձանագրությունների լուսանկարներն ու պատճենները ու օտար (մա-



նավանդ ռուս) արևելագետներին դրդում՝ տրամադրում էր հետազոտելու ու հրատարակելու դրանք (Գալուստ Տեր-Մկրտչյան, *Հայագիտական հետազոտություններ*, գիրք Ա, Պ. Հակոբյանի *ներածականը*, տես նաև *Հայկական հանրագիտարանը*):

Կյանքի վերջին տարիներին հայտնաբերել է միջնադարյան գրույցների մի շարք, պատրաստել է դրա բնագիրը, բայց չի հասցրել՝ ուսումնասիրությունը գրի առնի: «Ամհայտ հանգամանքներում կորել են նաև նրա պատրաստած Կորյունի «*Վարդ Մաշտոցի*» ու Շիրակացու տիեզերագիտական մեծ աշխատության բնագրերը»:

Էս բաները գրում են, որովհետև չի բացատվում, որ հնամուլները, հանկարծ իմանալով, որ նոր ուղղագրությանն անցնելու նախաձեռնողը Գալուստ Տեր-Մկրտչյանն է, իրեն էլ բուշկիկ հանեն ու հակա համարեն:

### ԻՆՉ ԵՂԱՎ ՀԵՏՈ

Ինքնին բողոծ գործերի ընթացքը վատանալու հակում ունի:  
*Մերֆիի օրենքի 5-րդ հետևանքը*

1913 թ. օգոստոսին, դարձյալ Հանձնաժողովի հանձնարարությամբ, Արեղյանը կազմում է 11 կետանոց մի հարցաթերթ, ուր մանրամասն նշված էր, թե ուղղագրական ինչ վտիտություն է հարկավոր: Հանձնաժողովը միաժամանակ խնդրում է Հայաստանի, Ռուսաստանի ու Եվրոպայի նշանավոր հայագետներին, որ սրանք էլ հաղթարդեն, թե ինչ փոփոխություն է պետք ու ինչու:

#### *Հարցաթերթը ստորագրել էր Հանձնաժողովը:*

Արեղյանը զեկուցումը կարդաց 1913 թ. հոկտեմբերի 14-ին: Նույն օրերին ու հետո, հարցաթերթի վերաբերյալ, մի քանի պատասխան է ստացվում, ուր բոլորն էլ ասում են, որ ուղղագրությունը չպիտի փոխվի:

Պատերազմն ու զենոցիդը ընդհատում են բանավեճը:

1921 թ. հունվարին Արեղյանին հրավիրում են ՀԱԽՀ լուսժողկոմի խորհրդակցության, ուր Արեղյանն ուղղագրական ռեֆորմի մասին զեկուցում է կարդում: Էս զեկուցումը տպվում է (300 հատ) ու հանձնվում հրապարակային քննության (նաև մասնագետներին):

Արեղյանն առաջարկել էր ռեֆորմի չորս տարբերակ՝ մեղմից մինչև խիստը: 1922 թ. մարտի 4-ի դեկրետով, առանց Մանուկ Արեղյանի վերջնական համաձայնության ու մասնագետների կարծիքների, խիստ տարբերակն անհապաղ գործի է դրվում:

Հետաքրքիր է, որ հայ գրագետներն ու նաև անգրագետները շատ արագ են յուրացնում Արեղյանի ուղղագրությունը:

Արեղյանի ուղղագրությունը, հնի համեմատ, անչափ արագ են յուրացնում նաև նոր գրել-կարդալ սովորող հայ մանուկները, որովհետև դա, հնի համեմատ, անչափ պարզ էր:

Ըստ էության, եթե չխոսենք բաղաձայների մասին, Արեղյանի ուղղագրությամբ ի՞նչ լսում էիր, դա էլ գրում էիր: Որ ամեն ինչ պարզ լինի, բերում են մի հատված՝ նախ հին ուղղագրությամբ, ապա Արեղյանի ուղղագրությամբ (տես նաև էս գրքի 1-ին մասի Կոմիտասի գործերից քաղածները):

### ՀԻՆԸ

*(հնամուլների ուղածը, ինչը 10-րդ դարից քիչ-քիչ փոխվել է)*

*Ցեռոյ տեսանք Ալիւր գիւղը: Ամենուրեք դիակներ, մորթոտած կին, երեխայ... Առիւծներ եւ ազոտներ էին իջած դիակների վրայ:*

*Քամին արտուններից անուշ-անուշ բոյր էր տարածում: Գոյնզգոյն յաւմիկների բոյլերը փայլում էին յառակ յակիմթի ու յասպիսի պէս, զանազան բոյսերի թաւունները առ բոպէին ասես պարուրվել էին անառային շնչով: Տրասնաղբոյսնս յեղեղուկ էր եւ անկարելի էր, որ Նուերը յունարից մինչեւ յուլիս նամակ չգրէր: Այնինչ նա յոյժ անյողդող էր եւ արքստ արէ յոյժ անտարբեր դէպի մեր յաւէժ բարեկամութիւնը: Երբ էր, որ սեննակում, Նուերի ու Չուարթի ներկայութեամբ, Նուարդը յարանջեց եւ քանի հարիւրերորդ անգամ այնպէս յարդարեց դէմքին սիւռուած ոսկեզոյն գէտերը, ասես Երաւպացի լիներ:*

### ՄԲԵՂՅԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*(ինչը գործեց 1922-ից մինչև 1940-ը. տես նաև էս գրքի առաջին մասի Կոմիտասի խոսքը, ինչը հենց Արեղյանի ուղղագրությամբ է)*

*Հեռո տեսանք Ալյուր գյուղը: Ամենուրեք դիյակներ, մորթոտված կին, յերեխա... Առյուծներ յեվ ազոտվներ էյին իջած դիյակների վրա:*

*Քամին արտուններից անուշ-անուշ բոյր էր տարածում: Գոյնզգոյն հասմիկների բոյլերը փայլում էյին հատակ հակիմթի ու հասպիսի պէս, զանազան բոյսերի թավունները առ բոպէյին ասես պարուրվել էյին անառային շնչով: Տրասնաղբոյսնս հեղեղուկ էր յեվ անկարելի յեր, վոր Նվերը հունվարից մինչեւ հոպիս նամակ չգրէր: Այնինչ նա հոյժ անեղդողդող էր յեվ որ քստ որե հոյժ անտարբեր՝ դեպի մեր հավերժ բարեկամութիւնը: Յե՛րբ էր, վոր սենյակում, Նվերի ու Չվարթի ներկայութեամբ,*



**Նվարդը հորանջեց յեվ հարյուրերորդ անգամ հարդարեց դեմքին սփռված վոսկեզույն գեսերը, ասես յեվրոպացի լիներ:**

**ՀԱՆՉՆԱԺՈՂՎԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**  
(ինչը գործում է 1940-ից մինչև հիմա)

**Հետո տեսանք Այտր գյուղը: Ամենուրեք դիակներ, մորթոտված կին, երեխա... Առյուծներ և ագռավներ էին իջած դիակների վրա:**

**Քամին արտոններից անուշ-անուշ բույր էր տարածում: Գույնզգույն հասմիկների բույրերը փայլում էին հստակ հակինթի ու հասպիսի պեռ, գանազան բույսերի թավոտները այդ բույրին ասես պարուրվել էին ամառային շնչով: Տրամադրությունս հեղհեղուկ էր և անկարելի էր, որ Նվերը հունվարից մինչև հուլիս նամակ չգրեր: Այնինչ նա հույժ անհողորդ էր յեվ օր ըստ օրն հույժ անտարբեր՝ դեպի մեր հավերժ բարեկամությունը: Ե՛րբ էր, որ սենյակում, Նվերի ու Չվարթի ներկայությամբ, Նվարդը հորանջեց և հարյուրերորդ անգամ հարդարեց դեմքին սփռված ոսկեզույն գեսերը, ասես եվրոպացի լիներ:**

Ակնհայտ է, որ էսօրվա (այսինքն, հանձնաժողովի) ուղղագրությունը Արեղյանից բարդ է:

**ԱԲԵՂՅԱՆՆ ՈՒՋՈՒՄԵՐ՝**  
**ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԴԱՐՉՆԻ ԼԱՏԻՆԱՏԱՈ՝**

**Մտոն ինչքան վիթխարի ու հրեշավոր լինի, էնքան ավելի շատ կհավատան դրան:**

*Աղուֆ Հիտլեր*

Հնամուտներից շատերն ասում են, որ Արեղյանը թաքուն մտադրություն ուներ, սր ուղղագրական ռեֆորմից հետո, հետագայում, մեր այբուբենը դարձնի լատինատառ:

Չխեսենք էն բանից, որ էս շարադրանքը ցայց է տալիս, որ նման հարց առհասարակ չի եղել: Եկեք հարց տանք, «ո՞րտեղից է հնամուտներին հայտնի: Արեղյանի թաքուն մտքերը: Ո՞վ գորություն ունի (բացի «Գեոտ Այրնուցի» պրն Որբեղյանից, տես հետո) ուրիշի թաքուն մտքերը կարդալու, էն էլ՝ սուրբու մեռնելուց կես դար (նույնիսկ ավել) հետո»:

Իրականությունը հետևյալն է. Թիֆլիսի "Заря Востока"-ի 1924 թ. նոյեմբերի 29-րդ համարում Պողոս Մակինցյանն առաջարկեց, որ մեսրոպյան տառերը դեն ձգեն ու տեղը դնեն լատիներեն տառերը:

Մանուկ Արեղյանն իր 1924 թ. գրած ու 1925 թ. հրատարակած «Ուղղագրական ռեֆորմը» գրքի վերջում կծու հեզմանքով դատապարտում ու ձեռ է առնում Պ. Մակինցյանին, որ սա իր էլ թաքուն նպատակը ժամանակին (1922 թվին) չի հայտնել ու հիմա «զվարճալի վիճակի մեջ է ընկել»:

Վերոհիշյալ գրքում Արեղյանը հստակ արտահայտել է իր խիստ բացասական վերաբերմունքը լատիներեն այբուբենին անցնելու մասին: Ուրիշ փաստ սրա մասին չկա: Եթե էս տողերը կարդացողն Արեղյանին կամ ինձ չի հավատում, թող կարդա Առ. Բաբախանյանի (Լեռնի) *Պատմական տեսություն հայերեն ուղղագրության. տպագրության սկզբից մինչև մեր օրերը* (1927) կամ Ս. Վ. Գյուլբուդաղյանի *Հայերենի ուղղագրության պատմություն* (1973) աշխատությունները:

**ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ԴՐՄՆԻՑ ՀԵՏՈ**

**-Սուկրատես, դու այլասերում ես Արեճի երիտասարդությանը:**  
*Մեղադրական ճառից*

Չնայած բերածս օրինակներից երևում է, որ էսօրվա ուղղագրությունը Արեղյանինը չի, համենայն դեպս, ապացույցները բեյում են, որովհետև դրանք շատ ուսանելի են ու շատ են նման էսօրվա հնամուտների գործունեությանը:

Արեղյանի ուղղագրությունը հաստատ ու շատ արագ հաջողություն ունեցավ: Մա, լրիվ ակնհայտ, ավելի պարզ էր ու առավել հնից (ու էսօրվահից էլ):

Բայց Ս. Մալխասյանցը, բանի տեղ չդնելով սա, իր (սկզբում՝ փոքրաթիվ) կողմնակիցներով հարձակվեց Արեղյանի ուղղագրության վրա: «Բանավեճը» թե՛ ժողովներով էլ, թե՛ մասնույով, ընդ որում, անազնիվ ու անգրագետ ու ըստ էության՝ միակողմանի, որովհետև Արեղյանը չէր մասնակցում դրան: Չէր մասնակցում, որովհետև համարում էր, որ իր վերոհիշյալ գրքերում տվել է բոլոր հարցերի պատասխանները:

Երբ կարդում ես էդ գրքերը, համոզվում ես, որ իդաք, Արեղյանն սպառնիչ պատասխան է տվել էն օրերի բոլոր առարկություններին էլ, էսօրվա բոլոր առարկություններին էլ: Չայն չէին հանում նաև էն օրերի նշանավոր

հայ լեզվաբաններն ու հայագետները, համեմայն դեպս, հրապարակով: Ու Աբեղյանը որևէ հեղինակավոր համակիր կամ կողմնակից չուներ: (Գալուստ Տեր-Մկրտչյանը մահացել է 1917 կամ 1918 թվին, ստույգ թիվն էլ - հայտնի չի):

Պատճառը երևի էն բանն էր, որ Աբեղյանը շատ համառ, հաստատուն բնավորության տեր ու իրասածի մարդ էր (այսինքն՝ ուղղամիտ ու խոսքը ճակատին ասող մարդ էր) ու հետոն էլ՝ վիթխարի գիտելիքով ու գիտական է՛ն տեսակ վարպետությամբ, որ հազվագյուտ է պատահում:

(Մեր նշանավոր ֆիզիկոսներից՝ հանգուցյալ ակադեմիկոս Գուրգեն Մերոբի Սահակյանն ինձ հայտնեց, որ Վիկտոր Համբարձումյանն ասում էր, թե հայագետներից Աբեղյանն իրոք որ՝ «երկաթյա տրամաբանություն ուներ»: Էս տեղեկությունը հրապարակում եմ պրն. Գ. Սահակյանի բարեհաճ թույլտվությամբ):

Ու Աբեղյանն էնքան ուժեղ էր, որ մենակ էր գործում, «թայֆարագ» չէր:

Հայտնի բան է՝ ուղղամիտ, խոսքը ճակատին ասող ու խելոք մարդուն ամհասարակ՝ ո՛չ սիրում են, ո՛չ նեղում:

Ինչ որ է, 1926 թ. հոկտեմբերին ՀԱԽՀ լուսժողկոմը հատուկ Հանձնաժողով է կազմում, ում հանձնարարվում է ուղղագրական բարեփոխությունների քննությունը: Հանձնաժողովի կազմում էին՝ Հ. Աճառյանը, Թ. Ավդալբեկյանը, Ս. Հակոբյանը, Գ. Ղափանցյանը, Լեոն, Գ. Լևոնյանը, Աս. Խաչատրյանը, Ա. Կանայանը, Հ. Մամանդյանը, Շիրվանզադեն:

Աբեղյանն էլ կար, բայց գրավոր հրաժարական է տալիս, որովհետև համաձայն չէր, որ Հանձնաժողովի անդամ լինեն ոչ լեզվաբանները:

Հանձնաժողովը գործում է 1926 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 1927 թ. մայիսի 17-ը ու 35 նիստ է անում: Ձեկուցում է նաև Ս. Մալխասյանցը: Կարդում են նաև Անտուան Մեյեի, Նիկողայոս Մառի ու այլոց կարծիքները: (*Տեղեկագիր ՀԱԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի ուղղագրության ու տառերի ձևի բարեփոխման հանձնաժողովի*, Երև., 1937 թ.):

#### ԷՍՕՐՎԱ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԲԵՂՅԱՆԻՆԸ ՉԻ՝

Իմ Տյուբեր, լեհական բանակի շոր հագած կնարձակվե՞նք Չեխոսլովակիայի վրա ու կասենք, թե չեխերն են հարձակվել մեր վրա:

Հիմերը՝ Հիալերին

Ուրեմն՝ Աբեղյանի ուղղագրության հաջողությունը (1922-1940) հաստատ էր: Բայց Աբեղյանի անձնական հաջողությունը՝ երեսը շուտ էր տվել

հակառակ կողմը: 1931 թվին մի սարսափելի հարձակում է սկսվում Աբեղյանի վրա:

Հ. Աճառյանի ասպիրանտ՝ Արարատ Ղարիբջանն ու Գ. Ղափանցյանի ասպիրանտ՝ Գուրգեն Մևակն ու մի քանի ուրիշ երիտասարդ ասպիրանտ, գիտնական չղարձած, կռիվ սկսեցին Աբեղյանի քերականական ու գրականագիտական աշխատանքների դեմ: Թե ո՞վ էր նրանց հուշողն ու թաքուն ղեկավարը, էդպես էլ գաղտնի մնաց ու երևի՝ գաղտնի էլ մնա:

Քանի որ հայաստանցիները Աբեղյանի ուղղագրությունը շատ արագ յուրացրին, որովհետև սա, հնի համեմատ, չափազանց հեշտ ու հարմար էր, անհնար էր թվում, որ նորից հետ դառնան հնին: Մրա համար էլ Հանձնաժողովը, չնայած իր արած 35 նիստին, չգիտեր, թե ինչ անի:

Չգիտեր, քանի որ, օրինակ, Աբեղյանի *Աշխարհարարի քերականությունը* գրքույկի մասին, որ գրել էր դպրոցի համար, մեծամուն հնդեվրոպագետ ու հայագետ՝ Անտուան Մեյեն (Մեյեի մասին՝ տես հետո) ասում է.

«Այս գիրքը, չնայած իր արտաքին մի փոքր դպրոցական տեսքին, մի իսկական գիտական գործ է, որ պարտավոր են ուսումնասիրելու բոլոր այն մարդիկ, ովքեր շահագրգիռ են այսօրվա հայերենով» (Ա. Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, էջ 614-615):

Բայց ահա, ասածս «ասպիրանտները», ցիտատներ բերելով Լենինից ու Ստալինից ու գործի դնելով 30-ական թվականներին հատուկ բոլոր հնարքները, (այսինքն՝ «գրպարտիք, մեղադրիք ու մի թող, որ պատասխանի»), հայտարարեցին, թե Աբեղյանի քերականությունը «մախիստական է, ֆորմալիստական, մետաֆիզիկական, իդեալիստական ու բուրժուական» է, որ Աբեղյանը իդեալիստ Բերկլիի (իրենց գրածով՝ «Բերկլինի») հետևորդն է, ու որ իրենք «մերժում են Աբեղյանի քերականությունն ու գրականագիտությունը ու պիտի ստեղծեն նոր, դասակարգային ու պրոլետարական քերականություն ու գրականագիտություն»:

(Ստեղծեցին ու կրակն ընկանք, որովհետև հիմա երկու քերականություն ունենք, մեկը՝ Աբեղյանինը, մյուսը՝ դարիբջան-սևակյանն ու սրանց վրա ձևածները: Մրանք, էս երկուսը, լրիվ են հակասում իրար, իրար լրիվ ժխտում են: Բայց մեր էսօրվա «ղեզվաբաններն» ասում են, թե էս երկուսն էլ միշտ են: Տես էս գրքի 4-րդ մասն ու հավելվածը):

«Ասպիրանտները» մամուլը հեղեղեցին Աբեղյանի գիտական գործերն անվանարկող հողվածներով, Աբեղյանի քերականությունը պիտակելով «հակադիալեկտիկական, սխալատիկ, հակամարքսիստական, ֆորմալիստական, մեխանիստական, իդեալիստական ևն» էն օրերի համար՝ մահացու հայեռայնքներով: Ու Լեն օրերի համարյա բոլոր բուհերում ժողովներ են անում, ու էս ժողովներին էս նույն «ասպիրանտները», ուրիշ «ջահել-

ջեղուների» հետ «թայֆա» կազմած, հարձակվում են Աբեղյանի ու իր գործերի վրա, պահանջում, որ Աբեղյանը «մեղա գա, ուղղվի»:

«Ասպիրանտների» պրոֆեսորները լուռ են:

Էլ գարնանը Աբեղյանը հեռանում է համալսարանից ու ընդմիջտ թողնում է մանկավարժությունը (մոտ 50 տարի հայ դպրոցներում դասավանդելուց հետո), որովհետև զգում է, որ դրանք իրեն օր ու արև չեն տա:

Այնուամենայնիվ, ստեղծված գիտական ու դրա հետ կապված՝ հասարակական շփոթը ցրելու նպատակով, Աբեղյանը 1936 թ. գրում է՝ *Մի քանի քերականական խնդիրների մասին* 144 էջանոց իր փայլուն աշխատությունը: ՀՄԽՀ լուսժողովուհար դա դնում է հրատարակային քննության:

ՀՄԽՀ բոլոր նշանավոր լեզվաբաններով, Աբեղյանի քննադատներով ու չսիրողներով ու ուրիշ մտավորականներով լեփ-լեցուն դահլիճում, երեք օր շարունակ, Աբեղյանը կարդում է իր գիրքը, իբրև զեկուցում:

Առաջին ու վերջին անգամ էր, որ Աբեղյանին հնարավորություն էր տրվել պատասխանելու առնվազն հինգ տարի տևած վայրիվերո հարձակումներին: (Էլ հինգ տարում պիտի ավելացնենք նաև էս վերջին 74 տարվա հարձակումներն ու գրպարտանքը (Աբեղյանը չկա, ուրեմն պատասխան էլ չկա): Չեկուցումն ավարտվում է ծափերով:

Աբեղյանի դուրյթները մասնագիտական ու տեսական առումով ենթան խորն ու լուրջ էին հիմնավորված, որ ներկաներից ու իրեն չսիրողներից ոչ մեկը, չնայած նախագահողի, նախարար Ա. Եղիազարյանի, համառ հորդորներին, չի հանդգնում՝ դեմ լինի Աբեղյանին:

Էս երեք օրանոց անընդմեջ «զեկույցի» ընթացքում միայն ու միայն Հրաչյա Աճառյանն է համարձակություն ունենում Աբեղյանին ընդհատելու՝ «ընդհանուր քերականություններում այդպես չէ» ռեպլիկով: Աբեղյանը գլուխը բարձրացնում է իր գիրք-զեկույցից ու կտրուկ ասում. «Ընդհանուր քերականություն չկա», ու վերջ. էլ ոչ մի առարկություն:

Ծպառուն չի հանում նաև ինքը՝ Արաբատ Ղարիբյանը, չնայած Աբեղյանը ելույթի մեջ ասում է, թե Ղարիբյանի «քերականության գիրքը գրել է քերականորեն տգետ մի մարդ» (Մ. Աբեղյան, *Երկեր, հատոր Ը*, էջ 493-637):

Թվում է, թե էլ ժողովից հետո վեճը պիտի վերջանար, ու ճշմարտությունն ու գիտությունը պիտի հաղթեին: Վեճն իրոք էլ վերջացավ, բայց... «ասպիրանտների» բացարձակ հաղթանակով: Մա երևի տալիսինակ է, բայց փաստ է: Մտայինյան մեքենան արդեն գործի էր դրվել, ու դրա վարողները Ա. Ղարիբյանն ու Գ. Մեվակն էին, ու սրանց հեղինակությունն անընդհատ աճում էր: (Էլ աճը գիտության հետ ոչ մի կապ չունեի):

Սկսած 1931 թվից՝ համալսարանի ռեկտորն ու ուրիշ հեղինակավոր մարդիկ (դրանց հետ նաև՝ ՀՄԽՀ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար՝ Աղասի Խանջյանը) Աբեղյանին խնդրում են, որ հետ դառնա համալսարան կամ էլ գոնե մի աշակերտ (հետևորդ, մասնագետ) պատրաստի: Աբեղյանը սկզբում հրաժարվում է, հետո, տեղի տալով հորդորներին, համաձայնում է, պայման դնելով, որ նախ իր առարկությունները (հետագայում՝ հենց վերոհիշյալ 144 էջանոց զեկուցումը) հրատարակվի:

Չեկուցումն էլ տարիներին չհրատարակվեց, ու Աբեղյանը չդարձավ համալսարան ու էլ չգրադվեց քերականական ու գրականագիտական (սոց-ռեալիզմին հակասող) հարցերով: Ու իրեն հետևորդ էլ չպատրաստեց, չնայած համաձայն էր ու ուզում էր, բայց Աբեղյանին ասպիրանտ չտվին: Ու Աբեղյանը ոչ մի քերական-հետևորդ չունեցավ:

Ո՞վ իմանա, ինչքան դառնացած է հեռացել կյանքից է՛ն մարդը, ով իր ողջ կյանքն անմնացորդ նվիրել էր հայոց լեզվին ու հայագիտությանը:

Աբեղյանի՝ 1936 թ. կարդացած զեկուցումը լույս տեսավ միայն 1985 թվին, նրա մահից 41 տարի հետո: Հրատարակվեց, բայց առ այսօր ասանց որևէ արձագանքի, ասես նրա առաջ քաշած պրոբլեմները բուրդովին չկան: Էս պատմությունը, մինչև էսօր էլ, հայ լեզվաբանության պատմության, ու առհասարակ, հայ գիտության պատմության ամենատրեքական ու ամենաամոթալի էջն է:

Ա. Ղարիբյանի «դասակարգային, պրոլետարական քերականության» գիրքը հրատարակվել էր 1934 թվին, «Հայոց լեզվի քերականություն» վերնագրով: Դա էն ժամանակվա ռուս «քերական» Շասպիրոյի գրքի հայերեն ընդօրինակությունն էր: Ղարիբյանի «քերականությունն» ընդունվեց՝ որպես արևելահայերեն գրական լեզվի օրինակելի քերականություն:

Դրա վրա ձևեցին հետագա բոլոր՝ նաև բուհական դասագրքերը:

Էլ գիրքն ու դրա բոլոր «ժառանգները», իրոք, լի՛ են սխալներով, հակասություններով, անեթեթություններով ու ռուսիզմներով:

Բայց դառնանք մեյ պատմությանը: Պարզ է, որ էլ իրադրության մեջ, «ասպիրանտները», արդեն միացած իրենց մեծերին, պիտի ուղղագրության հարցերում էլ հաղթեին, ճիշտ լինեի Աբեղյանը, թե՛ ոչ:

Ու ահա, ՀՄԽՀ ժողովմխորհրդի 1940 թ. դեկտեմբերի 10-ի որոշումով, գործի են դրվում վերոհիշյալ հանձնաժողովի առաջարկները, այսինքն՝ ընդունվում է էսօրվա գործող ուղղագրությունը: Ավելի ճիշտ, ընդունվում է Աբեղյանի նախկին՝ ավելի մեղմ տարբերակներից մեկը, որովհետև հանձնաժողովի անդամները, չնայած իրենց գիտական վաստակին ու տիտղոսներին, առանց Աբեղյանին հարցնելու ոչ մի վերջնական վճիռ չէին հանում (ենթան մեծ էր Աբեղյանի հեղինակությունը):

Ուրեմն՝ սուտ է, որ արևելահայերենի էսորվա ուղղագրությունը Մ. Աբեղյանինն է (կամ էլ՝ Գուրգեն Մևակինն է, ինչպես պնդում են «ամենաթարմ» հնամուկները):

(Գ. Մևակն էն օրերին նոր-նոր էր սկսում իր ֆանտաստիկ հաջող կարյերան, ու Աճառյանի, Ղափանցյանի, Շիրվանզադեի, Լեոյի ու Հանձնաժողովի մյուս անդամների չափ հեղինակություն՝ բոլորովին չուներ):

Էսորվա ուղղագրությունը՝ հիշյալ հանձնաժողովինն է:

Եթե հանձնաժողովն ուզենար, լրիվ հետ կդառնար հին ուղղագրությա-  
նը: Հանձնաժողովը դա չուզեց, ու ինչքան էլ դրա անդամները չհամաձայ-  
նեին Աբեղյանին, հենց դրանով իսկ, ըստ էության, ընդունեց, որ Աբեղ-  
յանն է ուղղագրության ամենահեղինակավոր մասնագետը, ու ընդունեց  
նաև, որ Աբեղյանի ռեֆորմը հիմնականում ճիշտ էր ու տեղին: Ու էսորվա  
ուղղագրությունը հայեռողները պիտի Հանձնաժողովին հայեռյեն, ոչ թե  
Աբեղյանին:

#### ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԸ

Առայժմ յխոսեն հնամուկներից ու մի երկու քան ասեն Մանուկ Աբեղյա-  
նից, որովհետև ես իրոք որ պատվելի գիտնականի ու մարդու մասին մեր  
ժողովուրդը քիչ գիտի, չնայած հնամուկներն ու նրա թշնամիներն ու սրանց  
հետևորդներն արդեն մոտ 100 տարի է, ինչ հայեռյուն են Աբեղյանին:

Մանուկ Խաչատուրի Աբեղյանը (1865-1944) ծնվել է Նախիջևանի Աս-  
տապատ գյուղում, սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1876-  
1885), ավարտելուց հետո մոտ երեք տարի դասավանդել է ճեմարանում,  
ուսումը շարունակել է Ենայի, Լույսյցիզի, Բեռլինի ու Փարիզի համալսա-  
րաններում (1893-1898), հետո էլ դասավանդել է՝ Շուշու թեմական դպրո-  
ցում (1887-1889), Թիֆլիսի Հովնանյան դպրոցում (1889-1893), Ներսիս-  
յան դպրոցում ու Հայկական պետական գիմնազիայում (1914-1919):

Հետո Աբեղյանը եղել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հիմ-  
նադիր դասախոսներից, որտեղ եղել է պատմաօջրական ֆակուլտետի դե-  
կան (1923-1925), պլեսավորել է Հայաստանի գիտահետազոտական առա-  
ջին հիմնարկը՝ Գիտության և արվեստի ինստիտուտը, (հետագայում սրա  
հիման վրա կազմակերպվեց Հայաստանի պետական ակադեմիան), հե-  
տո աշխատել է ԵՊՀ-ում ու զանազան գիտական հիմնարկներում:

Պրոֆեսոր է 1926-ից, գիտության վաստակավոր գործիչ՝ 1935-ից, Հա-  
չատուրանի ակադեմիայի հիմնադիր անդամ՝ 1943-ից, որից հետո ապրեց  
մոտ մեկ տարի: 1929-ից բժիշկներն Աբեղյանին կարդալն ու գրելն արգե-

լել են: Այնուամենայնիվ, Աբեղյանը, կարողության չափով, աշխատել է  
մինչև կյանքի վերջը:

Աբեղյանը 1926-ից մի քանի անգամ խնդրել է, որ իրեն երկու ասպի-  
րանտ տան, որ սրանցից հայոց լեզվի տեսության մասնագետ պատրաս-  
տի, բայց անընդհատ խոստացել են ու եղպես էլ չեն տվել:

Ու եղպես էլ հայերն Աբեղյանից հետո հայոց լեզվի տեսության իսկա-  
կան մասնագետ չունեցան, չնայած, արդեն մի քանի Հայոց լեզվի տեսու-  
թյուն է լույս տեսել, բայց ես մենագրությունները, բոլորն էլ, դարիքյանա-  
կան քերականությունների «սկզբունքներով» են գրված:

Աբեղյանը հայտնաբերել է Մասնա ծոերի երկրորդ տարբերակը, Եվրո-  
պա գնալուց առաջ, 1886-ին, գրի է առել ու 1889-ին հրատարակել է *Գա-  
վիթ և Մեթ* ժողովրդական վեպի *Մոկաց պատումը*: Գիտական մեծ վար-  
պետությամբ ու խորությամբ հետազոտել է Մասնա ծոերը (սա ամփոփե-  
լով մի գեղեցիկ գրքում), նորովի է ուսումնասիրել հայերի հին ու նոր հա-  
վատալիքները ու սրա գերմաներեն տարբերակի համար (*Հայ ժողովրդա-  
կան հավատալիքը* վերնագրով) Ենայի համալսարանում ստացել է փիլի-  
սոփայության դոկտորի աստիճան:

Գիտական քննությամբ ապացուցել է հայ ժողովրդական այլ վեպերի  
(*Վիպասանը*, *Պարսից պատերազմը*, *Տարոնի պատերազմը*) գոյությունը:  
Հայ էպիկական ստեղծագործությունը բաժանել է հինգ շրջանի:

1. Նախնական հմայքներն ու առասպելները:
2. Առասպելական վեպի կամ վիպասանքի անցումային շրջանը:
3. Պարսից պատերազմը:
4. Տարոնի պատերազմը:
5. Մասնա ծոերը:

Ուսումնասիրել է հայ հին ու նոր ժողովրդական բանաստեղծությունը,  
մանավանդ միջնադարյան հայրեններն ու (մեծ մասամբ) Կոմիտասի հա-  
վաքած երգ-տաղիկները (եր նաև Կոմիտասի խնդրանքով ու գործակցու-  
թյամբ խմբագրել է):

Յույց է տվել, որ հայրենները Քուչակինը չեն, այլ հին բու անհայտ հեղի-  
նակներինն են. ու որ դրանցից շատերն ունեն էն տեսակ շերտեր, որոնք  
գալիս են հնագույն հեթանոսական օրերից, ինչը լրիվ համաձայն է Կոմի-  
տասի ուսումնասիրություններին: Էս արդյունքները տպվեցին *Հայոց հին  
գրականության պատմություն* երկհատոր աշխատության մեջ, ըստ էութ-  
յան, հետմահու (1944, 1946):

Աբեղյանը նաև հայկական վերածնունդի տեսության հիմնադիրն է: Ու-  
սումնասիրել է արևելահայերենի շեշտադրության համակարգը:

Աբեղյանի *Հայոց լեզվի տաղաչափությունը* (1933) հայ իրականության մեջ անգերազանց է մինչև էսօր:

Աբեղյանը, Հայր Միաբան Գալուստ Տեր-Սկրտչյանի *հետ, հայ քննական-քաղաքական տեքստաբանության հիմնադիրն է*:

Հրատարակել է քննական-քաղաքական բնագրեր (*Խորեմացու Հայոց պատմությունը*, Ս. Հարությունյանի աշխատակցությամբ):

Աբեղյանն է կազմել նաև Կորյունի *Վարդ Մաշտոցի* գործի քննական տեքստն (Հայր Միաբանից անկախ) ու սա թարգմանել է աշխարհաբար):

Աբեղյանն է Կ. Մելիք-Օհանջանյանի հետ կազմել ու հրատարակության պատաստել *Մասնա ծների* տարբերակները (1936, 1944-1951):

Աբեղյանը են օրերի համաշխարհային նորագույն քերականության (ինչի ամենակարկառուն ներկայացուցիչներն են Աճառյանի ուսուցիչներ՝ Հայրնիխ Հյուբշմանն ու Անտուան Մեյեն) հետևորդն էր Հայաստանում, ու աշխարհաբար հայերենի առաջին գիտական քերականության հիմնադիրն է:

Առաջինն Աբեղյանն էր, ով հրաժարվեց հայերենի քերականությունը լատիներենի քերականության կանոններով ձևելուց, ինչը, մեր հունարանների ու լատինարանների պարտությունից հետո, դարձել էր մի ուրիշ վնասակար «ալիանդույթ»:

Աբեղյանի քերականական հիմնական գործերն են՝ *Աշխարհաբարի քերականություն* (1906), *Աշխարհաբարի շարահյուսություն* (1912), *Հայոց լեզվի տեաբյուն* (1931), *Մի քանի քերականական խնդիրների մասին* (1936), *Հայոց լեզվի ուղղագրությունը* (1892), *Գրաբարի համառոտ քերականություն* (1907), *Աշխարհաբարի հոլովները*, (1908), *Հայցական հոլովը մեր աշխարհաբարում* (1909) (հենց սրա մեջ էր Աբեղյանը ջախջախել Ս. Մալխասյանցի «տեսությունը»):

Աբեղյանի կարևորագույն գործերից է *Ժողովրդական լեզվի շեշտադրությունը*, ինչը, իմ կարծիքով, երպես էլ եզակի ու առանց շարունակության մնաց նայագիտության մեջ:

Աբեղյանը 1941 թվին հրատարակում է «*Վիշապներ*» կոչված կոթողներն իբրև *Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ* գեղեցիկ մեմագրությունը, որտեղ ցույց է տալիս, որ էս կոթողների ռուս գիտնականներ՝ Մառի, Սմիռնովի ու Բ. Պիտրովսկու մեկնաբանությունը միանգամայն սխալ է:

Աբեղյանի էս քննությունն ու քննադատությունն ենքան հզոր էր, ոչ սրանցից ոչ մեկը ծպտուն անգամ չի հանում:

(Աբեղյանի էս գործն իրոք շատ խորն է ու եզակի, ու նգրականություններն էլ՝ մինչև էսօր անստարկելի են, չնայած, ինչքան էս են հասկանում, Աբեղյանը ծանոթ չի եղել համեմատական ազգագրության անգլիական

դպրոցի հիմնարար աշխատություններին, մանավանդ Ջեյմս Ջորջ Ֆրեզերի գործերին, ինչը թե՛ զարմանալի է, թե՛ հասկանալի, եթե հաշվի առնվի էն օրերի Հայաստանի մեկուսությունը:

(Զարմանալի ու անհասկանալի է ուրիշ մի բան: Ջեյմս Ջորջ Ֆրեզերի գործերն էսօր էլ են Հայաստանում համարյա անծանոթ):

Ծպտուն չհանեցին, բայց էս անգամ էլ Բ. Պիտրովսկին դարձավ Աբեղյանին ու հայերին հակակրող: (Սովետի օրերին Բ. Պիտրովսկին հեռացույցով մի ժամ խոսեց Ուրարտուի մասին, ու վերջում էլ ավելացրեց, թե «Ուրարտուն Կովկասում է»: Կարծում են, որ սա ասածս հակակրանքի բավարար վկայություն է):

Աբեղյանի բառարանագիտական գործերն են. *Ռուս-հայերեն ռազմական բառարանը* (1925), *Ռուս-հայերեն իրավաբանական բառարանը* (այլոց հետ, 1919) *Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը* (այլոց հետ, հրատարակվել է հետմահու, 1951-ին):

ԻՆՉ ՈՐ ՑԱՆԵՍ, ԷՆ ԷԼ ԿՆՆՉԵՍ

-Տեղեկանք ունեմ, որ փիղ եմ, ուրեմն փիղ եմ, -ասաց մուկը:  
Անեկդոտ

«Ասպիրանտները», Աբեղյանին հայիոյելով ու Աբեղյանի աշխատություններն աղավաղելով ու արտագրելով, դարձան դոկտոր, պրոֆեսոր, հետո էլ՝ ակադեմիկոս (Ս. Մալխասյանցն էլ հետները): Ու հազար-հազարով աշակերտ աճեցրին: Աշակերտները «կրթված» էին (ու «կրթվում են») նույն էդ տգիտական «քերականությամբ», մի «քերականություն»: ինչն ավելի շուտ՝ կրոն է, որովհետև դրա դրույթները հասկանալու ճար չկա, պիտի դրանք անգիր անես ու դրանց հավատաս: Բայց հավատաս միայն դրուսնց:

Հետո էս աշակերտները գրավեցին լեզվին վերաբերող համալայա բոլոր պաշտոնները: Դրա համար իսկական գիտական կրթություն՝ պետք չէր: Երբ էս ավանդույթը հաստատվեց, պարզվեց, որ լեզվին վերաբերող պաշտոնը զբաղեցնելու համար՝ նույնիսկ էդ «կեղծ» կրթությունն էլ պարտադիր չի:

Հայաստանում, օրինակ, կա լեզվի տեսչություն (իմացի՛ր, լեզվի ոստիկանություն): Դրա պետերից ո՛չ մեկը՝ ո՛չ կրթությամբ, ոչ էլ ինքնակրթությամբ, լեզվաբան չէր: Մրանցից մեկն սկզբում զբաղվում էր քաղաքականությամբ (1988-ից հետո), հետո, կարճ ժամկետով, դարձավ Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի տնօրեն: Հետո էլ դարձավ լեզվի

գլխավոր տեսուչ: Մրան փոխարինեց մի «լեզվաբան», հետո՝ մի «մանկավարժ», հիմա էլ՝ մի «լրագրության դոկտոր», ով առաջ դեպուտատ էր, հետո՝ կրթության ու գիտության (բա՞) նախարար:

Լեզվաբանության մասին խոսողն առհասարակ՝ ու ուղղագրության մասին խոսողը՝ մասնավոր առումով՝ հնարավոր է, որ լեզվաբանական բազային կրթություն չունենա: Բայց եթե դրան վերաբերող պաշտոն է զբաղեցնում կամ խոսում է դրա մասին, պիտի գոնե ինքնուրույն ու լավ ու հիմնավոր ծանոթացած լինի՝ համեմատական լեզվաբանությանը, լեզուների պատմությանը, հայոց լեզվի պատմությանը, գրական լեզուների (նաև հայերենի) պատմությանը, գրի ծագելուն, ուղղագրության ծագելուն ու դրա ռեֆորմների պատմությանը, կետադրության ծագելուն ու դրա պատմությանը ևն:

Ու իհարկե, պիտի գիտական քերականություն իմանա, պիտի քերականությունների պատմություն իմանա: Այսինքն՝ պիտի գիտական մեթոդին տիրապետի:

Լեզվի տեսուչների ու, առհասարակ, հնամուլների ելույթներն ամեն անգամ ապացուցում են, որ դրանք էս բաներից տեղյակ չեն:

Օրինակ, եթե տեղյակ են ուղղագրության մասին Արեղյանի ու ուրիշների գործերին, կամ պիտի լռեն, որովհետև դրանց մեջ կան իրենց բոլոր առարկությունների ու «փաստարկների» գիտական պատասխանները, կամ պիտի ապացուցեն, որ էդ պատասխանները սխալ են: Եթե, այնուամենայնիվ, ծանոթ են դրանց ու չեն լռում ու ամեն քայլափոխին խեղաթյուրում են ճշմարտությունը, ուրեմն գուտ անձնական, շահասիրական նպատակներ ունեն:

Սկզբում լեզվի տեսչությունում շատ հետաքրքիր վիճակ էր ստեղծվել: Պետն իր շուրջն էր հավաքել իր պես «մասնագետների», բայց, երևի տեսչությունը ծանրակշիռ դարձնելու համար, մի քանի լեզվաբան էլ էր ընդունել գործի, օրինակ, վաստակավոր գիտնական, ակադեմիկոս՝ Գևորգ Զահուկյանին:

Ու են օրերի պարոն պետը զվարճալի վիճակի մեջ էր հայտնվել՝ մասնագետները դեմ էին իրեն ու իր շուրջը պետի հավաքած հնամուլներին: Ու ահա՝ մտնելու սկսվեց մի բավական կրթուտ պատերազմ: (էդ պատերազմը վարելու հնամուլների մեթոդների մասին հետո էլի՝ կասեմ, հիմա պատմելու են պաշտոնականների մասին):

Պաշտոնական լեզվաբանության ներկայացուցիչները (միմիայն հանուն կարծության՝ սրանից հետո դրանց կասեմ «պաշտոնական»), մինչև էս «պատերազմը», ուղղագրության ռեֆորմից բավական հազվադեպ էին

ելույթ ունենում. թվում էր, թե իրենց շարքերում ո՛չ միասնություն կա, ոչ էլ՝ գործողություններն են համաձայն:

Տարօրինակ էր, բայց «պատերազմելիս» պաշտոնականները պաշտպանության ճիշտ ուղի չընտրեցին: Առավել տարօրինակ էր ու է, որ պաշտոնականները լայն հասարակությանը չպատմեցին Արեղյանի 30-ական թվականների ողբերգության մասին:

Պաշտոնականները չօգտվեցին առիթից ու էս անգամ էլ չբացատրեցին, որ Արեղյանին չարաչար զրպարտել ու զրպարտում են մինչև էսօր:

Պաշտոնականները մատնացույց չարին Արեղյանի հիշատակած աշխատություններն ու չասացին, որ էնտեղ կան հնամուլների բոլոր առարկությունների պատասխանները: Թե ինչու՞, թող իրենք ասեն:

(Բացատրություններից մեկն է՛ն է, որ եթե պաշտոնականները պաշտպանության է՛դ ուղին ընտրեին, դա «շատ ջուր կվերցներ», ու իրենք շատ ծանր վիճակի մեջ կընկնեին: Որովհետև էդ ժամանակ իրենք ստիպված պիտի պատմեին էն ամենը Արեղյանի մասին, ինչ որ էս արդեն պատմեցի: Իսկ սա, ինչպես կտեսնենք էս գրքի երրորդ մասում, հոյ է «համալեզվաբանական աղետով»: Ու դժվար թե սա ցանկալի է իրենց):

Բայց պաշտոնականները, այնուամենայնիվ, համախմբվեցին: Կոիվը թեժացավ: «Պատերազմող» կողմերը երկու անգամ հանդիպեցին: Առաջին անգամ հանդիպեցին *Գարուն* ամսագրի խմբագրությունում (*Գարուն*, 1997, N 8):

«Յոյժ» հետաքրքիր է. որ էս հանդիպման ժամանակ հնամուլները հայտարարեցին, որ իրենք լեզվաբան չեն, այլ «լեզվաքաղաքագետ», ու պիտի «լեզվաքաղաքականություն» վարեն (էջ 36): Սա նույնն է, թե ասես. «Ես բժիշկ չեմ, բայց պիտի վիրահատեմ»:

Երկրորդ հանդիպումը Երևանի պետական համալսարանում էր, առաջինից քիչ հետո: Պաշտոնականները դրանից հետո *Հայաստանի Հանրապետություն* օրաթերթով դիմեցին կառավարությանը:

Չնայած դիմումի տակ ստորագրած է. *ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ*, ՀՀ ԳԱԱ Հր. Անառյանի անվան լեզվաբանության ինստիտուտ, էնտեղ կա ութ, մեղմ ասած, ոչ գիտական ու միամիտ պնդում: Ու դրանց մասին մի քանի խոսք պիտի ասեմ, որովհետև սա էլ արդեն մյուս ծայրահեղությունն է, ու շատ է վտանգավոր:

Հիշյալ դիմումի վերնագիրն էր. *Վերջ տալ հայերենի արդի ուղղագրության դեմ կառավարող ուսնձգություններին, ... միացյալ գիտաժողովի եզրակացությունը* («Հանդես Երևանի Համալսարանի», 1998, N 1, էջ՝ 25:

Հենց էս վերնագիրը հայերեն չի, թարգմանական պատճեն է: Ճիշտ կլիներ. «Վերջ տվեք ...» կամ «Պիտի վերջ տրվի...» կամ էլ սրա պես մի

(դիմավոր) բայ ունեցող խոսքը: Դիմումի մեջ թարգմանական պատճենները սովորական են, ինչը հատուկ է «գրասենյակային լեզվին»:

Բացի սա, դիմումի մեջ, օրինակ՝ ասված է.

«Քաղաքակիրթ ոչ մի երկրում չի կարող մեկ նախադասություն իսկ գրվել ու տպագրվել այլ կերպ, քան պահանջում է պետականորեն հաստատված ուղղագրությունը»:

Իհարկե, էսպես բան չկա: Մարկ Տվենը, Բեռնարդ Շոուն, կամ Դեյվիդ Հերբերտ Լովրենսը, օրինակ, ինչ ուղղագրությամբ ուզում՝ դրանով էլ գրում էին, ու հազիվ թե մեկնումեկն ասի, թե ԱՄՆ-ը կամ Բրիտանիան քաղաքակիրթ երկիր չի: Սրա պես օրինակ շատ-շատ կա:

Ասված է.

«Ընդգծեցին (պաշտոնականները - Մ. Հ.) գործող ուղղագրության արժանիքները, հատկապես (դրա - Մ. Հ.) լիակատար համապատասխանությունը արդի հայերենի հնչյունական համակարգին»:

Չխոսենք էն բանից, որ օրինակ՝ Ղարաբաղի ու Սալմաստի բարբառներն էլ են արդի հայերեն, ու գործող ուղղագրությունը բոլորովին էլ համապատասխան չի դրանց հնչյունական համակարգին: Բայց մի՞թե չենք գրում՝ «օձ, արջ, վարդ» ու արտասանում՝ «օց, առչ, վարթ»:

Ասված է.

«Գործող ուղղագրությունը առավելագույնս մատչելի է ուսուցման համար»:

Ո՞վ ու ո՞նց չափեց ու իմացավ, որ սա «առավելագույնս է մատչելի» ու սրանից մատչելին էլ չկա:

Ասված է.

«Ժամանակակից ուղղագրությունը հնարավորություն է տալիս առանց որևէ աղավաղման և ընթերցման դժվարություններ առաջացնելու տառադարձել օտարազգի բառերը, այդ թվում բոլոր հատուկ անունները»:

Սա, իհարկե, ճիշտ չի: Չկա երկու լեզու (նույնիսկ՝ երկու բարբառ), որոնց հնչյունական համակարգերն էն աստիճան նույնական լինեն, որ անունները (իմացի՜ր օտարազգի բառերը) տառադարձվեն «առանց որևէ աղավաղման»: Աղավաղմունք՝ միշտ էլ կլինի, դա անխուսափելի է: Ուրիշ հարց է, թե դա ինչքան շատ կամ քիչ կլինի:

Ասված է.

«Անհրաժեշտ է հստակ ու միանշանակ սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն արդի գրական արևելահայերենն է՝ արդի ուղղագրությամբ (որով գրված են ծանրապետության Մահմանադրությունը և բոլոր օրենքները), և ոչ թե ընդհանրապես հայերենը իր բոլոր

արտահայտություններով (գրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն, բարբառներ, խոսվածքներ)»:

Սա արդեն, իհարկե ծայրահեղություն է: Նախ մեր Մահմանադրության ու օրենքների լեզուն, իմ կարծիքով, արդի հայերենի ամենատզեղ ու ամենախորթն տեսակներից է: Դա Չուկովսկու ասած «կանցելյարիտն» է, որ կա (Корней Чуковский, "Живой как жизнь", էջ 571-600) ու գրելու համար՝ ամենաանհարմար ու անտեղի ու տզեղ ոճն է:

Երկրորդ, լրիվ իրավացի, պետական լեզուն, իհարկե, պիտի դասավանդվի՝ դպրոցներում ու բուհերում:

Հիմա հարց են տալիս. «Կարո՞ցում ու բուհերում կարելի՞ է, որ ոչ «պետական հայերեն» դասավանդվի: Որովհետև Հ. Թումանյանի բոլոր հեքիաթներն ու, օրինակ, *Գիբորն* ու *Գարո թիժու շերամապահությունը*, Դ. Դեմիրճյանի *Քաջ Նազարը*, Ն. Բուչակի *Հայրենները*, Մայր-Նովայի հայերեն ու մանավանդ *ալլալեզու* ոտանավորները, Ե. Չարենցի *Կասկազ քամաշան*, Ե. Օտյանի, Հ. Պարոնյանի, Պ. Դուրյանի, Դ. Վարուժանի ու այլոց ու մեկ էլ՝ էսօրվա գրողներից շատերի որոշ գործերը կամ հատվածները հաստատ մեր սահմանադրության լեզվով չեն ու հաստատ «պետական» լեզվով չեն:

Հիմա դպրոցում ի՞նչ անենք. ասենք, իհարկե, որ Հ. Թումանյանը հանճարեղ է, որովհետև իր գրածներն են հանճարեղ, բայց հետո էլ ավելացնենք. «Երեխաներ, հանկարծ ու հանկարծ Թումանյանի պես հանճարեղ լեզվով չգրեք, հա՛, էդ լեզուն զգվելի է, որովհետև պետական չի՞»:

Գրական լեզվի վերի սահմանումը՝ որպես Մահմանադրության ու օրենսգրքերի լեզու, առնվազն տարօրինակ է այսպիսի մի հեղինակավոր գիտաժողովի համար:

Ասված է.

«Գործող և պետականորեն հաստատված ուղղագրությունը, ինչպես այս տարածքում գործող պետական հին ու նոր մյուս բոլոր օրենքները, պարտադիր է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ողջ հայության համար»:

Իսկ օրինակ քրդի՞, հույնի՞, հրեայի՞ համար:

Ասված է.

«Հայաստանի Հանրապետությունում, բացի ժամանակակից հայերենով գրված որևէ բնագրի պետականորեն գործող ուղղագրությունից, այլ ուղղագրությամբ տպագրելը պետական օրենքի, դրանով իսկ մարդու իրավունքների խախտում է, այս պարագայում ողջ հայաստանաբնակ հայերի իրավունքների խախտում, որի կանխումը ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության պարտականությունն է»:



(Վերջը իմացանք, թե էդ տեսչությունն ինչի համար է):

Էս պահանջն արդեն չափ ու սահման չունի: Հենց ի՞նքը՝ էս պահանջը մարդու իրավունքների ամենակոպիտ խախտումն է, որ կա: Ե՛ս եմ, ու գրում եմ՝ ինչ ուղղագրությամբ, որ ուզում եմ, ու՞մ ինչ գործն է: Հ. Թումանյանն է, ու գրում է «օխտ», «յոթի» տեղը: Չարենցն է, ու գրում է «Վապկազ», «Վովկասի» տեղը: Մա՛ մեկ:

Հիմա ի՞նչ, չտպե՞նք՝ Խորենացու, Բյուզանդի, Փարպեցու, Ագաթանգեղոսի գրաբար տեքստերը, Ս. Գրքի գրաբար տեքստը, Նարեկացու գրաբար տեքստը, չտպե՞նք՝ Բուչակին, Սայաթ-Նովային, Թումանյանին, Մասնա ծոերը, Հայ ժողովրդական հեքիաթների հատորները, մեր արևմտահայ գրողներին ու այլոց:

Ի՞նչ անեն բանահավաքները, ֆոլկլորը չգրանցե՞ն գիտական այբուբենով ու դրա ուղղագրությամբ: Չէ՞ որ դա խիստ տարբեր է պետական գործող ուղղագրությունից ու մեր սահմանադրության լեզվից: Ափսոս որ էսքան հեղինակավոր մի գիտաժողով էսքան «անփույթ» է:

Իհարկե, մեր դպրոցներում, բուհերում ու պետական հիմնարկներում միասնական ուղղագրությունը երևի անհրաժեշտ ու անխուսափ բան է, չնայած Լև Նիկոլաևիչ Տոլստոյը, օրինակ, կարծում է, որ երեխաները թող գրեն՝ ինչ ուղղագրությամբ որ ուզում են:

Բայց անհատներն էլ են մարդ, ու դրանք էլ ունեն «մարդու իրավունք» – իրենց ուզած ուղղագրությամբ գրելու: Եթե մեկը, օրինակ, որոշել է՝ թեկուզ Մաշտոցյան ուղղագրությամբ վեպ գրի ու իր ծախսերով հրատարակի ու չի ակոսում իր ժամանակն ու փողը, դա գուտ իր գործն է: Եթե մեկը հին ուղղագրությամբ թերթ է հրատարակում (իր ծախսով), կամ էլ՝ նորահայտ հնաժող պրեսային Նշան Որբերյանի պես «գիտական» հոդված է գրում, դա էլ՝ իր գործն է: Եվ եթե մեկը պատմվածք կամ բանաստեղծություն է գրում արևմտահայերենով կամ Երևանի բարբառով, կամ էլ Ղարաբաղի, դա էլ իր գործն է:

Մարդը պիտի հանդուրժող լինի, ինտելիգենտ մարդը՝ առավել ևս, իսկ ինտելիգենտների գիտաժողովը՝ անպայման:

Գիտնականների համաժողովը պիտի նաև անփույթ լինի, ու գիտությանը հակառակ բան՝ երբեք չասի:

Ցավոք սրտի, կասկած ունեն, որ սա 30-ական քվերին ծագած անհանդուրժողության արտահայտություններից մեկն է, դրա ժամանակակից արձագանքը:

Ինչ որ է, պաշտոնականները, է՛ն անգամ, հաղթեցին: Թեբևս, վճռական եղավ՝ է՛ն հանգամանքը, որ կառավարությունը հասկացավ, որ հին ուղղագրությանը վերադառնալու համար՝ ուղղակի վիթխարի ծախս է

պետք ու վիթխարի ուշադրություն՝ կրթությանը: Բայց լավ հայտնի է, որ մենք՝ էս երկուսից էլ զուրկ ենք: Ուրեմն, պաշտոնականներն է՛ն անգամ հաղթեցին: Իսկ է՛ս կամ հաջորդ անգամ: Եթե հիշենք 30-ական քվականների ողբերգությունը, երևի հնամուլները հաղթեն:

Եթե հանկարծ հնամուլները հաղթեն ու դառնանք հին ուղղագրությանը, աշխարհում թերևս լինենք միակ ազգը, ով հեշտը թողած՝ վազում է դժվարին, ով լավը թողած՝ շատ ավելի վատն է վերցնում, ով առաջադեմն ու ճիշտը թողած՝ հետադեմն ու սխալն է ընտրում:

ՀՆԱՄՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԵԼՈՒ ՉԵՎԸ

- էդ ի՞նչ ես անում, - *հարցրեց Փոքրիկ Իշխանը:*
- Խո՞ւմ եմ, - *մտայ պատասխանեց հարբեցողը:*
- Ի՞նչու՞:
- Որ մտանամ:
- Որ ի՞նչը մտանաս, - *հարցրեց Փոքրիկ Իշխանը...*
- Որ ամոք է:
- Որ ին՞չն է ամոք, - *հարցրեց Փոքրիկ Իշխանը:*
- Որ ամոք է, որ խո՞ւմ եմ, - *ասաց հարբեցողը:*

Անտոան դը Սենտ-Էքսյուպերի, «Փոքրիկ Իշխանը»

Ըսանի որ հնամուլները, հենց իրենց իսկ ասելով, լեզվաբան չեն, այսինքն, հարկավոր գիտությունից զուրկ են, վիճելիս, կամա թե ակամա, ամեն տեսակ սուտ էլ՝ ասում են: Բացի սա, շատ հաճախ, ուրանում են առաջվա ասածները, անընդհատ յուսամտավում են, պարզ չեն խուսում, հրաժարվում են ուղղակի պատասխաններից (տես օրինակ հիշատակածս *Գալուսի* հոդվածը): Դրա օրինակներն արդեն բերել եմ, բայց, որ տպավորությունը կիսատ չմնա, է՛ի բերեմ:

(Իհարկե, ես չեմ պնդում, որ ստորև ասածներս վերաբերում են հին ուղղագրության բոլոր կողմնակիցներին: Դրանց մեջ ազնիվ մարդիկ էլ կան, բայց դրանք մոլորված են: Էս մոլորության պատճառը մեր էսօրվա լեզվաբանության մի ողբերգական հատկությունն է. ով մի քիչ գրել-կարդալ է սովորում, իրեն անսահման իրավունք է տալիս լեզվաբանության նույնիսկ ամենաբարդ հարցերի մասին կարծիք հայտնելու ու գիտությանը չհամաձայնելու (սրա պատճառի մասին՝ տես նաև *Էս տեսակ վճռերը կդադարեն*՝ վերնագրից սկսած, ու է՛ս գրքի 3-րդ մասում):

(Լեզվաբանությունը՝ գիտություն է լեզվի մասին: Լեզվի հետ գործ ունենք ամեն վայրկյան:



(Ֆիզիկան էլ, օրինակ, գիտություն է բնության մասին: Մենք բոլորս էլ գերազանց շարժվում ենք՝ քայլում ենք, վազում ենք, մազկում ենք, մեզնից շատերը լավ լող են տալիս ու, առհասարակ, ինչպես ֆիզիկոսներն են ասում, բոլորս էլ «մեխանիկական շարժում ենք կատարում» ու լավ ենք «կատարում»: Ուրեմն, գոնե մեխանիկայի գործնական կիրառության տեսանկյունից, «մեխանիկ ենք»:

(Բայց ֆիզիկայի հետ առնչություն չունեցող ու «մեխանիկական գերազանց շարժումներ կատարող» ո՞ր մի հայի մտքով կանցնի, թեկուզ էդ հայը լինի ակրոբատիկայի չեմպիոն, կամ փիլիսոփա, կամ լեզվի տեսչության պետ ու նույնիսկ «Մեսրոպյան ուխտի անդամ» (պրն Որբերյանի պես), որ ասի, թե ինքը մեխանիկայից էնքան բան է հասկանում, որ իրավունք ունի կարծիք հայտնելու Արքիմեդի, Նյուտոնի կամ Էյնշտեյնի գործերի մասին ու ասելու, թե սրանց մեխանիկան սխալ է, ու ինքը համաձայն չի սրանց:

(Լեզվի հարցում էսպես չի: Շատերը կարծում են, որ եթե լավ են խոսում ու հլը՝ կարդում ու գրում են, ուրեմն, իրավունք ունեն ընդհանուր լեզվաբանական կամ գրականագիտական ցուցումներ տալու ուրիշներին, ու նույնիսկ՝ լեզվաբաններին, ու նույնիսկ՝ ստուգաբանելու: Էս տեսակ են մտածում՝ շատ շատերը: Լեզվաբանությանը քիչ ծանոթները կարծում են, թե լեզվաբանությունն ավելի հեշտ գիտություն է, քան ֆիզիկան:

(Էսպես չի: Ով չի հավատում, թող թերթի, օրինակ, Հայնրիխ Հյուբշմանի կամ Անտուան Մեյեի Հայագիտական ուսումնասիրությունները, կամ Հրայրյա Աճառյանի Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությանը 562 լեզվի աշխատությունները, կամ *Новое в сарыбеченое лингвистике* ժողովածուի մեզ հասած՝ վերջին հատորը ու տեսնի, լեզվաբանությունը հե՞շտ է, թե՞ չէ: Թող չհավատացողը էդ գրքերը ցույց տա ֆիզիկոսներին կամ մաթեմատիկոսներին ու տեսնի, թե ի՞նչ պատասխան կստանան):

#### ՈՒՂՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՇՖՈՐՄՆ ՈՒ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Եթե գործերի վիճակը լավ է, մոտ ապագայում անպայման կվառանա:  
*Մերֆիի օրենքի Չիզհուլի 1-ին հեռանկարը*

1. Հնամուկները (օրինակ, հանգուցյալ Ռ. Իշխանյանն ու նորահայտ պրն Նշան Որբերյանը) ասում են, թե Հովհաննես Թումանյանը դեմ է եղել Արեղյանի ռեֆորմին: Ճիշտ չի: Ս. Վ. Գյուլբուրդյանն աբղեն ասածս գրքի 331-րդ էջում գրում է, թե Թումանյանը 1922 թվի մայիսի 17-ին նամակ է գրել Հայաստանի լուստողկոմ Պ. Մակինցյանին ու ասել.

«Ես, որպես հայ գրող և հայ գրողների միութեան նախագահը՝ գալիս եմ յայտնելու իմ զարմանքը և բողոքելու էմ վարմունքի դեմ, որ ունեցել է Հայաստանի լուստողկոմը էս կարևոր խնդրում: Պ. Մ. Արեղյանը մի առաջարկ է արել ու դրել հրապարակ: Շատ լավ: Բայց Հայաստանի լուստողկոմը որտեղից է իմացել, թե և՛ պ. Մ. Արեղյանը և՛ ինքը, լուստողկոմն էլ նրա հետ միասին, անսխալական են, որ առանց քննութեան ենթարկելու առաջարկը, հրամանագրում է ընդունել և միայն դրանով գրել ու տպագրել:

Պ. Արեղյանի առաջարկն ընդունելի է, թե չէ, դա դեռ քննելիք խնդիր է. երբ դա քննելիք խնդիր է, հետևաբար լուստողկոմի հրամանը անընդունելի է: Եւ եթե էսպես է, ապա նրան, լուստողկոմին, մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր կարգադրությունը, խնդիրը համարել բաց և դնել քննութեան»:

Ս. Գյուլբուրդյանը սրան ավելացնում է, թե «Չեռագրի ուղղագրությունից էլ է երևում, որ Թումանյանը նոր ուղղագրությունը չի ընդունում»:

Հ. Թումանյանի էս նամակի ուղղագրության դասական լինելու հարցից չխոսենք ու չխոսենք նաև է՛ն բանից, թե պրն Գյուլբուրդյանը էդ ի՛նչ գործքամբ է միայն ձեռագրից իմանում, որ Թումանյանը դեմ է եղել ուղղագրության ռեֆորմին, թե չէ՝ հեռու կգմանք: Բայց զարմանալի է, որ Ս. Գյուլբուրդյանը չի իմացել, որ մոտ երկու ամիս հետո նույն Թումանյանը նույն Մակինցյանին մի ուրիշ նամակ է գրել ու իր էս նոր նամակը վերջացրել է հետևյալ խոսքով.

«Ոչ թե պետք է հին հնչյունները վերականգնել (ինչպես ուզում են հնամուկներից ոմանք՝ հենց էսօր էլ - Մ. Հ.), այլ մաշվածները դեմ գցել, ինչպես ուսներն արեցին: Ոչ թե պետք է դժվարացնել, այլ հեշտացնել: Եվ չպետք է ել խնդրին էլ կերպարանքը տալ - պատվասիրություն ու չեմ խմանում ինչ բաներ կապել հետը»: (Այսինքն, չպիտի ասվի, թե «ռեֆորմը կերկվեղկի ազգը» են - Մ. Հ.): (*Նամակ՝ Պողոս Մակինցյանին*, 1922 թ., 22-ր հուլիսի, Հովհաննես Թումանյան, *Երկերի ժողովածու, չորս հատորով*, 1969 թ., հատ. IV, էջ 432):

Հա՛, Թումանյանը, լրիվ իրավացի, զայրացել է, որ Մակինցյանը նոր ուղղագրության չորս նախագծից ոչ մեկն էլ չի դրել քննարկության, բայց սա չի նշանակում, թե Թումանյանը դեմ է եղել ուղղագրության ռեֆորմին առհասարակ:

Թումանյանի երկրորդ նամակն ապացուցում է, որ Թումանյանը, լրիվ ու անկասկած, կողմ է եղել ուղղագրության ռեֆորմին:

Նույնիսկ երբ վատահ ես, որ բոլոր-բոլորը կհավանեն արածդ,  
միևնույնն է, կճարվի զոմն մեկը, ում դա անպայման դուր չի գա:  
*Չիզեղմի օրենքի 5-րդ հետևանքը*

2. Հնամուկներն ասում են. «...թե ֆրանսիացիք և ուրիշները, ուրբեր մեզ-  
նից շատ ավելի խելոք են, ինչո՞ւ չեն իրենց ուղղագրությունը փոխում»:

Մա էլ ճիշտ չի, ու ահա թե սրան ինչ է պատասխանում Մ. Աբեղյանը  
1913 թվի, հոկտեմբերի 14-ին (*ԵՐԿԵՐ*, Ը հատոր, *Մեր ուղղագրության  
մասին*, էջ 335).

«Եվ այս առարկությունը հիմնավոր է, եթե միայն մանկավարժական  
(այսինքն, հին գրվածքները յուրացնելու – Մ. Հ.) տեսակետը հաշվի առն-  
վի, բայց կորցնում է իր արժեքը, երբ խնդրին նայում ենք գրաբարի և աշ-  
խարհաբարի, հին ու նոր լեզուների մրցման տեսակետից: Որովհետև այդ-  
պես առարկողները երկու լեզուների տարբեր շրջաններ են իրար հետ  
բաղդատության մեջ դնում:

«Այդ ազգերի ուղղագրությունն այն շրջաններում, երբ թողել են հին լե-  
զուն և նոր գրական լեզու են առաջ քերել, ոչ միայն փոփոխության է են-  
թարկված, այլև այնպիսի մեծ փոփոխության, որի մասին մենք երևակայել  
չենք կարող. հին ֆրանսերենի ուղղագրությունը նոր ֆրանսերենից, նույն-  
պես՝ հին, միջին և բարձր գերմաներենի ուղղագրություններն իրարուց,  
շատ տարբեր են:

«Նրանք ուղղագրական շատ վեճեր, փոփոխության զանազան փոր-  
ձեր ունեցել են, մինչև մի որոշ դրության են հասել, որ ամենքի համար  
ընդունելի է դարձել, և այնուհետև, աստիճանաբար, թեթև փոփոխություն-  
ներ են մտցրել ու մտցնում ուղղագրության մեջ:

«Շատ բնական է, ուրեմն, որ այն բազմաթիվ վեճերն ու փորձերը, որ,  
օրինակ, ֆրանսիացիք սպրել են XV-XVII դարերում, մենք դեռ նոր՝ XIX  
դարա երկրորդ կեսից հետո պիտի ունենայինք. գրաբարյան և աշխար-  
հաբարյան վեճերը դեռ մի 25 տարի առաջ կային:... Մ. Էջմիածնի ճեմա-  
րանի դպրանոցական բաժնի վերին դասարաններում դեռ երկրորդ տա-  
րին է, որ աշխարհաբար չիզվի և գրականության դասերը են մտցրած:  
...Մենք ուղղագրության խնդրի անվան տակ շարունակում ենք, ուրեմն,  
գրաբարի և աշխարհաբարի դեռ բոլորովին չվերջացած խնդիրը»:

Աբեղյանից արած էս երկար քաղվածքին ավելացնեն, որ մենք էլ, մնա-  
ցած հնուց գիր ունեցող ազգերն էլ, փոխել ու փոխում են իրենց ուղղագ-  
րությունը. քիչ-քիչ էլ, ռեֆորմով էլ: Ուղղակի՝ նախ հնամուկները տեղյակ  
չեն սրանից, ու երկրորդ՝ էս ազգերի լեզուներից շատերը նորից շատ ա-

րագ փոխվեցին, ու ուղղագրությունը նորից հետ ընկավ: Հետաքրքիր է  
Ֆրանսիական հանրագիտարանի ասածը (Գյուլբուրդյան, էջ 295-296).

«Ֆրանսիական արդի ուղղագրությունը ոչ մի ընդհանուր կանոնի չէ են-  
թարկված, դա ոչ հնչական է, ոչ տոնուգարանական, ոչ համեմատական է և  
ոչ տրամաբանական: Իր եությանը դա անկանոն է և կամայական: Ինչ  
կողմից էլ նայելու լինենք, այդ ուղղագրությունը լի է դժվարություններով և  
վաղուց է զգացվում դրա ռեֆորմի կարիքը»:

Ես ծանոթ եմ անգլերենի ու ռուսերենի ուղղագրությունների պատմու-  
թյանն ու ասեմ, որ, օրինակ, (նոր) անգլերենի աշխարհաբար գրականութ-  
յան հիմնադիր Ջեֆրի Չոսերի ուղղագրությունը խիստ տարբեր է Ռոբերտ  
Լյուիս Ստիվենսոնի ուղղագրությունից, իսկ անգլիական հնագույն գր-  
վածքների ուղղագրությունը շատ ու շատ ավելի՝ է հեռու մեր օրերի անգլե-  
րենի ուղղագրությունից, քան գրաբարինը՝ նոր հայերենից:

Կարծում եմ, արժի, որ մի քանի քաղվածք անեն Գյուլբուրդյանի գր-  
քից, ինչը հնամուկները հաճախ են մեջ բերում (շատ անգամ՝ առանց հի-  
շատակելու): Սհա դրանք:

«Հայերենի ուղղագրության պատմությունը հար և նման է եվրոպական  
շատ լեզուների (իտալերեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուղղագ-  
րության պատմությանը: Մինչև Յակով Գրիմը Գերմանիայում ընդհա-  
նուր ուղղագրություն կար, բայց այդ ուղղագրության մեջ սխալ և անհե-  
տևողական բաներ տեսնելով՝ Գրիմը փոփոխության առաջարկ մտցրեց  
նրանում, գոթական տառերը փոխարինեց լատինական տառերով: Գեր-  
մանացիները չեն թաքցնում, որ գերմաներեն գրականության մեջ դժվար է  
գտնել երկու գիրք, որ ուղղագրությամբ իրար նման լինեն» (էջ 342):

«...Նույնպիսի բանավեճերով ու պայքարով է ընթացել նաև անգլերենի  
ուղղագրության պատմությունը: Անգլերենի ուղղագրությունը բառի բուն ի-  
մաստով պատմական է (եթե նայենք միայն հին ու նոր շրջանները – Մ.  
Հ.): Հնագույն գրավոր նշանները դեռ ուժի մեջ են և կարծես չեն հակասում  
բանավոր խոսքին (այս պնդումն անհեթեթ է – Մ. Հ.): Բառերի մեծ մասի  
գծագրական պատկերը պայմանական արտահայտությունն է բանավոր  
արտաբերման, նույնիսկ անկախ՝ բառի առանձին տարրերից: Դա բառս-  
յին (համարյա «հիերոգլիֆական» – Մ. Հ.) և ոչ թե հնչյունական ուղղագ-  
րություն է» (էջ 343): (Ֆրանսերենի վիճակը սրանից շատ վատ է – Մ. Հ.):

«...Եվրոպայում միայն իտալերենի, իսպաներենի և պորտուգալերենի  
ուղղագրությունն է առաջնորդվում հնչյունային սկզբունքով: XVI դարի  
իտալական քերականները (Լ. Մալվիատի) գրավորը համաձայնեցրին  
բանավոր խոսքին, գրեցին մի հնչյունին մի գիր սկզբունքով և այդպես էլ  
տարածվեց:

Իսպանիայում 1492 թ. Անտոնի դե Նեբրիխան ընդունեց հնչյունային գրությունը, գրանշանները համապատասխանեցրեց հնչյուններին: 1741 թ. ուղղագրությունն իր ձեռքն է վերցնում Ֆիլիպ V-ի հիմնադրած ակադեմիան: 1815 թ. Մադրիդի ակադեմիան վերջնականապես հաստատում է հնչյունային ուղղագրությունը» (էջ 346):

«...Հնչյունային ուղղագրությունը այն լավագույնն է, որին ձգտում են աշխարհի բոլոր լեզուները, իբրև սկզբունք հիանալի է ու անթերի, բայց նա իրականությանը հակադիր է և դժվար իրականանալի» (էջ 347):

Ավելացնեն, որ ուղղագրության ամենահին (ինձ հայտնի) ռեֆորմն առել են հին հույները (Մաշտոցի այբուբենն ստեղծելուց մոտ 700 տարի, իսկ նորագույն հնամուլներից՝ մոտ 2300 տարի առաջ), երբ աթենացիները հրաժարվեցին իրենց այբուբենից ու վերցրին հունիականը, որովհետև հունիականը շատ ավելի հնչյունական էր, ուրեմն, ավելի լավն էր:

Ու աթենացիները չվախեցան, թե «կկտրվեն իրենց արմատներից, ու չեն կարենա կարդան Պլատոնին, Հոմերոսին, Եվրիպիդեսին, Սոփոկեսին, Արիստոփանեսին, Հերոդոտոսին, Թուկիդիդեսին, Էսքիլեսին, Լև, Լև: Տես *Արիստոտել, Աթենական հասարակարգը*»:

**ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՇՃՈՐՄԻՆ ԿԱՊՎԱՍԾ ՍՏԵՐՆ  
ՈՒ «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ»**

-Գլուխը կարկեն ու կասեմ, որ լռե՛նք էր:  
*Փողոցային կովից*

3. Հնամուլները (օրինակ, Ռ. Իշխանյանը), ասում են, թե իրենք կանոններ ունեն, ու որ մարդ դրանք սովորի, շատ շուտ ու հեշտ կգրի եին ուղղագրությամբ: Էստեղ երկու բան կա, որ ճիշտ չի: Առաջին.

Եղ կանոններն իրենցը չեն: Դրանք Արեղյանի գրքարար տեքստերի գիտական քննությամբ հայտնագործած՝ արդեն հիշատակածս կանոններն են:

Երկրորդ.

Դրանցով հայերն ընդունակ չեղան ճիշտ գրելու, ու դրանցով էսօր էլ մեր Սփյուռքում ճիշտ ու միակերպ չեն գրում, ու չեն էլ գրի, որովհետև ամենար է, որ շարքային գրագետն անսխալ գրի մեր էսօրվա հայերենի համար խիստ անհարմար մաշտոցյան ուղղագրությամբ:

4. Հնամուլներն ասում են, որ Սփյուռքը գրում է կին ուղղագրությամբ: Ընդհատ չի: Սփյուռքում բոլորը չեն, որ գրում են հին ուղղագրությամբ:

Հին ուղղագրությամբ չեն գրում նաև Ռուսաստանում, այսինքն՝ Ներքին Սփյուռքում, իսկ Ներքին Սփյուռքն ինչո՞վ է պակաս մյուսներից:

Հետո՝ արևմտահայերենով գրող Սփյուռքի ուղղագրությունը բոլորովին էլ միասնական չի: Երրորդ, դրանց հին ուղղագրությունը ոչ թե մեր հինն է (Արեղյանի մշակածը՝ արևելահայերենի համար), այլ Մխիթարյանների մշակածը՝ արևմտահայերենի համար, ու սա էլ կիրառվում է ծուռուծուռ ու սխալաշատ, ու բոլորովին էլ միակերպ կամ միասնական չի:

5. Հնամուլներն ասում են. «Սփյուռքի պես գրենք, որ Սփյուռքի հետ միավորվենք, որ մեր հայ ազգը միասնական ու միաբան լինի Լև, թե չէ՛... Սփյուռքի ու մեր մեջ հակադրություն կլինի» ևն:

Էս փաստարկը թեև հնամուլների գլխավոր փաստարկն է ու հնարավորություն է տալիս, որ դրանք թունդ ու հեռատես հայրենասերի կեցվածք ընդունեն, բայց այնուամենայնիվ ճիշտ չի:

Ո՞վ է տեսել, որ ուղղագրության միասնությունով համագալսին խընդիրներ լուծվեն: Ու հետո՝ էղ ի՞նչ հակասություն կամ պատակություն կա մեր ու մեր Սփյուռքի մեջ, որ ոչ մեկս չի լսել ու ինչը պիտի ուղղագրության միասնությունով լուծենք:

(Իմիջիայլոց, Սփյուռքում հայերի մի մասը կաթոլիկ է: Ու բա որ վաղը մեկն էլ ասի, որ կրոնական էղ տարբերությունն էլ է մեզ ու Սփյուռքին իրար հակադրում, կամ մեզ պատակտում է: Հիմա ի՞նչ, որ էղ հայերի հետ «միավորվենք» ու մեր մեջ «հակասություն» չլինի, մենք է՞լ դառնանք կաթոլիկ: Իսկ եթե դրանք վաղը կրոնները մի՛ անգամ էլ փոխեն ու դառնան, օրինակ, յոթերորդ օրվա աղվենտի՞ստ):

Թող Սփյուռքն ինքն իր միակ հայրենիքի ուղղագրությամբ գրի: Ինչու՞ պիտի մենք շուտ գանք ու իրենց (չգիտես՝ ո՞ր) ուղղագրությամբ գրենք: Բա որ մեկնումեկն էլ էս տեսակ հարց տվեց.

«Ինչու՞ Սփյուռքը չի գրում իր միակ հայրենիքի ուղղագրությամբ: Եթե Սփյուռքն ընդունում է իր միակ հայրենիքը, պիտի իր միակ հայրենիքի ուղղագրությունն էլ ընդունի: Ու շատ տարօրինակ է, որ մինչև հիմա չի ընդունել: Ինչու՞ չի ընդունել: Սփյուռքի մտքին ի՞նչ կա»:

Կամ էլ՝ բա որ համշենցին, դարաբաղցին, սալմասոցին, լենինականցին, ջավախցին ասի. «Ուղղագրությունը հարձարեցրեք մեր բարբառին, թե չէ միասնություն չի լինի ու կպառակվենք»:

Ինչո՞վ է Սփյուռքի հայն ավելի լավ՝ համշենցուց, լենինականցուց, դարաբաղցուց, ջավախցուց կամ սալմասոցուց: Հնամուլները սրա մասին չեն խոսում, քնա՛վ չեն խոսում:

Չեռնաու չի: Հնամուկները, «ուղղագրության միասնություն» պահանջելով, հետո էլ հայտարարում են, թե «ով որ դեմ է հին ուղղագրությանն անցնելուն, դրանով իսկ դեմ է ազգային միասնությանը, ուրեմն՝ ազգի գիտակցական կամ անգիտակից թշնամին է»:

Էս հնարքով՝ հնամուկները զուտ գիտական վեճը դարձնում են քաղաքական: Ու սրանով հնամուկները խուսափում են, ավելի ճիշտ ազատվում են՝ գիտությունից խոսելու անհրաժեշտությունից: Ու անտեղյակների մոտ՝ առաքյալի ու սուրբ մահատակի կեցվածք են ընդունում:

Սրա համար է նաև, որ դրանց դեմ պայքարելը՝ համարյա անհնար է: (Մա չափազանցություն չի, ու դա կերևա հետագա շարադրանքից, ու կյանքն էլ է սա ցույց տալիս):

6. Հնամուկներն իրենց հայտարարում են՝ «այլախոհ» (դիսիդենտ՝ առաջադեմի իմաստով): Բայց ո՞վ է տեսել ու լսել, որ հինն ու մաշվածը պաշտպանողն «առաջադեմի» իմաստով այլախոհ կոչվի:

Տարօրինակ է, ավելի ճիշտ, ողբերգական, բայց միակ՝ իրոք առաջադեմ այլախոհը նորից էլի՝ հանգուցյալ Մանուկ Աբեղյանն է, ում որ 1910-ական թվականներից սկսած՝ հայիտյուն են ու նույնիսկ հիմա էլ, նույնիսկ գերեզմանում էլ հանգիստ չեն թողնում:

7. Հնամուկները լեզվաբան չեն (իրենք են սատմ), բայց հստակ գիտեն, թե լեզվաբաններն ինչ պետք է անեն:

8. Հնամուկները գրող ու բանաստեղծ չեն (համենայն դեպս՝ հայտնի), բայց հստակ գիտեն, թե գրողներն ու բանաստեղծները ինչ բառ չպիտի գործածեն ու ինչ ուղղագրությամբ չպիտի գրեն:

9. Հնամուկները Աբեղյանի ո՛չ լեզվաբանական գիտելիքներն ունեն, ո՛չ գրականագիտական, ո՛չ գիտնական հետազոտողի տաղանդը ու ոչ էլ վաստակը, բայց հաստատ գիտեն, որ Աբեղյանը չարսչար սխալ է:

ՀՆԱՄՈՒԿՆԵՐԻ «ԳԻՏԵԼԻՔԸ»,  
«ԳՎԱՎԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆ» ՈՒ ՀԱՅԱԳՈՎՈՒԹՅՈՒՆԸ

– Ես չեմ խորշում ո՛չ կեղծարարությունից,  
ոչ էլ խարդախությունից:

Աղուֆ Հիտլեր

10. Հնամուկներն ինչպե՞ս են հասնում պաշտոնի, դիրքի, ինչպե՞ս են անտեղյակներին համոզում, որ իրենք գիտուն են ու սրանց ինչպե՞ս են հավաքագրում իրենց շարքերը: Էս հարցերի պատասխանը շատ ծավալուն է, բայց դրանց հիմնական մեթոդը հետևյալն է.

Հնամուկները խոսում են է՛ն տեսակ բաներից, որոնք խիստ կապված են մեր «ազգային ինքնասիրության» ամենամուրթ լարերին: Ո՞ր թեմաներն են դրանք: Թվարկեն մի քանիսը.

1. Սի լեզու, մի մշակույթ, մի ազգ, մի պետություն:
2. Հայ ժողովուրդն ամենալավն է:
3. Հայ ժողովուրդն ամենահինն է:
4. Հայ ժողովուրդը տաղանդավոր է ու աշխատասեր:
5. Հայ ժողովուրդը ստեղծագործ է:
6. Հայերենն Ադամի ու Եվայի լեզուն է, մնացած լեզուներն էլ հայերենից են առաջացել:
7. Հայերենը հնդեվրոպական մա՛յր լեզուն է:
8. Հնդեվրոպացիների հայրենիքը Հայաստանն է:
9. Ամենակարևոր հայտնագործությունները հայերն են արել:
10. Հայ ժողովուրդը միշտ Հայաստանում է ապրել:
11. Հնդեվրոպացիներն էլ են Հայաստանում ապրել:
12. Հայերն առաջին, ամենալավ ու ամենաճիշտ քրիստոնյաներն են:
13. Հայերի հեթանոսությունն էլ է ամենալավը:
14. Հայերը Մաշտոցից առաջ էլ են հայերեն գիր ունեցել:
15. Հայերը 2000 տարի առաջ էլ են քաղաքն ունեցել:
16. Ուրալտացի չի եղել, եղել են միայն հայերը:
17. Բոլոր բնիկ հայերեն բառերը ծագել են հայերեն «ար» արմատից:
18. Հայերն արիացի են (*արիացի* բառը նշանակում է *հրանցի* – Մ. Հ.):
19. Հայերի ամեն հինը՝ աշխարհի ամենալավ հինն է ու ուրիշների ամեն մի նորից էլ լավն է:
20. Հայերը համաշխարհային ազգ են:
21. Հայերը հայ են (արմենաիդ են):

22. Հայերն է՛ն ազգն են, ով աշխարհին տվել է՝ Տիգրան Մեծ, Մաշտոց, Խորենացի, Նարեկացի ևն, ևն:
23. Հայոց լեզուն ամենամկուն ու ամենահարուստ լեզուն է:
24. Մաշտոցյան այբուբենն ու ուղղագրությունն ամենալավն է:
25. Հայերը գերիշխող տեսակ են:
26. Հայերը քաղաքակիրթ ազգ են:
27. Հայերը պիտի ամեն գնով պահպանեն իրենց ավազույթներն ու ազգային արժեքները:
28. Հայերը պիտի միաբանվեն ու չերկվեղկվեն:
29. Աստղագիտությունը, կոշիկն ու գինին հայերն են ստեղծել: (Սա վերջին՝ ամենաքարն նորություններից է – Մ. Հ.):
30. Ծիշուն ասած, մնացած կարևոր բաներն է՛լ են հայերն ստեղծել: Եվ այլն, ևն, ևն:

(Տես գրականության ցուցակը, ուր աստղանիշով նշել են մի քանի հայագուվական, կեղծ, «գիտական» գիրք: Էս կետերից 22-ի, 27-ի ու 28-ի մասին հետո ավելի մանրամասն կասեն):

**11. Հնամուկները, առանց բացատրության, անպայման հեղափոխական հերոս են, ընդ որում, խոշոր հեղափոխական հերոս:**

Մբանք երբեք «մանր» հարցերից չեն խոսում:

Մբանց «շոշափած» հարցերն անպայման «տիեզերական» են, անպայման համազգային են:

Ու լուրջ գիտությունը, օրինակ, համաշխարհային պատմագիտությունը, լեզվաբանությունը, համեմատական ազգագրությունը կամ անտրոպոլոգիան հնամուկների «տեսությունները» երբեք չի ընդունում:

Մաթեմատիկոսը, ֆիզիկոսը կամ բնագետն առհասարակ՝ երբեք նախօրոք չգիտի, թե ինքն ի՛նչ է հայտնագործելու: Էս կարգի լուրջ պրոֆեսիոնալի լուծելիք խնդիրներն ու հայտնագործելիք դրույթները ծնվում են «առօրյա, սովորական, ձանձրալի» ու անընդհատ ու համատ փնտրությունի ընթացքում:

Ու երբ լուրջ գիտնականը, մեծ մասամբ պատահական, մի հետաքրքիր բան է նկատում, նոր է միայն դա ապացուցելու (եթե սա մաթեմատիկային է վերաբերում) կամ հիմնավորելու (եթե սա բնագիտությանը, տնտեսագիտությանը կամ լեզվաբանությանն է վերաբերում) փորձն անում:

Իսկ եթե ի վիճակի չի լինում դա ապացուցելու կամ հիմնավորելու, ձևակերպում է խնդրի տեսքով ռ բողոքում է, որ բրիշներն ապուցուցեն:

Էսպես հայտնագործվեցին կամ կառուցվեցին՝ բարձրագույն մաթեմատիկան, բազմաթյունների տեսությունը, ժամանակակից լոգիկան, ընդհանրացված ֆունկցիաների տեսությունը, հարաբերականության տեսութ-

յունները, քվանտային ֆիզիկան, Էվոյուցիայի տեսությունը, գենետիկան, ինֆորմացիայի տեսությունը, կիբեռնետիկան, սինեոգետիկական մեթոդը, համեմատական ազգագրությունը, համեմատական լեզվաբանությունը, ևն, ևն, ևն:

**12. Հնամուկներին, սրան լրիվ հակառակ, նախօրոք հայտնի ու հստակ պարզ է, թե իրենք ինչ պիտի ապացուցեն:** Պիտի ապացուցեն, որ հայերն ու ամենայն հայկականը ամենալավն է, ամենաճիշտն է, ամենահանճարեղն է: Ու էս ճանապարհին չկա մի հարց, ինչի պատասխանը հնամուկները չիմանան:

Մաթեմատիկոսի արածի ճշմարտացիության միակ չափանիշը տրամաբանությունն է, ու մաթեմատիկոսները հենց սրանով են ստուգում իրար գործերը: Ֆիզիկոսի, քիմիկոսի, ու առհասարակ՝ բնագետի արածների ճշմարտացիության միակ չափանիշը փորձն ու դիտումներն են:

Երբ մի բնագետ մի նոր բան է անում, մյուսները փորձով ստուգում են սրա արածը: Եթե փորձը չհաստատեց սրա ասածն ու արածը, ուրեմն, էլ մարդու ասածն է՛լ, սրածն է՛լ գիտության համար ոչ մի արժեք չունի:

Որ հազար Էյնշտեյն ու Նյուտոնն ու Գաուս Է՛ն տեսակ բան ասեն, ինչն ասածս ձևով ստուգելի չի, էլ բանը գիտության համար անընդունելի է, էլ բանը գիտություն չի:

Սրա համար էլ գիտական լուրջ նորությունները տպվում են, մեծագույն մասամբ, միայն ու միայն գիտական ամսագրերում, որ աշխարհի բոլոր գիտնականներն էլ հնար ունենան դրանք ստուգելու:

Էս իմաստով՝ Հայաստանի մաթեմատիկան ու բնագիտությունը հսկող ունեն, ու էլ հսկողը համաշխարհային մաթեմատիկան ու բնագիտությունն են: Ու հայ մաթեմատիկան ու բնագիտությունը համաշխարհային գիտության թեև փոքր, բայց պետքական մասն են:

**Իսկ էսօրվա (հազվագյուտ բացատրություններով՝ ոչ 1930-ականներից առաջվա) հայ լեզվաբանությունն ու համարյա ողջ հայ հասարակագիտությունը կտրված են համաշխարհային գիտությունից ու ոչ մի նման հսկող չունեն:** Մա՛ է պատճառը, որ էս գիտությունների «հայ ներկայացուցիչները» իրենց ասածների ճիշտ ու պիսալը որոշելու ոչ մի չափանիշ չունեն:

(Տես նաև էս գրքի 3-րդ, 4-րդ մասերն ու Հավելվածը: Չափանիշ չունենալու մասին մի քանի անգամ ասել են, ու մեղ լեզվաբանները ծպտում անգամ չեն հանել, որովհետև իրա՛ք չունեն):

13. Քանի որ հնամուկները ո՛չ հիմնավոր գիտելիք ունեն, ո՛չ գիտական մեթոդին են տիրապետում, ոչ էլ իրենց ասածների ճիշտ ու սխալը որոշելու չափանիշ ունեն, ոչ թե գիտությանն են դիմում, այլ հեղինակությունների ասածներին:

Ասում են (օրինակ պրն Նշան Որբերյանի պես, տես հետո), թե «ակադեմիկոս Ա. Ղարիբյանն ասում է, քանաստեղծ Լևոն Միրիջանյանն ասում է, ֆանտաստ Կարեն Միմոնյանն ասում է, մենք (իմա՝ «ես») կարծում ենք, մեր կարծիքով, Մենելիշյանի կարծիքով, Աճառյանի ու այլոց կարծիքով» ևն, ևն:

Ու քանի որ էսօրվա հայագիտության զգալի մասի «գիտական մեթոդը» հենց էս «կարծիքայնությունն» է, ամեն մի պատահական մարդ էլ իրեն հայագետ է հռչակում ու իր չեղած գիտությամբ «մեջլիս է մտնում»:

(Երբեք չես լսի, որ որևէ լուրջ մաթեմատիկոս կամ ֆիզիկոս ասի. «Նյուտոնը կարծում է, որ տիեզերական ձգողության օրենքը կամ Պյութագորասի թեորեմը ճիշտ է»: Գիտական աշխարհում էս կարգի նախադասությունները ծիծաղելի ու անընդունելի են):

Օրինակ, վերևի ցուցակի «թեզերն ապացուցելու համար եղ պարոնները վարվում են հետևյալ ու միակ ձևով, ասում են. «Մի՞թե հնարավոր է, որ այդպես չլինի: Ինչպե՞ս կարող է դա պատահել: Մեր կարծիքով դա պարզապես հնարավոր չէ: Ակադեմիկոս X. Y-յանի կարծիքով էլ: Հեռաբար հայերը չքնաղ են»: Ու իհարկե, գրողի ծոցը՝ գիտությունն է՛լ, տրամաբանությունն է՛լ, ճշմարտությունն ու համեստությունն էլ հետը:

14. Հնամուկները լուրջ գիտությունից երբեք ու երբեք չեն խոսում: Օրինակ, 1934 թվից Հայաստանի բոլոր դպրոցներում է՛լ, բռնեղում է՛լ մի քերականություն են ուսումնասիրում, ինչի ռակագիտականությունն ու անհեթեթությունը, ինչպես արդեն ասվել է, ապացուցել է նույն «չարաբաստիկ» Մանուկ Աբեղյանը, հենց 1936 թվին:

Ապացուցել է անառարկելի, այսինքն, մինչև էսօր էլ եղ ապացույցին գիտական լուրջ առարկություն չի եղել: (Ես 3-4 անգամ մամուլով խոսել եմ սրա մասին, բայց ոչ մեկը ծայտուն անգամ չի հանել): Ուրեմն, 1934 թվից հայերն ունեն երկու, իրար լրիվ հակադիր, իրար լրիվ ջնջող, լրիվ անհաշու քերականություն:

Սրա հետևանքով մեր գրական լեզուն անտեր է ու չունի գոնե մի կանոնավորող (որմա, ինչն անընդհատ չխախտվի: Իսկ հնամուկները սրա մասին լռում են: «Օտար» բառերի դեմ «արյունահեղ» պատերազմ են անում,

«արյուն են թափում» ուղղագրական ռեֆորմի համար, բայց սրա մասին լռում են: Ինչո՞ւ:

(Ես ասածներս ապացուցելու համար էս գրքի չորրորդ մասում երկու հոդված եմ դրել, որ տպել եմ մեր հայտնի թերթերում: Էդ հոդվածները թեթևակի կրճատել եմ, բայց ասելիքը չեմ փոխել: Թող ընթերցողը կարդա ու ի՛նքը տեսնի, ճի՞շտ եմ ասում, թե՞ չէ):

Ես բանը, իհարկե, ազգային ողբերգությունն է, մեր ազգային երգ ու պարի ողբերգության պես, ու սա վայել չի ո՛չ «համաշխարհային փայլուն, տաղանդավոր ու աշխատասեր ու ստեղծող ազգին», ոչ էլ շարքային ազգին:

15. Հնամուկներն էս քերականական ողբերգությունից էլ, երգ ու պարի ողբերգությունից էլ, ո՛չ մի անգամ չեն խոսում: Չեն խոսում, չնայած ուղղագրության հարցը, քերականության ու երգ ու պարի էս ողբերգական հարցերի համեմատ, 20-30-երորդ հարց է: Չեն խոսում, որովհետև քերականությունից ու ազգային երգ ու պարից խոսելու համար լուրջ գիտելիք է պետք, իսկ իրենք էլ գիտելիքը չունեն:

Իմիջիայրոց, արևելահայերեն ու արևմտահայերեն գրական ոճերի քերականություններն իրարից շատ ավելի են տարբեր, քան ուղղագրությունները:

Բա հնամուկներն ինչո՞ւ չեն ասում, թե «էս քերականական տարբերությունները երկփեղկում կա՛մ պատակում են հայ ազգը, ու պիտի անցնենք «արևմտահայերենի քերականությանը», որ միաբանվենք ու դառնանք միասնական ազգ»: Բա շա՛տ հարց կա՞, որ սրանից ավելի լուրջ է ու հրատապ:

(Ճիշտն ասած, է՛ն հնամուկները, ովքեր չգիտեն, թե անհնար է, որ բոլոր հայերն էլ խոսեն արևմտահայերեն (կամ արևելահայերեն)՝ գրական ոճերով, պահանջում են, որ անցնենք էլ ոճերին, իսկ ոճանք էլ՝ որ դառնանք գրաբարին, բայց սրանց համարյա ոչ մեկը լուրջ չի ընդունում):

16. Հույժ նկատելի է, որ վերևի ցուցակի անկասկած կեղծ թեզերից մեկնումեկի հետևորդն անպայման մտն համարյա մյուս բոլոր «թեզերի» հետևորդն է: Ու էս «թեզերի» համախումբը, (ինչին եթե ասենք «հայագովություն», սխալ չի լինի), մեր ակնհայտ մացիոնալիստական «ազգային գաղափարախոսության» միջոցն ու ելությունն է, իսկ սա էլ, անպայման, հետաշինակուհե է, եթե ոչ կործանարար, ինչպիսի որ պատմությունն է մի քանի անգամ ցույց տվել: Սրա համար էլ հնամուկները շատ արագ են միաբանվում, ու վիթխարի վնաս են հասցնում կրթությանն ու գիտությանը:

Հայերի ամենամվիրյալ պաշտպաններից մեկը, ֆրանսիացի Անտուան Մեյեն, էս տեսակ մի առիթով ասել է.

«Իր գաղափարները տարածելու լավագույնը ձեռք` արդարություն պահանջող ժողովրդի համար՝ ճշմարտությունն ասելն է» (Անտուան Մեյեն, «Հայագիտական ուսումնասիրություններ», էջ 623):

(Անտեյակների համար ասեմ, որ ֆրանսիացի նշանավոր հայագետ, հնդեվրոպիտության հինգադիներինց մեկը՝ Անտուան Մեյեն, նորվեգացի Ֆրիտյոֆ Նանսենից հետո, է՛ն հազվագյուտ քչերից է, որ Եղեռնից հետո պաշտպանում էր հայերին իր ելույթներով ու գրածներով, ու մինչև կյանքի վերջն էլ մնաց հայերի ու հայերենի երկրպագուն: Տես հետո, ու նաև Անտուան Մեյեն - «Հայագիտական ուսումնասիրություններ», էջ 509-540):

Մենք շատ հեշտ ու հանգիստ ասում ենք. «Մենք փայլուն ազգ ենք, մենք աշխատասեր ազգ ենք, մենք աշխարհին տվել ենք Մաշտոց, Շիրակացի, Համբարձումյան» ևն:

Բայց ո՞ւմ լեզուն կգորի, որ ասի. «Ես փայլուն եմ ու տաղանդավոր», ևն:

«Մենք»-ով խոսելը հեշտ է, բայց չէ՞ որ դա հույժ ծիծաղելի է, իսկ երբ դառնում է «ազգային ավանդույթ», դատապարտելի է ու զզվելի: «Մենք»-ով խոսողին քվում է, թե իր ազգի մեծերի հանճարից ու դրանց հանճարեղ ու հերոսական գործերից իրեն էլ է մի քիչ բաժին հասնում: Բայց «Մենք»-ով խոսողը չարաչար սխալվում է:

Որովհետև եթե ինքը, հենց ինքը, ծույլ է ու անպիտան, ու ոչինչ չի արել, ուրեմն, հենց ինքը, հենց էդ «Մենք»-ով խոսողը, իր մեծերի ազգից չի: Ավելի ճիշտ, «Մենք»-ով խոսողը ոչ թե իր մեծերի ազգից չի, այլ ծույլ ու անբաններն ու անպիտանների ու սնափառ ու մեծամիտ ու գոռոզ մեծախոսների ազգից է, մի ազգ, ինչի անդամները խոսում են աշխարհի բոլոր լեզուներով: Սրա մասին ճիշտ ու զիպուկ է ասել Չեխ գրող Կարել Չապեկը, ով սա ասել է չեխագովների՝ առիթով:

ՄԵՆՔ ՄԵՆԱԿ ՉԵՆՔ ԿԱՄ ՉԵՆԱԳՈՎՆԵՐԸ  
Կարել Չապեկ, - Բառերի քննադատությունը: Բառերին՝ գեղի  
(բողբ ու իտալիկն իմն է - Մ. Հ.)

«ՄԵՆՔ»-Ն ՈՒ «ԵՍ»-Ը

«Մենք» բառն ասում ենք տազնապալի օրերին ու տազնապալի ձենով: Մարդկանց մեծագույն մասը կարծում է, թե «Մենք»-ը հանրության բառ է, սոցիալական է, ուժ տվող է, իսկ «ես»-ը՝ իբր առանձնության, անհատապաշտության, ինքնասիրահարության ու էգոիստության բառն է:

Բայց «Մենք» բառը մի մեծ թերություն ունի: «Մենք»-ն անորոշ է, ու անպատասխանատու: Օրինակ, շատ հեշտ ու հանգիստ ասում ենք. «Մենք փայլուն ժողովուրդ ենք»: Բայց ինչքան դժվար կասես. «Ես փայլուն մարդ եմ»:

Երևի ամեն չեխ էլ ասի. «Մենք վառ ենք պահում Հուսի պատգամները», բայց ո՞ւմ լեզուն կգորի, որ ասի. «Ես վառ եմ պահում Հուսի պատգամները»: «Մենք»-ը միշտ էլ իբր արյուն է թափում ու զոհում է իր ազատությունը՝ հանուն ընդհանուր բարօրության: Իսկ «ես»-ը, կներեք իհարկե, էդ արյունը չի թափել: Է՛ն օրերին երբ «Մենք»-երն իբր ինչ-ինչ բաներ էին զոհաբերում, «ես»-ը նստած էր տանը: «Մենք»-երը ծերից-ծեր հերոս են, ծերից-ծեր նահատակ են ու մարտիրոս, ու իրարու էլ ախպեր են:

«Մենք»-ն իբր հենց մեծահոգությունն ու զոհաբերությունն է, որ կա. «Մենք»-ն անընդհատ «պայքարում է», «Մենք»-ը պահանջում է: Բա՛:

Հա՛, ես էլ կարամ գլուխ գովամ էս ահագին սիրուն «Մենք»-ով, էս ահագին առնական, էս ահագին վսեմ ու ահագին վաստակավոր «Մենք»-ով, բայց ախր ես ինքս, ցավոք, լրիվ եմ զուրկ «մեր» էս գովական առաքինություններից: Ու մեկ էլ՝ լավ գիտեմ, որ ոչ մի գերկատարյալ «Մենք»-ն էլ մի կաթիլ անգամ չի ավելացնի իմ կարևորությունը, ու մի կաթիլ էլ չի շատացնի իմ շատ ու շատ համեստ վաստակի կշիռը: Ու ինձ ոչ մի «Մենք»-ն էլ չի փրկի, թե որ ինքս ոչ մի բան չեմ արել, թե որ օրինակ, մի տխրի գլուխ էլ ողորմություն չեմ տվել:

«Ես»-ը գործնական բառ է, գործի՛ բառ է, պարտադրո՞ղ բառ է, ու «ես»-ը «Մենք»-ից շատ ավելի համեստ է: «Ես»-ն անհանգիստ է ու ծանրակշիռ: «Ես»-ը համ խղճի՛ բառ է, համ էլ՝ գործի՛ բառ:

«ՄԵՆՔ Է՛Ն ԱԶԳՆ ԵՆՔ, ՈՎ ԱՇԽԱՐՀԻՆ ՏՎԵԼ Է...»

Մերոնց հաց ու ջուր չտաս՝ մեմակ թողաս, որ ասեն. «Մենք է՛ն ազգն ենք, ով աշխարհին տվել է՝ Յան Հուս, Յան Ժիժկա, Մմետանա. մենք Կոմենսկո՛ւ ազգն ենք»: Գերմանացիք էլ ասում են. «Մենք Գյոթեի, Կանտի, Բիսմարկի (ու չգիտեմ, թե էլ որ մեկի) ազգն ենք» (Չապեկը սա գրել է Առաջին համաշխարհայինի օրերին - Մ. Հ.): Գերմանացիք ասում են. «Մենք Գյոթեի ազգն ենք»:

Բայց ախր դու, հենց դու, որ գրում ու ասում ես էս բաները, ի՞նչ կապ ունես Գյոթեի հետ: Դու ինքդ Գյոթեին ինչո՞վ ես նման: Դու է՞լ ես Գյոթեի պես իմաստուն ու մարդկային, դու է՞լ ես Գյոթեի պես սիրուն Ֆրանսիան, դու է՞լ ես Գյոթեի պես ոտանավոր գրում, դու է՞լ ես Գյոթեի պես ողջ աշխարհին օրինակ:

Կամ էլ ասում են. «Մենք Շիլլերի ազգն ենք»: Բայց դու է՞լ ես Շիլլերի պես կոչ անում “In Tirannos” («Ընդդեմ բռնակալներին»), դու է՞լ ես Շիլլերի պես պահանջում. “Sir, geben Sie Gedankenfreiheit” («Միր, ազատություն տվեք մեզ»):

Մեկ-մեկ էլ ասում են. «Մենք Կանտի ազգն ենք»: Բայց դու է՞լ ես Կանտի պես համարում, որ միակ նպատակը մա՛րդն է, որ մարդը նպատակն է, ոչ թե միջոցը: Հա՛, Գյոթեն ու Կանտը, ու սրանց պես էլի մարդիկ՝ էդե՛լ են, բայց սրանց լինելության մեջ դու վաստակ ունե՞ս, դու առնչվո՞ւմ ես սրանց, ու սրանց մի ժամանակվա գոյությունն ավելացրե՞լ է քո, հենց քո՞ վսեմությունն ու կատարելությունը: Ու որ սրանք քեզնից առաջ են էլել, սրանց էս լինելությունից դու ավելի կուլտուրական, ավելի վեհ, ավելի մարդկային ու ողջ աշխարհին հայտնի ես դառե՞լ, հենց դո՞ւ, դու ի՞նքը:

Դու Վոլ՝ֆն ես (*Նացիզմի ավստրոհունգարական ազդեցիկ գաղափարախոսներից է – Մ. Հ.*), թե՞ Գյոթեն. Կա՞նտն ես, թե՞ ծախու գրչակ: Տո, դու ո՞վ ես, ո՞վ: Ախր, ա՛յ ընթերցող, թե որ էս թերթերում գրածներին հավատանք, պարտված Բելգիայի տարածքում մենակ սրանց պես գյոթեներն ու կանտերն են արշավել: Ու հենց որ արտասահմանը մեզ մի թեթև նախատինք է տալի, սկսում ենք օղբ դողդասցնել վեհապանծ անուններով:

Ա՛յ ընթերցող, գիտեմ, որ դու էլ ես համաձայն, որ մեր էս արարմունքով վարկաբեկում ենք մեր վսեմ նախնիներին: Ավելի լավ կլիներ, որ ոչ մի Ժիժկա էլ չունենայինք, քան թե Ժիժկայի ազգի մեջ էսքան վախկոտ ըլներ:

Պարզ չի՞, որ կարևոր չի, թե ի՞նչ ազգից ենք, թե որ ինքներս մի բան չենք: Ազգին անուն չի պետք, ազգին մա՛րդ է պետք:

#### ՉԱՊԵԿԻ ԷՍ ԱՍԱԾՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Հետաքրքիր է, որ Չապեկի էս գրածները փոքրաքանակ ազգերին շա՛տ են հատուկ, չնայած, ժամանակ առ ժամանակ, մեծաքանակ ազգերն էլ են խիստ «իրապարկում» էս տեսակ «ազգիզմով»: Փոխեք, օրինակ, Չապեկի էս գրածի մեջ «Մենք աշխարհին տվել ենք՝ Յան Հուս, Յան Ժիժկա, Մմետանա. մենք Կոմենսկո՛ւ ազգն ենք» խոսքերը հետևյալներով. «Մենք աշխարհին տվել ենք՝ Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Մետրոպ Մաշտոց: Մենք Գրիգոր Նայեկացո՛ւ ազգն ենք» (տարբերակ՝ «Վիկտոր Համբարձումյանի կամ Վիլյամ Մարոյանի ազգն ենք» – Մ. Հ.), ու կտտանաք ճիշտ մե՛ր նկարագիրը:

Էսօրվա աֆրիկյան նորաթուխ պետություններն էլ են էս տեսակ «ազգիզմի» թունդ հետևողը ու պաշտողը: Էռնեստ Գելներն իր *Ազգերն ու*

*ազգայնականությունը* գրքի մեջ վկայում է, որ էսօրվա նույնիսկ աֆրիկյան պետություններն են իրենց համար ազգային հզոր անցյալի ու ազգային ընտրյալության լեգենդներ հորինում, ու ազգային փոքրամասններին կոտորում են՝ հենվելով հենց էս լեգենդներին: Էս տեսակ գեներդիզմ էսօր սովորական բան է:

Հետաքրքիր է մի ուրիշ բան: Ազգիզմը, որ ծնվել է հեգելիզմից (գրականության ցանկից տես Կառլ Պոպերի գրքերը), շատ արագ ու հեշտ միավորվում է սոցիալիզմի հետ: Սրա փայլուն օրինակը գերմանական նացիոնալ սոցիալիզմն է (ու նաև մեր սեփականը), կամ էսօրվա քրդերինը:

Քաղքենին ու քաղքենու մտածողությամբ «մտավորականը» մի հասարակ բան չի հասկանում: Չի հասկանում, որ եթե էսօր քեզնից առանձին մի բան չես ներկայացնում ու խեղճ ու ողորմելի մի վիճակում ես, ու ծուլ ու անկարող ու սովորելու ունակությունից զուրկ մեկն ես, քո իսկ ժողովրդի փառավոր անցյալը քեզ ոչ մի կերպ չի արդարացնի ու չի օգնի: Ու երբ հպարտանում ես քո էդ փառավոր անցյալով, նախ՝ ծիծաղելի ես, ու երկրորդ, Չապեկի ասածի պես, վարկաբեկում ես քո իսկ վսեմ նախնիներին է՛լ, քեզ է՛լ:

Սովորելու ունակությունից էլ զուրկ ես, որովհետև քեզ հռչակել ես «Վիլյուն ու ընտիր ազգ»: Իսկ եթե «Վիլյուն ես ու ընտիր», էլ ի՞նչ կարիք ունես սովորելու: Թող ուրիշները քեզնից սովորեն, բա՛:

Պարզ չի՞, որ կարևոր չի, թե ի՞նչ ազգից ենք, թե որ ինքներս մի բան չենք: Ազգին, իրօք, անուն չի պետք, ազգին կարգին մա՛րդ է պետք:

#### ՀԱՄԱՈՒՆԵՐՆ ՈՒ ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հաղթում է ոչ թե է՛ն մարդը,  
ով ճիշտ բան է ասում,  
այլ է՛ն մարդը, ով բարձր է խոսում  
*Բերտրան Բասել*

17. Հնամուլների համար ճշմարտությունը նպատակ չի ու ոչ էլ միջոց: Դրանց հիմնական միջոցը՝ դրանց ահավոր եռանդն է: Իսկական գիտնական մարդը առհասարակ շատ է գրադված. մի բանը մի անգամ է ասում ու մի կողմ է քաշվում:

18. Հնամուլներն էդպես չեն: Դրանք անընդհատ ասում են ու գրում, և՛ ռանց մտախռովելու՝ իրենց ասածները ճի՞շտ են. թե՞ սխալ: Երբ մասնա-



գետը, ի վերջո, մի հողված է գրում ու ցույց է տալիս, որ հնամուկները գործից բան չեն հասկանում, ու ճիշտը ինքն է, հնամուկները դրա դեմ տասն են գրում, հարյուրն են գրում, ժողովներ են անում, միություններ են հիմնում, կինոներ են հանում (ու, համարյա միշտ, խոսում են կոպիտ, ու համարյա հայեցողական, բայց անպայման «ընտիր», այսինքն, խրթին հայերենով, տգետ «փաստարկներով», իհարկե, ըստ մոդայի):

Սրա պատճառն էլ է՛ն հանգամանքն է, որ հնամուկները շատ լավ գիտեն, որ իրենք ոչ թե գիտությամբ են զբաղվում կամ գիտության մասին են խոսում, այլ զբաղվում են քաղաքականությամբ:

Այսինքն, հնամուկները լավ գիտեն, որ իրենք գիտությունից հեռու են, ու որ իրենց միակ նպատակը, մարդկանց հոգու ամենամուրթ լարերին դիպչելով, էլ մարդկանց խաբելն է, թե իբր իրենք գիտնական են, ընդ որում, էլ մարդկանց շահերը պաշտպանող մի հազվագյուտ ազնիվ գիտնական:

**19.** Մեր բոլոր հնամուկներն ու «հայրենասիրությունը» քաղաքականության գեներ դարձրած գործիչները մի շատ կարևոր մոլորություն ունեն:

Սրանք կարծում են, թե մեր քաղաքակրթության ընթացքն անվերջ երկար է եղել ու անվերջ երկար էլ կլինի: Բայց մեր քաղաքակրթության տարիքը 10000 տարուց ավել չի, ու մարդ արարածն էլ է՛ն տեսակ մի բան դուրս եկավ, որ շատ հնարավոր է, որ քաղաքակրթության կյանքը (ամենալավատեսական գնահատականով) 500 տարի էլ չլինի (նույնիսկ եթե բնական աշխարհային աղետ կամ գլոբալ ատոմային պատերազմ չլինի):

Աստված չանի, որ սա իրականությանը մոտ լինի, բայց ազգի ապագայից խոսողը սա անտեսելու իրավունքը չունի:

Երբ էս հնարավորությունը հաշվի են առնում, «ազգային» կոչվող ծրագրերից շատ-շատերը (եթե ոչ բոլորը) դառնում են ոչ միայն անիմաստ, այլև ինքնախաբեական ու վնասակար: Երբ սա հաշվի են առնում, հասկանում են, որ պիտի գործողության ողջ ծրագիրը փոխես, ճիշտ է՛ն մարդու պես, ում ասում են, թե մի քանի ամիս հետո անբուժելի մի հիվանդությունից կմեռնի:

**20.** Բայց հնամուկները միշտ են գիտությունից հեռու, այսինքն, միշտ են դիվետանո: Սրանց կրթությունը, համարյա միշտ, «բանավոր» է, այսինքն, սրանք իրենց «գիտելիքները» քաղում են կամ սրանից նրանից լսած ասելուներով, կամ ոչ գիտական ամսագրերից ու թերթերից, ուրեմն, նաև իրենց պես անտեղյակ լրագրողներից (հայտնի է, որ թերևս չկա լրագրող, (զոհե Հայաստանում), ով իրոք գիտական տեղեկություններ ունենա: (Տես *F. A. Hayek, Fatal Cocci: ...*):

Հնամուկներից մեկը, մի ինչ-որ տեղից լսելով, թե բաբելական կամ շումերական արձանագրություններից մեկում կա Արատտա անունը, իսկույն

սա կապել է Ուրարտու-Արարատ անուններին, (մանավանդ որ էլ երկիրը Բաբելոնից ու շումերական պետություններից հյուսիս է եղել, ինչպես որ մի քիչ էլ Հայաստանն է հյուսիս) ու մի գիրք է գրել, պնդելով, թե էս Արատտա երկիրը «հայերի Ուրարտուն է», չմայելով է՛ն երկու հանգամանքին, որ ուրարտերենը նույնիսկ հնդեվրոպական լեզու չի, ու չմայած, որ գերմանացի Հայնրիխ Հյուբշմանն անառարկելի ապացուցել է, որ հայերենը հնդեվրոպական մայր լեզվի մի առանձին ճյուղն է, ինչով հայերն էսօր հպարտանում են, ու շատ են հպարտանում, որ էսքան առանձին ու յուրահատուկ են:

(Մինչև Հյուբշմանը գիտական աշխարհը պնդում էր, թե հայերենը իրանական ճյուղի մի բարբառն է, որովհետև հին հայերենի բառարմատների 35 %-ից ավելը իրանական փոխառություն է, ու սա անվիճելի էր ու է):

Էս պարոնը հիմա մեր հեռացույցում ու մամուլում ու մեր մնացած ազգայնականների շրջանում մեծ փառք ու հեղինակություն ունի, որովհետև սրանք բոլորն էլ հավատում են սրա է՛ն հայտարարությանը, թե ինքը, էս պարոնը, հայերի պատմությունը ձգել երկարացրել է մինչև մեր թվարկությունից առաջ 28-րդ դարը:

Ու քրած, թե Նիկողայոս Ադոնցի պես համաշխարհային հռչակ ունեցող պատմաբան ենք ունեցել, ով էլ տեսակ բան չի ասում, չորովհետև Ադոնցի պատմագիտությունը քառերի պատահական նմանության վրա հիմնված չի:

Թքած, թե ողջ աշխարհի գիտական հանրությունը էս պարոնի ասածները չի ընդունում (որովհետև էս պարոնն ստուգելի փաստեր չի նշում):

Բայց էս պարոնը, իմ կարծիքով, հիմա շատ զվարճալի մի վիճակի մեջ է, որովհետև նախելին Սովետի տարածքում կա մի ժողովուրդ, ով նորից Բաբելոնից ու շումերական քաղաք-պետություններից հյուսիս է, ու էս ժողովրդի անունն էլ *արատտ* է:

Էս ժողովրդի մասին Սովետի օրոք նույնիսկ կինո կա հանսած: Իմ ասած էս պարոնն էս կինոն, ցավոք, չի տեսել, որովհետև եթե տեսած լիներ, էս կարգի անլուրջ բաներ երևի չէր ասի, ու մարդկանց էլ չէր մոլորեցնի:

Ցավոք, էս կարգի «գիտական» բաները Հայաստանում հաճախակի են: Իմիջիայլոց, ասածս պարոնն էլ է՛ն հնամուկներից ու վերևի ասածս «թեզերից» շատերի (եթե ոչ բոլորի) ջատագովներից:

Իսկ իսկական մասնագետներն էլ, միամիտ-միամիտ, ուզում են վեճը գիտական հարկով տանեն ու շատ անգամ չեն էլ գիտակցում, որ դիվետանտի համար գիտությունը ոչ հասանելի է, ոչ էլ հեռաքրքիր: Գիվետանտին հեռաքրքրում է միայն իր շահը:

Չար լեզուներն ասում են, որ մեր «տեղական» հնամուտների աչքն Արտաքին Սփյուռքի մեծահարուստների գրպաններին է: Դե արի ու մի հավատա, երբ էսքան բան գիտես:

Հանուն էդ շահի՜ դրանք ինչ կարգախոս ասես, որ չեն ընտրի, մենակ թե էդ կարգախոսը հրապուրի, ինչքան հնարավոր է, ավելի մեծ թվով մարդու: Ահա դրանց կարգախոսներից մեկը. «Մի ազգ, մի պետություն, մի լեզու» («Գարուն», 1997, N 9), կամ «Մի ազգ, մի մշակույթ» - Երկրորդ (Համահայկական) Հայաստան-Սփյուռք Գիտաժողով, կարծես 2002-ին:

Բայց էս կարգախոսը ու սրա պեսերը շատ են եղել արդեն (Ֆիխտե, Հեգել, Հիտլեր, Գեբելս ևն, ևն): Ու չի եղել դեպք, որ էս կարգախոսը դրան հետևող ժողովրդին թշվառության չհասցնի: Որովհետև սա չհանդուրժողի՜ կարգախոս է, ոստիկանապետի՜ կարգախոս է, բռնակալի՜ կարգախոս է, հակամարդկային կարգախոս է, սատանայական կարգախոս է:

**Միակ ճշմարիտ ու ընդունելի կարգախոսը,  
ամեն մարդու համար,  
հետևյալն է.**

**«Ուրիշի ցավը քչացրու, եթե կարող ես, եթե չես կարող՝ գոնե մի ավերացրու: Ու հիշի՜, որ բոլոր մարդիկ էլ հավասար են օրեօրի առաջ»:**

**Իսկ ավելի կարճ.**

**«Ուրիշին մի՛ արա է՛ն բանը, ինչը չես ուզում, որ քե՛զ անեն»:**

**Հենց սրան են ասում «Ոսկե կանոն», ու հենց սա՛ է լիբերալիզմի, այսինքն, զեմոկրատիայի տեսության ողջ էությունը:**

**Մարդկային ողջ բարոյականությունը՝ սրա մեկնությունն է միայն:**

**Ու հզոր են է՛ն ժողովուրդները, ուրիշ քիչ թե շատ,  
հետևում են է՛ս կարգախոսին:**

**(Տես նաև՝ Ալ. Իսահակյան, «Ռարի Բար Հիլլեր» գրույցը):**

**ԷՍՕՐՎԱ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՆԵՆՈՒ ԿԱՐԻՔ ԿԱ՝**

**Եթե գործերի վիճակը վատ է,  
մտտ ապագայում անարայման էլի կվառանա:  
Մերֆիի օրենքի Չիզոլմի 2-րդ հետևանքը**

Էսօրվա ուղղագրությունը փոխելու կարիք՝ իրոք կա: Բարդը հեշտացնելու կարիք՝ մի՛շտ կա:

**Բայց ոչ էսօր:**

**Ու հարց է, թե ինչպե՞ս ու ե՞րբ:**

Էսօրվա ուղղագրությունը պիտի անփոփոխ թողնենք, բայց «և»-ը պիտի պահենք միայն շաղկապի համար ու մնացած տեղերը «և»-ի տեղը պիտի գրենք «եվ» (*տեղեվ, արեվ, բարեվ, ևն, ինչպես Մաշտոցն էր գրում (ե),* ու ինչպես Մեյնն է խորհուրդ տալիս. տես հետո): Սրանով էսօրվա «և»-ով

բառերի կոմայությունների տողադարձի ծրագրերի հարցն էլ թեթևացրած կլինենք:

**Երկրորդ** քայլով, **բայց ոչ էսօր**, մի օր պիտի հետ դառնանք Արեղյանի ուղղագրության խիստ տարբերակին, ինչը էսօրվանից շատ քիչ է տարբեր, բայց ավելի պարզ է:

Այսինքն՝ պիտի բոլոր լավոր **«վ»-երն** ու **«յ»-երը** գրենք, ու մեկ էլ էսօր արդեն ավելորդ **«է»** ու **«օ»** տառերը դեն ձգենք ու տեղները գրենք՝ **«ե»** ու **«օ»**:

Բայց քանի որ սրան հակառակվող շատ կլինի, սա ապագայի հարց է: Ուրեմն, թող առայժմ միայն «և»-երի տեղը գրենք «եվ», որ մեր մանուկները գրել կարողանան հեշտ սովորեն ու կարող սովորելիս՝ տերև-ը չարտասանեն տերյեվ: Սա էլ կոմայությունների տողադարձի ծրագրերի հարցը կթեթևացնեք: (Մանավանդ, եթե տողադարձելիս գաղտնավանկ ը-ն չգրվի ու մեկ տառանոց տողադարձը վերացվի):

Երրորդ: Ուրեմն, լավ կլինեք նաև, որ վերացնեինք տողադարձի ժամանակ գաղտնավանկ ը-ն գրելու կանոնը: Դիշուն ասած, սա ինքնին արդեն վերացած է, ու պիտի սա միայն օրինականացվի:

Չորրորդ: Լավ կլինեք նաև, որ վերացնեինք «ստուգաբանական» տողադարձը, ու մնաք միայն վանկատեղով տողադարձը, որովհետև շարքային մահկանացուն, այնուամենայնիվ, ստուգաբան չի:

Հինգերորդ քայլը, ինչի ժամանակը իսկի էլ չի եկել, է՛ն կլինի, որ հեռու ապագայում բաղաձայնները գրենք էնպես, ինչպես լսում ենք, ու գրենք նաև գաղտնավանկ ը-ն:

Օրինակ, գրենք՝ **«վարք, մարաք, բարցրը, բարց, դրքում, աստրը, լուկիզը, ըստիպել»** ևն: Որ էսպես գրեինք, էլ ոչ մեկը «ըսփռել» ու «ըսքողել» բառերը սխալ չէր կարդա ու չէր ասի՝ «սքքողել, սրփռել, սըփռոց»:

Մրանցից առաջին քայլն Արեղյանը չարեց է՛ն պատճառով, որ բաղաձայնների տեսանկյունից՝ մեր ուղղագրությունը շատ էր տարբերվելու արևմտահայերենի ուղղագրությունից:

Օրինակ, արևմտահայերենով ասում են՝ «պատը գանքնած է բաղի վրա», բայց հասկանում են՝ «բաղը կանգնած է պատի վրա»: Իսկ Արսևրատյան բարբառի ու արևմտահայերենի ձայնավորները նույնն են:

Բայց բաղաձայններն ըստ հնչողության գրելու ռեֆորմի ժամանակը չի:

Ժամանակը չի, որովհետև դեռ չի լուծվել էն հարցը, թե մեր գրական լեզուն ի՞նչ կերպարանք պիտի ունենա:

Այսինքն, ինչպես արդեն ասվել է, ելը չի ավարտվել մեր հանրահայտ «գրապայքար» կռիվածը:

Առհասարակ, մինչև էս վեճը չլուծվի, ճիշտ կլինի, որ ոչ մի ուղղագրական ռեֆորմ էլ չարվի, բացի «Լ»-ի ասածս փոփոխությունից ու տողադարձի ասածս կանոններից: Թե չէ ցանկացած ռեֆորմ էլ կլինի ինքնանպատակ:

Թող մենակ գրողներն էքսպերիմենտներ անեն, եթե կուզեն: Էդ տեսակ էքսպերիմենտները պետք են, ու դրանց հանդեպ պիտի լիակատար հանդուրժողություն լինի:

Ինչպես որ, իհարկե, մտքի, խղճի, խոսքի, ձայնի ու տեղեկություն ստանալու ու մյուս տեսակ ազատությունների նկատմամբ, լիովին համապատասխան մեր Սահմանադրությանը (ինչ լեզվով էլ դա գրված լինի):

**ՄԱՆԱՎՈՐ ՊԱՏԱԽՄԱՆ ՆՈՐԱՀԱՅՑ ՀՆԱՄՈՒ**

**ՊՐԸ ԼԵՄԱ ՈՐԲԵՐՑԱՆԻՆ**

(Եթե վերապահություն չկա, էս վերնագրի իմ բոլոր մեջ բերածները Ա. Վ. Գյուլբուրադյանի *Հայերենի ուղղագրության սրատմություն* գրքից են. ԵՊՀ-ի իրատարակչություն, Երևան, 1973)

**Եթե գործերի վիճակը էնքան է վատ, որ վատանալու էլ ոչ մի տեղ չկա, մտտ ապագայում, միևնույնն է, անպայման էլի՝ կփառանա:**  
*Սիրֆիի օրենքի Չիզոլմի 3-րդ հետևանքը*

Վերջերս մի հնամուլ էլ է հայտնվել, «Ռոտ Այլընդի» (այսինքն, Ռոդ Այլընդի) պրն Նշան Որբերյանը, ով հանդես եկավ «Առավոտ» օրաթերթում, հեղվածների մի ընդարձակ շարանով (տես «Առավոտ»-ի 2010 թվի հետևյալ համարները. 09.02, 11.02, 23.02, 27.02, 04.03, 06.03, 10.03, 25.03, 01.04, նաև 2009-ի 04.03-ը):

Էս նորահայտ հնամուլի գործունեությունն էնքան տիպական է բոլոր հնամուլներին, որ, ստիպված, պիտի մի քանի բան էլ սրա մասին ասեմ, մանավանդ, որ սրա էս հողվածների շարանը շատ է ոգևորել տեղական հնամուլներին, ու սրանք իսկույն մի կլինո են նկարել, ինչն իր բոլոր հատկանիշներով հույժ բնութագրական է հնամուլների գործելու ձևերին, ու հիմա մի քանի կուսակցություն ու նույնիսկ պետական գործիչ էլ է եռանդուն պայքարում, որ դառնանք հին ուղղագրությանը:

**ՈՒՂՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԵՖՈՐՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԱԲԵՂՅԱՆԸ ՇԱՏ ՇԱՏԵՐՆ ԵՆ ԽՈՍԵՒ ԴՐՆ ՈՐԲԵՐՑԱՆԻ ԱՐԱՏ «ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՊԵՍ «ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԻՑ, քայց պիտի մի քանի բան էլ ասվի էս պարոնի ասածների մասին, որ միամիտները չմտորվեն ու չմտածեն, բե էս նորահայտ «մարգարեն» միակն է, կամ իրոք ճիշտ է:**

Բացի սա, էս պարոնը հարցն էնպես է ներկայացնում, ասես մինչև ինքը ուղղագրությունը փոխելուց համարյա ոչ մեկը չի խոսել, իսկ հաստ ու կենտ խոսողներն էլ լրիվ դեմ են եղել փոխելուն:

21. Պրն Որբերյանը նախ պնդում է, թե Արեղյանի ռեֆորմից առաջ հայերը մեր ավանդական ուղղագրությամբ լրիվ միակերպ էին գրում, ու միայն Արեղյանի ռեֆորմից հետո է, որ գրում են էս (իր բառով ասած) «խեղագրված» ուղղագրությամբ:

Ճիշտ է, էս պարոնը մի քանի հեղինակի անուն է տալիս, որ գիտակամության ու տեղյակ մարդու տպավորություն թողնի, քայց չի ասում, որ ուղղագրական անարխիան ու դրա ռեֆորմի անհրաժեշտության ու զանազան ձևերի մասին վեճերը տևել են համարյա երկու դար: Ինչո՞ւ չի ասում:

Չի ասում, որովհետև եթե ասեր, բոլորին էլ պարզ կլիներ, որ ուղղագրությունը փոխելու նախաձեռնողը բոլորովին էլ Արեղյանը չի եղել, ու որ միակ հիմնական առարկողն էլ ինքը չի: Եղել են նաև ուրիշ նախաձեռնողներ, իսկ սրանցից ամենալուրջը՝ պատվելի Հայր Միաբան Գալուստ Տեր-Սյուրյանն է եղել, իսկ դեմ՝ շատ ու շատ է եղել:

Չնայած սրա մասին արդեն ահագին բան են ասել, քայց բերեմ ուղղագրության ռեֆորմի մասին գրողների մի կարճ ցուցակ էլ (ովքեր ուզում են հարցի մանրամասներն իմանան, թող կարդան Արեղյանի, Լեռնի ու Գյուլբուրադյանի ասածս գրքերը):

\*\*\*

19-րդ դարում ուղղագրության ռեֆորմից են խոսել Գ. Ս. Օտյանը (դեմ, 1851, Առաջարկութիւն աշխարհաբար լեզուի վրա), Գ. Այվազովսկին (դեմ, 1855, հետո՝ 1869, Ուղղագրութիւն լեզուիս հայոց), Ն. Արոնցը (կողմ. ասում է, թե «...գրաբարից վերցրած առանձին բառերին պիտի աշխարհաբարի ձև տալ, որ ձուլվեն-հալվեն նոր լեզվի մեջ: ...պիտի պահել հին ուղղագրությունը, օրինակ, բաղաձայնների ուղղագրությունը, ...բառավերջի յ-ն պիտի...գրությունից էլ հանել», Բանք., 131, 1904թ):

Հետո՝ Գաբրիել Ավետիքյանը, «Բազմավեպը», (1843), Մեղայանի «Ճառաբարը» (1858), Միքայել Չամչյանը, Ա. Բագրատունին (1852), Սալթաբյանը (1839, Համառոտագրութիւն փոքր քերականութեան գրաբար լեզուի հայոց), Սինաս Բժշկյանը (Քերականութիւն ռուսերէն-հայերէն), Արսեն Այտընյանը (1866, Ձեռնական քերականութիւն արդի հայերէն լեզուի), «Արշալույս Արարատյանը» (1850):

1853-ին լույս է տեսնում Նահապետ Ռուսինյանի «Ուղղախոսութիւն արդի հայ լեզուին» գործը, ինչը մեծ աղմուկ է հանում, ու ինչը պաշտպանում էր հնչական սկզբունքը: 1854-ին կազմվում է մասնախումբ (Օտյան, Ռուսինյան, Պալյան, Իսփիւնյան, Պարտիզպանյան): Պատրիարքաբանը Ռուսինյանի ձեռնարկն արգելում է:

«Արևելահայերենում ստեղծվում է երկու ուղղագրություն՝ ավանդական ուղղագրությանը հետևող գրական աշխարհաբար, ու հնչական բարբառախառն աշխարհաբար»:

Հետո՝ «Մեղու Հայաստանին» (1858-59), Խաչատուր քահանան (1839, Համառոտ Հայկազեան քերականություն), Գամառ Քաթիպան (ռեֆորմին կողմնակից, 1856), Արձակ և չափաքերական աշխատություններ, «գրէ այնպես, ինչպես որ խօսում են, ես խօսեմ այնպես, ինչպես որ գրում են-ասում է Քաթիպան՝ հետևելով Կարանզիմին):

Հետո՝ Խ. Արովյանը (հնչականին համարյա լրիվ կողմ, 1841-1858), «Հյուսիսա-  
փայլը» (Ս. Նազարյանց, Ս. Նալբանդյանց, ռեֆորմին կողմնակից, 1858), «Կռունկ  
Հայոց աշխարհին» (երկու ձևով էլ, 1860), Գ. Ալվերդյանը (երկու ձևով էլ, 1852), «Ա-  
րարատը» (1850), Մանդինյան (հնչականին կողմ, 1866, «Գարուն», ըստ Լեոյի՝ Խստեղ  
առաջին անգամ բաղաձայն **ու-ն** գրվեց վ-ով):

Հետո՝ Ա. Տեր-Հակոբյանը (հյունագիր), Ստ. Ստեփանեն (հնչական, 1866, «Հայ-  
կական աշխարհ», ամփոփում է բոլոր նախորդներին, վերջակետի տեղը՝ պահանջում  
է կետ. բայց մի տարի հետո հրատարվում է իր համարյա բոլոր սկզբունքներից), Հովհ.  
Շավարշը (1897), Հացունին, Ս. Ս. Գարրիեյանը, Գ. Բալասանյանը (1897), Ղ Աղա-  
յանը (1888, «Արյուր», 1890, 1891, «Մուրճ»), Ս. Սարգսյանը (1889, «Մուրճ»), նորից  
«Մուրճը» ընդդեմ Սարգսյանի, Լ. Մելիք-Աղանյանը, Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը,  
«Փորձը», «Մուրճը», «Մշակը», «Արյուրը», «Հասկերը», «Նոր դպրոցը», (1909), ևն, ևն:

Հաճախ նույն անսագրում, շաբաթաթերթում, օրաթերթում սպագրված տարբեր  
հոդվածները տարբեր ուղղագրություն են ունենում:

1880-90-ականներին ու հետո Մխիթարյանները մասամբ հետ են դառնում ավան-  
դականին: Բաղաձայն **ու-ն** վերականգնելու օգտին են խոսում՝ Վ. Հացունին (1897,  
«Բազմավեպ»), Գ. Մենելիշյանը (1910, «Հանդես անօրեան») ևն:

Էջմիածնի «Արարատ» ամսագրի 1892 թվի հուլիսի հաճախում կա թեմական վերա-  
տեսչի հայտարարությունը, որով արգելվում է նոր ուղղագրությամբ դասագիրք գործա-  
ծելը: Ղ Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» դասագիրքն արգելեցին հենց ուղղագրու-  
թյան համար:

Գրողներն ու պարբերականները գրում էին, ռեց ռեցում էին: Աղայանի հյունագրու-  
թյան պաշտպանն էր Ադունը (1904):

Կատարյալ խառնաշփոթ էր օտար անունների տառադարձության բնագավառը:  
Օրինակներ. «Ճեճօվա, Շվեճեճ, Նօուճեճիա, Վարսավիա, Պալարիա, Ճեճեճիճվօսք,  
Քիճվ, Մալսարօփօ, Պեճփեն, Տերճալիճ, Շվարցեճկերկ, Վիկթօն Հիճօ, Փօթթօզալ,  
Բիճթօզպուրկ, Փենճօփե, Պօճափարբեճիճ, Ճիճզեճիճ. Դաճուճի (Պրոսիա)», ևն, ևն:

«Արևելքի» 1888-ի մարտի 3-ի համարում լույս է տեսնում Պոլսի կրթական տեսուչ  
Կ. Ս. Յուրունյանի «Առաջարկությունը»: Սրա մեջ հեղինակը, չորս հետադարձ բայի  
հետ, առաջարկում է, որ արևմտահայերը **բ, գ, դ, ճ, զ, ս, կ, տ, ծ, ճ** տառերն արուս-  
տանեն արևելահայերի նման (ու ոչ թե՛ **պ, ք, թ, ց, չ, ք, գ, դ, ճ, զ**): Առաջարկը քննելու  
համար կազմվում է հանձնաժողով (իմիջիայլոց՝ արևմտահայերից՝ Խրիմյան Հայրիկ,  
Հովհ. Հյունքյարպեյենտյան, Խ. արք. Նարպեյ, Հ. Մերովբե, Վ. Տերվիշյան, Մարկոս  
(Ղարեկյան, Ս. Գարագաշյան, Գրիգոր Նիկողոսյան, Դավթթ. Քալանթարյան: Խրիմ-  
յան Հայրիկի փոխարեն գալիս է Գ. Մշակնույանը):

Հանձնաժողովը որոշում է, թե արևելահայերի հնչյունը սուրբ գրոց հնչյուն է: Հարցը  
պիտի առաջարկվեր լայն քննարկության, բայց սա չի արվում: Առաջարկի դեմ են լի-  
նում արևմտահայ մտավորականները (Տիրոյանը, Գարագաշյանը, Միսթյանը ևն):

Մենելիշյանը մի մեծ հոդվածում ասում է, թե «տարարտասանությունը չի խանգա-  
րում ազգի միությանը, բավական է, որ գրավորը նույնը լինի»:

1888-ին «Հանդես անօրեան» հրատարակեց Հայրիկի Հյուսիսային կարծիքը, ինչը  
չափազանց է կարևոր, քանի որ Հյուսիսային հայ նորագույն գիտական լեզվաբանու-  
թյան հիմնադիրն է (Հյուսիսային մասին կապի քիչ հետո):

Հյուսիսային ասում է, թե ... հին (գրաբարյան – Մ. Հ.) արտասանությունը պահելը  
գովելի չէ և ոչ էլ արևմտահայերի՝ այդ արտասանությունից հետոնալն է պարսավելի:

Հյուսիսային ասում է, թե ամեն մի լեզու էլ զարգանում է ու փոփոխվում, ու միայն  
մեծած լեզուներն են, որ ամփոփոխ են ու անշարժ: Լեզուն անընդհատ է փոխվում, ու  
փոխվում է խառնուրդի կամքից անկախ:

Հին ձևը, լրիվ իրավացի ասում է Հյուսիսային, միայն լեզվագետի համար նշանա-  
կություն ունի, ու ոչ թե խառնուրդ: Անտեղի է պահանջելը, որ արևմտահայերը փոխեն  
իրենց արտասանությունը, որովհետև սա անհնար է: Հյուսիսային ասում է նաև. «Արդի  
հայ...բարբառները պետք է խառնվեն այնպես, ինչպես որ կան»:

Ու օրինակ, Այտընյանը, Մենելիշյանը, Հովնանյանը, Սրվանձտյանը, Պետերնա-  
նը, Շրյոդերը, Հյուսիսային, Լազարյոն, ևն, ևն մաշտոցյան գրական լեզվին հարազատ  
էին համարում արևելահայերին ու ասում էին, թե տառադարձելիս պիտի արևելա-  
հայերին հետևենք, ու կարևորը միասնական գրավոր ստեղծելն է:

Լեռն գրում է, թե «ամեն մեկն իր համար էր գրում, իր սկզբունքով»: «Գրավոր ու  
բանավոր խոսքի միջև առաջացած ճեղքվածքը հանգստություն չէր տալիս բանասեր-  
ներին: Մի կողմից ձգում էին պահպանել սուրբ նախնայաց գրությունը, մյուս կողմից՝  
հեշտացնել այն՝ ժողովրդի համար դյուրընթացելի դարձնելու համար» – էջ 228:

«Գրական աշխարհաբարի ուղղագրությունը կարգավորելու փորձերի այս տարի-  
ներին, սակայն, կարծիքներն այնքան էին իրարամերձ, որ ուղղագրությունը կայա-  
նացնելու փոխարեն, նրան տարերային բնույթ էին տալիս»:

ԺԸ դարի երկրորդ կեսին անհամեմատ կայունացած գրությունը այժմ սպասում է  
տատանվել: Նույնիսկ Վենետիկում տարբեր միաբաններ տարբեր սկզբունքներով են  
գրում: «Բազմավեպը» հետևում է ավանդական ուղղագրությանը, Վենետիկի միաբան  
Ղուկաս վարդապետ Ինճիճյանը՝ հնչյունային, 1813-1819, («Եղանակ Բիզանդեան»,  
1824, «Դարապատում», սրանց մեջ կան համարյա բոլոր շեղումները գրաբարյանից):

Ես թվարկությունն ենք՝ և երկար, որ չեն շարունակում:

\*\*\*

22. Պրն Որբերյանը կամ հնամուկները պնդում են, թե «ոչ մի խելոք ազգ  
իր ուղղագրությունը չի փոխել»: Վերևում, աղբյուրները նշելով, ասել են, որ  
խտալացիք, իսպանացիք ու պորտուգալացիք 16-18-րդ դարերում կտրուկ  
են փոխել իրենց ուղղագրությունները, իսկ ֆրանսիացիք, անգլիացիք 1-  
գերմանացիք էլ անընդհատ ու քիչ-քիչ են փոխել իրենց ուղղագրություն-  
ները:

Կովկասում՝ վրացիների ուղղագրությունն էսօր համարյա լրիվ է հնչա-  
կան:

Հիմա թող ընթերցողն ինքն ասի, ո՞վ է խելագրողը, Աբեդյանը (ով եր-  
բեք սուտ չի ասել. ոչ մի փաստ չկա, որ Աբեդյանը երբևէ սուտ ասած լի-  
նի), թե՞...

23. Պրն Որբերյանը պնդում է, թե ուղղագրական ռեֆորմի պատճառով կտրվել ենք կամ կկտրվենք մեր արմատներից՝ նկատի ունենալով մեր հին գրականությունը:

Սա էլ նոր փաստարկ չի, ու սրանից մի քիչ խոսել եմ արդեն, բայց սրա առիթով միայն մի բան հիշենք: Ասել եմ, որ իտալացիք, իսպանացիք ու պորտուգալացիք 16-18-րդ դարերում ոչ միայն թողեցին իրենց գրաբարները, այլև կտրուկ փոխեցին իրենց ուղղագրությունները:

Հիմա ես ժողովուրդները կտրվեցի՞ն իրենց արմատներից: Իտալացիների «արմատները», այսինքն, իտալացիների հին՝ վաղ ու ուշ շրջանների լատիներենով (իրենց գրաբարով) գրած գրականությունը, անկասկած, շատ ավելի շքեղ ու հզոր է, քան հայերինը: (Հիշենք, օրինակ, Օվիդիոսին, Վերգիլիոսին, Հորացիոսին, Տիտոս Լուկրեցիոս Կարին, Կիկերոնին, Սենեկային, Պլինիոսներին ու բազում ուրիշ հեղինակի):

Մի փաստը միայն՝ շա՛տ է բնութագրական: Մեր թվարկության 4-րդ դարում, այսինքն, հայերենի այբուբենն ստեղծելուց մեկ դար առաջ, Հռոմում կար 28 հանրային գրադարան: Հիմա ի՞նչ, իտալացիք կորցրե՞լ են իրենց արմատները:

Կա մի ուրիշ հետաքրքիր հանգամանք:

Էսօրվա ֆրանսիացիները Կեսարի օրերին խոսում էին գալլերեն, այսինքն, կելտական խմբի բարբառներով: Հետո էս գալլերին նվաճեցին գերմանական ֆրանկները: Հետո էլ սրանք բոլորն էլ թրդեցին իրենց մայրենի լեզուները՝ գալլերենն ու ֆրանկերենը, ու խոսեցին էն օրերի լատիներենով, ինչի ժառանգն էսօրվա ֆրանսերենն է:

Նույն ձևով՝ հին իսպանացիք՝ իբերները, մոռացան իրենց լեզուն (ինչի մասին էսօր համարյա ոչ մի տեղեկություն չունենք, բացի մի քանի տեղանունից) ու էլի խոսեցին լատիներենով:

Նույնը վերաբերում է էսօրվա ռումինացիներին, ովքեր երևի, մեծ մասամբ, դակերի հետնորդներն են: Ուրեմն, էսօրվա ֆրանսերենը, իսպաներենը, պորտուգալերենն ու ռումիներենը լատիներենի բարբառներն են:

Հիմա ի՞նչ, էսօրվա ֆրանսիացիները, իսպանացիները, պորտուգալացիներն ու ռումինները ինքնություն չունե՞ն, կորցրե՞լ են իրենց ինքնությունը: Էս օրինակը պիտի որ ցույց տա, որ «ազգային ինքնություն» կոչվածը երևի լեզվով (կամ միայն լեզվով) չի որոշվում: Երևի էս նախնու կարևորն է՞ն հանգամանքն է, թե էլ ազգն ի՞նչ է ավել քաղաքակրթությանը, ու էսօր ի՞նչ տեղ ունի էլ քաղաքակրթության մեջ):

24. Պրն Որբերյանը պնդում է, թե.

«...մեր ժողովուրդի երկու հատուածների խզումը եւ խորթացումը սկսուեց լեզուական բաժանումով (արեղեանական ուղղագրութեան հիմքի

վրայ) եւ մերձեցումն ու միասնականացումն էլ պիտի լինի լեզուական հիմքի վրայ... այս հիմնախնդրի վրայ առ այսօր թաքու է դրուած Հայաստանում եւ այնտեղ կազմակերպուող համահայկական կրթական խորհրդաժողովներում կամ գրողների համագումարներում»:

Էս ի՞նչ խզում ու խորթացում է, որ Հայաստանում ոչ մեկը չի լսել: Գուցե մեր մտավորականներից ոմանք համարում են, որ մենք ու իրենք, «արեղեանական ուղղագրութեան հիմքի վրայ, խզվել ու խորթացել ենք իրարից»: Թող էլ ժամանակ անկեղծ ասեն, ու անպայման մի ճար կգտնվի:

Օրինակ, ճարերից մեկն էն բանը կլինի, որ իրենք էլ գրեն իրենց հայրենիքի ուղղագրությամբ, որ չխզվեն ու չխորթանան:

Թե խոսքը արևմտահայ ու արևելահայ գրական ոճերի («լեզուների») խզվելու ու խորթանալու մասին է, սա սկսվել է 1850-ականներին, երբ արևմտահայերը, փոխանակ դարաբաղցիների, սալմաստցիների, համշենցիների, Շիրակի ու Գուգարքի, ու հայերի շատ հատվածների պես գրական ոճ («լեզու») համարեին Արարատյան բարբառը (ինչն իր տեղադրությամբ էլ, կազմությամբ էլ՝ գրաբարով գրանցված Արարատյան բարբառի ժառանգն է), իրենց գրական ոճերի հիմքն ընտրեցին Պոլսո (այսինքն, Գրիմի հայերի) բարբառն ու համառությամբ գրեցին դրանով:

Էս տեսակ բան մի անգամ եղել է:

Ռուսների բելոռուսական ու ուկրաինական հատվածները, փոխանակ գրեին Մոսկվայի խոսվածքով, գրեցին իրենց տեղական (բելոռուսական ու ուկրաինական) բարբառներով, բայց սրանց տարբերությունը ռուսերենից («Մոսկվայի խոսվածքից») ավել չէր, քան Դարաբաղի բարբառի (կամ առավելս՝ Սալմաստի ու Համշենի բարբառների) տարբերությունն Արարատյան բարբառից:

Սա շատ ձեռնառու եղավ բելոռուս ու ուկրաինացի արկածախնդիր ու անջատական քաղաքործիչներին, ու սրանք հայտարարեցին, թե իրենք ռուս չեն, թե իրենք ուրիշ ազգ են (մի մասը՝ թե բելոռուս են, մյուսը, թե ուկրաինացի են): Ու հիմա սրանք մի ազգի փոխարեն ունեն նրեք ազգ ու էրեք պետություն:

25. Ու երբ պրն Որբերյանը մեր կառավարությանն ասում է, թե.

«...նկատի ունենք Սփիւռքի բոլոր միութիւնների ու կազմակերպութիւնների ներկայացուցիչներից կազմուած մի դաշնային (ֆեդերալ) մարմնի ստեղծումը, որը կը ներկայացնէր ամբողջ Սփիւռքը, ինչպէս նաեւ համասփիւրթեան հայագէտ-լեզուագէտների մի խորհուրդի կազմաւորելը», ի՞նչ ունի մտքին: (Սա՞ չի «փշխանությունը մասնակի յուրացնելու ցանկու-

թյուն» կոչվածը): Ի՞նչ պիտի անեն ռուսական, իրանական ու ուրիշ Սփյուռքների հայերը: Պիտի սոխպված խոսեն արևմտահայերեն ու նորից գրեն «դասական» կոչող խառնիճադանց ուղղագրությամբ:

Ի՞նչ է, արևմտահայերենով խոսող ու ասածս ուղղագրությամբ գրող Սփյուռքը սփյուռք է, իսկ մնացածները սփյուռք չե՞ն:

Սալմաստի բարբառով խոսողները, լեռնականացիները, ջավախցիները, դարաբաղցիները, դափանցիները, համշենցիները, սասունցիները հայ չե՞ն, ուղղագրություն ունենալու արժանի չե՞ն:

Թե՞ միայն արևմտահայերենի «դասական» ուղղագրությամբ գրողներն «արմատ» ունեն, ու մնացածներն «արմատից» գուրկ են:

### ՀԱՅՆՐԻՒ ՀՅՈՒՐՄԱՆ

(Ես ներքևի տվյալները, մեծ մասամբ, հետևյալ գրքից եմ. Հայնրիխ Հյուբշման, «Հայագիտական ուսումնասիրություններ»):

Յոհան Հայնրիխ Հյուբշմանը (1848-1908) ծնվել է Գերմանիայի Էրֆուրտ քաղաքում, Խաչատուր Աբովյանի անհետանալու տարին, ու ապրել է 60 տարի: 1865 թվին ընդունվել է տեղի «միջնակարգ դպրոցը, ինչը երկու տարի հետո ավարտել է «իբրև քաջ աշակերտ»: 1868 թվին ընդունվել է գիմնազիա ու մեկ տարի հետո նույն հաջաությամբ ավարտել է սա:

1868-ին սովորել է Ենայի համալսարանում, որտեղ ծանոթացել է հայերենին, իսկ հետո Շլայխերի (Շլայխերի) մոտ ուսումնասիրել է հնդիկ-գերմանական լեզուների համեմատական քերականությունը: Հաջորդ երեք տարին սովորել է Թյուրինգենի, Լայպցիգի ու Մյունխենի համալսարաններում:

Մյունխենում, 24 տարեկանում, մասնակցել է սրևեյյան բանասիրության մի մրցության, ուր զեկուցել է իր *Ջրադաշտական մի երգ* գործն ու հաղթել է, ու ստացել դոկտորի գիտական աստիճան: Նույն թվին հրատարակել է հայերենի մասին իր առաջին գործը՝ *Հոլովների ուսմունքը*:

Հաջորդ տարին՝ սկզբում հրատարակել է մի քանի հետազոտություն՝ *Ավետադատի* (հին իրանցիների սրբազան գրքի) մասին, իսկ հետո էլ՝ իր ես գրքի մեկնությունները:

1875 թվին Հյուբշմանը Լայպցիգի համալսարանին է ներկայացրել *Մեքենայի պատմության* մի հատվածի մեկնությունը, ինչի մեջ պարզել է հայ եկեղեցու դրությունը, ու նշանակվել է Լայպցիգի համալսարանի արիական (այսինքն, իրանական կամ հնդիկ-իրանական) լեզուների դասախոս:

Հյուբշմանի առաջին դասախոսությունը Լայպցիգի համալսարանում վերաբերում էր ավեստական պարսկերենի ու հին հայերենի հոլովածների համեմատությանը: Հենց նույն տարին Հյուբշմանը հրատարակում է իր *Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում* գործը, ուր առաջին անգամ հիմնավորել է հայերենի հնդեվրոպական առանձին լեզու լինելու դրույթը:

Նույն տարին հրատարակել է *Հայերենի տառադարձության ու արտաբերության մասին* գործը, իսկ հաջորդ տարին՝ *Իրանահայկական Karta, Kert, gird անունների մասին* հոդվածը: Էդ տարին տպագրում է իր *Հայկականքի* 1-ին գործը՝ Տերվիշյանի *Հին հայերենի ք հնչյունը* գործի գրախոսությունը:

Հաջորդ տարի դասախոսելու հրավեր է ստացել երկու համալսարանից՝ Գրացի ու Ստրասբուրգի, ու նշանակվել է երկրորդի համեմատական լեզվաբանության պրոֆեսոր ու էդ պաշտոնը վարել է մինչև կյանքի վերջը:

Նույն տարին էլ, 29 տարեկան, ստանում է Ստրասբուրգի համալսարանի (extraordinary) պրոֆեսորի թեկնածուի կոչում՝ իր փայլուն դասախոսությունների համար: Էդ տարին հրատարակում է իր *Հայկականքի* երկրորդ ուսումնասիրությունը, իսկ Լոնդոնում տպագրում է իր *Հայկական քանասիրություն* հոդվածը:

1880-1881-ին հրատարակում է *Հայկականք* շարքի նոր ուսումնասիրությունները, իսկ 1882-ին էս շարքի *Հայերենի ու հնդգերմանական լեզուների քերականական ընդհանրությունների մասին* հոդվածը, ու *Իրանյան ու հայկական լեզուների տառադարձության մասին* աշխատությունը:

1883-ին լույս է տեսել Հյուբշմանի *Հայերենի ստուգաբանության հիմունքների* առաջին պրակն ու *Իրաներենի հնչյունաբանության մասին* հոդվածը, իսկ հաջորդ տարին լույս է տեսնում իր *Պարսկականքը*, 1985-ին՝ *Հնդգերմանական ճայնական համակարգի մասին* աշխատանքը: Էդ տարին Հալլեի համալսարանից դասախոսելու հրավեր է ստացել, բայց կրթության միաբարբը թույլ չի տվել:

1887-ին հրատարակել է *Օսեթերենի անվանակազմությունն* ու *Օսեթերենի ստուգաբանությունն ու հնչյունաբանությունը* աշխատությունները:

1890-ին մերժել է համեմատական լեզվաբանության ու արևելյան լեզուների դասախոս լինելու Վիեննայի համալսարանի առաջարկը: 1892-ին հրատարակել է իր *Հայկականքի* չորրորդ մասը, հետո էլ՝ *Մեմական փոխառյալ բառերը հայերենում* հոդվածը:

1893-ին հրատարակել է իր երկրորդ *Պարսկականքը*, *Հայկական հատուկ անունները* փոքրիկ գործը, ու գրախոսություն՝ Գ. Գյուլեմբյաբյանի *Յուզակ Մյունխենի պալատական և պետական գրադարանների հայկա-*

կան ճեռագրերի գործի մասին: 1895-ին հրատարակել է իր *Արհմերը և հայերը* հոդվածը, *Պարսկականքի* հերթական շարքը, հետո իր մեծագույն գործի՝ *Հայերենի քերականության* առաջին մասը:

*1897-ին հրատարակել է իր եւ գործի երկրորդ մասը:* Նույն էս թվին մասնակցել է արևելագետների միջազգային 11-րդ համաժողովին, ուր առաջին անգամ բաժին է հատկացվել Իրանի ու Հայաստանի մշակույթին, իսկ Հյուբշմանն էլ ընտրվել է էդ բաժնի պատվավոր նախագահ:

1898-ին հրատարակել է իր *«Հայերենի հնչյունական օրենքների ժամանակագրության մասին»* հոդվածը:

1901-ին հրատարակել է իր *Հայկականքի* հերթական շարքը:

1903-ին գրախոսել է Անտուան Մեյեի *Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծը* գիրքը: Էդ տարին եկել է Ս. Դազար կղզին, ու էստեղ Հյուբշմանին ընտրել են Հայկական ճեմարանի պատվավոր անդամ: Հրատարակել է *Յ. Կարստի Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը* գործի գրախոսությունը:

1904-ին հրատարակել է իր *Հին հայոց տեղանունները* գործը:

1906-ին հրատարակել է իր վերջին *Հայկականքը*:

Վախճանվել է Ֆրայբուրգում, կիսատ թողնելով իր մեծագույն գործը՝ *Հայերենի քերականությունը*:

Հնդեվրասպագիտության երկրորդ ռահվիրայից, Ֆրանց Բոպպից, մինչև Հայնրիխ Հյուբշմանը, համարյա բոլոր հնդեվրոպագետները, թե՛ հայ, թե՛ օտար, սյնդում էին, թե հայերենը հին իրանական մի բարբառ է, որովհետև հին հայերենի արմատների մեկ երրորդից ավելը հին իրանական բարբառներից է:

Հյուբշմանն առաջինն էր, ով իր հանճարեղ գիտական ինտուիցիայով գլխի ընկաւ, որ հին հայերենի ու իրաներանի արմատների էս ընդհանրության պատճառը փոխառությունն է, որ հին հայերն էդ ընդհանուր արմատները փոխ են առել ավելի զարգացած իրանցիներից, ու սա ապացուցեց:

Ապացուցեց ու ցույց տվեց, որ հայերենը հնդեվրոպական լեզվախմբի մի առանձին ու ինքնուրույն ճյուղն է, ու իր դիրքով էլ մի կողմից իրաներենի ու սլավ-լիտվանական խմբի արանքն է, մյուս կողմից՝ վերջինի ու եվրոպական խմբի արանքն է: Ուրեմն, հայերենը կապում է հնդիրանական ու սլավլիտվական ճյուղերը եվրոպականներին:

Մեր հայագուվները (տես հետո) հրճվանքով են ընդունում Հյուբշմանի է՛ն ապացույցը, թե հայերենն ինքնուրույն լեզու է: Բայց սրանցից շատերին դուր չի գալիս, որ հայերն իրենց արմատների մոտ 35 %-ը իրանցիներ-

րից են վերցրել: Ու քափ ու քրտինք կտրած «ապացուցում են» (իհարկե, առանց Հյուբշմանի գիտելիքներն ու հանճարն ունենալու), թե էդ արմատներն իրանցիներն են հայերից փոխ առել:

Հայնրիխ Հյուբշմանն իր ողջ գիտակցական կյանքը նվիրեց հայերենի ու հայ մշակույթի ուսումնասիրությանը: Երբ Անտուան Մեյեն նամակով խնդրեց Հյուբշմանին, որ օգնի, որ Աճառյանը Լայպցիգի համալսարանում դասախոսություն լսի, Հյուբշմանը, տեսնելով, որ Աճառյանն ուսման փող չունի, Աճառյանի հետ իր տանը վեց ամիս անվճար պարապեց, ու մինչև իր կյանքի վերջն օգնում էր Աճառյանին իր խորհուրդներով:

Երկու տարի առաջ Հյուբշմանի մահվան 100-ամյակն էր: Հայաստանում ո՞վ հիշեց Հյուբշմանին:

Հայնրիխ Հյուբշմանն ու Անտուան Մեյեն «նորագույն» հնդեվրոպագիտության «երիտասարդ քերականների» դպրոցի հիմնադիրներն ու կարկառուն ներկայացուցիչներն են: Հայաստանում երիտքերականների ամենակարկառուն ներկայացուցիչները, այսինքն, Հյուբշմանի ու Մեյեի հետևորդները, Հրայր Աճառյանն ու Մանուկ Աբեղյանն էին, առաջինը ստուգաբանության բնագավառում, երկրորդը՝ քերականության:

Հնամուլներն ու որբերյանները այ է՛ս կարգի մարդկանց են փնտվում:

## ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՆՖՈՐՄՆ ՈՒ ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵՆ

Դեղի 27ի վրա չպիտի գրեն. «Մանուկներից հետո պահեք». պիտի գրեն. «Մեծերից հետո պահեք»:

*Հիվանդին տրվող 6 խորհրդից 3-րդը*

26. Պրն Որբերյանն ասում է, թե հռչակավոր հնդեվրոպագետ Անտուան Մեյեն դեմ է եղել ուղղագրությունը բարեփոխելուն: Մա ճիշտ չի:

Էստեղ պրն Որբերյանը մի «ֆոփկ» է անում, ինչից ինքը մի քանի անգամ է օգտվում, ու ինչից հնամուլները շատ ու շատ են օգտվում:

Մրանք, մեկի խոսքը վկայախոչելիս, էդ խոսքից կտրում հանում են մի մաս, ու չեն բերում սկիզբը կամ շարունակությունը, կամ էլ հետագայում հայտնած մի նոր կարծիքը, որտեղ շատ անգամ պարզվում է, որ առաջին անգամ ասածի հակառակն է նկատի առնված:

Ասվածը բացատրելու համար բերեմ Մեյեի 1913 թվի նամակը Աբեղյանին (Անտուան Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, էջ 32):

(Բացի սա, քիչ հետո բերում են նաև Անտուան Մեյեի համատուր կենսագրությունը, որ պարզ լինի, թե Մեյեի կարծիքն ինչքան է կարևոր):

*«Հարգելի Պարոն,*



«Մտացառու հայերենի ուղղագրության բարեփոխման վերաբերյալ շրջաբերականը:

«Օտարազգին չի կարող այսպիսի խնդիրներին միջամտել:

«Ես ինձ բույլ եմ տալիս միայն նշելու, որ այնպիսի ազգի մեջ, որտեղ չկա որոշ ուղղագրության պարտադրելու ընդունակ հեղինակություն, ամենախելոք բանը ավանդական ուղղագրությանը բավարարվելն է, որովհետև միջակ, բոլորի կողմից ընդունված ուղղագրությունն ավելի լավ է, քան ուղղագրական անիշխանությունը:

«Անշուշտ մաստառավոր կղինք վերացնել է և օ տառերը, որոնք ավելորդ են, իսկ յ-ն գրել այն դեպքում, երբ յուր արժեք ունի»:

(Սա նշանակում է, որ Մեյնի խորհուրդ է տալիս, որ բառի սկզբի **հ** լավոր **յ-ն** փոխարինվի **հ-ով** ու բառի վերջի չլավոր **յ-ն** չգրվի, լրիվ հակառակ էսորվա հնամուկների ուզածին - Մ. Հ.):

«Սակայն ամերիաճշտ է հետևել ավանդական սովորություններին: Բաղաձայնից հետո չպետք է գրել (ասիլ)։ քա չափազանց հակառակ է ավանդությունը և հետևարար տգեղ է. եթե ուղղենք, ասվիլ գրեաձևն է հարմար: Մի խոսքով, բարեփոխման մեջ ես ավելի շատ վտանգ եմ տեսնում, քան օգտակարություն:

«Ընդունեցե՛ք, խնդրեմ, իմ անձնվեր, ամենասրտազին զգացմունքները:

Ա. Մեյն

«15 ետկտեմբերի, 1913թ.

«Փարիզ - 14, Ալեզիա փ., N 65»

Մեյնի ես նամակից պարզ երևում է, որ Մեյնն վախենում է կառավարական հեղինակավոր իշխանության բացակայությունից, ու որ Մեյնն, ըստ էության, կողմ է ուղղագրությունը բարեփոխելուն, ու ոչ թե հակառակը, ինչպես որ «խեղագրված» ներկայացնում են պրն Որբերյանն ու Էնամուկներից շատերը:

Սա ապացուցվում է նաև Մեյնի 1927 թվի մարտի 19-ին Ուղղագրական բարեփոխության հանձնաժողովին գրած ընդարձակ նամակով (տես նույն էջը): Ահա էլ նամակի սկիզբն ու հետագա բովանդակությունը:

«Սկզբունքային մի հարց կա, որ պետք է վճռել. արդյո՞ք հայերենը գրելու եմ այնպես, որպես երբեք գրված չի եղել, թե՞ հաշվի են առնելու ավանդությունը՝ հարմարվելով հանդերձ արդիական պահանջներին: Կարծում եմ, որ պետք է հաշվի առնել ավանդությունը:

«Ահա 1500 տարուց ավելի է, որ հայերենը գրվում է, և եին ու ԺԹ (19-րդ - Մ. Հ.) դարի բնագրերը իր:պահանջություններ են, որ ազգը պետք է հաշվի առնի»:

(Ուրեմն, Մեյնն պնդում է, որ 19-րդ դարի ուղղագրական փոփոխություններով գրված բնագրերն էլ պիտի հաշվի առնվեն - Մ. Հ.):

«Պետք է, որ ընթերցողը շատ անվարժ չգա իրեն, երբ ուզենա կարգալ բարեփոխություններից առաջ եղած հեղինակների երկերը»:

Սրանից հետո, անցնեմ Մեյնի նամակի մանրամասներին՝ հետևելով հանձնաժողովի դրած համարներին:

Հանձնաժողովի առաջարկները	Մեյնի պատասխանները
1. Բառասկզբում գրել <b>է</b> և ոչ թե <b>ե</b> , ինչպես <b>եզ, էութիւն, էդիտը...</b>	1. <b>Է.</b> այս կետի մասին տարակույս չկա:
2. Բառի մեջ ձայնավորից առաջ գրել <b>է</b> և ոչ թե <b>եյ</b> , ինչպես՝ <b>բույսէական, մարգարէութիւն...</b>	2. <b>Է.</b> այս կետի մասին տարակույս չկա:
3. Բառավերջում գրել <b>է</b> , ինչպես՝ <b>մարգարէ, գիտէ:</b>	3. <b>Է.</b> քանի որ <b>է</b> կա, ինչո՞ւ իզուր վերացնել ավանդությունը:
4. Բառի մեջ բաղաձայնից առաջ միշտ գրել <b>ե</b> , ինչպես՝ <b>հանդես, հրավեր, սեր, կես:</b>	4. <b>Ե.</b> համաձայն եմ:
5. Բայական թեքման ժամանակ հիմ <b>է-նք</b> պահել, ինչպես՝ <b>գիտէր, գիտէր, գիտցէր:</b>	5. <b>Ե.</b> հավատարիմ մնալու համար 4-րդ կետում գրված սկզբունքին: Պետք է ունենալ միանգամայն ընդհանուր կանոններ:
6. Բառասկզբում գրել <b>ե</b> և ոչ թե <b>յւ</b> , ինչպես՝ <b>ես երկու եզ:</b>	6. <b>Ե.</b> ավանդությունը շատ պարզ է: Ամեն մարդ կհասկանա:
7. Բառասկզբում գրել <b>օ</b> և ոչ թե <b>ու</b> , ինչպես՝ <b>օր, օգոտ, օր:</b>	7. <b>Օ.</b> տարակույս չկա:
8. Բարդությանց և անանցանց մեջ պահելով ստուգաբանական ճշտությունը, գրել <b>օ</b> կամ <b>ու</b> , ինչպես՝ <b>անօգոտ, անօրինել, անողոր...</b>	8. <b>Ո.</b> հավատարիմ մնալու համար ընդհանուր կանոնին:
9. Բառամիջում գրել միշտ <b>ու</b> , ինչպես՝ <b>Պողոս, կոչիկ...</b>	9. <b>Ո.</b> կասկած չկա:
10. Բառավերջում գրել <b>ու</b> , ինչպես՝ <b>արք, Սկո, Սաք:</b>	10. <b>Ո.</b> » »
11. Բառասկզբում գրել <b>օվ</b> և ոչ թե <b>ուվ</b> , այսպես՝ <b>օվ, օվկիանոս, օվագիս:</b>	11. <b>Օվ.</b> տրամաբանությունն է պահանջում:
12. Հունական օմեգա տառը արտահայտել <b>ու</b> տառով բառամիջում և <b>օ</b> տառով բառասկզբում և ոչ թե <b>ով</b> , ինչպես՝ <b>Թոնաս, Օսաննա, Օվկիանոս:</b>	12. <b>Ո</b> բառամիջում, <b>օ</b> բառասկզբում համաձայն ընդհանուր սկզբունքին:
13. Բառասկզբում գրել <b>ու</b> և ոչ թե <b>վո</b> , ինչպես՝ <b>որդի, որ, որ:ազգ:</b>	13. <b>Ո.</b> ըստ ավանդության:
14. Ամեն դեպքում գրել <b>վ</b> և ոչ թե մերթ <b>ւ</b> , մերթ <b>վ</b> , ինչպես՝ <b>ախագ, ազնիվ, հողված, նվաստ:</b>	14. <b>Վ</b> կասկած չկա: <b>Վ-ի</b> և <b>ւ-ի</b> տարբերակումն աղև աղմուսատ է: Ես կզրկեի <b>անքել</b> կն:



Հանձնաժողովի առաջարկները	Մեյի պատասխանները
15. Ամեն դեպքում գրել <i>այ</i> , ինչպես՝ <i>բոյս, բոյս, կոյր</i> , և ոչ թե <i>բոյս, բոյս, կոյր</i> : Ծանոթ. <i>ոյ</i> գրությունը միշտ կարդալ <i>օյ</i> , ինչպես՝ <i>կոյտղի...</i>	15. <i>Ույ-ը</i> հնարավոր է, բայց կարծում եմ <i>ոյ-ը</i> բավականին հստակ է: Այս կետում կցանկանայի պահպանողական լինել, բաղաձայնից առաջ <i>ոյ-ը</i> երկինաստ չէ:
16. Յ գիրը բառակերպում վերածել <i>հ-ի</i> , ինչպես՝ <i>հարմար, հոյի, հույի</i> :	16. Հ կապած չկա: <i>Յ-ժ</i> պահելը շատ վատ կլիներ:
17. Բառակերպում «անձայն յ-ճ» դեմ գցել որտեղ կարելի է, ինչպես՝ <i>ես, առաջ, եսսն</i> :	17. Ես կգրեի <i>ես</i> ևն:
18. Բառավերջում «անձայն յ-ճ» չգրել, ինչպես՝ <i>վկա, ծառա, պաշտոնեա</i> :	18. <i>Վկա</i> ևն:
19. «Անձայն յ» չգրել <i>ա</i> և <i>ի</i> ձայնավորների միջև, ինչպես՝ <i>վկաի, ազգաի</i> :	19. Սա առաջ է բերում <i>վկաի</i> գրությունը, տրամաբանորեն, եթե հնչում են <i>vkai</i> , բայց <i>վկայի</i> , եթե հնչում են <i>vkai</i> .
20. <i>Ի</i> գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ <i>միտքիմ...</i> և ոչ թե <i>միտքում...</i>	20. <i>Իտ, իւ</i> :
21. <i>Եա</i> գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ <i>կեանք...</i>	21. <i>Եա</i> :
22. <i>Եօ</i> գրությունը վերածել <i>եո</i> , ինչպես՝ <i>եօք, արքեօք</i> և ոչ թե <i>յօք, արքեյօք</i> , կամ՝ <i>եօք, արքեօք</i> :	22. <i>Եո</i> : Սկզբումը այդ է պահանջում:
23. [Ու, ի, եա երկրաբառերի համար առաջարկել նոր տառեր]:	23. Նոր տառերը բոլորովին ավելորդ են. <i>ու-ճ իւ-ճ, եա-ճ</i> հստակ են, և դրանք փոխելով ոչինչ, չենք շահի:
24. Եվրոպական բառերի կրկնակ բաղաձայնները հայերենի մեջ պահել, ինչպես՝ <i>կողնկոնի, սուպարատ, մաստա...</i>	24. Պետք է հավատարիմ մնալ հայկական արտասանությանը, և ուր որ պարզ է արտասանվում, պետք է պարզ բաղաձայններ դնել:

**«Մի խոսքով, ես կենտեկի ինչյունական սկզբունքին՝ սկանդոլոյնից հետևաբար միայն անհրաժեշտության դեպքում և սահմանելով հեշտությանը կենտեկի ընդհանուր կանոններ»:**

Թե որ մեկնումները Մեյի ես երկու նամակը կարդալուց հետո էլ ասի, թե Մեյն *կարուկ* էր դեմ ուղղագրական ռեֆորմին, ուրեմն, էդ մարդն ուղղակի չի ուզում ճիշտը տեսնի: Որովհետև ես նամակներից պարզ երևում է, որ Մեյն դեմ է եղել միայն ու միայն ծայրահեղ փոփոխություններին, ինչին Աբեղյանն էլ էր դեմ: (Ուրիշ հարց է, թե ո՞վ էր ավելի լավ տեղյակ «ուղղագրական իրադրությունից» թե՛ Հայաստանում, թե՛ Միջուրքում, որ իմանար, թե ռեֆորմի ո՞ր մի տեսակն է հնարավոր ու ցանկալի):

Մեյն, ըստ էության, համարյա լրի՛վ է կողմ հանձնաժողովի առաջարկներին, (որոնք, իմիջիայլոց, Աբեղյանի առաջարկների համարյա մի

տարբերակն էին), այսինքն, կողմ է էսօրվա ուղղագրությանը: Հանձնաժողովի 24 առաջարկից 18-ին պատասխանում է համաձայնությամբ, ասելով՝ «համաձայն եմ, անկասկած, կասկած չկա, տարակույս չկա, այո», իսկ երկուսին տալիս է տատանվող պատասխան:

Ուրեմն, Մեյն էսօրվա ուղղագրությանը համարյա լրի՛վ է կողմ, ու վերջում էլ ավելացնում է, թե «ես կենտեկի ինչյունական սկզբունքին՝ ավանդությունից հետևաբար միայն անհրաժեշտության դեպքում և սահմանելով հեշտությամբ կենտեկի ընդհանուր կանոններ», ինչը լրի՛վ է հակառակ հնամուլների ուզածին:

Հիմա թող ընթերցողն ասի, թե ո՞վ է իսկական խեղագրողը:

### ԱՆՏՈՒՆ ՄԵՅԵՆ

(Ըստ 47-ի, էջ՝ 733-737. 742-786)

Անտուան Մեյն ծնվել է 1866 թվի նոյեմբերի 11-ին, Ֆրանսիայի Մուլեն շրջկենտրոնում: Հայրը նոտար էր, բայց սեփական հողամաս ուներ:

Մեյն իրեն միշտ համարել է գյուղացի:

1872-ին ընդունվում է տեղի լիցեյը, ու միշտ գերազանց է սովորում:

1877-ին մահանում է Մեյնի մայրը: 1884-1885-ին Փարզի Լուի-լը-Գրան լիցեյում պատրաստվում է համալսարան ընդունվելու, ու մրցույթով ընդունվում է Սորբոնի համալսարանն ու դառնում է պետական թռչակառու, պարտավորվելով, որ դասավանդելու է Մեմ-Լուի գիշերօթիկ լիցեյում:

1887-ին, փայլուն քննությունից հետո, ստանում է լիցենցատի կոչում:

1889-ին՝ Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ-կելտագետ:

1889-ին, մեկ տարով արձակուրդ վերցրած հռչակավոր լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրն իր տեղը 28-ամյա Մեյնին է նշանակում՝ Ժնևի Բարձրագույն Դպրոցի հասնմատական քերականության դասախոս:

1890-ից սկսում է ռուսերենի ու հին սլավոներենի ուսումնասիրությունը, հետո, մինչև 1891-ը, Վիեննայի Միխթարյան միաբանությանում, Հայր Հակոբոս Տաշյանը Մեյնի հետ հայագիտություն է պարապում:

1891-ի մայիսից մինչև համարյա ամառվա վերջը եղել է՝ Թիֆլիսում Էջմիածնում, Երևանում, Ստամբուլում, ու հայերեն ուսումնասիրի ու կենդանի հայերենը սովորի: Ծանոթացել ու բարեկամացել է Գալուստ Տեր-Մկրտչյանի հետ:

1891-ի աշնանից (Լուի Դյուվոյի հետ, ու մահացել է 1903-ին) վերջնական փոխաբիցում է Ֆերդինանդ դը Սոսյուրին:

1894-ին, Ջենն Դարմատեների մահից հետո նշանակվում է նաև իրանական լեզվի դասախոս:

1897-ին դարձել է գիտությունների դոկտոր հին սլավոններենի մի հետազոտության համար:

1899-1900-ին Կուլեժ դը Ֆրանս բարձրագույն դպրոցում փոխարինել է հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության դասախոս Միշել Բրելին:

1902-1905-ին Արևելյան կենդանի լեզուների դպրոցում, մահացած Օգյուստ Կարիերի փոխարեն, դասավանդել է գրաբար ու արդի հայերեն:

1902-ին, Հայր Հակոբոս Տաշյանի խնդրանքով, վեց շաբաթում շարադրել է *Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ* աշխատանքը, ինչը լույս է տեսել 1903-ին, իսկ 1936-ին, հետմահու, լույս է տեսել սրա բարեփոխած հրատարակությունը:

1903-ի հուլիս-օգոստոսին նորից է եղել Հայաստանում՝ Շուշում, Թիֆլիսում ու Էջմիածնում, որ շփվի հայերի ու հայերենի հետ ու ձեռագիր ուսումնասիրի: Շուշում երկու շաբաթ մնացել է Աճառյանի տանը:

1908-ին ընտրվել է Ֆիննա-ուգրական ընկերության անդամ:

1908-ին՝ Շվեդիայի Գյոտեբորգի ակադեմիայի անդամ:

1908-ին՝ Պրահայի Ֆրանսուա-ժոզեֆ ակադեմիայի անդամ:

1910-ին՝ Բեռլինի համալսարանի պատվո դոկտոր:

1913-ին՝ Նորվեգիայի Գիտությունների ակադեմիայի անդամ:

Նույն թվին հրատարակել է իր *Հին հայերենի տարրական դասագիրքը*:

1914-ին՝ Լեհաստանի Գիտությունների ակադեմիայի անդամ:

1918-ին՝ Իռլանդիայի Արքայական ակադեմիայի անդամ:

1918-ին՝ Հոլանդիայի Արքայական ակադեմիայի անդամ:

1914-ին՝ Բելգիայի Գիտությունների ակադեմիայի անդամ:

1920-ին, իր աշակերտ Ֆրեդերիկ Մակլերի հետ, հիմնել է Ֆրանսիայի Հայագիտական ընկերությունն ու սրա հայագիտական հանդեսը (կար մինչև Մեյեի կաթվածը, 1933-ը), որ Եվրոպայի հայերը հայագիտությանը զբաղվելու ազատ հնարավորություն ունենան:

1920-ին՝ Դանիայի Գիտությունների ու գրականության արքայական ընկերության (ակադեմիայի) անդամ:

1920-ին՝ Չեխոսլովակիայի Գիտությունների ու արվեստների ակադեմիայի անդամ:

1920-ին՝ Սերբիայի Արքայական ակադեմիայի անդամ:

1921-ին դարձել է Փարիզի Սլավոնագիտության ինստիտուտի նախագահն ու Պոլ Բուայեի հետ հիմնել է *Մլավոնագիտական հանդեսը*:

1922-ին՝ Շվեդիայի Ուպսալայի ակադեմիայի անդամ:

1922-ին՝ Պարիզի համալսարանի պատվո դոկտոր:

1923-ին՝ Ռուսիայի Արքայական ակադեմիայի անդամ:

1924-ին՝ Ֆրանսիայի ակադեմիայի անդամ:

1926-ին՝ Ֆինլանդիայի Գիտությունների ակադեմիայի անդամ:

1927-ին՝ Matisa Speka-յի պատվավոր անդամ:

1928-ին՝ Լատվիայի համալսարանի պատվավոր անդամ:

1928-ին՝ Լոնդոնի ասիական ընկերության անդամ:

1928-ին՝ Դուբլինի Տրինիտի Քոլեջի պատվո դոկտոր:

1928-ին՝ Ի. Մյարիյնենի հետ կազմակերպել է Լեզվաբանական առաջին համաժողովը (Լեհաստանում):

1928-ին՝ Օքսֆորդի համալսարանի պատվո դոկտոր:

1930-ին դասախոսություններ է կարդացել Նյու-Յորքի Կոլումբիայի համալսարանում:

1931-ին դասախոսություններ է կարդացել Աթենքի համալսարանում, որ խորհուրդ է տվել, որ կազմեն հունարեն բարբառների ատլասը:

1932-ին՝ Բրյուսելի համալսարանի պատվո դոկտոր:

1933-ին՝ Աթենքի ակադեմիայի անդամ:

1935-ին՝ Ամերիկյան արևելագիտական ընկերության անդամ:

1936-ին Ֆրանսիական ակադեմիան Մեյեին է շնորհել իր բարձրագույն «Օգիրիս» մրցանակը:

1936-ին՝ Պատվո լեզուների ասպետ:

1936-ի սեպտեմբերի 21-ին վախճանվել է:

Մեյեն հիանալի դաշնակահար էր, բայց ի տարբերություն Ռոմեն Ռոլանի, ելույթ չէր ունենում: Չափազանց ազնիվ էր, ուղղամիտ, նրբանկատ, չէր տանում զրախոսությունը, պատրաստ էր օգնելու երիտասարդ լեզվաբաններին: Մեյեի աշակերտներն են՝ լեզվաբաններ Հրայր Աճառյանը, Ֆրեդերիկներ՝ Կարիերն ու Մակլերը, Էմիլ Բենվենիստը ու այլոք: Իր ողջ կյանքում աշխատել է կանգնած, որովհետև թոքերից թույլ էր:

Մեյեն հայերի ջերմ պաշտպանն էր, ու թե՛ եղևնի օրերին, թե՛ դրանից հետո՝ անընդհատ իր ելույթներով պաշտպանել է հայերի գործը:

Հենց Անտուան Մեյեն է հայտարարել, որ «ամեն ոք, ով շահագրգիռ է հայերենով ու հայագիտությամբ, պիտի անպայման ուսումնասիրի Մանուկ Աբեղյանի 1908-ին հրատարակած *Հայերենի շարահյուսությունը* դպրոցական դասագիրքը, որովհետև սա լուրջ գիտական աշխատություն է»:

(Անտուան Մեյեի հոբելյանը Հայաստանում նշել են միայն 1966-ին, Պետական համալսարանի մակարդակով):

Ահա թե ո՛վ է Մեյեն:

Իսկ էսօր, հնամուլ որբերյանները հայիտյուն են «խեղազիր» Աբեղյանին, վկայակոչելով Մեյեին:

ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՈՒ ՄԱՌՆ ՈՒ ԱԴՈՆՅԸ

Մխարկերը հատուկ է մարդուն, բայց մեղքն  
որիչի վրա բարոյնը՝ ավելի՛ է հատուկ:

*Յակոբի օրենքը*

27. Պրն Որբերյանը (մյուս հնամուտներն էլ) նույն ձևով էլ խեղագրում է  
Նիկողայոսներ՝ Մառի ու Աղոնցի կարծիքները:

Մառը, իրոք, 1913 թվին անվերապահ դեմ է եղել ուղղագրական ռեֆորմին,  
բայց հետո հանձնաժողովին գրած իր կարծիքի մեջ (1926-27թթ, տես  
Մ. Աբեղյան, *Երկեր*, հատ. Ը, էջ 656) պաշտպանել է Աբեղյանի ուղղագրական  
առաջարկների մեծ մասը: Պրն Որբերյանն ու բոլոր հնամուտներն  
ես վերջին փաստը երբեք չեն ասում, բայց առաջինն էլ՝ չեն մոռանում:

Պրն Որբերյանն էնպես է ներկայացնում, թե Աղոնցը կտրուկ դեմ է եղել  
ուղղագրության ռեֆորմին: Բայց ահա թե Գյուլբուրդյանն ինչ է ասում  
իր գրքում (էջ 203) Աղոնցի մասին.

«Գրաբարը վերականգնելու ծայրահեղ կարծիքներին «Մշակը»-ը պատասխանում է մի այլ  
ծայրահեղությամբ (արդեն ասել եմ, որ էս ծայրահեղությունն իրագործեցին իտալացիք,  
իսպանացիք ու պորտուգալացիք – Մ. Հ.):

«Նա <Աղոնցը> գրում է, թե աշխարհաբարը, իբրև ինքնուրույն, անկախ  
լեզու, պիտի առաջնորդվի իր օրենքներով, <Ա> վնասակար է գրաբարը  
իբրև հիմք, առաջնորդ ընդունելը, որովհետև դրանք իրար հակառակորդ են  
ձևերի, դարձվածների, ոճերի մեջ»:

«Քննադատելով այս երկու ծայրահեղ սկզբունքները՝ Ն. Աղոնցը միանգամայն  
առողջ դիրքերից ընդգծում է, որ աշխարհաբարը որքան գրաբարի  
զավակն է, այնքան էլ եղբայրն է, երկուսն էլ հայ ժողովրդի ծնունդն են:  
<Ընդգծում է, որ> Թերամտություն է ասել, թե մեռածից ոչինչ պետք չէ  
կենդանացնել:

«Հին լեզվի բառագանձը պիտի օգտագործել նոր լեզվի շինության վրա,  
գրաբարից վերցրած բառերին պիտի աշխարհաբարի ձև տալ (ինչն  
ատանց էլ բառերի ուղղագրությունը փոխելու, անհնար է, ու ինչը, համարյա  
եբրեք, չի արվում – Մ. Հ.), որ ձուլվեն հավելն նոր լեզվի մեջ: Քանի  
տվյալ հնչյունափոխությունը չի հասել ավարտուն ամբողջության, պիտի  
պահել հին ուղղագրությունը, օրինակ, բաղաձայնների ուղղագրությունը»:

(Չմոռանանք, որ Աղոնցը, այնուամենայնիվ, պատմաբան էր, ու առանց  
հիմքի է պնդում, թե բաղաձայնների հնչյունափոխությունը չի հասել  
ավարտուն վրձակի – Մ. Հ.):

«Ընդհանուր երևույթ է, որ բառավերջի յ-ն համը է, չի արտասանվում,  
սա ավարտուն հնչյունափոխություն է, ուստի պիտի այդ յ-ն գրությունից  
էլ հանել»:

Ավելացնեն, որ «Աղոնցը 1903 թվից հետո, հետևելով Ղ. Աղայանին, իր  
«Քանրերի» Բ գիրքն արդեն ավանդական ուղղագրությամբ չի գրում, ու  
անցնում է հյունագրությանը»:

Տեսնում ենք, որ Աղոնցը երբեք էլ ուղղագրության ռեֆորմին կտրուկ  
դեմ չի եղել: Աղոնցը դեմ է եղել ռեֆորմի առաջարկներից (իր կարծիքով)  
ծայրահեղներին միայն:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ

(մեծ մասամբ, ըստ Հայկական հանրագիտարանի)

Նիկողայոս Գևորգի Աղոնցը (1871-1942, իսկական ազգանունը՝ Տեր-  
Ավետիքյան) ծնվել է Չանգեզուրի Բոնակոթ գյուղում (հիմա Միսիանինն է):

Մովսերել է Տաթևի ծխական դպրոցում, հետո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում,  
հետո՝ Թիֆլիսի ռուսական գիմնազիայում (1892-1894):

Աղոնցը ոսկե պարզևանշանով ավարտել է Պետերբուրգի համալսարանի  
արևելյան լեզուների ու պատմա-բանասիրական ֆակուլտետը (1899):  
1899-1901-ին բյուզանդագիտություն է ուսումնասիրել Եվրոպայում  
(Մյունխեն, Փարիզ, Լոնդոն, Վենետիկ):

1903-ին եկել է Թիֆլիս ու վրացերեն է ուսումնասիրել, հետո աշխատել է  
Էջմիածնի մատենադարանում:

Աղոնցը հենց էլ տաղիներին է գրել իր *Հայաստանը Հուտոնիանոսի  
դարաշրջանում* մագիստրական փայտուն թեզը, ինչը 1909-ին պաշտպանել է  
ու դարձել Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ:

Աղոնցը 1916-ին *Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները* գործի համար  
ստացել է բանասիրության դոկտորի աստիճան ու պրոֆեսորի կոչում:

Նույն թվին եղել է Էջմիածնում, Մուշում, Էրզրումում, մասնակցել է Վանի  
հնագիտական արշավախմբին: 1917-ին ընտրվել է Լազարյան ճեմարանի  
պատվավոր հոգաբարձու ու պրոֆեսոր:

1920-ին գնացել է Լոնդոն, հետո՝ Փարիզ: 1920-ին հրավիրել են Բրյուստելի  
համալսարանը, որ լատախոսի, իսկ հետո ղեկավարել է էլ համալսարանի  
հայագիտության ամբիոնը:

Աղոնցը մահացել է Բյուստելում:

Ադոնցի ձեռագրերը հանձնել են Փարիզի Նուպարյան մատենադարանին, գրքերը՝ Բրյուսելի հայ գաղութին:

Ադոնցը թողել է մոտ 80 հայերեն, ռուսերեն ու ֆրանսերեն կարևոր աշխատություն՝ նվիրված՝ հայերի պատմությանն ու հին գրականությանը, հայ-բյուզանդական ու հայ հունական հարաբերություններին ու քանասիրությանը, ասասպելաբանությանը, կրոնին ու լեզվաբանությանը:

Ադոնցի կարևոր գործերն են. *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Հայ հին շինականությունը (1927), Արուստ Դիոնիսայ Բերականի և հայ մեկնութիւնը նորին, Պատմական ուսումնասիրություններ (1948):*

Ադոնցն արդեն գրում էր հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, բայց հասցրեց սրա միայն առաջին հատորը, հնագույն շրջանը, ինչը լույս է տեսել *Հայաստան* վերնագրով:

Էս գործի մեջ Ադոնցը քննում է Նաիրի ցեղերի ու Ուրարտական պետության մասին տեղեկություններն ու ցույց տալիս, որ սրանց մշակույթը ժառանգեցին միայն հայերը, ու որ հայ ժողովրդի կազմավորվելու շրջանում նաև սրանք են եղել էն հիմնական բաղադրիչներից մեկը, ինչը լուծվել է հայերի մեջ ու հետո առանձին նախարարական տներ է դարձել:

Սրանով Ադոնցը Նաիրի ցեղերի ու Ուրարտուի պատմությունը դարձրեց հայերի նախնի միավորներից մեկի պատմությունը, ուրեմն, նաև հայերի պատմությունը, ու հայ ժողովրդի պատմությունը երկարացրեց մոտ 15 դարով:

Ադոնցի աշխատությունները (ինչքան ես գիտեմ) հայերեն լրիվ չեն թարգմանվել:

Երբ կարդում ես Ադոնցի *Հայաստանը* կամ *Հուստինիանոսը*, ուղղակի հիանում ես Ադոնցի գիտական մեթոդի հստակությամբ ու անաչառությամբ, զսպությամբ ու լրջությամբ, ու հետևել խորը ցավով ավստում ես, որ մեր էսօրվա պատմագիտությունն իր մակարդակով զիջում է Գալուստ Տեր-Սլրտչյանի, Արեղյանի, Ադոնցի, Մանանդյանի, Լեոյի ու մեր մնացած պանծալի քանասերների գործերի մակարդակին ու անաչառությանը:

Մեր էսօրվա որբերյանները ու իշխանյանները ոնց որ մրցեն, թե ո՞վ ավելի «շատ» «կապացուցի», որ հայերն ամենահինն ու «ամենապուրավոր» են:

Լավ ու կարևոր գործն անպատիժ չի մնում:  
*Ժողովրդական ասացվածք*

28. Պրն Որբերյանն ասում է, թե Մ. Արեղյանն իր 1913 թվի *Մեր ուղղագրության մասին* զեկուցման մեջ (Երկեր, հատ. Ը, էջ 330-367) դեմ է եղել ուղղագրության ռեֆորմին:

«Նոյնիսկ ինքը՝ Արեղյանը իր բարեփոխումից մի քանի տարի առաջ իր յոթելենական զեկույցի մեջ շեշտել է, որ միանգամայն ընդմիշտ պիտի հրաժարուել ուղղագրության մեջ հիմնական փոփոխություններ անցկացնելու ծայրայեղ մտքից»:

Մա հաստատա է սխալ ու նաև անհեթեթ է ( նույն էս միտքը վերագրելով նաև ուրիշ հեղինակներին, պրն Որբերյանն ու մյուս հնամուկները միշտ էլ սխալ են մեկնում (ինչպես արդեն համոզվեցինք)), որովհետև ռեֆորմին դեմ լինողը ռեֆորմի ծրագիր ու սրա մասին ընդարձակ զեկուցում չէր կազմի ու կարդա, եթե, իհարկե բացարձակ անսկզբունքային չլիներ:

Այնինչ, Արեղյանի սկզբունքայնությունը ոչ մեկի կասկածը (բացի հնամուկներինը) չի հարուցում, չի հարուցում նույնիսկ Արեղյանի ավելի լուրջ հակառակորդներինը): Պրն Որբերյանն էստեղ էլ է կիրառում իր հիմնական «ֆոխը»: Չի ասում, թե իր զեկույցի մեջ, մի քանի տող հետո, Արեղյանն ինչ է ասում:

Ճշմարտությունը հետևյալն է: Արեղյանը, իրոք, ասում է.

«...հենց սկզբից պիտի ասեն, որ եթե որևէ փոփոխություն պիտի մեր ուղղագրության մեջ ավելի խառն դրություն մտցնի և մեր գրական լեզուներն իրարից ավելի հեռացնի, ավելի լավ է, որ չլինի: Այս պատճառով այս խնդրին պետք է շատ մեծ զգուշությամբ մտենալ» (էջ 330): «...մի անգամ ընդմիշտ պիտի հրաժարվել ուղղագրության մեջ հիմնական փոփոխություններ մտցնելու ամեն ծայրահեղ մտքից, որով ցանկանում են (ցանկանում էր, օրինակ, Մ. Մալխասյանը, բայց մինչև ուղղագրության ռեֆորմը – Մ. Հ.) մեր ուղղագրությունը խիստ հնչաբանական դարձնել...» (էջ 338):

«...Ուրեմն՝ բաղաձայնների (բացի բաղաձայնական ու-ն, ւ-ն, ի-ն ու յ-ն – Մ. Հ.) հին ուղղագրությունն անձեռնմխելի պիտի մնա, և այս ոչ թե այն պատճառով, որ այդպես ենք կամենում, այլ նրա եանար, որ ամեն այդպիսի փոփոխություն աննպատակ կլինի և ավելի մեծ դժվարություններ առաջ կբերի, քան ելած դրությունը:

«Դա կատեղծի, իրավ որ, մի նոր «բարեդրական խառնակություն»: Եվ եթե մենք ուզում ենք գրական լեզու ունենալ, և այն, որ արևմտյան աշխարհաբար իմացողի համար հասկանալի լինի արևելյան աշխարհաբարը, կամ ընդհակառակն, մենք պետք է պահենք այդ պայմանը, ինչպես պահել ենք ցարդ:

«Այս սկզբունքը ամենից կարևորն է մեր ուղղագրության համար: ...հիմնական մեծ փոփոխություն մտցնել անհնարին է մեր ավանդական ուղղագրության մեջ, այլ հնարավոր են միայն մասնակի փոփոխություններ, որոնց թիվը մեծ չի կարող լինել, քանի որ այդպիսի փոփոխությունները պիտի լինեն միայն ձայնավոր տառերի ուղղագրության մեջ, այն էլ այն տառերի, որոնց գրությունը համապատասխան չէ...<մեր> երկու գրական լեզուների ընդհանուր դպրոցական արտասանությանը (էջ 341)»:

Մի հատված էլ բերեն Արեղյանի 1913 թվի էս գեկույցից: Եթե այրն Որբեղյանն ու մյուս հնամուկներն իրոք տիրապետեին գիտական մեթոդին, ու իրենց ելույթներից առաջ բարեխիղճ ուսումնասիրեին իրենց ելույթին վերաբերող գիտական գործերից գոնե հիմնականները, էս հատվածն իրենց շատ դուր կգար, ու սա կդարձնեին իրենց հիմնական կովանդ:

Բայց էլ մարդիկ գիտությունից շատ են հեռու, ու իրենց հողվածների նյութերը քաղում են միայն թերթերում իրենց կողմնակիցների գրած անհիմն հողվածներից ու զանազան բանավոր ասեկոսներից: Ահա ասածս հատվածը (ընթերցողին զգուշացնեն, որ էս խոսքն Արեղյանը գրել է 1913 թվին, երբ Արևմտյան Հայաստանը կար, ու ոչ մեկը չէր էլ մտածում, որ սարսափելի գեոցոգիդ կլինի):

«...մեզնից ամեն մեկն էլ, ինչքան կուզե, թող խորհի ու գրի մեր ուղղագրության մասին, բայց երբեք իրեն չհամարի մի ակադեմիայի հավասար և ինչ որ ինքը մտածում ու նիշտ է համարում, երբեք իրավունք չունի ...անմիջապես գործադրելու:

«Ավելի լավ է ուղղագրությունը լինի սխալ ու դժվար, բայց միակերպ: ...Փոփոխություն, իմ կարծիքով, պետք է և կարելի է անել արոշ չափով. բայց եթե որևէ փոփոխություն պիտի վերացնի մեր ուղղագրության միությունը և մեր երկու գրական լեզուներն իրարուց հեռացնի, ավելի լավ է, որ չլինի:

«Իսկ մեր ամեն՝ իրենց մի-մի ակադեմիա կարծող անհատների փոփոխություններին ուրիշ բան չի վիճակված, բացի մի նոր խառնակնթոր դպրություն մտցնելը մեր ուղղագրության մեջ:

«Միայն հոգևոր իշխանությունների և գրագետների միության ձեռնարկությամբ կազմված բանիբուն մարմնի որոշումը մեզ համար ընդունելի և

պարտադիր կլինի: Իսկ մինչ այդ ձեռք պիտի քաշել ամեն հին ու նոր փոփոխություններից և դառնալ ավանդական ուղղագրությամբ: Այս է ուղիղ ճանապարհը» (էջ 366):

Էս հատվածը նախ ցույց է տալիս, որ Արեղյանը երբեք դեմ չի եղել ուղղագրական մեղմ ռեֆորմին ու երբեք էլ անսկզբունքային չի եղել (օրինակ, Ս. Մալխասյանցի պես) ու իր կարծիքը չի փոխել համուն իր շահի կամ ի հեճուկս իրեն դուր չեկած մարդկանց:

Բացի սա, 1913 թվին Հայաստանում ո՛չ պետականություն կար, ոչ էլ գրագետների միություն կամ ակադեմիա, ու սրա համար է, որ Արեղյանն ուղղագրության փոփոխությունը վաղաժամ էր համարում:

Իսկ 1921-ին արդեն պետականություն կար, ու էս անգամ Արեղյանը ռեֆորմի չորս տարբերակ առաջարկեց՝ մեղմը, քիչ ավելի խիստը, խիստն ու ամենախիստը, բայց սրանցից ոչ մեկն էլ բաղաձայններին ձեռք չէր տալիս, որ մեր երկու գրական լեզուն փոխադարձ հասկանալի լինի, ու գրական խզվածություն չլինի:

Արեղյանն էս չորս տարբերակն առաջարկել էր, որ արդեն առկա ազգային իշխանությունը սրանք քննության դնի առկա մտավորականների խորհրդին:

Բայց լուսծողկոմ Պողոս Մակինցյանը, «...կանգնած լինելով այն տեսակետի վրա, որ եթե ռեֆորմ է լինում, պետք չէ բավականա՞մալ չնչին փոփոխություններով (Ս. Արեղյան, *Երկեր, Ը հատ.*, էջ 387)», (ինչը, իհարկե, լրիվ անիմաստ չի), առանց մեր գրագետներից որևէ մեկի համաձայնությունը է: արցնելու (նույնիսկ՝ Արեղյանինը), ռեֆորմի խիստ տարբերակը ներկայացրեց Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, ու սա էլ դնկրետով նոր ուղղագրությունն իսկույն գործի դրեց:

Սա, լրիվ իրավացի, վիրավորեց էն օրերի մեր մտավորականներից շատերին, ու դրանց հետ էլ՝ Արեղյանին: Մա՛ է իրողությունը:

Ի՞նչ պատահեց Արեղյանին սրանից հետո:  
Արդեն ասել եմ, Ս Մալխասյանն ընկավ Արեղյանի հետևից, քիչ-քիչ կողմնակիցներ հավաքեց (հիշենք Ա. Ղարիբյանին ու Գ. Սևակին), ովքեր անցան Արեղյանին անվանարկելուն:

Իսկ 1930 թվից, օգտվելով ստալինյան մոճավանջային մթնոլորտից, ինչը հենար էր տալիս կործանելու (նույն ֆիզիկական առումով) նույնիսկ համաշխարհային հռչակի տեր գիտնականներին ու, առհասարակ, ցանկացած մարդու, համոզեցին հայ ողջ հասարակությանը, թե Արեղյանի



գրականագիտությունն էլ, քերականությունն էլ «բուրժուական, իդեալիստական, մետաֆիզիկական, մախիստական, ֆորմալիստական» են, ևն:

Աբեղյանը 1936 թվին հրապարակային ելույթով անառարկելի ապացուցեց էն օրերի հայ բոլոր քիչ թե շատ նշանավոր մտավորականներին (անառարկելի, որովհետև վերի գրպարտողներից ոչ մեկը առարկության ծպտուն անգամ չհանեց), որ իր ընդդիմախոսների բոլոր ասածները կամ գրպարտություն են, կամ տգիտություն:

Ասել եմ արդեն, որ Աբեղյանի էս ելույթը չհրապարակվեց մինչև 1985 թիվը:

Մրանից հետո էլ մեր լեզվաբաններից ոչ մեկն էլ ոչ մի անգամ չասաց, որ Աբեղյանի էս փայլուն ելույթը գիտական զուտ ճշմարտություն է, որովհետև սա կործանարար էր, ու է՛ մեր էսօրվա հայ քերականության համար:

Ավելորդ է ասելը, որ հնամուկները երբեք էս չափագանց լուրջ հարցից չեն խոսում, որովհետև շատ լավ գիտեն, որ նախ գիտական լուրջ խնդրով քաղաքական մեծ «շուխուռ» չես անի ու ազգային հերոս գործչի անուն չես հանի, ու երկրորդ, գիտեն, որ իրենք լուրջ գիտելիքից զուրկ են:

29. Պրն Որբերյանն ասում է, թե ռեֆորմի իրագործողներից էր «գրականագետ Մանուկ Աբեղեանը, ում լեզուագիտական գազաթնակետը խեղագրական ռեֆորմն էր Մաշտոցին հաասարուելու մարմաջով»:

Դժվար թե պրն Որբերյանը չիմանա, որ Աբեղյանը հայ առնվազն երկրորդ ամենախոշոր լեզվաբանն է, եթե ոչ առաջինը. որ Աբեղյանը հայ ամենախոշոր ազգագրագետն է, խոշորագույն բանահավաք է, հրաշալի պատմաբան ու հույժ վաստակավոր մանկավարժ ու մեր ակադեմիայի ըստ էության հիմնադիրը:

Բայց ինչո՞ւ է էդ պարոնը մի տեսակ հեզմանքով ասում «գրականագետ Աբեղյանը», ասես Աբեղյանն ուրիշ վաստակ չունի, իսկ ինքը, պրն Որբերյանը, հռչակավոր լեզվաբան է ու ուղղագրության էսօրվա ամենակարկառուն մասնագետը (որ նա ի՞նչ իսկ գոված ուղղագրությունը լավ չգիտի, երևում է հենց իր գրածների ուղղագրությունից, բայց սրա քննությունը թողնենք ուրիշներին): Մա մեկ:

Հետո՞ էս «Ռոտ Այլլնտցի» պրն Որբերյանը ո՞րտեղից է իմացել, որ Մանուկ Աբեղյանի «լեզուագիտական գազաթնակետը խեղագրական ռեֆորմն էր»:

Ինչո՞ւ է էս պարոնն ասում, թե Աբեղյանը լեզվաբանության մեջ խեղագրությունից բացի ուրիշ կարևոր բան չի արել, որովհետև իր ասածը հենց սա՛ է նշանակում:

Ու էս պարոնը ո՞րտեղից գիտի, թե Աբեղյանը «Մաշտոցին հավասարվելու մարմաջ ուներ»:



Կամիլ Սեն-Սանս, Camille Saint-Saëns, Камиль Сен-Санс (1835-1921)

Երբ աշխարհահռչակ Սեն-Սանսն ու իր նշանավոր կոլեգաները ծանոթանում են Կոմիտասի ու նրա ծրագրերի հետ, ուղղակի հիանում են, ու հույժ հորդորում, որ Կոմիտասն անպայման շարունակի իր գործունեությունը:





Կլոդ Դեբյուսի, Claude Debussy, Клод Дебюсси (1862-1918)

Դեբյուսին ասում է. «Եթե Կոմիտասը միայն «Անտունին» գրեր [այսինքն, մշակեր ու աշխարհին ներկայացներ – Մ. Հ.], դա բավական կլիներ, որ նա խոշոր արվեստագետ համարվեր»:




Կոմիտասի (1869-1935) բեռլինյան լուսանկարներից



ՄԵՐ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ



Յոհան Հայնրիխ Հյուբշմանը, Johann Heinrich Hüschmann,  
Иоганн Генрих Хюбшман (1848-1908)




Անտուան Մեյլեն, Antoine Meillet, Антуан Мейе (1876-1936)





Հայր Միսրան Գալուստ Տեր Սկրտչյանը  
(1860-1917 կամ 1918, ստույգ հայտնի չի)  
Նկարը մակագրել է. «Հովհաննես Թումանյանին»



Մանուկ Աբեղյանը (1865-1944) կյանքի վերջին տարիներին





Արմենակ Շահմուրադյանը (1878-1939)



Կոմիտասն ու Վահան Տեր-Առաքելյանը (1883-1941) 1908-ին





Խնդացոյ Կոմիտասը



Կոմիտասը հոգեկան խանգարմունքի սկզբում, Եղեռնից հետո, 1915-ին









Թումանյանն ու Կոմիտասը



Յոթ 40 տարի զրուակում լսոյ գործ՝ Եւմեայա ի ստեղծ  
 Հայրենի և իր Հայրենի յոցասարսուղան բառարանով ու ինչպէս էր իր  
 Կոմիտասի զբանով և պարտաւորութեամբ ինքնաւարտուց անոց  
 Կոմիտասն իր վեց սանի հետ:  
 Չախից աջ. Հայկ Սեմերջյանը, Միհրան Թումաջյանը, Վարդան Սարգսյանը,  
 Արտաշես Աբաջյանը, Վաղարշակ Մրվանձտյանը, Բարսեղ Կանաչյանը





Կոմիտասը - գործ՝ Եղիշե Թադևոսյանի

Որևէ փաստ կամ գոնե ակնարկ կա՞ սրա մասին:

Էս տեսակ բան՝ նույնիսկ 1930-ականներին Աբեղյանին զրպարտողները չեն ասել, որովհետև լավ գիտեին, որ եթե ասեին, ծիծաղի առարկա կդառնային:

Թող ընթերցողն ինքը մեկնաբանի պրն Որբերյանի էս ասածները ու գնահատի մեր էս պարոնի չափի զգացումն ու բարեկրթությունը, իսկ էստեղի հնամուլներն էլ թող գովեն իրենց «Ռոտ Այլընտցի» զինակցին ու ոգևորվեն սրա «հայտնագործություններով», եթե կուզեն:

#### ԱԲԵՂՅԱՆՆ ՈՒ ՄԱԼԽԱՍՅԱՆ(Ց)Ը

Առաքինությունն ինքնին պատիժ է:

Դենիստոնի օրենքը

**30. Մի քանի բան էլ ասեմ պրն Որբերյանի գովաբանած Ստեփան Մալխասյան(ց)ի (1857-1947) մասին (տես Հ. Չ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան):**

Ս. Մալխասյանը ծնվել է Ախալցխայում, 1874-1878-ին Գալուստ Տերկրոսյանի հետ սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1889-ին ավարտել է Պետերբուրգի համալսարանը, Էդուեղ էլ թեկնածուի գիտական աստիճան է ստացել: Մոտ քսան տարի ուսուցչություն է արել:

Հրատարակել է Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) *Պատմութիւն տիեզերական* գործի քննական տեքստը (1885), աշխատակցել է Գալուստ Տեր-Սկրոսյանի *Ղազար Փարսեցու Պատմություն...* գործին (տես վերը), «այսպես և՛ Ղևոնդ վարդապետի *Պատմությունը*, *Ազաթանգեղոսի* (1909), *Խորենացու* (1913) «*Պատմությունները*», *Ամիրտովաթի «Օգուտ բժշկության»* (1940) *գիրքը*»:

«Թարգմանել է այլ լեզուներից ու զրաբարից: «...ծանրակշիռ հետազոտություններից են՝ *Ուսումնասիրություն Փավստոս Բուզանդի պատմության* (1896), *Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացին* (1899), *Խորենացու առեղծվածի շուրջը* (1940)»: (Էս թվերից երևում է, որ Մալխասյանը մոտ 40 տարի գիտական լուրջ գործ՝ համարյա չի արել):

Հայտնի է իր *Հայերենի բացատրական բառարանով*, ու *հայտնի էր* իր *Մի հնչյունին մի գիր* (Թիֆլիս, 1910) իբր «սկզբունքային» գրքով, ինչը *Հայերենագիտական բառարանի* հեղինակը, չգիտես ինչու, չի հիշատակում:



Այնուամենայնիվ, Մալխասյանի գիտական հեղինակությունը, մեղմ ասած, բոլորովին էլ համեմատելի չէր ո՛չ Գալուստ Տեր-Սկրտչյանի, ոչ էլ Արեղյանի հեղինակության հետ:

Ս. Մալխասյանը երեք տարի մեծ է Գալուստ Տեր-Սկրտչյանից (1860-1917 կամ 18), ութ տարի էլ մեծ է Մանուկ Արեղյանից (1865-1944):

Ուրեմն, Մալխասյանն ապրել է 90 տարի, Հայր Միաբանն ապրել է 57 կամ 58 տարի, Արեղյանը՝ 79 տարի:

Մալխասյանը գիտությունների դոկտորի աստճանը ստացել է 1940-ին, 83 տարեկան, Հայր Միաբանը 34 տարեկան ցարական Ռուսաստանի Հնագիտության կայսերական ակադեմիայի թղթակից անդամ էր, իսկ 40 տարեկանից՝ իսկական անդամ:

(Իմիջիայոց, առանց դիսերտացիա պաշտպանելու: Էն օրերին մեր էս տարածքի ազգերից նման գիտական պատվի ոչ մեկը չի արժանացել):

Արեղյանը դոկտորի կոչումն ստացել է 1898 թվին, Ենայի համալսարանում, ու արդեն 1912 թվին աշխարհահռչակ լեզվաբան Անտուան Մեյեն Արեղյանին համարում է ենթան խոշոր հայգետ, որ հայերենով բոլոր հետաքրքրվողներին խորհուրդ է տալիս, որ անպայման ուսումնասիրեն Մ. Արեղյանի *Աշխարհաբարի քերականությունը* ԳՐԸՑԱԿԱՆ դասագիրքը:

Մալխասյանի ու Արեղյանի միջև «սև կատու» էր անցել 1890-ականների սկզբից. ինչո՞ւ, էսօր արդեն հայտնի չի: Բայց 1909-ին Արեղյանը հրատարակում է իր *Հայցական հոլովը մեր աշխարհաբարում* գործը, ու սրա մեջ ջախջախում է Ս. Մալխասյանի «հայցական հոլովի սևությունը»:

Հենց էս աշխատանքից հետո էր, որ Մալխասյանը, ի վիճակի չլինելով գիտությանը պատասխանելու Արեղյանին, մինչև թե՛ Արեղյանի, թե՛ իր մահը մնաց Արեղյանին անհաշտ թշնամի:

Իսկական գիտնականը նման առիթներով չի թշնամանում իր ընդդիմախոսների հետ: Բայց Մալխասյանի պարագան ուրիշ էր: Իր իսկ աչքի առաջ իր կրտսեր ընկերները, Գալուստն ու Մանուկը դարձան համաշխարհային փառքի տեր, ակադեմիկոս ու դոկտոր, ու սրանց հարգում ու հեռաները հաշվի էին նստում Մեյեի, Հյուբշմանի, Մակլերի, Մառի, Մեյսի ու Գիյարի պես հռչակավոր գիտնականները, այնինչ, իր սեփական հռչակը, մեղմ ասած, խիստ նվազ էր: Չարանալու առիթ կար:

Ուրեմն, պիտի Մանուկի վրա շարանար, որովհետև առիթը կար, ու չարացավ էլ:

Չարացավ ու սկսեց հակառակվել Արեղյանին:

Երբ 1800-ականների վերջերին համադրյա բոլոր հայ բանասերներին պարզ դարձավ, որ հայերենի ուղղագրությունն այլևս չի բավարարում նոր գրականության պահանջները ու ուղղագրությունը պիտի անպայման

փոխվի, Մալխասյանն էլ անցավ ուղղագրությունը փոխելու կողմնակիցների շարքը:

Արեղյանը, համարյա մինչև ուղղագրության ռեֆորմը, ուղղագրությունը փոխելու մեղմ տարբերակների կողմնակիցն էր: Բայց Մալխասյանը, երևի Արեղյանի «ջգրու», ու ի՞ր իսկ փառքին հետամուտ, դարձավ ուղղագրության ծայրահեղ փոփոխության կողմնակից ու, ինչպես ասվել է, 1910-ին հրատարակեց իր՝ *Մի հնչյունին մի գիր* գործը:

Իհարկե, էն օրերին էլ էր լուրջ բանասերներին պարզ, որ *մի հնչյունին մի գիր ու մի գրին մի հնչյուն* սկզբունքը լավագույնն է ու հենց սա՛ է մաշտոցյան սկզբունքը (ինչ էլ որ պրն Որբերյանն ու մնացած *հնամուկներն* ասեն), բայց, հաշվի առնելով հայ մտավոր աշխարհի առկա վիճակն ու ականա ենթարկվելով պահպանողականների կամքին, շատ քչերն էին պահանջում, որ ուղղագրության փոփոխությունն էսքան արմատական լինի:

Այնինչ, «սկզբունքային» Մալխասյանը հենց արմատական փոփոխությունն էր քարոզում ու պահանջում, ու քարոզում ու պահանջում էր մինչև 1922 թիվը, մինչև ռեֆորմի դեկրետը: Այ թե ինչ է ասում Արեղյանը իր «Ուղղագրության ռեֆորմը» գրքում ( Մ. Արեղյան, *Երկեր, Ը հատ.*, էջ 391)։

«...եկանք հասանք դարձյալ «մի հնչյունին մի գիր» սկզբունքին: Մ. Մ.-ն (Մ. Մալխասյանը – Մ. Հ.) էլ էր մի ժամանակ դավանում ու քարոզում էր այդ սկզբունքը: Իսկ ս՛յժմ: Ի՞նչ պատահեց այժմ, որ նա այդ սկզբունքը մոռացավ կամ արդյոք ի՞նչ նպատակով խոհեմություն է համարել կատարյալ լռություն պահպանել, բերանից մի խոսք անգամ չփախցնել այդ սկզբունքի մասին այն ժամանակ, երբ իբր «գործնական տեսակետով» քննում է մի ուղղագրական ռեֆորմ, որ այդ սկզբունքով է կատարված, և այդ մասին մի գրույկ, որի առաջին տողերի մեջ հենց շեշտված է այդ սկզբունքը, որ հենց «գործնական տեսակետը» նկատի ունի»:

«Ասում են, որ երբ ուղղագրության դեկրետը հասնում է Թիֆլիս, և մանավանդ, երբ մայիսին սկսվում է «Խորհրդային Հայաստանի» մեջ գործադրվել ուղղագրության ռեֆորմը դեռևս մասնակի, այդ ժամանակ շարժվում են Թիֆլիսի «ազգային ջոջերը» և աղմուկ բարձրացնում, թե հայոց դարավոր կուլտուրան ոչնչացավ: Նրանք Մմբ. Տ. Ավետիսյանի, Մարգ. Ավետիսյանի և ուրիշների առաջնորդությամբ՝ լսած լինելով, Մ. Մ.-ն չղել է Երևանում ուղղագրական հանձնաժողովի անդամ, գալիս պաշարում են

նրան: Մ. Մ.-ի առաջին խոսքը լինում է, թե «ես չեմ, ես չեմ, այլ Մ. Աբեղյանն է մեղավոր»:

«Եվ ահա քնից արագ զարթնած Թիֆլիսը՝ կարծելով թե դեռ հին ժամանակներն են, և ինքը կարող է առաջվա պես հրամայել Երևանին ու Հայաստանին, անսպասելի արագությամբ, մայիսի վերջին ժողով է անում և ընտրում մի հանձնաժողով թե մասնաժողով՝ հայկական նոր ուղղագրությունը քննելու և տապալելու:

«Թիֆլիսի համար անսպասելի արագությամբ գործում է այդ մասնաժողովը, այսինքն՝ Մ. Մ.-ի ձեռքով պատրաստվում է մի հակազեկուցում, և մի շարքս հետո հրավիրվում է նորից ընդհանուր ժողով, որ ամբողջապես ընդունում է այդ հակազեկուցումը: Եվ այնուհետև Մ. Մ.-ն այլևս չի համարձակվում իր «մի հնչյունին մի գրի» անունը տալ:

«Դե որ մարդ մի անգամ ուրացավ այդ սկզբունքը, այն ժամանակ կարելի է ամեն բան ասել»:

Ու Մ. Մալխասյանը, իրոք, «ամեն բան էլ ասում է», ինչպես Աբեղյանն է իր եւ 109 էջանոց գրքի մեջ հարյուրավոր անգամ վկայում:

Ես գրքի մեջ համարյա չկա էջ, ինչի մեջ Աբեղյանը թունդ քննադատած չլինի Մալխասյանին, ցույց տալով, որ սրա ասածները գիտական տեսակետից անհեթեթ ու ծիծաղելի են, ու շատ հաճախ էլ, պրն Որբերյանի տերմինով ասած, ուղղակի խեղագրություն են:

Ու ես կարգի անհեթեթ, ծիծաղելի ու խեղագիր դեպքերի թիվն Աբեղյանի գրքում հասնում է, առնվազն, կես հազարյակի:

Մալխասյանը, իհարկե, էս քննադատությանը «ձեռաց պատասխանելու» փորձ արել է (տես՝ 45-ը), բայց պարզ է, որ էդ փորձն անհաջող է եղել, որովհետև գիտական ճշմարտությունը գորավոր բան է, ու «ոչ գիտական մեթոդներով» դրա դեմ չես կովի:

Շա՛տ-շատ, դրա դեմ կովես քաղաքական մեթոդներով, էն էլ՝ հարցը լուրջան մատնելով մինչև 1985 թիվը (ու նույնիսկ, մինչև էսօր), բայց մի օր Նորին Մեծություն ճշմարտությունը վեր կկենա ու կասի. «Եկեք, տեսնեն, էս ի՞նչ եք ասում»:

Ես էլ պրն Որբերյանի գովական ակադեմիկոս Մալխասյանը:

Քաղաքականության մեջ ես ոչ մի օրենք չեմ ընդունում...  
Էստեղ ցանկացած կեղծիք ու խաբամակությունն էլ ընդունելի է:  
Աղուֆ Հիտլեր

31. Պրն Որբերյանն ասում է, թե Հայաստանում ուղղագրության ռեֆորմի մասին խոսելու իրավունք չկա, որ իբր էդ հարցի վրա «թաքու է դրված»:

Ես պարոնի ես մի ասածն էնքան զարմանալի է ու տարօրինակ, որ ասելու չի, որովհետև ես պարոնը չի նկատում, որ թե՛ իր գրած նամակը ՀՀ Սփյուռքի նախարարին, թե՛ իր երկարաշունչ «դասերը» հայ մտավորականությանը, հենց ուղղագրությունը փոխելուն են նվիրված, ու դրանք երկու ամսից ավել է, ինչ տպվում են «Առավոտ» օրաթերթում, ու ոչ մեկն էլ դա չի արգելում:

(Իմ գրածները, օրինակ, թե՛ Կոմիտասի մասին, թե՛ իմ պատասխանները Որբերյանին, նույն «Առավոտի» խմբագիրը չտպեց, պատճառաբանելով, թե երկար են):

Պրն Որբերյանը չգիտի՞, որ ուղղագրությունը նորից փոխելու հարցը վերջին 20 տարում շա՛տ-շատ է ծեծվել, ու հնամուլներն ավելի շատ են ելույթ ունեցել մամուլում, քան պաշտոնականները:

32. Պրն Որբերյանը պնդում է, թե Աբեղյանի ռեֆորմից հետո հայերենի հազարներով արմատ կորավ: Օրինակ, հայերեն *գետ* (*հոսող մեծ ջուր*) ու *զեա* (*լիմացող, չիտուն*) արմատներից մեկն իբր կորավ, ու հիմա մենք իբր խառնում ենք սրանք, ու որ մեր հին գրականությունը կարդանք, չենք հասկանա, ու էս բառերը կխառնենք:

Սա, պրն Որբերյանի խոսքերով ասած, լեզվաբանությունից անտեղյակ լինելու «գազաթնակետն» է: Թող իրեն լեզվաբան հռչակած էս պարոնը (իրեն լեզվաբան չեռչակողը չէր պահանջի, որ իրեն կանչեն լեզվաբանական համաժողովներին), բաց անի Աճառյանի *Արմատական բառարանն* ու տեսնի, թե էնտեղ քանի՞-քանի՞ համանուն արմատ կա, ու ասի, կորե՞լ են դրանք:

Թող էս «լեզվաբան» պարոնը «Ռոտ Այլընտից» գա ու մեզ, արևելահայերիս, հարցնի ու իմանա, թե մենք էստեղ կորցրե՞լ ենք էդ արմատները, խառնո՞ւմ ենք *զեա* ու *զեա* կամ *սեթ* ու *սեթ* բառերն ու սրանք սխա՞լ ենք գործածում: Չե՞նք հասկանում, թե ինչ ենք ասում, եք, օրինակ, ասում ենք՝ «Արարս գեաթ, ամենագեա, գիտուն, տգեա, կաթի սեթ, սեթս փանքում Տաթի» ևն:



Թող էս պարոնը մի անգլերեն բառարան բացի (իր գովական *Ռոտ Այլընտուս* էր տեսակ բառարան շատ կա) ու տեսնի, թե անգլերենի արմատներից, բառացի, քանի-քանի հազարն են համանուն: Ի՞նչ է, անգլերենի էր հազարներով բառը կորե՞լ է, ու անգլիացիները դրանք չունե՞ն՝ միայն է՞ն պատճառով, որ դրանք համանուն են, կամ էլ՝ անգլիացիք, որ իրենց գրքերը կարդում են, էր համանուն բառերը խառնո՞ւմ են:

**32. Իմիջիայոց**, էս գիրքը գրել պրծել էի, երբ մեր Հայաստանի հեռացույցով պատահական տեսա էս պարոնին: Պարոնը խոսում էր, ընդ որում, «բլբուլի պես» էր խոսում, Արարատյան բարբառով, (իր խոսքում վաղակատարի *լ-երն* էլ ջնջելով, ինչը հատուկ է բարբառին): Ուրեմն, պրն Որբերյանը բոլորովին էլ «Ռոտ Այլընտոցի» չի, ինչպես ձևացնում է: Իսկ ձևացնում էլ է, երևի որ «իմպրոնի» երևա, որ ասածները ծանրակշիռ լինեն: Իզուր չարչարանք: Ծանրակշիռ բան ասելու համար միայն ու միայն ծանրակշիռ գիտելիք ու գործ է պետք:

Պրն Որբերյանի լսողությունը սովոր է արևելյան աշխարհաբարին, ու անգլերենի Rod Island-ը պիտի ընկալեր Ռոդ Այլընդ, ու ոչ թե Ռոտ Այլընտ: Բայց էս պարոնը ուրացել է իր մայրենի բարբառի հնչողությունն ու որդեգրել է ուրիշ մի բարբառինը: Արեդյանի ասած, որ մարդ մի անգամ ուրացավ իր մայրենի բարբառի թեկուզ հնչողությունը, դրանից ինչ ասես, որ սպասելի չի լինի:

**33. Ինչ վերաբերում է** գիտական համաժողովներին մասնակցելու պրն Որբերյանի պահանջին, էստեղ մի պարտադիր պայման կա: Մասնակցողը պիտի գիտնական լինի ու ինտելեկտուալ ազնվություն ունենա, թե չէ՝ ոչ մի համաժողով էլ դրան չի լսի: Ուրեմն, պրն Որբերյանը պիտի լավ մտածի, թե ի՞նչ անի, որ գիտաժողովներն իրեն էլ լսեն:

Հովհաննես Թումանյանը ասում է (տես Գյուլբուրդյանի ասածս գիրքը, էջ 323). «Ուղղագրությունը գիտություն է, և նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով»:

**34. Շատ հետաքրքիր է** պրն Որբերյանի «Առավոտում» տպած հոդվածաշարի վերջում բերած գրականության ցուցակը: Էնքան է հետաքրքիր, որ դա բերում են, որ ընթերցողն էլ տեսնի:

Գրականաբան (Պրն Որբերյանինը)

Լեոն Խաչերեան - (թ.գ. դոկտ. փրոֆ.) - Հայոց համազգային մաշտոցեան համակարգում միասնական եւ միակերպ ուղղագրութեան պատմութիւնը (ե-ի դարեր). Լոս Անջելես, 1999:

Կարեն Ա. Մինոնեան - (գրող, հրատարակախօս) - Կրեմլի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը. Երևան, 2007:

Ռաֆայել Իշխանեան - (դոկտ. փրոֆ.) - Հայերենի ուղղագրութեան կանոններ, Երևան, 1991:

Հիլտա Գալֆայեան - Փանոսեան - (դոկտ. փրոֆ.) - Մեսրոպեանը ազգային միասնութեան նախապայման. Երևան, 2005:

Լեոն Միրիջանեան - (բանաստեղծ) - Մէկ ազգ՝ մէկ ուղղագրութիւն:

Պողոս Գոճանեան - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, Վիեննա, 2006:

Էս ցուցակի մեջ Արեդյանի ուղղագրությանը նվիրված գործերը պիտի որ անպայման լինեն, էլ չեմ ասում մյուս խոշոր հայագետներինը: Բայց պրն Որբերյանը երևի լավ գիտի, որ լուրջ հայագետների ասածներն իրեն ձեռնտու չեն լինի, որովհետև կերևա, որ Արեդյանը (ինչպես որ Արեդյանն ինքն է խոստովանում) ուղղագրությունը փոխելու ոչ մի առաջարկ չի արել, որ ուրիշներն իրենից առաջ արած չլինեն:

Կերևա՛, որ ուղղագրությունը փոխելու ամենահեղինակավոր ձեռնարկողը Հայր Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանն է եղել, ու հենց Հայր Միաբանն է համոզել Արեդյանին, որ էս գործը գլխավորի, ու Արեդյանն էս գործը գլխավորեց միանգամայն ազնիվ մարդու ու արտակարգ հմուտ լեզվաբանի պես: Ու կերևա նաև, որ Արեդյանը, իրոք, հայերենի ուղղագրության ամենահզոր գիտակն է (էսօր է՛լ):

Այնինչ, պրն Որբերյանն ամեն ինչ անում է, որ Արեդյանին չարագործ դարձնի, որ ինքն ու իր կողմնակից հնամուկները, «որպես իսկական փրֆեսորներ», սուրբ երևան ու «մի համազգային գիտաժողովում» Հայաստանի ժողովրդին խելք սովորեցնեն, որ մենք ուղղագրությունը փոխենք, որ ինքն ու չգիտես որ մի Սփյուռքը «չերկփեղկվեն» մեզնից:

Պրն Որբերյանը, ինչպես տեսանք, չափազանց շատ բան է «տակով անում», ու շատ բան էլ խեղագրում է ու ճիշտը չի ասում, ու մեղմ ասած, շատ բանից էլ ուղղակի տեղյակ չի:

Մրա համար էլ էսքանով պրն Որբերյանի մասին ասածս վերջացնում են, որովհետև եթե պրն Որբերյանի բոլոր ասածները մեկ առ մեկ քննելի կստացվեր մի մեծ գիրք:

Էր տեսակ գրքեր Արեդյանն արդեն գրել է, Ս. Մալխասյանի ու ուրիշների սխալներն ու խեղագրությունները քննելով, ու ում հետաքրքիր է, թող վերցնի ու կարդա դրանք:

Պրն Որբերյանն ինչո՞ւ էսպես վարվում: Էսպես է վարվում, որովհետև եթե ճշմարտությունն ասի, բոլորին էլ պարզ կլինի, որ Արեդյանը բոլոր-

վին էլ շարագործ չի, ու որ Աբեղյանը հույժ մտահոգ է եղել, որ մեր գրական լեզուներն իրարից չհեռանան:

Այնինչ, պրն Որբերյանն էս հարցն էսքան խեղաթույր է ներկայացնում, որ իբր հիմնավորի հին ուղղագրությանը դառնալու իր ու մնացած հնամուկների երազանքը, ու որ ինքն ու մյուս հնամուկները մեր ազգը «փրկեն» ու դառնան ազգային հերոս:

**ՄԻ ՋԱՆԻ ՀՈՆԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ  
ՊՐՆ ՈՐԲԵՐԻՅԱՆԻՆ ՈՒ ՄՆԱՑԱԾ ՀՆԱՄՈՒՆԵՐԻՆ**

**Բարեկամները գալի ու անց են կենում, իսկ թշմամիներն անընդհատ շատանում ու մնում են են:**

*Չունգի դեկիզը*

**35.** Պրն Որբերյան, եթե Հայաստանը դառնա «ավանդական» ուղղագրությանն ու Հայաստանի ու Սփյուռքի Չեր ասած «երկփեղկվածությունը» վերանա, Հայ Սփյուռքի Չեզ կողմնակից բոլոր հայերը կգա՞ն Հայաստան ու կապրե՞ն մեր էս թշվառ վիճակում:

Որ էդքան շատ եք դարդ անում Հայրենիքի «միասնականության ու լեզվապահպանման» խնդիրներով, ինչո՞ւ եք «Ռոտ Այլընտից» (ինչին, հետևելով անգլիական արտասանությանը, հայաստանցիներս կասեինք՝ «Ռոդ Այլընդ»), նամակ գրում. եկեք Հայրենիք ու էստեղից գրեք:

**36.** Իսկ եթե Հայաստանն իր ուղղագրությունը չփոխի, Դուք «երկփեղկված» եք մնալո՞ւ:

Ի վերջո, սա՛ է (նաև) ձեր միակ Հայրենիքը, լավ՝ թե վատ:

Եթե Դուք իսկական հայրենասեր եք, ներե՛ք Չեր միակ Հայրենիքի էս մի թերությունը ևս, համոզե՛ք Սփյուռքի Չեր կողմնակիցներին, որ գրեն (նաև) իրենց միակ հայրենիքի միակ (թեկուզև թերի) ուղղագրությամբ ու «միասնականացնեն» Չեր, մեր ու Իրենց Հայրենիքը: Սա մեկ:

**37.** Երկրորդ. հայաստանցիներն իրենց էս «խեղագրված» ուղղագրությամբ լա՛ւ էլ կարդում ու հասկանում են Արևմտահայ Սփյուռքի թերթերն էլ, գրքերն էլ, Վարուժանին էլ, Պարոնյանին էլ, Օտյանին էլ, Դուրյանին

էլ, Մեծարենցին էլ, Չոհրաբին էլ, Սիամանթոյին էլ (ու նույնիսկ Չեզ, լինեն Չեր ասածները ճիշտ, թե սուտ, նաև՝ ուղղամիտ, թե թերաս):

Ու մենք մեր ուղղագրությամբ թարգմանել ու տպել ենք թե՛ էս գրողներին (որ շատ ենք սիրում), թե՛ շատ-շատերին:

Էդ ո՞նց է, որ Սփյուռքի Չեր կողմնակիցները մեր ուղղագրությամբ գրած բաները չեն հասկանում: Ի՞նչ է, Չեր կարծիքով (Արևմտահայ Սփյուռքի Չեր կողմնակիցները մեզնից բանձրամի՞տ են:

**ԷՍ ՏԵՍԱԿ ՎԵՃԵՐԸ ԿՂԱԴԱՐԵՆ**

**Մտք ու փոքրիկալի գիշեր էր: Կապիտանն առաց.**

**– Ջեքսոն, մի բան պատմի, լսենք:– Ջեքսոնն սկսեց.**

**«Մտք ու փոքրիկալի գիշեր էր: Կապիտանն առաց...»**

*Չայմանի «Պինդ մարմնի քվանտային տեսությունը»*

*գրքի բնաբաններից*

Էս տեսակ տգիտական ու «քաղաքական» վեճերը չեն դադարի (տես Կանտորի ասածը էս գլխի սկզբում): Ինչու՞ է Կանտորի «թեարենը» ճիշտ:

Կանտորի «թեարենը» ճիշտ է, որովհետև մարդկանց մեծ մասը մտածում է, որ կոլեկտիվ («խմբի») «մտածողությունը» անպայման իմաստուն է ու ճիշտ, այսինքն, ճիշտ է մարդկանց մեծ խմբի «կարծիքը»:

Բայց մարդկանց մեծ խմբի «կարծիքը», ի վերջո, միայն ու միայն մի մարդու կարծիք է, է՛ն մարդու կարծիքը, ով առաջինն է գլխի ընկել էլ բանն ու մնացածներին էլ հա՛նդել է, որ էլ բանը ճիշտ է:

Ցավոք, մարդկանց մեծագույն մասը կարծում է, որ եթե համարյա բոլոր մարդիկ էլ նույն բանն են ասում, ուրեմն դա անպայման ճիշտ է, անկախ էն բանից, թե էլ ասածն ի՞նչ է:

Օրինակ՝ հենց էս պատճառով մի քանի հազար տարի ճիշտ էր համարվում, որ Երկիրը տափակ է՝ կլոր չի, չնայած դասական հույներէից մարդ կար, ով գիտեր, որ Երկիրը գնդի ձև ունի ու նույնիսկ չափել էր Երկրի շառավիղը:

Կամ էլ մի քանի հազար տարի մարդիկ համարում էին, որ Արեգակն է պտտվում Երկրի շուրջը, ու պատահում էր, որ հակառակն ասողներին (օրինակ՝ Չորդանո Բրունոյին) վառում էլ էին:

Իրոք նոր ու ճշմարիտ բաներ ասողները, ստերեոտիպիկ, ընդունված-տարածվածին հակառակ մարդիկ, հատ ու կենտ են ու խիստ բացառիկ: Սա փորձն է ցույց տալիս:

Կոմիտասները, Աբեղյանները, Կոպեռնիկոսները, Գալիլեյները, Նյուտոններն ու Էյնշտեյնները չափազանց քիչ են: Բայց գիտությունն ու մշակույթը հենց էս տեսակ մարդիկ են առաջ տանում: Ու ամենու, որ ամբոխը հենց էս տեսակ մարդկանց է քարկոծում ու քարկոծում է համարյա միշտ: Ու ամբոխը համարյա միշտ էլ սխալ է: (Բացի կենդանի լեզվով (քարքառով) խոսելու իր անկոտրում սովորությունից):

Իսկ որբերյանները շատ-շատ են:

Ուրեմն՝ ճշմարտությունը շատ հաճախ (համարյա միշտ) իր ուղին դժվար է հարթում մակ հենց սրա՝ համար:

30-40-ական թվականներին միայն աբեղյանական քերականությունն ու գրականագիտությունը չէր, որ բուրժուական ու կեղծ ու անօրեն էր հայտարարվել: Բուրժուական ու կեղծ ու անօրեն էին հայտարարվել, օրինակ, մակ գենետիկան, կիբեռնետիկան ու, մասամբ էլ՝ ֆիզիկան:

Ռազմական ու տնտեսական կարիքներն ստիպեցին, որ 40-60-ական թվերին կիբեռնետիկայի ու գենետիկայի ու ֆիզիկայի վարկը լրիվ վերականգնվի: Բայց պետական այրերին քերականական հարցերը երբեք էլ չեն հետաքրքրել:

Սրա համար էլ 30-ական թվականներին հնամուլների հաղթանակը կատարյալ էր. դարիբյանական քերականությունն ու դրա ժառանգ՝ նոր քերականությունները մնացին, ու 74 տարի՝ հայ ժողովուրդը սրանցով է «քերականություն» սովորել ու սովորում, ու հլը քանի՛ տարի էլ դրանցով կսովորի:

**Էլ ո՞նց չոգևորվեն էսօրվա հնամուլները,  
երբ աչքի առաջ էս տեսակ մի արտառոց ոգևորող օրինակ ունեն:**

Երրորդ մասը

**ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ**  
(Ճշմարտությունը հայերի սնտիստ գլոխգոլիանության մասին,  
կամ հայ ազգի որբերգություններից երբորդը)

\*\*\*

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՉՎԱՇՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ**

Սեր էսօրվա ողջ քաղաքակրթությունը, քիչ՝ թե շատ, հիմնված է հետևյալ երեք բարոյական նորմի վրա:

1. Մասնավոր սեփականության ու սրա անձեռնմխելության նորմը:

2. Ուրիշների հետ տիրոջ ուզած ձևով իր մասնավոր սեփականությունը պարտադիր գործող պայմանով տնօրինելու նորմը: Այսինքն, հանրության անդամների (մարդկանց) հարաբերությունները պարտադիր գործող ու անփոփոխ պայմանով (անփոփոխ ու պարտադիր գործող օրենքով և ոչ թե մանակով կամ թնդանքով) վարելու նորմը:

3. Ազատ մրցության, այսինքն, ի վերջո, օրենքի առաջ բոլորի հավասարության նորմը, որպես ազգիարական արդարություն հաստատելու ու նյութական ու հոգևոր բարիքներն այդպար բաշխելու միակ ու անհատից կամ անհատների կազմակերպված խմբից անկախ միջոցը, ու մակ որպես՝ նոր տեխնոլոգիա ու առևտսարակ՝ նոր բան հայտնագործելու ամենաբերուն միջոցը:

Էս նորմերն առաջին անգամ հստակ ձևակերպել է անգլիացի բարոյագետ, տնտեսագետ ու փիլիսոփա Ռիչարդ Հյումը, այն գիտնականը, ում հետազոտությունները պատճառականության սկզբունքի վերաբերյալ՝ չափազանց բարձր է գնահատել Աբրեալ Էյնշտեյնը:

Մասնավոր սեփականության ասելով՝ պիտի հասկանանք ոչ միայն նյութական արժեքները, այլև մարդու կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, խիղճը, գաղափարները, կարծիքներն ու սրանք արտահայտելու ազատությունը, կենցաղն ու սա կազմակերպելու ձևերը, ու առևտսարակ՝ մարդու իրավունք ու ազատություն կոչվածները լրիվ:

Էս մի քանի տողը, ըստ էության, լիբերալ ռամոնքի ու դեմոկրատական կարգի, կամ ավելի ճիշտ, բարոյավարդի տեսական արտահայտությունն ու այդ կարգը կառուցելու չափազանց կարճ ուղիվազիծն են: Բայց մարդիկ, ողջ աշխարհով մեկ, իսկ Հայաստանում՝ մասնավանդ, ոչ միայն չեն հավատում ու չեն հետևում սրանց, այլև չեն էլ ծանոթանում ու քննարկում սրանք:

Ավելի հեշտ է՝ հավատան հայագովների ու քաղգործիչների շատ սիրած լոգոնգներից մի քանիսին, մանավանդ եթե դրանք պարզ են, մատչելի, հասարակ ու ճշմարտաման:

Էդ լուսնագներից մեկն էլ հենց որբերյանների գովաբանած ազգային միաբանության ու ազգային նոր գաղափարախոսության հրատապ անհրաժեշտության լուսնագն է, ու էս անհրաժեշտությունն ակնհայտ է թվում համարյա բոլորին:

Ընդ որում, ո՛չ միայն հայերին, այլև ամենքին ու ամբողջ աշխարհում: Բայց եթե ուրիշ (ու մանավանդ մեծաթիվ) ժողովուրդներին էս ու սրա պես լուսնագներն էնքան էլ չեն խանգարում (կամ՝ առայժմ չեն խանգարում), փոքրաթիվների համար հաճախ նույնիսկ կործանարար են:

\*\*\*

### ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ՃԱՐՈՒՄ

*Ճանճը* – Բա էսի կյանքն ա: Այ, պատերազմի վայտա, էրեխեք, էտ ինչքա՛ն սիրում դիակ կա՛ր: *Կարելի Չապեկ*

Հանրության կյանքի, մանավանդ քաղաքական կառուցվածքի, ուրեմն, նաև կենսաձևի կտրուկ փոփոխությունների շրջանում շատ կլսես, թե «ազգային նոր գաղափարախոսության» անհետաձգելի կարիք կա: Ու սա բնական է: Նման կտրուկ փոփոխությունների ժամանակ առաջին հերթին դեն են շարտում հին գաղափարախոսությունը:

Պարզ է, որ նորի կարիքն իրոք հրատապ է: Բայց նոր գաղափարախոսությունը ո՞րտեղից ճարենք, ումի՞ց վերցնենք:

Ու հազար ափսոս, որ չհաշված հատուկներս դեպքերը, նոր գաղափարախոսություն փնտրելիս, մարդիկ նայում են անցյալին, պատմությանը:

Հնարավոր է, որ դա լինի սեփական պատմությունը, բայց եթե էդ պատմության մտտիկ անցյալում հարկ եղած սրա ոչ մի օրինակը չկա, դիմում են հեռավոր անցյալին, դիմում են իրենց «արմատներին»:

Հեռավոր անցյալն էլ (այսինքն, էս «արմատները»), եթե չհաշվենք հույների ու հռոմեացիների անցյալը, ոչ մի ժողովուրդ էլ լավ չգիտի: Ու էս անգամ միակ ելքը ուրիշ ժողովուրդների մտտիկ (մեկ-մեկ էլ՝ հեռու) անցյալին դիմելն է:

Մտտ անցյալի ամենափայլուն «ազգային գաղափարախոսության» օրինակը, իհարկե, գերմանացիներինն է: Բայց էս օրինակը ամենաողբերգականն ու ամենախայտառակն է:

(Իմիջիայլոց՝ տ օրինակն էլ է հիմնված հին հույների անցյալի, ավելի ճիշտ, սպարտացիների պատմության վրա, որովհետև «ազգային գաղափարախոսությունների» ակունքը, ի վերջո, Պլատոնի *Իդեալական Պետության* տեսությունն է, իսկ սա էլ, համարյա լրիվ, հորինված էր Սպարտայի քաղաքական կառուցվածքին հետևելով):

Գերմանացիների օրինակն էնքա՛ն է խայտառակ, որ համարյա ոչ մեկը, եթե նույնիսկ հոգու խորքում պաշտում է Mein Kampf-ը (Հիտլերի գիրքը), ռիսկ չունի ասելու, որ «ազգային գաղափարախոսության» հիմքը սրա պես մի բան պիտի լինի:

Ոչ մեկը սա ռիսկ չունի ասելու նաև է՛ն բանի համար, որ ողբերգականից ու խայտառակից բացի, սա գերմանական է, այսինքն, ազգային չի: Ուրեմն՝ պիտի սրա մի որևէ տեսակն ստեղծվի, պիտի սա տեղայնացվի:

Ի՞նչը կտեղայնացվի, կվերածակվի՝ ասածս գի՞րքը, կամ Պլատոնի, Ֆիխտեի, Նիցշեի կամ ուրիշ որևէ մեկի «գաղափարները», կամ էլ սրանց մի որևէ սինթեզը, կարևոր չի:

Երբ էս սինթեզն իրականանում է, սա հասարակության «առաջավոր» կամ «հեղինակավոր» անդամների մտքի ճգնաժամի նշանն է:

Բայց էլի հազար ափսոս, որ հեղափոխությունները միշտ չի, որ հասարակության վիճակը բարելավում են: Սրա համար հերիք է, որ հիշենք միայն Ռուսաստանի 17 թվի, Գերմանիայի 30-40-ական թվերի կամ Չինաստանի, Ռուսիայի ու Կամբոջայի հեղափոխությունների ուղղակի մարդակերական սարսափելի անցքերը:

### ԻՆՇՆ Է ԱՆՑՑԱԼԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԵՍ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՓՈՐՉԻ ՊՍՏՃԱԸ

*Չյարիկները* – Մեճակ է՛ս գիղեն, թե ամեն ինչը ո՛նց պտի լլի՛ մեճակ ուղղանկյունի:

*Կարելի Չապեկ*

Պատմությունը երբեք չի կրկնվում, բայց պատմաբաններն իրար՝ անընդհատ են կրկնում:

*Չրիդրիխ Լեգոստ ֆոն Հայնեկ*

Սրա պատճառը ապագայի սկզբունքային անհայտությունն է:

«Մեր օրերի դեպքերը պատմական դեպքերից է՛ն բանով են տարբեր, որ չգիտենք, թե սրանց վերջն ի՞նչ կլինի: Եթե հետ նայենք, կհասկանանք անցյալի դեպքերի իմաստն ու կիմանանք, թե դրանք մեզ ինչպես ու ինչու հասցրին այս վիճակին: Բայց մենք իսկ օրերի պատմությունը մեզ համար պատմություն չի: Սա մեզ տանում է սահայտություն, ու հազվադեպ ենք գտնե մտտավոր գլխի ընկնում, թե մեզ ինչ է սպասում:

Այ, եթե մենք հրաշքով կարող լինեինք անցյալի իրադարձությունները մի անգամ էլ ապրելու, եթե հրաշքով քսան տարի ետ գնայինք ու մեր հիմնկվա իմացածն էլ չկորցնեինք, լրիվ ուրիշ բան կլիներ, որովհետև ապագայի մասին արդեն լրիվ տեղեկություն կունենայինք:

Ու էս անգամ արդեն ամեն բան մեզ համար ուրիշ իմաստ կստանար:

Էս անգամ արդեն նույնիսկ չնչին, աննշան ու ժամանակակիցների համար անկարևոր դեպքերն ու շեղումներն անցյալ տեղափոխվածներին համար կլինեին կարևոր ու շատ անգամ էլ՝ տազնապալի»: (Տես՝ F. A. Hayek, *The Road to Serfdom*):

Բայց էս տեսակ հրաշք չի լինում, ու սրա պես բաները երբեք չենք զգա, որովհետև ուղղակի չգիտենք, թե պատմությունն ինչ օրենքների է ենթարկվում, ու չգիտենք նույնիսկ, թե պատմությունն առհասարակ բնագիտության օրենքներին զոնե մի քիչ նման օրենք ունի՞, թե՞ բոլորովին չունի:

(Մարքսիզմն ու պատմաբաններից ու «մակրոտնտեսագետներից» ումանք պնդում են, թե ունի, բայց 18-19-րդ դարի անգլիական տնտեսագետները (օրինակ, Գեյվիդ Հյունը, Ադամ Սմիթը ևն) ու 19-20-րդ դարի ավստրիական տնտեսագետներն ու իրավագետները (Կառլ Մենգերը, Լյուդվիգ Ֆոն Միզեսը, Ֆրիդրիխ Ավգուստ Ֆոն Հայեկը ևն) ու նաև 20-րդ դարի համարյա երկրորդ կեսին ծնված գիտությունների՝ կիբեռնետիկայի ու սինեզոստիկայի ներկայացուցիչները (Նորբերտ Վիները, Իյյա Պրիգոժինը, Հերման Հակենը ևն) ցույց են տվել, որ էնպիսի բաց ու գերբարդ համակարգերը, ինչպիսիք են՝ փողը, շուկան, վիթխարի տնտեսությունները, կենդանի լեզուն, ու, ի վերջո, հենց ինքը՝ կյանքը՝ առհասարակ, ֆիզիկայի կամ քիմիայի փակ համակարգերի պես «պարտադիր գուշակելի» ապագա, այսինքն, օրենքներ՝ չունեն:

(Տես, օրինակ՝ F. A. Hayek, 1) *The Fatal Conceit: The Errors of Socialism* (*Կործանարար գոռոզամտությունը կամ սոցիալիզմի սխալները*), 2) *The Constitution of Liberty* (*Ազատության կառուցվածքը*), 3) *Law, Legislation and Liberty* (*Իրավունքը, օրենսդրությունն ու ազատությունը*). Հատոր 1-ին՝ *Rules and Order* (*Կանոններն ու կարգը*), հատոր 2-րդ՝ *The Mirage of Social Justice* (*Սոցիալական արդարության պատրանքը*), հատ. 3-րդ՝ *The Political Order of a Free People* (*Ազատ ժողովրդի քաղաքական կարգը*), ևն):

Էն մարդիկ, ովքեր հայտարարել են ու շատ անգամ էլ հավատացել են, թե պատմության օրենքները գիտեն, կան ահավոր մոլորված են եղել, կան շառլատան (թվարկածներին ավելացնեն, օրինակ, Հեգելին, Մարքսին, Լենինին): Հենց մեր աչքի առաջ կյանքը ցույց տվեց, որ «բախտի անիվը» հետ էլ է դառնում:

Բայց չնայած պատմությունը երբեք լրիվ չի կրկնվում, որովհետև հասարակության ընթացքի ուղիներն անսահման շատ են, մեկ-մեկ հնարավոր է ու անպայման հարկավոր է, որ անցյալին նայելով՝ խուսափենք նույն, արդեն մի անգամ եղած անցանկալի կամ կործանարար երևույթի կրկնությունից:

Օրինակ՝ արդեն գիտենք, որ եթե չլինի խոսքի ու տեղեկություն ստանալու ազատությունը, չլինի բոլոր-բոլորի հավասարությունը՝ պարտադիր գործող օրենքի առաջ, ապա անպայման հասնելու ենք բռնակալություն որևէ տեսակին, «ազգային» լինի այդ տեսակը, թե չէ:

Գերմանիայի, Չինաստանի, Ռուսիայի, Կամբոջայի ու հիմա էլ՝ աֆրիկյան երկրների սարսափելի անցքերի ողբերգությունը հենց է՛ն հանգամանքն է, որ ֆաշիզմի ճանփան բացեցին մեծ մասամբ բարի կամքի տեր մարդիկ (տես Թոմաս Մանի հողվածի մեջ Արթուր Շոպենհաուերի մասին գրածը, «Գարուն», 1999, 3), բացեցին հենց Շոպենհաուերի՝ պես մարդիկ, ովքեր երկրում օրինակ էին համարվում, ում հարգում էր ողջ հասարակությունը, ու ովքեր իրենց հոգու ողջ ուժով ատում էին ֆաշիզմի հետևանքները:

#### ՀՆԱՐ ԿԱ՝ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՆՄԱՆ ԱՂԵՏԱԼԻ ՃԱԿԱՏԱԳՐԻՑ

*Քաղքենի հարևանը*– Էս Արքիմեդը վախկոտ ա ու դավաճան: Թշնամին քաղաք ա մտնում, իսկ էսի նստե ու գծազիր-մծազիր ա անում:

Կարելի Չոսպեկ

Սրանից խուսափելու հավանականությունը շատ-շատ է կախված մեր էն ընդունակությունից, թե ուժ ունե՞նք առանց վախ ու սարսափի նայելու վտանգին ու գնահատելու այդ վտանգի չափը: Թե ուժ ունե՞նք հրաժարվելու մեր հոգու համար անսահման քանակ թվացող է՛ն հույսերից ու ցանկություններից, եթե դրանց պաշտամունքը (օրինակ՝ «ազգային ավան դայթ» կոչվածների կամ «Աշխարհակալ Հայաստանի» պաշտամունքը) մնան մի վտանգի աղբյուր է:

Ինչքան փորձն է ցույց տալիս, մենք ոնց որ թե հլը ենքան հագնկան ու ստավոր արիություն չունենք, որ զոնե հնարավոր համարենք, թե սխալ ենք մտածում, թե մեր էս տեսակ ցանկություններն ու հույսերն անհեթեթ են, երազային, ուտոպիական ու, ի վերջո, կործանարար:

Կտրուկ ու մեծ ծավալի հեղափոխության ընթացքը չես գուշակի: Մրա օրերին հասարակությանն առաջնորդող անհատները տենդով հիվանդացածի պես «միաբանող» գաղափարախոսություն են փնտրում:

Հասարակությունը «միաբանող» գաղափարախոսությունն էլ ենթադրում է, որ հասարակության ամեն մի անդամն էլ պիտի կու-հնագանդ ու անձպտուն ենթարկվի էս գաղափարախոսությանը:

Ու թե որ մեկնումեկը չենթարկվեց սրան, իսկույն հայտարարվում է, թե սա «հակառակ է միաբանությանը», թե սա «պառակտում է ազգը», թե սա «ազգի դավաճան է»: Ու նշան չունի, թե հակառակ գնացողն ի՞նչ հեղինակություն ունի, ազնիվ է, թե չէ, կամ ի՞նչ վաստակ ու արժանիք ունի:

Առաջին համաշխարհային օրերին Ֆրանսիացի Ռոմեն Ռոլանն ասում էր հայրենակիցներին, որ եթե Ֆրանսիան պատերազմից նույնիսկ հաղթող էլ դուրս գա, մեկ է, դա կլինի Ֆրանսիայի պարտությունը, ու համոզում էր Ֆրանսիային էլ, Եվրոպայի մյուս կողմը պետություններին էլ, որ հաշտվեն ու վեճը լուծեն բանական ճանապարհով՝ զիջումներով:

Ռոլանը լավ բան էր ասում, ու հետո պարզվեց, որ լրիվ ճիշտ էր ասում: Էսօր Եվրոպան համարյա նահանգների միության պես մի բան է, այսինքն, էսօրվա Եվրոպան դարձել է հենց Ռոլանի՝ առաջարկած հանրության պես մի հանրություն:

Բայց եվրոպացիք էսօր արդեն մոռացել են, որ հենց Ռոլանի խորհուրդներին ու դասերին հետևելով շնորհիվ են հասել էսօրվա Եվրոպային:

Իսկ են օրերին Ռոլանին Ֆրանսիայում ինչ ասես, որ չասեցին (ինքը Ֆրանսիայում չէր), ու ինչքան գիտեմ, Ֆրանսիայում Ռոլանն էսօր էլ էնքան սիրված չի, չնայած՝ առանց էդ բյուրեղային ազնվության ու վիթխարի մտքի տեր մարդու ջանքերի՝ էսօրվա Եվրոպան գուցե չլիներ:

Ու եթե էսօրվա Եվրոպայի ու առհասարակ արևմուտքի «դեմոկրատիան» դարձած չլիներ համարյա սոցիալիստական «միաբանող» գաղափարախոսություն, օրինակ, Սերբիայի էսօրվա ողբերգությունը չէր լինի:

Էս «գաղափարախոսությունն» է՛ն աստիճան է «միաբանող», որ Եվրոպայի ոչ մի «քաղաքակիրթ» պետություն փորձ անգամ չարեց ՆԱՏՕ-ին (այսինքն, ԱՄՆ-ին) ասելու, որ իր արածը ցեղասպանություն է, այսինքն՝ աշխարհի ամենածանր հանցագործությունն է, ու Եվրոպայի կենտրոնում իսլամական ֆունդամենտալիստական պետություն ստեղծեց:

«ՄԻԱԲԱՆՈՂ» ՈՒ «ԵՐԿՓԵՂԿՈՂ»  
ԳԱՂԱՓԱՐԱՒԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ոչխարը - Թո մորթեն, մեռակ թե առաջնորդեն:  
Կարել Չապեկ*

«Միաբանող» գաղափարախոսությունը տոտալիտար է, բռնակալական է, ամենատիրական է: Մա լրիվ հակառակ է իսկական դեմոկրատիային, լիբերալ դեմոկրատիային, ինչն ամենակարևորը համարում է մտածելու, խոսելու, կարծիք հայտնելու, ուրիշներին միմիայն համոզելու, տեղեկություն ստանալու ու խղճի ու հավատի ազատությունը:

Լիբերալ դեմոկրատիան համարում է, որ միակ ճշմարիտ կանոնը՝ Ոսկե կանոնն է, ինչն ասում է. «Ուրիշին մի՛ արա է՛ն բանը, ինչը չես ուզում, որ էլ ուրիշը քե՛զ անի»:

Իսկ լիբերալ դեմոկրատական կարգի ժամանակ հասարակության ամեն մի անդամն իրավունք ունի ու ազատ է իր սեփական գաղափարախոսությունն ունենալու, եթե, իհարկե, էդ գաղափարախոսությունը չի սահմանափակում ուրիշների ազատությունը:

Ուրեմն, լիբերալ կարգի ժամանակ մի հատիկ գաղափարախոսության փոխարեն ունենք էնքան գաղափարախոսություն, ինչքան հասարակությունն անդամ ունի, ու չի բացառվում, որ դրանց մեջ լավերն էլ լինեն:

Էս կարգի ժամանակ բռնակալն արդեն պարտադիր գործող ու էդ ազատությունները (ուրիշներն էլ) պաշտպանող է՛ն օրենքն է, ինչի առաջ բոլոր-բոլորն են հավասար (նույնիսկ սչատգամավորները, օլիգարխների զավակները, նախագահներն ու ավտոտեսուչները):

Էս կարգն ամենից առաջ մտավոր անհատականության, կամ, եթե կուզեք՝ մտավոր «անիշխանության», մտավոր «անարխիայի» կարգ է, է՛ն իմաստով, որ ամեն մի մարդ էլ իրավունք ունի ի՛ր իսկ գաղափարախոսությունն ունենալու, եթե սրանով ուրիշներին չի վնասում:

Մա նաև ինտելեկտուալ ազնվության կարգ է:

Ավելի ճիշտ, սա ուրիշին հանդուրժելու՝ կարգ է, ուրիշի սեփական կարծիքը, ճաշակը, հոգս ու մտածմունքը, կենցաղն ու սովորությունն ունենալու իրավունքն ու ազատությունը հանդուրժելու՝ կարգ է:

Լա՞վ է սա, թե՞ վատ: Տեսնենք:

Իսկ «միաբանող» գաղափարախոսությունը, ուրեմն, պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար: Բայց այսր հարց է, թե ո՞ր կետանի էս գաղափարախոսությունը. կկործանի՞՞ հասարակությունը, թե՞ վիճակը կլավացնի:

Զգիտենք, որովհետև ապագան անհայտ է:

Ենթադրենք, թե հասարակության համարյա բոլոր անդամները կողմ են ու հավատում են էս զաղափարախոսությանը: Մրանից հետևում է, որ սա ճիշտ է ու օգտակար:

Չէ՛, իհարկե: Նույն բանն ասելուց մազաչափ անգամ չի հետևում, որ էս սասած բանը ճիշտ է, եթե աշխարհի նույնիսկ բոլոր մարդիկ էլ միաբերան սա՛ ասեն, ու սրա համար լիքը փաստ ունենք:

Օրինակ, մարդկությունը, համարյա լրիվ, մի քանի հազար տարի հավատացել է, որ Երկիրը տափակ է, կլոր չի: Կամ էլ, որ Արևն է պտտվում Երկրի շուրջը: Փորձը ցույց տվեց, որ, օրինակ, ճիշտ է հենց է՛ն մի հատիկ մարդը, Կոպեռնիկոս անունով, ով լրի՛վ հակառակ կարծիքն ուներ:

Ու թե որ էս կարգի կոպեռնիկոսների բերանը փակես, հնարավոր է, որ ճշմարտությունը երբեք չիմանաս, ու հնարավոր է, որ կործանվես, ոչնչանաս, վերանաս է՛լ: Իսկ էս կարգի մարդիկ, այսինքն, հասարակությանը «հակառակ» գնացող մարդիկ, ամենաթանկն են ու ամենաազատասերը:

Մերվանտեսի Դոն-Կիխոտն ասում է. «Էս արևի տակ ազատությունից թանկ բան չկա, Մանչը՛», ու Դոն-Կիխոտը հազար միլիոն անգամ է ճիշտ:

Խոսքը ոչ թե անսահմանափակ ազատության կամ անարխիայի մասին է, այլ ամեն մեկի, ամեն անհատի է՛ն ազատության մասին, ինչը չի սահմանափակում ուրիշի ազատությունը:

Էս կարգի ազատությունը, այսինքն, ամեն մի անհատի ազատությունը (տե՛ս «Մարդու իրավունքների ու ազատությունների հռչակագիրը») ողջ մարդկության միակ ու գերագույն նպատակն է, ու ողջ մարդկության դարավոր երազանքը:

Մնացած ամեն ինչը, որ հակասում է սրան, միշտ բերել է արյուն, բռնություն, ճորտություն ու ամեն տեսակ սարսափ, իսկ եթե էսպես գնա, ու լիքերալ ծրագիրը չհատատվի ողջ աշխարհով մեկ, «միաբանող զաղափարախոսությունները», անպայման, մեր էսօրվա ողջ քաղաքակրթությունը կործանելու են (տես 34-38-ն ու 55-ը):

**ԳՈՆԵ ՄԻ ՀԱՏԻԿ ՄԻԱԲԱՆՈՂ ՈՒ ՈՉ ԿՈՐԾԱՐԱՐՄԻ  
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱ՛**

*Որոշք* – Ասում ես, Արծի՛վն ա ճիշտ: Վարդանտ չկա:  
Ճշմարտությունը միակն ա՛ որդային ճշմարտությունը:  
*Կարել Զապել*

Ի՞նչ երաշխիք կա, որ էս ազատությունները Չսահմանափակող կամ Չվերացնող գոնե մի հաստ «միաբանող» զաղափարախոսություն կա: Ո՞վ է ապացուցել կամ ո՞վ կապացուցի սա: Ո՛չ մեկը:

Մերկապարանոց հայտարարությունը, կամ շատախոսությունը, կամ էլ մնան ուրիշ բաներն ապացույց չեն: Ո՞վ գործություն ունի ապագան գուշակելու: 1980 թվին ո՞վ գիտեր, թե էսօր ինչ վիճակ կլինի: Ո՛չ մեկը:

Երևի ինձ ասող լինի, որ էս դեմ են միաբանությանը:

Իհարկե դեմ են, եթե «միաբանություն» ասելով հասկանում են մեն-մի հատիկ զաղափարախոսությունը, ինչի գլխավոր հրամանատարը մի որբերյան է, կամ մի նախագահ, կամ մի նախարար, կամ մի գեներալ՝ իր ընկեր-բարեկամների շքախմբով, կամ էլ նույնիսկ մեկ կամ մի քանի կուսակցություն, ու էս էլ, անկախ իմ գիտելիքների, իմ վաստակի ու արժանիքների չափից, պիտի սուսուփուս ենթարկվեն դրանց:

Հանուն ինչի՞ պիտի ենթարկվեն, թե որ հաստատ գիտեմ, որ ապագան գուշակելու կարողություն չունի ո՛չ մի զաղափարախոսություն, ինչքան էլ դա «ազգային» լինի:

Բա՞ որ հանկարծ էդ գեներալը կամ նախագահը կամ էլ՝ կուսակցությունը ժողովրդի ասած՝ «սարսաղի մեկը էղավ», կամ էլ արմախում ու տականքի մեկը:

Մինչև հիմա ոչ մի զաղափարախոսության ղեկավար Սոլոնի կամ Պերիկլեսի պես գիտուն, ազնիվ ու սկզբունքային չի եղել, իսկ մե՛ր ողջ քաղաքակրթության պատմությունը, սրանցից բացի, թեքա ուրիշ էս տեսակ օրինակ չունի:

Ի՞նչ երաշխիք կա, որ ներկայի կամ ապագայի «զաղափարախոս գեներալները» գիտուն, ազնիվ, սկզբունքային ու քաջ մարդիկ կլինեն: Ոչ մի երաշխիք չկա: Ու թե որ լինեն էլ, ես հավերժ չե՛ն ասելու: Ի՞նչ երաշխիք, որ դրանց փոխանորդները կունենան նույն հատկությունները: Սա՛ մեկ:

Շատ կարևոր է, որ արդեն է՛ն փաստը, որ ավյալ մարդը «զաղափարախոսության գեներալ» է, ցույց է տալիս, որ էդ մարդը չգիտի, որ ապագան - գուշակելի չի, որ «պատմության օրենքները» մեզ հայտնի չեն. չգիտի, ո՞ր էսօր նույնիսկ չգիտենք, թե պատմությունն օրենքներ ունի՞: (Կամ էլ՝ գիտի, բայց խաբում է իրեն հավատացողներին):

Ֆիզիկայի, քիմիայի կամ կենսաբանության օրենքներին մենք հավատում ենք, որովհետև ի վիճակի ենք ամեն վայրկյան ու ամեն տեղ ստուգելու, որ սրանք ճիշտ են:

(Ի միջի ալոց, բնագետները լավ գիտեն, որ իրենց օրենքները սոսկ ենթադրություն են, բայց է՛ն տեսակ ենթադրություն, ինչը միշտ ստուգելու

հնարավորություն կա: Էս իմաստով՝ կա՞ զոնե մի հատիկ «պատմական օրենք», ինչը կարող լինենք ստուգելու: Թե կա, թող իմացողը ցույց տա ու հետո էլ ասի ստուգելու ձևը):

**ԲԱ ԻՆՉԻ՞ ԸՈՒԲՁԸ ՄԻԱԲԱՆՎԵՆՔ**

*Գետի էրեսի տաշեղը.*— Հըր ես կարմրախառնին մայի, էկե ու բնձի լող տալ ա սովորցրեմ: Էս տգետը, փոխանակ հոսանքով լող տա, հոսանքին հակառակ ա լող տալի:

*Կարել Չապեկ*

Ասո՞ւմ եմ ես, որ «միաբանություն» ասածը առհասարակ պետք չի: Չէ, չեմ ասում:

Միաբանությունը պետք է, ու անպայման է պետք, բայց ես կողմ եմ միայն ու միայն է՛ն միաբանությանը, ինչը հաստատում է բոլորին հավասար աչքով նայող ու պարտադիր գործող օրենքը: Է՛ն օրենքը, ինչի աղբյուրը մասնավոր սեփականության նորմն է, ոչ թե ուժը:

Հաստատում է է՛ն օրենքը, ինչը պաշտպանում է ամեն մի հատիկ-հատիկ վերցրած մարդու ազատություններն ու իրավունքները. է՛ն օրենքը, ինչը հնար է տալիս ամեն մի առանձին վերցրած անհատին ապրելու, ծաղկելու, բարգավաճելու, հարստանալու. է՛ն օրենքը, ինչը չի ավելացնում ոչ մեկի ցավ ու դարդը, ինչը քչացնում է բոլոր-բոլորի ցավերն ու ուժում է, որ ել ցավերը դառնան ինչքան հնարավոր է քիչ:

(Այսինքն, ես կողմ եմ Հյունի ասած բարոյական նորմերի հաստատած միաբանությանը միայն):

(Ացավ ու անդարդ ու «դրախտային» կյանքի, այսինքն, լիակատար երջանկության ձգտումն անհեթեթ է ու անհնար: Անընդհատ ու ամեն բույն երջանիկ կարող է լինել միայն լրիվ առողջ ու կուշտ ու կերած-խմած հոգեկան հիվանդը՝ «դեբիլը»):

Պարզից էլ պարզ է, որ եթե հանրության առանձին վերցրած ամեն մի անդամը հարստանա, ծաղկի ու բարգավաճի, կհարստանա ու կծաղկի ու կբարգավաճի հենց հասարակությունն ինքը, այսինքն, ողջ երկիրը:

Հարուստ պետությունն էլ՝ կունենա առողջ տեխնիկայով հագեցած ու մարտունակ բանակ, ինչի ամեն մի զինվորն ու սպան կգործեն ու կառաջնորդվեն հենց էս պարտադիր գործող օրենքով, էս արդար օրենքով, ինչն անպայման նայում ու հատիկ-հատիկ պաշտպանում է ամեն մեկին:

Ու ես զինվորներն ու սպաները կափստսան ու կպաշտեն էս օրենքը, որովհետև ափսոսած ու պաշտած կլինեն իսկական արդարությունը:

Ու էս օրենքը կլինի ամեն մի քաղաքացու հայրը, ուրեմն նաև հայրենիքը, ու էնքան թանկ հայրենիքը, որ քաղաքացիները, պետք եղած ժամանակ, կելեն ամեն զնով պաշտպանելու սա:

Ու եթե էս տեսակ օրենքը, էս կարգը, էս տեսակ երկիրը, էս տեսակ հայրենիքը պաշտպանելու հարց լինի, այնժամ համարյա բոլոր-բոլորը կլինեն միաբան (չհաշված «դեբիլներին»), որովհետև թե որ սա կորցրին, կորցնելու են իրենց ամենաթանկ բանը, իրենց անձնական ազատությունը, ու դառնալու են ճորտ ու ստրուկ, աղքատ ու հարկադիր ստոր: (Ու կարևոր չի, թե ում ստրուկ ու ճորտը կլինեն, օտարների՛, թե՛ սեփական փաշա ու սուլթանների): Ու էս տեսակ պետությունը կլինի ոչ միայն հարուստ, այլև կլինի ուժեղ, որովհետև բանակը պահում են փողով ու արդարությամբ (օրենքով):

Ես, այ, էս իրոք միաբանող օրենքին եմ կողմ, էս բռնակալ, դիկտատոր, թագավոր օրենքին, որովհետև էս անգամ արդեն էնքան էլ կարևոր չի լինի, թե ո՛վ է նախագահը կամ վարչապետը, Պողոսը, թե Պետրոսը:

Ու էս դեմ եմ ամեն տեսակ «ազգային», «կրոնական» ու սոցիալիստական գաղափարախոսություններին՝ առաջին հերթին հենց է՛ն բանի համար, որ սրանք դեմ են նկարագրած օրենք-բռնակալին:

Դեմ եմ, որովհետև «միաբանող» տոտալիտար գաղափարախոսությունները՝ բոլորն էլ ենթադրում են, որ մի կողմից՝ օրենքը պիտի հավասար նայի հասարակության անդամների մեծ մասին (բայց ոչ բոլորին), մյուս կողմից՝ էս օրենքը պիտի ենթարկվի «ընտրյալ ու իմաստուն մի հեղուսի», կամ սրանց մի խմբին (ազգի առաջնորդին, կուսակցությանը, սինդոդին, ցեղային խորհրդին, ցեկային, պոլիտբյուրոյին ևն):

**«ՄԻԱԲԱՆՈՐ» ԳԱՐԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԻՎԱՆՁՆԵՐԸ**

*Հատուն ավագը.*— Ի՞նչ: Ասում եք՝ ա՛՛վ ա, աղքատությունն ա, քեզք չկա՞: Դրանք սառ հե՛չ: Նախ պահ Կարթագենը կործանենք:

*Կարել Չապեկ*

Ուրեմն, տոտալիտար միաբանող կարգի ժամանակ մի հատիկ ու բոլոր-բոլորի համար հավասար բռնակալ-օրենքը կտար-կտոր է լինում, բաժանվում է հասարակության բոլոր-բոլոր պաշտոնավորներին:



Ու արդեն արդար ու պարտադիր գործող մեկ հաստ օրինախմբի տեղը ունենում ենք ճիշտ էնքան հատիկ օրինախումբ, քանի հաստ որ պետությունը պաշտոնավոր ու «աֆտարիտետ» ունի:

Ու էս առանձին օրենքների գործելու ձևն արդեն կախված է պաշտոնավորների ու էս «աֆտարիտետների» անձից, սրանց բնավորությունից, սկզբունքայնությունից ևն:

Բանակում, օրինակ, ունենում ենք ճիշտ էնքան հաստ օրենք, ինչքան որ սպա ու «խառոշի» կա էդ բանակում:

Ոստիկանությունում ունենում ենք ճիշտ էնքան հաստ օրենք, ինչքան ոստիկան կա, ու քանի հաստ էլ «թաղի տղա» ու «աֆտարիտետ» կա («խառոշին», «աֆտարիտետն» ու «թաղի տղան» էլ են պաշտոն, ընդ որում, ահագին շահութաբեր):

Մարդիկ տարբեր են ու սրա համար էլ էս «անհատական» օրենքներն էլ են տարբեր լինում: Ու էս անգամ արդեն ոչ մի միաբանություն հնարավոր չի՝ ամեն պաշտոնավոր (այսինքն, օրենսդիր ու միաժամանակ դատավոր) «աղոցն իր կողմն է քաշելու»:

Պաշտոնից զուրկ ամեն մի մարդ դառնալու է պաշտոնավորների ճորտն ու ստրուկը: Բանակում, օրինակ, շարքային զինվորը դառնալու է սպաների, «խառոշիների» ու «ղեմբելների» ճորտն ու ստրուկը:

Բայց էս տեսակ զինվորը, ով ամենաստոր աստիճանի մի ճորտ է, հենց սրա համար էլ ոջլոտ ու սոված է լինելու, ապրելու է անասնական պայմաններում, հիվանդանալու է դիզենտերիայով ու հազար ու մի ուրիշ ախտով, անընդհատ ծեծ է ուտելու, բռնաբարվելու է՝ էս բառի բուն իմաստով, հասնելու է ինքնասպանության կամ հլու-հնազանդ անասունի վիճակի (ու սա ընտրելու «իրավունք» է ունենալու):

Կամ էլ, էս ամենից ազատվելու համար, հենց ի՛նքն է դառնալու գազան (այսինքն՝ օրենքի կրող ու աղբյուր): Ու եթե մի օր սրան ասեն. «Գնա՛, կյանքդ տուր հանուն հայրենիքի», ու սա էլ կանգնի ու ասի. «Ձեր հայրենիքի էլ ըսենց-ընենցը», ո՞ր մի հասկացող ու կյանքի փորձ ունեցող ազնիվ մարդու քերանը կբացվի, որ մեղադրի սրան:

Թե որ մի հայր իր ընտանիքի անդամներին ու զավակներին էնպես պահի, ոնց որ էլ տեսակ պետությունն է պահում իր ժողովրդին (այսինքն, հայրը հարազատ զավակներին ծեծի, ջարդի, ստորագնի, բռնաբարի, ու դրանք ոչ մեկից պաշտպանություն ստանալու ճար չունենան), ո՞վ չի ասի, որ էդ հայրը տակաճ է, ինչքան էլ էդ «հայրը» պնդի, թե էդ ամենն անում է՝ «հանուն միաբանության, հանուն ընտանիքի լուսավոր ապագայի»:

Հայրենիքը սոսկ բառ չի, սոսկ վերացական հասկացություն չի: Չկա՛ հենց էնպես «հայրենիք»: Հայրենիքը ե՛ս եմ, դո՛ւ ես, Պողո՛սն է, Պետրո՛սն է, համարյա ամենքըս, հատիկ-հատիկ վերցրած, այսինքն, մեր մեծագույն մասը:

Ուրեմն՝ հայրենիքի վիճակը մեր ամեն մեկի վիճակների խումբն է՝ հատիկ-հատիկ գումարած:

Ու եթե էս առանձին գումարելիների մեծագույն մասի վիճակը ողբալի ու ստոր ու հուսահատական է, ուրեմն՝ հայրենիքի վիճակն էլ է ողբալի ու ստոր ու հուսահատական: Ու եթե ժողովրդի մեծագույն մասը ճորտ է ու ստրուկ ու թշվառ ու ողորմելի, ուրեմն, հայրենիքն էլ է ճորտ ու ստրուկ ու թշվառ ու ողորմելի: Ու ոչ մի «միաբանող ազգային գաղափարախոսություն» ի վիճակի չի լինի էս «հայրենիք» կոչվածին էլ վիճակից հանելու, որովհետև էս վիճակից ազատվելու միակ ճարը «չմիաբանող» գաղափարախոսությունն է միայն:

Սա, էս «միաբանող գաղափարախոսությունը», շատ-շատ, հլու-հնազանդ ու պասիվ հասարակական հոտը փոխարինի հլու-հնազանդ ու մարտնչող հասարակական հոտով, ով որ հլու-հնազանդ կենթարկվի՝ իր գեներալներին ու հարևան երկրներին էլ կկոտորի, թե որ ուժը պատեց:

Իրենց «ղեմոկրատ» հռչակող բոլոր անսկզբունքային քաղաքործիչներն անպայման «միաբանող ազգային գաղափարախոսություն» են պահանջում կամ հռչակում: Սրանցից ոմանք գուցե անկեղծ հավատում են, որ լավ բան են ուզում, բայց սրանք ուղղակի մոլորված են՝ իրենց, մեղմ ասած, «թերի գիտելիքների» պատճառով:

**«ՄԻԱԲԱՆՈՂ» ԳԱՂԱՓԱՐԱՒՈՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՄԷ ԶԵՆՆՏՈՒ**

*Ցիլանը* - Հիսուն քաղաք ա քանդութարափի էղե: Բա էսի շշմելու հաղթանակ չի՞:

*Կարել Շապեն*

Քաղաքործիչը, համարյա ատանց բացառության, սկզբունքներից զուրկ է, իսկ սկզբունքներից զուրկ քաղաքործիչն «միաբանող ազգային գաղափարախոսությունը» չափազանց է ձեռնառու: Ինչո՞ւ:

«Միաբանող ազգային գաղափարախոսությունը» անսկզբունքային քաղաքործիչն խի՛ստ է ձեռնառու է՛ն պատճառով, որ էս գաղափարախոսու-

թյունը հնար է տալիս եւ գործչին, որ սա դեմոկրատական կարգ ու օրենքն իր ուզածի պէս խախտի ու ոտնակոխ անի, երբ ու որտեղ ուզենա:

«Միաբանող գաղափարախոսությունը» հնար է տալիս, որ քաղգործիչը խաբի, խարդախություն անի, անի ամեն տեսակ ստորություն, զբաղվի կավատությամբ ու պոռոկանոց պահի, զբաղվի նարկոբիզնեսով, տեռորիզմով, իր իսկ երկրի աննեղ քաղաքացիներին ճնշի, թալանի, բանտարկի, բռնաբարի ու նույնիսկ սպանի, որովհետև եւ քաղգործիչն արդարանալու միջոց ունի, որովհետև միշտ էլ հնար ունի ասելու:

*–Նախ՝ անտառը կտրես՝ տաշեղներն անպայման են կորելու: Երկրորդ՝ ես եւ ձևով «աշխատածս» փողերով հայրենիքի լուսավոր սպազան են կերտում, չե՞ս տեսնում, որ, օրինակ, տեռորիստների հե՛րն են անհիծում: Իսկ հետո էլ, հենց որ ես ձևով, այսինքն, առանց միջոցների խտրության, հարկավոր գումարն «աշխատեն», իրաքցիների, իրանցիների, նենեցների ու չուկչիների հերը լրիվ կանհիծեն, ու քու համար «Ծովից-ծովը» կստեղծեն: Ընենց որ, հըր ձեն մի հանի, ու մի քիչ, մի քանի դար էլ դիմացի՝ քու եւ անասնական վիճակին, ու համ էլ ընձի բան մի սաս, ու թող որ կուշտ ուտեն, մինչև հարկավոր գումարը «աշխատեն» պրծնեն:*

Ու ճիշտը որ ասենք, «միաբանող» ցանկացած գաղափարախոսության նպատակն ու էությունը էլ գաղափարախոսության զենեքայների «կուշտ ուտելն է»:

Մնացածը՝ քողարկություն է, քողարկություն՝ ստի, խարդախության ու խաբեության ծխի շղարշով:

Չարմանալի է, բայց մարդիկ ոճց որ կույր ու խուլ ու տարրապան տրամաբանությունից զուրկ լինեն, որովհետև շատ-շատ հաճախ (եթե ոչ միշտ) աղղակի չեն նկատում, չեն տեսնում, որ «միաբանող», տոտալիտար (քուրդի համար պարտադիր ու բոլորի համար միատեսակ) պահանջներն անհեթեթ են ու անխմաստ: Մրա բնորոշ օրինակն է «ազգի ու մանավանդ «մաքուր ազգի» ու «մաքուր ու անաղարտ հայերենով խոսող ու միակերպ ուղղագրությամբ գրող ազգի» գաղափարը, ինչը որբերյանների սիրած թեման է:

Չխոսենք են բանից, որ մինչև էսօր ոչ մեկը ի վիճակի չի եղել ասելու, թե ի՞նչ է «ազգ» ասածը (ինքնին ենթադրվում է, որ սա հայտնի է բոլորին, բայց մի փոքր սավելի լուրջ քննությունը ցույց է տալիս, որ այս «գաղափարը» ուղղակի գառանցանք է): Մի օրինակ բերեն:

*Լուցիկն.– Տեսք էլը: Ես անչեջ կրակն եմ:  
Կարել Չապեկ*

Վերջերս որբերյաններից հաճախ կլես. «Եկեք բուրս հայեցի մտածենք» են:

Էս «չքնաղ» ու «հայերնաշունչ» կարգախոսն ուղղակի հակասական է: Իրոք, եթե «հայեցի» մտածելը մեր էսօրվա հայերի մեծ մասի մտածողության ձևն է (թե սա ի՞նչ բան է, չգիտեմ, որովհետև ինչքան մարդ կա, էնքան էլ մտածելու ձև կա, բայց մի բույե ենթադրենք, որ բնագետների իմացած միջինի հասկացությունը էստեղ էլ է անցնում), էլծամ սա շատ վատ ձև է, որովհետև հենց եւ «հայեցի» մտածելով ենք հասել մեր էս քվառ ու ողորմելի վիճակին:

Մյուս կողմից, եթե համարենք, թե «հայեցի» մտածելու ձևը ոչ թե սովորական, այսինքն, մարդավարի մտածելու ձև է, այլ մի լրիվ ուրիշ բան է, կհասնենք մի արտառոց եզրակացության:

Քանի որ մարդկության մեջ հայեցի մտածելու ձևը միայն հայերն ունեն, կնշանակի հայերը մարդ չեն, այլ մարդուց տարբեր մի բան են:

Սա ինձ իսկի դուր չի գալիս: «Հայեցի մտածելու» տեղը ավելի լավ է, մարդավարի՝ մտածեն ու վարվեն: Ու զարմանալին է՛ն հանգամանքն է, որ երբ սա ինձ հաջողվում է, ես էլ եմ շատ գոհ լինում, շրջապատս էլ:

Բացի սա, շատ են ուզում, որ կարողանամ գոնե մի քիչ «անգլիացի» մտածեն ու վարվեն, օրինակ՝ Նյուտոնի, Շեքսպիրի, Միլթոնի կամ Լորդ Արտոնի պես. մի քիչ «հունացի» մտածեն ու վարվեն Դեմոկրիտոսի, Սոլոնի, Սոկրատեսի, Պերիկլեսի, Հերոդոտեսի կամ Եվրիպիդեսի պես. մի քիչ «ֆրանսիացի» մտածեն ու վարվեն, օրինակ՝ Ռոմեն Ռոլանի, Պյեր Կյուրիի կամ Ալեքսիս դե թոքվիլի պես. մի քիչ էլ «գերմանացի» մտածեն ու վարվեն, օրինակ՝ Գաուսի, Էյնշտեյնի, Գյոթեի, Հումբոլդտի պես. մի քի էլ «ռուսացի» մտածեն ու վարվեն՝ Լև Տոլստոյի ու Մախարովի պես և՛ (Դեմոկրիտոսը, օրինակ, ասում էր. «Ավելի լավ է, մի թեթեմ գունեմ, քան թե Իրանի շահանշահը լինեմ»):

Ու կամ էլ, էս են ու ձեր պես չեն մտածում ու վարվում, ձեր ի՞նչ գործն է, ես եմ ձե՛զ վնաս չե՛մ տալիս: Դուք ինչքան ուզում եք, «հայեցի» մտածեք, եթե իհարկե գիտեք, թե դա ինչ է:

## Ո՛Վ Է ՄԵՐԱՎՈՐԸ

**Ճորձը. — Գիրք՝, ինչքան բան կաննի, թե որ  
ընձի հրամայեին:**

*Կարել Չապեկ*

Մեր թշվառ ու ողորմելի «հայեցի մտածողության» իրական էությունը հետևյալն է:

Մենք մեր էս իրոք որ թշվառ ու ողորմելի վիճակի մեղավորներին ման ենք գալիս միմիայն դրսում, միմիայն մեզնից ու մեր երկրից դուրս:

Մենք մեղավոր ենք համարում՝ առաջվա (մեկ-մեկ էլ՝ էսօրվա) պարսիկներին, առաջվա հույներին ու հռոմեացիներին ու հետո էլ՝ արաբներին:

Մենք մեր էս աղետալի վիճակի մեղավորն ենք համարում թուրքերին, ու էն էլ՝ 800 տարի, հրեաներին ու մասոններին ու ռուսներին ու ամերիկացիներին ու անգլիացիներին ու գերմանացիներին ու ֆրանսիացիներին:

Մենք մեղավոր ենք համարում Լենինին, Ստալինին, Աբաբուրքին, Ֆրունզեին, Պետրոս Մեծին ու Եկատերինա 2-յոյին, Լեն, Լեն, Լեն:

Ում ասես, որ մենք մեղավոր չենք համարում (բացի երևի նենեցներն ու չուլչիներն ու Ավստրիալիայի ու մեկ էլ՝ Ջամբո-Մամբո ցեղի բնիկները): Ամեն տեղ ու ամեն ինչի մեջ ման ենք գալիս մեր էսօրվա վիճակի ու ապագա ահավոր վտանգների մեղավորներին:

Ու երբեք ոչ մեկիս մտքով չի անցնում, որ կարող է մեղավոր լինենք հենց մենք, որ մեր սեպիական ճորտության ու թշվառության պատճառը մեր իսկ անկեղծ մոլորություններն ու նախապաշարմունքներն ու անտեղյակությունն են, որ մեր համար անսահման թանկ թվացող ուտոպիական, անիրականալի երազների հետևից ընկնելը երևի կարծանարար է:

Մենք մեզ թույլ էլ չենք տալիս կասկածելու, որ շատ հնարավոր է, որ էս կործանարար «միաբանող գաղափարախոսության» հիմնադիրները, օրինակ՝ Նաև մեր «հանճարեղ» համարվող հայ գյուղներից մի քանիսն են:

Մենք, շատ-շատ ազամ, մեծամոլ ու մեծամիտ ենք, սնահավատ ու նախապաշարված ու, հազար ափսոս, երբեմն էլ խավարամոլ:

Մենք, շատ-շատ հաճախ, մանկամիտ ենք:

Միանից քիչ առաջ շատ կլսեիր. «Մենք փայլուն ազգ ենք, մենք համաշխարհային ազգ ենք»: Վերջերս արդեն ուրիշ բան էս լսում. «Որպես ազգ բանի պետք չենք» (այսինքն՝ «միաբանող ազգային գաղափարախոսություն» չունենք):

Բայց երբևէ լսե՞լ եք, որ մեկնումեկն ասի. «Ես փայլուն մարդ եմ, էս համաշխարհային մարդ եմ, էս անպետք մարդ եմ» (տես Կարել Չապեկի՝ *Բառերին գերի* վերնագիրը):

«Միաբանող գաղափարախոսությունները» մեզ «ձեռ են տալիս» հենց է՛ն բանի համար, որ ազատում են անձնական պատասխանատվությունից:

Իվֆն ու Պետրովն ասում են, որ խեղդվողների փրկության գործը ամեն մի խեղդվողի անձնական գործն է: Մտածելու բան չի՞: Մտածելու ժամանակը չի՞:

Ժամանակը չի՞, որ ընդունենք, որ մենք անիվ հայտնագործող չենք, մանավանդ, որ այդ անիվը վաղուց հայտնագործել են:

P. S. Ու մի բան էլ:

**Ասենք թե՛ միաբանվեցինք: Միաբանվեցինք ու շարք կանգնեցինք  
ու մի հատ էլ գերազնիվ ու գերխելոք Ֆյուրեր ճարեցինք  
(էս ապրանքից ոչ միայն Հայաստանը չունի, այլև ողջ աշխարհը,  
բայց մի թույն համարենք, թե ճարել ենք):**

**Ասեք, խնդրեմ, ի՞նչ ենք անելու:**

**Շարք-շարք հարձակվելու ենք Թուրքիայի՞ ու Չինաստանի՞ վրա  
ու ջնջելու ենք դրանց, որ Ծովից-ծովը կառուցե՞նք:**

## ԱԶԳԱՅԻՆ ՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՆԵՔ

Եթե քո բացատրությունն էնքան է պարզ ու հստակ, որ դրա սխալ մեկնությունը բացարձակ անհնար է, մեկ է, ամպայման լիքը մարդ կլինի, ուլքեր ասածներդ լրի՛վ սխալ կհասկանան:  
*Չիզույմի 2-րդ ու 3-րդ օրենքների 1-ին հետևանքը*

Հայագույներն ու որբերյանները շատ են ասում, թե մենք պիտի անպայման ու ամեն գնով պահպանենք մեր ազգային ավանդույթները, նույնիսկ դեմոկրատիա կամ կապիտալիզմ կամ էլ բաց, քաղաքացիական հասարակություն կոչվածից հրաժարվելու գնով, որովհետև սա իբր ուղղակի ապականում է «մեր ազգային չքնաղ ու անարատ բարքերն ու ավանդույթները»:

Էս պահանջը նոր բան չի: Սրա մի տեսակը կար, հին հունական աշխարհում, օրինակ, Սպարտայում, ու, իհարկե, համարյա ամենուր, որտեղ կառչած էին ու են հնագույն ցեղային սովորույթներից: Սա նոր ուժով է հնչում Վերածննդից սկսած, բայց սրանով մեղադրել են՝ Զրիստոսին, Մահմեդին ու շատ-շատերին, թերևս՝ բոլոր նորարարներին:

Սրանից 25 դար առաջ Սոկրատեսն ասում էր համարյա նույն բաները, ինչ որ էսօրվա լիբերալները: Ու Սոկրատեսին մահվան դատապարտեցին նախնիների ավանդույթները պղծելու և երիտասարդությանն ապականելու մեղադրանքով:

Շատ են ասում, թե ավելի լավ է հրաժարվենք եղ արևմտյան լիբերալիզմից ու դեմոկրատիա-կապիտալիզմից ու դրա արվեստից, մանավանդ արևմտյան ֆիլմերից, քան թողնենք, որ մեր բարքերն ապականվեն: Էս բաներն ասողները, առաջին հերթին մեղադրելով արևմտյան հեռացույցը, պնդում են, թե «հրեական մատոնները (կամ՝ ամերիկացիները, կամ՝ ուրիշ մեկը ևն) մեր ազգի դեմ դավադրություն են կազմակերպել» ևն:

Ըստ էս մեղադրողների՝ մեր վնասը երկակի է:

Նախ՝ արևմտյան մշակույթի ու մանավանդ՝ ֆիլմերի ազդեցությամբ մեր երկրում անասելի շատանում է պոռնկությունը, գեյությունն ու նման ուրիշ այլանդակ ու հակաբնական երեվույթները (ես էլ եմ դրանք համարում այլանդակ, հակաբնական ու զարչելի), բարքերն էլ ապականվում են առհասարակ:

Երկրորդ՝ արևմտյան «կռիվ-կիճոնների», սարսափի ֆիլմերի ու նման կարգի գրականության ու արվեստի ազդեցությամբ մեր երկրում, իբր, շատանում է դաժանությունը, չարությունն ու հանցագործությունը:

Էս երկու թեզն էլ համարյա լրիվ են սնանկ:

Չեմ կասկածում, որ ասողների մի մասն անկեղծ է հավատում սրանց ճշմարտությանը: Բայց սրանցից ամենաեռանդունները՝ հենց հայագույներն ու որբերյաններն են: Անկասկած է նաև, որ կապիտալիստական բարքերի ապականության մասին հորինված էս առասպելը միմիայն մշակութային էվոլյուցիայի պատմությունն ու տնտեսագիտության հիմունքները չիմանալու արդյունք է:

Մարդիկ միշտ էլ իդեալականացնում են իրենց անցյալը: Նույնիսկ առանձին անհատն է երանությամբ հիշում իր մանկությունը, ինչքան էլ դառը եղած լինի այն: Իսկ անցած-գնացած ոսկեդարի առասպելը, «աստվածային» փիլիսոփա Պլատոնի ու հետո էլ՝ Հեգելի (նաև ուրիշների) «թեթև ձեռով», շատ-շատ է տարածված:

Մարդիկ ուղղակի տեղյակ չեն միջնադարի իրոք որ այլանդակ կենցաղին ու բարքերին, անօրինակ դաժանությանն ու չարությանը, ինչը, թերևս, շատ մեղմ նկարագրել է, օրինակ, Մարկ Տվենն իր *Աղբատն ու արքայազնը* ու *Քոնեքտիկուտցի յանկին Արթուր թագավորի արքունիքում* գործերում:

Բայց էս կարգի նկարագրություն շատ քիչ կա: Հին Հռոմի ու հունական աշխարհի բարքերն ավելի լավ գիտենք, քան (նաև մեր հին ու նաև մեր) միջնադարինը: Սրա համար է, որ ոչ մասնագետ մարդը, համարյա միշտ, մտածում է, թե միջնադարում էլ, խորախոր անցյալում էլ, բարքերն «անբիծ ու անաղարտ» են եղել:

Նման ոչ մասնագետը մտածում է նաև, թե լավի, վատի, բարու, չարի, արդարի, անարդարի, գեղեցիկի, գարշելու ու սրանց պես ուրիշ գաղափարները բացարձակ են, անփոփոխ ու տրված են «ի վերուստ»: Նման մարդը, ասելով՝ բարոյականություն, բարոյականության նորն ևն, համարյա միշտ էլ նկատի ունի միայն սեռական կամ ընտանեկան կյանքին վերաբերող նորմերը, այսինքն, էթիկան՝ նեղ իմաստով:

Բայց շատ հաճախ էլ, ասելով՝ բարոյականության նորն, նկատի ունի նաև սողային կապված բաները, օրինակ, տղամարդու զինը (ականջօղ) կամ «պիրսինգ» կրելը, կամանց «պորտը բաց» հագուստը ևն: Ու ասում են նաև, թե հայերն էս կարգի «այլանդակ» բաներ՝ երբևէ չեն ունեցել, երբեք ու ոչ մի դարում: Իբր սրանք նոր են, ու սրանց ծագելու պատճառը միմիայն արևմտյան ազդեցությունն է:

Տեսնենք, թե իրո՞ք այսպես է:

\*\*\*

ՄՐԲԱԶԱՆ ՊՈՈՆԿՈՒԹՅՈՒՆՆ  
ՈՒ ՏՂԱՄԱՐԿԱՆՑ ԳԻՆԴԵՐԸ

Տգևա են բողոքը, բայց տարբեր բնագավառներում:  
*Ռոշերսի տգիտության պոստուլատը*

Հին Արևելքում, համարյա ամենուր, կար մի շատ տարածված ու շատ հարգի պաշտամունք: Պաշտում էին պտղաբերության մայր աստվածուհուն ու սրա սիրեցյալին:

Պաշտամունքը տարածված էր նաև Եվրոպայում ու այլուր:

Աստվածուհուն տարբեր լեզուներով ու տարբեր ժամանակներում տարբեր անուն էին տալիս՝ Իշտար, Աստարտե, Դեմետր, Ափրոդիտե, Արտեմիս, Վեներա, Ըամիրամ, Կիբելե, Դերկետո, Անահիտ, Աստղիկ ևն:

Ըստ տարածված առասպելների՝ էս աստվածուհու սիրեցյալն սպանվում է (սպանողը, օրինակ, վայրի վարագն է), ու սրտակոտոր աստվածուհին ողբում է իր սիրեկանի մահն ու սուգ է պահում: Սգի միջոցին դադարում է ամեն ինչի պտղաբերությունը, երկիրը զրկվում է բուսականությունից, ջերմ արևից, ու սկսվում է աշուն-ձմեռը:

Հետո, տարվա մյուս կեսին, երբ աստվածուհու սիրեցյալը՝ Թամնուզը, Կախը, Օսիրիսը, Ադոնիսը, Արան ևն, կենդանանում է, բնությունն էլ հետն է կենդանանում, որովհետև պտղաբերության աստվածուհին ուրախանում ու բարիանում է (Դիոնիսոսի կամ Բարոսի պաշտամունքն էլ է կապված սրան):

Ըստ էս պաշտամունքի, զանազան զոհեր մատուցելով աստվածուհուն, Մեծ Մորը, շատացնում էին թե՛ վայրի ու ընտանի բույսերի ու կենդանիների, թե՛ մարդկանց պտղաբերությունը:

Մեծ Մորը բազում աճաբ ու քուրս էր նվիրված: Գլխավոր տոնախմբությունը տևում էր երկու օր: Սգավոր ժողովուրդն ու քրմերը սափրում էին գլուխները (ուրիշ տեղ՝ մորուք էին պահում), կանայք բացում էին կրծքերն ու հաճախ էլ մերկանում, գլխներին հող ու մոխիր էին ածում, խարազանում իրենց մարմինների մերկ մասերը, խեղում իրենց ևն: Սրբազան մոլեռանդության մեջ՝ տղամարդիկ հաճախ ամորձատում էին իրենց (թլպատության ծեսն էստեղից է) ու այլ ահավոր խեղվածքներ էին հասցնում:

Երկրորդ օրը տոնն ու ուրախությունն էր, որովհետև, Մեծ Մոր սիրեցյալն իբր կենդանանում էր: Էդ տոնն ուղեկցվում էր սեռական բաց ու արձակ օրգիսներով, որոնք կատարվում էին թե՛ տաճարներում ու դրանց սլառկան տարածքներում, թե՛ սար ու դաշտ ու անառններում (տես՝ օրինակ, Էվրիպիդեսի *Բարոսուհիները*):

Մանուկ Աբեղյանի *Վիշապ կոչված կոթողները՝ որպես Դերկետո-Անահիտ աստվածուհու պաշտամունքի արձաններ* գործում (հատ Ը, էջ 155-156) բերված է նաև հայերի էս ավանդույթի նկարագրությունը:

Աբեղյանը գրում է.

«Նրա (Անահիտի – Մ. Հ.) հոչակավոր մեղանը գտնվում էր Եկեղիք գավառի Երեզ ավանում (այժմ՝ Երզնկա), ուր դիցուհին հարյուրներով սպասավոր ուներ «սրբանվեր» կամ «սրբապաշտ» - հերոդուրս կոչված թե՛ այր, թե՛ կին:

«... Նրան պաշտում էին նույնպես ջրերի վրա (եստեղից է մեր Վարդավառը – Մ. Հ.): Տարին երկու անգամ՝ զարմանը և աշմանը, նրա տոնի օրերը մեծ հանդեսներ էին կատարվում լույծ ու անառակ պաշտամունքով:

«Նորաստի աղջիկները, ի պատիվ դիցուհու՝ պոռնկություն էին անում, և այս չէր համարվում ամոք: Ազնվականներն իրենց կույս դուստրերին ձուճում էին աստվածուհուն, և այսպես նրանց պոռնկության տալուց հետո ամուսնացնում էին:

«... Անահիտի մեղաններ կային նաև Տարոնի Աշտիշատում և Անճկիք գավառի Դարբնաց Քար կոչված տեղում»:

Ըստ Մովսես Խորենացու (նույն տեղը).

«Դեք բազումք բնակեալ էին անդ եւ պատրեհն (կախարդում էին – Մ. Հ.) զմարդիկ տեղոյն, տուեալ յայնմ տեղոջէ դեղս ախտակաճս առ ի կատարել զպղծութիւն ախտից, կռանաձէնս դարբնաց ահաւոր հրաշիւք արեալիքս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անդ առ քրային դեգերէին, առեալ ի շատուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն...»:

Էդ օրերին, Հայ ազնվականների դուստրերը մինչև երկու-երեք ամիս պոռնկություն չանեին, էն էլ բացարձակ, հանդիսատեսների ներկայությամբ ու անպայման փառով, տրվելով միայն օտար անծանոթներին («վառուակած» փողն էլ տրվում էր տաճարին, այսինքն, դիցուհուն), ամուսնանալու իրավունք չունեին:

Թերևս դրանց մեջ եղել են էնպիսի տգեղ «խեղճուկրակները», ովքեր մի քանի տարի են «ծառայել» դիցուհուն, բայց իրենց «պաշտող» չունենալով՝ սնունդսնունալու իրավունք չեն ունեցել: Իսկ «բախտավոր» գեղեցիկները, մեկ-երկու ամսվա «պաշտամունքից» հետո ամուսնացել են, ու հավանական է, որ սրանց ծնողները հպարտացել ու գլուխ են գովել, որ իրենց պուստրերը պատվով են «պաշտվել»:

Հայերը բացառություն չէին, էսպես էր համարյա օղջ Հին Արևելքում ու Եվրոպայում (սուսները Մասլենիցան ու Կուպալայի տոնը, ինչպես է հայերի Վարդավառն ու Տյառնընդառաջը սրանց հուշերն են):

Եւրանն իմանալուց հետո հին աշխարհի բարքերի մեր օրերի համար զարշէլի ազատությունն արդեն եղբան զարմանալի չի թվում (ինչպես որ զարմանալի չի թվում արդեն՝ Փառանձեմ բազուխու «արկածների» Բուզանդի նկարագրությունը): Էս պաշտամունքն ենքան էր հարգի, որ հին հռոմեացիները սա (Մեծ Մոր՝ Կիբելեի պաշտամունքը) փոխ առան փայտ-զացիներից ու Հռոմում հիմնեցին Կիբելեի պաշտոնական պաշտամունքը, տաճարով ու քուրմ-քրմուսիներով հանդերձ:

Իմիջիայոց՝ սա հին աշխարհի մարդկանց կրոնական հանդուրժողության փայլուն օրինակներից մեկն է: Առաջին՝ բացատրիկ անհանդուրժող կրոնները հուդայականությունն ու դրանից ծագած քրիստոնեությունն ու հետո իսլամն էին:

Մրանց հակառակ՝ հին մարդիկ ո՛ր մի երկիրը գնային, թեկուզ ժամանակավոր, իրենց աստվածների հետ մեկտեղ, պաշտում էին նաև էլ երկրի էս կամ էն աստծուն: Ասորեստանցիները, օրինակ, Բաբելոնը գրավելուց հետո, Բաբելոն քաղաքի գլխավոր աստծու՝ Մառդուկի ոսկե վիթխարի արձանը վերցրին ու տարան Նինվե՝ իրենց մայրաքաղաքը, դրեցին էնտեղ որ զոհ մատուցեն, որ հենց իրենց պաշտպանի և ոչ թե բաբելացիներին: Ահա թե ինչպիսին էր նաև մեր հնագույն «ավանդույթներից» մեկը վերաբերվում հավատորացությանը, որովհետև մենք էլ ենք ուրիշներից աստված փոխ առել, ու շատ:

Պատմաբան ու արևելագետ Նիկողայոս Ադոնցն իր *Հայաստանը Հուտոնիանոսի դարաշրջանում* գործում առում է, որ հայ իշխանները զինդ էին կախում իրենց ականջներից: Ու պիտի միայն հայոց թագավորը թույլ տար իշխանին, որ իշխանը զինդ կրեր: Եթե իշխանի պատիվը բարձր էր, թագավորը թույլ էր տալիս, որ սա երկու ականջին էլ զինդ կախի: Եթե միջին էր, իշխանը միայն մի ականջից զինդ կախելու իրավունք ուներ, իսկ եթե իշխանի հասարակական դերը չնչին էր, նա զինդ կրելու իրավունք թուրքովին չուներ:

Նույնը վերաբերում էր նաև իշխանների հագուստին ու մյուս արդու-զարդին: Օրինակ՝ պատվավոր իշխաններն իրենց երկու ոտքին էլ կարմիր ճոթավոր կոշիկ հագնելու իրավունք ունեին, ավելի քիչ պատվի տերերը՝ կարմիր կոշիկ միայն մի ոտքին պիտի հագնեին ևն:

Պարզ է, որ էս «ավանդույթները» գործում էին վերից վար: Տղամարդկանց զինդ կրելու սովորությունը տարածված էր, ու է, ամբողջ աշխարհում, ինչը շատ է հայտնի: Քիչ թե շատ ընդհանուր էին նաև մնացած ավանդույթները, ու դրանց տարածվածության համար կապիտալիզմ-դեմոկրատիան, իհարկե, մեղավոր չէր, որովհետև ուղղակի գոյություն չուներ:

Թե քանի-քանի ուրիշ էսպիսի «չքնաղ ավանդույթ» են ունեցել հայերն ու ուրիշները, որոնք հիմա հակաբնական կամ նույնիսկ զարշէլի են թվում, միայն (իսկական) պատմաբաններն ու ազգագրագետները գիտեն:

Մենք հեռավոր պատմությանը մեծ մասամբ ծանոթանում ենք պատմավեպերով, բայց դրանց ներկայացրած անցյալը, բացի տարեթվերից ու հիմնական անցքերից, համարյա ոչ մի կապ չունի անցյալի կյանքի ու բարքերի հետ:

Նույնիսկ Մարկ Տվենի կամ Ռ. Լ. Ստիվենսոնի «գիտական» պատմավեպերն են աղոտ պատկերացում տալիս անցյալի մասին, իսկ տարեգրությունները միշտ են պատվերով գրված, ու են աստիճան են սրբագրված, որ ճիշտ ու սխալը համարյա չի ջոկվում: Մի փաստ նշենք միայն:

Պատմական գիտությունն առում է, որ Ք. ա. առաջին հազարամյակի անցքերի համարյա բոլոր թվականների ճշտությունը որոշվում է մի քանի տարվա սխալով, երկրորդինը՝ 60 (կամ՝ 100) տարվա ճշտությամբ (պլյուս մինուս), իսկ երրորդինը արդեն 500 տարվա սխալով: Այնինչ՝ մեր հայ վայ «պատմաբաններից» ոմանք պնդում են, թե «մեր թվարկությունից առաջ 2492 թվին էսինչ բանն է եղել»:

#### ՆՈՒՅՆԱՄԵՆ ՄԵՐԸ: ՆՈ՞Ր Է ՍԱ

Բնության մեջ միշտ էլ թաքուն մի աղստ ու ասականություն կա՝  
*Բենեդիկտի սկզբունքը,  
որ առաջ Մերֆիի օրենքի 10-րդ հետևանքն էր*

Արիստոտելն իր *Աթենական հասարակարգը* գործում պատմում է, թե տիրան Պիսիստրատոսի մահից հետո նրա որդիներից մեկը՝ Հիպարքոսը, սիրահարվում է պատանի Հարմոդիոսին, ով արական սեռից էր: Հետաքրքիր է, որ Արիստոտելը մազաչափ անգամ չի դատապարտում այսօրինակ սերը: Փոխարենը՝ պախարակում է Հիպարքոսի անգապությունը.

«...քանի որ նրա սերն անպատասխան մնաց, [Հիպարքոսն] ի վիճակի չեղավ զսպելու իր գայրույթն ու մի քանի վիրավորական արարքից հետո, իր կատաղությունն արտահայտեց, Հարմոդիոսի քրոջն արգելելով, որ սա համաաթենական թափոքներին զամբյուղակիք լինի, իր այս արգելքը հիմնավորելով Հարմոդիոսի համար վիրավորական մի մեղադրանքով, թե իբր վերջինն անզուսպ կյանք է վարում»:

Հետաքրքիր է, որ Հարմոդիոսը, արական սեռից լինելով, Հիպարքոսի սիրային առաջարկից չի վիպավորվել, վիրավորվել է միայն անզուսպության մեղադրանքից: Արիստոտելն ապրել է Պիսիստրատոսից մոտ 200 տարի

հետո: Ուրեմն էդ ընթացքում հույների գոնե սեռական բարքերը համարյա չէին փոխվել, քանզի Արիստոտելն էլ է գեյությունը համարում սովորական ու ոչ վիրավորական:

Դիոգենես Լայերտցու ասելով՝ Արիստոտելն ինքն էլ է «տուրք տվել» գեյությունը: Է՛ս Դիոգենեսը բազում օրինակ է բերում էսօր «աստվածային» համարվող փիլիսոփա Պլատոնի (ու նաև շատ ուրիշ հայտնի հույների) գեյական կյանքի մասին, հետն էլ ներկայացնում է Պլատոնի ոտանավորների էն սիրային կտորները, որ Պլատոնը «ձռնել է» իր տղամարդ «պարտնյորներին»:

Լայերտցին ասում է նաև, որ Պլատոնը զայրանում ու խիստ խանդում է, որ երբ ինքը գովում է իր հավանած տղայի գեղեցկությունը, էդ տղայի վրա աչք դնողների թիվը շատանում է: Ըստ Կառլ Ռեյնոլդ Պոպերի (*Բաց հասարակությունն ու դրա թշնամիները*, հտ. 1), նույն էս «աստվածային» Պլատոնը պնդում է, թե իդեալական պետության մեջ կանայք ու երեխաները պիտի լինեն հանրային, ու թե. «Քանի դեռ պատերազմը չի վերջացել... ոչ ոք իրավունք չունի քաջին ասելու «այ»»: Այսինքն՝ եթե զինվորը որևէ մեկի հետ սեռական հարաբերություն ունենալու ցանկություն ունի, «արու լինի վերջինը, թե էգ, այս օրենքն ավելի կքաղցրացնի ու կմեծացնի քաջի խիզախության չարչարանաց գինը»:

Հայտնի է, որ Հիտլերը, ով ազգայնամոլ-սոցիալիստ էր (ու բոլորովին էլ կապիտալիստ չէր), Պլատոնի էս հանձնարարականը կիրառում էր, չնայած, միայն «էգերի» նկատմամբ, էն էլ մասնակի:

Սպարտայում մանավանդ (ու նաև հունական մնացած պոլիսներում) գեյական սերը սովորական էր ու չգրված օրենքի ուժ ուներ, իսկ Սպարտան հաճախ լրիվ էր սոցիալիստական (կապիտալիստական էր, թերևս, Աթենքը):

Սպարտայի զինվորներին, դեռ յոթ տարեկանից, խլում էին ծնողներից ու պահում առանձին՝ ռազմական ջոկատներով (այսինքն, Սպարտայում տղաները հանրային սեփականություն էին): Էդ ջոկատներում տղաները գույգ-գույգ ընկեր էին կարգվում՝ հենց գեյական նպատակներով, ինչը պետությունը խրախուսում էր:

Պլուտարքոսն իր *Համեմատական կենսագրությունների* մեջ պատմում է (*Ագեսիլայոս, X*), թե Սպարտայի թագավոր Ագեսիլայոսին «առանջում էր սեղը Մեգարատեսի հանդեպ, թեև երբ պատանին (տղան – Մ. Հ.) նրա մոտ էր լինում, սմբողջ ուժով (Ագեսիլայոսը – Մ. Հ.) ջանում էր ճնշել էդ կիբբը, ու երբ տղան հեռանում էր նրանից, նա (Ագեսիլայոսը – Մ. Հ.) այնպիսի մի կիբբ էր զգում նրա հանդեպ, որ...»:

Երբ Ագեսիլայոսը բողոքում է պալատականներին, որ տղան (ինչիսայն, որդին պարսիկ մեծավոր Սպիրիդատեսի, ով Ագեսիլայոսի մոտ ընկերն էր) արդեն խուսափում է իրենից, պալատականները, արդարացնելով պատանուն, կշտամբում են թագավորին, թե հենց ինքն է տղային վանում իրենից: Ու խորհուրդ են տալիս, որ թագավորը, տղային հանդիպելիս, գրկի, փաղաքշի ու համբուրի:

Պլուտարքոսն ասում է նաև (*Նույն տեղը, XX*), թե «զակոնական (սպարտական – Մ. Հ.) սիրային կապերի մեջ ոչ մի կեղտոտ բան չկա, ընդհակառակը, դրանք զուգակցվում են մեծ ամոթխածության, փառասիրության ու առաքինության ձգտման հետ»:

Պլուտարքոսը պատմում է նաև (*Ալեքսանդր, XXII*), թե (Արիստոտելի աշակերտ – Մ. Հ.) Ալեքսանդր Մեծին մի չքնաղ տղա են նվիրում, ու Ալեքսանդրը, իբր վիրավորված, զայրանում է (*Ագեսիլայոս, XI, XII, XXV*): Հերոդոտոսն ասում է (*Պատմություն, I, 135*), որ «նրանք՝ պարսիկները, հեղինակներից սովորեցին հարաբերվել տղաների հետ»:

Իհարկե, այսօրինակ «մշակութային փոխառությունը» հնարավոր է, թեև նման «տաղանդ» երևի ամեն ժողովուրդ էլ ունի: Ես չեմ ուզում մանրամասն ասել Լեսբոս կղզում տարածված կանանց նույնասեռ սիրո մասին: Հիշատակեմ միայն, որ Հին Աշխարհի ամենահայտնի կին բանաստեղծ Մաֆոն (Մաաֆո) լեսբյան սիրո բացառիկ ջանասեր «քրմուխիներից» մեկն էր: Իհարկե, Լեսբոսն այսօրինակ սիրո միակ վայրը չէր: Մա հետագայում խիստ տարածված էր, օրինակ, Հռոմում:

Հայալեզու գրականությունն սկսվում է 5-րդ դարից, և մեր գրողները երբեք էլ հույների ստեղծած ողբերգությունների ու կատակերգությունների պես բաներ չեն ստեղծել, ոչ էլ Հոմերոսի կամ Հեսիոդոսի նման գրանցել են իրենց բանավոր էպոսը, իսկ հնագույն շրջանի սեր կյանքի մասին համարյա ոչ մի գաղափար չունենք:

Բայց, օրինակ, Բուզանդն ակնարկում է Պասպ թագավորի գեյության մասին: Գեյության ու սեռական անոմալիաների խիստ տարածվածությունն է վկայում Մ. Գիրքը, էն էլ՝ անսովոր առատությամբ ու բազմիցս, մանավանդ, Հին Կտակարանում: Հիշենք միայն 'Լովտի պատմությունը (ով հետո հենց ինքը պղծեց իր դուստրերին, կամ էլ՝ վերջինները պղծեցին իրենց հորը):

Լավոն Աստմուն խնդրում էր, որ չկործանի Սողոմ ու Գոմոր քաղաքները, որոնց բնակիչները համատարած գեյ էին, ինչը գերադասում էին սեռական կյանքի նորմալ ձևերից: Աստված էլ ասսփ 'Լավտին, թե չի կործանի էդ քաղաքները, եթե դրանց մեջ գոնե մեկ-երկու տասնյակ ոչ գեյ ճարվի: Ու կործանեց:

Ի՞նչ արժե, օրինակ, Արրահամ Նահապետը, ով, կավատությամբ գրադվելով, երկու անգամ վաճառում է իր իսկ կնոջը՝ Մառային, էլ «գործարքից» հսկայական հարստություն «վաստակելով» (մենք էլ պիտի պաշտե՞նք ու օրինա՞կ վերցնենք մեր էս «նահապետներից», որովհետև սրանք ներկայացնում են «մեր» Մ. Գրքի ավանդույթնե՞րը):

Շատերը գիտեն, թե ինչ անառակություն էր Հին Հոմոմ: Բայց Սվետոնիոսի կամ ուրիշ պատմիչների գրածներն իրականության դժգույն ցույց են միայն: Ինչքան էլ անհավատալի լինի, բայց հանրահայտ *Կալիգուլա* գեղարվեստական ֆիլմը (ինչի երաժշտությունը, իմիջիայրոց, Արամ Խաչատրյանն է գրել) համարյա լրիվ է փաստագրական:

Գեյուրյան «թովչանքից» զերծ չի եղել անգամ «աստվածային» Կեսարը (տես Ուոչեմկո Մ. Լ., *Հուլիոս Կեսար*), էլ ինչ ասենք Ներոնի, Տիբերիոսի, Կալիգուլայի ու այլոց մասին, ովքեր «երապարկած» էին թե՛ գեյուրյամբ, թե՛ լեսբյան սիրով, թե՛ այլ զարշանքներով:

Մեռական ապականությունը Հին Աշխարհում ամեն տեսակ էր, բայց հաճախ համարվում էր նորմալ ու գեղեցիկ, ու Մ. Գիրքն էլ է հիշատակում դրանք: Հեաագայում էս «ավանդույթները» ժառանգեցին թե՛ քրիստոնեական եկեղեցին, թե՛ դրա զանազան ճյուղ ու աղանդներից շատերը:

Պապերի ու պապական եկեղեցու պատմությունը, ըստ եվրոպական լուսավորիչների ու, իր կյանքն էլ հարցի ուսումնասիրությանը նվիրած՝ նախկին եկեղեցական Լեո Տաբալդի (տե՛ս նրա *Մորթազան ավազակառքը*), ոչ այլ ինչ է, եթե ոչ արտառոց, ծայրահեղ ու աներևակայելի պոռնկություն, գեյուրյան, արնապղծության, անասնապղծության ու այլ չարագործ «ավանդույթների» պատմություն:

Շվրոպական արքունիքները, մանավանդ իտալականն ու ֆրանսիականը, էս իմաստով Վատիկանից ետ չէին մնում: Թերևս մուսուլմաններն էս առումով էտ էին մնում քրիստոնյաներից, բայց ինչ արժեն, օրինակ, միայն հենց Թուրքիայի այսօրինակ «ավանդույթները»:

Հիշենք նաև հնդիկների սեռական «ավանդույթները», ովքեր էսօր էլ դրանց նվիրված տաճարներ ունեն, ամբողջովին զարդարված սեռական ամենախայտառակ օրգանները նկարագրող քանդակներով: Էդ տաճարներում էս պաշտամունքին նվիրված քրմերի մի ողջ ինստիտուտ կա: Էս առումով նշանավոր են նաև ճապոնական «ավանդույթները», բայց էս երկուսն էլ դեռ սպասում են իրենց Տաքսիլին:

(Էս տվյալները հավաքել ու արդեն գրել էի մի հոդվածի մեջ, երբ արվեստաբան Վարդան Ազատյանը, ծանոթանալով գրածիս հետ, ինձ մի մեծագործություն նվիրեց, *Հին Հունաստանի սեքսալին կյանքը* վերնագրով, ինչը նշել եմ գրականության ցանկում [30]: Եթե ընթերցողին հետաքրքիր

է, թող նայի էդ գիրքն ու համոզվի, որ էնտեղ ավելի արտառոց փաստեր կան, քան իմ բերածներն են):

Ու էս ամենը եղել է մինչև կապիտալիզմի ծնունդը, մինչև տխրահռչակ արևմտյան ազդեցության հանդես գալը: Ինչքան էլ անհավատալի լինի, հենց դեմոկրատիա-կապիտալիզմն էր, որ սկզբնական շրջանում խիստ քչացրեց սեռական անոմալիաները, հույժ մեղմացրեց բարքերն ու չափազանց բարձրացրեց նույնիսկ ամենաաղքատների կենսամակարդակը:

Ու հին Հայաստանը բացառություն չի եղել:

## ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒԹՅՆԵՐԻ ԼԱՎ ՈՒ ՎԱՏԻ ՍԱՄԻՆ

Թե որ մի բան փնտրես, անպայման լրիվ ուրիշ բան կգտնես:  
*Մերիանի օրենքը*

Թե ուզածդ բանը չես գտնում, ուրիշ բան փնտրիր:  
*Մերիանի օրենքի Միքրածանայի 1-ին հետևանքը*

Մենք անընդհատ ասում ենք. «Պիտի ամեն գնով պահենք, պահպանենք մեր հայկական ավանդույթները»:

Ես, իհարկե, համաձայն եմ, էն էլ հազար անգամ, եթե հայկական ավանդույթ ասելով հասկանանք.

Ուրիշի ունեցվածքը՝ չիլելը, օրենքին ենթարկվելը, ազատ մրցությունը, ազնվությունը, խոստումը չդրժելը, արդար վաստակը, աշխատասիրությունը, ծնողների ու հարազատների նկատմամբ սերը, հարգանքն ու հոգացողությունը, ընտանեկան ամուր կապերը, պարտականությունը կառուրելը, հարգանքն ուրիշների ամենայն սեփականության նկատմամբ:

Նաև՝ հանդուրժողությունն ուրիշների ոչ էական ու օրենքով չդատապարտվող թերությունների ու այլախոսության հանդեպ, անհանդուրժողությունը պորտաբուծության ու խաբարխության հանդեպ, զուսպ, սքափ ու չափավոր կենցաղը, առանց ուրիշին վնասելու՝ հարբատ ու բարեկեցիկ կյանքի ձգտելը և ուրիշ նման բաները:

Ու նաև ոսկե կանոնը, այսինքն. «Ուրիշին մի՛ արա է՛ն բանը, ինչը չես ուզում, որ էդ ուրիշը քե՛զ անի»:

Բայց սրանցից ո՞ր մեկն է, որ միմիայն հայերին է հաստույ ու համասարակային չի:

Իհարկե՝ էս ավանդույթները կանաց-կամաց են ծնվել, երևի մի 100-150 հազար, գուցե, մոտ երեք միլիոն տարվա ընթացքում: Ու մարդկանց է՛ն



խմբերը, ուլքեր չեն հետևել սրանցից հիմնականներին, անհետացել գնացել են: Դրանցից շատերի մասին հուշ էլ չի մնացել:

Ու եթե սրանք ու սրանց պես քաները չենք համարում «գուտ հայկական», բա ի՞նչը համարենք «ազգային ու ավանդական»:

Գուցե, օրինակ, քավորության ինստիտուտը: Բայց, ախր, ռուսն էլ է քավոր լինում, եվրոպացիներն էլ, ուրիշներն էլ: (Ու հարց է, քավոր-սանիկային պարտականություններն ո՞ւմ համար են ավելի սուրբ, հայի՞, թե օրինակ, սիցիլիացու):

Գուցե մեր հարսանեկան ծեսերը, կարմիր խնձորի գոեհիկ «ավանդույթը», թե՞ գուռնա-դիտը: Կամ աղջկան 9 տարեկանում ամուսնացնելն ու տնից քշելը, երբ էդ մանուկը ետ է դառնում հորական օջախը (հիշենք **Թումանյանի Մարտի ու Անուշի միջի** «ավանդույթները»):

Տեսանք արդեն, որ մեր ամուսնական ծեսերը լրիվ ուրիշ են եղել, իսկ կարմիր խնձորն էլ թերևս քրիստոնեության բերած «ավանդույթն» է (ինչը, երևի, կապված է Եվայի անմեղությունը կորցնելու առասպելին, ու հայերի համար գուցե 100 տարվա հնություն էլ չունի):

Ջուռնա-դիտն էլ, ինչպես տեսանք, թաթար-սելջուկները բերին, ու դրանով մորթեցին մեր երգի ու երգապարի և փող նվագելու իրոք որ ազգային՝ վեհ ու չքնաղ ու եզակի ավանդույթը, որոնք մեր հայոց լեզվի, այսինքն, մեր կենդանի հայ բարբառների հետ միասին, իրոք որ միակ իսկական ու հազարամյակների խորքից եկող ավանդույթներն են (ավելի ճիշտ, էին):

Էսօր մենք երգում, պարում ու նվագում ենք համարյա միայն փոխառածներն ու հետն էլ զարմանում, որ ուրիշները բողբոջում են, թե իրենցից ենք փոխ առել, բայց հայտարարում ենք սեփական:

Գուցե ազգային է մեր կրո՞նը: Տեսանք ու գիտենք էլ, որ՝ չէ: Քրիստոնեությունն ու դրա զանազան ճյուղերը (նաև իսլամը) տարածված են ողջ աշխարհով մեկ: Ու ինչքան էլ առանձին ճյուղերի ներկայացուցիչները պնդեն, թե հենց իրենց քրիստոնեությունն է միակ ճշմարիտը, միևնույնն է, դրանց տարբերությունները լոկ ծիսական են, արտաքին ու ոչ էական:

Ու իհարկե դրանք ծագումով ու էության սենսական-իրեական են, իսկ է՛ն հումանիստականը, ինչը կա դրանց մեջ, գալիս է Դեմոկրիտոսից, Մոկրատեսից, ստոիկներից, կինիկներից ու սրանց պես մարդկանցից:

Ի՞նչ մնաց: Մնացին միայն են սովորությունները որ մտային են կապված: Ու սրանք մեծ մասամբ գյուղական «ավանդույթ» են: Օրինակ, եթե 20-րդ դարի սկզբներին (ու մույնիսկ իմ մանկության տարիներին) կինն էնքան կարճ զգեստ հագներ, որ սրունքները երևային, էդ կինը համարվում էր անբարոյական:

Հայաստանում, 20-րդ դարի սկզբներին, կնոջ զգեստի տակից ճանն էլ չպիտի երևար: Էդ օրերին Հայաստանում մինչև տան տղամարդիկ հաց չուտեին-պրծնեին, կանայք սեղան նստելու իրավունք չունեին: Կանայք սեղան էին նստում առանձին, տղամարդկանցից հետո:

Կինը մի 4-5 «յուրկա» էր հագնում, տակից էլ մի 2-3 «թումբան», գլխին հաճախ «պոլ» էր դնում, պղնձե կամ ոսկե դրամներն էլ պոլից կախած ճակատին, պարտադիր լաչակ էր կապում ու լաչակով անպայման փակում վիզը, ճակատն ու դեմքի ստորին մասը (ջահել հարսները՝ պարտադիր, ու ամառ-ձմեռ):

Չահել հարսը տարիներով իր սկեսրայրի (տեղ-տեղ՝ նաև իր իսկ ամուսնու) հետ խոսելու իրավունք չունեի, չնայած երեկները պիտի պարտադիր վկանար սկեսրայրի (ու նաև տղամարդ հյուրերի) հաճախ զարշահոտ ոտները: Տղամարդիկ չուխա էին հագնում, ամառ-ձմեռ մորթե փափախ դնում ու ամիսներով չէին լողանում:

**Թումանյանի Մարտի ու Անուշի** ու «բաշիքյարթմայի» մասին արդեն գիտենք: Էս տեսակ «ավանդույթ» – հարյուրներով կար: Ու եթե էն օրերի հային հարցնեին, թե լա՞վն են սրանք, կասեր, որ չքնաղ են: Է՛ն օրերի հայերի պարզասրտությունն ու առաքինությունն էլ «օրինակելի» չէր, ինչպես որ հաճախ ներկայացնում են մեր հայագով գրողներն ու քաղգործիչները:

Մեր գրողները համարյա միշտ էլ իդեալականացրել են ու նորից իդեալականացնում են հայերին ու հայ գյուղացուն: Ափսոս, բայց իրականությունն էդպես չի: Չհավատացողը թող կարդա Վրթանես Փափազյանի՝ գյուղական կյանքին նվիրված գործերը, իսկ էսօրվա կամ երեկվա գյուղի գիտակները, եթե անկեղծ լինեն, կվկայեն, որ գյուղի կենցաղը հաճախ էնքան վատն է, որ պահպանելու արժանի «ավանդույթ» չի:

Ու միայն մենք չենք, որ էսպիսին ենք եղել կամ կանք: Կապիտալիզմից առաջ ամեն տեղ էր էսպես: Ու կապիտալիզմ-դեմոկրատիան, իր բոլոր թերություններով հանդերձ, մեր կյանքը Կապիտալիզմից շատ է լավացրել:

Հիմա մեր հայ աղջիկներից շատերը պորտը բաց շոր են հագնում: Նշանակե՞նք է սա, որ պորտը բաց ամեն շոր հագնողն էլ պարսիկ է: Իհարկե՞ չէ: Ծովափին, օրինակ, ավելի շատ բան են բացում: Գռոնկությունը կյանքի *ձևի*՝ ընտրություն է, ու շորի բացության չափով չի որոշվում: Մրա պատճառները բազմազան են ու, ցավոք, հաճախ հարկադիր, օրինակ՝ տվը, չարքաշ կյանքը ևն:

Գանք մի ուրիշ հարցի: Հայ կանայք մի՞շտ են ծածկել իրենց ողջ մարմնը:

Նորից՝ չէ, ու սրան ապացույց՝ հենց միայն սրբազան պոռնկության փաստը լրիվ հերիք է: Մարմնի որևէ մասի բացությունն ամոք համարելու

Էս «ավանդույթը» զուտ քրիստոնեական-հրեական ծագում ունի (քոչվոր հրեաները քափառում էին ավագոտ անապատներում, ուր հաճախ էր քամի լինում, ու շորերով լրիվ ծածկված լինելն ուղղակի անհրաժեշտ էր):

Էս «ավանդույթի» հեղինակները եկեղեցականներն են, ովքեր հաճախ իրենք են անառակ եղել, չնայած առաքինություն, բարոյականություն ու ամոթխածություն են քարոզել: Օրինակ, քրիստոնեական Հռոմում պոռնկանոցներում գրանցված մի քանի տասնյակ հազար պոռնիկ կար՝ կապիտալիզմ-դեմոկրատիայից շատ առաջ: Էդ պոռնկանոցների վաստակը եկեղեցուն էր, իսկ դրանց ամենաեռանդուն ու մշտական այցելուները հենց եկեղեցականներն էին, մանավանդ՝ բարձրաստիճանները:

Ի տարբերություն Արևմուտքի, մեր պատմությունը միմիայն եկեղեցականներն են գրել: Ու պարզ է, որ սրանք իրենց մասին ոչ մի բացասական բան չէին գրի: Բայց, ինչպես Լորդ Աքտոնն է ասում «իշխանությունը (պաշտոնը) ապականում է, իսկ բացարձակ իշխանությունը բացարձակ է ապականում»:

Ուրեմն՝ ինչո՞ւ պիտի մերոնք բացառություն եղած լինեն, մանավանդ որ Հայաստանում, քրիստոնեությունը հաստատվելուց հետո, փաստացի իշխանությունը համարյա միշտ է եկեղեցու ձեռքին եղել: Ուրեմն՝ մարմինը ծածկելու էս «ավանդույթը», ի վերջո, հրեական-քրիստոնեական-արաբական է: Նույնիսկ մուսուլմաններն են իրենց չաղրան վերցրել քրիստոնյա Բյուզանդիայից (տես Armstrong K. *Islam. A short History*):

Բացի սա, հայտնի է, որ թե՛ Հին Հունաստանում, թե՛ Հին Հռոմում, թե՛ Հին Եգիպտոսում ու Հնդկաստանում ևն, մերկ սարմինը համարյա պաշտամունքի առարկա էր: Հայաստանն ավելի ցուրտ է, բայց ինչո՞ւ պիտի էստեղ մերկությունն էդ աստիճան թաքու լիներ: Նորից հիշենք, որ նշված վայրերում էդ օրերին կապիտալիզմ չկար (գոնե Եգիպտոսում կամ Հնդկաստանում):

### ԴԵՍՏԻՆՈՍՏԻԱ-ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՈՒ ԲԱՆՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԵՐԸ

Հնարավոր վատ բանն անպայման է իրականացում:  
*Մերֆիի օրենքը*

Առաջինը, թերևս, անգլիացի Դեյվիդ Հյումն է ողջ խորությամբ նկատել, որ առաջադեմ, այսինքն, հունճանիստական կոչված բարոյականությունը հիմնված է վերը շարադրած ու մեկ ամբողջություն կազմող երեք արքիտմի վրա:

Իսկ մեր էսօրվա ողջ քաղաքակրթությունն էլ, քիչ՝ թե շատ, հիմնված է հենց էդ երեք բարոյական նորմի վրա: Ու եթե էդ նորմերը լրիվ դադարեն գործելուց, մարդկային հանրությունները կդառնան ունակներ, ու ողջ քաղաքակրթությունը կկործանվի: Նորից բերենք էդ նորմերը:

1. Մասնավոր սեփականության ու սրա անձեռնմխելության նորմը:  
Նկատենք, որ սեփականություն ասելով պիտի հասկանանք ոչ միայն նյութական արժեքները, այլև մարդու կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, խիղճը, զաղափարները, կարծիքներն ու արտահայտվելու ազատությունները, կենցաղն ու դա կազմակերպելու ձևերը ևն:

2. Ուրիշների հետ տիրոջ ուզած ձևով իր մասնավոր սեփականությունը պարտադիր գործող պայմանով տնօրինելու նորմը: Այսինքն, հանրության անդամների (մարդկանց) հարաբերությունները պարտադիր գործող ու անփոփոխ պայմանով (անփոփոխ ու պարտադիր գործող օրենքով և ոչ թե մահակով կամ թնդանոթով) վարելու նորմը:

Կոպիտ ասած, սա նշանակում է, որ պիտի բոլորն էլ պարտադիր ենթարկվեն (դեմոկրատական-կապիտալիստական) օրենքներին, ու եթե որևէ մեկը դրանք չի խախտում, մնացած ամենայն ինչով ազատ է ու պիտի համարվի բարոյական:

3. Ազատ մրցության նորմը, այսինքն, ի վերջո, օրենքի առաջ բոլորի հավասարության նորմը, որպես սոցիալական արդարություն հաստատելու ու նյութական ու հոգևոր բարիքներն արդար բաշխելու միակ ու անհատից կամ անհատների կազմակերպված խմբից անկախ միջոցը, ու մակ որպես նոր տեխնոլոգիա ու առհասարակ՝ նոր բան հայտնագործելու ամենաբեղուն միջոցը:

Սա էլ, կոպիտ ասած, նշանակում է, որ մոնոպոլիաներ չպիտի լինեն, դեպուտատներն ու պաշտոնյաները ոչ մի ինուսիտետ կամ արտոնություն չպիտի ունենան ևն:

Իսկ էս երեք նորմը միասին նշանակում են, որ պետությունը, այսինքն, պետերի խումբը, չպիտի խառնվի անհատի գործերին, չպիտի կառավարի անհատներին, պիտի խիստ փոքրաթիվ լինի, զբաղվի միմիայն օրենքների ու երկրի պաշտպանության հարցերով:

(Էս նորմերն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ իշխանությունն ունենա իրարից անջատ՝ օրենսդիր, դատական ու գործադիր թևեր ու ազատ մամուլ, ինչը համարյա ամեն մի տեղեկություն ստանալու իրավունքն էլ ունի):

Բարոյականության Հյումը, նշած նորմերն ու դրանցից բխող իրավական համակարգը ծավալուն է, բարդ ու փխրուն: Էս նորմերը հիմնական են, արմատական են: Սրանք հայտնագործվել կամ առաջացել են առան-

ձին անհատների գիտակցությունից անկախ, այսինքն, մարդկային գիտակցական ծրագրի արդյունք չեն, պատահական են գտնվել:

Հյուսիս նորմերը, ուրիշ խոսքով, հայտնագործվել են մշակութային էվոլյուցիայի ընտրական գործընթացում, երբ մարդկային առանձին խմբերը (ոչ թե անհատները) պայքարել են, որ հարատևեն: Ուրեմն՝ Հյուսիս նորմերն առաջացել են հանրությունների գոյության պայքարի ընթացքում, ինչը շատ է նման դարվինյան բնագիտական էվոլյուցիային:

Հայագուվներն ու որբերյանները, ու բուրբ գույն ու երանգի սոցիալիստ-կոմունիստներն ու նացիստները դեմ են հենց Հյուսիս նորմերին ու սրանցից բխող հետևանքներին:

Ցավոք, էս նորմերն ու սրանց վրա հիմնված լիբերալիզմի տեսությունը (դեմոկրատիա, կամ կապիտալիզմ, կամ բաց հասարակություն, կամ քաղաքացիական հասարակություն կառուցելու տեսությունը) երբեք ու ոչ մի տեղ, քիչ թե շատ լրիվ, չի իրագործվել, ու երևի չիրագործվի:

Որովհետև դատը ճշմարտությունը, ի տարբերություն քաղցր ստի, շատ փխրուն բան է, ու երբ սա վարկաբեկում են, մարդիկ կորցնում են սա, ու լրիվ հնարավոր է, որ էլ երբեք նորից չգտնեն:

Գեմոկրատիան երկու անգամ են հայտնագործել: Մի անգամ Հին Աթենքում, բայց շատ արագ էլ կորցրին, մինչև 23 դար հետո Եվրոպայում նորից գտան: Գտան ու մի կես դար (ու մի երկու երկրում միայն) մի քիչ հետևեցին սրան, բայց Մարքսի հորինած սոցիալիզմը քիչ-քիչ էնքան վարկաբեկեց սրան, որ էս ողջ գնդի ապագան անհավոր վտանգված է:

### ՀԻՆՆ ՈՒ ԱՎԱՆԴԱՎԱՆՆ ԱՆՊԱՅՄԱՆ Է ԼԱՎ

Բողոքն են սուտ ասում, բայց էլ կարևոր չի, որովհետև լսող, մեկ է, չկա:

*Լիբերմանի օրենքը*

Մարդու թե՛ ամենաչքնաղ, թե՛ ամենատուր ձգտումները ժամանակակի չեն: Էդ երկուսն էլ հասարակական պրոցեսի արդյունքն են:

*Էրիխ Ֆրոմ*

Մեծ Մեր պաշտամունքը շատ հին է: Եթե հայերն իրենց պատմական հայրենիքում են եղել գոնե Ք. ա. 12-րդ դարում, ուրեմն սրբազան պոռնկության «ավանդույթին» հետևել են առնվազն 15 դար: Իսկ եթե համարենք, որ էս նորմը կար հլր հնդեվրոպական հանրության շրջանում, ուրեմն հայերն էս «ավանդույթին» հետևել են առնվազն 30 դար:

Քրիստոնեական նորմերին հայերը հետևում են մոտ 17 դար: Հիմա հարց տանք.

Եթե պարտադիր պիտի պահպանենք մեր հին ավանդույթները, դրանցից ո՞րը պահպանենք: Սրբազան պոռնկությունը: Հեթանոսական կրոնը: Տղամարդկանց գինդ կրե՞լը: Մարդկային գոհաբերությունները: Չե՞ որ սրանք հազարամյակներով են համարվել ճիշտ, պատվավոր, պաշտելի, գեղեցիկ, բարի, առողջ ևն:

Մյուս հարցը հետևյալն է.

«Մեր օրերի չափանիշներով գարշելի պաշտամունք-ավանդույթներին հետևած մեր նախնի հայերը (նաև ուրիշները) եղե՞լ են գարշելի»:

Ունի՞ էս հարցը դրական կամ բացասական պատասխան:

Երբորդ հարցը.

«Արդյո՞ք Հյուսիս նշած նորմերի վրա հիմնված դեմոկրատիա-կապիտալիզմն է մեղավոր մեր հենրի գարշելի բարք ու բարոյականության համար»:

Սրանց պատասխանը, իհարկե, ոչ է: Բայց էս տեսակ հարց շատ կա: Եզրակացությունը միակն է:

Մեր բարքերի էսօրվա փոփոխությունների պատճառը միայն դեմոկրատիա-կապիտալիզմի ա: արևմտյան մշակույթի ազդեցության մեջ տեսնելն առնվազն միամիտ, եթե ոչ պարզունակ դատողության արդյունք է:

Արևմտյան ազդեցությունը, անշուշտ, կա, բայց Ս. Գրքի ասածի պես՝ սերմը պիտի բերրի եւղի մեջ ընկնի, որ ծլլ տա: Էսօրվա համարյա որ հայաստանցուն էլ հարցնես, կասի. «Թող ոչ մեկը կաշառակեր չլինի», ու մտքում էլ կավելացնի. «Բացի ինձնից»:

Մեր մամուլը բազմիցս ասել է, որ նորօրյա պաշտամյաները բարձրաստիճան կոմունիստների հռչակավոր սանձարձակ ու անբարոյական օրգիաներն էսօր էլ են շարունակում:

Գեմոկրատիա-կապիտալիզմի ստեղծած բարքերն ու մշակույթը հիմնականում անհամեմատ հումանիստական են ու գեղեցիկ: Էսօր մենք կատարաւ ենք համարում է՛ն գործերը (չհաշված անտիկ շրջանը), որոնք հենց կապիտալիզմի ստեղծածն են (16-րդ դարից հետո): Բերենք գոնե մի քանի անուն՝ Բալզակ, Ստենդալ, Ֆլորբեր, Վոլտեր, Հոլբախ, Դյոսթե, Հյում, Գիկենս, Տվեն, Դրայզեր, Ուիթմեն, Թոմանյան, Պուլկին, Լեոնինտով, Բեթհովեն, Մոցարտ, Լուսինի, Բախ, Հեյնել, Շոպեն, Սիբելիուս, Իբսեն,

Համսուն, Հաշեկ, Չապեկ, Յան Ներուրա, Այվազովսկի, Սարոյան, Ռեմ-  
բրանդտ, Պիկաստ, Մանե, Գոգեն, Վան-Գոգ, Մատիս, Չայկովսկի, Խա-  
չատրյան, Չարենց, Իսահակյան, Պասկալ, Ֆուրյե, Ֆարադեյ, Էյնշտեյն,  
Գաուս, Համբարձումյան, Ֆեյնման, Հայեկ ևն:

Յուցակն ուղղակի վիթխարի է, ու բերվածը խիստ է թերի:

Կապիտալիստական զանգվածային արտադրության ժամանակ գրա-  
կան-գեղարվեստական ու բարոյական խոտանն անխուսափելի է:

Անխուսափելի է նաև՝ լարված պայքարը, դաժանությունն ու թշվառու-  
թյունը՝ նույնիսկ դեմոկրատիայի ժամանակ: Հարցն էն է, թե մարդկային  
համագործակցության ո՞ր ձևի ժամանակ է նվազագույնը էս դաժանու-  
թյունն ու թշվառությունը և բարբերի ալյանդակությունը:

Վսեմ լիբերալները պնդում են, որ նվազագույն թշվառություն ու դաժա-  
նություն ապահովում է միայն իսկական դեմոկրատիա-կապիտալիզմը  
(տես, օրինակ՝ F. A. von Hayek, *Fatal Conceit...*):

Հայաստանում դեմոկրատիա-կապիտալիզմ չկա ու չի էլ եղել: Էսօրվա  
եղածը տոտալիտարիզմի տեսակներից մեկն է, ոչ էն է սոցիալիզմ է, ոչ էն  
է՝ ֆեոդալիզմ, հետն էլ՝ կապիտալիզմի մի քանի նշույլ: Այսինքն՝ Հայաս-  
տանի էսօրվա քաղաքական կարգերն ուղղակի անընդունելի են: Ուրեմն՝  
թերևս հենց սրանք են մեր բարբերի տհաճ ու երբեմն էլ գարշելի փոփո-  
խությունների պատճառը:

Չեմ ասում նաև, որ էսօրվա Ամերիկայում, Եվրոպայում, կամ էլ ճա-  
պոնիա-Կորեայում ամբողջովին կապիտալիզմ-դեմոկրատիա է: Հակա-  
ռակը՝ դրանցից շատերում, մասնավոր՝ Ֆրանսիայում ու Անգլիայում, քո-  
ղարկված սոցիալիզմ է, կապիտալիզմի հետ խառը, ու սա սարսափելի է,  
քանզի համոզված եմ, որ սոցիալիզմը կործանելու է մեր քաղաքակրթու-  
թյունը:

Եթե գլոբալիզացիա կոչվածը պիտի ԱՄՆ-ի միջոցով էս քողարկված  
սոցիալիզմն իրականացնի, ինչպես որ արեց Հարավսլավիայում, Աֆղան-  
ստանում ու Իրաքում, էն էլ տուրբերով ու արյունով, ուրեմն, դեմ եմ էդ տե-  
սակ գլոբալիզացիային ու դրա ստեղծած արվեստի գործերի մի մասին:

Մի հարց էլ. ենթադրենք՝ մեր ավանդույթներն անադարտ պահելու  
համար հրաժարվում ենք դեմոկրատիա-կապիտալիզմից (այսինքն, Հյուսիս  
նորմերից) ու արևմտյան մշակույթից: Բա ինչի՞ն կամ ո՞ւմ ենք հետևելու:  
Ո՞վ է էն իմաստուն առաջնորդը կամ կուսակցությունը, որ նոր նորմեր  
կհորինի (քանզի միայն մեր ավանդականները հաստատ ալլևա բավարար  
չեն էս նոր աշխարհում) ու մեզ կտանի «Ավետյաց երկիրը»: Ո՞վ գիտի էդ  
երկրի ճամփան:

## ՄԻԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բանականության ընդամուր քանակն էս մտորակի վրա՝  
հաստատուն մեծություն է, բայց բնակչության թիվն աճում է:

*Ընույի արսիոնը*

Երբ ասում են, թե եկեք էս կամ էն ազդեցության դեմն առնենք, շատ  
վտանգավոր բան են ասում, որովհետև հրաժարվում են Հյուսիս նշած սկզ-  
բունքների մի մասից:

Իրոք՝ ո՞վ է որոշելու, թե ո՞ր ազդեցության ո՞ր մասից հրաժարվենք: Ո՞վ  
գորություն ունի գուշակելու, թե ո՞րն է հրաժարվելու լավագույն սահմանը,  
կամ, թե՛ էս կամ էն ազդեցության ապագան ի՞նչ կլինի: Ո՞վ գորություն ու-  
նի մարդկային գիտակից ծրագրով էնպիսի նորմերի համախումբ ստեղ-  
ծելու, որոնց հետևանքները լրիվ կանխատեսելի են ու անսպասելի չեն:

Էսօրվա գիտությունն ասում է, որ մտան մարդ չկա ու չի էլ լինի:

Արգելքներն էս ասպարեզում անիմաստ են ու զուր, ու դրանց արդ-  
յունքն անպայման անսպասելի է ու գուշակելի չի: Իրոք, թե պիտի դեմոկ-  
րատիա-կապիտալիզմից ու սրա մշակույթի մի մասից հրաժարվենք, որ  
մեր ավանդույթներն իբր անսղարտ մնան, էդժամ գուցե առաջարկողներ  
լինեն, որ Ս. Գրքի մի մասից էլ հրաժարվենք, քանզի թե՛ դրա Հեղինակն ու  
Գլխավոր Գործող Անձը, թե՛ մեր հրեա նահապետներից շատերը հաճախ  
զազրելի բաներ են անում. էլ կավատություն, էլ մանկասպանություն, էլ  
պոռնկություն, էլ զենություն, էլ արնապղծություն, էլ օճանիզմ (ինչով  
զբաղվում էր մեր նահապետ Օճանը):

Առաջին հերթին դեմ կլինի հենց եկեղեցին: Էս ճամփով որ գնանք՝  
պիտի շատ-շատ բան արգելենք, ու արգելքներին ալլևա սահման չի լինի:

Ո՞վ է մեր օրերի էն իմաստուն Սոկրատեսը (ով, իմիջիայոց, շատ էր  
համեստ ու ասում էր, թե ոչինչ չգիտի), ում որ պիտի կարգեն մեր բար-  
բերին ու ավանդույթներին պահապան, ու ով դա չի սարքի փող «կլպելու»  
սաղբյուր:

Ո՞ւմ ճաշակով են ընտրելու էդ հորինովի նորմերը: Նացիստներն ու  
բոլշևիկները հրաժարվեցին թե՛ Հյուսիս համարյա երեք նորմից, թե՛ ավան-  
դույթներից ու բարբերից շատերից. հրաժարվեցին իբր լրիվ մարդկային  
կամ ազգային սուրբ նպատակներով: Արդյունքում կործանեցին կամ ար-  
գելեցին համարյա ողջ մշակույթն ու մարդկությունը, ու հետո էլ՝ մոտ 200  
միլիոն մարդ կոտորեցին, եթե ոչ ավել:

Ուրիշ հարց, եթե լինեք էնպիսի մի ծրագիր կամ էդ ծրագիրն ստեղծելու  
ձև, որով «զավ, բարի ու ազգային» նորմերի համախումբ ստեղծելու հնար

ունենայինք: Բայց ափսոս, որ նման ծրագիր չկա ու չի էլ լինի, քանզի կյանքը շատ է բարդ: Ու կան բաներ, որ իռացիոնալ են, այսինքն մարդկային ռացիոնալ ծրագրերին չեն ենթարկում: Դրանցից են՝ շուկան, փողը, լեզուն, բարոյական նորմերն ու էլի շատ բան:

Մարդու ստեղծած ծրագրով նորմերի համախումբ ստեղծելը կամ պահպանելը շատ է նման օճանիզմի: Ի՞նչ երաշխիք կա, որ ազգային նորմ ստեղծողները կամ պահպանողները հենց ազգը կործանելու նպատակը չունեն, բայց երբեք չեն խոստովանում:

Հենց Հյուսիս նշած նորմերն են մարդկանց ընտրել և ոչ թե հակառակը, այսինքն, մարդիկ չեն էլ նորմերն ընտրել: Սկզբում նորմերն իրագործվել են քարունների ձևով (տես James George Frazer, *Psyche's Task*), ու եթե դրանք հեշտացրել են հանրության անդամների կամ հանրությունների համագործակցությունը, մարդկանց թիվն աճել է: Կողքի հանրություններն էլ կամաց-կամաց փոխ են առել էլ նորմերը, որ իրենք էլ հարատևեն: Էս ընթացքը լրիվ անգիտակից է եղել: Է՛ս իմաստով է Հայելկն ասում, թե «հենց նորմերն են մեզ ընտրել, ոչ թե մենք ենք նորմ ընտրել, ու թե բարոյական նորմերն ընկած են բնագրների ու բանական դատողության արանքը»:

(Մենք նույնիսկ չենք էլ պատկերացնում, թե բարության սկսած քանի՞ քանի՞ նորմ ու ավանդույթ ենք յուրացնում, քանի՞-քանի՞ «չի կարելի» ենք «նոր կաթի հետ ծծում», որ հնար ունենանք առանց կոնֆլիկտի ապրելու ընտանիքում ու դուրսը՝ հասարակության մեջ, օտարների շրջապատում):

Ո՞ւմ են ձեռնադրում «ծրագրային նորմ ու ավանդույթները»: Էսօր Հայաստանում չկա մի քաղաքը չէ՛լ կամ կուսակցական, ով չխոսի «ազգային նորմ ու ավանդույթները» պահպանելուց, «ազգային նոր ու կենսունակ ու առողջ գաղափարախոսություն» ստեղծելուց, որովհետև կապիտալիզմի բերած նորմերն ու գաղափարախոսությունն իբր հայերին մասամբ է ձեռնադրում, թե իբր հայերն ազգային ենպիսի «առանձնահատկություններ» ունեն, ո՞ր... ևն, ևն:

Ու էս ամենն ասում են մանվածապատ լեզվով ու տգետ, աղոտ ու անորոշ էնպիսի կոչերով, արոնք դեսից-դենից են թոցրել, ու, ի վերջո, հասնում են կամ Հիտլերի, կամ Մարքսի ծրագրային հիմնական «բարոյական» թեզերին: Օրինակ բերենք միայն Մարքսին (մյուսները սրանցից ենքան էլ չեն տարբերվում):

Մարքսի թեզերը, իրոք, շատ են հրապուրիչ. «Հավասարություն, եղբայրություն, ամեն մեկին՝ ըստ իր պահանջի, ամեն մեկից լստ իր կարողությունները»: Մարքսիզմը երկրային դրախտ էր խոստանում, ու էլ երկրային

դրախտ «իրագործվեց» Հյուսիս նշած նորմերից հրաժարվելով: Արդյունքն ի՞նչ եղավ:

Օրինակ՝ մարդակերությունը, առանց դատ ու դատաստանի միլիոնների զնդակահարությունն ու աքսորը, Գուլագը, մերձավորին մատնելն ու դավաճանելը, համատարած երկերեսանությունը, ստախոսությունն ու քծնանքը, կաշառակերությունն ու անազնվությունը, կամայականությունն ու անհանդուրժողությունը ևն:

Հենց էս նորմերը (թերևս առաջինից բացի) Հայաստանում էլ էին համարյա համատարած, բայց այժմ սրանք էսօր էլ կան: Մարսափելի է, բայց համարյա հենց սրանք են մեր էսօրվա «ազգային» նորմ ու ավանդույթները, այնինչ, բոլորիս ուզածը է՛ն ավանդույթներն են, որ գրել են՝ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԼԱՎ ՈՒ ՎԱՏԻ ՄԱՄԻՆ Վերնագրի տակ:

Իհարկե՛ մեղք են անում, որ էս բացասական բնութագրերն էսքան ընդհանրացնում են: Մեր ժողովրդի զգալի մասը, մանավանդ ջահելներից, շատ լավ է, ու մեր հույսը հենց էլ մասն է: Բայց էլ մասը պիտի ուժ ունենա ու ազատվի կեղծ արժեքներից, ազատվի մոլորություններից, սնահավատությունից ու նախապաշարմունքներից, քանզի է՛ն բաները, ինչը շատ-շատերն էսօր «ազգային գեղեցիկ ավանդույթ» ենք համարում, գուցե իրոք խանգարող մոլորություն ու նախապաշարմունք են:

Ուրիշներին չվնասող գեյն է անբարոյական՞ն, թե՞ Հիտլերը, ով միլիոններով երեխա ու ծերունի, կին ու տղամարդ էր սպանում, բուլդոզերներով դիակները լցնում էր փոսերն ու սպանած մարդկանց կաշվից էլ ձեռնոց ու կանացի պայուսակ էր կարում՝ «հանուն գերմանական հայրենիքի լուսավոր ապագայի»:

Մի կտոր հացի համար պոռնկություն անողն է անբարոյական, թե՞ էն քաղաքական գործիչները, պատգամավորները, մախարարներն ու պրեզիդենտները, ովքեր թալանում են երկիրը, մեծացնում հարկերն ու զանազան տարիֆները, ստիպում են, որ բոլոր գործարարները, մինչև իսկ արևածաղկի սերմ վաճառող թշվառները, կաշառք տան զանազան պաշտոնյաների, որ իրենց օրվա հացը վաստակելու իրավունքն ունենան:

Ալբարկղը քչիորոդ բո՞ւժն է անբարոյական, թե՞ կաշառք վերցնող դատավորն ու դատախազը, ու արդարադատության ողջ համակարգը:

Կատարյալ հասարակություն չի եղել ու չկա: Երևի չի էլ լինի: Հասարակության անդամների մի մասը միշտ էլ դժգոհ կամ թշվառ կլինի: Բայց նախ լավ կլինի, որ էլ թշվառությունը նվազագույնը լինի: Երկրորդ՝ որ նույնիսկ էլ թշվառն ավելի լավ սպրի, քան հայ գյուղացին միջմաղաբում:

Էսօրվա ամերիկաներում, օրինակ, եղպես է: Եթե մի քանի պորտը բացի գնով, կամ նույնիսկ պորտը համատարած բաց անելու գնով (իսկ էլ

անգամ պորտի բացությունը ոչ մեկը չի էլ նկատի) պիտի աղբարկողների վրա ազահությունը աղբ խժռողները վերանան, ու ժողովրդի մեծ մասը, ազնիվ ու աշխատավոր մասը, պիտի ապրի արժանապատիվ կյանքով, ու եթե սրա համար ուրիշ ճար չկա (իսկ ուրիշ ճար՝ իրոք չկա), ուրեմն ես բաց պորտը հանդուրժելու կողմն եմ:

Գրողի ծոցը մոդայի հետ կապված «ավանդույթ» կոչվածները, եթե հանուն դրանց՝ ժողովրդի մեծ մասը պիտի օրվա հացի կարոտ լինի, անօգնական ծերունիները պիտի թշվառ լինեն, մանուկները կուշտ ուտելու, բուժվելու ու կրթության հնար չունենան:

Ինձ թարս չհասկանաք: Ես երբևէ չեմ ասել ու չեմ ասում, թե պիտի ոչ մի ավանդույթ չպահպանենք: Ես կողմ եմ, օրինակ, քաղաքացիական էն-պիսի խիզախության ավանդույթներին, ինչպիսիք ունեին պավլիկյաններն ու թոնդրակյանները, ում Հայաստանից քշեցին սկզբում Բուլղարիա, հետո էլ մինչև Ֆրանսիա, և ովքեր սկիզբ դրեցին եվրոպական Ռեֆորմացիային ու մի քիչ էլ Լուսավորչականությանն ու Վերածննդին (Տես 70-ը): Ես կողմ եմ Խորենացու, Նարեկացու ու Թումանյանի ավանդույթներին, ովքեր քաջություն ունեին բոլորին ասելու իրենց մտածածը:

Ամենամեծ ու ամենաթունդ անբարոյականները հենց է՛ն մարդիկ են, ովքեր ժողովրդին դարձնում են թշվառ ու հետն էլ համոզում, թե դա արվում է «հանուն մեր ազգային ավանդույթների» կամ «հանուն մեր ազգի լուսավոր ապագայի»: Էս տեսակ մարդկանց համար օրվա հացի խնդիրն էական չի: Սրանք միշտ էլ գերխնդիրներ ունեն, որ պիտի տասնամյակներով կամ հարյուրամյակներով լուծեն:

Իմիջիայրոց գեյերն ու պոռնիկներն ո՞ւմ են պետական իշխանության ապարատի կամ կուսակցության գործընթաց ստիպել, որ ուրիշներն էլ իրենց պես մտածեն, որ ուրիշներն էլ դառնան գեյ ու պոռնիկ: Իսկ անբարոյական կավատները հենց էսպես են վարվում:

Կառլ Պոպերն ասում է (տես գրականության ցանկը), թե իշխանություն կոչվածը միշտ էլ ավագակախումբ է եղել: (Մխա՞լ է սա): Էդ ավագակներին միշտ էլ օդի պես անհրաժեշտ է, որ շարքային մարդը գլխի չընկնի, որ իրենք ավագակ են: Հենց սրանք են խրախուսում «ազգային ավանդույթների պաշտպան» կոչվածներին (որոնց մեծ մասը միս:միտ մոլորյալներ են), որ դեմակրատիա-կապիտալիզմն ու արևմտյան մշակույթը համարեն վնասակար ու երբեմն էլ թշնամական:

Որովհետև երբ արտաքին թշնամի կա, (ներքին ավագակների թշնամակաության մասին էլ չեմ մտածում: Որովհետև շարքային մարդը միշտ էլ իր անհաջողությունների պատճառը իրենից դուրս է փնտրում:

Բանակա՞ն է, արդյոք, նման մարդը:

Չորրորդ մասը

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՂԵՐԳԱԿԱՆ ՈՒ ԽԱՅՏԱՌԱԿ ԷԶԸ-1

*(ՇՆմարտությունը հայերենի էսօրվա քերականության մասին,  
կամ հայ ազգի ողբերգություններից երրորդը)*

Մարդ արարածը խորամանկությունը գերադասում է խելքից:  
*Միթրաժանայի օրենքը*

Նախորդ գլխում ասել եմ, որ հնամուլները երբեք ու երբեք լուրջ խնդիրներից չեն խոսում, եթե նույնիսկ դրանք չափազանց կարևոր ու հրատապ են: Չեն խոսում, որովհետև դրանցից խոսելու համար լուրջ գիտելիք է պետք:

Մեր հայ երգի ու երգասպարի ողբերգական խնդրից հետո թերևս երկրորդ կարևորագույնն ու հրատապը էսօրվա հայերենի քերականության խնդիրն է:

(Գուցե սա հենց առաջինն է, որովհետև մեր երգ ու պարի կորուստը, շատ հնարավոր է, որ անդամնայի է):

Էս ներքևի հոդվածը տպել եմ «Չորրորդ իշխանություն» (= ՉԻ) թերթում, 2006 թվի ապրիլի 18-ի ու 21-ի համարներում: (Ուրիշ թերթ չտպեց, բանասիրական հանդեսների մասին էլ չեմ ասում: Սրանք իմ գրածները, առհասարակ, չեն տպում):

Բերում եմ էդ հոդվածը, համարյա առանց փոխելու (մի երկու աննշան բան եմ կրճատել, մի երկու հնացած թվական եմ փոխել, ու մի երկու ոճական բան էլ ավելացրել եմ):

### ԱՆԵԿԴՈՒՏ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խավարանդության պահպանվելու երկրորդ օրենքը

Մարս Պլանկը (1858-1947), ով Գերոգ Կսմատրի ազգակից ու քվանտային ֆիզիկայի հիմնադիրն է, Կանտորի ասածից ավելի թունդ բան է ասում.

«Իսկական գիտական տեսությունը ոչ թե է՛ն պատճառով է հաղթում, որ դրա հակառակորդները համոզվում են, որ հենց է՛ն տեսությունն է ճիշտ ու լուսավորվում են, այլ միայն է՛ն պատճառով, որ է՛դ հակառակորդները կամաց-կամաց մեռնում վերանում են, իսկ նոր սերունդն է՛դ տեսությունը (բառացի) մոր կաթի հետ է յուրացնում»:

Սրանից մի 20-30 տարի առաջ, Մովսեսի օրերին, մի անեկորու կար:

Անեկորուն ասում էր, թե մի հայ մարդ գալիս է Միջին Ասիայի խուլ գյուղերից մեկն ու ասում, որ ինքը անգլերենի ուսուցիչ է, բայց ես մարդն

անգլերեն մի բան անգամ չի իմանում: Էս գյուղում էլ անգլերեն իմացող չի լինում, ու գյուղի դպրոցի դիրեկտորն էս հային վերցնում է իրենց դպրոցի անգլերենի ուսուցիչ: Հայն էլ, տասը տարի շարունակ, դպրոցի աշակերտներին անգլերենի տեղը հայերեն է սովորեցնում:

Էս խարդախությունը բացվում է են ժամանակ միայն, երբ էս դպրոցն ավարտողներից մեկը գնում է մայրաքաղաք ու համալսարանում անգլերենի քննություն է տալիս:

Ես չգիտեմ, թե էս անեկդտոն ինչքան է ճիշտ (ասում են, որ սա իրոք է եղել), բայց էս էս անեկդտոն հիշեցրի, որ ընթերցողին մի հարց տամ:

Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ էս տեսակ մի բան Հայաստանում լինի:

Իհարկե, ընթերցողը կասի՝ չէ: Բայց հարցս շարունակում եմ:

Հնարավո՞ր է, որ մայրաքաղաք Երևանում լինի էս տեսակ բան:

Ընթերցողը, անկասկած, կասի՝ չէ: Բայց մի հարց էլ եմ տալիս:

Հնարավո՞ր է, որ սա լինի Երևանի Պետական Համալսարանում:

Ընթերցողն էլի կասի՝ չէ, երբեք, ոչ մի անգամ, բնավ կն:

Ու կսխալվի: Չարաչար կսխալվի: Էս անեկդտոնից շատ ու շատ ավելի մի խայտառակ բան կա՝ ու գոյություն ունի որջ Հայաստանում, թե՛ բոլոր-բոլոր դպրոցներում ու համալսարաններում, թե՛ ամեն տեղ, ու արդեն՝ 75 երկար ու ճիգ տարի:

Արդեն 75 տարի է, ինչ հայերն ունեն երկու քերականություն (ուրեմն՝ նաև երկու լեզվաբանություն), ու էս երկու քերականությունը լրիվ իրար հակառակ են, իրար լրի՛վ են հակասում, իրար ուղղակի ջնջում են, իրար սպանում են: Ու եթե սրանցից մեկն ընդունես, այսինքն, կամարես ճիշտ, ուզես՝ չուզես, մյուսը պիտի համարես սխալ:

Բայց անհավատալից հենց է՛ն հանգամանքն է, որ էսօրվա հայ լեզվաբանները, իմանալով, որ սրանցից մեկը սխալ է, անհեթեթ է, հակազիտական է, էս երկու քերականությունն էլ հայտարարում են ճիշտ:

Ու մեր լեզվաբաններն էս երկու իրար հակասող քերականությունից ընտրել են հենց սխալ, անհեթեթ, անտրամաբանական ու հակազիտական քերականությունն ու 75 տարի է, ինչ տա՛ հն սովորում ու սովորեցնում, «ուսումնասիրում ու հետազոտում»: Բայց, վերի անեկդտոնից հակառակ, արդեն 75 տարի է, ինչ էս խայտառակությունը չի բացվում:

Էս սխալ քերականությունը հորինվեց 1934 թվին: Հորինողը Արարատ Ղարիբյանն էր: Իսկ 1936-ին Արեղյանն անատարկելի ապացուցեց, որ

Ղարիբյանի էս քերականությունը տգիտություն է, ապացուցեց Ղարիբյանի ու են օրերի բոլոր հայագետների ներկայությամբ, ու դրանցից ոչ մեկը ծալտուն չհանեց:

Մյուսը, գիտական ու ճշմարիտ քերականությունը, Մանուկ Արեղյանին է, ինչը շարադրված է, օրինակ՝ Արեղյանի *Հայոց լեզվի տեսության* մեջ, ու գործում էր 1906 թվից մինչև 1934-ը, կամ 1936-ը:

ԻՆՉ ԳԻՏԵՆՔ, ՈՐ ԱԲԵՂՅԱՆԻ ԶԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԻՇՏ Է,  
ԻՍԿ ՂԱՐԻԲՅԱՆԻՆԸ՝ ՍԽԱԼ

Ձրսփռախ խորությունը երբեք չես իմանա,  
մինչև որոշ չդնես մեջը:

Միլլերի օրենքը

Ասել եմ արդեն, որ 1931 թվին Մանուկ Արեղյանը հեռացավ Համալսարանից, որովհետև մի անասելի հալածանք էր սկսվել իր դեմ: Ու ոչ միայն համալսարանից հեռացավ, այլև նույն մի 50 տարի դասավանդելուց հետո, ստիպված, դասավանդելը թողեց:

Հալածողները ջահել «լեզվաբաններն» էին՝ Արարատ Ղարիբյանն ու Գուրգեն Սևակը, ովքեր իրենց պես «լեզվաբաններով» բանակ կազմած՝ հարձակվել էին Արեղյանի քերականության ու գրականագիտության վրա:

Արարատ Ղարիբյանը Աճառյանի ասպիրանտն էր, Գուրգեն Սևակը՝ Ղափանցյանի:

Ու սրանք, անընդհատ ու ամեն տեղ, ժույով էին անում ու քերթերում էլ անընդհատ հողված էին տպում, հայտարարելով, թե «Արեղյանի քերականությունը բուրժուական է, մախիստական է, իդեալիստական է, հակա-դիալեկտիկական է, մետաֆիզիկական է, իմպերիալիստական է. "բերկին-նական" է (սխալն իրենցն է - Մ.Հ.), ֆորմալիստական է» կն, կն:

Էս ջահել ասպիրանտների պրոֆեսորները լուրն էին: Ժողովներն ու հողվածները ոչ միայն Հայաստանում էին, այլև Թիֆլիսում ու նույնիսկ Բարվում: Էս ասպիրանտները պահանջում էին, որ Արեղյանը հրաժարվի իր քերականությունից ու գրականագիտությունից ու «մեղա գա, ուղղվի»:

Արեղյանն առարկելու ոչ մի հնարավորություն չուներ: Արեղյանին ձայն չէին տալիս, ու նրա գրած պատասխանները ոչ մի անգամ չէին հրատարակում, նույնիսկ երբ դիմում էր հանրապետության ազդեցիկ դեմքերին:

Ու Արեղյանը, ինչպես ստվել է, հասկացավ, որ էս ջահելները համալսարանում իրեն օր ու արև չեն տա, հասկացավ, որ եթե մնա Համալսարանում, իր վերջը երևի արքայի կամ գնդակահարությունը լինի, ինչն էն ստա-



լինյան մղձավանջային օրերին սովորական բան էր, ու թրեց ու համալսարանից թողեց գնաց:

Արարատ Ղարիբյանը, ով հայտարարում էր, թե ինքը պիտի գրի հայերեն լեզվի նոր, «դասակարգային, պրոլետարական քերականությունը», 1934 թվին հրատարակեց իր էս «դասակարգային, պրոլետարական քերականության» գիրքը:

Գրքի որակի մասին քիչ հետո կասվի, բայց նշեմ, որ էսօրվա մեր քերականությունները, բոլորն էլ անխտիր՝ Ղարիբյանի քերականության ժառանգներն են, ու Ղարիբյանի քերականությունից տարբերվում են միայն սխալների ավելի մեծ քանակով ու «բառային ահավոր աղմուկով»:

Ի վերջո, ստեղծված գիտական ու սրա հետ կապված հասարակական շփոթը վերացնելու համար, Արեղյանը, 1936 թվին, գրում է *Մի քանի քերականական խնդիրների մասին* 144 էջանոց իր փայլուն աշխատությունը:

Հայաստանի լուսժողովմատը (էն օրերի Կրթության ու գիտության նախարարությունը) Արեղյանի էս գործը դնում է հրապարակային քննության: Հայաստանի էն օրերի բոլոր նշանավոր լեզվաբաններով, Արեղյանի քննադատներով ու չսիրողներով, գրողներով, լրագրողներով ու ուրիշ մտավորականներով լեւի-լեցուն դահլիճում, երեք օր շարունակ, Արեղյանը կարդում է իր էս գիրքը՝ որպես զեկույց:

Էս երեք օրվա ընթացքում դահլիճում ոչ ոք ոչ մի ծպտուն չի հանում, միայն մի անգամ Աճառյանը տեղից ասում է, թե «ընդհանուր քերականության մեջ այդպես չէ», բայց Արեղյանը գրովսր բարձրացնում է ու կտրուկ շարտում. «Ընդհանուր քերականություն չկա աշխարհում. քերականությունը միշտ եզակի է»: Ու վերջ, ոչ մի առարկություն: Ծպտուն չի հանում նաև Արարատ Ղարիբյանը, նույնիսկ երբ Արեղյանն ասում է, որ սրա «քերականության գիրքը գրել է քերականորեն տգեռ մի մարդ»:

Արեղյանն իր էս ելույթի մեջ Ղարիբյանի քերականության քաղը քարի վրա չի թռնում ու անառարկելի ապացուցում է, որ էս քերականությունն անկեթեք է ու հակասական, լի է տգիտությամբ ու չի բավարարում տրամաբանության ու գիտության տարրական պահանջներին:

Արեղյանի էս վերլուծությունը, Արեղյանի փաստարկներն ու բոլոր դրույթները, գիտական ու տեսական առումով էնքան խորն էին ու էնքան լուրջ էին հիմնավորված, որ նրա ելույթից հետո ոչ ոք, ոչ մեկը մի բառ անգամ չի առարկում, չնայած նախագահողը, էն օրերի լուսժողկոմը (այս-ինքն՝ նախարար Ա. Եղիազարյանը) երկար ժամանակ հորդորում է, որ ե-

լույթ ունենան ու մի բան ասեն: Ու էն մարդիկ, ովքեր վերջին հինգը երկար ու ձիգ տարին փնտովում ու հայեցում էին Արեղյանի քերականությունը, ծպտուն չեն հանում, չեն առարկում:

Արեղյանն իր էս ելույթով պաշտպանեց իր քերականությունը, հայոց լեզվի իր տեսությունը, ու քանի որ էս ելույթին (հիմնավորված, գիտական մեթոդով) առարկող չի եղել, թե՛ էն օրերին, թե՛ դրանից հետո՝ մինչև էսօր, ուրեմն, մեր էսօրվա բոլոր լեզվաբանները, ուզեն՝ թե՛ չուզեն, պիտի ընդունեն, որ Արեղյանի քերականությունը ճիշտ է, իսկ Ղարիբյանական բոլոր-բոլոր քերականությունները, ուրեմն, նաև մեր էսօրվա դպրոցական ու համալսարանական քերականությունները, սխալ են, անհեթեթ, հակագիտական ու հակատրամաբանական:

Ասել եմ արդեն, որ Արեղյանի 1936 թվի էս զեկույցից հետո, ինչքան էլ էսօր տարօրինակ թվա, հաղթեցին «ասպիրանտները», Ա. Ղարիբյանը, Գ. Սևակն ու իրենց համախոհները: Հաղթանակը կատարյալ էր ու բացարձակ: Ու չնայած Արեղյանի համառ պնդումներին՝ Արեղյանի էս գործը չհրատարակեցին, ու ժողովրդից թաքուն պահեցին՝ մինչև 1985 թիվը, այս-ինքն՝ 51 տարի: Ձեկույցը հրատարակվեց Արեղյանի մահից 41 տարի հետո միայն:

Մասնով Արեղյանը մահացավ 1944 թվին: Ո՞վ իմանա, ինչքան դառնացած է հեռացել կյանքից Արեղյանը, է՛ն մարդը, ով իր ողջ կյանքն անմնացորդ նվիրել էր հայոց լեզվին ու հայագիտությանն առհասարակ:

Արեղյանին նույնիսկ մեկ-երկու ասպիրանտ չտվեցին, որ հայոց լեզվի տեսության գոնե մեկ-երկու մասնագետ պատրաստեր: Ու հայ պաշտոնական լեզվաբանության մեջ ոչ մեկը Արեղյանի հետևորդը չի, ոչ մեկը, չնայած Արեղյանն անառարկելի է ապացուցել, որ իր քերականությունը ճիշտ է, իսկ Ղարիբյանինը սխալ:

Մինչև էսօր էլ ոչ մի լուրջ, գիտությամբ հիմնավորված առարկություն չկա: Կան միայն մերկապարանոց հայտարարություններ, թե «Արեղյանն ուրիշ կարծիք ունի», թե «Արեղյանի որոշ տեսակետները հնացած են», բայց ոչ միայն երբեք չեն ասում ի՞նչ է էդ ուրիշ կարծիքը, կամ ինչո՞ւ է դա հնացած, այլև դա թաքցնում են ժողովրդից:

Էս պատմությունը հայ լեզվաբանության պատմության, ու առհասարակ, հայ գիտության պատմության ամենաաղբերգական ու ամենախայ-



տառակ էջն է: Ու սա ողբերգական ու խայտառակ էլ կմնա, քանի ճշմարտությունը քաքցնում են մեր աշակերտներից ու ուսանողներից, մեր մտավորականներից ու մեր ողջ ժողովրդից, ու քանի հայ ժողովուրդը հակագիտական քերականությունն է համարում գիտական, ու սա՛ է սովորեցնում իր մանուկներին ու պատանիներին:

Ի՞նչ է ասել մեր ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտը: Ի՞նչ է ասել ԳԱԱ գրականության ինստիտուտը, ինչը, իմիջիայոց, կրում է Մանուկ Աբեղյանի անունը: Ի՞նչ է ասել մեր Լուսավորության կամ Կրթության ու գիտության նախարարությունը, ի՞նչ է ասել Լեզվի տեսչությունը (ոստիկանությունը):

Ի՞նչ է ասում Երևանի պետական համալսարանն ու ի՞նչ է ասում մեր էսօրվա մոտ 60 համալսարանը, ի՞նչ է ասում հայոց լեզվի ու գրականության 100-ից ավել ամբիոնը՝ գիտության իրենց բազում թեկնածուով, դոկտոր-պրոֆեսորով ու ակադեմիկոսով: Սրանք ինչո՞ւ ծպտում չեն հանում: Մի՞թե սրանց համար մեկ է՝ հայ ժողովուրդը գիտությամբ կկրթվի, թե՞ տգիտությամբ:

Սրանք իրավունք չունեն ասելու, թե իրենք տեղյակ չեն էս պատմությունից, որովհետև Աբեղյանի գեկույցը հրատարակվել է 1985 թվին, Աբեղյանի երկերի «Ը» հատորի մեջ, ու իմ շարադրած փաստերն է՞ն գրքից են: Ով չի հավատում, թող վերցնի կարդա ու տեսնի, ճի՞շտ են ասում, թե՞ չէ:

Ուրեմն՝ արդեն առնվազն 26 տարի է, ինչ մեր լեզվաբաններն ու ասածս հիմնարկները գիտեն, որ մեր քերականությունը հակագիտական է ու վնասակար:

**Բա ինչո՞ւ են լռում:**

**ՀԱՅԵՐԵՆԻ ԷՍՕՐՎԱ ԱԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՉԻ**

**Տրված երևույթը բացատրող հիպոթեզների քիվն անսահման է:  
Պերսիգի պոստուլատը**

**Մարդիկ տրված երևույթը բացատրող  
հիպոթեզներից ընտրում են ամենապատշաճը:  
Պերսիգի պոստուլատի Միթրաժանայի 1-ին հետևանքը**

**Էսօրվա մեր հայ քերականությունը, ուրեմն՝ նաև լեզվաբանությունը, լեզվին վերաբերող իր ասածների ճիշտ ու սխալը ջոկելու ոչ մի գիտական, օրյեկտիվ, մարդուց անկախ չափանիշ չունի:**

**(Թերևս բացառություն արվի ստուգաբանությանը, լեզվի պատմությանը, աղբյուրագիտությանն ու սրանց պես բնագավառներին, բայց թերևս):**

**Եթե կա էլ չափանիշը, թող լեզվաբաններն ասեն:**

**Չկա՛:**

**\*\*\***

Էս ողբերգական հայտարարության ամենափայլուն ապացույցը հենց մեր երկու քերականության գոյությունն է՝ Աբեղյանի քերականության ու դարիբյանական քերականության գոյությունը: Սրանք, էս քերականությունները, իրար լրի՛վ են հակառակ, էնքան են հակառակ, որ եթե մեկն ընդունես, մյուսը, ստիպված, պիտի դեն շարտես: Բայց մեր լեզվաբանները գործություն չունեն որոշելու, թե էս երկու քերականությունից որն է ճիշտ:

**Ուրեմն՝ մեր էսօրվա լեզվաբանությունն իր ասածների ճիշտ ու սխալը ջոկելու գիտական չափանիշ՝ իրո՞ք չունի:**

Բա մեր լեզվաբանները ո՞նց են որոշում, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ:

**Քվեարկելով կամ հեղինակությունների կարծիքներին հենվելով:**

Հանգուցյալ ակադեմիկոս Գևորգ Բեգլարի Չահուկյանն ինձ մի անգամ առաջ, թե հայոց լեզվի ընդունելության մեր հանձնաժողովները, ամեն քննությունից առաջ (sic!), քվեարկելով են որոշում, թե ուղղագրական կամ կետադրական ո՞ր մի կանոնը համարեն ճիշտ:

Սա լավ գիտեն էն դժբախտ ծնողները, ովքեր երբևէ բողոքարկել են հայոց լեզվի քննության արդյունքները, որովհետև շատ է պատահում, որ հանձնաժողովի անդամները նրանց ասեն. «Մենք որոշել ենք, որ սա սխալ է, իսկ թե գրքերում ինչ է գրված կարևոր չէ»:

Հաճախ էլ, իրենց առածները «ապացուցելու» համար, մեր լեզվաբանները վկա են կանչում հեղինակություններին. ասում են, «սա ճիշտ է, որովհետև Աճառյանն է էսպիս ասել, Չահուկյանն է էսպես ասել», ևն:

Մա նույնն է, ինչ որ Արխատուելին կամ Անանիա Շիրակացուն վկայա-  
կոչելով՝ ուզածիդ պես ծոմոս էսօրվա ֆիզիկան, քիմիան ևն:

Պատկերացնո՞ւմ եք, որ ֆիզիկայի հանձնաժողովն էլ քվեարկեր ու ո-  
րոշեր, որ, օրինակ՝ Նյուտոնի օրենքները մի երկու շաբաթով ճիշտ չեն,  
իսկ մաթեմատիկոսներն էլ որոշեին, որ Պյութագորասի թեորեմն է սխալ:

Մեր էսօրվա լեզվաբանները, նույնիսկ քվեարկությամբ, ի վիճակի չեն  
որոշելու, թե հայերենը քանի՞ հոլովածև ունի՝ հինգ թե յոթ:

Ասում են, թե Սովետի օրերին լեզվաբանները դիմել են Կոմունիստա-  
կան Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին, որ սա՛ որոշի՝ հոլովները  
հի՞նգն են, թե՞ յոթը: Կենտկոմն էլ իբր ասել է. «Վեցի վրա բարիշեք, պրծ-  
նի էքս»: Էս փաստը կամ անեկդտը ծիծաղելի կլիներ, եթե ողբերգական  
իրականություն չլիներ: Մեր «համաշխարհային, փայլուն ազգը», 21-րդ  
դարում, հինգից մինչև յոթը հաշվելու ունակություն չունի:

(Հայերենի հոլովածևերի թվի հարցը լուծել են, ու սրա չափազանց  
կարճ բովանդակությունը, ավելի ճիշտ, սրա արդյունքը, գրել են իմ *Թարգ-  
մանելու արվեստը* գրքում: Հոդվածն էլ պատրաստ է, բայց ո՞վ կտալի):

Մեր էսօրվա լեզվաբանները բայը գոյականից տարբերելու ոչ մի միջոց  
չունեն:

Սրանք ասում են. «Բայը գործողություն ցույց տվող բառն է»: Սա ի-  
հարկե՛ սխալ է, որովհետև, եթե սա շրջենք (բառ-ենթակայի ու բառ-ստո-  
րոգյալի խմբերի տեղերը փոխենք), մեր լեզվաբանները կրակը կընկնեն,  
քանզի պարտադիր է, որ սահմանումը շրջելիս՝ ասելիքը չփոխվի:

Իրոք՝ շրջենք էս սահմանումը ու ասենք. «Գործողություն ցույց տվող  
բառը բայ է»: Բայց լիքը գործողություն ցույց տվող բառ կա, օրինակ՝  
«ձուզմանը», կռիվ, վեճ, պատերազմ, տուրտումփոց, նրկաշարժ, նրաբուխ,  
գործարություն, հոսանք, հոսք, պտույտ, շարժում» ևն, որ բայ չի:

«Տուրտումփոց» բառից էլ լավ գործողություն ցույց տվող բա՞ռ: Ելք աս-  
ում ենք. «Երկրագնդի հավերժական պտույտը», մի՞թե «պտույտ» բառը  
«պտույտ» ցույց չի տալիս: Եթե ցույց չի տալիս, բա ի՞նչ է ցույց տալիս:  
Բայց այն էս բառերը բայ չեն. բոլորս էլ գիտենք, որ սրանք գոյական են:  
(Սա Արեղյանից են սովորել, միայն օրինակներն են ավելացրել):

Բայի հասկացությունը լեզվաբանության մեջ արմատական է, հիմնա-  
կան է, կենտրոնական է (ինչպես, օրինակ՝ ֆունկցիայի սահմանի հասկա-  
ցությունը մաթեմատիկայում): Հենց բայի հասկացության վրա է հիմնված  
լեզվի ողջ տեսությունը: Ու եթե սա սխալ է (տեսանք, որ իրոք էլ սխալ է),  
ուրեմն, սխալ ու հակազդատական է ողջ տեսությամբ:

Գիտեմ, լեզվաբանները կասեն, թե բայի իմ հենց նոր բերած սահմա-  
նումը Ղարիբյանինն է, որ իրենք հիմա իբր ճշտել են էդ սահմանումը:  
Բայց էս առարկությունը ճիշտ չի:

Հա, մեր լեզվաբանները, 1936 թվից սկսած, մանավանդ 1985 թվից հե-  
տո (երբ հրատարակվեց Արեղյանի ասածս գիրքը), դարիբյանական քե-  
րականության անհեթեթ սահմանումները շտկելու հուսահատ փորձեր են  
անում, բայց սխալը չի վերանում: Ավելանում է միայն բառային «աղմու-  
կը», իսկ անհեթեթությունն անընդհատ ու անընդհատ խորանում է:

Ու էսօրվա լեզվաբանության ո՛ր մի սահմանումին ձեռ ավեցիր (օրի-  
նակ, *գոյականի, նախադասության, ստորոգելու, ստորոգյալի*, ևն), բայի  
էս ասածս սահմանման պես փուլ է գալիս, այսինքն, պարզվում է, որ հա-  
կասական է, ու չի բավարարում տրամաբանության պահանջներին:

Սրա համար էլ էսօրվա մեր լեզվաբանությունը սքոլաստիկա է, ու սա  
փաստ է: Սրա՛ համար է, որ մեր բոլոր աշակերտները, ուսանողները, ու-  
սուցիչները, գրողներն ու լրագրողները, ու նույնիսկ հենց իրենք՝ լեզվա-  
բանները, բոլորն էլ զգվում են էս քերականությունից, ուղղակի ատում են  
էս քերականությունը: Չզվում են սրանից ու ատում են սա, որովհետև ան-  
հնար է, որ էս քերականությունը տրամաբանությամբ հասկանաս:

Սա պիտի միայն անգիր անես, քննությունդ հանձնես ու մոռանաս, ո-  
րովհետև սա էլ ուրիշ ոչ մի բանի պետք չի: Սա անօգուտ է, անպտուղ է ու  
անպայման է վնասակար, որովհետև սպանում է մեր մանուկների, պա-  
տանիների ու ջահելների մտածողությունը:

(Ես ուսումնասիրել եմ էս անհեթեթ ու վնասակար քերականություննե-  
րը, որովհետև չէի հավատում, որ 20-21-րդ դարերում էս տեսակ արտառոց  
բան լինի: Ու էս ասածներիս ներքն են ու գիտական ցանկացած լուրջ քն-  
նարկության ժամանակ կապացուցեմ, որ էսօրվա քերականությունը կրկ-  
նել ու խորացրել է Ղարիբյանի հակազդատական բոլոր թեզերը):

Լեզվին վերաբերող մեր էսօրվա բոլոր վեճերը, լինեն դրանք ուղղագ-  
րության ռեֆորմի մասին, թե՛ գրական լեզվով խոսելու կամ չխոսելու մա-  
սին. կամ էլ՝ հայոց լեզվի քննական հարցերի անհեթեթ բովանդակության  
մասին, հոլովածևերի թվի մասին, լեզուն մաքրելու ու լեզվի տեսչության  
անհեթեթ գործունեության մասին, թարգմանության՝ ու մանավանդ թատ-  
րոնի ու կինոյի լեզվի ու թարգմանության մասին, ու իհարկե՛ էսօրվա մեր  
գրականության վիճակի ու ապագայի մասին, մեր դասագրքերի սարսա-  
փելի լեզվի մասին, ևն, ևն, անպտուղ են ու անհեթեթ, ու որևէ ձևով երբևէ  
չեն լուծվի, քանի դեռ մեր լեզվաբաններն ու գրականագետները ճիշտ ու  
սխալը ջոկելու գիտական չափանիշ չունեն:

Բոլոր էս վեճերը, համարյա ասանց բացառության, անհիմն կարծիքներն են միայն, իսկ կարծիքը երբեք էլ գիտություն չի եղել ու չի էլ լինի: Կարծիքը շատ-շատ դառնա դոգմա կամ կրոն:

Որ գործը հասավ կարծիքին, պրոք Նշան Որբերյանի ու Պարույր Հայրիկյանի պես լեզվաբանությունից անտեղյակներն էլ իրավունք կունենան լեզվից ու ուղղագրությունից խոսելու: Ինչո՞ւ չէ, որ: Ն. Որբերյանն ու Պ. Հայրիկյանը կարծիք ունենալու իրավունք չունեն՞:

**ՄԵՐ ԷՍՕՐՎԱ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՍ ԷՍՕՐՎԱ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԸ Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

**Տգնա անհատների խմբային իմաստությանը չեն հավատում:  
Թոմաս Կառլայլ**

**Կեղծ տեսության գովազդի մի միջոցառմի քաշը  
հավատար է գիտական գործի մի տոննային:  
Պիտերի պլասցերոն (անվճառ, բայց ստա դեղը)**

Մանուկ Աբեղյանը 1936 թվի իր երեք օրանոց ելույթի մեջ ապացուցեց նաև, որ Ա. Ղարիբյանն ու Գ. Մևակը «նենգափոխում են» իր, այսինքն, Աբեղյանի գրվածքները:

Աբեղյանի ասածները նենգափոխելու էս «ավանդույթը» շարունակվում է մինչև հիմա էլ (ուղղագրության մասով սա ցույց են տվել երկրորդ մասում), բայց խորամանկ ձևով:

Մեր լեզվաբանները Աբեղյանին հիշատակում են իրենց աշխատություններում ու դիսերտացիաներում, բայց *երբեք, երբեք չեն ասում*, քե Աբեղյանն իրականում ինչ է ասում, չեն ասում, որ Աբեղյանն իրենց քերականությունը համարում էր տգիտություն, իսկ իրենց արածը՝ «կոկոզաբանություն» (էջ 635), ու որ Աբեղյանն ասում էր նաև, որ «կոկոզաբանությունը գիտության թշնամին է (*ճույն տեղը*)»:

Լրիվ հակառակը:

Մեր լեզվաբանները էսօր մեծագույն երկերեսանությամբ փյուռաբանում են Աբեղյանին, որ մարդիկ մտածեն, քե հենց իրենք են Աբեղյանի գործի շարունակողը: Հա՛, էսօրվա մեր լեզվաբանները հենց իրենք են խոստովանում, որ Աբեղյանը լրիվ է ճիշտ, բայց քանի որ ճշմարտությունը կործանարար է իրենց համարյա բոլորի բոլոր գործերի համար ու նաև իրենց տիտղոսների ու կոչումների համար, չեն ասում, որ Աբեղյանի քերականությունը բացարձակ ու լրիվ է թխտում էսօրվա քերականությունը:

Ահա էդ երկերեսանության մի քանի ասպացույցը՝ Մանուկ Աբեղյանի *Հայոց լեզվի տեսությունը* գրքի (1965, «Միտք») առաջաբանից. ինչը գրել է Երևանի Պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնը (*sic!*):

«...քերականագիտական իր աշխատություններով (թվարկված են – Մ. Հ.) Աբեղյանը նոր էջեր է բացել հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ:...հմուտ հետազոտմամբ՝ նա գիտականորեն լուսաբանել... է լեզվական օրինաչափություններն ու առանձնահատկությունները՝ ստեղծելով ներքնապես ամրակուտ (*sic!*) մի համակարգ»:

«Աբեղյանի» «Աշխարհաբարի շարահյուսությունը» և «Հայոց լեզվի տեսությունը»... տալիս են հայոց լեզվի ամբողջական ու ճշգրիտ (*sic!*) պատկերը և կազմում են ներդաշնակ ու սերտ միասնություն»:

«...մեծատաղանդ գիտնականը խորագույնս (*sic!*) բացահայտել է հայոց լեզվի մեջ իրապես գոյություն ունեցող օրենքներն ու օրինաչափությունները»:

«Ալադեմիկոս Մ. Աբեղյանի աշխատության մեջ, քննականաբար, կան նաև վիճելի, ինչպես նաև հնացած որոշ կետեր, բայց դրանք ամենևին (*sic!*) չեն մտնացնում (*sic!*) նրա գիտական ու ճանաչողական (*sic!*) բարձր արժեքը: <Աբեղյանի> «Հայոց լեզվի տեսությունը» եղել է և մնում է (*sic!*) իբրև հայոց լեզվի ուսումնասիրության մի լավագույն (*sic!*) ձեռնարկ ու ուղեցույց»:

«Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականությունը» (1912 – Մ. Հ.) ժամանակին բարձր է գնահատել աշխարհաեռչակ գիտնական Անտուան Մեյեն, նշելով, որ սա «անտարակույս (*sic!*) լավագույնն է, որ երբևէ գրվել է հայերենի վերաբերյալ: Սա իսկական գիտական աշխատություն է (թեև գրվել է որպես դպրոցի դասագիրք – Մ. Հ.): Բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են ժամանակակից հայերենով, պետք է անպայման ուսումնասիրեն էս գիրքը»:

(Պիտի ուսումնասիրեն բոլորը, բացի հայերի՞ց, որովհետև էսօրվա հայկական դպրոցներում ու համալսարաններում սա ոչ միայն չեն ուսումնասիրում, այլև եթե աշակերտը կան ուսանողն Աբեղյանի ասածներն ասի, անպայման «երկու» կստանա:

(«Երկու» կստանա, եթե պատմի Աբեղյանի «ներքնապես ամրակուտ (ուրենն՝ ճիշտ ու անխոցելի – Մ. Հ.) համակարգը» ու ներկայացնի «հայոց լեզվի ամբողջական ու ճշգրիտ պատկերը», ինչը «կազմում է ներդաշնակ ու սերտ միասնություն»:

(Ընդ որում, երկու կստանա, չնայած այն հանգամանքին, որ Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» «եղել է և մնում է իբրև հայոց լեզվի լավագույն ձեռնարկն ու ուղեցույցը» (գիտական հետազոտության համար)):

Բայց մեր լեզվաբաններից ոչ մեկը չի ասում, որ Մանուկ Աբեղյանն անտարկելի ապացուցել է, որ օրինակ՝ հայերենի անորոշ դերբայը բայ չի, ոչ մի տեսակ բայ չի ու բայական ոչ մի պաշտոն (ֆունկցիա, կիրառություն) չունի:

Արեղյանն ապացուցել է, որ հայերենի անորոշ դերբայը միայն ու միայն գոյական է, որովհետև ունի գոյականի բոլոր բոլոր հատկությունները, ու չունի բայի բոլոր հատկությունները, բացի բայիմաստից:

Այնինչ, մեր լեզվաբանները, լրիվ հակառակ սրան, պնդում են, թե հայերենի անորոշ դերբայն անդեմ բայ է:

Հայերենի համար անդեմ բայը նույնն է, ինչպես «կաթնատուն սարդը»:

Ու մեր լեզվաբաններն էսօր մի ուրիշ շատ խորամանկ բան էլ են անում: Մեր լեզվաբանները, լռելով Մ. Արեղյանի ջախջախիչ քննադատության մասին, իրենց լեզվաբանությունը շարադրում են իբր «նորագույն, ժամանակակից մեթոդներով՝ կադապարների ու կառուցվածքային (ստրուկտուրալ) միավորների մակարդակով»: Բա՛: Որ ճշմարտության հետքերը ժողովրդից լրիվ թաքցնեն:

Բայց հակասությունները մնում են, որովհետև երբեք (հիմնավոր ու տրամաբանության պահանջներին համաձայն) չեն ասում, թե հայերեն լեզվի մեջ ի՞նչ է ստորոգելը, ստորոգյալն ու բայը:

Էս «նորագույն» շարադրանքների բառային աղմուկն ու սքոլաստիկան ուղղակի ահավոր է ու դժոխային: Ու էս քերականությունները ոչ մի բանի պետք չեն, բացի դիսերտացիա պաշտպանելուց ու մեր էրեխեքին երկու նշանակելուց:

Ու էս կադապարային (ստրուկտուրալ) տեսությունները հորինվում են մասամբ ռուս (երբեմն էլ՝ եվրոպական) քերականներին կապկելով, բայց նորից ու նորից Մ. Արեղյանի գործերը ծոմռելով ու աղավաղելով՝ մինչև զառացանքի աստիճանը (զառացանքի ապացույցը տես հետո):

Ու մեր լեզվաբանները, էս շղթերգական ու խայտառակ խնդիրը թողած, հայրենասերի կեցվածք ընդունելով, անընդհատ «պայքարում են» օտար բառերի դեմ՝ իբր «նախնի հայերենի մաքրության կամ անաղարտության» (ինչը հակազիտական ու անհեթեթ է, որովհետև չկա, չի եղել ու չի էլ լինի մաքուր կամ անաղարտ լեզու), բայց երբեք չեն պայքարում օտար քերականության դեմ:

Կամ էլ, վերը շարադրածիս պես, քափ ու քրտինք մտած, վիճում են ուղղագրական ռեֆորմի մասին, բայց այս վեճը միշտ էլ մակերեսային է, ու փաստերն էլ աղավաղ (ինչի մասին մանրամասն պատմել են նախորդ գլխում):

Ի՞նչու: Որ ցույց տան, թե իբր իրոք մի կարևոր ու ազգանվեր գործ են անում: Թե որ սա չի երկերեսանությունը, բա էլ չ՞րն է:

Հիմա Ձե՛զ են դիմում, պարոմայք լեզվաբաններ ու գրականագետներ ու հայագետներ: Դիմում են մեր Ակադեմիային, ու Կրթության ու գիտության նախարարությանը. Լեզվի տեսչությանն ու հայաց լեզվի մեր բոլոր ամբիոններին ու մեր բոլոր համալսարաններին, դիմում են Աճառյանի անվան Հայոց լեզվի ինստիտուտին ու Արեղյանի անվան Գրականության ինստիտուտին.

Ինչո՞ւ եք լռում: Ինչո՞ւ չեք պատասխանում Մանուկ Արեղյանի «Մի քանի քերականական խնդիրների մասին» գործի սպանիչ քննադատությանը: Ու եթե դո՛ւք չեք պատասխանում, բա էլ ինչի՞ համար եք:

«Չորրորդ իշխանություն», ապրիլի 18-ի ու 21-ի համարները, 2006, Երևան:

\*\*\*

*Հաջորդ հոդվածը, որ առաջինի օրգանական շարունակությունն է (ինչպես ընթերցողն ինքն էլ կտեսնի) ՉԻ-ն չուպեց: Ավելի միշտ, տպեց սրա միայն առաջին վերնագիրը՝ «Ի՞նչ էի ասել կամ «հայրո՞ւմ» ազգ ենք»: Հետագայում տա թեթևակի փոխեցի ու տպեցի «Առավոտ» օրաթերթի 2009 թվի օգոստոսի 26-ի ու 27-ի համարներում, հետևյալ վերնագրով. «ԻՆՉՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՇՏ ԱՆԱՐԴԱՐ»:*

*Էս հոդվածն էլ, ինքսկե, մնաց անպատասխան, ու սրան չարձագանքեցին ոչ հնամուկները, ոչ էլ որևէ մեկը: Էս հոդվածի «Առավոտում» տպած տաքքերակի սկիզբն ու մի քանի կարևոր միտք դեռ եմ ներքևի շարադրանքի վերջը:*

\*\*\*

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՈՂԹԵՐԳԱԿԱՆ ՈՒ ԽԱՅՏԱՌԱԿ ԷԶԸ – 2**

Խաղաղամտության պահպանվելու երրորդ օրենքը

Ավտորիացի անտեսագետ ու իրավագետ, պրաքսեոլոգիայի հիմնադիր՝ Լյուպիզ ֆոն Միզհար (ով համարվում է մեր բաղաբալկրթության մեծագույն փիլիսոփաներից մեկը, ու ով մարդկության թեթև ամենախոշոր մտածողի՝ Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկի ուսուցիչն է) իր *Anticapitalistic Mentality* գրքում ասում է.

*«Մտածելու ունակություն ունեցող մարդու ու էլ ունակությունից զուրկ մարդու արանքը աճանցանելի անդունդ կա»:*

ԻՆՉ ԷՒ ԱՍԵԼ, ԿԱՍ «ՓԱՅԼՈՒՄ» ԱԶԳ ԵՆԸ

Տգևա ու հարատև կեղծարարը անընդհատ փառաբանում է ճշմարտությունը: Միթրաժանայի օրենքի 4-րդ հետևանքը

– Ամեն սև բան Օթեղո չի, տղաւ: Վահրամ Փափազյանը՝ Ֆրունզիկ Սյրտչյանին. երբ վերջինն ասել է, որ ինքն էլ է ուզում Օթելլո խաղա

Մամուլում էս հոդվածին ոչ մի պատասխան չեղավ, չնայած հոդվածի ասելիքը, ինչպես ընթերցողն ինքն էլ է տեսնում, արտակարգ սկանդալային էր, թե՛ հայագիտության, թե՛ մեր կրթական-գիտական համակարգի մի զգալի մասի համար: Սկանդալային էր հոդվածի հենց վերնագիրն ու մանավանդ դրանից հետո գրված հայտարարությունը.

«Մեծամուն լեզվաբան Մանուկ Աբեղյանը, 1936 թվին, ապացուցել է, որ հայերենի էսորվա քերականությունը սխալ է ու հակազիտական: Էս սխալ ու հակազիտական քերականությունը հայերը սովորում են ամենաքիչը՝ 70 տարի»:

Հողվածով դիմել էի մեր բոլոր լեզվաբաններին, գրականագետներին, հայագետներին, մեր ակադեմիային, Գիտության ու կրթության նախարարությանը, Լեզվի տեսչությանը, հայոց լեզվի բոլոր ամբիոններին ու մեր բոլոր համալսարաններին, Հրայր Աճառյանի անվան Հայոց լեզվի ինստիտուտին ու Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտին: Կրկնում եմ, սրանցից ոչ մեկը (հրապարակով ու հենց ինձ) ոչ մի պատասխան չտվեց ու չի տվել մինչև հիմա:

(Էս լռությունն ինձ չզարմացրեց, որովհետև փորձ ունեի:

(Մրանից առաջ, 2005 թվի աշնանը, «Նոր աշխարհ» ամսագրի 1(6) համարում 33 էջանոց մի սկանդալային հոդված էլ էի հրապարակել՝ «Արտեմիզնն ու հայ պոեզիայի ողբերգությունը» վերնագրով, ինչին էլ ոչ ոք չարձագանքեց:

(Տարօրինակ էր ու ցավալի, բայց մեր բազում թերթ ու ամսագրի ժուռնալիստներից ոչ մեկը չարձագանքեց էս երկու հոդվածին, թեև դրանք բոլորն էլ, տեղն էկած տեղը, կուրծք ծեծելով հայտարարում են, թե հույժ շահագրգիռ են հայ գիտությանը, արվեստով ու մշակույթով, ու անհավոր հաճույքով են տպում մեր հնամուկները «խեղագրությունները», միայն թե դրանք հայագովություն լինեն):

Ուրեմն, «Չի»-ի համարներում տպված հոդվածի հիմնական թեզերը սրանք էին:

1. Էսորվա հայերենն ունի երկու քերականություն՝ Մանուկ Աբեղյանի քերականությունը, ինչը շարադրված է Աբեղյանի «Հայոց լեզվի տեսչությունը» գործի մեջ, ու Արարատ Դարիբյանի ու Գուրգեն Սևակի ու սրանց հետևորդների հորինած հետաքերականական՝ դարիբյանական քերականությունները, ու սա փաստ է, իրականություն է:

Փաստ է նաև, որ Մ. Աբեղյանի քերականությունն ու դարիբյանական քերականություններն էնքան են հակասում իրար, որ իրար բացառում են:

2. Հողվածում գրել էի, թե հայերենի մեր էսորվա լեզվաբանությունը գիտություն չի, որովհետև լեզվին վերաբերող իր ասածների ճիշտ ու սխալը ջոկելու ոչ մի գիտական, օբյեկտիվ, մարդուց անկախ չափանիշ չունի:

Ու սրան ավելացրել էի, որ թե էդ չափանիշը կա, թող լեզվաբաններն ասեն:

Իմ էս հայտարարությունն ապացուցել էի, նշելով մեր երկու (աբեղյանական ու դարիբյանական) քերականության գոյությունը (նույնիսկ ամենաբաժանողի մաթեմատիկոսը չի ասի, թե սա ապացույց չի): Չէ՞ որ սրանք լրիվ են իրարամերժ, լրիվ են՝ ժխտում իրար:

Բայց մեր էսորվա լեզվաբանները չգիտեն, թե սրանից ո՞րն է ճիշտը, ո՞րն է սխալը, որովհետև ասում են, թե էս երկուսն էլ՝ ճիշտ են:

3. Ասել էի նաև, որ մեր էսորվա լեզվաբանները իրենց ասածների ճիշտ ու սխալը կան քվեարկելով են որոշում, կան հեղինակություններին վկա կանչելով: Ավելացրել էի, որ շատ հաճախ էլ՝ մերակապարանոց հայտարարություններով («մենք կարծում ենք, որ..., մեր կարծիքով էսինչը ճիշտ չէ..., ևն»):

Ու մի քանի օրինակ էի բերել, որ ցույց տամ մեր լեզվաբանության գիտություն չլինելը:

Առաջինը, որ մեր լեզվաբանները մինչև հիմա գործություն չունեն գիտական մեթոդով որոշելու, թե հայերենը քանի հոլով ունի՝ կինգ, վեց, թե յոթ:

Երկրորդը՝ բայի սահմանումն էր. Աբեղյանն ասում է, թե բայ է այն բառը, ինչը միաժամանակ ունի դեմքի, թվի ու ժամանակի գաղափարը, ուրեմն, նաև իր իմաստը վերագրում է (ստորոգում է) իր իսկ դեմքին, նշելով թիվն ու ժամանակը:

Մեր քերականներն ասում են, թե «բայը գործողություն ցույց տվող բառն է»: Հետո ասել էի, որ սա սխալ է, որովհետև էս սահմանումը շրջելի չի:

Եթե բայի էս դարիբյանական սահմանումը շրջենք ու ասենք, թե «գործողություն ցույց տվող բառը բայ է», կրակը կընկնենք, քանզի լիքը գործողություն ցույց աւոող բառ կա, սր բայ չի: Օրինակ, «հուզմունք, կոխի, վեճ, պատերազմ, տուրուղմիոց, Էրկրաշարժ, հրաբուխ, գործողություն, հոսանք, պտույտ, շարժում» ևն:

Մի քանի քան էլ ավելացնեմ, որովհետև գուցե ոմանք առարկեն, թե «սրանք գործողություն չեն ցույց տալիս, այլ երևույթ կամ էլ՝ ինչ-որ մի ուրիշ բան»: Բայց էս առարկությունն ու սրա պետերը գատ էսենցիալիստական են ու սնանկ:

Թող որևէ մեկը ցույց տա «վազը» ու «վազել» բառերի «իմաստային, փիլիսոփայական» տարբերությունը, եթե կարող է: Մենք սրանք գործա-

ծում ենք լրիվ համարժեք ձևով: Ահա օրինակները՝ գույգերով. «*Վազը լավ բան է, վազելը լավ բան է: Սա վազք չի, սա վազել չի: Վազքի ընթացքում, վազելու ընթացքում: Վազքից առաջ, վազելուց առաջ: Վազքով առաջ, վազելով առաջ*» ևն:

Դե թող մեկնումեկն ապացուցի, որ սրանցից առաջինների մեջ *վազքը* երևույթ կամ մի ուրիշ բան է, իսկ երկրորդների *վազելը*՝ գործողություն):

Բացի սա, ըստ էս սահմանման, «*են, ես, է, ենք, եք, են*» ու սրանց մյուս «ընկերները» շատ հաճախ բայ չեն, որովհետև շատ հաճախ ոչ թե գործողություն են ցույց տալիս, այլ վիճակ: Օրինակ, «*կատուս սատկած է*»:

(Դե թող մեր լեզվաբաններն ասեն, որ էս նախադասությունը ցույց է տալիս «*սատկած կատվի գործողությունը*» կամ «*սատկած կատվի լինելությունը*»):

Ասել էի նաև, որ մեր դարիբայանական լեզվաբանները մոտ 70 տարի է, ինչ անընդհատ «կարկատում» ուղղում են էս դարիբայանական քերականությունները, բայց սրանց կարկատանները միայն խորացնում ու շատացնում են էլ քերականությունների սխալներն ու հակասությունները ու մեր լեզվաբանությունը դարձնում են մի իսկական մղձավանջ:

Հողվածի չորրորդ կետում ասել էի, որ Աբեղյանը պնդում է, թե անորոշ դերբայը հայերենում միայն ու միայն գոյական է (ինչն ապացուցվում է փակագծերի մեջ վերը բերած օրինակներով. էլ օրինակներից երևում է, որ *վազել* բառը գոյական է, որովհետև լրիվ փոխարինում է *վազքին*:

Իբրք, *վազել* բառն էլ օրինակներում ունի չորս հոլովածն՝ *վազելը, վազելու, վազելուց, վազելով*, բառ-ենթակա է, բառ-ստորոգյալ է, ևն), ու «հայերենում բայական ոչ մի ֆունկցիա չունի» (Մ. Աբեղյան, Երկեր, Ը հատոր, էջ 538, տես նաև էջ 537-541, 1985 ՀՄՍՀ ԳԱ Հրատ.):

Այնինչ՝ դարիբայանական քերականությունները բոլորն էլ միաբերան պնդում են, թե հայերենի անորոշ դերբայը «անդեմ բայ է»:

Ըստ եուրյան, իմ էս հողվածն էնքան էլ ինքնուրույն չէր, է՛ն իմաստով, որ էս ընդամենն ասում էի. «Աբեղյանի ասածներին ի՞նչ եք ասում: Դուք Աբեղյանին գովում ու երկինք եք հասցնում, բա Աբեղյանի քերականությունն ինչո՞ւ եք դեն շարտել: Պատասխան տվեք»:

Ուրեմն, իմ էս հողվածում է՛ս չէի կարևորը, այլ Աբեղյանը: Ի՛ն ասածները չէին կարևորը, այլ Աբեղյանի՛նը:

Աբեղյանն ուրիշ շատ ու շատ բան էլ է ասել (ասել է գիտության մեթոդներով):

Օրինակ.

Աբեղյանն ասում է, թե հայերեն նախադասության գլխավոր անդամը բայն է, իսկ մնացած բոլոր բառերը (չհաշված կապերն ու ձայնարկությունները) միայն ու միայն բային (կամ իրար) են լրացնում:

Դարիբայանականներն ասում են, թե նախադասության գլխավոր անդամները ենթական ու ստորոգյալն են:

Աբեղյանն ասում է, թե հայերենում անդեմ նախադասություն չկա, դարիբայանականներն ասում են, թե կա:

Աբեղյանն ասում է, թե բայն ու ստորոգյալը մույն բանը չեն, դարիբայանականներն ասում են, թե մույնն են:

Աբեղյանն ասում է՝ եթե բայ չկա, ուրեմն նախադասություն էլ չկա, սրանք ասում են, որ կա ու հլը եզրակացնում են, թե իբր հնարավոր է, որ հայերենի բոլոր բառերն ու բառակապակցություններն էլ լինեն նախադասություն:

(Տես, օրինակ, Հրանտ Պետրոսյան, «*Հայերենագիտական բառարան*», Երևան, «Հայաստան», 1987, կամ ՀԱՍՀ ԳԱ, Պետրոսյան Հ.Ձ., Գալստյան Ս.Ա., Ղարաբյոզյան Թ. Ա., «*Լեզվաբանական բառարան*», Երևան, «ՀԱՍՀ ԳԱ», 1975. սրանցից տես՝ *բայ, նախադասություն, ստորոգում, անորոշ դերբայ* և այլ հողվածները: Տես նաև *Հայկական հանրագիտալսանը*):

Աբեղյանն իր էս ասածները, ու հլը հազար ու մի ուրիշ բան էլ հետը, հիմնավորում է գիտական մեթոդով ու տրամաբանությամբ:

Դարիբայանականները (իրար ցիտելով) միայն մերկապարանոց հայտարարություններ են անում ու անհեթեթ բաներ են ասում. ևն, ևն, ևն:

Ասածներս սուուգելի են, ու ովքեր ինձ չեն հավատում, բող կաշղան արդեն մեջ բերածս գրքերը:

**ԵՄ ԵՄԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԻԱՄԻՏ,  
ՔՇ ԴԵՏՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ ՌԵԿՏՐԸ**

Պատահածը ոչ միայն մեր ենթադրածից ավելի տարօրինակ է,  
այլև շատ ավելի տարօրինակ է մեր չենթադրածից:

*Սպասելիության Պիտերի սկզբունքը*

Ուրեմն ես գիտեի, որ հողվածիս չեն պատասխանի, ու սրա համար էլ  
դիմեցի Երևանի պետական համալսարանի ռեկտորին, որ պրոն ռեկտորը  
հողվածս համալսարանի գիտական խորհրդում քննարկի:

Ես չէի դիմել ուղղակի բանասիրական ֆակուլտետին, որովհետև փորձ  
ուճեի, ու փորձս ասում էր, որ ինձ չեն լսի, կարհամարհեն: Պետական հա-  
մալսարանի մեծարգո պրոն ռեկտորն էլ հողվածիս պատճենը ուղարկել էր  
բանասիրական ֆակուլտետ, որ ֆակուլտետը քննարկի ու պատասխան  
տա իրեն:

Ես միամիտ էի, որովհետև կարծում էի, թե հողվածս կդրվի գիտխորհր-  
դի քննությանը, քանզի հողվածիս շոշափած հարցերն արտառոց էին, ու  
հողվածիցս հետևում էր, որ համալսարանի բանասերները մոտ 70 տարի  
գիտության տեղը տգիտություն են սովորեցնում:

Ինձ թվում էր, թե համալսարանի գիտխորհուրդն ամեն ինչ կթողնի ու  
իսկույն կհավաքվի, որ էս չտեսնված շլված խայտառակությունը քննար-  
կի:

Բայց համալսարանի պարոն ռեկտորն է՛լ էր միամիտ, որովհետև հող-  
վածս գիտխորհրդում քննարկելու փոխարեն՝ ուղարկել էր բանասերնե-  
րին: Ախր եթե գայերից բողոքելու դիմումն ուղարկես գայերին, պարզ չի՞,  
որ գայերը կստեն, որ էդ բողոքը «չարամիտ գրպարտություն է, տգիտու-  
թյուն ու զառանցանք է»:

Բանասիրական ֆակուլտետից չորս պատասխան ստացվեց:

Լեզվաբանության չորս դոկտոր-պրոֆեսոր, իրենց օլիմպիական բար-  
ձունքներից, մի քանի հազրզոցով պատասխանել էին Երևանի պետական  
համալսարանի ռեկտորին, հեռոն էլ կշաամբելով ու խրատելով իրենց դե-  
կավարին:

Ահա էդ չորս պատասխանի պատճենները (ձեռագրով գրածները,  
առանց որևէ փեփոխության. «վերծանել են», որ ընթերցողը չդժվարանա):

\*\*\*

**Առաջին պատասխանը.**

Ի պատասխան Ձեր՝ 06.05.06 թվականի զրոյան, որ վերաբերում է  
«Չորրորդ նշխարներում» բերված տպագրված Ա. Ավագյանի «...իմաստ չունի,  
սեղեկացնում են, որ ֆակուլտետը այդ իրավունքը պետական համալսարանի է  
համարում և ամարժիք, նաև, ոչ մի իմաստ չունի, 46 հոդվածում համարված ինչ-  
որ գառանցանքի համալսարանը ստանձնի կարծիքը» (Կեց ներկայացված է  
լեզուների երեք ամբիոնների վարչերի գրավոր խորհրդից այդ իրավունքի  
վերաբերյալ):

ՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՎԵՐԻՍ  
Պ. ԼԵՂՈՅԱՆ

(Ուշադրություն դարձրեք դոկտոր-պրոֆեսոր Ա. Ավագյանի «...իմաստ չունի, որ  
մտնուում տպագրված ինչ-որ գառանցանքի համալսարանը ստանձնի կարծիք  
տալու» ոճական «գոհարի» վրա: (Երևի պրոն ուզեցել է ասի՝ «... Իմաստ չունի, ... որ  
համալսարանն էլ գառանցանքին պատասխանի»): Իմիջիայոց, ստանձնում են  
«կարծիք տալ»-ը, ոչ թե՛ «կարծիք տալու»-նը:  
Պակաս «ընտիր» չի նաև էս պարոնի «երեք ամբիոնների» կապակցությունը,  
որովհետև պարոնը ախտի գրեթե «երեք ամբիոնի», քանզի հայերենում, (ինչպես որ  
Ջահուկյանի ու Խլղաբյանի մենագրության մեջ է գրված), երբ գոյականը լրանում է  
թվականով, «գոյականը գերազանցապես դրվում է եզակիով». [տես՝ 40-ը, 44-ը, 46-ը,  
66-ն ու էս գրքի Հավելվածը]:

\*\*\*

*Հարգանքներ  
Գրքագրության և մամուլի նախարարին  
Հայաստանի Հանրապետության*

*Վարչության և Գրքերի:*

*Նման գառանցանքները պետք է աղբարկղ շարժել:*

*Լ. Եզեկյան*

«Չարմամալի է, որ նման տգիտությունը տպագրվում է մամուլում (բայց՝ նայած ինչ՞ և ո՞ր մամուլում) և որոշ դեպքերում նույնիսկ ընթացք է առնում:

Նման գառանցանքները պետք է աղբարկղ շարժել»:

Լ. Եզեկյան

(Պրն Եզեկյանն իր առաջին նախադասության մեջ կշտամբում է ռեկտորին, թե «Չարմամալի է, որ նման տգիտությունը (այսինքն, տգիտությանը – Մ.Հ.) ... որոշ դեպքերում ընթացք է առնում»: Սա ակնարկ է, որ մեծարգո ռեկտորն ինքն էլ է տգետ, քանզի գիտությունը տգիտությունից չի ջոկում: (Հազար ներողություն, բայց էս ակնարկի հեղինակը ե՛ս չեմ, պրն Եզեկյանն է):

Հաջորդ նախադասությամբ էլ պրն Եզեկյանը խրատում է իր ղեկավարին՝ ռեկտորին, ասելով, թե «Նման գառանցանքները պետք է աղբարկղ շարժել», այսինքն՝ ինչո՞ւ եք այսանք մեզ ուղարկել ես «ինչ»՝ եք մեզ նեղություն տալիս. մյուս անգամ էսպես բան չանե՞ք»):

\*\*\*

*Ներկայացված հարցերը պարզապես շարժելի արժեքներ չեն և հայ լեզվաբանությանը հասցնելի: Չեղիմարտն ոչ թե պարզապես չի լինում, այլ լեզվի պարզական չարացումն է ոչ էլ լեզվաբանական ուսմանը մասնակցող մասին: Այդպիսի կարծիքներ (կեղծ մտքեր) չարացումն են և ինչպես շարժելի պետք է և ինչպես պարզական արժեքներ, անկյուն շարժելի թեմաների փոխարինումը փոխարինումը ինչպես կամ՝ հեղինակ է ինչ ինչով է: Երբ չարացումն արժեքներն է: Պետ է ոչ ինչով, ոչ էլ ինչով կարող են լինել չարացումն և ինչպես շարժելի:*

*Լեզվաբանության լեզվաբանության  
անթիվի էջեր*

«Ներկայացված հոդվածը պարզապես չարամիտ գրաբարոսություն է հայ լեզվաբանության հասցնելի: Հեղինակը ոչ մի պատկերացում չունի ոչ լեզվի պատմական զարգացման և ոչ էլ լեզվաբանական ուսմանը ներքին մասին: Սույն կիսագրագետ (կեղծ ժողովրդական) շարադրանքի գրեթե ամեն դատողություն սխալ է և քննադատության արժանի: Անցյալ դարի 30-ական թվականների քաղաքական մթնոլորտը քննադատելով՝ հեղինակը ինքը վարվում է նույն գրաբարոսական սկզբունքներով: Պետք է աշխատել, որ նման կարգի «ստեղծագործություններ» հանրապետական մամուլում չհայտնվեն»:

Ընդհանուր լեզվաբանության  
ամբիոնի վարիչ՝

Լ. Հովսեփյան

(Լավ, «քննադատության արժանի է», քննադատելի: «Միայն է», ցույց տվեք, որ սխալ է: Բա ինչո՞ւ ցույց չեք տալիս: Բա ինչո՞ւ չեք քննադատում, մասնավոր, եթե «արժանի է»: Բա էլ ե՞րբ եք սրանից լավ «քննադատության արժանի» բան գտնելու: Ես հետո):

\*\*\*



Չորրորդ պատասխանը.

Պարզապես անհետբան է նման բա-  
խման արդյունքները հոգևորապես կրթությանը:  
Նախքան համարակից կրթությանը կրթ-  
ապահովմանը հասնելու համար հարկ  
էր հարկադրել: Տե՛ղ ինչի՞նչ արդիվ կրթու-  
թյունը կարող է անել՝ առանց հասկանալու  
ժխտելու արդյունքը:

«Պարզապես անգիտություն է մնան բովանդակությանը հողվածներ  
հրատարակել մամուլում: Նմանատիպ հրատարակումներն ապակողմնո-  
րոշում են նույնիսկ խելամիտ ընթերցողներին: Չի կարելի այդպիսի կա-  
րուկ հայտարարություններ անել՝ առանց հասկանալու ճիշտն ու սխալը»:  
Ռ. Ղազարյան

\*\*\*

ԱՄԱՏՆԵՐԻՍ ՓԱՅԼՈՒՆ ԱՊԱՅՈՒՅՏՆԵՐԸ

Մարդ արարածը խոհեմ չի, որովհետև խորամանկ է:  
Միքրածանայի 1-ին օրերի 1-ին հետևանքը

ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի էս չորս դոկտոր-պրոֆեսորի  
«պատասխանները» փայլուն ապացույց են, որ «Չի»-ի ապրիլյան հա-  
մարներում տպածս հողվածի իմ գլխավոր ասելիքն անկասկած ճիշտ է:  
Ես ասել էի, որ էսօրվա մեր լեզվաբաններն իրենց սուսածների ճիշտ ու  
սխալը գիտական չափանշերով, գիտական մեթոդով ու գիտակերպ փու-  
տարկներով չեն որոշում, այլ միայն ու միայն մերկապարանոց հայտարա-  
րություններով ու քվեարկելով:

Հիմա, թող ընթերցողն ինքը ասի. մեր էս դոկտոր-պրոֆեսորների «պա-  
տասխաններում» գիտական փաստարկի որևէ հետք կամ նշան կա՞:  
Մրանց մեջ կա՞ ճիշտ ու սխալը որոշելու չափանշի որևէ հետք կամ նշան:  
Եթե սրանք մերկապարանոց հայտարարություն չեն, էլ ժամանակ մեր-  
կապարանոց հայտարարությունն ի՞նչ է: Բա սրանք ԵՊՀ-ի դոկտոր-պրո-  
ֆեսորին արժանի՞ «պատասխան» են:

Մրանցից երեքը ո՛չ վերնագիր ունի, ո՛չ ամսաթիվ, իսկ երկուսն էլ՝ հաս-  
ցե չունի: Ու էս երեքի մեջ էլ չի հիշատակված, թե խոսքն ի՞նչ հողվածի մա-  
սին է:

Վստահ եմ, որ էս դոկտոր-պրոֆեսորների սեղաններին, ամեն մեկի դե-  
մը, մի ժամանակակից գերհզոր կոմպյուտեր կա ու մի հատ էլ թանկանոց  
լազեր-պրինտեր, որոնք հաստատ՝ համալսարանի փողով են առել:

Բա պաշտոնական սուրբողիմացիան ու տարրական քաղաքավարու-  
թյունը չե՞ն պահանջում, որ ռեկտորին ուղղված գրությունը վայելուչ տեսք  
ունենա: Սա՛ մեկ:

Դոկտոր-պրոֆեսոր Լևոն Եզեկյանը գրել է ընդամենը երկու նախադա-  
սություն, վատ ձեռագրով ու փնթի (երևում է, որ պարոնը երկար գրելուն  
սովոր չի: Էս հողվածը շարելիս՝ ինձ օգնում էր ֆիզֆակի առաջին կուրսի  
մի ուսանող, ու էլ ուսանողն ինձ ասաց. «Բայց ինչ ամոթ ա, որ լեզվաբա-  
նության պրոֆեսորների ձեռագրերն էսքան վատն են»:

(Ասեմ, որ մինչև հիմա չեմ հանդիպել գոնե մի լուրջ տեսաբան ֆիզիկո-  
սի կամ մաթեմատիկոսի, ով գեղեցիկ ու հստակ ձեռագիր չունենա: Մաս-  
նագիտական կարիքներն են ստիպում):

Պրն Եզեկյանն իր առաջին նախադասության փակագծերի մեջ արհա-  
մարհանքով է խոսում «Չորրորդ իշխանություն» թերթի մասին, ընդ որում՝  
ինիցիալյոց, հպանցիկ, ձեռաց: Մա թերևս պրն Եզեկյանի ու «Չորրորդ  
իշխանության» մասնավոր գործն է, ու եթե իրենք ինչ-ինչ հարցեր ունեն,  
թող իրենք էլ լուծեն:

Բայց էս փակագծի նախադասության մեջ երկու ավելորդ հարցական  
նշան կա, որոնցից մեկը ձայնավորի վրա չի: Ընդունված է, որ էս տեսակ տե-  
ղերում հարցական նշան՝ առհասարակ չորվի (ճիշտ տեղն էլ, սխալն էլ):

Պարոն Եզեկյանն էլ բազմիցս եղի է հայոց լեզվի ընթացիկության քն-  
նական հանձնաժողովի նախագահ ու անդամ, ու էս կարգի սխալների հա-  
մար մեր խեղճ ու կրակ երեխաների բալսրն իջեցրել է: Հիմա, լեզվաբա-  
նության դոկտոր-պրոֆեսոր պրն Եզեկյանի էս երկու նախադասությունա-  
նոց «գրավորի» գնահատանանից քանի՞ բալլ հանենք:

Քանի՞ բալլ հանենք լեզվաբանության դոկտոր, պրոֆեսոր Լիա Հով-  
սեփյանի «գրավորի» գնահատականից, որովհետև նրա «գրավորի» երկ-

որոր նախադասության կրկնվող ժխտականը շեշտ ու ստորակետ է պահանջում, բայց մեծարգո տիկինը դրանք չի դրել:

(Հայտնի է, որ ոչ մի լեզվում էլ կետադրությունը երբեք էլ կանոնակարգված չի, այսինքն, կետադրության անսխալ կանոններ՝ ոչ մի լեզվում էլ չկան. տես, օրինակ, Հր. Աճառյան, «Լիակատար քերականություն հայոց լեզվի», հատ 5, էջ՝ 357-358, 360, 366, 375-376:

(Բայց սա չգիտեն մեր դարիբյանական լեզվաբանները, ովքեր ահաբեկում են մեր մանուկներին ու պատանիներին թե՛ դպրոցում, թե՛ համալսարաններում, ու մի ստորակետի, բութի կամ հարցականի համար քար են շարտում նրանց բախտին: Բայց ո՞վ իմանա, գուցե և գիտեն:

(Ես ինքս ստորակետի տեղը բութ կամ միջակետ դնելուն էնքան էլ նշանակություն չեմ տալիս ու հարցական նշան կամ շեշտ դնել չդնելն էլ էական չեմ համարում, թե որ գրածի տրամաբանությունը չի խախտվում (Հ. Թումանյանի պես): Բայց ինչ որ է, եթե մեր լեզվաբաններն արդեն կետադրական ինչ-ինչ կանոններ են հորինել, թող բարի լինեն ու գոնե իրենք պահպանեն դրանք):

Քանի՞ բալ հանենք դոկտոր-պրոֆեսոր Ա. Ավագյանի «...իմաստ չունի, որ մասնույում տպագրված ինչ-որ զառանցանքի համալսարանը ստանձնի կարծիք տալու» ոճական «գոհարի» համար: (Երևի պրնն ուզեցել է ասի՝ «... Իմաստ չունի, ... որ համալսարանն էլ զառանցանքին պատասխանի»): Ստանձնում են «կարծիք տալ»-ը, ոչ թե՛ «կարծիք տալու»-ը:

Քանի՞ բալ հանենք նույն էս պարոնի «երեք ամբիոնները» կապակցության համար, սա պիտի գրեն «երեք ամբիոնի», քանզի հայերենում երբ գոյականը լրանում է քվականով, «գոյականը գերազանցապես դրվում է եզակիով». տես՝ 40-ը, 44-ը, 46-ը, 66-ն ու էս գրքի Հավելվածը:

Էս դոկտոր-պրոֆեսորներից մեկը գրում է, թե բանասիրական ֆակուլտետն իմ «հեղվածը միանգամայն դատապարտելի է համարում և անարժեք, նաև ոչ մի իմաստ չունի, որ...ինչ-որ զառանցանքի համալսարանը ստանձնի կարծիք տալու»:

Էստեղ հարց ունեն: Էս նախադասության «անարժեք»-ը հասկացանք, բայց չեմ հասկանում, թե հողված գրելն ինչո՞ւ է դատապարտելի: Իսկ եթե իրոք դատապարտելի է, գործը տայիք դատարան: Կամ մի հողված գրեիք հենց նույն քերթում, ու էլ հեղվածով ինձ ու գրածս դատապարտեիք: Կամ էլ՝ մի բաց քննարկություն անեիք ու է՛լի ինձ դատապարտե՛իք, չէ՞ որ իմ ուզածն էլ հենց էլ էր (սկսած 1992 թվից): Սա էլ՝ էսպես:

Իմ հողվածում շարադրել էի Արեղյանի՝ ասածներն ու Արեղյանի՝ գլխին խաղացած խայտառակ «օյինների» պատմությունը: Արդեն ասել եմ, որ

դրանք քաղել եմ Արեղյանի՝ նշածս գրքերից: Թող ընթերցողն ինքը կարդա էլ գրքերն ու տեսնի, իմ գրածները «չարամիտ գրապարտություն» են, թե՞ չէ:

Բա ինչո՞ւ է էս դոկտոր-պրոֆեսորներից երկուսն ասում, թե էս գրապարտիչ եմ: Թող էլ պրոֆեսորները նշեին իմ ասածներից գոնե մի բան ու փաստերով ասպացուցեին, որ էս գրապարտիչ եմ: Չեն նշել, որովհետև իմ ասածների մեջ գրապարտություն չկա:

Ուրեմն, ո՞վ է «անցյալ դարի 30-ական թվականների նույն գրապարտչական սկզբունքներով վարվում»: Թող ընթերցողն ինքը որոշի:

Էս դոկտոր-պրոֆեսորներից մեկը գրում է, թե. «Մույն (այսինքն, իմ հողվածի – Մ. Հ.) կիսագրագետ (կեղծ ժողովրդական) շարադրանքի գրեթե ամեն դատողություն («ը» որոշիչ հողը էս չեմ բաց թողել, այլ մեծարգո հեղինակը, տես պատճենը – Մ. Հ.) սխալ է և քննադատության արժանի»:

Լավ, «քննադատության արժանի է», քննադատե՛ք: «Միսալ է», ցույց տվեք, որ սխալ է: Բա ինչո՞ւ ցույց չեք տալիս: Բա ինչո՞ւ չեք քննադատում, մանավանդ, եթե «արժանի է»: Բա էլ ե՞րբ եք սրանից լավ «քննադատության արժանի» բան գտնելու: Ու հետո էս դոկտոր-պրոֆեսորն ասում է, թե իմ շարադրանքը «կիսագրագետ» է ու «կեղծ ժողովրդական»:

Բայց թող ընթերցողը նորից նայի էս չորս դոկտոր-պրոֆեսորի «պերճախոսական գոհարներին»: Կորնեյ Չուկովսկին հենց էս տեսակ խզբզոցներին էր ասում «կանցելյարիտ», այսինքն, գրասենյակային ոճ:

(Հասկանում եմ, պրոֆեսորը վախեցել է իմ գրելաձևի պարզությունից, որովհետև իմ հողվածը հասկանալի է շատ շատերին: Ինքն ու իր երեք գործընկերը զուրկ են պարզ ու տրամաբանական գրելու շնորհից, ինչը երևում է իրենց խզբզած էս մի քանի տողից. Սա էս դոկտոր-պրոֆեսորների իրոք որ կեղծ գնահատականների պատճառներից մեկն է):

Էս դոկտոր-պրոֆեսորներից մեկը գրում է, թե. «Պետք է աշխատել, որ նման կարգի «ստեղծագործություններ» հանրապետական մասնույում չհայտնվեն»:

Է՛, աշխատեիք, մեծարգո պրոֆեսոր, աշխատեիք ու հենց նույն «մասնույում» հողված գրեիք, ու ինձ ու գրածներս էլ գիտական մեթոդով քննեիք ու ցույց տայիք, որ իրոք «գրապարտիչ եմ ու զառանցում եմ», որ էլ «նման կարգի «ստեղծագործություններ» հանրապետական մասնույում չհայտնվեն»:

Ինչո՞ւ հենց Պ-ն՛ք չեք աշխատում ու «աշխատելու» էս բեռը դնում եք Չ-եր դեկավարի՝ պրն ռեկտորի՝ ուսերին:

Էս չորս դոկտոր-պրոֆեսորից երկուսն ասում է, թե իմ գրածները «*գառանգանք են*»: Բայց ես իմ գրածների մեծ մասը քաղել եմ Մ. Աբեղյանի՝ գրքերից ու Մ. Աբեղյանի՝ *Հայոց լեզվի տեսություն* գրքի ԵՊՀ-ի հայոց լեզվի ամբիոնի գրած առաջաբանից:

Ուրեմն, Մանուկ Աբեղյանն ու ԵՊՀ-ի հայոց լեզվի ամբիոնն են գառանցողները (ըստ էս պրոֆեսորների):

Սրանք բոլորն էլ ասում են, թե իմ գրածները «տգիտություն» են:

Ուրեմն, նույն դատողությամբ, ըստ էս պրոֆեսորների, Աբեղյանն ու ԵՊՀ-ի հայոց լեզվի ամբիոնն են տգետները:

Բայց թող ընթերցողն ինքը որոշի, թե ո՛վ է գառանցում, ո՛վ է տգետը, ու ո՛վ է չարամիտ գրաբարտողը:

Իմ հոդվածում գրել էի, թե մեր լեզվաբանները ճշմարտությունը թաքցնում են ժողովրդից. ժողովրդից թաքցնում են Աբեղյանի քերականությունը դեմ շարտելու ողբերգական ու խայտառակ պատմությունը, որ դարիբյանական քերականության աղաղակող հակասությունները չերևան, որ ժողովուրդը չիմանա, որ մեր էսօրվա համարյա բոլոր լեզվաբանների գիտական կոչվող գործերը հակագիտական են, անհեթեթ ու վնասակար:

Դոկտոր-պրոֆեսորներից մեկի «պատասխանն» իմ էս մեղադրանքի փայլուն ապացույցն է: Իրոք էս պրոֆեսորը գրում է (տես պատճենը). «ճմանատիպ հրապարակումները (այսինքն, իմ հոդվածը -- Մ.Հ.) ապակողմնորոշում են նույնիսկ խելամիտ ընթերցողներին»:

Ուրեմն էս պրոֆեսորը սարսափում է ճշմարտությունից ու վախենում է, որ էդ ճշմարտությունը հայտնի կդառնա «խելամիտ ընթերցողներին»:

Ու առհասարակ, էս չորս դոկտոր-պրոֆեսորը գրածից էլ երևում է, որ էս չորսն էլ սարսափում են ճշմարտությունից ու չեն ուզում, որ էս հարցը հանկարծ դառնա հրապարակային քննարկության առարկա, որ հանկարծ էն «անտերը» ջրի երեսը դուրս չելնի: Էս սարսափն էլ հենց դրանց արտառոց բարկության ու դրանց «պատասխանների» հսյհոյական բնույթի պատճառն է:

Ես գրել էի, թե մեր լեզվաբանները ճիշտ ու սխալը ջոկելու ոչ մի գիտական չափանիշ չունեն: Պրոֆեսորներից մեկը, Ռ. Ղազարյանը, իսկական դեմագոգի պես, ինձ է մեղադրում, թե. «Չի կարելի այդպիսի կտրուկ հայտարարություններ անել՝ առանց հասկանալու ճիշտն ու սխալը»:

Բայց ախր ես ասել էի, որ ն՛քն մեր լեզվաբանները գիտեն ճիշտ ու սխալը որոշելու չափանիշը, թող ասեն: Իսկ ինչո՞ւ դոկտոր-պրոֆեսոր Ղազարյանը չի ասում: Թող ասի: Չի ասում, որովհետև չգիտի: Չի ասում, որովհետև էսօրվա մեր լեզվաբանությունը ճիշտ ու սխալը ջոկելու չափանիշ՝ իրոք չունի:

Նույն էս պրոֆեսորն ասում է. «Պարզապես անգիտություն է նման քովանդակությամբ հոդվածներ հրատարակել մամուլում»:

Հետաքրքիր է, էս պրոֆեսորի ասածն ի՞նչ է նշանակում: Սրա ասած էս «անգիտությունն» ո՞վ է արել, ե՞ս, թե Չի՞ թերթը: Եթե ե՛ս, էդ ժամանակ իմ արածի «անգիտությունն» ի՞նչ է, էս ի՞նչը չեմ իմացել: Եթե էս «անգիտությունը» Չի՞ թերթն է արել, էդ ժամանակ էդ թերթն ի՞նչը չի իմացել: Սա էլ՝ դոկտոր-պրոֆեսոր Ռ. Ղազարյանի գիտության ու տրամաբանության ու գրելու ոճի մակարդակը:

(Իմիջիայրոց, եթե ԵՊՀ-ի էս չորս դոկտոր-պրոֆեսորից գոնե մեկը մեր էսօրվա լեզվաբանության ասածների ճիշտ ու սխալը որոշելու գիտական չափանիշն ասեր, էս էս պատասխան հոդվածու չէի գրի, ձեռն սուսուփուս կկտրեի ու տեղս կնստեի, եթե էդ չափանիշն իրոք ճշմարիտ ու գիտական լիներ):

Էսօրվա մեր լեզվաբանության միակ «չափանիշը» դեմագոգիան է՝ անհեթեթ ու մերկապարանոց դեմագոգիան:

Դոկտոր-պրոֆեսորներից մեկն ասում է, թե իմ հոդվածում վարվում եմ «անցյալ դարի 30-ական թվականների նույն գրաբարտչական սկզբունքներով»: Արդեն ասացի, թող ընթերցողը կարդա Մ. Աբեղյանի նշած գործերն ու իմ հոդվածը ու որոշի, ի՞նչ մեթոդներն են 30-ական թվերի գրաբարտչական մեթոդները, թե՞ մեր էս չորս դոկտոր-պրոֆեսորինը:

Նապալեմն Բոնապարտի արտաքին գործերի մինիստր՝ Թալեյրանը մի առիթով ասել է, թե՝ «տվեք ինձ մի գրավոր նախադասություն, ու էս գրողին էդ նախադասության համար գիլյոտինի ուղարկեն»: Պրն Եզեկյանը (ու նաև մնացած երեք դոկտոր-պրոֆեսորը, ու մեկ էլ՝ ԵՊՀ-ի Հայոց լեզվի ամբիոնը) մեկից ավել նախադասություն գրելու սնգզուշություն են ունեցել: Բա որ մի թելադրություն կամ, աստված չանի, շարադրություն՞ն գրեին: Էստեղ են ասել՝ դասականներին պիտի կարդաս:

Մի բան էլ. եթե «30-ական թվականների գրաբարտչական մեթոդներն» այլևս չկան, ինչո՞ւ էս պրոֆեսորները մի բաց քննարկություն չկազմակերպեցին, ինչո՞ւ ինձ էլ չիրավիրեցին էդ քննարկությանը, ու ինչո՞ւ ինձ չբացատրեցին «ճիշտն ու սխալը»:

(Ռեկտորից էս սրա՛ պես մի բան էի սպասում, ու սպասում էի, որ ինքն էլ ներկա լիներ, որովհետև ինքն էլ է հայագետ: Սպասում էի, որ էդ քննարկությանը հրավիրեին բնագետներին, մաթեմատիկոսներին, փիլիսոփաներին ու մնացած հայագետներին, որովհետև խոսքը գիտականության ու արամաբանության մասին է, իսկ էս էլ հայաաբարել էի, թե մեր լեզվաբանները, համարյա բոլորն էլ, մեղանշում են էս ասպարեզներում:

(Ի վերջո, ես հո գիտությունից ու գիտական մեթոդից անտեղյակ մարդ չե՞մ, այսր ես էլ եմ իրենց գործընկերն ու մոտ 40 տարի է ինչ նույն համալսարանում գիտությամբ ու մանկավարժությամբ եմ զբաղվում, էլ չասած, որ տասնյակից ավել ծավալուն գրքի թարգմանն ու հեղինակն եմ (թող ընթերցողը ների, որ ստիպված՝ գլուխ եմ գոլում), ու դրանց մեջ էլ՝ Արխատտեղի *Աթենական հասարակարգն* ու Կառլ Ռեյմունդ Պոպերի *Բաց հասարակությունն ու դրա թշնամիները*, իսկ 2010-ին էլ շահել եմ մեր Ակադեմիայի հայագիտության երկրորդ մրցանակը):

Ես հլը ջհանդամը:

Ինչո՞ւ Արեղյանի՞ն չեն բացատրում «ճիշտն ու սխալը», ինչո՞ւ չեն պատասխանում Արեղյանի *Մի քանի քերականական խնդիրների մասին* 144 էջանոց մեղադրանքներին, ինչո՞ւ են դա թաքցնում ժողովրդից ու ուսանողներից, ինչո՞ւ դա չեն անցնում իրենց դպրոցներում ու համալսարաններում: Հո չէ՞ր ասել, որ ի՞նձ պատասխանեն: Ասել էի՝ Արեղյանի՞ն պատասխանեք:

Մի բան էլ կա: Եթե մեր էսօրվա լեզվաբաններն ընդունեն, որ Արեղյանը ճիշտ է, սրանից կհետևի, որ իրենց համարյա բոլորի «գիտական» ողջ գործառնությունը սխալ է, իսկ իրենց գիտական ու մանկավարժական բոլոր տիպառներն էլ փուչ են: Այսինքն, կհետևի, որ սրանք իրենց գիտակցական կյանքի մեծ մասն իզուր են ապրել:

Հասկանում եմ, որ սա ծանր բան է, որ սա էլ է ողբերգություն: Բայց հենց էս հանգամանքներն էլ չեն թողնում, որ մեր լեզվաբանները հրաժարվեն իրենց սուտ ու սխալ ու հաճախ էլ՝ զառանցական տեսություններից:

Մեր լեզվաբաններին հրավիրել էի բանավեճի: Պատասխանի էլ չարժանացա: Ելի՞ եմ հրավիրում: (Մի անգամ էլ 1992 թվին եմ էս տեսակ բաներ ասել. տես «Երկիր» թերթը, 1992, ապրիլի 10, 11 ու 14-րդ համարները): Հրավիրում եմ գրատախտակի մոտ, բայց բաց քննարկության, որ բանավեճը չդառնա «բազառի կոիվ»:

Գիտեմ, էլի՞ չեն գա: Ո՞նց գան, երբ իրենք էլ գիտեն, որ Արեղյանը ճիշտ է, ու իրենք էլ սխալ են: Հո խելքները չեն թոցրել, որ գան: Ախր ես ընդամենը Արեղյանի՞ ասածներն եմ կրկնում: Սրա համար էլ մեր էսօրվա լեզվաբանները մենակ մի ճար ունեն ու օգտվում են էդ ճարից. հայտարարում են, թե իբր ես «չարամիտ գրապարտող եմ, տգետ եմ ու զառանցում եմ»: Բա ուրիշ էլ ի՞նչ ասեն կամ անեն:

Որովհետև գիտեն, որ համարյա ոչ մեկը չի նստի ու Արեղյանի գործերը չի ուսումնասիրի ու չի եամեմասի իրենց «տեսությունների» հետ, ու չի պարզի սրանց սուտն ու զառանցականությունը: Բայց թող ընթերցողն ինքը որոշի՝ ճիշտն ու սխալը:

Մեր էս պրոֆեսորներն իրենց «պատասխաններում» իրենց ուղղած իմ մեղադրանքները շուտ են տվել ու հարձակվել են ինձ վրա, որովհետև Արեղյանի վրա հարձակվելու ռիսկը չունեն. որովհետև եթե ասեն, թե Մանուկ Արեղյանը «չարամիտ գրապարտող է, տգետ է ու զառանցում է», իրենց ոչ մեկը չի հավատա: Եթե սա՛ չի «30-ական թվականների գրապարտչական սկզբունքը», բա էլ ո՞րն է:

Ինձ բանավոր կշտամբանքներ են հասնում, թե «ի՞նչ գործ ունի՝ եկել խառնվում է մեր գործերին, թող գնա ու իր ֆիզիկայով զբաղվի»: Նախ ասեմ, որ ֆիզիկայով ես զբաղվում եմ, ինչքան որ պետք է, ու սա լրիվ ի՞նչ գործն է:

Երկրորդ. դուք որ ձեր գործը կարգին անելիք ու լեզվաբանությունը մղձավանջ չդարձնելիք, ես էլ ձեր գործերին չէի խառնվի: Երրորդ, բոլորիդ հրավիրում եմ ֆիզիկայի ֆակուլտետի գիտական սեմինարներին, եկեք, ու եթե կարող եք, ֆիզիկայից ինչքան ուզում եք՝ խոսեք:

Ֆիզիկան բոլորինս է, միայն ֆիզիկոսներինը չի:

Չորրորդ, ինչո՞ւ բանասիրական ֆակուլտետներում գիտական (բաց) սեմինարներ չեն լինում: Դուք ինչո՞ւ եք խուսափում (թե՞ վախենում) գիտական բանավոր ու բաց բանավեճերից:

Ու հինգերորդ: Էս հարցը բոլորիս է վերաբերում: Լեզվաբանությունն ու քերականությունը մեր լեզվաբանների սեփական բոստանը չի, որ ինչ մուխտո ուզենան՝ են էլ ցանեն: Մենք բոլորս էլ զավակ, բռն ու ծոռ ունենք ու չպիտի հանդուրժենք, որ մեր իսկ տված փողի դիմաց մեր զավակներին, թոռներին ու ժոռներին զառանցանք սովորեցնեն ու հետո էլ, քննություններին, ինչ թվանշան ուզենան, են էլ նշանակեն, ասելով, թե՛ «մենք էսպես ենք որոշել»:

Ինչ վերաբերում է իմ գրածների կարուկությանը, ասեմ, որ սրա պատճառը միայն էս ողբերգական ու խայտառակ հարցը բարձրացնելու իմ ցանկությունն է, ինչը, կարծում եմ, նաև մեր ժողովրդի մեծ մասի ու նաև Մանուկ Արեղյանի ժառանգների ցանկությունն է:

Ի վերջո՝ թույլ հաղթի ճշմարտությունը, սա՛ է կարևորը: Ու բոլորովին էլ կարևոր չէ, որ արդեն մոտ 70-80 տարի է, ինչ լեզվաբանական էս վիթխարի ու մղձավանջային մոլորությունը դարձել է համազգային, ու որ սա շտկել ուղղելը հիմա չափազանց դժվար կլինի: **Չուղղե՞նք.**

Ու եթե հայ ազգը պիտի 21-րդ դարում գիտական լեզվաբանություն ու նաև խելքը գլխին գրականություն չունենա (տես իմ «Արտեմիզոն ու հայ պոեզիայի ողբերգությունը» հոդվածը), Մեսրոպ Մաշտոցն էլ ինչո՞ւ էր 5-րդ դարում չարչարվում ու հայերենի այբուբենը ստեղծում. Որ դեմագոգիան գրավոր էլ անե՞նք:

Եթե մենք մեր իսկ «տան» ներքին գործերը շտկելու ու կարգավորելու շնորհքն ու կարողությունը չունենք, դրսի քշմամիներից բողոքելու բարոյական ի՞նչ իրավունք ունենք: Եթե իմ էս ասածները ճիշտ են, ու բոլորս էլ բռնում ենք ու համբերում մեր էս վիճակը, էլ ինչո՞վ ենք տարբերվում ....:

**ԻՍԿԱԿԱՆ ՉԱՌԱՆՅԱՆՔ ԻՆՉՆ Է,  
ԿԱՍ ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ «ՍՏՈՐՈՂՈՒՄ»**

**Գիտությունն ո՛ր է:  
Նրենսխս Բեկոն**

**Տգիտությունն ավելի՛ մեծ ուժ է:  
Միթրաժանայի 2-րդ օրենքը**

Հազար ներողություն ընթերցողից, որ պիտի մի քանի բան ասեմ հայերենի քերականությունից, ու պիտի ասեմ ուղղամիտ ու երևի նաև կտրուկ ոճով: Ստիպված եմ, որովհետև ճշմարտությունն ասելու ուրիշ ձև ուղղակի չկա: Պիտի ցույց տամ, որ Աբեղյանի ասածները կրկնելով ո՛չ «չարամիտ գրապարտող» եմ, ո՛չ «տոգետ» ու ոչ էլ «գառանցող»: Ու պիտի ցույց տամ, թե ո՛վ է ...-ը:

Սրա համար, նորից ստիպված, պիտի մի քիչ խոսեմ քերականությունից, թեկուզ պարզ մակարդակով, բայց միևնույնն է, մեր բոլորիս համար ատելի քերականությունից, ուրիշ ճար չկա:

Եթե հարգելի ընթերցողը մի քիչ ներող ու համբերող լինի, ամեն ինչ կհասկանա, ու վերջը կիմանա, թե քերականական էս անբողջ կռվի էությունն ի՞նչ է, ու մեր էսօրվա քերականներն ինչպես են տանջում մեր մանուկներին ու պատանիներին:

(Ովքեր ուզում են էս հարցերի մի փոքր ավելի շատ մանրամասներն իմանան, թող կարդան էս գրքի հավելվածի իմ հոդվածները):

\*\*\*

Աբեղյանն ասում է, թե ջրինակ՝ *խաղաց* բառն իր իմաստը (*խաղալու* գաղափարը, գործողությունը, երևույթը, հատկաճիշը, ևն) վերագրում է իր իսկ դեմքին (երրորդ դեմքին՝ *խաղաց նա*), հետոն էլ նշելով երգչորոգության ժամանակը (անցյալը՝ *խաղաց պրծալ*) ու գործողների թիվը (եզակին՝ *խաղած մեկնակ ինքը*):

(Հազար ափսոս, բայց քերականներն էս «*վերագրում է*» խոսքի տեղն ասում են՝ «*ստորոգում է*»: «*Ստորոգում է*» խոսքը մեր փոքրերի նամար էլ, մեծերի համար էլ անսովոր է ու վախեցնող):

Հետո էլ Աբեղյանն ասում է, թե միայն է՛ն բառերը, որ իրար հետ մեկտեղ ունեն՝ դեմքի, թվի ու ժամանակի գաղափարը, ուրեմն, միայն է՛ս բառերն են իրենց իմաստը ասված ձևով վերագրում (ստորոգում) իրենց իսկ դեմքին: Սրա՛ համար է, որ մեր հին քերականներն էս գաղափարներն ունեցող բառերին ասում են *բայ*:

Կարճ, բայ է միայն ու միայն է՛ն բառը, ինչը միաժամանակ ու անպայման ունի՝ դեմք է՛լ, թիվ է՛լ, ժամանակ է՛լ:

(Հին հայերենում *բայ* բառը նշանակում էր՝ *ասի* կամ *ասում է*: Տես Հր. Աճառյան, «*Հայերենի արմատական քառարան*»):

Ուրեմն, Աբեղյանի ասելով՝ *բայ* բառերը բոլորն էլ *վերագրող են (ասող են, ստորոգող են)*: Բայց էր *բայ* բառերն ի՞նչն են *վերագրում (ասում, ստորոգում)*: Բայ բառերն իրենց դեմքին վերագրում են իրենց իսկ իմաստը:

Ուրեմն, *բայ* բառի իմաստը *վերագրվող է (ասվող է, ստորոգվող է)*: Գրաբարով *վերագրվողին կասեին՝ վերագրյալ (ասյալ, ստորոգյալ)*, ճիշտ ինչպես *մեղադրվողին* հին ձևով էսօր էլ ասում են *մեղադրյալ*:

Իմիջիայլոց՝ *մեղադրողին* էլ էսօր ասում են *դատախազ*: Ուրեմն, բայը միաժամանակ թե՛ *վերագրող (ստորոգող, գրատախազ)* է, թե՛ *վերագրյալ (ստորոգյալ, «մեղադրյալ»)*: Բայց բայն իր իմաստից բացի՝ էլի՛ գաղափարներ ունի մեջը՝ *դեմքի ու թվի գաղափարները*:

Աբեղյանը բայի դեմքի գաղափարին ասում է՝ *դեմք-ենթակա*, իսկ բայի վերագրվող (ստորոգվող) իմաստին՝ *բայիմաստ-ստորոգյալ (վերագրվող)*:

Ու Աբեղյանը, լրիվ իրավացի, ասում է, թե բայը միայն իր իմաստի, այսինքն՝ ստորոգյալի (վերագրյալի) հետ նույնացնելը կոպիտ սխալ է, որովհետև բայի մեջ, իմաստից բացի, դեմքի ու թվի ու ժամանակի գաղափարներն էլ կան, ու բայը մի բան էլ է անում՝ իր իմաստը ստորոգում-վերագրում է իր դեմքին՝ նշելով թիվն ու ժամանակը:

Սա ակնհայտ է, ու սրա հիմնավորված առարկությունն անհնար է: Իսկ մեր քերականներն ասում են, թե բայն ու ստորոգյալը նույնն են: Ինչո՞ւ են էսպես ասում: Որովհետև մեր էսօրվա լեզվաբանները չեն հասկանում, թե ստորոգելն ի՞նչ է ու նսև չեն շասկանում, թե ստորոգյալն ի՞նչ է: Ուրիշ բացատրություն ուղղակի չկա:

Երկրորդ: Ըստ Աբեղյանի.

*խաղաց*

խոսքի (նախադասության) դեմքն էս բայի դեմք-ենթական է, իսկ խաղալու գաղափարը՝ իմաստ-ստորոգյալը, այսինքն, վերագրվող իմաստը: Ուրիշ խոսքով, *խաղաց* խոսքը (նախադասությունը) իր «խաղալու» իմաստը վերագրում է իր (երրորդ) դեմքին, հետն էլ հասկացնում է, որ «խաղացողը» մենակ է եղել ու «խաղացել է» անցյալում, խոսելու պահից առաջ:

Իսկ երբ ասում ենք.

*Ուա խաղաց,*

արդեն (երրորդ) դեմքը բառով էլ ենք արտահայտում՝ արտահայտում ենք *Ուա* բառով:

Եթե ասենք.

*Արամը խաղաց,*

*խաղաց* բայի դեմք-ենթական «ճշտած», լրացրած, արտահայտած կլինենք նաև *Արամ* բառով: Սրա համար էլ Աբեղյանն էս խոսքի *Ուա* ու *Արամ* բառերին ասում է *բառ-ենթակա*, ի տարբերություն (երրորդ) *դեմք-ենթակայի*:

Ուրեմն, բառ-ենթական միայն բայի դեմքի լրացումն է, ու էլ ոչ մի կերպ իր արժեքով ու նշանակությամբ բային չի հավասարվի: (Ասվածը, մի քիչ ավելի խիստ, բացատրված է էս գրքի հավելվածում, ուր ինչպես ասել են, դրել են իմ հրատարակած երկու հոդվածը):

Բառ-ստորոգյալն էլ՝ բայիմաստի՝ լրացումն է: Օրինակ.

*«խնձորը կարմիր է»*

խոսքի մեջ «է» բայի իմաստ-ստորոգյալը լինելությունն է, գոյություն ունենալն է, ինչը վերագրվում է (երրորդ) դեմք-ենթակային:

Եթե ասենք.

*«խնձորը է»,*

խնձորի լինելության ձևը խիստ անորոշ կլինի: Բայց երբ լինելության էդ իմաստը լրացնում ենք *կարմիր* ածականով, ճշտում ենք խնձորի լինելության ձևը, տեսակը նա: Ուրեմն, էս խոսքի *կարմիր* բառը «է» բայի իմաստը լրացնող բառ-ստորոգյալն է, բայիմաստի լրացումն է:

Էս խոսքի մեջ «է» բայն է գլխավորը: Եթե «է» բայը չլինի, այսինքն, եթե միայն ասենք.

*խնձորը,*

խոսքը կիսատ կմնա, ու չենք իմանա, թե խոսողի ասածն ինչ է: Իսկ մեր քերականներն ասում են, թե նախադասության մեջ գլխավորը *խնձորը կարմիր* կապակցությունն է, այսինքն, ասում են, թե «նախադասության գլխավոր անդամները՝ ենթական ու ստորոգյալն են», ու սրա վրա մի հսկա սուտ տեսություն են սարքում:

Երրորդ: Մեր լեզվաբաններն արդեն 75-77 տարի է, ինչ ասում են, թե անորոշ դերբայը, օրինակ՝ *խաղալ* բառը, բայ է, բայց, լավ իմանալով, որ էս բառը դեմքի գաղափար չունի, սրան ասում են *անդեմ բայ*:

(Էս թյուրիմացության գլխավոր պատճառը *դերբայ* տերմինն է: Անտեղյակները կարծում են, թե անորոշ դերբայը, գոնե մի քիչ, «բայի դերը տանում է», այնինչ, անորոշ դերբայը գոյական է: Աճառյանն անորոշ դերբային մեկ-մեկ ասում է *աներևույթ* կամ *ինֆինիտիվ* (տես՝ Հր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հատ V, էջ 5):

Բայց *խաղալ* բառը (անորոշ դերբայը) ժամանակի գաղափար էլ չունի: Ու եթե, Աբեղյանին հետևելով, *բայ* ասենք միայն ու միայն իրար հետ դեմք, թիվ, ժամանակ ունեցող է՛ն բառերին, որոնք իրենց իմաստը վերագրում (ստորոգում) են իրենց դեմքին, էլ արդեն *խաղալ* անորոշ դերբայը բայ չի լինի:

Որ պայթենք էլ, որ ելնենք երկինք ու իջնենք երկիր, մեկ է, էս անոյոշ դերբայը, էս *խաղալ* բառը, չի դառնա բայ, որովհետև սա իր իմաստը չի վերագրում իր դեմքին, նշելով՝ թիվն ու ժամանակը:

Մեր լեզվաբանները սա գիտեն, որովհետև ժամանակին Աբեղյանը սա մանրամասն բացատրել է: Ու ճարը կտրած՝ հիմա էլ ասում են, թե.

Անորոշ դերբայը ստորոգումը կատարում է հնչերանգով (ինտոնացիայով):

Եկեք համոզվենք, որ սա ամենախսկական գառանցանքն է, որ կա:

*Խաղաց* բայն իր իմաստը վերագրում է իր դեմքին: Մի բուպե համաձայնենք, որ *խաղալ* դերբայն էլ իր իմաստը «հնչերանգով է վերագրում»:

Հարցնում են՝ ինչի՞ն է վերագրում: Չէ՞ որ էս բառը դեմքի գաղափար չունի: Թե՞ մեր լեզվաբանները մի նոր դեմք էլ են հայտնագործել (բազի՛ առաջին, երկրորդ ու երրորդ դեմքից), օրինակ «չորրորդ» դեմքը, կամ էլ «անորոշ» դեմքը:

Մի հարց էլ կա: Ծննդից խուլ ու համրը գաղափար չունի ո՛չ ծայնից, ոչ էլ մանավանդ, հնչերանգից (ինտոնացիայից): Ու երբ է՞դ խուլ ու համրը կարդում է՝ *խաղալ*, ո՞նց է իմանում, որ «հնչերանգը ստորոգեց» (վերագրեց):



Մի բան էլ ասեմ: Շատ հաճախ մենք մեր խոսակցի ասածին հավանություն ենք տալիս մեր բուք մատը տնկելով: Հին հռոմեացիներն էլ ժեստով գլադիատորների կյանքի ու մահվան հարցն էին վճռում: Մեկ-մեկ էլ մեր խոսակցին աչքով-ունքով էլ ենք ինչ-որ բան հասկացնում:

Պատահում է, որ խոսակցին անհամաձայնություն ենք հայտնում՝ կուպիտ ու գռեհիկ ձևով՝ երեք մատից կազմված հայտնի նշանով (հիմա ջահելները, կապկելով ամերիկյան ֆիլմերին, սրա տեղը մինջնամատն են տնկում): Հիմա հարցնում են մեր լեզվաբաններին.

Ինչո՞ւ «բուք մատային ստորոգում» չկա: Թե՞ կա:

Ինչո՞ւ «աչքով անելու ստորոգում» չկա: Թե՞ կա:

Ինչո՞ւ «երեք մատային (մինջնամատային) ստորոգում» չկա: Թե՞ կա:

Երևի մեր դարիբյանական լեզվաբանների մտքով էս «ստորոգումները» չեն անցել, թե չէ՝ սրանց մասին էլ հողվածներ կգրեին ու դիսերտացիա կպաշտպանեին: Ինչ որ է, գաղափարը նվիրում են իրենց: Vale!

Հենց էս գառանցանքը գիտության տեղն անցկացնելու համար է, որ մեր լեզվաբանները երբեք ու երբեք մանրամասն ու հետևողական չեն ասում, թե ստորոգում ասելով՝ Աբեղյանը, այսինքն, գիտությունը, ինչ է հասկանում:

Ու իրենց գրքերում ստորագելու գաղափարն էն տեսակ մի գառանցական ձևով են շարադրում, որ ով որ հասկանալու փորձ անի, ուղեղի ցնցում կամ արյան զեղում կ'ուտանա ու հիվանդանոց կընկնի (տես ասածս **«Հայե-րենագիտական ու Լեզվաբանական բառարանները»**):

Հնարավոր է, որ լեզվաբաններից ոմանք առարկեն, թե իբր իրենք «ճշտել են Աբեղյանի ստորոգման տեսությունը»: Մի հարցնող լինի՝ ինչո՞ւ: Աբեղյանի տեսությունը հայոց լեզվի ի՞նչը չէր բացատրում: Աբեղյանի պարզ ու հստակ տեսությունը ինչո՞ւ են փոխարինել մոճավանջային բարդության մի գառանցական «տեսությամբ», ու էս նոր «տեսությամբ» ի՞նչ են բացատրում, որ Աբեղյանինը չէր բացատրում: Ի՞նչն է էս նոր տեսության առավելությունը:

\*\*\*

## ԳՈՆԵ ԷՍ ՀԱՐՑՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂԶ ՉՈՒՆԻ

Ամեն մի ժողովուրդ արժանի է իր կառավարությանը:  
Գլադատուն

Ամեն մի կառավարություն արժանի է իր ժողովրդին:  
Գլադատունի օրենքի Միքրածանայի հետևանքը

Իրար արժեն:  
Միքրածանայի 2րդ օրենքի 1-ին հետևանքը

Մեր մտավորականները, մեր ժողովրդի մեծ մասի պես, շատ են բողոքում, թե մեր կառավարությունը չի թողնում, որ մարդավարի ապրենք: Ես էլ եմ կարծում, որ էս բողոքը, մեծ մասամբ, իրավացի է:

30-ական թվերին կոմունիստները, ճշմարիտ լեզվաբանության հետ, արգելեցին կիբեռնետիկան, գենետիկան ու հարաբերականության ընդհանուր տեսությունը (էս վերջինը՝ շատ կարճատև), բայց հետո ուղղեցին էս վիճակը: Էսօր մարդիկ հրաժարվել են նույնիսկ մարքսիզմ-լենինիզմից, որովհետև անառարկելի ապացուցվել է, որ սրանք սխալ են, վնասակար ու հակազիտական (տես 34-38-ն ու 56-ը):

Բայց ասեք, խնդրեն, թե մեր մտավորականությանը, մեր գիտնականներին, մեր Կրթության ու գիտության նախարարությանը, մեր Լեզվի տեսչությանն ու Լեզվաբանության ու Գրականության ինստիտուտներին ու, մեր լեզվաբաններին էսօրվա ո՞ր մի նախագահն ու վարչապետն է արգելում ու խանգարում, որ 30-ական թվերի իրենց նախուղների սխալներն ու մեղքերը չկրկնեն ու մեր լեզվաբանության վիճակը շտկեն:

Մեր կառավարությունն ու մեր նախագահները ե՞րբ են մեր լեզվաբաններին արգելել, որ սրանք հրաժարվեն 1936-ական թվերի իրենց արած կեղծարարությունից, ու հետ դառնան ճշմարիտ գիտությանը:

Միայն մեր էսօրվա լեզվաբաններն ու մեր «մտավորականները»:

Մեր հայ լեզվաբանության էսօրվա միակ ու մեծագույն հակառակորդները հենց մեր էսօրվա լեզվաբաններն են:

Ու մեր մտավորականների անտարբերությունը, ստրկամտությամբ ու քաղաքացիական արիության բացակայությունը:

Մեր էսօրվա սուտ լեզվաբանությունը մեր լեզվաբանների հացի միակ աղբյուրն է, ու էսօրվա լեզվաբանությունը ինչքան խրթին լինի, է՛լ խրթնության պոտոր ջրերում ձուկ բռնելն էնքան հեշտ կլինի: Ու սրա համար էլ չեն ուզում, որ սլոտոր ջրերի էս կայուն, հաստատված ու լավ յուղած մեխանիզմը փոխվի:

Ու ո՞ր մի նախագահը, ո՞ր մի վարչապետը կամ ո՞ր մի նախարարն է արգելում, որ մեր «ազգային» կոնսերվատորիան ու «ազգային» օպերան, եվրոպական երաժշտությունն ուսումնասիրելուց առաջ ուսումնասիրեն նախ և առաջ մեր ազգային երգն ու պարը ու հենց սրա՛նք դասավանդեն ու հենց սրա՛նք քարոզեն ու հենց սրա՛նք տարածեն ու հենց սրանց հարու-թյուն տան:

Ուզես, թե չուզես, մտածում ես, որ հենց մեր «ազգային» կոնսերվատո-րիան ու «ազգային» օպերան են մեր ազգային երգ ու պարի ամենամեծ (մեղմ ասած) հակառակորդները: Որովհետև հենց սրա՛նք են ազգային կամ ժողովրդական հայտարարել է՛ն երժշտական գործիքներն ու է՛ն երգ ու պարը, որ մերը չեն, իսկ մեր բնիկ ու ազգային գործիքն ու մեր ազգային ու էթնիկ երգ ու պարը համարյա անտեսում են, էն էլ՝ մոտ 90 տարի:

Հազար ավաստ:

**ԻՆՉՈՒՒՄ Է ՄԵՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԸ ԷՍՔԱՆ ՈՂԵՐԳԱԿԱՆ**

—Աշխարհը նույնիսկ մեր բակից է մեծ: Աշխարհի սահման-ները հասնում են միչև գետակը,— ասաց թխական հավը:

*Հանս Բրիտտիան Անդերսեն*

**Մեր էսօրվա լեզվաբանությունը մեկուսի է:**

Մի 70-100 տարի առաջ էսպես չէր: Հայ լեզվաբանության հիմնադիր կենտրոնները Եվրոպայում էին, Սբ Ղազար կղզում, Վենետիկում, Գեր-մանիայում ու Ֆրանսիայում, Ռուսաստանում ևն:

Հայ լեզվաբանության ասպարեզում հիմնարար գործեր են արել՝ մխի-թարյան հայրերը, գերմանացի Պոլ դը Լագաբոը, բայց առաջին հերթին՝ գերմանացի Հայմրիխ Հյուբշմանն ու ֆրանսիացի Անտուան Մեյեն, ովքեր հնդեվրոպագիտության հույժ հեղինակավոր ներկայացուցիչներն էին (հայերենի էս համարյա մոռացված երախտավորների մասին տես էս գր-քի երկրորդ մասում): Ու հայ լեզվաբանությունն էլ հնդեվրոպագիտության ամենակարևոր ճյուղերից մեկն էր:

Եվրոպացի հայագետները ցիտում էին հայ գիտնականներին ու ուշա-ղիր հեռուում էին, օրինակ, Գալուստ Տեր-Սկրտչյանի, Հր. Աճառյանի ու Մ. Աբեղյանի նրապարակած գործերին: Սրանք էլ, ինչքան կարող էին, հե-

տևում էին հնդեվրոպագիտության ու լեզվաբանության նորություններին (եվրոպական լեզուներից մեկ-երկուսը ջրի պես իմանալով), որ հետ չմնան համաշխարհային գիտությունից:

Առհասարակ, որևէ ժողովրդի գիտությունը համաշխարհային գիտու-թյան մի մասն է ու երբևէ չի զարգանա, եթե դադարի դրա մասը լինելուց:

Հիմա՝ մեր հայկական ֆիզիկան, աստղագիտությունը, կենսաբանու-թյունը, քիմիան ու մաթեմատիկան էսօր էլ են համաշխարհային գիտու-թյան մի մասը, ու մեր էս ասպարեզի գիտնականներն իրենց գործերի մե-ծագույն մասը հրապարակում են միջազգային շատ լուրջ գիտական ամ-սագրերում: Ու եթե սխալ բան հրապարակեն, աշխարհով մեկ խայտա-ռակ կլինեն:

Ուրեմն, Հայաստանի ողջ բնագիտությունն ու մաթեմատիկան հսկող ունի՛, ու էդ հսկողը համաշխարհային գիտությունն է:

Իսկ Հայաստանի էսօրվա լեզվաբանությունը (ու երևի հասարակագի-տության մեծ մասը) գուրկ են էս կարգի հսկողությունից:

(Արտասահմանի հայագիտական կենտրոնների մեծ մասի ղեկավար-ներն իրենց կրթությունը, ի վերջո, Հայաստանում են ստանում ու, մեծ մա-սամբ, դառնում են դարիբյանական):

Էսօր արդեն Հյուբշմանն ու Մեյեն չկա դրսում, որ չափազանց շահագր-գիռ լինի հայերենով ու հայերով: Սրա համար էլ՝ մեր լեզվաբանները, մնա-լով առանց որևէ գիտական հսկողության, դարձել են մեկուսի, ու մեր լեզ-վաբանությունն էլ դարձրել են Ավգյան ախոռների պես մի բան:

(Ես էնքան միամիտ չեմ, որ ինձ դնեմ Հերակլեսի տեղը, ու էս վիճակը փոխելու փորձ անեմ: Սա մի մարդու գործ չի: Ուզածս մենակ է՛ն բանն է, որ ժողովուրդը՝ ճշմարտությունն իմանա ու, էդ ժամանակ, գուցե պաշտ-պանի իր իրավունքները: Ես մի ընկեր ունեմ, ով ինձ ասում է, թե էս ան-պայման են սխալ, որովհետև ինձնից բացի էլ ուրիշ ոչ մեկը չի ասում իս ասածները:

(Էս ընկերոջս պես շատերն են մտածում, որովհետև մոռանում են, որ համարյա միշտ՝ ճշմարտությունը մեն-մի հատիկ մարդ է ասում, մի Դե-մոկրիտոս, մի Մեկրատես, մի Գալիլեյ, մի Նյուտոն, մի Աբեղյան ևն: (Իսկ էս, շատ անգամ, ընդամենը կրկնում են Աբեղյանին)):

Հազար ավաստ, բայց լեզվաբաններից ոչ մեկը ռիսկ չի անում ու երևի չանի ինձ միանալու (Աբեղյանին իրենց հոգու խեղճում համաձայն շատ

լեզվաբանի են դիմել, բայց բոլորն էլ մերժել են), որովհետև լավ գիտի, թե հաստատված դոգմատիկ ու սարսափելի սիստեմն իրեն ինչ օրը կդնի:

Իմ ուժն էլ երևի հենց էն հանգամանքն է, որ ես ֆիզիկոս եմ, ու էս դոգմատիկ սիստեմն ինձ ճնշելու ոչ մի լծակ չունի:

Ես հույսս հըը չեմ կտրում: Նորից եմ դիմում բոլոր նրանց, ում արդեն դիմել եմ: Եկեք մի երկար ու հիմնավոր քննարկություն անենք, ու պարզենք, թե ինչն ինչոց է: Ես նորից եմ դիմում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային (ու նաև Հր. Աճառյանի անվան Լեզվաբանության ու Մանուկ Աբեղյանի անվան Գրականագիտության ինստիտուտներին ու Լեզվի տեսչությանը):

Ու խնդրում եմ, որ էդ քննարկությանը գրատախտակ, կավիճ ու ջնջոց լինի, ու ինձ էլ խոսելու հնարավորություն տան: Հնարավոր է, որ էդ քննարկությունը շատ երկար լինի: Բայց թող էդ քննարկությունը տևի նույնիսկ մի քանի ամիս: Մի՞թե մեր լեզվաբանությունը նորոգելու խնդիրն ավելի քիչ է կարևոր, քան մնացած խնդիրները:

Դիմում եմ նաև ուսանողությանը. ուսանողներ, պաշտպանե՛ք ձեր սեփական շահերը: Դուք համալսարաններին փող էք տալիս, որ ձեզ իսկական գիտություն սովորեցնեն, և ոչ թե սուտ ու սխալ սքոլաստիկական տեսություններ, որոնք հետագայում ձեզ ոչ միայն պետք չեն գալու, այլև կխանգարեն ձեզ, ավելի ճիշտ, արդեն խանգարել ու խանգարում են, որովհետև սպանում են ձեր մշակութային ու ձեզ դարձնում են քարացած դոգմատիկներ:

Հիշեք, որ «խեղդվողների փրկության գործը հենց խեղդվողների գործն է»: Հնամուխներն ու հայագուվները մեզ չեն օգնի: Ինքնագուվությունը երբեք էլ ընդունելի չի եղել, ու դրանից օգուտ չկա: Դիմում եմ Հայաստանի բոլոր քաղաքացիներին ու բոլոր հայերին (նաև Միլիտոսին): Եթե էս հարցում մեծակ մնամ, վերջիվերջո, իմ քերտնը կփակեն, կամ էլ՝ ինքս կհուսահատվեմ ու ձեռն կկարեն: Ինձ մեծակ մի՛ թողեք:

Ի վերջո մեր էս «համաշխարհային փայլուն ազգը» պիտի մի կարգին քերականություն ու լեզվաբանություն ունենա՞, թե՞ չէ: Մանավանդ, որ դպրոցի դասագրքերն ու համալսարանի ծրագրերը, մեկ է, պիտի փոխվեն: Հիշեցնեմ, որ ՄԲ Մաշտոցի օրերից այդքան 16 դար է անցել:

Թող հաղթի ճշմարտությունն ու արդարությունը, սա՛՛ է կարևորը: Ու բոլորովին էլ կարևոր չի, որ արդեն 75-77 տարի է, ինչ լեզվաբանական էս վիթխարի ու մղձավանջային մոլորությունը դարձել է համազգային, ու որ սա շսկել ուղղելը հիմա չափազանց դժվար կլինի:

**Չուղղե՞նք:**

\*\*\*

## ԻՆՉՈՒՒ ԵՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՇՏ ԱՆԱՐԿԱՐ

*Ուժեղի մտտ միշտ էլ բռնյղն է մեղավոր:  
Եզոպոս*

Էս արդեն քանի՞ տարի է, ինչ հայ բոլոր-բոլոր ծնողները դժգոհ են թե՛ հայերենի դասագրքերից, թե՛ մնացած դասագրքերի հայերեն լեզվից, թե՛ հայոց լեզվի ու գրականության քննություններից (մնացածներից էլ, բայց սա ուրիշ խոսակցություն է), լինեն սրանք ավարտական, թե ընդունելության:

Հայ ծնողները, լրիվ իրավացի, ուզում են, որ հայերենի մեր «մասնագետները» լավ դասագիրք գրեն ու ճիշտ ու արդար քննություն անեն:

Բայց մեր էս ծնողներն ու աշակերտները, ու ողջ հայ ժողովուրդն առհասարակ, մի բան չգիտեն:

Չգիտեն, որ հայերենի մեր մասնագետները, այսինքն, մեր լեզվաբաններն ու գրականության «մասնագետները» բացարձակ ի վիճակի չեն էդ բանն անելու ու անելու մտադրություն էլ չունեն:

Էսօրվա հայ «լեզվաբանները», եթե նույնիսկ շատ ուզենան, ի վիճակի չեն հայերեն լեզվին ու գրականությանը վերաբերող որևէ գիտական ու արդար քննություն կազմակերպելու:

Ի վիճակի չեն, որովհետև լեզվին (ուրեմն, նաև գրականությանը) վերաբերող իրենց ասածների ճիշտ ու սխալը ջոկելու ոչ մի գիտական ու օբյեկտիվ չափանիշ չունեն:

Այսինքն, իրենք էլ չգիտեն, թե ի՞նչ են ասում ու անում:

Արդեն չորս տարի է, ինչ հարցնում եմ մեր «լեզվաբաններին», որ ասեն, թե էդ չափանիշը ո՞րն է, ու իրենք լուռն են (տես՝ 8-10-ը, նաև՝ 7-ը):

**Եթե լուռն են, ուրեմն, ոչ մի չափանիշ էլ չունեն:** Եթե ունեն, թող ասեն:

Թե որ ակադեմիկոս Մ. Աբեղյանը մի հրաշքով կհանդամանար, ու մի ուրիշ հրաշքով էլ մեր էսօրվա «լեզվաբաններից» հայոց լեզվի ու գրականության քննություն ընդունել, սրանց բոլորին էլ «երկու» կնշանակելը (եթե ոչ՝ ավելի ցածր):

Ու երբ բողոքում էս էս վիճակից ու էս անհեթեթ քերականությունից, մեռնո՞ւ մեղքը բարդում են դպրոցի ու մանավանդ «կրթն»ուսույցների վրա ու ասում, թե իբր «մեր մանուկները խորը չեն սովորում դպրոցական դասըն-

բացի քերականությունն ու գրականությունը, թե «կրկն»ուսույցներն ստիպում են, որ մեր երեխեքը միայն անգիր անեն էլ դասընթացը»:

Բայց, Շոպենհաուերի ասածի պես (ասել է Հեգելի անհեթեթ տեսությունների առիթով. տես Կ. Պոպկեր, *Բաց հասարակությունն ու դրա թշնամիները*) անհեթեթ ու անտրամաբանական շարադրանքն ինչան էլ «խորը» սովորես, արդյունքը միայն վնասը կլինի, որովհետև երեխայի միտքն ու տրամաբանությունը կսպանվի: Իսկ մեր էսօրվա դպրոցը, համարյա միշտ, ոչինչ չի սովորեցնում, ու սա բոլորս էլ շատ լավ գիտենք, ինչ էլ որ պաշտոնյա բանասերները կամ նախարարություններն ասեն:

Մեր «լեզվաբանները», էս ողբերգական ու խայտառակ խնդիրը թողած, հայրենասերի կեցվածքով, անընդհատ «պայքարում են օտար բառերի դեմ» (ինչը հակազիտական ու անհեթեթ է, որովհետև *չկա, չի եղել ու չի էլ լինի մաքուր լեզու*).

բայց երբեք չեն պայքարում օտար քերականության դեմ, չնայած քերականական օտարաբանությունների թիվը մեր հայերեն գրվածքների մեջ հասնում է միլիարդների ու տրիլիոնների:

Էսօրվա մեր լեզվաբանության միակ չափանիշը դեմագոգիան է՝ անհեթեթ ու մերկապարանոց դեմագոգիան:

**Գոնե էս հարցում իշխանությունը շատ մեղք չունի:**

Անցած 2010 թվին ընդունելության մի ահապոր խայտառակ քննություն էլ եղավ: Հայերենի «թեստ» կազմելը հանձնարարել էին մի «լեզվաբանի», ով նույնիսկ «դիմորդ» բառի իմաստը չգիտեր: Իրոք, էս լեզվաբան կոչվածը հեռացույցով մի երկու-երեք անգամ հայտարարեց, թե «համալսարան ընդունվելիս՝ ինքը դիմորդ չի եղել»:

Ու էս պատմությունը հայտնի դարձավ ու քաղցրացրեց ցույց տրվեց մեր հեռացույցի ալիքներով: Բայց ի՞նչ փոխվեց, կամ ի՞նչ կփոխվի: Ոչինչ էլ չի փոխվի:

Ծնողների ու «մասնագետ լեզվաբանների» բարձրացրած աղմուկն ուղղակի արտասովոր էր: Բայց ոչ մեկը չի իշխեց 2009-ին գրած իմ էս եռփյունի մասին էլ, մյուս հոդվածներին մասին էլ: Սրա համար էլ՝ մի երկու բան էլ պիտի ասեն:

## ՈՂԵՐԳԱԿԱՆ ՎԵՐՋԱԲԱՆ

«Ողբամ գրեզ, Հայոց աշխարհ ... Ո՛վ այստեղից զմերս յարգեսցե զուսումն. ո՛վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս ... Ո՛վ կարկեսցե զյանդգնութիւն ընդդէմ առողջ վարդապետութեան հակառակ յարուցելոցն, որք անճայն բանի քակտեալք եւ քայքայեալք՝ յորովս փոփոխեն վարդապետս եւ բազում գիրս ...

Վարդապետք տխմարք եւ ինքնահաճք ... ոսկեւեքք, նախանձոտք ... աշակերտք հեղզ առ ուսումն եւ փոյթք առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանք»\*:

*Մովսես Խորենացի*

Նախորդ շարադրանքից մի անխուսափ եզրակացություն է հետևում: Բովանդակությունը, առհասարակ, մեզ չի հետաքրքրում: Մեր համար կարևորը մենակ անուններն են, կարևորը մենակ անբովանդակ ձևն է:

Մեզ մենակ հոչակավոր անուններ են պետք, որ անընդհատ լուսազանալով գոռոռանք, թե «տեսեք, ինչ լավ ենք ու չքնաղ, բայց բախտ չունենք, ու մեզ անընդհատ կեղեքում են ու կտորում, թե չէ՝ ...»:

Ցավոք, սա սուտ չի, ու ոչ էլ բառախաղի համար է ասվում: Սա ողբերգական ճշմարտություն է:

Իրոք, **Կոմիտասն** ասում էր, որ պիտի երգենք ու պարենք հայի պես ու հայավարի (քանզի, ողջ աշխարհի մակարդակով, մեր երգ ու պարը չքնաղ են), ու հետո նոր ուրիշների լավագույն երգ ու պարին ծանոթանանք ու սովորենք, հետո նոր ուրիշների արժեքավոր երաժշտական մշակույթը յուրացնենք: Իսկ մենք էսօր ոչ միայն հայավարի չենք երգում, այլև մեր ազգային չքնաղ երգերն ու երգելաձևն ու սզգային պարն ու պարելաձևը լրիվ ենք մոռացել:

\*«Ողբում են քեզ, Հայոց աշխարհ ... այստեղև էլ ո՛վ կհարգի օսումը. ո՛վ կօրախանա իր աշակերտների առաջադիմությամբ ... Ո՛վ կզսպի այն մարդկանց, ովքեր հակառակվում են ճշմարիտ <գիտությանը> (վարդապետությանը) ու ովքեր, սրա նրա սասաններից <ազդվելով>, ալիքվեն են ու <ապակիսնվել>, ու անընդհատ ու անընդհատ ուսուցիչ ու <գիտություն> (վարդապետություն) են փոխում

...<Գիտնականները> (վարդապետները) տխմար են ու քմահուճ, ... ու ոսկե-իբ ու նախանձ ... աշակերտները ծույլ են ու անբան, ու <գիտությունը> (աստվածաբանությունը) դեռ չուսումնասիրած՝ շտապում են, որ ուրիշներին սովորեցնեն »:

Ու, համարյա միշտ, երգում ենք օտարի երգը (չնայած՝ հայերեն բառերով, բայց մեկ է՝ օտարի), իսկ մեր ազգային երգապարը, *գեղունը*, պարում ենք հազվադեպ, պարում ենք առանց *յայլու* (պարերգի), բաթար-մոնղոլական գուռնա-դիոլի նվագով, ու մեծագույն-մեծագույն-մեծագույն մասամբ, պարում ենք օտարների պարերը:

Կոմիտասան ասում էր, որ մեր ազգային միակ բնիկ նվագարանը փողն է, իսկ մենք փող բոլորովին չենք գործածում: (Կոմիտասը 1913-ին Փարիզում հենց փող նվագեց, ու աշխարհի երաժշտական հասարակությունն ուղղակի ապշել էր փողի անսահման չքնադրությունից: Էսօր պաշտում ենք փոխ առած դուրդուն ու գուռնան, չնայած Կոմիտասի ասելով փողն անսահման չքնադ գործիք է, ու (արդեն ողջ աշխարհում ընդունված) դուրդուկից շատ ու շատ է գերազանց:

### Ուրեմն, ի՞նչ օգուտ, որ պաշտում ենք Կոմիտասին:

Մտաբույ Մաշտոցը հայերենի այբուբենը հիմնել էր մի տառ-մի հնչյուն ու մի հնչյուն-մի տառ սկզբունքի վրա (հենց սրա՝ համար է մաշտոցյան այբուբենը համարվում իր ժամանակի ամենակատարյալ այբուբենը), ու Մանուկ Աբեղյանն էլ, միայն մասամբ, հետևեց Մաշտոցի՝ սկզբունքին:

Էդ օրերից մինչև հիմա հայագովները անընդհատ հայհոյում են Աբեղյանին ու գոռոռում են, թե պիտի հետ դառնանք մաշտոցյան ուղղագրությանը, չհասկանալով, որ սա հակառակ է Մաշտոցի՝ սկզբունքին:

### Մա՞ է Սբ Մաշտոցի պատգամները կատարելու մեր ձևը:

Մեր գրությունն ու մանավանդ մեր մանուկների կրթությունն ահավոր դժվարացնելով մեր ազգային ո՞ր արժեքն ենք պահպանում: Բա պարզ չի՞, որ թե՛ն հանկարծ սա իրազործվի, մենք անպայման կհետանանք Մաշտոցի սկզբունքի էությունից, անպայման խախտած կլինենք Մաշտոցի *մի տառ-մի հնչյուն ու մի հնչյուն-մի տառ* սկզբունքն ու հետևած կլինենք ձևին միայն, ու «պահպանած» կլինենք միայն մեր հետամնացությունն ու խավաշամուրթյունը:

Էսօր մենք երկու քերականություն ունենք, Մ. Աբեղյանի քերականությունն ու հետաքերականական քերականությունները: Էս երկու քերականությունն իրար լրիվ են հակառակ, իրար լրիվ ջնջում են ու բացարձակ անհամատեղ են:

Մեր էսօրվա լեզվաբաններն էս երկու քերականությունն էլ համարում են ճիշտ, բայց մեր կրթական հիմնարկներում սնցնում են միայն երկրորդները: Այնինչ, Աբեղյանը 1936 թվին անառարկելի ապացուցել է, որ «հետաքերականական» քերականությունները լրիվ են սխալ ու անհեթեթ:

Մրանից անառարկելի, հետևում է, որ մեր էսօրվա լեզվաբանությունն իր ասածների ճիշտ ու սխալը որոշելու ոչ մի գիտական չափանիշ չունի:

Աբեղյանին 89 (թե՛ն ոչ՝ մոտ 100) տարի անընդհատ հայհոյելով ու սխալ համարելով, ու սխալ քերականություններն էլ ճիշտ համարելով,

### ինչքա՞ն ենք մեր ազգային արժեքները պահպանում, ու հետն էլ՝ մեր ո՞ր արժանիքն ենք պահպանած լինում:

Արմենակ Շահ-Մուրադյանի, Վահան Տեր-Առաքելյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Հայնրիխ Հյուբշմանի, Անտուան Մեյեի անունները համարյա բոլոր հայերին են անհայտ, բայց էս մարդիկ իրենց գիտակցական ողջ կյանքը նվիրել են հայ ժողովրդի բարեկեցությանն ու մշակույթին: Ու մենք ում հոբելյանն ասես, որ չենք նշում, բայց էս նվիրյալներին չենք էլ հիշում:

(Օրինակ, հայերենի գիտական քերականության հիմնադիր Հ. Հյուբշմանի ծննդյան 150-ամյակը լրացավ 2010-ի հուլիսի 3-ին, իսկ Գ. Տեր-Մկրտչյանինը՝ 2007-ին կամ 2008-ին, բայց ո՞վ հիշեց):

### Մա՞ է ազգային արժեքները պահպանելու մեր ձևը:

Խաչատուր Աբովյանը (հետո էլ՝ Հովհաննես Թումանյանը) ասում էր, որ ժողովրդի համար ու ժողովրդի լեզվով գրենք (ինչը, իմիջիայնոց, նաև Մաշտոցի նպատակն էր), բայց մենք, համարյա լրիվ մոռանալով Աբովյանի գրելաձևն ու պատգամները, հերիքել ենք մի մղձավանջային գրական «լեզու», ինչն ուղղակի հեղեղված է օտար քերականությամբ, ու սրանով ո՛չ կարգին խոսելու ու գրելու կարողություն ունենք (բացի մի քանի տաղանդավոր գրողը), ո՛չ նկատում ենք, որ սա արհեստական է ու մղձավանջային, ու ոչ էլ գլխի ենք, որ մեր ժողովրդի զգալի (թե՛ն ոչ՝ մեծ) մասն ռդղակի չի հասկանում էս մղձավանջը:

### Ուրեմն, ի՞նչ օգուտ, որ պաշտում ենք Խաչատուր Աբովյանին:

Մեր հոգևոր ոլորտի վիճակը ողբալի է՝ առհասարակ: Չկա մի բնագավառ, որ գործերի դրությունը տանելի լինի: Մենք, համարյա միշտ, էս ողբերգական վիճակի համատարածությունն ու վիթխարի չափերը չենք նկատում: Մենք միշտ միայն մասնավորից ենք խոսում:

Մեր մտավորականների մեծագույն-մեծագույն մասը, մեր մամուլն ու մանավանդ մեր հեռացույցը, մեր դասագրքերն ու մեր էսօրվա համարյա բոլոր ուսուցիչներն ու գրողները գրադված են միայն հայագովությամբ:

Էս հայագովությունն էլ արդարացնում ենք է՛ն հանգամանքով, թե իբր «պիտի մեզ ներկայացնենք աշխարհին, որ աշխարհն իմանա, թե մենք ինչքան լավն ենք»: Ու համարյա բոլորս էլ էս հայագովությունը համարում ենք մեր հայրենասիրության վառ արտահայտությունը:

Էս գրքի մեջ խոսեցի մեզ ցավերից երկու-երեքի մասին միայն, ու ընթերցողին գուցե թվա, թե միայն սրանք ու մեկ էլ մեր քաղաքական սխալ



տեմն է, որ որբայի վիճակում են, ու որ սրանք շակվեն, ամեն ինչ լավ կլինի: Ո՛ր էր, որ էսպես լիներ:

Մի երկու-երեք ամիս առաջ Դուբնայի նշանավոր ֆիզիկոս Յուրի Հովհաննիսյանը Հայաստանում էր, ու հեռացույցով ցավով ասաց, որ Հայաստանի ֆիզիկան անհուսալի հետ է, որ քսան տարվա առաջվա ֆիզիկան բոլորովին տարբեր է էսօրվա ֆիզիկայից: Որ վիթխարի փող ու ջանք է հարկավոր, որ նախ ժամանակակից սարքեր առնենք, ու նոր ու ջահել ֆիզիկոսներ պատրաստենք, որ վերականգնենք է՛ն ֆիզիկայի ու աստրոֆիզիկայի դպրոցները, ինչով հայրտանում էինք, այսինքն, Համբարձումյանի ու Ալիխանյանների ստեղծած դպրոցները: Ու որ ջահելները չթողնեն Հայաստանն ու չգնան ուրիշ երկիր:

Էսօր արդեն էլ Մերգելյան ու Ջրբաշյան չունենք, ու մեր էսօրվա մաթեմատիկան է՛լ է վատ վիճակում:

Մեր ունեցածն էլ հենց մեր ֆիզիկան էր, ու մի քիչ է՛լ՝ մաթեմատիկան, ու սրանք էսօր էս որբայի վիճակում են:

Մեր դպրոցի ու բուհի կրթական սիստեմն ուր որ է՝ կփլվի, եթե արդեն չի փլվել: Մեր դպրոցական դասագրքերն ուղղակի որբայի վիճակում են, թե՛ ցածր դասարաններինը, թե՛ բարձրներինը: Եթե մի քանի տարի առաջ միայն հումանիտարիստիկայի դասարգրքերն էին սոսկալի, հիմա արդեն հերթը հասել է բնագիտությանն ու մաթեմատիկային:

Օրինակ, ֆիզիկայի բարձր դասարանների գրքերը սուկայի ու խայտառակ սխալներով լիքն են, դրանց լեզուն սոսկալի է, շարադրանքի խրթնությունը՝ ահավոր, բարդությունը՝ արտառոց, ծավալը՝ վիթխարի: Սա բոլորը գիտեն:

Երբ 2010 թվի վերջին Պետհամալսարանի Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում պատմեցի ֆիզիկայի 11-րդ դասարանի գրքի վիճակը, բոլորը համաձայնեցին ասածիս, ու հլը ահագին բան էլ իրենք ավելացրին: Բայց երբ վերջում առաջարկեցի, որ նիստով համապատասխան վճիռ-եզրակացություն անենք, ու դա ներկայացնենք Ֆակուլտետի խորհրդին, որ հետո էլ Ֆակուլտետի յարտուրդը դիմի Համալսարանի խորհրդին, ու դրությունը շտկելու փորձ արվի, Ամբիոնի ակադեմիկոս վարիչը, ով համարյա 17 տարի Վիկտոր Համբարձումյանի առաջին տեղակալն է եղել, ու իր գիտական հզոր դիրքի շնորհիվ վախեցնալու քիչ բան ունի, չհամաձայնեց:

Ասաց, որ եղ դասագրքի ակադեմիկոս հեղինակներն «ընկեր են ու կնեղանան», ու հլը ինձ էլ համոզում էր, որ միայն ասեմ, թե դասագիրքն ընդամենը շատ բարդ է ու դպրոցին հարմար չի, իսկ սխալների մասին ձայն չհանեմ, որովհետև ինձ է՛լ վնաս կլինի:

Ասացի, որ թող ինձ մի պաշտոնական եզրակացություն տան, ու ես մեծակ կդիմեմ Ֆակուլտետի խորհրդին: Սա էլ չտվին: Դիմեցի Ֆակուլտետի ղեկավարությանը: Սրանք էլ ասացին, թե առանց ամբիոնի եզրակացության՝ ինձ չեն լսի:

Հիմա ասեք, տեսնենք, մեր կառավարությունն ու իշխանությունները խանգարո՞ւմ են, որ էս մտավորականներն ասեն ճշմարտությունն ու սլայքարեն ֆիզիկայի խոտան դասագրքերի դեմ:

Ահա սրանք են մեր էսօրվա մտավորականները, է՛ն մտավորականները, ովքեր պատերի տակ անընդհատ ու թունդ քննադատում են մեր կառավարությանը, բայց իրենց պետերին, ընկերներին ու հենց իրենց քննադատելուց՝ միշտ են խուսափում, որովհետև ձեռնառու չի, որովհետև, որ իրենք լինեին մեր կառավարության տեղը, կվարվեին ճիշտ մեր կառավարության պես: Որովհետև իրենք է՛լ են նույն սանրի կտավը:

Արդեն ասացի, որ մեր թերթերը ծավալուն ու ֆունդամենտալ հողված՝ հազվադեպ են տալում, մանավանդ, եթե հողվածը բամբասանք չի ու խիստ կարևոր է: Բայց տպելուց հետո էլ գալիս ու դեմ ես առնում, ա՛յ, է՛ս կարգի անհաղթահարելի արգելքների:

Էսօրվա մեր գրաքննադատությունը միայն հայագովություն է: Մեր քննադատները մեր համարյա բոլոր ընդունված հայ գրողներին հայտարարում են՝ կա՛մ տաղանդավոր, կա՛մ հանճարեղ: Բայց երբ մերոնց համեմատում ես Եվրիպիդեսի, Սոփոկլեսի, Էսքիլեսի, Աբու լը Ալա ալ Մահարու, Բարա Թախեր Օրիանու, Խայամի, Վերգիլիուսի, Դանթեի, Պետրարկայի, Բոկաչոյի, Ռաբլեի, Մերվանտեսի, Շեքսպիրի, Մոլիվենտնի, Մենկևիչի, Բալզակի, Գյոթեի, Գոգոլի, Պուշկինի, Լև Տոլստոյի, Մարոյանի, Հեմինգվեյի, Մոայնթելի ու ուրիշ շատերի հետ, տեսնում ես, որ մերոնցից մեկ-երկուսը հազիվ դիմանա սրանց մրցությանը: Արվեստում էլ կա միայն մի՛ աստիճան, գերազանց աստիճանը, ու սրանից ցածրը բանի պետք չի:

(Մեկ-մեկ, երբ սա ասում եմ, ասում են, թե «մենք թվով քիչ ենք, սրա համար է՛լ մեր «արդյունքն» է՛լ է համեստ»: Բայց նորմեզագիթ է՛լ են քիչ, ու Գրիգ ու Սիբելիուս ու Համսուն ունեն: Հին Աթենքի բնակչությունը մեր էսօրվա Գյումրու (կամ Վանաձորի) բնակչությունից էլ երկի քիչ լինեղ, բայց ոչ մե՛ր որջ ստեղծածը, ոչ է՛լ նույնիսկ էղ փառավոր օրերից հետո՝ էսօրվա հենց հույների ստեղծածը, համեմատելի չի հին հույների ստեղծածի հետ:

Ուրեմն, հարցը մենակ բնակչության թիվը չի:

Հարցը հենց է՛ն ավանդույթներն են, ինչը չունենք թե՛ մենք, թե՛ էսօրվա հույները (բայց ուզում ենք «ավանդույթ» պահպանենք): Ուրեմն, մեր համար կարևոր չի, թե ի՛նչ կամ ո՛ր մի ավանդույթը կպահպանենք, մենակ թե՛ պահպանենք:

Մեր քննադատները, համարյա միշտ, գովում ու երկինք են հասցնում միջակություններին ու անտաղանդներին ու չեն նկատում իրոք տաղանդավորներին: Սրա հիմնական պատճառը մեր քննադատների անվստահությունն է՝ իրենց իսկ սեփական պրոֆեսիոնալ գիտելիքի ու ունակության վրա: Հրայա Մարտիսանը, օրինակ, 1960-ականներից արդեն հայ ամենատաղանդավոր պոետն է, Զարենցից հետո: Բայց Հրաչը հասարակական ակտիվություն չունի, ու աննկատ է մինչև էսօր:

Ու մեր քննադատները ջաջություն ու երկի նաև գիտելիք չունեն հայտարարելու, որ Հրաչը մեր դասականներից պակաս տաղանդավոր կամ

հանճարեղ չի: Ավելի ապահով է, որ հանճարեղ հոշակեն, օրինակ, Չարենցի ու Տերյանի նույնիսկ թույլ գործերը:

Երբ մեր պոետներից մեկին ասացի, թե Հրաչի ուտանավորներից մի 10-15-ը (իմ իմացածները, գրքերը լրիվ չունեն, որ կարդամ) ենքան լավն են, որ կուզեի՝ դրանք էս գրած լինեի, ասաց.

– Խի՞ ես Հրաչին ուրիշների մոտ բռնեց գովում:

– Բայց խի՞ չգովեմ.– ասացի ես:– Էդ ուտանավորներն իրոք հանճարեղ են: Որ դրանց հեղինակը մի Բայրոն կամ մի Շեյի ըլեր, հո՞ կասեիր, որ դրանք չքնաղ են:

– Հա, բայց որ Հրաչին էդ ձև գովում ես, կմտածեն, որ դու իրանից վատ պոետ ես:

– Մտածում են՝ մտածեն,– ասացի ես: Թե որ իմ ուտանավորները լավն են, մի օր էլ մեկնումեկը կասի, որ իմոնքն էլ են հանճարեղ:

Ես հետո իմացա, որ ընկերս բուրբուլին էլ չի համոզվել: Մի երկու տարի հետո էլ նույն ընկերոջս գրական երեկոն էր, ու երեկոյի մասնակիցներին գովասանքի նույն խոսքերն ասացի հենց էս ընկերոջս մի քանի իրոք հրաշալի ուտանավորի մասին: Երեկոյից հետո ընկերս ասաց.

– Էն բանը, ինչ որ էսօր դու՛ արիր ընծի, ախպերն ախպորը չէր անի:

Սա պատմում են, որովհետև սա բնութագրական է էսօրվա հայ մտավորականի համար (բացառություններ կան, բայց ոչ գրական ասպարեզում: Իսկ գրական ու առհասարակ արվեստի ու գիտության ասպարեզում, մեծագույն մասամբ, գովասանքները փոխադարձ պայմանավորվածությամբ են, «ես՝ քեզ, դու՝ ինձ» սկզբունքով):

Բացեք մեր դպրոցական դասագրքերն ու կտեսնեք, թե ժամանակակիցների ինչ ողորմելի գրվածքներ են դրված դրանց մեջ, ու ինչով են մեր մանուկների ճաշակը կրթում:

Մա՛ է մեր էսօրվա մտավորականությունը. վախկոտ, քաղաքացիական արվությունից զուրկ, հաճախ՝ անազնիվ ու բամբասկոտ:

«Ի՛նչ ինչ գործն ա. թո ուրիշներն ասեն, թո ուրիշները պայքարեն, թո ուրիշները շոկեն»: Մա՛ է մեր մտավորականի հավատամբը:

Մեր «առաջին մտավորականը», Լևոն Տեր-Պետրոսյանը (հիմա մեր ստորաբարչ լրագրողների մոդան է՝ «առաջին տիկինը, առաջին չգիտեմ ով» են), 1995 թվին, հեռացույցով հայտարարեց. «Թող ամեն մարդ հարստանա, ինչպես կարող է»: (Ինքս եմ լսել, բայց շատերը կհիշեն): Բայց չէ՞ որ սա հենց գողի, ավազակի ու թալանչու կարգախոսն է: (Իմիջիայնոց, թող ընթերցողը չմտածի, թե ես առանձին անձերին եմ դեմ: Ասածներս վերաբերում են բոլոր «առաջին» ու մնացած մտավորականներին):

Ու հենց վերջերս հենց էս «առաջին մտավորականը» ինքը հայտարարեց, թե հիմա Հայաստանն ավազակապետություն է ևն: Ու մեր էս «առաջին մտավորականը» մոռանում է, որ էս ավազակապետության հիմնադիրը հենց ինքն է, որ առաջինը հենց ինքն աանկերը քշեց արդար ընտրություն պահանջող սեփական ժողովրդի վրա, մոռանում է, որ իբր որջ շրջապատը հարստացավ հենց իր իսկ խորհրդով, այսինքն, «հարստացավ՝ ինչպես կարող էր», ավազակությամբ ու կաշառակերությամբ:

Մա նաև էս «առաջին մտավորականի», մեղմ ասած, թե՛ կարճամտության ու անհեռատեսության, թե՛ ժողովրդի նկատմամբ արհամարհանքի վկայությունն է: Վերջինը՝ երևի հաստատ, որովհետև ինքը դժվար թե չի մանար, թե իր շրջապատն ինչ ձևերով է հարստացել:

Մեր «առաջին մտավորականը» ծպտուն չիանեց իր իշխանության օրերին նույնիսկ հեռացույցով հնչած «մեր դեմ խաղ չկա» լողունգի դեմ:

Ուրեմն, ինքն էլ էր համաձայն էս լողունգին: Ու վերջերս հենց ինքը ժողովրդին սրի քաշել տվեց, ինքն էլ հետո փախավ մտավ իր դրյակը, իրենց համագումարում արդարանալով, թե «իրադրությունը պահանջում է, որ պայքարի եղանակները փոխվեն»:

Անգլիայում, Օլիվեր Կրոմվելի օրերին, Ջոն Լիլբեռն անունով մի մարդ կար, ով, առանց վախենալու, ճշմարտությունն ասում էր ամեն մեկի, նույնիսկ Կրոմվելի ճակատին: Սրա համար Ջոն Լիլբեռնին մի քանի անգամ բանտ նստեցրին, ճակատը խարանցին, ականջները կտրեցին, բայց Լիլբեռնը մինչև վերջ էլ չհրաժարվեց իր կարծիքն արտահայտելուց:

Մեր էսօրվա մտավորականները, նույնիսկ «առաջինները», հաստատ Ջոն Լիլբեռն չեն, էլ ո՛ր մնաց Մուցիոս Ըսցելուս լինեն:

Բայց չէ՞ որ հենց մեր մտավորականներն են, որ պիտի առաջինն ասեն ճշմարտությունն ու պայքարեն հանուն ճշմարտության ու արդարության: Չէ՞ որ հենց մեր մտավորականներն են, որ Գալուստ Տեր-Մկրտչյանի, Կոմիտասի, Աբեղյանի, Ղ. Աղայանի, Թումանյանի ու մնացած սրանց նման վսեմ մարդկանց պես պիտի կրթեն մեր ժողովրդին ու ասեն, թե ի՛նչ անեն ու ինչի՛ն հետևեն:

Անցած տարի, իմ *Թարգմանելու արվեստը* հրատարակելուց հետո, մեր օլիմպիական փառապանծ չեմպիոններից մեկը ճարել էր հեռախոսիս համարն ու զանգելով ինձ՝ ասաց, թե լավ չեմ արել, որ մեր ազգի մասին էսպես բաներ եմ գրել (այսինքն, ճշմարտությունն եմ գրել), որովհետև թուրքերը կօգտվեն գրածներիցս ու կպայքարեն մեր դեմ: Սա պատմում են, որովհետև շատերն են էսպես մտածում:

Շատերն են ասում, թե թուրքերն աղավաղում են մեր ու իրենց պատմությունը, ասելով, թե թուրքերը խեթերի հետնողներն են: Ու մերոնք ասում են. «Որ երպես է, եկեք հետ չմանք թուրքերից, եկեք մենք էլ մեր պատմությունն աղավաղենք (ու, օրինակ, Հերոնոս պես) հայտարարենք, թե հայերը 40000 տարի առաջ էլ են էս տարածքներում ապրել»:

(Այնինչ, նույնիսկ մոտ 15000 տարի առաջ էս Երկրագնդի վրա 20-30 հոգանոց խմբերից մեծ ոչ մի մարդկային խումբ չկար): Կամ էլ եկեք մեր էսօրվա պետական այրերի պես հայտարարենք, թե «գիտնականներն ապացուցել են, որ հայերենը 8000 տարեկան է», այսինքն, ավելի հին է, քան հնդեվրոպական մայր լեզուն:

Ուրեմն, շատերն են ասում, թե «եկեք ազգովի դառնանք սուտասան»:

Իբր եր անընդհատ սուտ ասենք, ու թուրքերի պես անընդհատ կեղծենք պատմությունն ու անընդհատ սուտ ասենք, Աշխարհը վերջը մե՛զ կհավատա, թե որ, իհարկե, թուրքերից ավելի ճարպիկ սուտ ասենք. Բա՛:

Բայց Աշխարհը միամիտ չի, որ սուտասանին, սնափառին ու մեծամոլին հավատա, բուրք լինի էդ սուտասանը, թե՛ հայ:

Մեծագույն մասամբ, սա՛ է մեր մտավորականությունը:

Մեր մտավորականը պատերի տակ (ո՛չ ամբիոնից, ո՛չ պաշտոնական վայրում) սուր քննադատում է մեր քաղաքական ողջ սխառեմն ու մեր կառավարական բուրք այրերին ու տիկնանց (բայց ո՛չ ինքն իրեն), ու մեր բուրք գործիչներին, բայց ինքը վախկոտ է ու բանջարակոտ, ու քաղաքացիական արհուրթունից զուրկ, հետամնաց է, ու գիտելիքն էլ հույժ աղքատիկ է:

Ու մեր մտավորականը, ու առաջին հերթին՝ մեր (մանավանդ՝ հեռացույցի) լրագրողը, երբեք ու երբեք քաջություն չունի հենց ի՛ր իսկ անմիջական պետին քննադատելու ու էդ պետի երեսին ասելու իր անկեղծ կարծիքը պետի մասին: Մա բացառվում է: Բայց որ առիթ եղավ կքննադատի աստղերն ու զալակտիկաներն ու նույնիսկ ողջ Տիեզերքը, (առանց սրանցից զաղափար անգամ ունենալու), մենակ թե իր անմիջական պետերին չքննադատի:

Սրա պատճառներից մեկն է՛ն բանն է, որ մեր մտավորականի անճնական շահը տարբեր է հասարակական շահից: Սրա պատճառն էլ՝ մեր շեղված ու ալլանդակ բարոյա-էթիկական նորմերն են, որ ժառանգել ենք, մասամբ, հնուց, մեծագույն մասամբ էլ, սոցիալիստական-կոմունիստական կարգերից: Մենք շատ անգամ լավին ասում ենք՝ վատ, ու հակառակը. արդարին՝ անարդար, ու հակառակը. տգեղին՝ չքնաղ, ու հակառակը. սխալին՝ ճիշտ, ու հակառակը:

Միայն մեր մտավորականները չեն, ովքեր է՛ս «նորմերով» են ապրում:

Մեր ժողովրդի մեծագույն մասը կաշառքով հարստացած մարդուն ասում է՝ «վող է աշխատել, հարստացել է», ու ուրախությամբ (նաև կաշառք տալով) իր զավակներին տեղավորում է է՛ն տեսակ աշխատանքի, որ սրանք էլ՝ «լավ փող աշխատեն», այսինքն, կաշառք շորթեն:

Մի երկու-երեք տարի առաջ Գումից նո՞ր տարվա համար միս էի առնում: Մսավաճառն իմ ու կնոջս խոսքից գլխի շնկավ, որ Պետհամալսարանի դասախոս են: Խոսք բացեց հետս (ե՛րկի համալսարանում սովորող զավակ կամ բարեկամ ուներ), ու չեմ հիշում, թե ոնց եղավ, ասացի, որ 40 տարի է, ինչ համալսարանում եմ, ու հյը ուսանողներից մի կոպեկ, կամ մի ծաղիկ, կամ մի շիշ բան չեմ վերցրել:

– Մխալ են արե.– ասաց էս մսավաճառը:– Պտի վեկալեիր:

– Ուզո՞ւմ ես ասեմ, թե ինչ ես մտածում,– ասացի ես:

– Ասա՛,– ասաց մսավաճառը:

– Մտածում ես,– ասացի ես,– որ թե իմ տեղը ըլնեիր, հո չէիր վեկալի,

հո չէիր վեկալի:

– Ծիշտ ա,– ասաց վաճառողը,– հենց էտի էլ մտածում էի:

– Բայց գլխի՞ ես,– ասացի ես,– որ էդ վախտ էլ իրավունք չունե բողոքելու, որ մեր պրեզիտենտներն ու նախարարներն ու մյուս պաշտոնյաները, ու հենց թեզ թալանող մալոգովիներն ու Մանեպիղկայանի տեսուչները սխալ են, կամ անարդար ու անբարոյական են: Իրանք թեզից շատ ու շատ են ճարպիկ, ու իրանց էլ տեղն են, հենց է՛ն տեղն են, ինչը դո՛ւ ես

ուզում ըլես, ու կաշիղ լավ է՛լ թերթում են, ու հենց քու տեսակետից՝ շատ էլ լավ ու շատ էլ ճիշտ են անում:

Ես չեմ հասկանում, թե «հայկական մենթալիտետ» ասածն ի՛նչ է, բայց եթե էդ տեսակ մի բան կա, հենց սա՛ է: Մեր մեծագույն մասն ասում է. «Թո ոչ մեկն անագնիվ չլի, անարդար չլի, գող ու ավազակ ու կաշառակեր չլի», ու վռագ էլ մտքում ավելացնում է. «Բացի ես»: Ա՛յ, հենց սա՛ է «հայկական մենթալիտետը», որովհետև սա փաստ է, ու սրանից տարբերը՝ չկա: Ու հենց սա՛ է մեր ամենատարածված «ազգային ավանդույթը», ուրեմն, մենք էլ հենց սա՛ ենք ուզում պահպանենք:

Ասել եմ արդեն, որ մեր հոգևոր ոլորտի վիճակը ողբալի է՝ առհասարակ: Իմ էս գրքի նախորդ գրածներից ու հետագա շարադրանքից գուցե թվա, թե մենակ մեր երգ ու պարի ու լեզվաբանության վիճակն է ողբալի: Բայց ախր չկա հոգևոր (նաև՝ նյութական) գոնե մի ոլորտ, ինչի վիճակը ողբալի չլինի: Մի երկու օրինակ էլ բերեմ:

1990 թվից իբր դեմոկրատիա ենք «հաստատում», բայց ոչ մի անգամ չմտածեցինք, որ դեմոկրատիա հաստատելը գիտություն է, ու պիտի էդ գիտությունը սովորենք, սովորենք գիտական է՛ն գրքերից ու տեսություններից, որոնք շարադրում են դեմոկրատական կարգի տեսությունը, սրա բարոյագիտությունն ու տնտեսագիտությունն ու իրավագիտությունը: Ու սրանք սովորելու փոխարեն՝ անընդհատ էս կամ էն «մոդելից» ենք խտտում, չիմանալով, որ էդ մոդելներից ոչ մեկն էլ լրիվ դեմոկրատական չի:

Մեզ ու մանավանդ մեր քաղգործիչներին թվում է, թե բավական է, որ մեր ընտրություններն արդար լինեն, ու ամեն ինչ լավ կլինի: Բայց եթե ավտոյի «մատուռը խփել ս», ու մնացած համարյա բոլոր մասերն էլ փչացած են, վարորդին ինչքան էլ փոխես, էդ վարորդին ոնց ու որտեղից էլ ընտրես, էդ ավտոն տեղից չի շարժվի:

Սովետի օրերին լիբերալիզմի տեսությունն արգելված էր, ու, օրինակ, Ալյան Մմիթի անունն էլ միայն մարքսիզմի գրքերից գիտեինք, իսկ մնացած հին ու նոր հզոր մտածույների ու սրանց գրվածքների անուններն անգամ չէինք լսել: Չէինք լսել մանավանդ՝ Ջոն Միթոնի, Ռոբերտ Ստեյնի Ջևոզի, Կառլ Մենգերի, Լյուդվիգ ֆոն Միզեսի, Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկի, Ալեքսիս դը Տոքվիլի, Լորդ Արտոնի, Կառլ Պոպերի ու սրանց հետևողների անունները, ու չէինք կարդացել սրանց գրքերը:

Սովետական զաղափարախոսությունն էս գրքերից սարսափում էր:

Սրանք հիմա մատչելի են, բայց մեր բարոյագետների, փիլիսոփաների, տնտեսագետների ու իրավագետների մեծագույն-մեծագույն մասը սրանց չի կարդացել, որովհետև անգլերեն չգիտի, իսկ կարդալու: ու մտածելու հետ ենքան էլ մի գուլիս չունի, ու եթե սրանց անունները լսել էլ է, լսել է միայն ռուսների նորագույն գրքերում սրանց մասին արված քաղվածքներից, որոնք, համալայա միշու, քամահրակալ են: Մերոնց հնացածը նորից էլի նույն մարքսիզմ-լենինիզմն է (իսարկև, Լենինի անունն աշխատում են՝ չտան, շատ է վաղկաբեկ):

Արդեն 10 տարուց ավել է, ինչ ամիսներով չարչալվել ու մի թարգմանական ծրագիր եմ կազմել, որ էս մտածողների գոնե ամենանշանավոր

դասագրքերից ու մեծագրություններից մեկ կամ մեկ ու կես տասնյակը քարզման վի հայերեն, որ մենք էլ վերջը իմանանք, որ միայն արդար ընտրություններով դեմեկրատիա չի հաստատվի:

Ու՛մ ասես, որ չդիմեցի, թե մեծահարուստներին (ընդ որում, Հայաստանի հարուստներին էլ, դոսի հարուստներին էլ), օտաջ ու հայկական ֆոնդերին, մեր կառավարության ամենախոշոր պաշտոնյաներին, կուսակցությունների ղեկավարներին, մամուլում հորվածներ գրեցի էս հեղինակներից ամենանշանավորների մասին: Ի՞զուր:

Տ. Ա. Հայելը մի լավ խոբուրդ է տալիս: Ասում է, թե որ մի լավ գործ ես արել ու քեզ փող է պետք, որ էդ գործը տեղ հասցնես, չդիմես պետական գործիչներին, չդիմես պետությանը, որովհետև ժամանակը իզուր ես ծախսելու, որովհետև դրանք քեզ կտանեն ու կբերեն, բայց երբեք չեն օգնի: Կոչմես մասնավորին: Ես էլ, տարիներով չհետևելով Հայելի էս խորհրդին, ու պետական այրերին բազմիցս դիմելուց հետո, վերջը հավատացի Հայելին ու դիմեցի մասնավորներին, բայց էլի անօգուտ:

Էլի չխրատվեցի ու մի երկու տարի առաջ դիմեցի «Բարեպաշտ սերունդ» ֆոնդին: Մի երկու ամիս էլ էստեղ գնացի ու եկա, բայց էլի իզուր: Ես ֆոնդը մի ղեկավար խորհուրդ ուներ, ինչի անդամներից մեկը մեր էսօրվա վարչապետն էր (հիմա ինքը կա՞ էդ խորհրդում, թե՛ չէ՞, չգիտեմ):

Ի՛նձ փոխանցեցին, թե պարոն վարչապետն ասել է. «Պետք չի, որ սրանք քարզման վե՛ն: Ավելի լավ է, թող էս գրքերի առաջաբանները քարզմանի ու մի գիրք կազմի», բայց էլ էլ չօգնեցին, որ անեն: Ու նորից թե՛ իմ գրածները մնացին անտիպ, թե՛ տնտեսագիտության ու իրավագիտության իմ քարզմանական ծրագիրը մնաց դարակա դրած:

(Մեր վարչապետի ելույթներից աներկբա երևում է, որ մեծարդ պարունը չի կարդացել՝ ո՛չ Մենգերին, ո՛չ Միզեսին, ո՛չ Հայելին, ոչ էլ Հյուսիսն ու Ադամ Սմիթին, որովհետև որ կարդացած լինեք, սրանց ասածներին հակառակ բաներ չէր ասի ու չէր անի: Օրինակ, չէր ասի, թե գները ղեկավարելը հնարավոր է, որովհետև ողջ դասական ու մեղադասական տնտեսագիտությունն ասում է, թե մարդկային ծրագրով գների ղեկավարությունն անհնար է: Բայց մեծարդ պարունին պետք էր, որ գները ղեկավարեք: Արդյունքն էսօր բոլորս ենք տեսնում):

Ի՛մ գործերը կըլ ջհանդամը, բայց էսօր մեր տնտեսագիտության դասագրքերը Բեյնզի ու իր հետևորդ մակրոտնտեսագետների գրածներն են, է՛ն մակրոտնտեսագետների, ում խորհուրդներն ու ծրագրերն էս սարսափելի ճգնաժամի պատճառը դարձան, ու ֆոն Հայելի ասելով՝ կործանելու են ողջ քաղաքակրթությունը, եթե դրանցից չիրաժարվեն, ու ողջ գնդով մեկ չիրագործեն լիբերալիզմի ծրագիրը:

Մեր փիլիսոփայության դասագրքերը նորից փառաբանում են Պլատոնի ու Հեգելի ու սրանց հետևորդների գործերը, չնայած Կառլ Պոպերը ցույց է տվել, որ հենց սրանց ուսմունքներից են ծնվել տոտալիտարիստական բոլոր «տեսությունները», սոցիալիստական ու նացիստական բոլոր երանգի գաղափարախոսությունները:

Ու հայերն էսօր կործանարար տեսություններ են սովորում:

Մենք մեր անցյալի մասին մի վիթխարի, բայց սուտ լեզունը ենք հորինել ու հավետով էլ հավատում ենք էդ լեզունդին, ու հետո էլ զարմանում ենք, որ ուրիշներն էդ ստերին չեն հավատում, ու լավագույնս, ներողամտությամբ են մայում մեր էս մանկամիտ արարքին, որովհետև միայն մանուկն է, ով անընդհատ գլուխը գովալով՝ իր մասին սուտումուտ բաներ է հորինում:

Մենք, օրինակ, հայտարարում ենք, թե մեր քատրոնը 2000 տարեկան է, բայց սա սուտ է: Միակ պատմական վկայությունը, որ կա մեր իբր եղած քատրոնի մասին, Պլուտարքոսի վկայությունն է: Բայց երբ բացում ես Պլուտարքոսի Համեմատական կենսագրությունները, տեսնում ես, որ մեր քատրոնի մասին ոչ մի բան չկա գրած: Պլուտարքոսը հետևյալ բանն է պատմում:

Երբ հռոմեացի Կրասոսը հարձակվում է Պարսկաստանի վրա, որ նվաճի ու հետո էլ՝ վիթխարի թալան անի (Կրասոսն ահավոր ազահ էր), պարսիկները ջարդում են Կրասոսի բանակն ու Կրասոսին էլ բռնում ու գլուխը կտրում են, ու բերում են տալիս պարսից արքայից արքային, ով էդ ժամանակ Հայաստանում հյուր էր իր զարմիկին՝ հայ արքային: Մեր «հայ» Արտավազդ արքան էլ հունասեր էր ու Հունաստանում մեծացած լինելով՝ լավ հունարեն գիտեր:

Կրասոսի գլուխը բերելու օրը Արտավազդի պալատում «գրական երեկո» է լինում. մի հունարեն վարժ կարդացող Եվրիպիդեսի Բաքոստիկներն է հունարենով կարդալիս լինում:

Բաքոստիկների մեջ մի կտոր կա, ինչը նկարագրում է Բաքոսի անառակ տոնը, երբ հույն կանայք, մերկ ու հերարձակ, վազվզում են սար ու դաշտերով ու ընկնում են վարքի գազանների հետևը: Սրանց մեջ է լինում նաև տեղի քազուխին, ում ամուսինը չի հավատում Բաքոսի պաշտամունքին ու միշտ կնոջը ձեռ անելիս է լինում, որ սա էդ տեսակ յատարկ բաների է հավատում:

Ու իբր Բաքոս աստվածն էս քազուխու խելքն առնում է, ու էս քազուխին, երբ դաշտերում համդիպում է իր ամուսնուն ու կարծում է, թե ամուսինը վայրի խոզ է, սպանում է ամուսնուն, ու գլուխը կտրում բերում է տուն: Ու տանը ամուսնու գլուխը, մազերից բռնած, բարձրացնում է իր գլխից վեր ու հպարտությամբ ասում է իր հարազատներին. «Տեսեք, թե ի՞նչ վայրի խոզ եմ սպանել»: Ու երբ պալատական կարդացողը հասնում է Եվրիպիդեսի գրածի էս կտորին. Կրասոսի գլուխ տալիս են ձեռը, ու սա, Կրասոսի գլուխը մազերից բռնած է կարդում (հունարենով) էս հատվածը. «Տեսեք, թե ի՞նչ վայրի խոզ եմ սպանել»:

Սա է մեր քատրոնի մասին եղած միակ վկայությունը:

Ով գու՛ն մի քիչ ծանոթ է հույն քատրոնի պատմությանը, գիտի Պանաթենական քատրեական վիթխարի մրցումների մասին, որ չորս տարին մեկ էին, ու ինչին մասնակցում էր երեք ողբերգություն ու մի կոմեդիա, ու ինչը տևում էր մի քանի օր, ու ողջ ժողովուրդն էլ փողով էր ներս մտնում քատրոն. ով գիտի, որ մրցումներին հաղթող պոետն էլ էնքան փող էր ստանում, որ հնար ունենար նորից չորս տարի ստեղծագործելու, որ մյուս

անգամ էլ մասնակցեր դրանց: Ով սրանք գիտի, երբեք չի ասի, թե մենք էլ ենք քատրոն ունեցել, որովհետև չենք ունեցել:

Որովհետև եղ օրերին հայերեն գիր անգամ չենք ունեցել, որ էսբիլեսի, Սոփոկլեսի, Եվրիպիդեսի, Արիստոփանեսի պես քատերգություն գրեինք: Ու եթե հայերն էլ են քատրոն ունեցել, ո՞ր են մեր պիեսներ: Որ սրանք ասես մեր հայագովներին, կասեն. «Քրիստոնեությունը ոչնչացրել է մեր հեթանոսական ողջ կուլտուրան»: Բայց եղ ո՞նց է, որ եղ նույն քրիստոնեությունը չի ոչնչացրել հույների ու հռոմեացիների կուլտուրան:

Բայց մեր հայագովներին չես համոզի, որովհետև դրանք նախօրոք գիտեն, թե ինչ են ապացուցելու, որովհետև գիտական լուրջ փաստարկները դրանց միայն խանգարում են, որ իրենց իսկ ուզած հայագովական «թեզերը» պաշտպանեն:

Ու թե սա՛ չի լեզենդը, բա ի՞նչն է:

Մեր ազգագրությունն Արեղյանից հետո որևէ լուրջ քայլ չի արել: Արեղյանը ծանոթ չէր համեմատական ազգագրության հիմնադիր Ջեյմզ Ջորջ Ֆրեզերի գործերին, որովհետև նստած էր գիտական մի կորած-մոլորած գավառական կենտրոնում: Հետո էլ բուլղարների «երկաթյա վարագույրը» չէր թողնում, որ դրանք կարդա ու յուրացնի: Այնուամենայնիվ, Արեղյանը վիթխարի գործ արեց ազգագրությունից:

Էսօրվա մեր ազգագրագետներին ոչինչ չի խանգարում, որ յուրացնեն սրանք ու ուրիշ նորագույն տեսությունները, ու Արեղյանի (նաև այլոց) կուտակած փաստական նյութը գիտության նորագույն մեթոդներով վերլուծեն: Բայց սրանք նորից կպել են իրենց համարյա տմաբույս «տեսություններին», ու սրանց արածը պարզունակ հավաքչությունից համարյա դենը չի:

Էս գրքի երկրորդ հրատարակությունը պատրաստելիս երկու «նշանավոր» բան պատահեց Հայաստանում, ու սրանք էնքան բնութագրական են մեր իրականության համար, էնքան ողբերգական են, ու էնքան լավ են հիմնավորում իմ էս գրքի մանավանդ երրորդ մասը, որ արոշեցի պատմեմ դրանք:

Սկսեմ առաջինից:

Ուրեմն, մարտի սկզբին, մեր Սփյուռքի գործերով նախարարն ընդունել է մի իբր սփյուռքահայ 29-ամյա ինքնակոչ «հանճարի», ով, ինչպես հետո պառզվեց, մեր Մարտունու շրջանից էր՝ Գեղիովիտ գյուղից: Ու մեծարգո նախարարը չէր իմացել, որ արդեն փետրվարի սկզբներին մի խումբ ուսանող ու աշխարհապետ մերկացրել է էս ինքնակոչ «հանճարին»:

Էս նախարարի տեղակալն էլ ֆիզիկոս է ու մեր Ակադեմիայի թղթակից անդամ, իսկ ինքը, նախարարը, կիբեռնետիկայի ու իրավաբանության ֆակուլտետներն է ավարտել ու իրավաբանության դոկտոր-պրոֆեսոր (այսինչն, լուրջ «գիտնաչափ է», բայց ինչ որակի, հիմա կիմամաք): Տրկին նախարարն իր տեղակալի կարծիքն էս տղայի մասին չի հարցրել, երևի որ էս «հանճարին» հայտնագործելու փառքը լրիվ իրենն էր լինի:

Ընդունել է, ուրախացած, որ մի նորահայտ հայ Գալիլեյ է հայտնաբերել, ու հետո էլ էս ընդունելությունը նկարել է տվել ու դա տեղադրել է նա-

խարարության վերկայքում, որ նայողներն էլ հիանան ու զարմանան: Ու խայտառակ է եղել՝ ողջ աշխարհով մեկ:

Որ էս դեպքերից անտեղյակ ընթերցողն իմանա, թե բանն ինչ է, էս ջահել «հանճարի» ասածներից մի երկու բան պատմեմ:

Ուրեմն, էս տղան շատ անշնորհքավարի կեղծած մեկ-երկու փաստաբույր է ցույց տալիս ու ասում է, թե ինքը «մի նոր մոլորակ է հայտնագործել, X-մոլորակը, որը Պլուտոնի ու Նեպտունի արանքն է, ու վրան էլ կյանք կա»: Ասում է, թե իբր ինքը, Պուտինի հանճարարականով, ավարտել է Մոսկվայի պետական համալսարանն ու դարձել է «դոկտոր մեդիցինի ու պաթոլոգիայի կասմանաֆոսիկի ու աերոնաֆոսիկի»: Որ ինքը երազին տեսել է Գալիլեյին ու Գալիլեյն իրեն ասել է, թե «ես դու ես, դու ես ես»: (Էս բաները հեռացույցով ե՛ս եմ լսել):

Որ իբր ինքը «սպուտնիկների համար արևային մարտկոցներ է սարքում, ամեն թեղ՝ 1000 կմ» (այսինքն, համարյա Լուսնի չափերի): Որ իբր ինքը NASA-ի հետ պայմանագիր ունի, ու որ NASA-ն իրեն պիտի 2016 թվին կոսմոս թոցնի, բայց «NASA-ն իրեն ասել ա, թե ցեղդ շարունակի՛ նոր»: Որ Նյուտոնը իբր սխալվել է ու «ույսի ըսկոռոստը 500000 կիլոմետր ա սեկունդում՝ վարկյանում»: Որ իբր ինքը «մի 200000 տեղանոց սամալյոտ ա սարքում, ու հմի մատուցի վրա յա աշխատում», ևն, ևն:

Չնայած էս ասածների երազային հեքիաթայնությունն ակնհայտ է, բայց վերջինի, էս «սամալյոտի» մասին՝ մի երկու բան պիտի ասեմ, որ ընդհանրապես իմանա, թե մեծարգո գիտնական տիկին նախարարը ինչ կարգի բաների հեքիաթայնությունը չի նկատել:

Նախ, աշխարհի էն ո՞ր ծայրից է, որ պիտի 200000 մարդ տեղափոխվի մի ուրիշ տեղ: (Իմֆիզիայոց, էս «օդանավը» հինգ անգամով կտեղափոխվեր Երևանի ողջ բնակչությունը): Երկրորդ, էսօրվա օդանավերը մոտ 200 մարդ են տանում, ու դրանց երկարությունն էլ մոտ 100 մ է: 200000 տեղանոց օդանավը պիտի որ 1000 անգամ երկար լինի, այսինքն, պիտի մոտ 100 կիլոմետր երկար լինի: 100 կիլոմետրը Հայաստանի «լեցնե՛» է: Ուրեմն, էս «սամալյոտի» օդակայանը պիտի մի Հայաստանի չափ լինի, էլ չեմ ասում թռիչքուղու չափերի ու մնացած բաների մասին: Բա՛:

Ու էս ֆանտաստիկ հեքիաթներին հավատացողը «գիտնական» դոկտոր-պրոֆեսոր է, ու ՀՀ նախարար. բազում շքանշանի տեր, ԵՊՀ-ի ու մի քանի ուրիշ բուհի խորհրդի անդամ, ևն, ևն: Բա գիտական տիտղոս չունեցող նախարարներն ինչ պիտի լինեն: Ոնց որ ասում են՝ No comment: Բա ողբերգություն չի՞, որ մեր իշխանավորների մակարդակը սա՛ է: Բա ողբերգություն չի՞, որ մեր էս ողորմելի մամուլն ու հեռացույցը մի երկու շաբաթ էս պատմությունն էր մեծագույն հրճվանքով ծածծում ու վայելում, սուրանց նկատելու սեփական վրթխարի «անտեղյակության», անճաշակության ու գավառայնության չափը:

Երկրորդ պատմելիքս էլ մեր «սզգային» երգի բնագավառից է: Էս տարվա սկզբներին մի ջահել «կոմպոզիտոր» հայտարարեց, թե աղբերջանական երգ ու երաժշտությունն իրեն ու իր ընկեր-երաժիշտներին հեզնհարազատ է, ու որ հայ ժողովրդական երաժշտության արմատներն Ա-



դրբեջանից են: Աղբրեջանական մամուլն էլ ուրախ-ուրախ կրկնեց սա, իսկ Հայաստանի «ազգի փրկիչներն» էլ թունդ գայրացան ու հարձակվեցին էս տղայի վրա, ու մեր ողջ մամուլով մեկ ուղղակի զգգզեցին ու դավաճան հայտարարեցին սրան: Դատափետողներից մեկն էլ, օրինակ, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանն էր:

Հիմա մի քանի հարց ունեն տալու էս տղային դատափետողներին: Եթե էս ցանկն անկեղծ չլիներ, ձեր դուրը կգա՞ր: Եթե մարդը սուտ չի ասում ու միշտ է ճիշտն ասում, միշտ է անկեղծ, վա՞նք քան է անում: Սուտ ասելը լա՞վ քան է: Մուտասանը հարգանքի արժանի՞ է:

Եթե աղբրեջանցիները կամ թուրքերը, կամ էլ ուրիշները սուտ են ասում, մենք է՞լ պիտի ազգովի սուտ ասենք: Ազգովի սուտասանությունը սուտասանություն չի՞:

Ուրեմն, եթե հնարավոր է, որ աղբրեջանցիներն ու թուրքերը, կամ էլ ուրիշները «օգտվեն» մեր ասած ճիշտ բաներից, այսինքն, եթե հնարավոր է, որ մեր ասած ճիշտ բաները ծոմեն ու մեր դեմ շուտ տան, մենք պիտի անընդհատ վախենա՞նք ու մեր մտածածը չասե՞նք, որ հանկարծ իրենք չծոմեն՞ դրանք: Սա ի՞նչ մտածողություն է: Բա սա քաղաքակիրթ ու ազնիվ մարդու մտածողություն է: Ազգովի դառնանք անազնի՞վ, որ հանկարծ աղբրեջանցիներն ու թուրքերը չօգտվե՞ն մեր ազնվությունից:

Ասվեց արդեն, թե թուրքերն ասում են, թե իրենք խեթերի հետնորդներն են: Խեթերին էլ, արդեն Հոմերոսի օրերին, է՛ն տեսակ էին մռռացել, որ Իլիականի մեջ ակնարկ անգամ չկա, որ Տրոյական պատերազմի պատմությունը խեթերի ու հույների կռիվների հուշն է: Խեթերի մասին իմացան 20-րդ դարում միայն, պեղումներից ու խեթերի գիրը վերծանելուց հետո:

Հիմա ի՞նչ, Աշխարհի գրագետները կհավատա՞ն, որ թուրքերը խեթերի հետնորդներն են: Իհարկե, չէ: Ո՞վ չգիտի, որ թուրքերն էս կողմերն ու Եվրոպա ընդամենը մի 300 տարի առաջ են եկել: Բայց որ թուրքերն էս տեսակ սուտ շատ են ասում, մենք է՞լ պիտի Պարիս Հերուլմու պոզ ու պոչավոր ստերին հավատանք ու ասենք, որ հայերն էս տարածքում են եղել 40000 տարի առաջ: Ուրեմն, գիտությունը բոլորովին կարևոր չի՞:

Բա ծիծաղելի ու ողորմելի չե՞նք լինի, եթե թուրքերի կամ էլ ուրիշների հետ սառի մրցում մտնենք: Ու եթե մենք էլ թուրքերի պես անընդհատ սուտ ասենք, էլ ինչո՞վ ենք թուրքերից տարբերվելու:

Ադուֆ Հիտլերի օրերին (ավելի ճիշտ, 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1945 թվի ամառը) գերմանացիք հայտարարեցին, թե իրենք արիացի են, թե գերմանական ազգը գերիշխող ազգ է, թե պիտի մնացած ազգերը (բացի իրենց դուշմանիկները) իրենց ստրուկները լինեն: Այսինքն, գերմանացիք ազգովի սուտ ասեցին, ու է՛ն էլ՝ աշխարհով մեկ: Քանի՞ տարի դիմացավ էս սուտը, ու ի՞նչ գնով:

Էս սուտը դիմացավ ընդամենը 12 տարի, ու էս ստի պատճառով գերմանացիների ողջ երկիրը տափասողաղ եղավ, քաղաքները հողին հավասարվեցին, Գերմանիայի կեսը Սովետը զավթեց, առողջամիս քաղաքացիները կամ կոտորվեցին, կամ փախան գնացին ամերիկացիները, ու մի

քանի տասնյակ միլիոն էլ գերմանացի կոտորվեց: Ա՛յ, սա՛ է ազգովի սուտ ասելու գինը:

Ու եթե էս գրքի առաջին մասը կարդացողը մինչև հիմա գլխի չի ընկել, թող իմանա, որ ՀԱՅԵՐԻ ԷՍՕՐՎԱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՆ ՈՒ ՊԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՉԵՆ: ԻՄԿ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՆ ՈՒ ՊԱՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՉԵՆ: Սա դառը ճշմարտություն է, բայց ճշմարտություն է:

Ու թող իմանա, որ մեր իրոք ժողովրդական (այսինքն, սիրված ու լսվող) աշխական կամ գուսանական երժշտությունը, ինչպես Կոմիտասն է ասում (տես էս գրքի առաջին մասը), լրիվ է փոխառյալ: Չեմ ասում, թե սրանք բոլորն են անոթակ: Մրանց մեջ շատ երգ կա, որ լավն է, ու ե՛ս էլ եմ սիրում ու լսում: Օրինակ, Ջիվանու կամ Մայաթ-Նովայի երգերը:

(Հենց ինքը՝ Կոմիտասը, մտերիմ էր Ջիվանու հետ, ու էջմիածնում մի անգամ Ջիվանու համերգն է կազմակերպել: Ջիվանու երգերի մեջ կան երգեր, որ մեր շարականների մոտիվներով են, իհարկե, աղավաղ): Հա՛, էս երգերը ժողովրդական են: Բայց ազգային չե՛ն, բնիկ չե՛ն, այսինքն, հայերի ստեղծածը չե՛ն:

Օրինակ, Մայաթ-Նովայի ժողովրդական երգերից ո՛չ մեկն ազգային չի, ու իր բայր երգերի եղանակներն են փոխ առած: Պահպանվել է Մայաթ-Նովայի տետրը, ինչը մի քանի անգամ հրատարակվել է, ու ինչի մեջ ամեն մի երգի տակը գրված է, թե էլ երգը ո՞ր բայաթու կամ մուղամի կամ ո՞ր աշղի ո՞ր մի երգի եղանակով պիտի երգվի:

Է՛ն օրերին էս տարծքում նուտա իմացող չկար, ու սովորական քան էր, որ երգողները քառե՞րը հորինեին ու դրանք հարմարեին արդեն հայտնի արևելյան երգերի եղանակներին:

Բոլորն էին Լապեա անում, ու Մայաթ-Նովան էլ՝ հետները, որովհետև սա ընդունված մեթոդ էր, ու միակ մեթոդն էր: Որ Մայաթ-Նովային մեկնումեկն ասեր, թե ինքը՝ Մայաթ-Նովան, կոմպոզիտոր է, Մայաթ-Նովան երևի շատ զարմանար, եթե իհարկե՝ իմանար, թե կոմպոզիտորն ի՞նչ է:

Մայաթ-Նովան միայն ոտանավոր է գրել, ու դրանք մեր իրականության համար քարն ու նոր ու կարևոր են եղել, չնայած իրենց որակով իսկի էլ համեմատելի չեն նրել (ու չեն) իրենից համարյա մի դար առաջ գրած Օեքսալիի ու Միլթոնի ոտանավորների հետ: Բայց մենք, առանց չափը պահելու, փառաբանում ու երկինք ենք հասցնում սրանք:

Փոխառությունն էլ թերևս պարտադիր է ու անխուսափ, բայց ո՛չ քո ազգային չքնաղ (ու ողջ աշխարհում հույժ գնահատելի) երգ ու պարը դեմ շարունակու ու լրիվ մոտանալու գնով:

Ու որ էսօր մեր երգ ու պարը համարյա լրիվ է փոխառյալ, մեղավորը մենք ենք, ոչ թե աղբրեջանցիներն ու թուրքերը: (Մրանք երգ ու պար համարյա չունեին ու փոխ առան, որ ունենան. բա ի՞նչ անեին: Բայց մե՞նք):

Ու մեղավորներից մեկն էլ, օրինակ, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանն է, ով ժողովրդին չի բացատրում, որ մեր երգ ու պարի վիճակը սա՛ է: Գգիտի՞, որ վիճակը սա է՝ Շատ լավ էլ գիտի, բայց չի ասում:

Չի ասում, որովհետև՝ հենց ասեց ու բացատրեց, որ մեր ազգային երգը միայն էսօրվա «կոմիտասյան» կոչվածն է, ինչն էլ ազգովի չենք երգում ու

չենք լսում, մարդիկ գլխի կրնկնեն, որ եենց ի՞ր, եենց Ռոբերտ Ամիրխան-  
յանի՝ երգերից ո՛չ մեկն ազգային երգի ավանդույթներով չի գրած, չնայած  
գուցե ժողովրդական է, ու գուցե ժողովուրդը հավանում, երգում ու լսում է:

Հենց էս նույն պատճառով էլ՝ ո՛չ մեր «ազգային» կոնսերվատորիայի,  
ոչ էլ մեր «ազգային» օպերայի գործիչներից ոչ մեկը չասաց, թե ախր էս  
տղան ոնց որ թե ճիշտ բան է ասում, թե ախր մեր էսօրվա ժողովրդական  
երգ ու պարը, համարյա լրիվ, կողքի ժողովուրդներից ենք փոխ առել,  
մենք էլ աղբրեջանցիներն էլ:

Չասաց, որովհետև «բա որ աղբրեջանցիներն ու թուրքերն իմանա՞ն»:  
Ասող էլ լինեք, վազ էլ ասողին դավաճան էին հայտարարելու, ու ասելու  
էին, թե «աս մեր երգն ու պարը տալիս է մեր թշնամիներին»: Ոնց որ թե  
թշնամիները, կան էլ աշխարհի երաժշտագետները էնքան տգետ են, որ  
թացն ու չորը չեն ջոկում իրարից:

Իմ էս գրքիս մեջ գրած դառը բաները համարյա ամեն օր են հաստատ-  
վում. ասածս ողբերգական բաները, համարյա ամեն օր, մեր հեռացույցով,  
էսպես՝ թե էնպես, ապացուցվում են: Ու երբ ասում են, թե չկա մի ոլորտ,  
չկա մի բնագավառ, որտեղ գործերի վիճակը ողբերգական չլինի, հազար  
ափսոս, որ ճիշտ են ասում:

Ու ամենաողբերգականն էն է, որ էսօր, շատ անգամ, մեր ազգային եր-  
գերը կամ փողը քրդերը կամ զազաներն ու թուրքերն են պահում ու երգում  
ու սիրում: Ես ինքս էդ երգերից մեկն ունեմ, ինչը բուրդ կլինեմ է երգում, թե-  
թևակի քրդական նախշով, բայց մնացած հայկական ամեն ինչը պահած:

Ուրիշները գիտեն, որ մեր միայն ազգային երգերն են չքնաղ,  
իսկ էսօրվա ժողովրդականները սրանց չեն հասնի: Մենք՝ չգիտենք:  
Էս խոսակցությունը շատ է երկար, ու շատ է տխուր: Ու սրա հետ էլ՝  
մեր էսօրվա հայ իրականությունն է տխուր: Տխուր է ու ողբերգական:  
Բայց ավելի լավ է, հիմա վերջացնեն:

Որովհետև էս խոսակցության ժամանակը գուցե չի հասել: Ու գուցե եր-  
բեք էլ չհասնի... Բայց երբ էսքան բան գիտես, էլ ո՞նց չնսածես, որ

Մաշտոցի, Գալուստ Տեր-Սկրտչյանի, Կոմիտասի, Աբեղյանի, Աբու-  
յանի, Թումանյանի, Թորոս Թորամանյանի, Երվանդ Օտյանի, Վիկտոր  
Համբարձումյանի, Սերգեյ Սերգեյանի, Արտաշես Շահինյանի ու սրանց  
պես իրոք՝ կարևոր մարդկանց արածների: Բովանդակությունը մեզ պետք  
չի: Որ պետք լինեք, էդ ասածներով կվարվեիք, ու դրանցի՛ց կօգտվեիք,  
ոչ թե չափի գզացումը կորցրած՝ դրանք հերթով կավիրեիք ու սուտ-սուտ  
լեզենդներ կհորինեիք:

Մեզ բովանդակություն ու օրակ պետք չի:  
Մեզ պետք պետք է միայն ձև, պետք են միայն սրանց անունները,  
որ ուրիշների մոտ լուսազանանք ու գլուխ գովենք:

Ու գլխի էլ չենք, որ էսպես վարվելով,  
Չապենի ասածի պես,  
վաշկաբեկում են թե՛ մեզ, թե՛ մեր էրոք վսեմ նախնիներին,  
ու քիչ-քիչ անդունդն ենք գործում:  
Հազար ափսոս:

ԻՆՉ Ե ՀԱՅԵՐԵՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տղամարտի միակ գիտությունն է:  
Միջբաժանայի 2-րդ օրենքի 1-ին հեռաձայնը

Մեր էսօրվա լեզվաբանները գիտե՞ն, թե ի՞նչ է հայերենի իմացությունն  
ու ի՞նչ է հայերենը: Մրանից արդեն խոսել են մի ուրիշ տեղ (տես իմ  
*Թարգմանելու արվեստը*), ու ցույց են տվել, որ մեր լեզվաբանները, հա-  
մարյա միշտ, չգիտեն, թե ի՞նչ է գրական ոճերի ու իսկական՝ կենդանի լեզ-  
վի տարբերությունը, չգիտեն, թե ի՞նչ է լեզվի իմացությունը ևն: Մրա հա-  
մար էլ էնտեղ տված հարցերիս մի մասն էստեղ էլ են տալիս:

• Արդյոք լեզո՞ւ է «գրական լեզու» կոչվածը, թե՞ անհատական ոճերի  
կույտ, ու ո՞վ ունակություն կամ իրավունք ունի հսկելու կամ կառավարելու  
այդ «լեզուն», այսինքն, այդ անհատական ոճերը:

• Եթե լեզուն միայն «գրական լեզուն է, այսինքն, միայն գրողների՝  
ստեղծած լեզուն է, Մշտոցից առաջ հայերը հա՞մը էին, որովհետև Մաշ-  
տոցից առաջ ո՛չ գիր ունեինք, ո՛չ գրող, ու ոչ էլ՝ դպրոց:

• Կա՞ արդյոք որևէ կենդանի, այսինքն, «ոչ մաթեմատիկական լե-  
զուն» հսկելու կամ կառավարելու որևէ հնարավորություն:

• Ինչո՞ւ էր Հովհաննես Թումանյանը համոզված, որ հայերեն գրա-  
կան լեզուն ո՛չ միայն ոչ մի բանի պետք չի, այլև վնասակար է, ու որ  
դրանից պիտի անպայման հրաժարվենք:

• Եթե հայերը հայերեն սխալ են խոսում (ինչպես պնդում են մեր գրա-  
գետները), բա աշխարհում ո՞վ է ճիշտ հայերենով խոսում:

• Եթե հայերը սխալ հայերենով են խոսում (ինչպես որ պնդում են  
շատ շատերը), բա հայերն առհասարակ ումի՞ց են հայերենը սովորել:

• Եթե հայերը հայերեն սխալ են խոսում (ինչպես որ պնդում են շատ  
շատերը), ուրե՞նց, ի՞նչ է, հայերը հայ չե՞ն, որովհետև որևէ լեզվով միայն  
այլազգիներն են սխալ խոսում:

• Հայերը ե՞րբ են ճիշտ հայերենով խոսել, քանզի Մաշտոցից ընդ-  
մենը երկու-երեք տասնյակ տարի հետո մեր հունարան հեղինակներն էլ  
էին պնդում, թե «հայերը խոսում են ռանիկ ու գարշելի լեզվով»:

• Ո՞նց է հնարավոր, որ 16-17 տարեկան հայ ջահելը հայերենի քննու-  
թյունից զրո բալ առանա: Ի՞նչ է, էդ ջահել հայը հայ չի՞:

• Թե որ հայերենի քննությունից զրո բալ ստացած էս 16-17 տարե-  
կան հայ ջահելն էնքան անզլերեն իմանար, ինչքան որ հայերեն գիտի,  
չէի՞նք ասի, որ էդ ջահելը հրաշալի անզլերեն գիտի: Գէի՞նք ասի, թե էլ  
ջահելը անզլիացու՞ պես անզլերեն գիտի: Անզլիացու պես անզլերեն իմա-  
նալուց ավելի լավ անզլերեն իմանալ կա՞: Պարզ է, որ չկա: Ու եթե այս-

պես է, եղ ո՞նց է, որ հայի պես հայերեն իմանալուց էլ ավելի լավ հայերեն իմանալ կա: Էդ հայերենը ո՞րն է, եղ ավելի լավ հայերենը: Ուրեմն, ի՞նչ հայերենի իմացությունն ինչ-որ մի արտառոց ու գերբնական բա՞ն է, որ միայն մեր լեզվաբանները գիտեն:

• Եթե 16-17 տարեկան հայ ջահելը ենթան ընդունակություն ունի, որ յուրացրել է դպրոցական մաթեմատիկայի ու ֆիզիկայի պես բարդ գիտություններն ու ընդունվել է համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետները, էլ ինչո՞ւ է էդ ջահելը ցածր կուրսերում նորից հայերեն անցնում: Ի՞նչ է, հայ ջահելն ենթա՞ն բուք է, որ դարձել է 16-17 տարեկան ու չի կարացել իր իսկ մայրենի լեզուն սովորի՞:

• Հայտնի է, որ *լեզուն (ու նույնիսկ՝ գրական ոճերը) չի ենթարկվում անհատի կամ անհատների որևէ խմբի գիտակցական ծրագրին* (տես Հր. Աճառյան, ԼԶԷ, հատ 1-ին), այսինքն, լեզուն (ու նույնիսկ՝ գրական ոճերը) կառավարելու կամ հսկելու ոչ մի ծրագիրը կամ միջոցն անայսման չի աշխատի ու հենց սկզբից դատապարտված է անհաջողության: Բա ինչո՞ւ են մեր բոլոր-բոլոր լեզվաբանները (Լեզվի տեսչությունն ու Լեզվի բարձրագույն խորհուրդը), քափ ու քրտինք մտած, աշխատում՝ հսկեն ու կառավարեն հայերեն լեզուն:

Հայերենը հայերի լեզուն է, սա անվիճելի է: Հայերեն են հայերենի բոլոր վիճակներն ու բոլոր բարբառները, սա էլ է անվիճելի: Ուրեմն էսօրվա հայերենի իմացությունը՝ հայերենի էսօրվա բարբառներից մեկնումեկի գերազանց իմացությունն է:

Էսօրվա հայերենի բոլոր կրողներն էլ հայերեն գիտեն, որովհետև հայ են: Սա էլ է անվիճելի:

Տվյալ բարբառի գերազանց իմացողը՝ էդ բարբառով գերազանց պատմողն է, օրինակ, Արուսյանը, Պռոշյանը, Թումանյանը, Թումանյանի հեքուներից՝ Նետսն, Վրթ. Փափագյանը, Գ. Գեմիրճյանը (բացառյալ՝ Վարդանանքի լեզուն), ու բոլոր էն ասացողները, ումից որ գրի են առել մեր էպոսն ու հեքիաթները, ու մեկ էլ մի քանի հոգի:

Հնարավոր է, որ հայը նույնիսկ տառաճանաչ չլինի, բայց հայերենը գիլազանց իմանա, էլի, օրինակ, Նետսն կամ մեր ասացողները:

Գրական ոճերն իսկական հայերենից շատ են շեղված, ու շատ անգամ համարյա հայերեն չեն:

Սրա համար էլ՝ գրական որևէ ոճի իմացությունը, կամ «ճիս» բառապաշարը, երբեք էլ հայերենի գերազանց իմացության նշան չի:

Հայերենի իմացությունը ոչ մի կապ չունի բառապաշարի ու, ուղղագրական կամ կետադրական կանոնների իմացության հետ:

Հայաստանում հայերենի բոլոր ընկերություններին միշտ էլ ստուգում են գրական շտամպի, ուղղագրական ու կետադրական կանոնների ու մեկ էլ բառապաշարի իմացությունը, ինչը, ըստ էության, առնչություն չունի հայերենի իմացության հետ:

## ՄԱՀՍԱՆՍԱՆ ՇՐՋԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՅՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գիտության ուսումնասիրելիք օբյեկտներից ոմանք, օրինակ, լեզուն, հաճախ չեն ենթարկվում ձևական (դասական) տրամաբանության պահանջներին:

Այնուամենայնիվ, ինքը՝ *գիտությունը, պարտադիր, պիտի լինի տրամաբանական, ու անհեթեթություն չպիտի պարունակի:*

Գիտության անհակասականության էս համընդհանուր ու կտրական պահանջն ապահովվում է տվյալ գիտության հիմքում դրած արքիոմների անհակասականությամբ: Մակայն գիտությունը, լինի դա մաթեմատիկա, բնագիտություն, թե հումանիտարիստիկա (հասարակագիտություն, լեզվաբանություն ևն), անհնար է առանց սահմանումների (Definition = Def.):

Բայց, հնարավոր է, որ սահմանումներն էլ հակասությունների աղբյուր լինեն: Ի՞նչ է սահմանումը:

Def 1. Սահմանումը «երկար բանը մեկ-երկու բառով կարճ ասող» պայմանավորվածությունն է (ասույթը, նախադասությունը): Սահմանումով օբյեկտների մի «այն» բազմությունից առանձնացնում են (սահման են քաշում, կասեր Դավիթ Անհաղթը) այդ օբյեկտների այնպիսի մի ենթաբազմությունը, ինչի բոլոր տարրերն ունեն մնացած (չառանձնացրած) տարրերի բոլոր հատկությունները, բայց օժտված են առնվազն մեկ այլ հատկությամբ, ինչը չունի չառանձնացրածներից ոչ մեկը:

Օրինակ, Def 2. «Խարթության միջի ընդհանուր կետ չունեցող ուղիղներին ասում են զուգահեռ ուղիղներ»:

Էս սահմանումը հարթության բոլոր ուղիղների բազմությունը տրոհում է՝ զուգահեռ ու ոչ զուգահեռ ուղիղների: Ենթաբազմությունների: Ու սա, իհարկե, «Խարթության միջի ընդհանուր կետ չունեցող ուղիղներ» «երկար բանին» կարճ անուն է տալիս՝ «զուգահեռ ուղիղներ» կամ «զուգահեռներ» անունը:

## ՇՐՋԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱԽԻՆ

Տրամաբանական հակասություններն անխուսափելի են, եթե սահմանումը շրջելի (փոխադարձելի, անդադարձ, *reciprocatve*) չի:

Def 3. Սահմանումը շրջելի է, եթե սահմանող ասույթի (նախադասության) բառ-ենթակայի ու բառ-ստորոգյալի (կամ՝ սրա խմբի) տեղերը փո-

խելիս՝ սահմանվածի էությունը չի փոխվում, այսինքն, չառանձնացրած տարրերից ոչ մեկը չի ընդգրկվում առանձնացրածների մեջ, ու առանձնացրած ու չառանձնացրած բազմություններն իրար չեն «խառնվում»:

Էս սահմանումը հատակելու համար նախ պիտի ասվի, թե ինչ են՝ բայը, բառ-ենթական ու բառ-ստորոգյալը: Բերենք բայի նկարագրական (descriptive) սահմանումը [տես 1-5-ը]:

**Def 4.** Բայ են միայն ու միայն է՛ն բառերը, որոնք օժտված են՝ (բայ)-իմաստով, դեմքի, թվի ու ժամանակի գաղափարներով, ու իրենց (բայ)-իմաստը վերագրում են (ստորոգում են) իրենց իսկ դեմքին, արտահայտելով թվի ու ժամանակի գաղափարները:

Օրինակ, *խաղաց* բառը բայ է, որովհետև իր (բայ)իմաստը (խաղալու գաղափարը) վերագրում է իր իսկ 3-րդ դեմքին, նշելով խաղացողների եզակիությունը, ու ժամանակի անցյալությունը: Սա ցույց տանք աղյուսակով.

<p><i>խաղաց</i> բառն օժտված է հետևյալ առաջին 4 գաղափարով ու անում է 5-րդ «գործը»</p>	1. (բայ)իմաստով՝ խաղալու գաղափարով
	2. երրորդ դեմքի գաղափարով
	3. եզակի թվի գաղափարով
	4. անցյալ ժամանակի գաղափարով
	5. <i>խաղալու</i> իր (բայ)իմաստը վերագրում է (ստորոգում է) իր իսկ դեմքին, նշելով եզակիությունն ու անցյալությունը

**Def 5.** Բայի «ձայատակին», բային «ենթարկվողին», այսինքն, են «բանին, ինչին որ բայը ճնշում է, վերագրում է», ասում են՝ *դեմք-ենթակա*, իսկ վերագրվելիքին (ստորոգվողին = ստորոգյալին) ասում են՝ (բայ)իմաստ-ստորոգյալ [տես 1-ն ու 3-ը]:

Ուրեմն, բայը միմիայն ստորոգյալ-վերագրվող չի: Բայը մասամբ *ստորոգվող-վերագրվող է*, մասամբ նաև *ստորոգող-վերագրող է* (ինչը բայի հիմնական ֆունկցիան է), ու բացի սրանցից, վերագրելիս-ստորոգելիս՝ նշում է վերագրելիք-ստորոգելիքի թիվն ու ժամանակը:

Ասածից հետևում է, որ օրինակ՝ *խաղալ* բառը (էս տեսակ բառերին, բյուրիմաց, ասում են *դեբրայ*) ոչ մի տեսակ բայ չի, որովհետև չի վերագրում-ստորոգում, ու ոչ դեմք ունի, ոչ էլ ժամանակ [տես 1-ն ու 5-ը]:

Ուրեմն, համաձայն էս ելակետի, (եթե կապերն ու ձայնարկությունները մի կողմ թողնենք, քանզի սրանք նախադասության անդամ չեն), հայերենի բայը խոսքի միակ ու գլխավոր կենտրոնն է, իսկ մնացած բոլոր տեսակ բառերը, այսինքն, «չբայերը», բայի էս կամ էն տեսակ լրացումներն են (չհաշված կապերն ու ձայնարկությունները):

**Def 6.** Բայի դեմք-ենթակայի լրացմանն ասում են բառ-ենթակա, իսկ բայի (բայ)իմաստ-ստորոգյալի լրացմանն ասում են բառ-ստորոգյալ (եթե էս լրացումը անկատար դեբբայը չի), (կամ ստորոգյալի խումբ):

Օրինակ, *Արամը շախմատ խաղաց* խոսքի մեջ *Արամը* բառը բառ-ենթական է, որովհետև լրացնում է *խաղաց* բայի 3-րդ դեմքին, իսկ *շախմատ* ուղիղ խնդիր կոչվածը բառ-ստորոգյալն է, որովհետև լրացնում է (բայ)-իմաստին՝ խաղալու գաղափարին (խաղալու հազար ու մի ձև կա, դրանցից մեկն էլ շախմատ խաղալն է):

Այս շարադրանքի համար կարևորը տրամաբանության մեջ գործածվող նախադասությունն է, ինչի բայը միայն օժանդակ բայն է, ու ինչին տրամաբանության մեջ ասում են՝ *հանգույց (copula)*: Տրամաբանական նախադասության տիպական մի օրինակն է.

*շեղանկյունը քառանկյուն է (1)*

խոսքը, ինչի *շեղանկյուն* բառը բառ-ենթական է, իսկ *քառանկյուն* բառը բառ-ստորոգյալը:

Էս խոսքը, (1)-ը, տրամաբանական ճշմարիտ ասույթ է, բայց անհնար է, որ սա լինի *շեղանկյան* սահմանումը, որովհետև սա շրջելի չի:

Եթե էս ուղիղ խոսքը շրջենք, այսինքն, սրա ենթակայի ու ստորոգյալի տեղերը փոխենք, այդժամ շրջված խոսքի առանձնացրած բազմությունն այնքան կլայնանա, որ շեղանկյունուց բացի՝ կընդգրկի բոլոր-բոլոր քառանկյունները.

*քառանկյունը շեղանկյուն է (2)*

Իսկ եթե ասենք,

*շեղանկյունը հավասարակող քառանկյունն է (3)*

Էս անգամ արդեն էս ասույթը շրջելի է: Մրա բառ-ենթական նորից *շեղանկյունը* բառն է, իսկ (բարդ) բառ-ստորոգյալը *հարկասարակողմ քառանկյուն* կապակցությունն է: Շրջենք էս սահմանումը:

**հարկասարակողմ քառանկյունը շեղանկյուն է (4)**

Էս անգամ արդեն՝ բառ-ենթական *հարկասարակողմ քառանկյունը* կապակցությունն է, իսկ բառ-ստորոգյալը *շեղանկյուն* բառն է: Բովանդակությունը չփոխվեց, ու սրանց անջատած բազմություններն էլ նույնական են: Հենց սրա համար էլ՝ թե (3)-ը, թե (4)-ը շեղանկյան սահմանումներն են:

**ԱՆՈՐԾ «ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ» ՄԱՄԻՆ**

Ինչպես բխում է *Def 1.-ից*, ասույթի շրջելիությունը, ինքնին, բավարար չի, որ էլ ասույթը լինի սահմանում: Օրինակ, հետևյալ ասույթները.

*զանգվածը մարմնի իներտության քանակական չափն է (5)*

*ուժը փոխադրեցության քանակական չափն է (6)*

*էներգիան մարմնի աշխատանք կատարելու ունակությունն է (7)*

սահմանում չեն, որովհետև, իմաստի տեսանկյունից, սրանց ենթակաները նույնքան են անորոշ, ինչքան սրանց (ընդգծած) ստորոգյալները, չնայած սրանք, ինչ-որ իմաստով, շրջելի են: *Մարմնի իներտության քանակական չափ* «հասկացությունը» նույնքան է անհասկանալի, ինչքան դեռ չսահմանված *զանգվածը*, ևն:

*Սահմանման ստորոգյալը, այսինքն, ենթակային վերագրելիք հատկանիշը պիտի հայտնի լինի, պիտի արդեն սահմանված լինի, պիտի տրված լինի:*

Իսկ (5)-ի, (6)-ի ու (7)-ի ստորոգյալները, սրա պես սահմանումները ձևակերպելիս, դասագրքերում երբեմն սահմանված չեն լինում, այսինքն, անհայտ են լինում:

Ուրեմն, (5)-ը, (6)-ը, (7)-ն ու սրանց պես «սահմանումները» ուղղակի երկու անհայտ բանի՝ անհայտ ենթակայի ու անհայտ ստորոգյալի կրկնություն են: Էս իմաստով երկի իրավունք ունենք ասելու, թե սրա պես սահմանումները «*աավտոլոգիա*» (tautology) են, այսինքն, «կրկնություն» են, որովհետև սրանք երկու անհայտ, դեռ չսահմանված բանի «կրկնությունն են»:

Ու հենց էս իմաստով թերևս թույլատրելի լինի, որ ասենք, թե սրանք «տրամաբանական նույնություն են, «տավտալոգիա են»» (*եթե անհայտ՝ չսահմանված բաները համարենք նույնական*), ու ոչ մի նոր բան չեն ասում: Չեն ասում, որովհետև որևէ տրված բազմությունից դրա որևէ ենթաբազմությունը չեն առանձնացնում:

((5)-ի ու (6)-ի հարցերն ավելի ծավալուն են ու տեղի սղության պատճառով չեն բերվում):

**ԱՆՈՐԶԵԼԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻՎ ՄԻ «ՏԵՍՈՒԹՅԱՆ» ՄԱՄԻՆ**

Անշրջելի սահմանում պարունակող տեսությունն անպայման է հակասական: Էս տեսակ հակասական տեսության մի արտառոց ու ողբերգական դեպքը հայերենի հետաքրեղյանական քերականությունն է (ՀԱԶ-ը):

Քերականության գլխավոր ու հիմնական հասկացությունը բայի հասկացությունն է, ու հետաքրեղյանական քերականությունները (ՀԱԶ-երը), սկսած 1936 թվից, *75 տարի շարունակ*, պնդում են, թե.

*“Def” 7. Բայը գործողություն ցույց տվող բառ է (5)*

Էս ասույթի *Բայը* բառը՝ սրա բառ-ենթական է, *գործողություն ցույց տվող բառ* կապակցությունը՝ սրա (բարդ) բառ-ստորոգյալն է, իսկ *է-ն* էս խոսքի բայն է՝ հանգույցը, կոպուլան: Շրջենք էս խոսքը.

*“Def” 7a. Գործողություն ցույց տվող բառը բայ է (6)*

Էս ասույթի բառ-ենթական *գործողություն ցույց տվող բառը* կապակցությունն է, իսկ բառ-ստորոգյալն է՝ *բայ* բառը:

Ցավն էն հանգամանքն է, որ շատ-շատ բառ կա, որ գործողության իմաստ ունի, բայց ոչ թե բայ է, այլ գոյական, քանզի սրանք ունեն գոյականի բոլոր-բոլոր հատկություններն անխտիր, ու չունեն բայի դեմքի ու ժամանակի գաղափարներն ու վերագրելու (ստորոգելու) հատկությունը:

Շրինակ, *հուզմունք, վեճ, վրդավմունք, կռիվ, պատերազմ, տարադժվոց, երկրաշարժ, հրաբուխ, հոտանք, պատույտ, գործողություն* (սրանցից էլ լավ գործողություն ցույց տվող բա՞ն) ևն, ևն:

Այնհայտ է, որ (5)-ի ու (6)-ի անշրջելիության պատճառով ՀԱԶ-երի բայերի ու գոյականների բազմությունները խառնվում են իրար:

Մասնավոր առումով, *խստալ* բառը, ինչն ըստ *Def 4.-ի* գոյական է ու «հայերենում բայական ոչ մի ֆունկցիա չունի» [1-5], ըստ ՀԱԶ-երի, դառ-



նում է բայ, չնայած դեմք չունի, որ իր իմաստը ստորոգի-վերագրի այդ դեմքին:

Էս խառնաշփոթի պատճառով էլ.

1. Մ. Արեղյանն ասում է, թե հայերենի անորոշ դերբայը միմիայն գոյական է [1, 3], ՀԱԶ-երն ասում են, թե անդեմ բայ է [44, 46, 59, 60] (sic!):

2. Մ. Արեղյանն ասում է, թե հայերենն անդեմ բայ կամ նախադասություն չունի [1, 3], ՀԱԶ-երն ասում ենք մեզ [44, 46, 59, 60]:

3. Մ. Արեղյանն ասում է, թե՛ բայ չկա, ուրեմն նախադասություն էլ չկա [1, 3], ՀԱԶ-երն ասում ենք կա [59, 60]: Ու ըստ ՀԱԶ-երի, հնարավոր է, որ հայերենի ամեն մի բառն էլ, բառակապակցությունն էլ լինի նախադասություն, ևն, ևն:

(Էս «ևն»-ների թիվը, գլխավորներն ու երկրորդականներն իրար հետ հաշված, հարյուրներ է: Մա, մեղմ ասած, շատ է, եթե հիշենք, որ, օրինակ, մաթեմատիկայի նույնիսկ տարրական շարադրանքի մեջ նույնիսկ մեկ հատիկ էլ չէր լինում):

ՀԱԶ-երի սահմանումների մեծ մասը խախտում է դասական տրամաբանության պահանջները, ու էս խառնաշփոթն ուղղակի մղձավանջային է:

Ահա թե ինչ է սլատանում, երբ դպրոցական դասընթացներից սկսած՝ անտեսում են տրամաբանության պահանջած սահմանման շրջելության ու ստորագայի հայտնիության պարտադիր նորմերը:

\*\*\*

**ՔՎԱԿԱՆ-ԳՈՅԱԿԱՆ ՁՈՒՅԳԻ ԳՈՐԾԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ (ԴԱՄԱ)ԳՐԷՆՐՈՒՄ**

**ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ**

Արդի հայերենի (դասա)գրքերը, իրենց «ծագում ու ծննդով», համարյա լրիվ են թարգմանական, (ինչը, հաշվի առնելով պատմական ու գանազան այլ հանգամանքները, բնական է ու ցավալի), ուղղակի հեղեղված են *քերականական* օտարաբանություններով [1-5, 40-46]:

Էս ցավալի իրողության հետևանքով արդի հայերենի գրական ոճերն ու ողջ գրականությունը, համարյա լրիվ, ծանրաշունչ են, խրթին ու ու անընդհատ հեռանում են իրենց հիմք ու ծնող բարբառից, ու քիչ-քիչ դառնում են ժողովրդի մեծ մասին անհասկանալի, ուրեմն, նաև խորթ:

Սրա՛ համար է, որ Հայ Սփյուռքի արևմտահայերենով խոսողները պահանջում են, որ հայաստանցիները փոխեն իրենց ուղղագրությունը, կարծելով, թե արևելահայերենի ուղղագրությունն է պատճառը, որ իրենք արևելահայերենը վատ են հասկանում, ու չգիտակցելով, որ հենց քերականական օտարաբանություններն ու գանազան հնաբանությունները (արխայիզներն) են պատճառը, որ արևելահայ գրական ոճերը ո՛չ միայն իրենց են անհասկանալի, այլև է՛ն արևելահայերին, ովքեր շատ քիչ են առնչվում գրական ոճերին:

(Գրական ոճերին «քիչ առնչվող» արևելահայերը երբեք չեն ասում, որ էլ ոճերն իրենց անհասկանալի են, որ մարդիկ չստածեն, թե իրենք «էն-քան են տգետ», որ իրենց մայրենի լեզուն էլ չգիտեն:

«Սփյուռքը» սա ասում է, որովհետև արդարացնող պատրվակ ունի, ու էլ պատրվակը ուղղագրությունն է):

Քերականական օտարաբանությունները մանավանդ շատ են (շատն է՛ն խոսքը չի, դրանց քանակն ուղղակի վիթխարի է) դպրոցական ու բուհական դասագրքերում: Իսկ սա շատ ցավալի է, որովհետև մանուկները փոքրուց վարժվում են սրանց ու հետո ողջ կյանքում համարում են, որ սրանք հայերեն են, հետո էլ բուհական դասագրքերն ու մեր էսօրվա ողջ գրականությունն են խորացնում ու հաստատում էս համոզմունքը: Էս հայերի մի մասը, դառնալով դասախոս ու ուսուցիչ, իրենց սաներին «կրթում է» հայերենին խորթ ու օտար էս գրական ոճերով:

Ժամն է, որ էս արատավոր օղակը քանդվի ու վերանա, բայց սրա համար պետք է, որ էս երևույթի պատճառները պարզվեն, ու մախ պարզվի, թե ո՞րն է էն սկզբունքը, ինչով պիտի վճռվի, թե լեզվական տվյալ երևույթը հայերենն է, թե՞ օտար:

Հայերենի լեզվաբանությունը երբևէ չի ձևակերպել ու երբևէ հետևողական ու տրամաբանական խստությամբ չի կիրառել էլ սկզբունքը, ու մեր գրական ոճերը հենց սրա՛ համար են հեղեղված *քերականական* օտարաբանություններով:

Բայց էս սկզբունքը *վաղուց է հայտնի*, օրինակ, անգլիացիներին [24] ու ռուսներին [71. տես նաև՝ 72-ը. վերջին գործը գրված է հենց էս սկզբունքով, ու սա ցարական ողջ Ռուսաստանի դասագիրքն էր]:

Լեզուն ու սրա պես համակարգերը, (օրինակ, ազատ շուկան), ինքնակազմակերպ են ու ինքնակառավար: Սրանց (ու նաև լեզվի) ապագան, սկզբունքով իսկ, լրիվ է անհայտ:

Էս անհայտությունից էլ բխում է, որ, Անհնար է, որ որևէ անհատ կամ անհատների որևէ փոքր խումբ (մեր Ակադեմիայի կամ Լեզվի տեսչություն կոչվածի պես մեկը կամ մի քանիսը) մարդկային ծրագրով կառավարի ողջ հանրության կենդանի լեզուն (տես 13-ի ներածական հատորը):

Սրա համար է, որ անգլիալեզու ժողովուրդները, մտա մի դար առաջ, արսիոմ են համարել մի սկզբունք [24], ինչով ղեկավարվում են թե՛ լեզվաբանության մեջ, թե՛ գրական ոճերում, ու թե՛ քատրոնում, հեռացույցում ու կինոյում:

Ես էս սկզբունքին ի՛նքս եմ հասել (հասել եմ ստիպված), ու սա ընդհանրացրել ու անվանել եմ Լեզվի Գլխավոր Օրենք (ԼԳՕ): Անգլիացի նշանավոր լեզվաբան Հենրի Սվիթի (Henry Sweet, 1845-1912, sic!) ձևակերպածով [24], ու իմ լրացրածով [40-46] Լեզվի Գլխավոր Օրենքն ասում է.

Որևէ (կենդանի) լեզվի, այսինքն, բարբառի կամ, ավելի ճիշտ, խոսվածքի ամե՛ն-ամեն ինչը, լինի դա՛ հնչյունաբանություն, բառակազմություն, ձևաբանություն, շարահյուսություն, թե նույնիսկ՝ առոգանություն, արտասանություն, ձայնարկություն ու միմիկա ու ծեստ, ճի՛շտ է, «բմիկ» է, ընտիր է, սիրուն է ու անպայման ընդունելի է՝ հենց էն միակ պատճառով, որ եղ խոսվածքը կրողների ՄԵՏ ՄԱՍԻ խոսքի մեջ ուղղակի կա՛, գոյություն ունի (ու ոչ թե լեզվաբանների կամ ուրիշ մարդկանց ասելով կամ ցանկությունով):

Գիտությունը բարբառի իսկական կրող է համարում միմիայն ուսումից համարյա գուրկ մարդկանց, մանավանդ, հըր դպրոց ու նաև պարտեզ չգնացող մանուկներին, ովքեր շատ քիչ են առնչվում գրական ոճերին, այսինքն, ժողովրդի մեծագույն մասին (ինչքան էլ որ էս դրույթը դուր չգա «ուսյալներին»):

ԼԳՕ-ից բացի, լեզվական երևույթի ճիշտ ու սխալը, սիրունն ու տգեղը, ընդունելին ու անընդունելին որոշելու ուրիշ ոչ մի օրենք, մարդուց անկախ ոչ մի ուրիշ չափանիշ՝ ուղղակի չկա. չկա ողջ աշխարհում:

(Նկատելի է, որ Հովհաննես Թումանյանն ասում է [26] «գրական կոչված լեզու», ոչ թե՛ «գրական լեզու»: Մա շատ կարևոր է, որովհետև լուրջ, գիտական լեզվաբանությունը «գրական լեզու» հասկացությունը չունի՝ Հնդեվրոպական լեզվաբանությունը, լեզու ասելով, նկատի ունի միայն ու

միայն կենդանի, «խոսակցական» լեզուն, բարբառը, խոսվածքը, նույնիսկ եթե լեզվի հին ու արդեն մեռած վիճակներն ուսումնասիրում է միայն գրական հուշարձաններով:

(Լեզուն ո՞նց պիտի խոսակցական չլինի, եթե խոսքը ինչ-որ մեռած լեզվի կամ մաթեմատիկական «լեզվի» մասին չի):

Ուրեմն, ավելի ճիշտ կլինի, եթե «գրական լեզու» բառերի տեղն ասվի՝ «գրական ոճեր»: Առհասարակ, «գրական լեզու» ասելով, մեծ մասամբ՝ նկատի ունենք լրագրողների ու միջակ գրողների ու սրանցից սովորած հայերենի դասատուների անհատական ոճերի «միջինը», իսկ էս ոճերը, համարյա առանց բացառության, ուղղակի այլանդակ են:

Սրա համար էլ, «լեզու» ասելով, նկատի կառնեն միայն որևէ բարբառը, ավելի ճիշտ, խոսվածքը: «Գրական լեզու» կապակցության տեղն էլ կասեն «գրական ոճեր», որովհետև.

Գրական ոճերը լեզվի բոլոր հատկանիշները չի, որ ունեն, որեմն, սրանց լեզու ասելը, գիտության տեսանկյունից, ճիշտ չի:

Օրինակ, գրական ոճերը չունեն անալոգիայի մեխանիզմով անընդհատ ինքնամաքրվելու հատկությունը (տես ստորև), ինչի շնորհիվ կենդանի լեզուն, այսինքն, էսօրվա բարբառներն ու խոսվածքները, օտար քերականական երևույթները չեն վերցնում, չնայած, օտար բառ՝ շատ հեշտ են վերցնում:

Իսկ հայերենը հայերեն է մնում ոչ թե բառապաշարը «մաքրելու», այլ հենց քերականության շնորհիվ:

ԻՆՉՈՒՒ Է ԼԳՕ-Ն ԵՒՇՏ,  
ՈՒ ԻՆՉՈՒՒ ՈՒԻՒՇ ՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ ՉԿԱ

Կենդանի լեզվի մեջ երկու գլխավոր մեխանիզմ կա:  
Մեկը կապկեղու, ընդօրինակելու կամ անալոգիայի մեխանիզմն է, ու սա լեզուն քիչ թե շատ հաստատուն ու անփոփոխ է պահում:

Իրոք, մենք մայրենի լեզուն սովորում ենք կապկեղով, մեր ծնողներից ու իշարից: Ու սկսած վաղ մանկությունից՝ մեր ծնողներն ու հարազատներն անընդհատ ուղղում են մեզ ու ստիպում, որ ճիշտ կապկեղենք: Իսկ երբ դուրս ենք գալիս փողոց ու հասարակություն, ձգտում ենք՝ ուրիշներից տարբեր չխոսենք:

(Կամ էլ՝ իրավունք ունենք ասելու՝ «ձգտում ենք ուրիշներից տարբեր չխոսելուն», ու ոչ թե «ձգտում ենք ուրիշներից տարբեր չխոսել»։ Էս վերջին ձևը, ըստ ԼԳՕ-ի, հայերեն չի, ռուսիզմ է։ Լեզվի տեսչություն կոչվածն ու մեր լեզվաբանությունն էս կարգի սխալները տեսնելուց անսահման են հեռու)։

Լեզվի մյուս մեխանիզմը՝ անհատական խոսքի մանրիկ, չնչին, անկատելի «սխալներն» են, կամ ավելի ճիշտ՝ էս տեսակ անխուսափելի սխալների հնարավորությունն ու իրավունքը։

Կենդանի լեզուն բաց ու անսահման բարդ մի սինեզետիկական [13, 40-42, 44, 46, 64, 65, 73] համակարգ է, ու առանց էս աննշմար անհատական «սխալների» (*ֆուկտուացիաների*, կասեին սինեզետիկայի հետևողները կամ ֆիզիկոսները), լեզուն չէր գործի, որովհետև կկորցներ կյանքում անընդհատ պատահող նոր վիճակներին հարմարվելու իր հույժ հարկավոր հատկությունը, ադապտացիայի՝ հասկռությունը։

Մենք մեր անհատական լեզուների տարբերություններն ու անհատական «սխալները» չենք զգում։ (Մեր ուղեղի համար լրիվ հերիք է, որ ճանաչի միայն «ֆոնեմները», այսինքն, «միջինները»։ Ֆոնեմ բառն էստեղ գործածում են համարյա Հյուսիս իդեաների իմաստով [48-50])։

Բայց աշխարհում չկա նույնիսկ երկու ճիշտ իրար պես խոսող մարդ։ Սա մրայն է՛ն ժամանակ ենք զգում, երբ մի տաղանդավոր դերասան մեկնումն էի տնագն է անում։ Ուրեմն, անհատական «սխալները», շեղումները (*ֆուկտուացիաները*) անխուսափ են, ու լեզուն, մեծ մասամբ, այ՛ հենց սրանց պատճառով է անընդհատ փոխվում։

Այ, էս երկրորդ մեխանիզմը, էս անխուսափ ու մանրիկ սխալներն էլ՝ հենց լեզվի պարտադիր փոխվելու պատճառն են։

Աշխարհում չկա լեզու, ինչը չի փոխվել ու անընդհատ չի փոխվում։

Փոխվելը լավ գիտենք։ Վկան, օրինակ, մեր գրաբարն ու մեր բարբառները։ Փոխվելու անընդհատությունը չենք նկատում, որովհետև լեզուն նկատելի փոխվում է միայն հարյուրամյակների ընթացքում։

Էս աննկատության պատճառն էլ՝ անալոգիայի մեխանիզմի ու անխուսափ սխալների համատեղ գործողությունն է, ինչը լեզուն պահում է մի «քվազի-ինամիկ հավասարակշռության» մեջ (տեղմի՛ր ֆիզիկայիս է), ու չի թողնում, որ լեզուն շատ արագ փոխվի, ինչը շատ անհարմար բան կլիներ։

Լեզուն է՛նքա՛ն է բարդ ու անսահման, որ առանց անհատական սխալների էս հնարավորության ու իրավունքի, լեզու սովորելն ու խոսելն ու լեզվական «նոր իրավիճակներին» հարմարվելն անհնար կլիներ, քանզի էդ ժամանակ անսխալ խոսելը կպահանջեր անսահման բարդ ու անսահման ծավալուն ու անընդգրկելի մաթեմատիկական ճշտություն ու տաղանդ, ինչը երևի ոչ մեկը չի ունեցել ու չունի։

Բայց էս ճշտությունը պետք չի, ու սա նաև լրիվ ավելորդ է, որովհետև (ու փառք աստծո)։

Լեզուն առաջացել է միայն ու միայն խոսելու համար, միայն ու միայն ասելու, լսելու, լսածը քիչ թե շատ հիշելու ու ուրիշներին փոխանցելու համար, ու ոչ թե «ընտիր ձևով» ասելու, «ընտիր ձևով» լսելու ու «ընտիր ձևով» փոխանցելու համար։

Ու զարմանալի է, որ եսքան «անկատար» գործիքը, հենց էս անպայման սխալական լեզուն է հնար տալիս, որ իրենով ոտանավոր էլ գրվի, վեպ էլ, մաթեմատիկա էլ, փիլիսոփայություն էլ, ու հլը հազար ու մի ուրիշ բան էլ։ (Լեզուն մարդկային ողջ գործունեությունը հնչավորելու միջոցն է [34-38, 55])։

Կենդանի լեզուն, այսինքն, բարբառը կամ խոսվածքը, է՛նքան բարդ բան է, ինչքան օրինակ՝ մի երկրի տնտեսությունը, շուկան, փողի ինստիտուտը ևն, ու սրանց պես էլ անպայման փոփոխական է, անպայման է բառ փոխ առնում ու անպայման էլ գուշակելի չի։

Ավստրիական դպրոցի տնտեսագետներն ապացուցել են, որ ասածս։

Գերբարդ ու բաց հաճակարգերը, ու սրանց հետ էլ՝ նաև լեզուն, չեն ենթարկվում մարդու կամ մարդկանց խմբերի գիտակցական ծրագրերին

[34-38, 55. տես նաև 13-ի ներածական հատորը]։

Եթե սրանց պես բարդ համակարգերին ստիպես, որ սրանք ենթարկվեն մարդկային ինչ-որ մի ծրագրի, «չեն լսի», չեն ենթարկվի էդ ծրագրին, ու էդ ծրագրի հետևանքն էլ ծրագրածից անպայման մի անսպասելի տարբեր, մի ուրիշ բան կլինի [տես նաև՝ 34-38-ը], (ինչքան էլ որ մեր Լեզվի տեսչությունն ու մեր լեզվաբանները ծրագիր կազմեն ու լեզուն կառուվարելու փորձ անեն)։

Հենց էս պատճառներով էլ՝ պիտի լեզվի տվյալ սրահին արդեն ԸՆԳ-ՀԱՆԿԱՅԱԾ լեզվական բոլոր երևույթներն էլ համարենք ճիշտ, ընտիր ու անպայման ընդունելի, որովհետև եթե ուրիշ մի «հավիրժական» ու «ճշգրիտ» սկզբունքով որոշենք լեզվական երևույթի ճիշտն ու սխալը, էս ուրիշ «ճշգրիտ» սկզբունքը, ի վերջո, անպայման կդադարի ճիշտ լինելուց, քան-

զի լեզուն անպայման է փոխվում, իսկ փոխվելու ուղիներն էլ կատարյալ են անհայտ:

Ուրեմն.

Լեզվի Գլխավոր Օրենքն անպայման է ճիշտ, ու սրան այլընտրանք չկա:

**ԹՎԱԿԱՆ-ԳՈՅԱԿԱՆ ՁՈՒՅԳԻ  
ԳՈՅԱԿԱՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆԸ,  
ՈՒ ԲԱՅԻ ՀԵՏ ԷՍ ՁՈՒՅԳԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ**

Քերեն ասածը (ԼԳՕ-ի իրավությունը) հաստատող միայն մի օրինակ:  
Էսօրվա հայերենի կենդանի բարբառները, երբ էլ որ գոյականը լրացնեն թվականով, գոյականն անպայման դնում են եզակի թվով, միշտ ու ամենուր:

Ահա մի քանի օրինակ.

1. Երկու տրակտոր ունեն: Հինգ հողափոր բանվոր կա: Քանի՞ մատիս մնաց: Երկնքից երեք խնձոր ընկավ: Վաղը շատ մարդ կգա: Տասնհինգ հատ տնական թարմ ձու տո՛ւր, մեկ էլ՝ վեցը մեծ ու լավ հասած ձմերուկ կշո՛ի: Որ վեց խողովակն ավազանը լցնի չորս ժամում, երկու խողովակն էլ կլցնի տասներկու ժամում: Չսպանակից կախած է երկու նյութական կետ: A և B կետերի արանքը կա անսահման քանակով կետ: Երեկ մեր տունը քսանհինգ ցահեղ ու սիրուն աղջիկ էր էկել, ևն: Էսօր հարույր մարդ էկավ, որ էս փոսը փորի: Որ հազար հոգի էլ գա, բան չի կարա անի:

Անտառում շատ արջ կա: Մեղանի վրա լիքը խնձոր կա: Տանը քանի՞ հոգի կա: Մի քանի մատիս ատոր: Հազար ու մի գործ ունեն: Քանի՞-քանի մարդ մեռա՞վ: Հազարներով (հազարավոր) մարդ կոտորվեց: Էնքան լոր խփեցի(նք), որ տեղ ու դայաք չկար: Ինչքա՞ն է գործ կանեի(նք):

2. (Մենք) Տանը հինգ երեխա ենք: (Ես) Տասներկու լոր խփեցի: (Մենք) Տասներկու լոր խփեցինք: Աշտող Սուրենին վեց մատիս տվեց: (Մենք) Տասմեկ հոգով գնացինք որսի: (Դրանք) Տաս հազարանոց բանակ էին: (Ես) Տաս հազարանոց բանակ էր: (Ես) Չորս տանձ կերա: (Մենք) Չորս տանձ կերանք: (Ինքը) Երկու հոգով ա (այսինքն, հոյ է): (Դուք) Երկու հոգով եք (դաս անում, ևն): (Դու) Քիչ կով ունես: (Ինքը) Շատ կով ունի: Քսան կովից մնաց հինգ (կով): (Ես) Քեզնից մեծ եմ հինգ տարի (տարով): Մա պատահեց վերջին հինգ տարին(ում), ևն:

Առաջին խմբի օրինակներում ընդգծած թվական-գոյական գույզը, տեղ-տեղ՝ որոշիչներն էլ հետը, ենթակա է (կամ «ենթակայի խումբն») է, կամ էլ՝ «բարդ ենթական» է ևն, ինչպես կո՛ղեք) այսինքն, լրացնում է նախադասության բայի դեմքը: Էս բոլոր օրինակներում էլ բայը միայն ու միայն եզակի է:

Երկրորդ խմբի օրինակներում ընդգծած է ենթական, իսկ թվական-գոյական գույզը ենթակա չի, բացի վերջին հինգ կովը:

Արդի հայերեն լեզուն (այսինքն, կենդանի բարբառները ու ոչ թե գրական ոճերը), թվականի հետ գոյականը ենթան կտրուկ է եզակի թվով գործածում, որ գոյականի հոգնակիով գործածությունը երբևէն խիստ անսովոր է ու նույնիսկ ծիծաղելի: Օրինակ. երկու քթեր, հինգ ձվեր տվեք, ևն: Իրոք, ո՞վ կմտնի խանութ ու կասի. «Երեք ձմերուկներ կշռեք ու հինգ ձվեր տվեք»:

Վարվելով Լեզվի Գլխավոր Օրենքին համաձայն, այսինքն, թերված ցրինակներից եզրակացություններ անելով ու դրանք ընդհանրացնելով, ունենում ենք երկու օրենք կամ կանոն, որոնք գործում են մեզնից անկախ, այսինքն, ուզենք, թե չուզենք: Ահա դրանք:

ՕՐԵՆՔ 1. Էսօրվա հայերենի թվական-գոյական գույզի գոյականը միշտ ու պարտադիր եզակի է, անկախ այն համգամանքից, թե գույզի արանքը որոշիչ կամ որոշիչների խումբ կա, թե՛ չէ:

ՕՐԵՆՔ 2. Երբ էսօրվա հայերենի նախադասության թվական-գոյական գույզն էր նախադասության բառ-ենթական է, (այսինքն, նախադասության բայի դեմքի լրացումն է), բայը պարտադիր դրվում է եզակի թվով: Իսկ եթե թվական-գոյական գույզը ենթակա չի (այսինքն, կամ բառ-ստորագյալ է, կամ խնդիր է, կամ պարագա (տերմինները գործածում են [3]-ի ու [5]-ի իմաստով)), բայը թվով պարտադիր համաձայն է բառ-ենթակային:

Ասվածը վերաբերում է նաև անորոշ կամ հարաբերական թվականներին (որ օրինակների մեջ ընդգծել եմ), այսինքն, շատ, քիչ, քանի, լիքը, հազարավոր, քաղամ, բազմաթիվ, այնքան, այդքան, էսքան, ինչքան, որքան, անվերջ (շատ, քիչ), անսահման, և այլ բառերի պես բառերին:

Ուրեմն, հետևյալ ձևերը, որ չափազանց շատ են մեր գրական ոճերի մեջ, անպայման են սխալ, ու ոչ միայն սխալ են, այլև հայերեն չեն (սխալ ձևերը հաստատելու ու ուղղելու եմ):

(Հայերեն էլ չեն, քանզի հայերի մեծագույն մասը սրանք չի գործածում: Հայերենության ուրիշ ոչ մի չափանիշ չի եղել, չկա ու չի էլ լինի):

3. Երկու տրակտորներ ունեն: Հինգ հողափոր բանվորներ կան: Աշտող Սուրենին վեց մատիսներ տվեց: Քանի՞ մատիսներ մնացին: Երկնքից երեք խնձորներ ընկան: Վաղը շատ մարդիկ կգան: Տասնհինգ հատ տնական թարմ ձվեր տվեք, մեկ էլ՝ վեցը մեծ ու լավ հասած ձմերուկներ կշռեք: Որ վեց խողովակներն ավազանը լցնեն չորս ժամում, երկու խողովակներն էլ կլցնեն տասներկու ժամում: Չսպանակից կախված են երկու նյութական կետեր: A և B կետերի միջև կան անսահման քանակով կետեր: Երեկ մեր տունը քսանհինգ ցահեղ ու սիրուն աղջիկներ էին էկել: Անտառում

շատ արջեր կան: Մեղանի վրա լիքը խնձորներ կան: Տանը քանի՞ հոգիներ կան: Մի քանի մատիտներ տուր: Հազար ու մի գործեր ունեն: Քանի՞ քանի մարդիկ մեռա ն: Հազարավոր մարդիկ կոտորվեցին: Էնքան լոթեր խփեցինք, որ տեղ ու դադար չկար: Ինչքա՞ն գործեր կանեի:

4. (Մենք) Տանը հինգ երեխաներ ենք: (Ես) Տասներկու լոթեր խփեցի: (Մենք) Տասներկու լոթեր խփեցինք: (Մենք) Տասնմեկ որսորդներով գնացինք որսի: (Ես) Չորս տանձեր կերա: (Մենք) Չորս տանձեր կերանք: (Ինքը) Երկու հոգիներով է: (Դուք) Երկու հոգիներով եք: (Դու) Քիչ կուլեր ունես: (Ինքը) Շատ կուլեր ունի: Քսան կուլերից մնացին հինգը (կուլեր): Ես քեզանից մեծ եմ հինգ տարիներ: Սա պատահեց վերջին հինգ տարիների ընթացքում, ևն:

Գրական ոճերի էս սխալ ձևերը, ինչպես ասել եմ, մեծ մասամբ ռուսերենից են, իսկ արևմտահայերենում՝ եվրոպական լեզուներից:

(Անկասկած, էս ձևերից մի քանիսն առաջացել են մեր գրաբարի ձևերին կույր-կույր կապկեղով: Բայց սա էլ ընդուելի չի, որովհետև ճիշտ ընդօրինակությունը սխալ արդյուք չախտի տար: Երկրորդ, հենց գրաբարը՝ քերականական կլիշե շատ ունի, մանավանդ, սկսած մեր հումաբան հեղինակներից: Սրանց ընդօրինակությունը, անպայման, սխալ ձևեր կձևի):

Ռուսերենի (նաև օրինակ, անգլերենի) գոյականը թվով միշտ է համաձայն թվականին: Օրինակ.

К нам вчера пришли двадцать пять молодых и красивых девушек.

Я убил много медведей.

Мы убили много медведей.

Twenty five young and beautiful girls came to our home yesterday.

I shot many bears.

We shot many bears.

There are many bears.

«Ուսյալ» հայը, եթե իր ելակետը Արարատյան բարբառի քերականությունը չի, հետևելով գրական ոճերին ու կույր-կույր պատճենելով օտար լեզուների «լեզվամտածողությունը», իր մտքում պատճենն սկսում է հոգնակի բայից ու հոգնակի գոյականից (ռուսերենից բարգմանելիս), իսկ անգլերենից՝ մեծ մասամբ՝ հոգնակի գոյականից կամ հոգնակի ենթակայից (այսինքն, *Приняли-были, убили-խփեցի, убили-խփեցինք, bears-արջեր* կամ *There are-կան* բառերի պես բառերից) ու, սովորված, թվական-գոյական գույզի գոյականը հայերենով էլ է դնում հոգնակիով, ու հորինում է հետևյալ սխալ ու անընդունելի (ոչ հայերեն ձևերը).

Երեկ մեր տունը քսանհինգ ցահեկ ու սիրուն աղջիկներ էին եկել:

Շատ արջեր խփեցի:

Շատ արջեր խփեցինք:

Շատ արջեր կան,

փոխանակ հայավարի գրի.

Երեկ մեր տունը քսանհինգ ցահեկ ու սիրուն աղջիկ էր եկել:

Շատ արջ խփեցի:

Շատ արջ խփեցինք:

Շատ արջ կա:

Սրանից է, որ մեր գրական ոճերի անհարկի հոգնակիների քանակն ուղղակի վիթխարի է, այնինչ, «չուսյալ» բարբառայտուը երբեք էսպիսի սխալ չի անում:

Էստեղ մի ուրիշ հարց էլ կա: Մեր քերականներից ոմանք պնդում են [66], թե իբր.

«Հայերենի թվական-գոյական» գույզի գոյականը գերազանցապես դրվում է եզակիով, բայց կարող է և հոգնակի լինել, եթե թվական-գոյական գույզի միջև որոշիչներ կան»:

Էս սխալ եզրակացության ու թվական-գոյական գույզի սխալ գործածության պատճառը, բացի հենց նոր ասվածը, Լեզվի Գլխավոր Օրենքի չիմացությունն է, նաև է՛ն հանգամանքը, որ երբ թվական-գոյական գույզի արանքը որոշիչներ կան, «գրագետը», թարգմանելիս, մինչև իր մտքում թվականից հասնում է գոյականին, թվականի մասին արդեն «նոռացած է լինում», մանավանդ որ էլ գույզը գործածողը, ռուսերենի ու գրական սխալ ոճերի ազդեցությամբ, բայն արդեն հոգնակիով է դրած լինում կամ հոգնակիով է դնում հենց է՛դ ազդեցության սովորությամբ: Սովորության ուժը շա՛տ գորավոր բան է:

(Իհարկե, միշտ չի, որ թվական-գոյական գույզի գոյականը հոգնակիով են դնում: Երբեմն էս սխալ հոգնակին շատ քիչ են գործածում: Օրինակ, քիչ են ասում «մի քանի հոգիներ, երկու քթեր» ևն):

Իսկական մայրենի լեզվի, այսինքն, բարբառի ազդեցությամբ՝ գրական ոճերի մեջ եզակիով գործածությունն էլ է հանդիպում, ու շատ-շատ անգամ էս երկու ճիշտ ու սխալ գործածությունն իրար հետ է լինում, նույնիսկ հենց մի նախադասության մեջ: Օրինակ. «Գրավեցին երեք գյուղ և գեղի վերջոցին տասներկու ագերիներ» ևն:

Վերը երկու օրենքից մի զարմանալի բան է թլում:



Արդի հայերենի բոլոր բարբառները թվական-գոյական գույզը «համարում են» հավարական (եզակիով գործածվող) գոյական: Ինչո՞ւ է լեզվի էվոլյուցիան էպիսոի բան ստեղծել, անհայտ է, ու սա արդեն ստուգաբանելու հարց է: Բայց փաստ է, որ ստեղծել է, ու սա արդեն լեզվի արդի վիճակի օրենքն է:

Բարբառախոսներն ու գրականին քիչ շփվողները նման սխալ չեն անում: Այնինչ, գրական ոճերի կողմնակիցները (չհավատալով Լեզվի Գլխավոր Օրենքին կամ սա չիմանալով, ու արհամարհելով բարբառներն ու մանավանդ՝ Երևանի խոսվածքը, ինչը չափազանց հաճախ անվանում են «փողոցային, ժարգոն, զզվելի, գոեհիկ» են), «մոռանում են», որ.

Գրական ոճերի հիմքը պիտի անպայման լինի Արարատյան բարբառն ու սրա ամենագորավոր խոսվածքը՝ Երևանի խոսվածքը, ու սա մոռանալով՝ հազար միլիարդ անգամ են թվական-գոյական գույզը սխալ գործածում ու երբեք չեն նկատում իրենց սխալը:

Հենց սրանք են էն գլխավոր պատճառները, որ մեր լեզվի «անադարտության» համար պայքարողները (օրինակ, *Լեզվի տեսչություն* կոչվածը), ովքեր իբր օտարաբանությունների դեմ են պայքարում (բայց միայն ու միայն «օտար» բառերի մակարդակով) մինչև էսօր չեն նկատել թվական-գոյական գործածության վերի երկու օրենքը:

(Տես, օրինակ 3-ն ու 6-ը, որոնց մեջ էս սխալներից անսահման շատ կա: Արեղյանի էս գործի հենց վերնագիրը պիտի լիներ. *Մի քանի քերականական խնդրի մասին* (ոչ թե՛ *խնդիրների*, ինչպես Արեղյանն է գրել), իսկ Աճառյանի ութ հատորանոց հանրագիտական կոթողի վերնագիրն է. *Հայոց լեզվի լիակատար քերականություն՝ համեմատությանը 562 լեզուների*, բայց հենց վերնագիրն ունի՝ ասածս սխալը, ու պիտի լիներ. ...*համեմատությանը 562 լեզվի*):

Մեր դասագրքերն ու ողջ գրականությունն ուղղակի հեղեղված են՝ երկու բանվորներով, երկու դասարաններով, երկու տրակտորներով, երկու աշակերտներով, երկու խողովակներով ևն: Այսինքն, էս կարգի քերականական սխալների թիվը միլիարդների է հասնում:

Միայն իսկական հայերենները, այսինքն, հայերենի կենդանի բարբառները (օրինակ, *զզվելի ժարգոն* համարվող Երևանի խոսվածքը, ու ոչ թե *գրական լեզու* կոչված գրական խրթին ու տգեղ ոճերը), քերականական սխալ երբեք չեն անում, որովհետև անալոգիայի մեխանիզմը միշտ ուղղում է «միջինից» տարբեր ձևերը:

Իսկ գրական ոճերի քերականական սխալները շատ ավելի վտանգավոր են, քան օտար բառի գործածությունը, որովհետև սրանք, միանալով

խոսվածքն արհամարհելու ողբերգական սոխանդոյթին, լեզուն հեռացնում են հայերեն լինելուց, ու ունակ են լեզուն, ի վերջո, սպանելու:

Բայց մենք, մեր լեզվաբաններն ու *Լեզվի տեսչություն* կոչվածն էլ հետները, քերականական սխալները երբեք չենք նկատում, որովհետև սրանք նկատելը շատ-շատ ավելի դժվար է, քան հայրենասերի կեցվածքով օտար բառերի դեմ «պայքարելը» (ու երբեմն ավելի դժվար է, քան բառի գիտական ստուգաբանությունը):

Ու սրանք, էսպես վարվելով, զուտ գիտական-լեզվաբանական հարցերը քաղաքականացնում են, կամ, ինչպես Լեզվի մեր տիրապետչակ տեսչությունն է անընդհատ հայտարարում, «լեզվական քաղաքականություն են վարում», առանց տիրապետելու լեզվաբանություն կոչվող գիտությանը:

**Ի՞նչ կասեինք այն մարդուն, ով առանց բժշկություն խմանալով՝ հայտարարում է, թե պիտի «բժշկաքաղաքականություն վարի», այսինքն պիտի հիվանդին վիրահատի:**

### Վ Ե Ր Ձ

#### Հեռգրություն

Առաջին հրատարակությունից հետո ինձ լուրեր հասան, թե գրել եմ, որ Կոմիտասը առհասարակ դեմ էր նվազարաններին: Ես էդ տեսակ բան չեմ գրել, ոչ էլ Կոմիտասն է նման բան ասել: Մանուկ Աբեղյանի պատմելով (*Երկեր, Է հատոր, էջ 420*) Կոմիտասը երազում էր՝ կոնսերվատորիա հիմներ, ինչի կեսը լիներ եվրոպական, կեսը՝ հայ ազգային ու արևելյան:

Կոմիտասը դեմ էր միայն գոտնային, ինչը իր կարծիքով սպանում էր հայ երգն ու պարը: Կոմիտասը համարում էր, որ փողն ամենավսեմ նվազարանն է, ու երազում էր՝ փողերից կազմված նվազախումբ ունենա: Սրանից չի հետևում, թե Կոմիտասը դեմ էր, օրինակ, դուդուկին: Բայց սրանից անպայման է հետևում, որ Կոմիտասը փողը շատ ու շատ ավելի բարձր էր դասում դուդուկից:

Նույնն էլ ասում են մեր երգ ու պարի մասին: Մերը չքնաղ էր ու վեհասպան: Մա պիտի պահեինք, ու նոր ուրիշներ փոխ առնենք:

Կոմիտասը դեմ էր նաև, որ ուրիշ երգ ու պարը փոխ առնենք՝ մեր հարսզատ երգ ու պարը սպանելու հաշվին: Բայց մենք հենց սա է՛լ արեցինք, ու հենց սա՛ է մեր ընդհանուր ողբերգությունը:

Ես Կոմիտասին լրի՛վ եմ համաձայն: Իմ պատմածներից չի հետևում նաև, որ դեմ են դուդուկին կամ մյուս նվազարաններին, կամ ուրիշների երգ ու երաժշտությանն ու պարին, ու սրանք փոխ առնելուն: Ավելին: Ես կարծում եմ (ի տարբերություն Կոմիտասի. մեղա քեզ, Տեր, որ համեմատվում են Կոմիտասի հետ), որ գոտնան ջազի համար հույժ խոսառմնակի գործիչ է:

Բայց, փոխ առնելուց հետո, յուր չպիտի ասենք: Երբեք ու ոչ մի «վսեմ» նպատակով: Եթե դուդուկը, կամ Մայրա Նովայի Կամ Ջիվանու մեղեդիները փոխառյալ են, պիտի ասենք, որ փոխառյալ են: Մյուսից միայն շահելու ենք:

Իմ ասածները շատ են ծոռն, բայց միայն քանավոր: Գրով չեն խոսում Թող ծռեն: Իրոք որ՝ լեզվի տակ ոսկոր չկա:

Գործածած գրականության ցուցակը

1. Արեղյան Մ. – *Աշխարհարարի քերականությունը*, 1906, Վաղարշապատ:
2. Արեղյան Մ. – *Աշխարհարարի շարահյուսությունը*, 1912, Վաղարշապատ:
3. Արեղյան Մ. – *Հայոց լեզվի տեսություն*, Լույս հր., 1931, 1964, Երևան:
4. Արեղյան Մ. – *Երկեր, հատ Ա-Ը, ՀՄՍՀ ԳԱ-ի հրատ*, Երևան:
5. Արեղյան Մ. – *Երկեր, Ը հատոր, Մի քանի քերականական խնդիրների մասին*, ՀՄՍՀ ԳԱ հր., 1985, Երևան:
6. Արեղյան Մ. – *Գրարարի երկրորդականները*, «Նոր դար», No 187-191, 193-194, 196-197, 1890թ (տես նաև 4-րդ կեի Ը հատորը):
7. Արեղյան Մ. – Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, «Արարարատ», 1897, սեպտեմբեր:
8. Արեղյան Մ. – *Մեր ուղղագրության մասին*, «Արարարատ» No 11, 12, 1913թ (տես նաև 4-րդ կեի Ը հատորը):
9. Արեղյան Մ. – *Հայոց լեզվի ուղղագրության ուղղորդի մասին*, ձեռագրի իրավունքով, 1921 (տես նաև 4-րդ կեի Ը հատորը):
10. Արեղյան Մ. – *Ուղղագրության ուղղորդը*, 1925թ (տես նաև 4-րդ կեի Ը հատորը):
11. \*Արրահանյան Ա. Գ., – *Նախասաղարանային հայ գիր և գրություն*, Հայաստան հր., 1982, Երևան:
12. Адонц Н., – *Древнеславянский и армянские толкователи*, 1915, Петроград.
13. Աճառյան Հր. – *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, հատ. 1-8, 1952-1967, Երևան:
14. Աճառյան Հր. – *Հայերեն արմատական բառարան*, ԵՊՀ հր., հատ. Ա-Դ, Երևան:
15. Աճառյան Հր., *Հայոց գրերը*, Երևան, Հայաստան հր., 1968:
16. Աճառյան Հր., – *Հայոց լեզվի պատմություն, Բ մաս*, 1951, Երևան:
17. \*Այվազյան Ս. – *Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից*, «Լույս», 1986, Երևան:
18. *Արիստոտել, Աթենական հասարակարգը*, «Հայաստան», 2000, Երևան:
19. *Aristotele on the Aethenian Constitution*, by F. G. Kenyon, 1904, London.
20. Armstrong K. – *Islam. A short History*, 2000, Modern Library, New York:
21. Բարսեղյան Հ. – *Հայերենի խոսքի մասերի ուսմանը*, ԵՊՀ հր., 1980, Երևան:

22. Գյուլբուրդյան Ս. – *Հայերենի ուղղագրության պատմություն*, ԵՊՀ հր., 1973, Երևան:
23. Եզեկյան Լ. – *Հայոց լեզու*, էջ՝ 232-238, ԵՊՀ հր., 2007, Երևան:
24. Eckersley C. E. – *Essential English, book 3*, Longmans, Green @ Co. Ltd., London; 1967, Sofia.
25. Թումանյան Հ., *Երկերի ժողովածու*, Հայաստան հր., հատ. 1-4, Երևան:
26. Թումանյան Հ. – *Երկերի ժողովածու՝ չորս հատորով, 4-րդ հատոր, «Մի երկու խորհուրդ մեր գաղափարական մամուլին»*, Հայաստան հր., 1969, Երևան: Տես նաև «Հորիզոն» թերթը, 1910, փետրվարի 4, # 26, Երևան:
27. Թերլեմեզյան Ռ. – *Վոմիտաս. հորվածներ և ուսումնասիրություններ*, Պետհրատ, 1941, Երևան:
28. \*Իշխանյան Ռ. – *Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ*, ԵՊՀ հր., 1989, Երևան:
29. \*Իշխանյան Ռ. – *Պատկերազարդ պատմություն հայոց*, «Արևիկ», 1990, Երևան:
30. Лихт Г. – *Сексуальная жизнь в Древней Греции*, 1995, Крон Прес, Москва:
31. Խորենացի Մովսես – *Հայոց պատմություն*, ԵՊՀ հր., 1981, Երևան:
32. Վոմիտասական-2, ՀՄՍՀ ԳԱ հր., 1981, Երևան:
33. А. А. Иванн – *Практическая логика*, Фаир пресс, 2002, Москва.
34. Hayek, F.A. – *The Fatal Conceit: The Errors of Socialism*, 1988, "Routledge", London:
35. Hayek, F.A. – *Law, Liberty and Legislation, vol. 1, 2 and 3*, Routledge, London.
36. Hayek, F.A. – *The Road to Serfdom*, 1944, London, Routledge.
37. Hayek, F.A. – *The Constitution of Liberty*, 1960, London, Routledge.
38. Hayek, F.A. – *Law, Legislation and Liberty*, հատոր 1-ին՝ *Rules and Order*, 1973; հատոր 2-րդ՝ *The Mirage of Social Justice*, 1976; հատոր 3-րդ՝ *The Political Order of a Free People*, 1979, London, Routledge ևն):
39. Հանդես Երևանի համալսարանի, , 1991, (90), Երևան:
40. Հարությունյան Մ. – *Թարգմանելու արվեստը*, 2008, Լուսաբաց հր., Երևան:
41. Հարությունյան Մ. – *Արևելահայ գրական լեզվի էսորվա վիճակը*, «Երկիր», 1992, ապրիլի 10-ի, 11-ի ու 14-ի համարները, Երևան:
42. Հարությունյան Մ. – *Չոնգոլիզմը*, «Աղբյուր», # 3-4, 1999, Երևան:
43. Հարությունյան Մ. – *Ինչո՞ւ են հայոց լեզվի քննությունները միշտ անարդար*, «Առավոտ» օրաթերթ, 2009 թվի օգոստոսի 26-ի ու 27-ի համարները, Երևան:

44. Հարությունյան Մ. – *Մարեմատիկայի և բնական գիտությունների դասագրքերի ոճը*, «Ինտելեկտ, գիտամեթոդական բնագիտական հանդես», հատոր 11, բողարկում 2, 2008, Երևան:
45. Հարությունյան Մ. – *Արտեմիզմն ու հայ պոեզիայի տրերգությունը*, «Նոր աշխարհ», # 1 (6), 2005, Երևան: (Ընդգրկված է էս ցուցակի 15-ի մեջ, որպես դրա բարգմանական կանոնների ցուցադրության օրինակ):
46. Հարությունյան Մ. – *Թվական-զոյական գույզի գործածությունը*, «Ինտելեկտ, գիտամեթոդական բնագիտական հանդես», հատոր 11, բողարկում 2, 2008, Երևան:
47. Հյուբշման Հ. – *Հայագիտական մասմնասիրություններ*, ԵՊՀ հր., Երևան, 1990:
48. Հյում Դ. – *Հետազոտություն մարդկային ըմբռնողության վերաբերյալ*, «Տիգրան Մեծ», 2003, Երևան:
49. Hume D. – *Treatise on Human Nature*, 1878, London:
50. Юм Д. – *Сочинения в двух томах*, “Мысль”, 1966, Москва:
51. Մալխասյանց Ստ. – *Մի հնչյունին մի գիր*, 1910, Թիֆլիս:
52. Մալխասյանց Ստ. – *Լեզվային հարցեր*, 1924, «Մարտակոչ»:
53. Մելիք-Բաշխյան Ստ. – *Հայկական հնագրություն*, ԵՊՀ հր., 1987, Երևան:
54. Մեյն Ա. – *Հայագիտական մասմնասիրություններ*, ԵՊՀ հր., 1978 Երևան:
55. Mises L. – *Human Action: A Treatise on Economics*, 1965, Fox & Wilkes, San Francisco.
56. \*Մուխիսյան Ա. – *Հնագույն պետություն Հայաստանում-Արտա-տառ*, ՀՅԳ հր. 1992, Երևան:
57. *Новое в зарубежной лингвистике*, “Прогресс”, 1988, Москва.
58. Чуковский К. – *Живой как жизнь*, “Правда”, 1990, Москва.
59. Պետրոսյան Հ. – *Հայերենագիտական բառարան*, «Հայաստան», 1987, Երևան:
60. Պետրոսյան Հ. Չ., Գաղաթյան Ս. Ա., Ղարազյան Թ. Ա. – *Լեզ-վաբանական բառարան*, ՀՍՍՀ ԳԱ հր., 1975, Երևան:
61. Питер Лоуренс Дж. – *Закон Мерфи*, 1999, Москва, “Прогресс”.
62. Պուպեր Կ. Ռ. – *Բաց հասարակությունն ու դրա բշնամիները*, հտ. 1, «Հայաստան», 2001:
63. Պուպեր Կ. Ռ. – *Բաց հասարակությունն ու դրա բշնամիները*, հտ. 2, «Հայաստան», 2006:
64. Пригожин, И – *Время, хаос, кванты*, 1988, Москва.
65. Пригожин И., Стенгерс И., – *Порядок из хаоса*, 1986, Москва.
66. Ջանուկյան Գ., Խրվարյան Ֆ. – *Հայոց լեզվի յնագրություն*, 1988, Երևան:
67. Ֆրեզեր Ջեյմզ Ջորջ, *Ուկի ճյուղը*, 1985, «Հայաստան», Երևան:

68. Frazer James George, *Adonis, Attis, Osiris*, 1907, London, “MacMillan”.
69. \*Վարպետյան Ա. – Ո՞վքեր են ի վերջոյ արիացիները, «Արվեստ», 1990, Երևան:
70. Տեր-Սիրուշյան Գ. – *Հայագիտական մասմնասիրություններ*, ԵՊՀ հր., հատ. Ա. 1979, Երևան:
71. Толстой, Л. Н. – *Собрание сочинений в двадцати двух томах, том 16-ый, “О народном образовании, Воспитание и образование, Прогресс и определение образования”*, «Художественная литература», 1983, Москва.
72. Толстой, Л. Н. – *Собрание сочинений в двенадцати томах, том 9-ый, Новая азбука и Русские книги для чтения*, «Правда», 1987, Москва.
73. Осипов А. – *Самоорганизация и хаос*, 1983, Москва:
74. Чапек К. – *Том 7-ой, Критика слов. В плену слов*, 1977, Москва, “Художественная литература”.
75. Ուոլշենկո Ս. Լ., *Հայիսու Կեանք*, 1980, «Հայաստան»:

**ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ**

**ԿՈՄԻՏԱՍԻ ԵՒ ԱԲԵՂՅԱՆԻ  
ԱՆՉՆԱԿԱՆ-  
ՈՒ ՄԵՐ ԸՆԳՀԱՆՈՒՐ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ**



Պուշկինի 46  
Փեռ.՝ + 374 (10) 53 96 47, + 374 (91) 42 51 63  
E-mail: lusabats@netsys.am  
lusabatc@mail.ru

Հրատարակչության տնօրեն և  
գլխավոր խմբագիր՝ Վիտալի Ապանյան  
Կազմը՝ Վահան Զոյարի  
Հայերենի սրբագրությունը՝ Գագիկ Աղեկյանի  
Ռուսերենի ու անգլերենի  
սրբագրությունը՝ Ելենա Չախարյանի  
Տեխնիկական խմբագիր՝ Վահան Խաչատրյան

Տպագրված է «Լուսարաց հրատարակչատան» տպարանում